ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռաֆիկ Նահապետյան

ՀԱՅ ԱՁԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

հնագույն շրջանից մինչև XVIII դ. երկրորդ կես

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

(Հնագույն շրջանից մինչև XVIII դ. երկրորդ կես)

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 39(=19):930.2(07)
ԳՄԴ 63.5(5Հ)+ 63.2g7
Ն 251

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Խմբագիր՝ ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գրախոսներ՝ ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՄԽԻԹԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նահապետյան Ռ. Ա.
Ն 251 Հայ ազգագրության աղբյուրներ (Հնագույն շրջանից մինչև XVIII դ. երկրորդ կես): Ուսումնական ձեռնարկ: ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 426 էջ:

Ձեռնարկում ներկայացվում են հայ ազգաբանական գիտության հնագույն շրջանից մինչև XVIII դարի կեսերի սկզբնաղբյուրները, որոնք ներառում են Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղածո նյութերի, ժայռապատկերների, սեպագիր և օտարալեզու արձանագրությունների, վիմագրերի մասին տեղեկություններ, ինչպես նաև բանահյուսական նյութեր: Հատուկ ուշադրության են արժանացել հայ և անտիկ հունա-հռոմեական պատմիչներ երկերը, աստվածաշնչյան հղումները, եկեղեցական կանոնական և աշխարհիկ այլ աղբյուրներ, արաբ, թուրք և եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում հայերի և Հայաստանի վերաբերյալ բազմահարուստ ու բազմաբնույթ ազգագրական հիշատակությունները: Ներկայացվում է նաև դաշտային ազգագրական բանահավաքչական նյութերի՝ որպես հայոց էթնոմշակութային համալիր ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրի դերն ու նշանակությունը:

Ձեռնարկը օգտակար կլինի նաև հայցորդների, ասպիրանտների, առհասարակ, հումանիտար մասնագետների՝ մշակութաբանների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 39(=19):930.2(07)
ԳՄԴ 63.5(5Հ)+ 63.2g7

ISBN 978-5-8084-2647-4

https://doi.org/10.46991/YSUPH/9785808426474

© ԵՊՀ հրատ., 2023
© Նահապետյան Ռ. Ա., 2023

Հեղինակի կողմից

2010 թ. հրատարակվեց մեր կազմած «Հայ ազգագրության պատմություն, մաս 1» ուսումնական ձեռնարկը՝ հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Ձեռնարկում ընդգրկված են հայոց բազմադարյան պատմության հնագույն և հին սկզբնաղբյուրների՝ հնագիտական նյութական մնացորդների, ժայռապատկերների (Ք.ա. VII հազ., անգամ հասնում է նեոլիթյան շրջան՝ XII-X/VII հազարամյակներ), Ք.ա. III-II հազ. կիրառական արվեստի նմուշների պաշտամունքային հուշարձանների, Ք.ա. III-I հազ. գրավոր հնագույն հուշարձանների՝ շումերա-աքքադական, խեթական, ասորեստանյան, ուրարտական, հին պարսկական սեպագիր աղբյուրների, ՀՀ տարածքում գտնված օտարալեզու՝ հունարեն, արամեերեն, լատիներեն արձանագրությունների (Ք.ա. IV - Ք.հ. III դարեր), վիմագիր արձանագրությունների, Աստվածաշնչի, հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների հակիրճ բնութագրումները Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների, նրանց պետական վաղագույն կազմավորումների, հայերի ու Հայաստանի մասին: Ուսումնական ձեռնարկի այդ հատվածում հակիրճ հիմնավորված է հայ ազգագրության հնագույն սկզբնաղբյուրների ուսումնասիրության կարևորությունը մեր հինավուրց ժողովրդի էթնոմշակութային պատկերը բնութագրելու առումով: Իհարկե, երբեք հավակնություն չենք ունեցել ավարտված համարելու մինչև հայ մատենագրության ասպարեզ գալը եղած նյութերի ողջ տարապատկերների արտացոլումը:

Հասկանալի է, որ ձեռնարկի այս հատվածը ոչ միայն ամբողջական չէ, այլև դրանում կարող են լինել հակասական, եր-

բեմն էլ վիճարկելի դրույթներ, քանզի ձեռքի տակ չենք ունեցել նախադեպ հանդիսացող ուսումնասիրություններ՝ բացառությամբ 2018 թ. հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների վերաբերյալ մեր ուսումնասիրությունը[1]:

Ներկա ձեռնարկը յուրատեսակ ամփոփումն է հեղինակի՝ հայ ազգագրության աղբյուրների ուսումնասիրության բնագավառում ավելի քան երկու տասնյակ տարիների հետազոտությունների: Այն հայ ազգագրության աղբյուրների համառոտ ուրվագիծն է՝ ներառելով հնագույն, հին ու միջնադարյան սկզբնաղբյուրների բնութագրման դերի ու նշանակության հարցերը: Սույն ձեռնարկի բովանդակությունը կազմող որոշ գլուխներ, ելնելով մագիստրատուրայում կարդացվող դասընթացի պահանջներից, հրատարակվել են տարբեր գիտական հանդեսներում ու ժողովածուներում:

Սույն ձեռնարկը ամբողջական դարձնելու անհրաժեշտությունից ելնելով՝ համառոտ ներառված են 2010 թ. մեր հրատարակած բուհական ձեռնարկի՝ հնագույն սկզբնաղբյուրներին վերաբերող նյութերը, այդ թվում նաև առաջին անգամ ի մի են բերված անտիկ դարաշրջանի հունական և հռոմեական սկզբնաղբյուրների՝ Հերոդոտոսի, Քենենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսի, Ապպիանոսի, Դիոն Կասսիոսի, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի երկերի հակիրճ տեղեկությունները Հայաստանի և հայերի պատմամշակութային կյանքի, հայոց ազգագրական երևույթների վերաբերյալ:

---

[1] **Ռաֆիկ Նահապետյան**, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 240 էջ: Գիրքը հրատարակել է նաև «Հայաստան» հրատարակչությունը, 2018, 262 էջ:

Վաղուց հասունացել է նաև հայրենի և օտար միջնադարյան (V-XVIII դդ.) սկզբնաղբյուրներում պահպանված ազգագրական վկայություններն ի մի բերելու և դրանք ըստ թեմանների դասավորելու անհրաժեշտությունը: Դրանք լիովին ուսումնասիրելուց հետո է միայն հնարավոր ամբողջացնել հայ ազգագրության աղբյուրագիտական պատկերը:

Հայ ազգագրության հին և միջնադարյան շրջանի վերաբերյալ հայերեն գրավոր հաղորդումներն սկսվում են հինգերորդ դարից: Այդ նյութերը տեղ են գտել ոչ միայն հայ մատենագիրների սեփական գործերում, այլև օտար գրականության թարգմանություններում: Հարկ է նկատել, որ դրանցում հայոց կենցաղի և մշակույթի վերաբերյալ հատուկ նկարագրություններ չկան, որովհետև ամեն ինչ սովորական համարվելով՝ գրանցման պահանջ չի զգացվել: Այդ է պատճառը, որ ազգագրական հարյուրավոր երևույթներ կորստյան են մատնվել: Այդուհանդերձ, հայ պատմագրությունն ու գեղարվեստական գրականությունը վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար զգալի քանակությամբ ազգագրական նյութեր են հաստատագրել: Ճիշտ է, դրանք կոտորակված են, ցաքուցրիվ, բայց մեծարժեք են: Բացի ազգայինից, հայ պատմագրության մեջ կուտակված են նաև Հայաստանի հարևան ու հեռավոր երկրների, ժողովուրդների կենցաղի վերաբերյալ մեծաքանակ նյութեր: Գրեթե ամբողջությամբ դրանք սկզբնաղբյուրի նշանակություն ունեն արևելագիտության համար: Հայկական և օտար նյութերը ներկայացնում են ժողովրդագրությունը, տնտեսական կենցաղը, արտադրամիջոցները, արտադրության կազմակերպումը, նյութական մշակույթը՝ ժողովրդական բնավայրա-բնակարանային համալիրների տիպերը, գործառույթները, ուտեստի և ըմպելիքների տեսակները, տարազը, զենքերը, ժողովրդական

փոխադրության և կապի միջոցները, սոցիոնորմատիվ մշակույթի համալիրները՝ ընտանիքը, ներընտանեկան հարաբերությունները, ամուսնահարսանեկան, մանկան ծննդի և դաստիարակության, մահվան և հուղարկավորման սովորույթներն ու ծեսերը, հասարակական ինքնակառավարվող կառույցների՝ ազգատոհմային և համայնքային ու դրացիական հարաբերությունների բնույթը, ձևերն ու նշանակությունը, ժողովրդական տոները, հավատալիքների համակարգը և այլն: Նկատենք, որ հայ պատմագրության ազգաբանական ուսումնասիրությունը կարող է բացահայտել մեր ժողովրդի բազմադարյան կյանքը, ոգին, ազգագրական ողջ պատկերը:

V-VIII դարերի սկզբնաղբյուրները այստեղ ներկայացված են համառոտ բնութագրումներով, քանզի դրանց զգալի մասը առ այսօր ազգագրական առումով ուսումնասիրված չէ: Դրանց վերաբերյալ մասնակի ուսումնասիրություններ կատարվել են մեր կողմից[2]: Այդ բացը հետագայում ձեռնարկը վերահրա-

---

[2] Տե՛ս **Ռաֆիկ Նահապետյան,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, Հեղինակային հրատ., 2013, 148 էջ: **Նույնի՝** Վաղմիջնադարյան Հայաստանի նախարարական տիրույթների, պաշտոնների և կենսապահովման մշակույթի վերաբերյալ տեղեկությունները ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» գրքի, **նույնի՝** Վաղմիջնադարյան Հայաստանի սոցիալական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում, **նույնի՝** Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» հայոց հեթանոսական դիցարանի ուսումնասիրության սկզբնաղբյուր, **նույնի՝** Ընտանեկան իրավունքը ըստ վաղ միջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների, **նույնի՝** Արաբ մատենագիրների ազգագրական վկայությունները հայերի մասին (Թ-ԺԴ դդ.), **նույնի՝** Առաքել Դավրիժեցու տեղեկությունները հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և հայկական տեղանունների մասին, **նույնի՝** Հայ ազգագրական տեղեկությունները ըստ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի, **նույնի՝** Միջնադարյան Հայաստանի գործվածքեղենը արաբ և Եվրոպացի ճանապարհորդների գնահատմամբ (IX-XV դդ.), **նույնի՝** XV-XVII դարերի եվրոպացի ճանապարհորդների ազ-

տարկելիս հաշվի կառնենք միջնադարյան սկզբնաղբյուրների ամբողջական ուսումնասիրության ժամանակ:

Ձեռնարկում կարևորվել են նաև բանահյուսությունը և ազգագրական-բանահավաքչական նյութերի՝ որպես ազգագրական ուսումնասիրության հիմնական ատաղձի աղբյուրագիտական արժեքը, ինչի նպատակով ներառվել են մեր գիտական որոշ հրապարակումներ[3]:

Որպես հայ ազգագրական գիտության սկզբնաղբյուր կարևոր նշանակություն է տրվել նաև արաբ, թուրք, եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններին: Այդուհանդերձ, ազգագրական գիտության աղբյուրագիտական հիմնական ատաղձը գրառված դաշտային ազգագրական նյութերն են, որոնց կարևորությանը, գրառման եղանակներին ու մեթոդներին նույնպես անդրադարձել ենք:

գագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին // **Ռաֆիկ Նահապետյան**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, 2019, բաժին III և IV, էջ 73-251:

[3] Տե՛ս **Ռաֆիկ Նահապետյան,** Դաշտային ազգագրական նյութերի գրառման շուրջ, **նույնի՝** Հայաստանի ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից, **նույնի՝** Ժայռապատկերները՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգաբանական ուսումնասիրության սկզբնաղբյուր, **նույնի՝** Ամուսնաընտանեկան հարաբերությունների արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում // **Ռաֆիկ Նահապետյան**, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, բաժին I և II, էջ 8-73:

Դասընթացի նպատակը, առարկան, խնդիրները

Ձեռնարկում ներկայացվում են հայ ազգաբանական գիտության հնագույն շրջանից մինչև XVIII դարի կեսերի սկզբնաղբյուրները, որոնք ներառում են Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղածո նյութերի, ժայռապատկերների, սեպագիր և օտարալեզու արձանագրությունների, վիմագրերի մասին տեղեկություններ, ինչպես նաև բանահյուսական նյութեր: Հատուկ ուշադրության են արժանացել հայ և անտիկ հունա-հռոմեական պատմիչներ երկերը, աստվածաշնչյան հղումները, եկեղեցական կանոնական և աշխարհիկ այլ աղբյուրները, արաբ, թուրք և եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում հայերի և Հայաստանի վերաբերյալ բազմահարուստ ու բազմաբնույթ ազգագրական հիշատակությունները: Ներկայացվում է նաև դաշտային ազգագրական բանահավաքչական նյութերի՝ որպես հայոց էթնոմշակութային համալիր ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրի դերն ու նշանակությունը:

Սույն ձեռնարկի նպատակից է բխում այն, որ հայ ազգագրությամբ, ինչպես նաև հնագիտությամբ և մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողը չպետք է բավարարվի մասնագիտական գրականության մեջ եղած առանձին քաղվածքների, մասնակի հաղորդումների իմացությամբ, ուստի անհրաժեշտություն է հայ ազգագրության աղբյուրներն ու պատմությունը ամբողջականորեն ներկայացնել բուհական ձեռնարկի շրջանակներում: Նա դրանով տեղեկացված կլինի հայոց պատմության և մշակույթի հնագույն հուշարձանների, սեպագիր աղբյուրների, անտիկ դարաշրջանի հունական և հռոմեական, միջնադարյան, նոր ու նորագույն հայ և օտար

սկզբնաղբյուրների մասին: Բացի այդ՝ տեղեկություններ կստանա Հայկական լեռնաշխարհի հնագույն հայ բնակչության կենցաղամշակութային գործունեության, նրա՝ համաշխարհային մշակութային ժառանգության մեջ կատարած ներդրումների վերաբերյալ: Ուսանողը կկարողանա ներկայացնել հայկական ազգային կենցաղամշակութային բազմահարուստ, ինքնատիպ դրսևորումները, արժևորել համաշխարհային կենցաղամշակութային երևույթների մեջ հայկականը՝ իր առանձնահատկություններով, միաժամանակ՝ կկարողանա տիրապետել Հայաստան երկրի և հայ ժողովրդի վերաբերյալ ազգագրական սկզբնաղբյուրներին, որոնց իմացությամբ ուսանողը կկարողանա բացահայտել հայոց կենցաղի և մշակույթի վերաբերյալ բազում օրինաչափություններ և յուրահատկություններ, կանխատեսել հայոց կենցաղամշակութային զարգացման հեռանկարները:

Ձեռնարկը ներկայացնում է հայ ազգագրական գիտության անցած ուղին, ազգագրական նյութերի տարերային, չհամակարգված կուտակման ժամանակաշրջանի աղբյուրների վկայությունները Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների և նրա ժառանգորդ Հայաստանի և հայերի էթնոմշակութային ինքնատիպ դրսևորումների մասին: Այն ներառում է 1. **հնագույն, անտիկ և միջնադարի դարաշրջաններից մինչև XVIII դարի առաջին կեսի** հետևյալ շրջափուլերը.

ա) Ժայռապատկերներ, հնագիտական նյութեր (Ք.ա. IX-I հազարամյակի կեսեր): բ) Սեպագիր արձանագրություններ (Ք.ա. III հազարամյակից մինչև Ք.հ. III դար): գ) Հունա-հռոմեական անտիկ պատմիչներ (Ք.ա V դարից – Ք.հ. III դ.): դ) Հայ մատենագրություն, բանահյուսություն, վիմագրություն (V դարից մինչև XVIII դարի առաջին կես): ե) Արաբ, թուրք և եվրո-

պացի ճանապարհորդների ուղեգրություններ և այլ աղբյուրների ազգագրական վկայություններ (IX դարից միչև XIX դարի վերջ): զ) Դաշտային ազգագրական նյութերը՝ որպես հայ ազգագրական գիտության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր (XIX դարի վերջերից մինչև մեր օրերը):

Աղբյուրագիտության խնդիրն է ցույց տալ պատմական սկզբնաղբյուրների ծագումը, դասակարգումը, արժանահավատությունն ու գիտական արժեքը: Գիտական աղբյուրագիտությունը ամեն մի շրջափուլի սկզբնաղբյուր դիտարկում է որպես որոշակի ժամանակաշրջանի ու հասարակական որոշակի միջավայրի ծնունդ և համապատասխանորեն իմաստավորում այն: Սկզբնաղբյուրներն իրենց բնույթով և արժեքով շատ բազմազան են, ներառում են հայագիտության շատ գիտակարգեր. հնագիտություն, պատմագրություն, բանահյուսություն (սերնդեսերունդ պատմվող բանավոր խոսք՝ դյուցազներգություն, հեքիաթ, առասպել, առակ, առածներ, գուսանական և ժողովրդական երգեր և այլն), մշակութաբանություն, լեզվագիտություն, ժողովրդագրություն, պատմական աշխարհագրություն, արխիվագիտություն, վիմագրագիտություն, թանգարանագիտություն և այլն, որոնց տվյալների հիման վրա հնարավոր կլինի այս կամ այն չափով վերականգնել տվյալ դարաշրջանի հայոց էթնոմշակութային պատկերը:

Նշենք, որ «Հայ ազգագրության աղբյուրագիտություն» ուսումնական սույն ձեռնարկը համանման առաջին փորձն է, ուստի հնարավոր են բացթողումներ, վրիպումներ, գուցեն սխալ մեկնաբանություններ: Մենք սիրով հաշվի կառնենք գործընկերների, ընթերցողների դիտողություններն ու առաջարկները հետագայում ուսումնական ձեռնարկը վերահրատարակելիս:

Թեմա 1. Հնագիտական պեղածո նյութերը որպես ազգագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր

1.1. Հնագիտական պեղածո նյութերը որպես Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության կենցաղի և մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր

Հայտնի է, որ ազգագրական և հնագիտական նյութերի համադրությունը մեծապես նպաստում է հին հասարակությունների կառուցվածքի, նյութական և հոգևոր մշակույթի, կիրառական արվեստի, հավատալիքների, պաշտամունքի, կրոնի ուսումնասիրությանը և հետագա վերակազմությանը: Հնագիտությունն ու ազգագրությունը սերտորեն կապված են միմյանց հետ. ազգագրագետն իրերն ու երևույթները պարզաբանում է հնագիտության միջոցով, իսկ հնագետը՝ ազգագրական տվյալների օգնությամբ: Ազգագրական գիտության համար հնագույն կարևոր սկզբնաղբյուրը հնագիտությունն է, որովհետև հենց այն է օժտում բացարձակ թվագրման կամ դրա բացակայության դեպքում համեմատական-տիպաբանական մեթոդի վրա հիմնված, քիչ թե շատ կայուն ժամանակագրական որոշակիություն ունեցող ուղղակի փաստերով: Ժամանակագրորեն այն ընդգրկում է նախնադարի հասարակության գոյության ժամանակագրական սահմանները[4]: Հնագիտական հա-

[4] Մինչև վերջերս հնագիտական ուսումնասիրության ժամանակային վերին սահմանը համարվում էր միջնադարը, հայ իրականության համար՝ անտիկ և վաղ ժամանակաշրջանը, մինչդեռ Սիբիրի և հատկապես Հյուսիսային Ամերիկայի բնիկների ուշ դարաշրջանի բնակավայրերի պեղումները ցույց տվեցին հնագիտության ուսումնասիրության բացառիկ տեղեկատվական արժեքը նաև այդ դեպքում: Արդի գիտության մեջ այդպիսի ուսումնասիրություններն անվանվում են էթնոհնագիտություն կամ էթնոպատմություն:

րուստ նյութերը պատմական ազգագրության համար նույնքան խոսուն վկաներ են, որքան պատմության համար: Դրանք լրացնում են հնագույն գրավոր տվյալները և ճշտում վերջիններիս վկայությունները:

Հնագիտական նյութը հնարավորություն է ընձեռնում հետամտելու մշակույթի արտաքին ձևերի դինամիկային, տիպաբանական համեմատության և շերտագրական դասավորության հիման վրա վաղ ձևերը առանձնացնելու ուշ ձևերից և սահմանելու դրանց փոփոխությունների ժամանակագրական հաջորդականությունը: Այդ հիմքի վրա ստեղծվում է մարդկային մշակույթի զարգացման պատկերը նախնադարյան հասարակության պատմության ողջ ընթացքում, միաժամանակ հետամտվում է մշակույթի զարգացման ժառանգականությունը՝ սկսած նրա պարզագույն ձևերից մինչև ավելի բարդը:

Մերձավոր Արևելքի, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի և Միջերկրականի ավազանի հնագիտական հուշարձանների պեղումներից հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդների, հնէամարդաբանական, հնէակենդանաբանական և հնէաբուսաբանական գտածոների ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են ընձեռում ներկայացնելու տարածաշրջանի սոցիալ-մշակութային հարափոփոխ զարգացումների հաջորդականությունն ու անընդհատությունը պալեոլիթից մինչև անտիկ դարաշրջան (2 մլն տարի հնությունից մինչև Ք.ա. VI/V դդ.): Հնէամարդաբանական, հնէակենդանաբանական և հնէաբուսաբանական նյութերը իրենց հերթին տեղեկությունների անգնահատելի աղբյուրներ են հնագույն մարդկանց ֆիզիկական առանձնահատկությունների, կենդանիների տեսակների կառուցվածքի և ցեղատեսակների, մշակովի բույսերի սորտերի և տեսակների մասին:

Նեոլիթյան (Ք.ա. XII-X/VII հազ.), էնեոլիթյան (Ք.ա. VII հազ. կեսերից - IV հազ. I կես) դարաշրջանների կենցաղամշակութային ընդհանուր բնութագիրը:

Հնագիտական նյութերով բացահայտված է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները դեռևս նեոլիթյան (Ք.ա. XII-X/VII հազ.) դարաշրջանում հավաքչությունից անցել են հողագործության և որսորդությունից՝ կենդանիների ընտելացման: Հանդես են եկել իրենց ուրույն ճարտարապետությամբ բնորոշվող բնակատեղիներ, զարգացել է բնակարանային ճարտարապետությունը (Չոյունյու թեփե, Առատաշեն): Կացարանների ներսում՝ կենտրոնում, ունեցել են կավից կամ քարից պատրաստված օջախներ, հասել են փայտի, քարի, ոսկորի մշակման կատարելության, հյուսել են խսիր, կողով, ձկնորսական ցանց, բուսական թելերից՝ կտավ, պատրաստել են կավե ամաններ, գործել են զգեստներ և այլն:

Էնեոլիթյան հուշարձանների նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանի երկրագործը լայնորեն յուրացրել է բազմաթիվ շրջաններ ցանքատարածությունների համար, ծանոթ է եղել ոռոգման պարզունակ եղանակներին, ուներ հողամշակման, բերքահավաքի և երկրագործական մթերքները վերամշակելու աշխատանքային բազմաթիվ գործիքներ, որոնցով և բնորոշվում է ժամանակի երկրագործական տնտեսության բնույթն ու մակարդակը:

Շամիրամ-Ալթիի, Թեղուտի, Ծաղկունքի, Աղստևի հովտի բնակավայրերում հայտնաբերվել են ոսկրե սրածայրեր, խոշոր անասունների սնամեջ ոսկորներից և քարից պատրաստված բրիչներ, կտրող գործիքների վանակատե ու կայծքարե դանականման ներդրվող շեղբիկներ, ինչպես նաև բազալտե աղորիքների, սանդերի ու վարսանդների բազմաթիվ

նմուշներ, որոնք օգտագործվել են հողի փխրեցման, բերքահավաքի և մթերքների վերամշակման աշխատանքներում: Բրիչային երկրագործությունը էնեոլիթյան տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր: Էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան երկրագործությանը բնորոշ էին հացաբույսերի խառը ցանքերը: Ցորենն ու գարին բնիկների հիմնական սննդամթերքներն էին: Թեղուտի կացարաններում հում աղյուսների և հարդի խառնուրդի մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցորենի ու գարու հատիկներ[5]: Բացի հացաբույսերից, բնիկներն ունեցել են նաև երկրագործական բազմաթիվ այլ կուլտուրաներ: Ինչպես ուշ նեոլիթյան, այնպես էլ էնեոլիթյան տնտեսության մեջ երկրագործության հետ մեկտեղ շարունակում էր զգալի դեր կատարել հավաքչությունը, որը վաղ երկրագործական տնտեսության հիմքն էր:

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էլ անասնապահությունն էր: Էնեոլիթյան հուշարձանների պեղումներից հայտնաբերվել են ցուլերի, կովերի, այծերի, ոչխարների, խոզերի ոսկորների մնացորդներ: Խոշոր ու մանր եղջերավոր անասուններն օգտագործվել են երկրագործության մեջ որպես քաշող ուժ և ապահովել մսի, կաթնամթերքների, կաշեգործության, մանածագործության աճող պահանջները: Տնտեսության մեջ շարունակում էր զգալի դեր խաղալ որսորդությունը, իսկ մեծ գետերի հովիտներում՝ ձկնորսությունը:

Երկրագործության և անասնապահության առաջացմանն ու զարգացմանը զուգահեռ՝ զարգանում էին նաև դրանցով

---

[5] Տե՛ս **Հ. Ա. Մարտիրոսան,** Հայաստանը էնեոլիթի (պղնձեքարեդարյան) ժամանակաշրջանում // Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Երևան, 1971, էջ 116, 118:

պայմանավորված ու անմիջապես դրանցից բխող արհեստները: Անասունների ոսկորներից պատրաստում էին բրիչներ, սրածայրեր, քերիչներ, ասեղներ, հերուններ, թիականման մանր գործիքներ և այլն:

Իլիկների գլուխների առկայությունը անհերքելիորեն ապացուցում է մանածագործության գոյությունը: Բարձր զարգացման էր հասել կողովագործությունը, խեցեգործությունը, տակավին առաջին քայլերն էր անում մետաղամշակությունը (IV հազ. Ք.ա.): Անվերապահորեն կարելի է նշել, որ Փոքր Ասիան և Հայկական բարձրավանդակը եղել են մետաղահանության և մետաղամշակման ամենանախնական կենտրոնները, որտեղից մետաղարդյունաբերության արտադրանքը ներթափանցել է Ասորիք, Պաղեստին և Հյուսիսային Միջագետք[6]:

Վաղ բրոնզի դարաշրջան Ք.ա. 3500–2400/2220 թթ.: Լեռնաշխարհի ողջ տարածքում և հարակից շրջաններում նշված ժամանակաշրջանում տիրապետում է **Շենգավիթյան** (Կուր-արաքսյան, Վաղ անդրկովկասյան) հնագիտական մշակույթը, որի տիրույթն ընդգրկում է մոտ 1,5 մլն քառ. կմ՝ ներառելով ողջ Հայկական լեռնաշխարհը, Հյուսիսային Կովկասի մեծագույն մասը (Չեչնիա, Ինգուշեթիա, Դաղստան), Հյուսիսային Սիրիան, Հորդանան գետի արևմտյան ափերը և Գազայի հովիտը: Շենգավթյան հնագիտական մշակույթը բնորոշվում է մի շարք հատկանշական գծերով, որոնցից առաջին հերթին պետք է նշել վարդագույն աստառով սև փայլեցված խեցեղենը:

---

[6] Տե՛ս **А. А. Иессен,** Кавказ и Древний Восток в IV-III тысячелетиях до н.э., КСИА, 1960, вып. 93, էջ 6:

Վաղ բրոնզեդարյան հուշարձանների պեղումները բազում տեղեկություններ են հաղորդում Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսության, կենցաղի, զբաղմունքների մասին: Այսպես, Մոխրաբլուրի հետազոտությունների ժամանակ հայտնաբերված պատվարները վկայում են զարգացած երկրագործության մասին[7]: Երկրագործության զարգացման բարձր մակարդակի վկայություն են նաև վաղ բրոնզեդարյան այլ բնակավայրերում պեղված ցորենի բազմաթիվ շտեմարանները (Էլառ, Շենգավիթ, Յանիկ թեփե, Արսլան-թեփե և այլն): Պետք է նշել, որ Յանիկ թեփեի ցորենի շտեմարան ծառայող շինությունում առկա են տարբեր չափերի և մեծության խորշեր, որոնք, ըստ Չ. Բարնեյի, նախատեսված էին ցորենի տարբեր տեսակների համար[8]: Հատկանշական է նաև, որ Շենգավիթի պեղումների ժամանակ արձանագրված է ցորենի և գարու միասնական ցանքի փաստը: Բացի այդ, Շենգավիթում ցորենի մնացորդները գտնվել են առանձին նրբախավերով: Ըստ Ե. Բայբուրթյանի՝ հասկերը կացարան են տեղափոխվել խրձերով և ենթարկվել վերամշակման: Այստեղ հայտնաբերված ցորենը և գարին պատկանել են ամենատարբեր տեսակների. ցորենը՝ կլորահատիկ, փափուկ, իսկ գարին՝ մերկահատիկ և թեփուկավոր: Վաղ բրոնզեդարյան տնտեսության կարևոր նվաճումներից մեկը նաև սեպաձև քարե խոփերով ու պարզունակ արորի և լծկան խոշոր եղջերավոր անասունների օգնությամբ վարուցանք անելն էր:

---

[7] Տե՛ս **Լ. Ջալալաբեկյան,** Մոխրաբլուրի պատվարները // ՊԲՀ, 1974, թիվ 4, էջ 157-162:

[8] Տե՛ս **Է. Վ. Խանզադյան,** Էլառ-Դարանի, Երևան, 1979 էջ 23: **Հ. Սիմոնյան**, Շենգավիթի 2000 թ. պեղումները, Հայաստանի հնագույն մշակույթը, Երևան, 2001, էջ 33-34:

Երկրագործության նոր մակարդակին համապատասխան՝ փոխվում և զարգանում են նաև հնձի գործիքների տեսակներն ու ձևերը: Հանդես են գալիս առաջին մետաղե մանգաղները:

Տեղի բնակլիմայական պայմանները, բացի հացաբույսերի մշակությունից, հատկապես նպաստավոր են խաղողագործության և գինեգործության զարգացման, ինչպես նաև մի շարք արժեքավոր տեխնիկական բույսերի (ձիթատու, եթերայուղատու, ներկատու, թելատու և այլն) աճեցման համար: Հետևողականորեն կիրառվող ընտրասերման միջոցով ստեղծվել էին խաղողի տեղական բարձրորակ տեսակներ՝ Արցախ՝ Ուզերլիկ–թեփե, Ուտիք՝ Ղազախ, Վայոց ձոր՝ Արենի և այլն: Հայկական լեռնաշխարհում գինեգործության հնագույն ակունքների մասին վկայում է աստվածաշնչյան ավանդությունը, համաձայն որի՝ ջրհեղեղից փրկված Նոյը, իջնելով Արարատից, տնկում է խաղողի որթը և գինի պատրաստում: Հնագիտական տվյալները նույնպես ապացուցում են հայկական գինեգործության վաղնջականությունը: Առ այսօր հայտնի հնագույն գինեգործական կառույցը հայտնաբերվել է Հայաստանում (Արենի, Ք.ա. V հազարամյակի վերջ): Վանա լճի ավազանում Ք.ա. III հազարամյակում գինու արտադրության և հնարավոր է նաև Հարավային Միջագետք արտահանման վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել Գիլգամեշի մասին շումերական էպոսից[9]:

Երկրագործության հետ մեկտեղ՝ զարգանում էր նաև անասնապահությունը: Դրա մասին են վկայում հայտնաբերված եզան, կովի, գոմեշի, ոչխարի, խոզի ոսկորների բազմա-

[9] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի հնագույն կենտրոն // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 6-28:

քանակ գտածոները (Վանաձորի մոտ Քոսի ճոթերում, Շենգավիթում և այլ բնակատեղիներում)[10]: Շենգավթում հայտնաբերված հնէակենդանաբանական նյութերում մանր եղջերավոր անասունների ոսկորները կրկնակի գերազանցում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորների քանակը: Այս փաստը համադրելով ազգաբանական տվյալների հետ՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ նշված ժամանակաշրջանում տնտեսության առաջատար ճյուղը երկրագործությունն էր, քանի որ անասնապահության առաջատար տնտեսաձև լինելու դեպքում այդ հարաբերակցությունը կկազմեր 8:1[11]:

Բնակչության աճը, բնակավայրերի ընդլայնումը, խոշոր եղջերավոր անասունների ավելի լայն կիրառումը երկրագործության մեջ հասցնում են հացահատիկային տնտեսության, բանջարաբոստանային ու այգեգործական կուլտուրաների մշակության ավելի բարձր մակարդակի:

Պեղումներից հայտնաբերված նյութերը վկայում են նաև անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին: Հառիճի պեղումների ժամանակ հայտնաբերվել է շան արձանիկ, որը, ըստ Ս. Մեժլումյանի, հովվաշուն է: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև խոզի և ձիու ոսկորներ[12]: Անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին է վկայում նաև Ասլան թեփեում պեղված սպանդանոցը[13]: Հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց

---

[10] Տե՛ս **Է. Խանզադյան,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում, Երևան, 1967, էջ 40-41:

[11] Տե՛ս **С. А. Есаян.** Скульптура древней Армении. Ереван, 1969, էջ 15:

[12] Տե՛ս **С. Межлумян,** Палеофауна эпохи энеолита, бронзы и железа на территории Армянского нагорья, Ереван, 1972, էջ 166-168:

[13] Տե՛ս **A. Palmieri.** Excavations at Arslantepe, Malatya. AS vol XXXI, էջ 207-208.

է տալիս, որ միջին բրոնզի դարի սկզբում մանր եղջերավոր անասունների գլխաքանակի մեծ աճը հանգեցրել է հեռագնա անասնապահությանը՝ հասարակական արտադրության նոր, ավելի առաջավոր ձևի զարգացմանը[14]:

Վաղ բրոնզի դարաշրջանի տնտեսության մեջ որսորդությունը ևս մեծ տեղ է գրավել: Ամենայն հավանականությամբ որսի հիմնական կենդանիներից էր ազնվազարմ եղջերուն: Շենգավիթից հայտնաբերվել է այդ կենդանու ոսկորների 121 նմուշ: Միաժամանակ Հայաստանի տարբեր բնակատեղիներում՝ Մեծամոր, Շենգավիթ, Քոսի Ճոթեր (Վանաձոր), Գառնի, Շահլամա (Նոյեմբերյանի տարածաշրջան) հայտնաբերվել են նաև քարայծի, վարազի, կզաքիսի, աղվեսի, գայլի, նապաստակի, կուղբի և այլ վայրի կենդանիների ոսկորներ: Որսորդության լայն տարածման մասին են վկայում նաև պեղումներից հայտնաբերված բազմապիսի նետասլաքները և նիզակի ծայրապանակները:

Ելնելով այն հանգամանքից, որ վաղ բրոնզի բնակավայրերը տեղադրվել են հիմնականում գետերի ափերին՝ տնտեսության մեջ զգալի դեր է խաղացել նաև ձկնորսությունը: Այսպես, Շենգավիթում հայտնաբերվել են ձկան ոսկորների 325 նմուշներ, այդ թվում նաև մեկ մետր երկարությամբ ծածանի ող: Ձկնորսության համար են ծառայել պեղումներից հայտնաբերված տարբեր տեսակի **սուզանիվները** և սուզաքար ծանրոցները[15]:

---

[14] Անասնապահության զարգացման կիսաքոչվորական ձևի իրականացման մասին տե՛ս **Б. Б. Пиотровский,** Развитие скотоводства в древнейшем Закавказье // СА, XXIII, 1955, էջ 6:

[15] Տե՛ս **Է. Խանզադյան,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում, էջ 42-43, **С. Есаян,** նշվ. աշխ., էջ 17, **С. Межлумян,** նշվ. աշխ., էջ 166:

Զարգացման նկատելի մակարդակի են հասել արհեստները՝ խեցեգործությունը, մետաղագործությունը, քարամշակումը: Առավել զարգացած էր խեցեգործությունը: Շենգավիթյան մշակույթի հատկանշական գծերից է սև և կարմիր փայլեցված խեցեղենը, որը աչքի է ընկնում ձևերի և զարդանախշի սյուժեների բազմազանությամբ, նուրբ մշակմամբ և պատրաստման յուրահատուկ տեխնոլոգիայով: Ըստ Ե. Բայբուրթյանի և Բ. Կուֆտինի՝ այն կարող էր ստացվել երկու եղանակով. կա՛մ կավե կմախքի վրա դրսից ու ներսից թաց և յուղոտ կավի շերտեր քսելու, կա՛մ էլ՝ թրծման եղանակով: Խեցեղենը հաճախ եռամաս է[16]: Խեցեղենի պատրաստման համար օգտագործվել է բնակավայրից ոչ հեռու գտնվող հանքերի կավանյութը[17]:

Վաղ բրոնզի դարաշրջանում շահագործվել են բրոնզի մի քանի հանքավայրեր Լոռիում, Սյունիքում, Տայքում: Հանդես էին գալիս հանքանյութի վերամշակման գործում մասնագիտացված բնակատեղիներ (Ֆիոլետովո): Պեղումների ժամանակ հաստատագրված են մետաղյա զենքի և գործիքների մի քանի տեսակներ՝ դաշույններ, կացիններ, նիզակի ծայրապանակներ, մանգաղներ (գծանկար 1): Մետաղագործության բարձր զարգացման մասին են խոսում նաև կաղապարները (Շենգավիթ, Գառնի, Կառնուտ (Շիրակ) և այլն:

---

[16] Տե՛ս **Է. Խանզադյան,** նշվ. աշխ., էջ 69:

[17] Տե՛ս **К.О. Навасардян,** Техника – технологические показатели особенностей керамики Армянского нагорья III-II тыс. д.н.э. (автореферат дисс. на соиск. уч. степени канд. ист. наук), Ереван, 1997, էջ 7-8:

Գծանկար 1

Պատյանավոր դաշույններ և բրոնզե պատյաններ Սևանի ավազան



Բրոնզե սակրեր (Ախթալա)

Բրոնզից պատրաստում էին տարբեր տեսակի զարդեր՝ օղեր, շքասեղներ և այլն: Տարածում էին գտել տնտեսական ու պաշտամունքային նշանակության հսկա կաթսաները, բազմազան ամանեղենը, կափարիչները, պատվանդանները, օջախները մարդու և կենդանիների արձանիկները: Արհեստագործական արտադրանքը արտադրվում էր ինչպես տներում, այնպես էլ մասնագիտացված արհեստանոցներում: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են քարամշակման

(Շենգավիթ, Թեթրի Ծղարո)[18], մետաղագործական (Շենգավիթ, Ֆիոլետովո)[19], խեցեգործական (Լոռուտ)[20] արհեստանոցները: Պահպանվել են ոսկերչության զարգացման մասին վկայող նյութեր (Շենգավիթ, Մեծամոր, Ստեփանակերտ)[21]: Պեղումների ընթացքում գտնվել են անիվների բազմաթիվ մոդելներ, ինչպես նաև սայլերի կերտվածքներ, ինչը վկայում է անիվային տրանսպորտի զարգացման մասին[22]:

Զարգացած էր նաև կաշեգործությունը, ինչի մասին են վկայում հայտնաբերված տարբեր ձևերի և չափերի պահանգավոր դանակները, քերիչները, շեղբերը և հերունները: Մանածագործության զարգացման մասին են վկայում տարբեր տեսակի ոսկրե ասեղները: Շահագործվում էին նաև աղի Կողբի («Իգդիրից ոչ հեռու») և Բոզդակի (Նախիջևան) հանքավայրերը:

Նշյալ ժամանակաշրջանում սկսվում է նախնադարյան կարգերի քայքայումը, հասարակության սոցիալական շերտավորումը և դասակարգային հարաբերությունների ձևավորումը: Արձանագրվում է բնակավայրերի քանակի զգալի աճ, առաջանում են նախաքաղաքային տիպի խոշոր կենտրոններ, որոնք բնորոշվում են կանոնավոր հատակագծման տարրերով, խոշոր պաշտամունքային և արհեստագործական համա-

---

[18] Տե՛ս **Հ. Սիմոնյան, Լ. Խաչատրյան,** Շենգավիթ բնակավայրի 2003 թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, պր. XIII, Երևան, 2005, էջ 56-60:

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 56-60, **Ա. Геворкян, А. Пальмиери,** Фиолетово, Հայաստանի հնագույն մշակույթը, Երևան, 2001, էջ 11-13:

[20] Տե՛ս **Ս. Դևեջյան,** Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001, էջ 15:

[21] Տե՛ս **Ս. Սարդարյան,** Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2004, էջ 274: **К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили.** Древние Культуры Южного Кавказа. Л. 1971:

[22] Տե՛ս **С. А. Есаян.** նշվ. աշխ., էջ 16:

լիրների, զարգացած ամրաշինական համակարգերի առկայությամբ: Կարելի է զատել բնակարանաշինության մի քանի տիպեր: Արարատյան դաշտում և հարակից շրջաններում հաստատագրված են կլոր հատակագծով փոքր կացարաններ, որոնք օղակվում էին ուղղանկյուն հատակագծով փոքր կացարաններով: Ամենայն հավանականությամբ դրանք նահապետական մեծ ընտանիքի բնակարանային համալիրներ էին, ընդ որում ուղղանկյուն կացարանները կարող էին նախատեսված լինել առանձին փոքր ընտանիքների համար, մինչդեռ կենտրոնական կացարանը օգտագործվում էր որպես հասարակական-տոհմական, արտադրական և պաշտամունքային կենտրոն: Վաղ բրոնզի զարգացմանը զուգընթաց՝ նկատվում է բնակարանային համալիրների առանձնացում:

Ք.ա. III հազ. երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում հանդես են գալիս առաջին պալատական կառույցները: Պաշտամունքային կառույցների տիպաբանությունը հնարավորություն է տալիս խոսելու հիերարխիայի մասին[23]: Մասնավորապես կարելի է զատել մոնումենտալ ճարտարապետությամբ բնորոշվող սրբավայրերը (Մոխրաբլուր): Առկա է «սրբազան տարածքը» կազմակերպելիս տեղանքի օգտագործման երևույթը (Ագարակ)[24]: Իր ուրույն ճարտարապետությամբ է բնորոշվում նաև Ջրահովտի սրբավայրը[25]:

---

[23] Տե՛ս **Ա. Գնունի,** Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները, ՊԲՀ, 2006, թիվ 1, էջ 237-252:

[24] Տե՛ս **П. Аветисян.** Предварительные результаты раскопок памятника Агарак. Археология, этнология и фольклористика Кавказа. Св. Эчмиадзин, 2003, էջ 254:

[25] Տե՛ս **Է. Խանզադյան,** Ջրահովիտ // Հայաստանի հնագույն մշակույթը, պր. 3, Երևան, 2002 էջ 14, նկ. 2:

Այդ կառույցների հետ մեկտեղ՝ պաշտամունքային անկյուններ և հատվածներ կան կացարաններում, որոնք թույլ են տալիս խոսել վաղ բրոնզի դարաշրջանում կրակի և ջրի պաշտամուքի մասին: Վաղ բրոնզի դարաշրջանի պաշտամունքի ուսումնասիրության համար առատ նյութ է տալիս պաշտամունքային օջախների և զոհարան-հենակների ուսումնասիրությունը: Նմանատիպ կերտվածքներ կան վաղ բրոնզի դարաշրջանի բոլոր հուշարձաններում՝ ինչպես բնակավայրերում, այնպես էլ դամբարաններում: Դրանց բազմազանությունը թույլ է տալիս խոսել օջախների և հենակների մի շարք ծիսական գործառույթների մասին՝ կապված ընտանիքի, նախնիների պաշտամունքի հետ[26]: Պեղումների ընթացքում գտնված բազմաթիվ արձանիկները վկայում են վաղ բրոնզեդարյան պաշտամունքի տարբեր կողմերի մասին: Այսպես, կնոջ արձանիկները մայր-աստվածուհու պաշտամունքի արտահայտությունն են: Հատկանշական է, որ արձանիկներում ընդգծված են կանանց կրծքի և ազդրերի հատվածները, ինչը մարմնավորում է կնոջ դերը որպես սերունդ շարունակողի և ընտանիքի պահապանի[27]: Միևնույն ժամանակ, վաղ բրոնզեդարյան կերտվածքներում ֆալոսատիպ տարրերի առկայությունը վկայում է հայր-նահապետի դերի բարձրացման մասին[28] (գծանկար 2):

---

[26] Տե՛ս **Ա. Գնունի,** Շենգավիթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները // ՊԲՀ, 2004, թիվ 1, էջ 203-220:

[27] Տե՛ս **Շ. Ա. Եսայան,** նշվ. աշխ., 1981, էջ 15:.

[28] Տե՛ս **Ա. Գնունի,** Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները // ԲԵՀ, 2004, թիվ 2, էջ 122-130:

Գծանկար 2



Վաղ բրոնզի դարաշրջանի մարդակերպ քանդակներ
1, 2 Շենգավիթից
3, 4 Մոխրաբլուրից
5 կավե ֆալլուս Շենգավիթից

Վաղ բրոնզի դարաշրջանում հաստատագրվում է դամբարանադաշտերի զատումը բնակատեղիներից: Թեպետ կացարանների ներսում թաղումները դեռևս պահպանվում են (Մեծամոր), սակայն դրանք կրում էին վերապրուկային և հաճախ պաշտամունքային բնույթ: Հաստատագրված են նաև ինչպես անհատական (Էլառ, Հառիճ), այնպես էլ կոլեկտիվ

թաղումներ (Շենգավիթ, Ստեփանակերտ, Արազած, Ամիրանիս գորա): Մեծ բազմազանություն է դիտվում նաև թաղման կառույցների մեջ: Կան հիմնահողային, քարարկղային դամբարաններ, հավանաբար նաև տոհմի համար նախատեսված ընդարձակ դամբարանային շինություններ: Թաղման ծեսում նկատելի է սոցիալական շերտավորումը[29]:

Միջին բրոնզի դարաշրջան (2400/2300-1500): Ք.ա. III հազ. կեսին Հայկական լեռնաշխարհը թևակոխում է շենգավիթյան մշակույթի քայքայման ժամանակաշրջան՝ զիջելով ասպարեզը իրար հաջորդող Թռեղք-վանաձորյան, Սևան-արցախյան և Կարմիրբերդյան մշակույթներին: Միջին բրոնզեդարյան մշակույթի զարգացման առաջին փուլում ակնհայտ են քաղաքային կյանքի անկման գործընթացները[30]:

Ք.ա. II հազարամյակի առաջին կեսին բնորոշ էր հողագործական-անասնապահական բնակավայրերի որոշակի վերաբաշխում. տափաստանային և հարթավայրային գոտիների բնակչության մի մասի հաշվին ընդլայնվում էր լեռնային շրջանների բնակեցումը՝ կլիմայի չորացման և Հին Արևելքում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի պատճառով[31]: Սակայն տափաստանային գոտում, հատկապես առևտրական ճանապարհների խաչմերուկում, որոշ բնակավայրեր պահպանվում են (Ուզերլիկ թեփե, Հաֆթվան թեփե, Ուրմիա լճի ավազան): Հատկանշական է, որ Ուզերլիկ թեփե բնակավայրի

---

[29] Տե՛ս **Կ.Հ. Кушнарева,** Южный Кавказ IX–II тысячелетиях, д.н.э., СПб., 1993, էջ 271-272: **Է. Խանզադյան,** Էլառ-Դարանի, էջ 36-49: **Ա.Ա. Мартиросян,** Армения в эпоху…, էջ 42-43:

[30] Տե՛ս **Պ. Ավետիսյան,** Հայաստանի միջին բրոնզի պարբերացումն ու ժամանակագրությունը (թեկն. ատեն. սեղմագիր), Երևան, 2003, էջ 18:

[31] Տե՛ս **Կ.Հ. Кушнарева,** նշվ. աշխ., էջ 240:

ստորին շերտի մի փոքրիկ հատվածում բացվել է 70 հոր, որոնցից շատերը լցված են եղել ցորենի, գարու այրված հատիկներով և կորեկի ալյուրով:

Ավելի ցայտուն ու որոշակի են անասնապահության զարգացումն ուրվագծող նյութերը: Մանր ու խոշոր ընտանի կենդանիների կմախքների կողքին հայտնաբերվել են նաև ձիերի և շների ոսկորներ, որոնց օգտագործումը տնտեսության մեջ կապված էր հեռագնա անասնապահության վերելքի հետ: Լեռնային գոտիներում տարածված էր անասնապահության նստակյաց ձևը, ընդ որում երկրագործական տնտեսությունը ներառում էր նաև ջրովի խոտհարքների մշակումը (Գեղամա լեռներ, Արագածի լանջեր): Մանր և խոշոր եղջերավոր անասունների քանակական աճը հավելյալ արժեքի կուտակման, փոխանակության ու առևտրի հուսալի բազա է դառնում:

Սոցիալական առումով միջին բրոնզը աչքի է ընկնում վաղագույն դասակարգային հարաբերություններին անցումով և բնորոշվում «որպես առաջնորդության դարաշրջան» ու «քաղաքակրթության անցման ոչ ուրբանիստական ուղի»[32]: Քարաշամբի և Քորուխ-թաշի գավաթներում գահին նստած առաջնորդների պատկերները ակնհայտորեն վկայում են առաջնորդների իշխանության պաշտոնականացման մասին: Թաղման ծեսի վերլուծությունը խոսում է մահացած առաջնորդի սրբագործման մասին: Միջին բրոնզեդարյան հարուստ դամբարանների թաղման գույքի հետազոտությունը թույլ է տալիս

[32] Տե՛ս **В. Массон,** Кавказский путь к цивилизации. Древние общества Южного Кавказа. СПб., 1997 с. 124-133.

ենթադրել առաջնորդի՝ զորահրամանատարի և քրմի գործառույթների համատեղման մասին[33]:

Սոցիալական համակարգը արհեստների և արվեստների զարգացմանը պահանջներ էր ներկայացնում: Հսկայական դամբարանային կառույցների չափերը և ճարտարապետությունը վկայում էին զարգացած շինարվեստի մասին[34]:

Զարգանում էր նաև ոսկերչությունը: Քարաշամբի, Թռեղքի (գծանկարներ 3, 4, 5), Վերին Նավերի պեղումներից հայտնաբերված նմուշները աչքի են զարնում կատարման վարպետությամբ: Բարձր մակարդակի էր հասել դրվագման արվեստը[35]:

---

[33] Տե՛ս **Ա. Գնունի,** Առաջնորդի, զորահրամանատարի և քրմի գործառույթների համատեղումը Հին Հայաստանի տարածքում, Հայկական բանակ, 2006, թիվ 4, էջ 81-86:

[34] Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, թիվ 1, Երևան, 1996, էջ 70:

[35] Տե՛ս Հին Հայաստանի ոսկին, Երևան,2007 էջ 71-89:

Գծանկար 3



Միջին բրոնզի դարաշրջանի գավաթներ (Թռեղք, Քարաշամբ)

Գծանկար 4



Քարաշամբի գավաթի պատկերների բացվածքը

Գծանկար 5



Թռեղքի գավաթի պատկերներ

Հայկական լեռնաշխարհի պատմության միջին բրոնզե-դարյան փուլի սկիզբն ազդարարող և ոսկերչության զարգացման աննախադեպ մակարդակի մասին վկայող նշանակալից

հավաքածուներից մեկը պեղվել է Քարաշամբի դամբարանադաշտում: Այն Թռեղքյան մշակույթին վերագրվող հուշարձան է և թվագրվել է Ք.ա. III-II հազարամյակների սահմանագծով[36]: Հին արևելյան ոսկերչության անկրկնելի նմուշ է այս դամբարանից գտնված արծաթյա դրվագազարդ գավաթը: Այն միջին բրոնզի կենցաղի և հավատալիքների մասին հարուստ տեղեկություններ է տալիս:

Միջին բրոնզեդարյան դարաշրջանում զարգացման բարձր մակարդակի է հասնում նաև զինագործությունը: Հանդես են գալիս զենքի բազմաթիվ տեսակներ՝ դաշույններ, կացիններ, նիզակներ: Զենքի և ռազմական գործի միջին բրոնզեդարյան մշակույթների կրողների կյանքում դրանց մեծ նշանակության մասին է վկայում զենքի առանձին նմուշների զարդարումը ծիսական հատկանիշներով: Հանդիպում են ակնհայտ ծիսական նպատակների համար նախատեսված զենքի նմուշներ[37] :

Մետաղագործության այլ ճյուղերի զարգացման մասին են վկայում պեղումներից հայտնաբերված կաթսաները:

Փայտամշակման արհեստի արտահայտություն են հայտնաբերված հյուսնի գործիքները՝ դուր, ուրագ, եռոտանի անոթներ, գավաթներ, մատուցարաններ[38]: Հատկանշական է, որ նման գործիքներ պեղվել են նաև հարուստ դամբարան-

---

[36] Տե՛ս **В. Э. Оганесян** Серебряный кубок из Карашамба // ՊԲՀ, 1988, № 4, էջ 145- 160; Հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007, էջ 89-91:

[37] Տե՛ս **А. Гнуни,** К вопросу о сакральном значении некоторых предметов вооружения из погребальных памятников эпохи средней бронзы // Археология, этнология и фольклористика Кавказа. 2003, էջ 72-77:

[38] Տե՛ս **К. Х. Кушнарева,** Южный Кавказ IX-II тысячелетиях д.н.э., էջ 106:

ներում, ինչը խոսում է ատաղձագործի արհեստի սրբագործման մասին[39]:

Դամբարանային գույքի հետազոտությունը հնդեվրոպական ժողովուրդների դիցաբանության համատեքստում հանգեցնում է դիցաբանական բարդ համակարգի առկայության գաղափարին, որը արտացոլում էր զարգացած սոցիալական հարաբերությունները[40]:

Միջին բրոնզին հաջորդած **ուշ բրոնզի** (**Ք.ա. 1500-1200**) և **վաղ երկաթի (Ք.ա. 1200-820)** դարաշրջաններում բնակավայրային կյանքը ապրում է նոր վերելք: Ձևավորվում է բնակավայրերի և ամրոցների աստիճանակարգ: Այդ մասին են վկայում Արարատյան դաշտի և հարակից նախալեռնային շրջանների մի շարք հուշարձաններ՝ Դվինը, Լազարավանը, Մեծամորը, Ավանը, Մոտկանը, Լճաշենը և այլն: Այսպես, Լազարավանի քաղաքատեղիի տարածքը զբաղեցնում էր մոտ 40 հա, որից 1,5 հեկտարը զբաղեցրել է միջնաբերդը: Միջնաբերդի անառիկությունը ապահովել են դեպի քաղաքը ուղղված 10 հսկա աշտարակները: Քաղաքատեղին ունեցել է կանոնավոր հատակագիծ, փողոցների կանոնավոր ցանց, ուղիղ և 6 մ լայնությամբ երկու կողմերում կառուցվել են բնակելի տներ: Առանձին տեղերում դիտվում են առանձնացվող թաղամասեր, փողոցների միավորման վայրերում՝ հրապարակներ[41]:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի բնակարանային համալիրներ պեղվել են Մեծամորում, Գյումրիում, Լճաշե-

---

[39] Տե՛ս **Ս. Եսայան**, Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992, էջ 168-236:

[40] Տե՛ս **А. Гнуни.** Опыт анализа погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2003, թիվ 2, էջ 72-96:

[41] Տե՛ս Հայկական ճարտարապետություն, էջ 70:

նում, Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիում: Կարմիր բլուրի բնակելի համալիրները բաղկացած էին անկյունավոր հատակագծով մեկ ընդարձակ և 5-6 փոքր սենյակներից: Տների պատերը կառուցվել են անմշակ քարերից, կավաշաղախով: Ծածկերի համար օգտագործվել են փայտը, եղեգը և կավը: Ըստ Հ. Մարտիրոսյանի ուսումնասիրությունների՝ ինչպես Արևելքի երկրագործական մարզերում, այնպես էլ Հայաստանի դաշտային շրջաններում յուրաքանչյուր «համայնական տուն» բաղկացած էր կլոր ու քառանկյունի շինությունների միատիպ, մեկուսացված խմբերից: Կլոր կացարանների շուրջը համախմբված քառանկյունի շինությունները՝ իրենց մեծ ու փոքր հորերով, ամբարներով հանդերձ՝ հացահատիկի պահեստներ էին, իսկ շինությունների մյուս մասը՝ գոմեր ընտանի կենդանիների համար: Իրենց միատիպ ներքին կառուցվածքով չափազանց հետաքրքիր են կլոր կացարանները: Այստեղ որոշակի դասավորություն ունեն կավակերտ երկարուկ նստարանները, հատակի մեջ թաղված կարասներն ու պատի մի անկյունում պատրաստված օջախը: Օջախների մոտ հաճախ գտնվում են սանդեր, ծեծիչներ, աղորիքներ: Կացարանների կենտրոնական մասում փորված է հացահատիկի հորը, որի եզրին կանգնեցված է պտղաբեր կնոջ կերտվածքով քարե կուռք: Շինությունների մեկուսացված այս փոքրիկ խմբերը պատկանելիս են եղել փոքր ընտանիքներին, որոնք առաջացել էին ընտանեկան համայնքների շարունակական տրոհումից: Այդուհանդերձ նկատելի է, որ հասարակության սոցիալական, տնտեսական միավորը շարունակում էր մնալ ընտանեկան համայնքը[42]:

---

[42] Տե՛ս **Ա. Ա. Мартиросян,** Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 28-31, տե՛ս Ар-

Ճարտարապետական բարձր մակարդակի մասին են վկայում դամբարանային բարդ կառույցները: XXI-XIX դդ. Թռեղքի «Ծալկայի սարահարթ» հսկայածավալ դամբարանաբլուրները ունեին 140-175 քառ. մետր մակերեսով սրահներ՝ երկար ու լայն դամբարանամուտքերով և մինչև 6 մետր աստիճանական շարվածքով բարձրությամբ պատերով, սյուների վրա հենված հզոր գերանածածկով:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի փուլում դամբարանային կառույցների ծածկը փոխարինվում է քարաշեն ծածկով: Ծածկը կարող էր լինել հարթ՝ հենված ուղղահայաց պատերի վրա, կեղծ թաղ և երկթեք[43]:

Հանգուցյալին նախապես դիակիզում էին և աճյունասափորը դիակառքով տեղավորում թաղման ընդարձակ սրահի կենտրոնում, որի շուրջը սփռում էին մորթված անասունների մարմիններ, ուտելիքով լի տասնյակ ամաններ, հանգուցյալի սպառազինության, արդուզարդի, կենցաղի թանկարժեք առարկաներ և այլն:

Ք.ա. II հազ. վերջին դարերում երկրագործության բարձր զարգացման մասին են վկայում ոչ միայն կավե ամանեղենի վրա պահպանված բուսական հարուստ զարդապատկերներն ու պտղաբերության կուռքերը, այլև վար ու ցանքսի, բերքահավաքի ու գյուղատնտեսական մթերքների վերամշակման բազմաքանակ ու բազմազան գործիքները: Հատկապես մեծաքանակ են կիկլոպյան բերդերի ապառաժ քարերի մեջ կողք կող-

---

мения в эпоху бронзы…, էջ 160-190, **նույնի՝** Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում // Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 226-227:

[43] Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1971, էջ 68-70:

քի փորված սանդերը, տաշտակներն ու բազալտե քարերից պատրաստված սանդերն ու սանդակոթերը, մակույկաձև ու քառանկյունի աղորիքները, փայտից ու վանակատից պատրաստված կամերի մնացորդները և այլն:

Հայաստանի դաշտային շրջաններում նույնպես զարգանում էր անասնապահությունը. այստեղ հիմնական կենդանիները խոշոր եղջերավոր անասուններն էին, որոնք լայնորեն օգտագործվում էին երկրագործության մեջ որպես քաշող ուժ: Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրում հայտնաբերված ընտանի կենդանիների ոսկրաբանական մնացորդները, ըստ հնէաբան Ս. Կ. Մեժլումյանի դիտումների, ցույց են տալիս, որ խոշոր եղջերավոր անասունների թիվը տափաստանային բնակատեղիներում մոտավորապես չորս անգամ ավելի էր մանր եղջերավոր անասունների թվից:

Գեղարքունիքում, Արցախում և այլուր ուշ բրոնզի դարից զբաղվում էին տոհմական ձիաբուծությամբ[44]: Լճաշենի, Առաջաձորի, Դիլիջանի, Վանաձորի և այլ շրջանների դամբարաններում մարդկանց կմախքներից բացի, գտնվում են ձիերի ամբողջական կմախքներ, իսկ նրանց գլուխներն ու ձիասարքի մասերը հանդիպում են պարբերաբար:

Ք.ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի նյութերը ակնհայտորեն վկայում են արհեստների նոր վերելք ապրելու մասին, իսկ Դվինում և Մեծամորում գտնված հսկայական արհեստագործական համալիրները՝ արհեստների զարգացածության և նրանց պաշտամունքի ձևավորման մասին[45]:

---

[44] Տե՛ս **Б.Б. Пиотровский,** Археология Закавказья, Л., 1949, էջ 77:

[45] Տե՛ս **Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան,** Մեծամոր, Երևան, 1973, էջ 64-67:

Ուշ բրոնզի դարի մետաղագործ վարպետները աշխատանքի գործիքներ, իրեր էին արտադրում արհեստների ու տնտեսության ամենատարբեր ճյուղերի և կենցաղային, կրոնապաշտամունքային կարիքների համար: Արթիկի ինքնատիպ դամբարաններից մեկում հնագետները հայտնաբերել են ատաղձագործի բրոնզյա գործիքներ՝ սղոց, կացին, տարբեր տրամաչափի ու լայնության դուրեր[46]:

Մետաղագործության զարգացած ճյուղերից մեկը ոսկերչությունն էր: Լճաշենի և Տոլորսի դամբարաններում թաղված հարուստ ննջեցյալները պճնված էին ոսկյա խոշոր գլանաձև, գնդաձև, թեփուկավոր, սկավառակաձև ուլունքներով, նշաձև քարերով ագուցված հատիկավոր նախշ ունեցող կոճակներով, սկավառակատիպ տափակ զարդերով, թանկարժեք քարերից պատրաստված մանյակներով և այլն: Ոսկերչության մեջ մեծ էր հին արևելյան ավանդույթների դերը:

Ք.ա. II հազարամյակի վերջին քառորդում բարձր զարգացման հասան մի շարք արհեստներ, ինչպես, օրինակ, քարագործությունը, ոսկրագործությունը, կաշեգործությունը, կոշկակարությունը, մանածագործությունը:

Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված կոշկաձև կավե ամանների քանակն ու բազմատեսակությունը վկայում են նշված ժամանակաշրջանում Հայաստանում տարբեր տիպի ճտքավոր կոշիկների լայն օգտագործման մասին (գծանկար 6), իսկ Արթիկի դամբարաններից մեկում պահպանված գեղեցիկ բանվածքներով ու բրոնզյա փոքրիկ զարդե-

---

[46] Տե՛ս **Т.С. Хачатрян,** Материальная культура Артика, Ереван, 1963, աղ. 3, նկ. 1, 5, 6–10:

րով գործվածքի մնացորդը ցույց է տալիս, թե ինչպիսի գեղեցիկ հագուստներ կարող էին ունենալ բրոնզի դարի մարդիկ[47]:

Գծանկար 6

Կոշկաձև և այլ խեցանոթներ (Դավիթ-բեկ գյուղ)

[47] Տե՛ս **Հ.Հ. Մարտիրոսյան,** Армения в эпоху бронзы…, աղ. XV, նկ. 1–3; **Թ.Հ. Խաչատրյան,** Материальная культура Артика, նկ. 13–20:

Խեցեգործության մեջ առկա են կավե առարկաների հազարավոր տեսակներ ու նմուշներ՝ երկրագործական զարդամոտիվների փորագիր, վերադիր, կենդանակերպ զարդերով, ցուլերի ռելիեֆ գլխիկներով կամ կենդանիների ամբողջական պատկերներով, վագրերի և օձերի ռելիեֆ քանդակներով, եղնիկների, քարայծերի ու այլ կենդանիների գծավոր փորագիր զարդերով, երբեմն էլ որսի ամբողջական տեսարաններով՝ մարտակառքերի ու մարդակերպ էակների մասնակցությամբ: Այս տեսակետից չափազանց ուշագրավ են որսորդական ինքնատիպ հորինվածքների հարթաքանդակ պատկերներով զարդարված Դվինի հսկա կարասները, Զանգեզուրի և Սևանի շրջաններում հայտնաբերված վերոհիշյալ կոշկաձև անոթները, որոնք հաստատագրում են ցածրակրունկ, փափուկ, ճտքավոր կոշիկների տարբեր ձևերի առկայությունը հնագույն ժամանակներում:

Երկրագործության, անասնապահության ու արհեստների հետ միաժամանակ զարգանում էին նաև փոխադրամիջոցները, որոնց լավագույն նմուշները առատորեն պահպանվել են Լճաշենի հարուստ դամբարանաթմբերում: Դրանք բազմաքանակ ու բազմապիսի սայլեր են՝ կամարակապ ծածկով, երկանիվ ու քառանիվ, ճանապարհորդական կամ մարտական արագընթաց կառքեր, մանկական սայլակներ, մարտակառքերի մետաղե բնօրինակներ և այլն (գծանկար 7):

Գծանկար 7



Տարբեր դարաշրջանների հնավայրերից գտնված սայլեր, կառքեր, ժայռապատկերներ

Լճաշենի սայլերն ու կառքերը պատկանում էին ցեղային ավագանու ներկայացուցիչներին. հնարավոր է՝ պատրաստված են եղել հուղարկավորության հատուկ նպատակների համար, քանզի ունեն բարդ ու նուրբ փորագրություններ, հարյուրավոր մասեր պատրաստված են տարբեր տեսակի ու որակի, անգամ թանկարժեք կարմիր փայտից:

Ի վերջո, գտնվելով Արևելքի ու Արևմուտքի միջև՝ Հայկական լեռնաշխարհը բրոնզ-վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանում Հին աշխարհի կարևոր տարանցիկ ուղիներից մեկն էր և ասես կամուրջ լիներ Հին Արևելքի, Հյուսիսային Կովկասի և Հարավռուսական տափաստանների միջև՝ չնայած ռելիեֆի կտրտվածությանն ու լեռնային պատնեշների առկայությանը:

Ք.ա. II–I հազարամյակների հայտնի բազմաթիվ պաշտամունքային հուշարձանների (Գեղարոտ, Մեծամոր, Դվին) հնագիտական նյութի, ինչպես նաև ուրարտական արձանագրություններում պարունակվող տվյալների համադրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի տարածքում արդեն գոյություն ունեին մի շարք պետական կազմավորումներ: Պեղումներից հայտնաբերվել են իշխանության բազմաթիվ խորհրդանիշներ (գավազանի գլխամասեր, արարողակարգային զենք և այլն): Իշխանության կարևոր խորհրդանիշ էին նաև բրոնզե գոտիները, որոնց վրա գծանկարներով ցուցադրված են վահանակիր ռազմիկների կարգը, նիզակակիր հեծյալներ և մարտակառքեր՝ զորահրամանատարի առաջնորդությամբ: Դրանք ամբողջական պատկերացում են տալիս բրոնզեդարյան ջոկատների կազմի, զինավարության և մարտական կարգի վերաբերյալ[48]:

---

[48] Տե՛ս **А.А. Мартиросян,** Армения в эпоху бронзы…, էջ 160, նկ. 65:

Ազգագրական առումով ուշագրավ է առաջնորդների հուղարկավորման կարգը ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտերում (օր.՝ Լճաշեն): Լճաշենի դամբարանաբլուրների տրամագիծը հասնում է 18–20 մ-ի, թաղման սրահները, որ երկարուկ քառանկյուն միջանցքների տպավորություն են թողնում, ունեն 5–8 մ երկարություն, 2,5–3,5 մ լայնություն, կառուցված են հսկա (3,5 տոննանոց) ժայռաբեկորներից, ունեն կրկնակի գերանաձաձկ տանիք և հսկայական սալքարերից կառուցված կեղծ կամարակապ ծածկեր: Դրանց մի պատը շարվում էր հուղարկավորությունից հետո, երբ առաջնորդների աճյունները դամբարան էին իջեցնում ցլերով լծված շքեղ դիակառքերով, որոնց վրա և շուրջը տեղավորում էին ննջեցյալի արդուզարդը, հանդերձանքը, սպառազինությունը, ձիասարքը, առաջնորդի խորհրդանշանները: Դամբանախուցը պաստառապատում էին բեհեզյա գործվածքներով, ննջեցյալին ծածկում էին ոսկեզարդ սավանով, դամբարանի հատակի վրա շաղ տալիս «խնկարկման» պաշտամունքային կրակարաններրի մոխիրը, ննջեցյալների հագուստը ներկում էին կարմիր օխրայով: Երբեմն գերեզման էին իջեցնում նաև սպանված յուրայինների ու ստրուկների դիակները[49]: Այս ամենը շատ նման է հայոց Արտաշես թագավորի թաղման կարգին[50]:

Հասարակության շերտավորման, դասակարգային հարաբերությունների և պետականության ձևավորման հետ զուգընթաց՝ զարգանում է պաշտամունքը: Հին ծեսերը և հավա-

---

[49] Տե՛ս **Հ. Մարտիրոսյան,** Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում / «Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 224, 226»:

[50] Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն (թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադ. Ստ. Մալխասյանի), Երևան, 1961, էջ 216–217:

տալիքները պահպանվելով հանդերձ՝ հաճախ ստանում էին մեկնություն: Օրինակ՝ տիեզերական մարմինների պաշտամունքը կապվում էր նաև առաջնորդ-թագավորի պաշտամունքի հետ: Նույն իմաստն էին ստանում պտղաբերության հետ կապված ծեսերը, քանզի առաջնորդ-թագավորը ընկալվում էր որպես հպատակների հայր, երկրում կայունության և պտղաբերության երաշխավոր:

Հայկական լեռնաշխարհում ավելի վաղ, քան այլ երկրներում լայն կիրառություն գտավ երկաթը (Ք.ա. II հազարամյակի վերջ – I հազ. Սկիզբ): Այստեղից են երկաթե իրերը արտահանվել Առաջավոր Ասիա:

Ք.ա. VIII դ. սկզբից Հայկական լեռնաշխարհը թևակոխեց **Երկաթի լայն տարածման դարաշրջան:** Թոփրակ-կալեի (Ռուսախինիլի) պեղումների ժամանակ հայտնաբերվել են հողամշակման և բերքահավաքի բարձր զարգացածության երկաթե գործիքներ՝ խոփեր, եռաժանիներ, մանգաղներ, բահեր, ուրագներ, նաև մթերքներ պահելու կավե ամաններ:

Թեյշեբանիի պեղումներից, Թոփրակ-կալեից, Հայկաբերդից, Շուշանցից հայտնաբերված հնագիտական նյութերը հավաստում են դաշտամշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության, բանջարաբոստանային կուլտուրաների մշակության զարգացման բարձր աստիճանի մասին: Թեյշեբաինի հացահատիկի շտեմարանների պաշարների տարողությունները չափվել են մի քանի հազար «կապի»-ներով[51]: Այստեղ հայտնաբերվել են ձիթհան, գինու և գարեջրի արհեստանոցներ: Մշակվել են մերկահատիկ և հնագույն ծագում ունեցող կլորահատիկ ցորենի մի քանի տեսակներ:

[51] Վանի թագավորությունում տարածված կշռի միավորը:

Կորեկը և գարին ծառայել են նաև որպես հումք խմիչքներ պատրաստելու, իսկ քունջութը՝ ձեթ ստանալու համար[52]: Էրեբունիում, Արգիշտիխինիլիում հայտնաբերվել են գինու վիթխարի մառաններ՝ խոշոր կարասներով[53]: Խեցեգործությունը հատկանշվում էր ձևերի ու չափերի, պատրաստման տեխնիկայի բազմազանությամբ: Պեղածո մնացորդներում առանձնապես աչքի են ընկնում Ոսկեհատ (խարջի), մսխալի (Արարատ), հաշաբաշ սև խաղողի մի քանի տեսակներ, իսկ բանջարաբոստանային կուլտուրաների շարքում՝ ձմերուկ, սիսեռ, ոսպ[54]: Հայկական լեռնաշխարհը ուներ ոռոգման լայն համակարգ: Բացի գետերից, օգտագործվում էին նաև ջրային այն պաշարները, որոնք գոյանում էին լեռնային աղբյուրներից, լճակներից, լեռների ծալքերում մթնոլորտային տեղումներից կուտակված ջրերից: Ուրարտական ջրանցքները ճարտարապետական առումով բավականին զարգացած համակարգեր էին: Դրանցից պահպանվել են բազմաթիվ, առ այսօր գործող կառույցներ, որոնց թվում են Շամիրամի, Մարանդի, Խոտանալուի ջրանցքները, Հոկտեմբերյանի ջրաբաշխական ցանցը և այլն: Ջրաբաշխական համալիրների մեջ մտնող առավել նշանակալից ջրամբարներից է Քեշիշ-գյոլը[55]:

Թեյշեբաինիի, Էրեբունիի և Արգիշտիխինիլիի հնագիտական նյութերը հաստատում են, որ երկրագործության հետ անասնապահությունը ևս եղել է Վանի թագավորության

---

[52] Տե՛ս **Б.Б. Пиотровский,** Ванское царство, էջ 133-142, 163-164:

[53] Տե՛ս **К.Л. Оганесян,** Эребуни, Ереван, 1980, **А.А. Мартиросян**, Аргиштихинили, Археологические памятники Армении, 8, Երևան, 1974:

[54] Տե՛ս **Б.Б. Пиотровский,** Ванское царство, 142-147;

[55] Տե՛ս **Գ. Շիրմազան,** Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962:

բնակչության հիմնական տնտեսական զբաղմունքը: Անասնապահության մեջ կարևոր տեղ էին գրավում խոշոր ու մանր եղջերավոր անասունները: Կարևոր էր նաև ձիաբուծությունը: Ձիերը օգտագործվում էին ոչ միայն տնտեսության մեջ, այլև ռազմական գործում: Առանձին նշանակություն են ունեցել նաև ջորին, ավանակը, որոշ տեղերում՝ ուղտը:

Ք.ա. VIII դարում Արգիշտի 1-ին արքայի օրոք (Ք.ա. շուրջ 786- 764 թթ.) Վանի թագավորության կազմում ընդգրկված էր գրեթե համայն Հայկական լեռնաշխարհը իր բոլոր «երկրներով» «թագավորություններով», ցեղապետություններով և «քաղաք-պետություններով», որոնց ընդհանուր թիվը հասնում էր 170-ի[56]:

Վանի արքաների իշխանությունը (Ք.ա. IX դ. 2-րդ կեսից մինչև – VII դ.) Լեռնաշխարհում հիմնվում էր ծայրագավառներով և կենտրոնով անցնող ճանապարհների մոտ նոր կառուցված քաղաքների վրա: Ուրարտական քաղաքները հիմնականում փռված էին բարձր բլուրների ստորոտներում, որոնց գագաթներին վեր էին խոյանում պարսպապատ միջնաբերդերը: Միջնաբերդի իշխող բարձր դիրքը նպատակ ուներ տեսադաշտում պահելու այն ճանապարհները, որոնք տանում էին դեպի տվյալ բնակավայրը: Մյուս կողմից՝ բլուրների գագաթները պարփակող պարիսպները բնակավայրի պաշտպանության երաշխիքն էին: Բերդերի հետագա հզորացումը արտահայտված է արտաքին պաշտպանական պարիսպների կառուցումով[57]: Քաղաքաշինական ծրագիրը թելա-

---

[56] Տե՛ս **С.Г. Амаякян,** Ванское царство (Урарту). В кн. “У подножия Арарата” (Каталог выставки). Санкт-Петербург, 2008, с. 29-32.

[57] Տե՛ս **Կ. Լ. Հովհաննիսյան,** Ուրարտական ճարտարապետություն, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996, էջ 87-199:

դրվում ու պայմանավորվում էր ոչ միայն տարածքների արժեքավորման տեղային հանգամանքներով, այլև տվյալ տարածքի համակարգում փոխադարձաբար շաղկապված նրանց ռազմավարական դիրքով: Քաղաքի հիմքն էր կազմում պալատը՝ իր տաճարներով, բնակելի հարկաբաժիններով, հյուրասրահներով, լողասրահներով, արհեստանոցներով, հսկայական գինու մառաններով ու հացի շտեմարաններով: Քաղաքներն ունեին բնակելի թաղամասեր, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգեր և այլն: Նրանց տարածքում էին գտնվում նաև ոռոգման ջրանցքներ, մշակվող դաշտեր, այգիներ, անտառներ, որոնք կազմում էին գյուղատնտեսական խոշոր միավորումներ: Կենտրոնական քաղաքներից յուրաքանչյուրի մակերեսը, պեղումների տվյալների համաձայն, կազմում էր շուրջ 100-200 հեկտար: Արտակարգ մեծ չափերի էր հասել Արգիշտիխինիլին՝ 400-500 հեկտար տարածքով, որի սահմանների մեջ են մտել նաև քաղաքի մոտակա գյուղական բնակավայրերը: Թագավորանիստ քաղաքների թվին են պատկանում երկրի մայրաքաղաքները՝ Տուշպան, Ռուսախինիլին: Ուրարտական վարչատնտեսական խոշոր քաղաքներն էին Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին, Ալթընթեփեն, Օշականը և այլն, որոնք իրենց շրջակա բազմաթիվ գյուղական ավաններով կազմում էին գյուղատնտեսական հզոր համակարգեր՝ ստեղծելով քաղաքաշինական առումով տարածական միասնական կառուցվածք: Ուրարտական ամրակուռ ամրոցներից էին Էրեբունին, Բաստամը (Ռուսախինիլի), Ազրաբ-թեփեն և այլն: Պաշտամունքային քաղաքներից են ուրարտական դիցարանի գերագույն երրորդության՝ Խալդիի, Թեյշեբայի ու Շիվինիի պաշտամունքային կենտրոնները: Խալդիի պաշտամունքային կենտրոնը Մուսասիր քա-

ղաքն էր, կամ Արդինին, ինչպես այն անվանում են ուրարտացիները: Թեյշեբա աստվածության պաշտամունքի կենտրոնը Կումենու քաղաքն էր (Վանա լճից հարավ-արևելք), իսկ Շիվինիինը՝ մայրաքաղաք Տուշպան:

Քաղաքային կյանքին զուգահեռ նույնքան սրընթաց զարգանում էին ուրարտական մշակույթը և արվեստը: Արվեստում ձևավորվում էր երեք հիմնական ոճ, որոնցից առաջինը պալատական դասական ոճն էր, երկրորդը՝ ավանդական ուղղությունը՝ հիմնված տեղական, ծայրագավառային (հիմնականում՝ էթիունյան) ավանդույթների վրա, և երրորդը՝ այս երկուսի միաձուլմամբ ձևավորված անչափ հետաքրքիր «սինկրետիկ» արվեստը: Արդյունքում ի հայտ են գալիս ուրույն ու կատարյալ ճարտարապետություն, որմնանկարչություն, բարձրաքանդակային ու կիրառական արվեստ, քանդակագործություն ու պատկերագրություն:

Ուրարտուում ձևավորվում են արվեստի այնպիսի ոճեր, որոնք մեծ տարածում չունեին Առաջավոր Ասիայում, ինչպես, օրինակ, մոնումենտալ սյուժետային խմբաքանդակն է արձանագործության բնագավառում, կամ երկթեք տանիքով ու ճակտոնով, ակրոտերիայով ու ստիլոբատին (սյունաշար) հենված սյունաշարով տաճարները, որպիսին էր Խալդիի և Ուարուբանի-Բագմաշթու աստվածությունների տաճարը Մուսասիրում: Սա ճարտարապետական հորինվածք էր, որի հնարավոր ազդեցության մասին հունական արխաիկ տաճարաշինության վրա շատ է խոսվել[58]:

---

[58] Տե՛ս **Г.А. Тирацян,** Культура древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.), Ереван, 1988, էջ 22-27, **К.В. Тревер,** Очерки по истории культуры Древней Армении, М.–Л., 1953, էջ 69-75, **Б.Б. Пиотровский,** Ванское царство, էջ 202, **Հ. Գ. Ավետիսյան, Պ. Ս. Ավետիսյան,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա.

Ազգագրական առումով ուշագրավ են նաև ուրարտական բնակելի ճարտարապետության մասին եղած տվյալները:

Ուրարտուի բնակարանային ճարտարապետության մասին առաջին տեղեկությունները հաղորդել է Խորենացին, որոնք վերաբերում են Տուշպային: Վերջինս, ըստ պատմահոր հաղորդումների, կոչվում էր Շամիրամի քաղաք՝ բավական մեծ, բարեկարգ, անառիկ մի բերդաքաղաք՝ բազմաթիվ երկհարկ և եռահարկ շենքերով[59]:

Ուրարտուի բնակելի ճարտարապետության մասին հնագիտական պեղումները ի հայտ են բերել բնակելի տների հետևյալ երեք տիպերը՝ մենատներ, բնակելի տներ՝ խմբային կառուցապատումներով, և միահարկ ու բազմահարկ բաժանմունքային տներ:

Մենատները միավորում էին բնակելի, տնտեսական, պահեստային բնույթի սենյակներ, ընտանի կենդանիների համար հատկացված համապատասխան բաժիններ և կառուցվում էին ավանդական՝ հում աղյուսի պատերով, քարե գետնախարիսխների վրա, հարթ ծածկերով, վերևի լուսավորությամբ: Ամբողջությամբ վերցրած՝ ներկայացնում էին պարսպապատված ներքին տարածություններ՝ իրենց արտաքին միակ դռնով: Տան մեջ էր գտնվում նաև պաշտամունքային անկյունը՝ համապատասխան քանդակակերտ կուռքով: Հայտնի օրինակների թվին են պատկանում Արգիշտիխինիլիի, Արագածի, Թեյշեբաինիի մենատները:

XI-VI դդ., Երևան, 2006: **С.Г. Амаякян,** Ванское царство (Урарту). В кн.: “У подножия Арарата”, էջ 29-32:

[59] Օգտակար մասնագիտական խորհրդատվությունների համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հնագետներ, պատմական գիտությունների թեկնածուներ Արտակ Գնունուն, Արսեն Բոբոխյանին:

Բնակելի տները՝ խմբային կառուցապատումներով, ունեցել են բազմաթիվ բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, դահլիճ, բակ՝ տնտեսական կարիքների համար, և առանձին հատված՝ ընտանի կենդանիներ պահելու համար: Այսպիսի տներն ունեին քարե պատեր, հում աղյուսից կառուցված վերևի շարքերով, փայտյա հարթ ծածկ, այսինքն՝ կառուցված էին ուրարտական ճարտարապետության ավանդական սկզբունքներով: Նման տների դասական օրինակները հայտնի են Թեյշեբաինիից և Բաստամից (Ուրմիա լճի ավազանում):

Ինչ վերաբերում է սեկցիոն բնակելի տներին, ապա դրանք ստեղծվել են բնակիչների կենցաղի անհատական պահանջների ընդհանրության հաշվառումով, ինչը պայմանավորված էր այնպիսի ապրելակերպով, երբ բնակիչը չուներ մասնավոր տնտեսություն և ենթակա էր պետական պարենավորման: Տվյալ դեպքում, հավանաբար, դրանք պետական ծառայության մեջ գտնվող ռազմիկներ էին[60]:

Վերջին տասնամյակների պեղումները զգալիորեն ընդլայնեցին մեր պատկերացումները ուրարտական պալատների ճարտարապետության մասին: Պարզ դարձավ, որ ուրարտական պալատները մոնումենտալ կառույցներ էին՝ հաճախ երկհարկանի, որմնանկարներով զարդարված ներքին տարածություններով, սյունազարդ բակերով ու դահլիճներով, նաև բազմաթիվ օժանդակ սենյակներով: Մեր այսօրվա գիտելիքները ուրարտական պալատների վերաբերյալ հնարավորություն են տալիս տարբերակելու երկու տիպ՝ 1) երկու բակ

[60] Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996, էջ 150:

ունեցող շինությունների համալիրներ, որոնց շուրջը տարածվում են տարբեր նշանակության սենյակներ: Ընդ որում՝ այդ բակերից մեկը (սյուներով շրջափակված է), և նրա շուրջը խմբավորված են պալատի բոլոր ամենակարևոր սենյակները (օրինակ՝ Էրեբունի), 2) պալատական համալիր, որի միջուկը սյունազարդ դահլիճն է (Արգիշտիխինիլի, Բաստամ, Ալթընթեփե):

Միջնաբերդերի տարածքում, որպես պալատական համալիրի կարևոր տարր, հիմնականում գոյություն են ունեցել պահեստներ՝ իրենց մեծածավալ կարասներով, որոնք նախատեսված են եղել գինու, հացահատիկի և այլ սննդամթերքի պահպանման համար:

Ինչ վերաբերում է պաշտամունքային շինություններին, ապա ուրարտական խոշոր տաճարները հավանաբար ընդարձակ համալիրներ էին, որտեղ պաշտամունքային կառույցները միավորվում էին աշխարհիկ, տնտեսական, արտադրական ու պահեստային շենքերի հետ: Քրմերի գործունեությունը տաճարներում չէր սահմանափակվում միայն կրոնական ծիսակատարություններով: Տաճարներն էլ, իրենց հերթին, միայն նյութական արժեքներ կրողներ չէին, այլև ռազմական հզոր կենտրոններ էին[61]:

Ուրարտուն լեռնային երկիր էր, հետևապես վիմափոր կառույցները կազմում են նրա շինարվեստի մի զգալի մասը: Այդ կառույցներն ունեին նույնիսկ իրենց հովանավոր աստվածությունը՝ Աիրաինին: Դրանց թվին են պատկանում ժայռափոր սանդուղքները, խորշերը, պաշտամունքային ու դամբա-

[61] Տե՛ս **Հ. Գ. Ավետիսյան,** Արագածի և Արամուսի պաշտամունքային կառույցներն ու քարակոթողները // «ԲԵՀ», 2002, թիվ 2, էջ 52-56:

բանային կարիքներին նվիրված արհեստական քարայրները, թունելները նն:

Վիմափոր կառույցների մի զգալի մասը դամբանային համալիրներ էին:

Ուրարտական ջրանցքները նույնպես ճարտարապետական առումով բավական զարգացած կառույցներ էին: Դրանք անցնում էին դաշտավայրերով, դժվար հաղթահարելի և տեխնիկապես բարդ մշակման ենթակա տեղանքներով՝ թունելներով, երբեմն էլ ստորգետնյա արհեստական ուղիներով:

Վանի թագավորության քաղաքներում խմելու ջրի մատակարարման գործը բավականին բարվոք վիճակում էր: Այդ են հաստատում հնագիտական հետազոտությունների ընթացքում տարբեր տեղերում ջրատար խողովակների, ինչպես նաև զանազան չափերի ջրամբարների մնացորդների հայտնաբերումները: Դրանցից է Զիվիստանի ջրամբարտակը, որ կերտված է միջնաբերդի ժայռի խորության մեջ, կամ Արգիշտիխինիլիի խոշոր ամբարտակը: Էրեբունիի միջնաբերդում է հայտնաբերվել ուրարտական ջրատար համակարգի լավագույն օրինակը:

Պեղումներից հիմնականում բացահայտվել են պալատական, պաշտամունքային, քաղաքային մոնումենտալ շինությունների մնացորդներ, մինչդեռ գյուղական ժողովրդական հոծ զանգվածների կենցաղային պայմանները պատկերացնող հնագույն շենքերի մնացորդներ մեզ քիչ են հասել՝ պարզունակ և ոչ մնայուն կառույցներ լինելու պատճառով: 1934 թ. Գյումրի քաղաքում մսի կոմբինատ կառուցելիս հայտնաբերված հնագույն բնակատեղերի մնացորդները, ըստ հնագիտական իրեղեն տվյալների, պատկանել են բրոնզի դարին: Այստեղ հայտնաբերված բնակարանները եղել են կիսագետ-

նափոր, խոշոր ու բոլորովին անմշակ քարերից շարված պատերով: Նրանց մեջ գտնված քարե պատվանդանները փայտե սյուների համար վկայում են, որ բնակարանների ծածկը եղել է փայտե գերաններից: Սրանք գրեթե նույնական էին Քսենոփոնի նկարագրած տներին[62]: Հին հայկական գետնափոր կամ կիսագետնափոր գյուղական տները համատարած են եղել նաև ուրարտական և առավել վաղ դարաշրջաններում: Գետնափոր և մեկ ընդհանուր, գմբեթաձև գերանածածկ տանիքի տակ բազմաբաժին բնակարանը օթևան է ծառայել թե՛ մարդկանց և թե՛ ընտանի կենդանիների համար, իսկ իր ծավալով ու դերով միանգամայն համապատասխանել է Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսական գործունեությանը, բնապահպանական պայմաններին, հասարակական, ընտանեկան հարաբերություններին, շինարարական նյութերի հնարավորություններին:

Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ հնագույն զգեստին: Զգեստի ծագման պատմությունը առհասարակ քիչ է ուսումնասիրված[63]: Նույնը անվերապահորեն վերաբերում է հնագույն Հայաստանի զգեստին[64]: Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների տարազի վերաբերյալ կարելի է առանձնացնել հնագետներ Ս. Եսայանի և Ս. Հմայակյանի հա-

---

[62] Տե՛ս **Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 191:

[63] Տե՛ս **И.П. Горбачова,** К вопросу о происхождении одежды // “Советская этнография”, 1950, № 3, էջ 9:

[64] Այս առումով անչափ ուշագրավ են **Վ. Հացունու** «Պատմութիւն հին հայ տարազին», Վենետիկ, 1923 և **Ա. Պատրիկի** «Հայկական տարազը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 1967, ուսումնասիրությունները: Հեղինակները գերազանցապես հենվել են անտիկ և միջնադարյան աղբյուրների վրա:

մատեղ հրատարակած «Ուրարտական զգեստը» վերնագրով հոդվածը[65]:

Հեղինակները հիմնականում անդրադարձել են աստվածություններին ու զինվորներին վերաբերող զգեստին: Նյութի անբավարար լինելու պատճառով հասարակության մյուս խավերի հագուստին անդրադարձել են հպանցիկ:

Կարմիր բլուրից հայտնաբերված տարբեր նրբության գործվածքների պատառիկներն ու թելերի կծիկները՝ ներկված կարմիր, կապույտ, դեղին գույներով և դրանց նրբերանգներով, պատկերացում են տալիս ուրարտացիների օգտագործած կտորների ու նախընտրած գույների մասին: Աստվածները պատկերվել են մարդակերպ և հագուստներով, որոնք ձևով գրեթե չեն տարբերվել օգտագործված զգեստներից: Աստվածները պատկերվել են շքեղ ու ճոխ ասեղնագործված կտորներից կարված շորերով՝ բաճկոններ, թիկնոցներ, վերնաշապիկներ, գլխի հարդարանքներ և այլն՝ առավելագույնի հասցնելով մարդու և աստվածության միջև եղած արտաքին նմանությունը: Բաճկոնը (պատմուճան) ներկայացված է երկու ձևով՝ կարճաթև է և հասնում է մինչև կրունկները, իրանի մասը գոց է, օձիքը կլոր կամ եռանկյունաձև (օրինակ՝ Էրեբունիի որմնանկարներում), օձիքը ասեղնագործված է, փեշերը երկնագույն ցոլերով կամ եռաշար եղեննազարդ նախշված:

Կարմիր բլուրից գտնված բրոնզե արձանիկներից մեկը պատկերված է կարճաթևք բաճկոնով՝ խորանարդաձև զարդանախշով, քղանցքը՝ ծոպերով: Ծոպազարդ է նաև ուսով անցնող լանջագոտին, իսկ սաղավարտների վրայի պատկեր-

---

[65] Տե՛ս **Ս. Ա. Եսայան, Ս. Գ. Հմայակյան**, Ուրարտական զգեստը // ՊԲՀ, 1980, № 3, էջ 203-213:

ները դրվագված են 11 կենաց ծառերով երկու կողմերում. բոլորն էլ կրում են լանջագոտիներ ունեցող երկար բաճկոններ: Բաճկոնի երկրորդ ձևը առանձնանում է փեշերի լայն բացվածքով: Վերնաշապիկները բաճկոններից տարբերվում էին իրենց կարճությամբ, բայց զգեստի դեր էին կատարում և հասնում էին մինչև ծնկները, նույնիսկ ծածկում էին ծնկները. զարդարված էին ամբողջովին վարդյակներով, փեշերը՝ ծոպերով: Ուրարտացիները օգտագործել են կարճ, մինչև գոտկատեղը հասնող վերնաշապիկներ: Վերնաշապիկները կարվել են նուրբ, իսկ բաճկոնները՝ խավոտ կտորից:

Մեզ են հասել ուրարտական զգեստի բազմաթիվ պատկերներ: Տղամարդու զգեստը կարճ թևքերով է և երկար, մինչև կրունկները հասնող եղևնազարդ փեշերով: Մյունխենի թանգարանի պաշտամունքային թիթեղներից մեկին պատկերված է աստվածների երկշարք երթ: Այստեղ նրանք կրում են սեղմիրան, երկարափեշ, մինչև դաստակները հասնող թևքերով, վարդյակազարդ լայն ու ձիգ գոտիներով շորեր: Ծնկները ծածկող թիկնոցի տակ նկատելի է տաբատը:

Ուրարտական աստվածները գրեթե միշտ պատկերված են թիկնոցներով: Խալդին և Թեյշեբան կարճ վերնաշապիկների վրայից կրում են երկար, մինչև կրունկները ձգվող թիկնոցներ, որոնց թևքերը հասնում են արմունկներին և ավարտվում բազկապաններով: Զգեստը հարդարված է խորանարդիկներով, վարդյակներով ու ծաղկաթերթեր հիշեցնող զարդանախշերով:

Կարմիր բլուրից հայտնաբերված բրոնզե գոտու վրա Խալդին կրում է բարձր, տափակ գագաթով գլխարկ, որը ծածկում է ճակատը և ծոծրակը, իսկ Էրեբունիի որմնանկարներում՝ հարթ գագաթով եղջյուրակիր գլխարկ: Հետևակ մար-

տիկները կրել են կարճաթևք, լայն գոտիով, մինչև ծնկները հասնող գոտեկապերով սեղմված վերնաշապիկներ, որոնց տակից գծագրվում էին շալվարները: Մինչդեռ հեծյալներն ունեին երկար, մինչև կրունկները հասնող, կարճ թևքերով ու ծոպազարդ քղանցքներով բաճկոններ:

Ուրարտական պալատականները հիմնականում կրել են թեք գծերով երիզված կարճաթև, երկար թիկնոցներ, որոնց տակից երևում էին երկար, ծոպերիզված բաճկոնները: Ունեին կիսակլոր, ծոպավոր, փափուկ թաղիքե գլխարկներ[66]:

Էրեբունիի մեծ դահլիճի որմնանկարներից մեկում պատկերված տեսարանում նկատելի է քրմի հագուստը, որը կարճ, թեք եզրերով, լայն գոտիով բաճկոն է, որի ծոպազարդ քղանցքի տակից գծագրվում է գուլպաների մեջ առնված շալվարը, ուսերին՝ մորթե վերնազգեստ: Այստեղ պատկերվել է նաև որսորդի մի պատկեր, որը կրում է կարճաթևք բաճկոն կամ վերնաշապիկ, գլխին՝ ուսերը ծածկող ճակատակալով գլխարկ:

Ուշագրավ է կանանց զգեստը, որը վերականգնվում է աստվածուհիների պատկերներից: Վանում գտնված աստվածուհու արձանիկը կրում է արմունկներին հասնող թևքերով, երկար, մինչև կրունկները իջնող զգեստ՝ ոչ մեծ, կլոր կտրված օձիքով: Կուրծքը զարդարված է ուլունքաշարով և խաչաձև զարդով: Զգեստի վերնամասը հարդարված է երկու զուգահեռ աղեղնաձև թակալակարով, իսկ ամբողջությամբ՝ գծազարդ խորանարդիկներով: Ունի գոտի և մինչև կոնքերն իջնող գլխաշոր[67]: Այսպիսով, ուրարտական հագուստը հայտնի է հիմնականում աստվածությունների, զինվորների և հասարա-

---

[66] Տե՛ս **Б.Б. Пиотровский,** Искусство Урарту, էջ 40, նկ. 9:

[67] Տե՛ս **Б.Б. Пиотровский,** Ванское царство, էջ 182-183, նկ. 45, 46, **Ս.Ա. Եսայան, Ս.Գ. Հմայակյան,** նշվ. աշխ, էջ 203-215:

կության վերնախավի զգեստների օրինակներով: Զինվորական հանդերձանքի առանձնահատկությունն է սաղավարտի և զրահի առկայությունը, իսկ քրմությանը՝ մորթե թիկնոցները: Ուրարտացիները իրենց զգեստները կարել են վուշե և բրդե թելերից գործված կտորներից:

Ք.ա. VI դարում երկիրը Ուրար/շթու անվանը զուգահեռ՝ ստանում է այլ անուն՝ Արմինա «Արմենիա»: Քսենոփոնի և Մովսես Խորենացու հաղորդած տվյալներից գիտենք նաև, որ Ք.ա. VI-IV դդ. լեռնաշխարհը, չնայած ենթակա էր Աքեմենյաններին, կառավարվում էր Երվանդունիների արքայատոհմի կողմից, որոնց նստավայրն էր Վանը և ապա Արգիշտիխինիլի-Արմավիրը: Արքայատոհմ, որը հարատևեց մինչև Ք.ա. II դարը և կարողացավ պահպանել դեռևս Ք.ա. IX-VIII դդ. ձևավորված պետական, վարչական և մշակութային ավանդույթները ու դրանք փոխանցել Արտաշիսյաններին:

Անտիկ դարաշրջանի (Ք.ա. III – Ք.հ. III դդ.) ազգագրական տեղեկությունները հիմնականում ստացվում են օտար աղբյուրներից, որոնք այնքանով են անդրադարձել հայերին, որքանով գտնվել են նրանց քաղաքական, մասամբ տնտեսական հետաքրքրության շրջանակներում: Սրա հետ մեկտեղ՝ անտիկ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար էական նշանակություն ունեն հնագիտական տվյալները, որոնք և առատորեն ձեռք են բերվել բազմաթիվ հուշարձաններից, հատկապես Հին Արմավիրի, Երվանդաշատի և Արտաշատ մայրաքաղաքի պեղումներից[68]: Սրանք լուսաբանում են հայ

---

[68] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Հին Արտաշատ, Երևան, 1975, **նույնի՝** Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, **Աշխարհիբեկ Քալանթար,** Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, **Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. Բ, Երևան, 1941, **Կ. Тревер,** Очерки по истории

ազգագրության գրեթե բոլոր բնագավառները: Սակայն հատկապես լավ են արտացոլում նյութական մշակույթի ոլորտները: Հայերի մարդաբանական տիպը, որն առնչվում է նաև հայ ազգագրությանը, ներկայացված է Պերսեպոլիսի հանդիսավոր աստիճանների ռելիեֆների վրա և Դուրա-Եվրոպոսի գրաֆիտներից մեկի վրա:

Հատկապես Արտաշատի պեղումների շնորհիվ մեզ է պատկերանում քաղաքային կյանքը իր մանրամասներով: Քաղաքները կառուցվում էին նախապես մշակված հատակագծով, ունեին կանոնավոր ցանց, տները բարեկարգ էին, հարմարավետ, գեղեցիկ ձևավորված: Արտադրական և կոմունալ կառույցները տեխնիկապես բավարար հագեցված էին:

Ազգագրական նյութի լուսաբանման մի ուրույն բնագավառ են Աքեմենյան և անտիկ դարաշրջանի դամբարանային կառույցները և այստեղ պահպանված մանրամասների օգնությամբ վերականգնվող թաղման ծեսը, որը թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի ներաշխարհի, տիեզերքի, գեղեցիկի, բարու, չարի, կյանքի հարատևման մասին պատկերացումների վերաբերյալ: Ազգագրական առումով ուշագրավ են այս դարաշրջանի բնակարանային ժողովրդական համալիրները, գլխատները, որոնք ազդեցություն են գործել հատակագծման, կառուցողական ոճի վրա[69]:

Հնագիտական նյութի մի այլ բնագավառ են փոխադրամիջոցները, որոնց առանձին մնացորդներ հնարավորություն

культуры Древней Армении, **Г. Тирацян,** Культура древней Армении (V в. до н.э. – III в. н.э.), Ереван, 1988:

[69] Տե՛ս **Հ. Հակոբյան,** Հին Հայաստանի սյունազարդ դահլիճները և Հողմիկի տաճարական համալիրը, Գևորգ Տիրացյանի հիշատակին, Ե., 2001, էջ 49-56:

են տալիս հաստատելու հետագայում ազգագրական նյութից հայտնի փոխադրամիջոցների վերաբերյալ տվյալների ժառանգականությունը:

Այսպիսով, էնեոլիթյան, վաղ բրոնզի դարաշրջանի՝ Ք.ա. 3500-2400/2300 թթ., միջին բրոնզի՝ 2400/2300-1500 թթ., ուշ բրոնզի՝ Ք.ա. 1500-1200 թթ., վաղ երկաթի՝ Ք.ա. 1200-820, երկաթի լայն տարածման (Ք.ա. VIII դ. սկզբից), անտիկ և վաղ հայկական դարաշրջանների հնագիտական նյութերը Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսական կենցաղի, նյութական մշակույթի, ընտանեկան-հասարակական կյանքի, հոգևոր մշակույթի խոսուն վկայություններ են: Հնագիտական հուշարձանների նոր բացահայտումները, օրինակ՝ Արենի գյուղում բացահայտված ավելի քան վեցհազարամյա քարանձավի գտածոները (խաղողի հնձաններ, կոշիկ, պեղածո մարդ և այլն) ցույց տվեցին, որ Հայաստանն իրոք եղել է համաշխարհային քաղաքակրթության, նյութական մշակույթի, գինեգործության հնագույն կենտրոններից մեկը: Փոքր Ասիան և Հայկական լեռնաշխարհը, ըստ հնագիտական հայտնագործությունների, համարվել են մետաղահանության և մետաղամշակման ամենանախնական կենտրոն, որտեղից մետաղարդյունաբերության արտադրանքն առաքվել է Ասորիք, Պաղեստին և Հյուսիսային Միջագետք:

Վաղ բրոնզի դարաշրջանում (Ք.ա. 3500-2400/2300 թթ.) Հայկական լեռնաշխարհը գիտնականների կողմից դիտարկվել է որպես Կուր-արաքսյան կամ Շենգավիթյան հնագիտական մշակույթի տարածման կենտրոն: Այս մշակույթի բնորոշ կողմերից մեկը զարգացած երկրագործությունն էր՝ Մոխրաբլուրի պատվարներով, ցորենի բազմաթիվ շտեմարանահորերով (Էլառ, Շենգավիթ), սեպաձև քարե խոփերով, պարզունակ

արորի և լծկան խոշոր եղջերավոր անասունների օգնությամբ վարուցանք անելով, վերամշակման համալիների՝ աղորիքների, սանդերի, հնագույն ոռոգման ցանցի առկայությամբ, ծիրանի մշակությամբ (ծիրանի կորիզի հայտնաբերվելը Գառնիի Ք.ա. III հազ. շերտերից և այլն):

Ք.ա. IV հազարամյակի կեսերից մինչև XXIV դարը Հայկական լեռնաշխարհը ներկայանում է որպես միավորված մեկ մշակութային տարածաշրջան: Վաղ բրոնզի դարաշրջանի հնավայրերից հայտնաբերված կիսաթանկարժեք քարերից պատրաստված գուրզերը, Մեծամորի աստղադիտարանը, հարուստ խորհրդանշաններով ու գաղափարագրերով խեցեղենը և այլն այդ են հաստատում:

1.2. Ժայռապատկերները (Ք.ա. VII-I հազ.) որպես Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության կենցաղի և մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր

Ժայռապատկերների գիտական հետազոտության պատմական ակնարկ:

Ժայռապատկերները ժայռերի, ժայռաբեկորների մակերեսին, խոր կիրճերում, լեռնահովիտներում, քարանձավների պատերին նախապատմական ժամանակաշրջանում կարծր քարով փորված կամ ներկով արված հնագույն պատկերներ են, տեսարաններ, առանձնապես որսը պատկերող հորինվածքներ, որոնք խոսում են ստեղծողի տնտեսական կյանքի՝ կենցաղի, զբաղմունքների, նաև գաղափարական պատկերացումների, հմայական ըմբռնումների մասին: Դրանք անցյալի կենդանի վկայություններն են: Ժայռապատկերները պատմամշակութային արժեք են, հնագույն անցյալի իրականության էական կողմերն արտացոլող պատկերային սկզբնաղբյուր: Այն նախնիների մտածողության ու գործունեության դրսևորում է, վաղնջական մշակույթի կրող, դրա մի տեսակը, ձևը, փուլը: Պատկերների այս նախաձևը՝ որպես հաղորդակցության միջոց, ապահովել է սերունդների կապը, կենսափորձի, մտածելակերպի և մշակույթի անխզելիությունը:

Աշխարհի տարբեր երկրներում հայտնաբերված ժայռարվեստի հուշարձանների շարքում կարևոր տեղ են գրավում Հայաստանի հնագույն շրջանի կենցաղի և մշակույթի յուրօրինակ սկզբնաղբյուրները՝ ժայռապատկերները: Հայկական լեռնաշխարհը՝ որպես հին աշխարհի անքակտելի մաս, իբրև մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը, հարուստ է նախնադարյան արվեստի հրաշալիքներով՝ ինքնատիպ բազմաբո-

վանդակ ու բազմազան ժայռապատկերներով, որոնք արժանացել են գիտական մի քանի սերնդի ուշադրությանը: Ուսումնասիրվել են Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Ջերմուկի, Սյունյաց, Քարվաճառի, Կոտայքի, Վայքի, Շատախի, Սաթ ու Կորդված լեռների ժայռապատկերների ոչ մեծ խմբեր:

Նորօրյա ժայռապատկերաբանությունը սկզբնավորվել է 1886 թ., երբ հայ գիտական մամուլում «Արարատ» ամսագրում Մ. Սմբատեանցը հրատարակեց «Բևեռաձև արձանագրություն» (թիվ 11, էջ 499-503) ուշագրավ հոդվածը:

Հայաստանի տարածքում ժայռապատկերների հայտնաբերման վայրերը, դրանց ուսումնասիրության արդյունքները, փուլերը:

Առաջին փուլ – 1910 թ. Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և Կոմիտասը բարձրանալով Արագած լեռը՝ առաջին անգամ հանդիպեցին ժայռապատկերների և 1913 թ. հրատարակեցին «Արարատ» ամսագրում (№ 1, 1913, էջ 53-68): Հաջորդ տարի Գ. Ղափանցյանն է հրատարակում հաղորդագրություն ժայռապատկերների տեղի, հայտնաբերման հանգամանքների մասին («Արարատ», 1914, № 1, էջ 91-96):

Առաջին գիտնականը, որ զբաղվել է ժայռապատկերների հետազոտությամբ, Աշխարհբեկ Քալանթարն էր: Նա 20-ական թվականներին դասակարգեց ու մեկնաբանեց հայ իրականությունից հայտնի ժայռապատկերները[70]: Այնուհետև խնդրո

---

[70] Տե՛ս **Աշխարհբեկ Քալանթար**, Արագածը պատմության մեջ. Ակնարկ նրա պատմական նշանակության և նյութական կուլտուրայի հուշարձանների մասին, Երևան, 1935: Ա. Քալանթարի՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվային ֆոնդերում պահվող հավաքածուի որոշ նյութեր հրատարակեց Լ. Բարսեղյանը (տե՛ս **Լ. Բարսեղյան,** Նոր նյութեր Հա-

առարկային անդրադարձավ Ս. Սարդարյանը[71], որը Արագած լեռան լանջերին հայտնաբերեց և ուսումնասիրեց մեծ քանակությամբ ժայռապատկերներ: Նրա գրքում տրվում է նյութի գտնվելու վայրը (Արագած, Գեղամավան, Ջերմուկ, Զաղա), կամայական ընտրված խմբերի նկարագրությունը և որոշ համեմատությունների հիման վրա դրանք թվագրում են այն մեզոլիթով:

Երկրորդ փուլ - 1960-70-ական թվականները դարձան ժայռապատկերների հայտնաբերման ու հետազոտման կարևոր փուլ, կազմակերպվում են հնագիտական արշավախմբեր:

Ժայռապատկերների հայտնաբերման հետազոտական ծավալուն աշխատանքներ են կատարել ՀՀ ԳԱ հնագիտական արշավախմբերը: Հայտնաբերվեցին հազարավոր ժայռապատկերներ, որոնք սփռված են Արագածի փեշերին, Սևանա լճի ավազանը եզերող Գեղամա, Վարդենիսի, Վայոց ձորի և Սյունյաց լեռնաշղթաների ստորոտներին:

Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի[72]՝ Սյունիքում, Հ. Մարտիրոսյանի, Հ. Իսրայելյանի[73]՝ Գեղամա լեռներում հայտնագործությունները և դրանց հրատարակություններն ու մեկնաբանությունները գիտական նշանակալի ներդրում էին[74]: «Գի-

---

յաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ, ՊԲՀ, 1966, թիվ 3, էջ 147-160):

[71] Տե՛ս **Ս. Հ. Սարդարյան,** Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113-122, նկ. 24-29:

[72] Տե՛ս **Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան,** Սյունիքի ժայռապատկերներ // Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 4, Ժայռապատկերներ, պր. 1, Երևան, 1970:

[73] Տե՛ս **Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան,** Գեղամա լեռների ժայռապատկերները // Հայաստանի հնագիտական հուշարձանները, 6, Ժայռապատկերներ, պր. 2, Երևան, 1971:

[74] Տե՛ս **Հ. Մարտիրոսյան,** Գեղամա լեռների ժայռապատկերները // Հայաս-

տությունն սկսվում է նախնադարում» (Եր., 1978) գրքով Հ. Մարտիրոսյանը փորձել է վերլուծել ժայռապատկերների սյուժետային բովանդակությունը՝ ժամանակակից գիտության բազմաթիվ սաղմեր որոնելով ժայռապատկերներում: Հազարավոր ժայռապատկերների թվում հարյուրավոր փորագիր պատկերանշանները ժայռագիր գաղափարագրեր նկատի ունենալով՝ նա գրում է. «Ամեն մի նախասկզբնական գիր և գրչություն ծայր է առնում իրերի, առարկաների, կենդանիների, մարդկանց, լուսատուների պատկերներից, որոնցով կազմվում էին ժայռանկարների երբեմն շատ շքեղ ու խոսուն կոմպոզիցիաները»: Նա ժայռապատկերները դիտում է որպես տիեզերական պատկերացումներ ներկայացնող պատկերներ, լուսնաարեգակնային տոմարի արտացոլում, կրոնագաղափարական պատկերացումներ, ժայռապատկերներից անցում ժայռագրության և նշանագրության: Անգամ վիմագրագետ Գ. Գրիգորյանը[75] կարծում է, որ «հնագույն վիմագրական տեքստեր կարելի է համարել ժայռապատկերները, որոնք կերտված են ... մ.թ.ա. Է-Ա հազ. ընթացքում»: Մի շարք գիտնականներ ժայռապատկերները անվանում են **գրի նախնական տեսակ՝ գաղափարագիր, նշան,** մաշտոցյան գրի նախատիպ[76]:

Ժայռապատկերների նկատմամբ հետաքրքրությունը չի նվազել նաև մեր օրերում, երբ առանձին ուսումնասիրողների կողմից Հայաստանի լեռնային տարբեր վայրերում հայտնաբերվում են ժայռապատկերների նորանոր խմբեր[77]: Չնայած

տանի հնագիտական հուշարձանները, 11, պր. 3, Երևան, 1981:

[75] Տե՛ս **Գ. Գրիգորյան,** Հայկական վիմագրություն, Երևան, 2000:

[76] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, էջ 44-46, ծանոթ. 15-21:

[77] Տե՛ս **Բ. Գասպարյան, Գ. Մարգսյան,** Ժայռանկարների նորահայտ խումբ

ժայռապատկերային նյութի ահռելի քանակությանը՝ մեզանում դրանք առ այսօր բավարար չափով ուսումնասիրված չեն: Ուսումնասիրությունների ստորև ներկայացվող շարքում հիմնական շեշտը դրված է մեկնաբանության և վերծանման վրա՝ օգտվելով փաստագրված և հրատարակված նյութերից: Մեկնաբանողների մեծ մասը հակված է ժայռապատկերները դիտարկել որպես գիր: Նրանց մի մասը պատմական ակնարկներում, տեղեկատվական հոդվածներում ժայռապատկերները պարզապես անվանում է գիր՝ գաղափարագիր, նշան (Խ. Սամուելյան, Ս. Բարխուդարյան, Լ. Խաչիկյան, Ս. Մելիք-Բախշյան, Ա. Գ. Աբրահամյան)[78], մյուսները որոշ փաստարկներ են բերում՝ փորձելով ապացուցել ժայռապատկերների մաշտոցյան գրի նախատիպ լինելը (Հ. Մարտիրոսյան, Ռ. Իշխանյան, Կ. Թոխաթյան):

Ժայռապատկերները մեկնաբանվել են նաև որպես աստղագիտական պատկերացումներ՝ համաստեղություններ, լուսնա-արեգակնային համակարգ, օրացույց, տոմար…

Գեղամավանի «Կարմիր քարանձավում». // «Հայաստանի հնագույն մշակույթը», Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2003, էջ 5-12, **Ա. Խեչոյան, Բ. Գասպարյան,** Գեղամավան-1 քարայրի ժայռանկարների գեղարվեստական վերլուծության փորձ. // «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Երևան, 2005, էջ 28-33, **Ա. Խեչոյան, Բ. Գասպարյան, Վ. Ֆերուզլիո,** Ժայռապատկերների նորահայտ համալիր Արագածի հարավային լանջերին (Աղավնատուն-Լեռնամերձ-Ոսկեհատ) // «Հին Հայաստանի մշակույթը», XIV, 2008, էջ 295-301:

[78] Տե՛ս **Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 160-166: **Ս. Բարխուդարյան,** Հնությունների նշանակությունն ու պահպանությունը, Երևան, 1935, էջ 9-13, 42-46: **Լ. Խաչիկյան,** Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը // ՊԲՀ, № 4, 1963, էջ 145-158: **Ս. Մելիք-Բախշյան,** Հայկական հնագրություն, Երևան, 1987, էջ 3-9, 95-103: **Ա.Գ. Աբրահամյան,** Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, 1982, էջ 26-48:

(Բ. Թումանյան, Ս. Պետրոսյան, Հ. Տոնականյան, Կ. Թոխաթյան, Հ. Մարտիրոսյան): Ժայռապատկերների իմաստաբանական, խորհրդանշական և դիցաբանական հարցերին անդրադարձել են Ա. Դեմիրխանյանը, Լ. Աբրահամյանը, Կ. Թոխաթյանը, Հ. Մարտիրոսյանը[79]: Ժայռապատկերների սյուժետային վերլուծությունը հայոց հնագույն կենցաղի ու մշակույթի կարևոր ու անփոխարինելի սկզբնաղբյուր է:

1990-ական թվականների հեղինակներ Բ. Գասպարյանի, Կ. Թոխաթյանի և այլոց հետազոտությունների արդյունքում եզրակացվեց, որ դրանք հզոր միջոց են դառնում հայոց պատմության և մշակույթի անհայտ էջերի վերհանման, հայոց ծագումնաբանության, բնիկության ու ժողովրդագրական խնդիրների բացահայտման համար:

Սիսիանի Ուխտասար կոչվող վայրում հայտնաբերվեցին մի քանի հազար ժայռապատկերներ, որոնց միայն աննշան մասն է ներկայացվել Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի գրքում: Ժայռապատկերների մեջ աչքի են ընկնում Գեղամա լեռների պատկերախմբերը: Դրանք դիտարկվում են որպես Հայկական լեռնաշխարհի VII-I հազարամյակի պատմական իրականության բացահայտման կարևորագույն մշակութաբանական սկզբնաղբյուր, որպես նախնադարյան մշակույթի կրող, դրա տեսակ, ձև, որոնք պատկերագրորեն արտացոլում են անցյալը: Հայաստանում ժայռապատկերման ոլորտը սկզբնավորվել է Ք.ա. VII-V հազ. միջև՝ նստակեցությանն ու երկրա-

---

[79] Ժայռապատկերների վերաբերյալ անհրաժեշտ գրականությունը ներկայացված է սույն ձեռնարկի հեղինակի հետևյալ աշխատություններում՝ «Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, 2019, էջ 39-55, **նույնի՝** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, էջ 5-13:

գործությանն անցնելուն համընթաց, և աստիճանաբար անկում ապրել գրի լայն կիրառման հետևանով: Ժայռապատկերման ավանդույթի դրսևորումներ՝ հնագույն պատկերների ոճով փորագրություններ կան նաև անտիկ ու վաղ միջնադարյան կառույցներում ու անձավներում: Անչափ կարևոր է դրանց գիտաճանաչողական արժեքը՝ նրանցում արտացոլված են նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջանում ապրած մարդու պարզունակ ընկալումներն ու պատկերացումները իրենց շրջապատող երևույթների, հավատալիքների ու սովորույթների, առօրյա կենցաղի, հնադարյան արվեստի, տոմարական հաշվումների վերաբերյալ: Առանձնապես բազմաքանակ են կենդանական աշխարհի՝ մանր ու խոշոր եղջերավոր անասունների, ինչպես նաև գիշատիչ կենդանիների սխեմատիկ գծապատկերները: Հայկական լեռնաշխարհում ամբողջ կենդանական աշխարհը «կարելի է կարդալ» ժայռապատկերներում: Այդ կենդանիների մի մասն այժմ իսպառ վերացել է Հայաստանից, հայտնաբերվում են սոսկ նրանց պեղածո մնացորդները: Դրանց հայտնաբերման և գիտական բացահայտումների շնորհիվ Հայկական լեռնաշխարհը ներկայանում է որպես հնագույն և հին աշխարհի անքակտելի մաս, իբրև մարդկային մշակույթի բնօրրան, նախնադարյան արվեստի հրաշալիքների՝ ինքնատիպ ու բազմաբովանդակ ժայռապատկերներով լեցուն հայրենիք: Պարզորոշ է հնադարյան այս մշակույթի առնչակցությունը մշակույթի այլ ճյուղերին՝ արվեստ, պաշտամունք, լեզու և գրականություն, երաժշտություն, պար, շինարվեստ ու տեխնիկա, գիտություն ու կրթություն, մարզարվեստ, մարտարվեստ և այլն: Դրանք նախնադարի պատմամշակութային իրականության բացահայտման միջոց և հավաստի սկզբնաղբյուր են:

Ցավոք, հազարավոր սկզբնաղբյուրների և տասնյակ ուսումնասիրությունների առկայությամբ հանդերձ՝ նյութը դեռևս լիարժեքորեն լուսաբանված չէ, քիչ են հրատարակվել լուսանկարներ և քարտեզներ, չի արժևորվել պատկերների ճշգրիտ տեղի, դիրքի նշումը[80]:

Ժայռապատկերների այուժետային բովանդակությունը:

Ժայռապատկերները պատկերագրորեն լույս են սփռում հայկական լեռնաշխարհի նեոլիթ-էնեոլիթան պարբերաշրջանի տեղաբնիկների տնեսության, արվեստի, մշակույթի անհայտ կողմերի վրա:

---

[80] Առաջին գյուտերից են Հյուսիսային Իսպանիայի Սանտանդեր նահանգի Ալտամիրա քաղաքում 1879 թ. հայտնաբերված կենդանիների գունավոր պատկերները: XIX դ. վերջին և XX դ. սկզբներին իրար են հաջորդում հին քարեդարյան անձավային արվեստի նոր հուշարձանների հայտնագործությունները Ֆրանսիայում և Իսպանիայում: 1940 թ. նախնադարյան այս մշակույթի՝ բացառիկ արժեք ունեցող հնագույն ստեղծագործություններ են հայտնաբերվել Լասկո, իսկ 1956 թ.՝ Ռուֆինյակ անձավներում: Երկրաչափական բնույթի գծանկարներ են գտնվել Վրաստանի հարավում, կենդանիների պատկերներ, որսի տեսարաններ՝ Ուզբեկստանում, Հարավային Ուրալում, Եվրոպայի հարավ-արևմուտքում, Ասիայում:

Անհամեմատ շատ են աշխարհի տարբեր կողմերում գտնված մեզոլիթի, նեոլիթի, Էնեոլիթի, բրոնզի և երկաթի դարաշրջանների ժայռարվեստի հուշարձանները: Բազմագույն ներկերով ժայռերին նկարված մեծ քանակությամբ պատկերներ են հայտնի Սահարայում, Սկանդինավիայում, Կարելիայում, Ուրալում, Սիբիրում, Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում և այլուր (տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, էջ 39-55):

Նկ. 1ա.



Նկ. 1բ.

Նկ. 1ա. Տարբեր կենդանիների խմբապատկեր՝ չորս եղջերու և այծեր (Ք.ա. II հազ.)

Նկ. 1բ. Երկու այծ՝ եզրերին, երկու գեղեցիկ իշուկ՝ կենտրոնում, անասնապահության տիպիկ պատկեր (Ք.ա. II հազ.)

Նկ. 2. Արևի աստվածությունը խորհրդանշող
«ճառագայթավոր» հորինվածք՝ էգ և արու զուբրերով,
հսկա եղջերուներով և այլ կենդանիների պատկերներով



Նկ. 3ա. Սայլ՝ կլորավուն քաշանով (Գեղամա լեռներ)
3բ. Սայլ՝ այծի և հեծյալի պատկերներով (Գեղամա լեռներ)
3գ. Սայլ՝ լծված եզներով (Գեղամա լեռներ)

Նկ. 4ա. Արև, Լուսին, կայծակ և երկրաչափական այլ փորագրություններ

Նկ. 4բ. Սվաստիկա (Գեղամա լեռներ)

Նկ. 4գ. Արևը խորհրդանշող պատկեր (Գեղամա լեռներ)

Հարուստ ու բազմազան են ժայռապատկերների թեմատիկան ու բովանդակությունը: Նախնադարի մարդու գոյության միջոցներից մեկը որսորդությունն էր, ուստի և պատկերների ահռելի մասը ներկայացնում է որսորդությունը: Որսորդները պատկերված են ինչպես մերկանդամ, շարժուն ու բնորոշ ձևերով, այնպես էլ զգեստավորված՝ տարբեր տիպի գլխանոցներով, կենդանական ու թռչնային դիմակներով: Նրանք զինված են փոքր, մեծ աղեղներով կամ մահակներով, նիզակներով, տեգով, վահաններով: Պատկերված են որսի և որսորդության բազմաթիվ տեսակներ՝ թակարդով, փոսորակով, նետ ու աղեղով, օղապարանով՝ հետապնդումով հալածական եղանակով: Որսվող կենդանին այնպիսի ճշգրտությամբ է պատկերված, որ զարմանալ կարելի է, թե նախնադարյան մարդը որքան լավ էր տիրապետում կենդանու և մարդու անատոմիային: Ուշագրավ են որսի մի շարք տեսակներ՝ այծի, հովազի, վարազի, մեծաեղջյուր և ազնիվ եղջերուի, վիթի, տուրի և բազմաթիվ այլ կենդանիների, հատկապես արջի, առյուծի որսը, որտեղ աչքի է զարնում մարդու պայքարը այդ գազանների դեմ: Հանդիպում ենք մի որսաձևի, երբ մարդը ձեռքին մորթի կամ թաղիք (քեչա) փաթաթած այն գազանի երախն էր մտցնում, մյուս ձեռքով հարվածում էր գլխին, մեկ այլ տեղում՝ մարդու զինված մենամարտը՝ վարազի նկատմամբ: Այս որսաձևը կիրառվում էր Սասունում և Դերսիմում ընդհուպ մինչև XX դարի սկզբները[81]: Հանդիպում են նաև որսորդների ու շների բազմությամբ կենդանիների հնարամիտ շրջափակման պատկերներ: Նրանցում վերարտադրված են ինչպես անհատական որսի, այնպես

[81] **Վ. Պետոյան,** Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 137-138, **Գ. Հալաջյան,** Դերսիմի հայերի ազգագրությունը, մասն Ա // ՀԱԲ, հատոր 5, Երևան, 1973, էջ 159:

էլ մեծ խմբերով, համահավաք ուժերով կատարվող որսի տեսարաններ: Գեղամա լեռներում հանդիպում են թռչունների տարբեր տեսակների՝ բադի, սագի, կաքավի, կարապի և այլնի որսապատկերներ: Նեոլիթ-էնեոլիթյան տնտեսության ձևավորման հիմքում ամենուրեք նկատվում են զարգացած հավաքչության և որսորդության հետքեր, արևի, լուսնի, երկնային այլ մարմինների երկրաչափական խորհրդանշանային պատկերներ, տղամարդկանց ու կանանց պտղաբերության գաղափարը շեշտող սեռական անդամների խորհրդանշաններով[82], կենդանիներին ընտելացնելու, բուծելու և անասնապահության անցնելու գործում մարդու վտանգավոր ու դժվարին պայքարը արտացոլող տեսարաններ: Յուրաքանչյուր որսի տեսարան ընդգծված հատուկ և անկրկնելի սյուժե ունի:

Ուշագրավ են երկրագործությանը վերաբերող տեսարանները: Հնագույն երկրագործության ուսումնասիրության տեսակետից չափազանց կարևոր են քարե վավերագրերը, որոնց վրա փորված են երկրագործական, դաշտամշակության գործիքներ: Սյունիքի ժայռապատկերներում առկա է տեսարան, որը նման է արորի՝ լծված եզներով, և որը վերաբերում է վաղ բրոնզի դարաշրջանին: Նրանցում երևում են նաև քառանիվ սայլեր, որոնք օգտագործվել են երկրագործության մեջ, դրանց լծված են եղել եզներ: Ուշագրավ է, որ նման սայլեր գտնվել են ուշ բրոնզի դարաշրջանին պատկանող Սևանի ավազանում հնագիտական պեղումների ժամանակ: Հետաքրքրական է նաև սահնակ հիշեցնող փոխադրամիջոցի առկայությունը ժայռապատկերներում:

---

[82] **Ռ. Նահապետյան,** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Երևան, 2010, էջ 128-129:

Ժայռապատկերներում շատ են տիեզերական, մասնավորաբար՝ արևի պաշտամունքի հետ աղերսվող պատկերները. արևն ու լուսինը, աստղերը, երկնային համակարգը: Արևը պատկերող նշանները հաճախ ճառագայթավոր անիվի ձև ունեն:

Այսպես, արևի և անիվի նմանությունից բնականորեն կարող էր ծագել նաև արևի ու սայլի, կառքի, մարտակառքի իմաստաբանական կապը: Այսպիսի առասպելական ու գրաֆիկ պատկերներն առանձնապես տարածված են արևելյան առասպելներում, բրոնզեդարյան գոտիների պատկերազարդ սյուժեներում և արվեստի հուշարձաններում, ինչպես նաև հայոց ավանդազրույցներում, հեքիաթներում:

Արևին վերագրել են արարչական զորություն, պաշտել են որպես զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերբնական ուժ: Այն պատկերել են նաև կենդանիների տեսքով, և ոչ միայն արևը, լուսինն ու կայծակը, այլև ողջ աստղազարդ երկինքը: Նրանցում շատ են նաև տիեզերական պատկերացումներին առնչվող գերբնական արարածները:

Հնագետ Հ. Հակոբյանը ցույց է տվել, որ նախնիների պաշտամունքը երկվորյակ «Թուխ մանուկների» կերպարանքով սկզբնավորվելով բրոնզեդարյան Հայաստանում՝ արտացոլվել է նաև ժայռապատկերներում[83]:

Ժայռապատկերները՝ որպես «քարե հանրագիտարաններ», որպես ժամանակակից գիտության բազմաթիվ սաղմեր կրող 1) հնամենի մտածողության ու գործունեության պատկերային դրսևորում, 2) նշանային համակարգեր, 3) գաղափա-

[83] Տե՛ս **Հայկ Հակոբյան,** «Թուխ մանուկներ»-ի պատկերագրությունը Հին Հայաստանում // Թուխ մանուկ, Երևան, 2001, էջ 52-67:

բազրեր, 4) տիեզերական, 5) աստղագիտական պատկերացումներ ներկայացնող պատկերներ, 6) լուսնա-արեգակնային տոմարի, օրացույցի, 7) կրոնա-գաղափարական, 8) արգասավորման հմայական գործողությունների պատկերացումներ արտահայտող նշանագրեր, 9) նախնական գրի տեսակ, մեհենագրեր, 10) խորհրդանշանային համալիր, որպես 11) նախնադարի կենցաղի ու մշակույթի, 12) բուսական ու կենդանական աշխարհի, զբաղմունքների, 13) հատկապես որսորդության, հավաքչության, նախնական երկրագործության և անասնապահության, 14) կրոնապաշտամունքային և այլ երևույթների ուսումնասիրության անփոխարինելի սկզբնաղբյուր են համարվում:

Ի՞նչ է տալիս ժայռապատկերների ուսումնասիրությունը. **ա) դա հզոր միջոց է դառնում հայոց պատմության և մշակույթի անհայտ էջերի վերհանման, հայոց ծագումնաբանության, բնիկության ու ժողովրդագրական խնդիրների բացահայտման համար: Դրանով բացահայտվում են ժայռապատկերման մշակույթի հարանմանությունը, հավատալիքների ու դիցարանի, պետականության որոշ տարրերի գոյությունը, բ) դրանով բացահայտվում է, որ ժայռապատկերներ արարողները բազում հազարամյակներ նստակյաց կյանք են վարելը, գ) Հայկական լեռնաշխարհի ժայռափորագրման օջախ և օրրան լինելը, դ) ժայռապատկերման և հայոց մշակույթի այլ ոլորտների միջև սերտ ու թեմատիկ աղերսները, ե) Հայկական լեռնաշխարհը հայերի բնօրրան լինելը** և այլն: Աշխարհի գրեթե բոլոր ծագերում կան ժայռապատկերներ, սակայն Հայաստանի տարածքում հայտնաբերվածները շատ բազմազան են:

1.3. Ք.ա. IV-II հազարամյակների պաշտամունքային հուշարձաններ

Պաշտամունքային կարիքներին էին ծառայում Ք.ա. III հազարամյակի կիրառական արվեստի բազմաթիվ այլ հուշարձաններ: Ուշագրավ է, որ, օրինակ, պտղաբերման պաշտամունքին նվիրված արարողություններն ու ծեսերը չէին սահմանափակվում անասնապահների լեռնային սրբատեղիներով և շարունակվում էին ձմռան ու գարնանամուտի ամիսներին նաև բնակավայրերում գտնվող սրբատեղիներում, սովորական կացարանների սրբազան անկյուններում, որտեղ տեղադրվում էին պտղաբերություն խորհրդանշող կենդանիների ու կանանց բազում արձանիկներ[84]: Տիեզերական պատկերացումների հետ են կապված նաև կիրառական արվեստի մեծ թվով այլ հուշարձաններ՝ սայլերի ու սայլակների մոդելներ՝ դրանց լծված եզների կամ ցուլերի ճակատների աստղանշաններով, անվաձև սկավառակներ՝ թռչունների պատկերներով, բրոնզե և ծարիրե խաչեր, սվաստիկաներ[85], բրոնզե գոտիներ՝ արևը պատկերող յոթթևանի աստղի ձևով[86], արևն ու լեռները խորհրդանշող սվաստիկաներով: Ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարի կավանոթների[87] վրա պատկերված են

---

[84] Տե՛ս **Հ. Ռ. Իսրայելյան,** Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 263:

[85] Դրանք գտնվել են Լճաշենի, Շամշադինի, Ախթալայի, Ռեդկին լագերի դամբարանների պեղումներից (տե՛ս **С. А. Есаян,** Амулеты связанные с культом солнца из Армении // “Советская археология”, № 2, 1968):

[86] Տե՛ս **А. А. Мартиросян,** Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 216:

[87] Տե՛ս **Հ. Ռ. Իսրայելյան,** Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, էջ 51:

երկձի մարտակառք կամ կառավարվող երկանիվ սայլ, արևը խորհրդանշող պատկերներ, բրոնզե դաշույններ և դաշույնապատյաններ, թռչունների բրոնզե արձանիկներ, որոնք, ըստ հետազոտողների, արևի աստվածության արտահայտություն են: Դրանցից զատ կան դարձյալ արևը խորհրդանշող առյուծի, ցուլի, ձիերի, արևի գնդի պատկերով՝ ուրարտական շրջանին բնորոշ գոտիներ ու վահաններ, օձերի, արևի, առյուծի պատկերներով դաշույնի պատյաններ, վաղ հայկական դրամներ՝ պատկերված քառաձի մարտակառքերով և այլն: Ուրարտական կնքադրոշմներից մեկի վրա պահպանվել է քառանիվ մի սայլ, որի վերևում շողում է արևը, որին հետևում են բազկատարած քուրմը (կամ աստված) և արևին նվիրված երևակայական թևավոր անգղայծը՝ կրծքին դաջված արևի նշանով: Մեկ ուրիշի վրա սայլի փոխարեն ներկայացված է նավակ, դարձյալ մարդակերպ, կենդանական ֆիգուրների ու աստղային խորհրդանիշերի միջավայրում[88]: Կեռախաչի (սվաստիկայի) ձևով արևը պատկերել են նաև երկրաչափական տարրերով ու մարմիններով, որոնք կիրառվել են նյութական մշակույթի ամենատարբեր բնագավառներում՝ խեցեղենի, մետաղե իրերի ու քարից պատրաստված առարկաների և փայտե շինվածքների, ինչպես օրինակ՝ սայլերի վրա: Լճաշենում գտնվել է ոսկուց պատրաստված ծավալային առյուծի գլուխ, որը միևնույն ժամանակ նախնադարյան ոսկերչության հոյակապ նմուշ է: Հայտնաբերվել են նաև առյուծագլուխ ապարանջաններ: Անշուշտ գոյություն է ունեցել այս կենդանու պաշտամունքը՝ որոշ դեպքերում արևի հետ աղերսվող, երբեմն էլ

[88] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** История и культура Урарту, Ереван, 1944, նկ. 90, 92:

գուցե անկախ նրանից: Հնագիտական և դիցաբանական նյութերի համադրությունը թույլ է տալիս ենթադրել, որ արևի պաշտամունքի հետ կապված են այլ կենդանիներ՝ ձին, արծիվը, այծը, ագռավը, եղջերուն: Արմավիրի տաճարին ձիերով մարտակառքեր էին նվիրաբերում, մի սովորույթ, որն ընդունված էր նաև Փոքր Ասիայում և Արևմուտքում: Կարծիք կա, որ վաղ հայկական դրամների վրա դրոշմված քառաձի մարտակառքերն էլ կապ ունեն հիշյալ երևույթի հետ[89]: Բացի բուսական ու տիեզերական մոտիվներից՝ կիրառական արվեստի սիրված տարրեր են նաև երկրաչափական զարդերը՝ բազմատեսակ պարույրները, ոլորանախշերը, եռանկյունիները, շեղանկյունիները, համակենտրոն շրջանագծերը և այլն: Վաղ բրոնզեդարյան արվեստի լավագույն նմուշների շարքը կարելի է դասել նաև կավե օջախներն ու դրանց տարատեսակ հենակները, որոնք մեծ մասամբ նախնիների պաշտամունքին նվիրված յուրատեսակ զոհասեղաններ էին՝ կողքերին ծեփված մարդակերպ արձանիկներով: Առանձնակի նշանակություն ունեին նաև կանանց արձանիկները, որոնք խորհրդանշում էին կյանքի հարատևման, պտղաբերության, արգասավորման, մայրաստվածության գաղափարը:

[89] Տե՛ս **К. В. Тревер,** Очерки по истории культуры древней Армении, էջ 129-32:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Հիմնավորել հնագիտական պեղածո նյութերի կարևորությունը որպես սկզբնաղբյուրի ազգագրական ուսումնասիրության:

2. Ներկայացնել հնագիտական պարբերացման ժամանակագրական փուլերը:

3. Արենի № 1 քարանձավում հնագիտական ո՞ր դարաշրջանի մշակութային շերտի վերաբերող գտածոներ են հայտնաբերվել, ի՞նչ բացահայտումներ են կատարվել, դրանց միջազգային նշանակությունը:

4. Ի՞նչ տվյալների հիման վրա է ընդունված Հայկական լեռնաշխարհը համարել երկրագործական և անասնապահական մշակույթների հնագույն օրրան:

5. Աստվածաշնչյան ավանդությունը Հայկական լեռնաշխարհի խաղողագործության և գինեգործության նախահայրենիք լինելու մասին:

6. Արհեստագործության ո՞ր ճյուղերն էին հասել առավել բարձր զարգացման վաղ բրոնզի դարաշրջանում:

7. Ինչպիսի՞ն էր թաղման կարգը բրոնզի դարաշրջանում՝ ըստ Լճաշենի դամբարանաբլուրի նյութերի:

8. Ի՞նչ է ժայռապատկերային մշակույթը, ո՞րն է նրա գիտաճանաչողական արժեքը:

9. Ներկայացրեք ժայռապատկերների սյուժետային բովանդակությունը:

10. Ի՞նչ է տալիս ժայռապատկերների ուսումնասիրությունը:

11.Ընդգծել Ք.ա. IV-II հազարամյակի հուշարձանների պաշտամունքային դրսևորումները:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. **Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ.**, Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, թիվ 4, Ժայռապատկերներ, պրակ 1, Երևան, 1970:

2. Հայաստանի ժայռապատկերները քարե դարից մինչև բրոնզի դար / Ս.Հ. Սարդարյան: Կազմ.՝ Ֆ.Սարդարյան: Խմբ.՝ Հ. Ավետիսյան: Առաջ. հեղ.՝ Գ. Կարախանյան, ԵՊՀ հրատ., 2010:

3. **Մարտիրոսյան Հ. Ա.,** Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, Ժայռապատկերներ, պր. 3, Եր., 1981:

4. **Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, հ. 6, Ժայռապատկերներ, պր. 2, Երևան, 1971:

5. **Մարտիրոսյան Հ.,** Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, 1978:

6. **Նահապետյան Ռ.**, Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010, էջ 5-42:

7. **Նահապետյան Ռ.**, Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի հնագույն կենտրոն (ըստ հնագիտական նյութերի և գրավոր աղբյուրների) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 6-27:

8. **Նահապետյան Ռ.**, Հայկական լեռնաշխարհը անասնապահական մշակույթի հնագույն կենտրոն // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 28-39:

9. **Նահապետյան Ռ.**, Հայկական լեռնաշխարհը բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 39-54:

10. **Սարդարյան Ս.,** Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2004:

Լրացուցիչ

1. **Ավետիսյան Պ.,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Երևան, 2006:

2. **Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա.,** Ուրարտուի հնագիտություն, Եր., 2010:

3. **Եսայան Ս.,** Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992:

4. **Գասպարյան Բ., Սարգսյան Գ.,** Ժայռանկարների նորահայտ խումբ Գեղամավանի «Կարմիր քարանձավում» // «Հայաստանի հնագույն մշակույթը» (Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2003, էջ 5-12:

5. **Թոխաթյան Կ.,** Ժայռապատկերաբանության և օրացույցի ակունքները Հայաստանում և Անանիա Շիրակացին//Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում, Երևան, 2014, «ՀՀ ԳԱԱ գիտություն», էջ 107-133:

6. **Թոխաթյան Կ.,** Ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհում հայոց հարակայության վկաներ // «Հարք», Հայագիտական հանդես, 2006, 1, Եր., 53-59:

7. **Թոխաթյան Կ.,** Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը // ՊԲՀ, 2016, № 2, էջ 180-197:

8. **Թոխաթյան Կ.,** Մաշտոցեան տառաձևերի և դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ // «Բազմավէպ», 2003, № 1-4, էջ 44-100:

9. **Թոխաթյան Կ.,** Հայաստանի ժայռապատկերները նախնադարյան արվեստի հմատեքստում // ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, № 2, էջ 368-381:

10.**Թորոսյան Ռ.,** Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Երևան, 1979:

11.**Խանզադյան Ե.,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում, Երևան, 1979:

12.**Խնկիկյան Օ.,** Հայաստանի հնագիտություն (Հին քարի դարից մինչև Վանի թագավորության անկումը), Երևան, 2009:

13.Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ.1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298թ., ԵՊՀ հրատ., Երևան, 2007:

14.**Նահապետյան Ռ.**, Ժայռապատկերները՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգաբանական ուսումնասիրության սկզբնաղբյուր, «Ակունք», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, գիտական հոդվածների ժողովածու, № 3(9), ԵՊՀ հրատ., 2013:

15.**Նահապետյան Ռ.**, Ծրագիր-Հնագույն, հին և վաղ միջնադարյան սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայ բնակչության կենցաղի ու մշակույթի մասին, Երևան, 2013, էջ 1-16:

16.**Տեր-Մովսիսյան Մ.,** Արարատի և Արագածի գագաթներին // «Արարատ», N 1, 1913, Էջմիածին, էջ 53-68:

17.**Межлумян С.,** Палеофауна эпохи энеолита, бронзы и железа на территории Армянского нагорья, Ереван, 1972.

18.**Мартиросян А. А.,** Армения в эпоху бронзы и раннего

железа, Ереван, 1964.

19.**Хачатрян Т.С.,** Материальная культура Артика, Ереван, 1963.

20.**Пиотровский Б.Б.,** Археология Закавказья, Ленинград, 1949.

21.**Пиотровский Б.Б.,** Ванское царство, Москва, 1959.

22.**Тирацян Г.А.,** Культура древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.), Ереван, 1988.

Թեմա 2. Սեպագիր արձանագրությունները Հայկական լեռնաշխարհի բնակչության կենցաղամշակութային բնութագրի, հնագույն պետական կազմավորումների ուսումնասիրության սկզբնաղբյուր

2.1. Շումերա-աքքադական սկզբնաղբյուրներ

Հայաստանի հնագույն պատմության և մշակույթի վերաբերյալ սկզբնաղբյուրներ են հայտնաբերվել ինչպես բուն լեռնաշխարհի տարածքում, այնպես էլ հին Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր գիր ունեցող երկրներում, ինչը վկայում է հնագույն ժամանակներում մեր երկրի՝ տարածաշրջանում ունեցած կարևոր դերակատարության մասին:

Հայկական լեռնաշխարհի պատմության հնագույն շրջանի մասին ամենավաղ տեղեկությունները (Ք.ա. III հազարամյակի սկզբից մինչև II հազարամյակի սկիզբ) հաղորդում են սեպագրերը ստեղծած շումերները և Ք.ա. XXIV դարից սեպագրերը իրենց լեզվին հարմարեցրած սեմական ծագում ունեցող աքքադացիները: Այս աղբյուրներում Միջագետքից հյուսիս ընկած տարածքը՝ Հայաստանը, ներկայացված է Արատտա և Սուբուր (Սուբարտու) երկրանուններով, որպես «Փրկիչ» սրբազան տարածք, արարչագործության կենտրոն, աստվածաբնակ երկիր, դրախտավայր, մարդկության բնօրրան, վերածննդի երկիր, արևի երկիր: Շումերական դյուցազնավեպում «Արատտա» երկրի ժողովուրդը «ընտրյալ» է համարվել, ժողովուրդ «Արատտայի»), որ առավել է մյուս ժողովուրդներից, ժողովուրդ, որին Դումուզին ընտրեց մյուս ժողովուրդներից: Ի դեպ, Դումուզին համարվել է Հայա-Էնկի գերագույն աստծո որդին, որի անունը շումերերեն նշանակում է «հարա-

զատ (իսկական) որդի»: Հունական աղբյուրներում համապատասխանեցվել է Օրիոնի հետ, որն Աստվածաշնչի ոսկեդարյա թարգմանության մեջ նույնացված է Հայկի հետ: Եղել է Արատտայի հովանավոր աստվածը[90]:

Արատտա-Հայաստանը, ըստ շումերական բնագրերի, եղել է Հին Արևելքում քաղաքակրթական արժեքների տարածող[91]: Հին միջագետքյան դիցաբանությունը Հայկական լեռնաշխարհի հետ է կապում աստվածներից իմաստնագույնի՝ արարչագործ, իմաստնության, համաշխարհային օվկիանոսի ու ստորերկրյա ջրերի աստված Հայա-Էնկիի պաշտամունքը: Միջագետքի հավատալիքների համաձայն՝ նրա գլխավոր կացարանում էին բնակվում յոթ իմաստունները, որոնց Հայա-Էնկին ուղարկեց քաղաքակրթություն տարածելու մարդկանց մեջ: Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր պատկերացումներում աստվածաբնակ ու սրբազան համարվող Հարալի երկիրը, որ պատմական տարածք է Հայկական լեռնաշխարհում, հանդես է գալիս իբրև քաղաքակրթության բնօրրան[92]: Արատտայում, ըստ շումերական բնագրերի, գործածվել է սեփական գրային համակարգ: Այդ հաղորդումը լիովին համապատասխանում է հայաստանյան նյութին: Հայկական լեռնաշխարհում գրի ծագման և զարգացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ք.ա. V-IV հազարամյակներում վաղ պատկերագրության զարգացումով ստեղծվում է գաղափա-

---

[90] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա». Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, կազմողներ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան, հ. 1, Երևան, 2007, էջ 48-49:

[91] **Արտակ Մովսիսյան,** Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2006, էջ 22-27:

[92] Տե՛ս **Արտակ Մովսիսյան,** Հայաստանը Քրիստոսից առաջ 3-րդ հազարամյակում, Երևան, 2005, էջ 100:

բագրությունը, որի կատարելագործման շնորհիվ էլ առաջ է գալիս Հայաստանի գծային գիրը (Ք.ա. III հազ. կեսերից մինչև Ք.ա. I հազ. սկիզբը)[93]:

Շումերական աղբյուրները «Արատտա» երկրի և ժողովրդի (Ք.ա. XXVIII-XXVII դդ.) վերաբերյալ եղած տեսակետները հայագիտության մեջ առաջ քաշվեց հայագետ Արտակ Մովսիսյանի կողմից: Ըստ նրա՝ Արատտան Հայաստանի տարածքում մինչև օրս հիշատակված առաջին պետականությունն է, շումերական դյուցազնավեպում՝ որպես «Աստվածային սուրբ օրենքներով երկիր»[94]: «Արատտա» անվամբ երկիրը զուգադրելի է Աստվածաշնչի Արարատ-Հայաստանի հետ: Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին աքքադական պետության հիմնադիր Սարգոն Աքքադացու տերության աշխարհագրությունը ներկայացնող արձանագրության մեջ հիշատակված է «Արմենիա» անվան նախաձևը՝ «Արման(ում)» երկրանունը: Հիշատակություն կա որպես վարկած «Վերին ծովի» (Վանա լիճ) շրջանում կազմավորված Սուբարտու անվամբ երկրի մասին՝ այն Արմանի երկրին (հիշատակված Նարամ Սուեն արքայի (XXIII դ.) թողած սեպագիր արձանագրության մեջ) համապատասխանելու վերաբերյալ: Հայագիտության մեջ շրջանառվում է Արմանում-Արմենիա անվանումների զուգադրելիության տեսակետ:

Հիշատակություն կա Ուրմիա (Կապուտան) և Վանա լճերի միջև Արամ անվամբ երկրի մասին և այլն: Հիշենք, որ ըստ

---

[93] Տե՛ս **Արտակ Մովսիսյան,** Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 23-46:

[94] **Արտակ Մովսիսյան,** Սրբազան լեռնաշխարհ, էջ 39-43, 66-71:

Մովսես Խորենացու տեղեկության՝ «արմեն» և «Արմենիա» անունների հիմքում ընկած է «Արամ» անունը[95]:

Այլ հիշատակություններ. Հայկական լեռնաշխարհից հարավ էր տարվում շինարարական հումք՝«լեռնային քարեր»: Ըստ այդ հաղորդումների՝ Ուրուկի Էաննա նշանավոր տաճարը կառուցվել է Արատտայից ուղարկված լեռնային քարերով: Շումերների խնդրանքով արատտացի վարպետներն են իրենց երկրում կառուցել տաճարներ:

Շումերական աղբյուրներից մեկում ասվում է, թե «Ուրուքից շատ ու շատ Հյուսիս, «յոթ լեռնաշղթաներից» այնկողմ գտնվող «Արարատ» կոչված «լեռնային երկրի» կառավարչից իր «դեսպանի» միջոցով, դաժան սպառնալիքների ներքո, բացի ոսկյա և արծաթյա զարդերից ու թանկարժեք քարերից պահանջում է նաև, որ այդ երկրի մարդիկ «ամրապինդ բարձեն լեռնային էշերին» և «իրենց բարձունքներից բերեն լեռնային քարեր ու կառուցեն ինձ համար մեծ տաճար, խոշոր սրբատեղի» և՝ «Թող Արատտայի ժողովուրդը ճաշակով (արվեստով) զարդարի նրա ներսը»[96]: Ի դեպ, Կրամերը «Արատտա լեռնային երկիրը» ոչ այնքան որոշակի, համարում է Պարսկաստանի սահմաններում գտնվող երկրամաս: Ոչ առանց հիմքի և, իհարկե, ոչ առանց վերապահումների, կարելի է ասել նաև, որ Արատտա անվանված այդ լեռնային երկիրը (կամ քաղաք պետությունը, Արատտա-Ուրարտու-Արարատ) գտնվել է հե-

---

[95] Արամ անվամբ երկրի մասին համապատասխան հղումներով տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 41-42, 60: Արատտայի մասին մանրամասն տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), էջ 16-30, 56-60:

[96] Տե՛ս **Ս. Հ. Крамер,** История начинается в Шумере, М., 1965, էջ 41:

տագայում Հայկական լեռնաշխարհ կոչված երկրում, որի մի զգալի մասը նույնպես ընկած էր Եփրատ և Տիգրիս գետերի միջև, որտեղ ապրող ժողովուրդները (կամ ցեղային միությունները), արդեն II հազարամյակի կեսերից Ք.ա. սկսած գետային և ցամաքային ճանապարհների միջոցով առավել սերտ հարաբերությունների մեջ էին գտնվում իրենցից հարավ գտնվող առաջավորասիական զարգացած ու հզոր հարևանների հետ[97]: Այդ բանի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Հայկական լեռնաշխարհը հնուց ի վեր հարուստ էր և հայտնի ինչպես շինարարական բազմատեսակ քարերով, այնպես էլ քարակոփ վարպետների սերունդներով[98]: Ավելի ուշ՝ XXVII-XXVI դդ. Ք.ա. միջագետքյան աղբյուրները հայտնում են նաև, որ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան Սուբուր-Արմանի թագավորությունից Միջագետք էին գնում հացթուխներ, դարբիններ, այգեպաններ[99]:

Արատտայի բնակիչները մետաղներ ու թանկարժեք քարեր են արտահանել Միջագետք և փոխարենը ներմուծել հացահատիկ ու երկրագործական այլ ապրանքներ: Շումերական այս բնագրերը տեղեկություններ են պահպանել Արատտայի բանակի և պարսպապատ մայրաքաղաքի մասին: Կարևոր տեղեկություն է նաև երկրում սեփական գիր ունենալը:

Շումերական աղբյուրներում կան հիշատակություններ արատտացի ճարտարապետ-շինարարների կողմից Շումե-

---

[97] Տե՛ս **Н. Б. Янковская,** Некоторые вопросы экономики Ассирийской державы // ВДИ, 1956, № 1, էջ 38 և այլն:

[98] Տե՛ս **Ս. Բարխուդարյան,** Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963:

[99] Տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հայաստանը Քրիստոսից առաջ III հազարամյակում, էջ 36:

րում շտեմարանների, տաճարների կառուցման մասին, որից պետք է ենթադրել Արատտայում տաճարաշինության և ճարտարապետության այլ ճյուղերի զարգացման բարձր մակարդակի մասին[100]: Ռազմական արվեստում և տնտեսության մեջ միայն արատտացիներն են գործածել ձի՝ որպես փոխադրության միջոց և դեռ III հազ. Ք.ա., մինչդեռ շումերներին հայտնի է եղել որպես այդպիսին էշը: Սա ձիերի վերաբերյալ առաջին հիշատակությունն է[101]:

Արմենիա անվան հնագույն հիշատակությունները. Արմի, Արման(ում), Արամ:

Հայաստանին տրված հնագույն անվանումները՝ Արատտա-Արարատ-Ուրարտու-Շուբուր (Սուբուր)-Շուբարտու (Սուբարտու)-Շուբրիա, Արման/ի/ում-Արմի/Ե-Արմինա-Արմենիա, Հայա-Հայասա-Հայք-Հայաստան, իրենց տարբերակներով վկայված են Ք.ա. III հազ. առաջին կեսից:

Ըստ շումերական աղբյուրների՝ Արատտան որպես լեռնային երկիր, որտեղ առաջնակարգ դեր է խաղացել անասնապահությունը, ունեցել է հովվության աստված՝ **Դումուզի** անվամբ:

Շումերներից բերել են երկրագործական բարիքներ, փոխարենը արտահանել են՝ մետաղներ, թանկարժեք քարեր: Հայտնի է եղել հանքային հարստություններով՝ ոսկու, արծաթի, բրոնզի, կապարի, լաջվարդի, սարդիոնի հանքերով ու նրանց մշակությամբ:

---

[100] Տե՛ս նույն տեղը, էջ 97:

[101] Տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա:

2.2. Ասորեստանյան սեպագիր սկզբնաղբյուրներ

Շնորհիվ ասորեստանյան սեպագիր արձանագրությունների, մեզ են հասել բացառիկ արժեքավոր և մեծածավալ տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության, այստեղ ծնունդ առած վաղ պետական կազմավորումների և հինարևելյան խոշոր քաղաքակրթությունների հետ վերջիններիս ունեցած փոխհարաբերությունների մասին: Դրանք վերաբերում են ոչ միայն մեր լեռնաշխարհի քաղաքական պատմությանը, այլև հոգևոր և նյութական մշակույթին, սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերություններին՝ սկսած Ք.ա. XIV դ. վերջերից ընդհուպ VII դարի երկրորդ կեսը: Ասորեստանյան սեպագիր սկզբնաղբյուրների՝ Հայկական լեռնաշխարհին վերաբերող տեքստերի համահավաք ժողովածուն հայերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով կատարվել է պատմագիտության դոկտոր Երվանդ Գրեկյանի կողմից[102]:

Ասորեստանյան սեպագրերը վկայություններ են թողել Ք.ա. XIX-XVIII դդ. Հայկական լեռնաշխարհից մետաղի արդյունահանման և մետաղի առևտրի գլխավոր մայրուղու, այստեղի ցեղային կազմավորումների հետ առևտրական կապերի մասին: Քանեշ-Աշուր առևտրական մայրուղու հետ կապված Քյուլ թեփե բնակավայրից հայտնաբերված արձանագրության մեջ հաղորդվում են նաև բազմաթիվ տեղեկություններ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացնելու տվյալ ժամանակաշրջանի ոչ միայն առևտրատնտե-

[102] Տե՛ս **Երվանդ Գրեկյան,** Բիայնիլի-Ուրարտու. պետություն և հասարակություն (պատմահնագիտական ուսումնասիրություն) պատմ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2016:

սական, այլ նաև քաղաքական, էթնիկ և այլ իրավիճակների մասին[103]: Քանեշ (Քյուլ թեփե) հնավայրում գտնված արձանագրություններում հիշատակված է Խախ (ում) անվամբ բնակավայրը, որը համարվել է ոսկու արդյունահանման կարևոր շրջան: Այդ նույն անվամբ բնակավայր հիշատակություն կա նաև խեթական և Վանի թագավորության արձանագրություններում: Ուշագրավ է, որ այդ անվամբ բնակավայրի վերաբերյալ հիշատակված է նաև Մ. Խորենացու և Փավստոս Բուզանդի կողմից: Այն գտնվել է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի և շրջակա տարածքներում[104]: Քանեշից գտնված XVI դարի Միտանիի արքաների սեպագիր արձանագրություններում հիշատակված են Հայկական լեռնաշխարհի տասնյակ իշխանություններ՝ Ծուփաննա (Ծոփք), Թեգարամա (Թոգարմա, Թորգոմա տուն) և այլն[105]:

Ք.ա. XIV-VII դդ. նրանցում հիշատակություններ են պահպանվել Նաիրի և Ուրարտու երկրանունների մասին: Ուրուատրի անվամբ պետության՝ Սալմանասար I արքայի (1263-1234 թթ.), Թուկուլթի-Նինուրտա I-ի կողմից (1233-1197 թթ.) Նաիրի անվամբ երկրի մասին են հիշատակված:

Սալմանասար I (Շուլմանու-աշարեդ I) արքայի գահակալության շրջանում, արձանագրություններից մեկում հայտնվում է, որ տեղապահության (պետության առաջնորդները համարվում էին աստվածների տեղապահները երկրում, նրանց իշխանությունը՝ դիտվում էր տեղապահություն) սկզբում

---

[103] Տե՛ս **Н. Б. Янковская,** Клинописные тексты из Кюльтепе в сборниках СССР, М., 1968, էջ 11-24:

[104] Տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 69-70, 83:

[105] Տե՛ս նույն տեղը, էջ 129-131, 153:

Ուրուատրի երկիրն ապստամբել է իր դեմ: Այնուհետև ամբարտավան ոճով հիշատակում է, որ իր զորքերով Աշշուր աստծո (Ասորեստանի գերագույն աստվածը) հովանավորությամբ բարձրացել է զորքով վեր, նրանց հզոր լեռները, կործանել է 8 երկիր, 51 քաղաք, այրել ու թալանել է նրանց ունեցվածքը և «խոնարհել է տիրոջ ոտքերի առաջ երեք օրում ողջ Ուրուատրի երկիրը»: Նույնպես է վարվել **Մուծրու** (Մուծածիր) երկրի նկատմամբ: Այստեղ նա հիշատակում է նաև **Արինա** անվամբ սրբազան քաղաքի կործանման մասին, որը նախկինում ապստամբել էր Ասորեստանի դեմ[106]: Գիտնականները այս քաղաքը տեղադրում են Հայկական լեռնաշխարհի հատվածում, Արևելյան (Հայկական) Տավրոսներում: Թուկուլթի-Նինուրտա I արքայի թողած արձանագրություններում հիշատակվում են բազմաթիվ հայկական տեղանուններ, դրանցից մեկը Ալզու անվամբ երկիրն է, որը նույնանում է պատմական Հայաստանի Աղձնիք նահանգի անվան հետ[107]:

Նաիրյան «երկրների» և դրանց 40 առաջնորդների կամ «թագավորների» հիշատակությունները, մեկուկես դար անց՝ Թիգլաթպալասար I-ի (1114-1076թթ.) արձանագրությունները Նաիրյան «երկրների» ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկրի, Նաիրի երկրների 23 արքաների բանակների, մարտակառքերի ոչնչացման, «հացահատիկի կույտ» դարձնելու, մի այլ տեղ էլ հիշատակում է Նաիրի երկրի 60 արքաների նույն ճակատագրին արժանանալու, հարկատու դարձնելու մասին, «Մեծամեծ քաղաքների», «նրանց հարստությունների», «նրանց բազմաթիվ ձիերի, ջորիների երամակ-

---

[106] Տե՛ս **И. И. Дьяконов,** Ассировавилонские источники по истории Урарту // ВДИ, М., 1951, № 2-4, № 1, прим. 17.

[107] Տե՛ս **Н. В. Арутюнян,** Топонимика Урарту, Ереван, 2001, էջ 143-144:

ների, երինջների հոտերի և նրանց երկրագործական անթիվ ունեցվածքի» մասին: Ք.ա. Աշշուրնաձիրապալ II արքայի (884-859) արձանագրությունները հիշատակում են «Նաիրի» արդեն մեկ միասնական երկրի, նրա «250 պարսպապատ քաղաքների» մասին: Նրա օրոք սովորություն է դառնում Ուրարտու տերմինի հիշատակությունը հաճախ Նաիրի երկրանվան հետ միասին: Ասորեստանյան արձանագրություններում բազմիցս վկայված են Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ տեղանունների, ինչպես, օրինակ, Էնզիտե (Անձիտ գավառը), Արծանիա գետ (Արածանի), Սուխմե երկիր (վրացիների կողմից հայ ժողովրդին տրված «սոմեխի» անվանում), Արծաշքու (Արճեշ), Արամու (ուրարտական քաղաք), Նաիրի երկրի ծով (հավանաբար Ուրմիա լիճը), Գուտի-Կուտին (Կորդվաց աշխարհ), Կումմուխ երկիր (Կոմմագենե), Տուրուշպա (Տուշպա-Տոսպ-Վան) նաև երկրագործության, անասնապահության, ձիաբուծության, մարտակառքերով մարտավարության, ջրանցքաշինության, Ուրարտուի պաշտպանական ամրությունների, Խալդի աստծո տաճարի հարստության կողոպուտի, «թագավորական տների» և այլնի մասին հիշատակությունները:

Ուշագրավ է նաև Սարգոն (Շարրու-ուկին) II ասորեստանյան արքայի (721-705) թողած հիշատակությունները Նաիրի երկիրը ձիերով, խոշոր և մանր եղջերավոր անասուններով հարկատու դարձնելու և այլ երկրներ արշավանքի ժամանակ մարտակառք, հեծյալ, նետաձիգ, վահանակիր, տեգավոր զինվորական գնդեր հավաքագրելու վերաբերյալ:

Ասորեստանյան աղբյուրներում ուշագրավ հաղորդումներ կան Ուրարտուում ջրանցքաշինության, երկրագործության, այգեգործության, ուրարտական գինու մառանների, անասնապահության և հատկապես արհեստագործության

մասին: Այս առթիվ Սարգոն II արքան թողել է հայտնի վավերագիր՝ «Լուվրի աղյուսակը»: Նա նաև հաղորդում է ուրարտական քաղաքների հզոր պաշտպանական ամրությունների մասին՝ գրելով, թե ինքը տեսել է հզոր ու գեղեցիկ բերդեր՝ 120 շերտ աղյուս ունեցող պատերի բարձրությամբ (կազմում է շուրջ 18 մետր): Բերդերն ունեին 2-3 շարք պարիսպներ՝ իրենց աշտարակներով ու պատվարներով: Ք.ա. XII-XI և VIII դարերի ասորեստանյան սեպագիր արձանագրությունները հաստատում են նաև նահապետական ընտանեկան մեծ համայնքներով կենցաղավարելու մասին: Արձանագրությունները վկայում են, որ Ասորեստանի թագավորները հպատակ երկրներում գերեվարում էին ամբողջ ընտանիքներ տղամարդկանցով, կանանցով, երեխաներով ու արյունակից հարազատներով: Հյուսիսային Միջագետքում, Վանա և Կապուտան լճերի շրջակայքում բնակվող խուրրի-ուրարտական ցեղային առաջնորդների և «թագավորական տների» (ընտանիքների) անդամների թիվը հասնում էր 120-260-ի: Հասկանալի է, որ աղբյուրները ներկայացնում են մեզ նահապետական ընտանեկան մեծ համայնքի քանակական կազմը, որի մեջ մտնում է մեկ հորից սերող մերձավոր բարեկամների երեքից-չորս սերունդ՝ իրենց կանանցով, երեխաներով, երբեմն նույնիսկ օտարամուտ մարդկանցով: Ասորեստանյան Սարգոն II արքան իր տարեգրություններում նախանձով է հիշատակում ուրարտական ձիաբուծարանների և մարտական ձիերի վարժեցման մասին: Կազմակերպվող զինախաղերի ու մրցությունների մասին են խոսում գրավոր այն վկայությունները, որոնց համաձայն Մենուան իր Արծիվ անունը կրող ձիով ցատկել է 22 կանգուն (11,4 մ) երկարություն, իսկ Արգիշտի II-ի արձակած նետը թռել է 950 կանգուն (492 մ) տարածություն:

Սարգոն II-ն արձանագրում է, որ Ուրարտուի բերդապահները խարույկների օգնությամբ ազդանշաններով հեռավոր տարածություններից միմյանց հաղորդում էին ասորեստանյան զորքերի տեղաշարժերի մասին: Նույն արքայի վկայությամբ Ուրարտուի զորաբանակում օգտագործում էին երաժշտական փողային գործիքներ և թմբուկներ՝ իրենց մարտիկներին ոգևորելու և հակառակորդին ահաբեկելու նպատակով[108]:

2.3. Խեթական սեպագիր արձանագրություններ

Ք.ա. XV-XIII դարերի խեթական սկզբնաղբյուրները Հայասա պետական կազմավորման մասին: Հայասա-Ազզի էթնիկական խումբը՝ հայ ժողովրդի ձևավորման առանցքում: Հայկական լեռնաշխարհի քաղաքական և էթնիկական պատմության մեջ զգալի դեր է խաղացել խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվող Հայասա պետական կազմավորումը: **Հայասա** երկրի մասին եզակի տեղեկություններ են պահպանվել խեթական թագավորության արխիվներում (գտնված Բողազքյոյ քաղաքատեղիում): Ուշագրավ են գիտնականների (Գր. Ղափանցյան, Ն. Ադոնց և այլք)՝ Հայասա երկրանվան հետ մեր ժողովրդի հայ ինքնանվան և երկրի՝ Հայաստան անվան կապի մասին եղած տեսակետները: Նրանք նշում են «Հայասա» տերմինի հիմքում «հայ» էթնոնիմի առկայության մասին (խեթերեն **hay (a) sa**) տեղանվանակերտ վեր-

---

[108] Տե՛ս ավելի հանգամանորեն՝ «Ասորեստանյան սեպագիր աղբյուրները հայկական լեռնաշխարհի ցեղերի, ժողովուրդների և պետական կազմավորումների մասին» // Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 90-138:

ջածանցով, որը համապատասխանում է «Հայասա», «Հայք», «Հայաստան» երկրանվանմանը: Ք.ա. XV-XIII դարերի խեթական սեպագիր աղբյուրները որոշ պատկերացում են տալիս ոչ միայն Հայասա հնագույն պետական կազմավորման քաղաքական պատմության, այլև ընտանեկան-հասարակական հարաբերությունների և տնտեսական կյանքի, ռազմավարության ու մշակույթի մասին: Գր. Ղափանցյանի[109] ուսումնասիրության համաձայն՝ խեթական աղբյուրներում հիշատակված Հայասա-Ազզի անվամբ երկիրն է տվել նրա **Հայ** ինքնանվանումը: Ինչպես նշեցինք, հիմնավորված է, որ Hayasa անունը բաղկացած է **Haya** հիմքից և **sa** վերջավորությունից, որը տարածված վերջածանց է Փոքր Ասիայի տեղանուններում: Հայասա երկիրը տեղադրվել է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի, Փոքր Հայքի, հնարավոր է նաև հարակից այլ տարածքներում: Հայասա երկրի մասին հատվածների թարգմանությունները խեթական բնագրերից կատարել է Վ. Խաչատրյանը[110]: Հայասայի կարևոր կենտրոններից էր Կումախան՝ հետագա Բարձր Հայք աշխարհի Անի-Կամախը, որտեղ գտնվում էր հայոց թագավորների դամբարանը: Խեթական սեպագրերում բազմիցս է հիշատակվում Հայասա պետության արքունիքի, բանակի և դիցապաշտական կենտրոնների՝ իր դպիրներով արքունի դիվանի, պետական գրագրության, բանակի 700 մարտակառքի, 10-հազարանոց հետևազորի, խեթական պետության հարևանությամբ բազմաթիվ տեղանունների մասին: Հայասան և Ազզին մեկնաբանվել են որպես միմյանց մոտ գտնվող երկու քա-

---

[109] Տե՛ս **Гр. Капанцян,** Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ер., 1947, էջ 25-26:

[110] Տե՛ս **В.Н. Хачатрян,** Восточные провинции Хеттской империи, Вопросы топонимики, Ереван, 1971:

ղաքական կազմավորումներ, որոնց տարածքի տեղադրությունը ըստ գիտնականների՝ ա) գտնվել են Երզնկա-Տրապիզոն-Էրզրում եռանկյան միջև, բ) Գայլ գետի ստորին հոսանքների շրջանում, գ) Եփրատի, Ճորոխի և Իրիս-Յեշիլըրմակի միջև, դ) Սև ծովի ափին՝ Ճորոխի հյուսիսային ավազանում: Այսպիսով, Հայասան կարող էր գտնվել սևծովյան Տրապիզոն-Գիրեսուն հատվածից մինչև Վանա լիճ ընկած ընդարձակ տարածությունում՝ Ազզի պետական կազմավորման հարևանությամբ: Կա տեսակետ, որ Հայասա և Ազզի տերմիններով բնորոշվող տարածքը էթնոլեզվական կապերով միմյանց հետ սերտորեն կապված երկու ցեղային կազմավորումների միություն էր: Խեթական սեպագրերում հիշատակված են պատմական Հայաստանի տարածքային անվանումներ: Օրինակ՝ **Թեզարամա քաղաք**, որը նույնացվում է Աստվածաշնչի Թոգարմայի հետ (Ծննդոց, գլ.Ժ, 4, Եզեկիել, գլ.ԼԸ, 6), որը տեղադրվում է Մալաթիայից հյուսիս, Եփրատի աջ ափին: **Ազզի երկիր**. Ազզին Հայասայի գլխավոր նահանգն էր, այն տեղադրվում է Ճորոխի ավազանում: Այս տեղանունը պահպանվել է Ազորդ ձևով, որպես Հայոց Տայքի մի գավառի անվանում: Մելիդ-Մալաթիա: Թիլ-Հայասա քաղաքի տեղադրությունը՝ Թիլ անվամբ ավանի տեղում՝ Նանե դիցուհու տաճարի գտնված վայրում, Երիզա-Երզնկա քաղաքի մոտ[111]:

Խեթական սկզբնաղբյուրները հաղորդում են ամուսնության ամենավաղ սովորույթների (մերձամուսնություն, տեգրա-

---

[111] Տե՛ս **Ա. Քոսյան,** Հայասայի աստվածները // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2006, էջ 444-457, **նույնի՝** Հայկական լեռնաշխարհի տեղանունները ըստ խեթական սեպագիր աղբյուրների, Երևան, 2004:

մուսնություն (լևիրատ), քենամուսնություն (սորորատ)[112], երկրագործության, խաղողագործության, մարտակառքերով մարտավարության և այլնի մասին: Խեթական մի տեքստից պարզվում է, որ հայասացիները հիմնականում երկրագործ էին: Խեթական արքան սպառնում էր ոչնչացնել ի թիվս այլոց «ձեր տները, ձեր դաշտերը, ձեր խաղողի այգիները, ձեր մարգագետինները, ձեր եղջերավոր անասունները, ձեր ոչխարները…»: Մի այլ տեքստից երևում է, որ Ազզի զինվորները հետագայում ծառայել են խեթական բանակում որպես մարտակառքի վարողներ, հետևաբար նրանց ծանոթ են եղել նաև ձին և մարտակառքը: Կարևոր է նաև, որ այս տարածքը հայոց նախաքրիս-

---

[112] Սուպպիլուլիումաս (խեթական թագավորը) հետաքրքրական հրահանգ է տալիս Խուկկանային (Հայասա երկրի **արքային) իր քրոջ հետ նրա ամուսնության առթիվ: Ասում է նրանց հետևյալը. «Քույրս, որ քեզ կնության եմ տվել, նույնպես ունի քույրեր և կիսաքույրեր, իսկ դրանք, քո ամուսնության հետևանքով, մերձեցել են քեզ: Այսպես ուրեմն, Խաթթի երկրում օրենք գոյություն ունի, ըստ որի՝ չի կարելի իր քույրերին ու զարմուհիներին դիպչել, դա անթույլատրելի** է: Խաթթիում նման արարք թույլ տվողը չի ապրի, նա կմեռնի»: «Քանի որ ձեր երկիրը քիչ զարգացած է, ապա դուք սովոր եք ապրել ձեր քույրերի և զարմուհիների հետ: Խաթթիում դա արգելված է: Երբ մի օր քո կնոջ քույրը, կիսա-քույրը կամ զարմուհին քո մոտ հյուր գա, նրանց առաջարկի՛ր խմելիք և ուտելիք: Խմեցե՛ք, կերե՛ք, լավ ժամանակ անցկացրեք: Սակայն նրանցից ոչ մեկին մի՛ դիպչիր: Անթույլատրելի է, դա մահացու մեղք է»:

«Զգուշացի՛ր նաև պալատի կանանցից… Ազատ կամ ստրուկ, մի՛ մոտենար նրան, մի՛ խոսիր նրա հետ: Լինի դա քո ծառան կամ սպասուհին, նրան մի մոտենար, զգուշացի՛ր, երբ անցնում է պալատական մի կին, շեղվի՛ր նրա ճանապարհից»:

«Երբ Հայասա վերադառնաս, մի՛ դիպչիր քո եղբայրների կանանց և քո քույրերին: Խաթթիում դա անթույլատրելի է: Եթե պալատ վերադառնաս, արգելված բան մի անիր: Նաև նոր կին չառնես Ազզի երկրից, եթե արդեն մեկն ունես, թող նա լինի քո հարճը, բայց նրան մի դարձնիր քո կինը» (**Ն. Ադոնց,** Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 36):

տոնեական դիցարանի աստվածությունների պաշտամունքի գլխավոր և նախնական կենտրոններից էր:

Ք.ա. II-I հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում կիրառվել է խեթա-լուվիական մեհենագրությունը (հիերոգլիֆիկան): Հայտնվել էր կարծիք, որ խեթա-լուվիական հիերոգլիֆների լեզուն կարող է լինել հնագույն հայերենը, սակայն տարիներ անց պարզ դարձավ, որ դրանք գրված են ոչ թե հայերենով, այլ նրան մոտ ազգակից հնդեվրոպական լեզուներից մեկով՝ լուվիերենով: Խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները հայագիտության համար ունեն բացառիկ կարևորություն, նախ՝ կարևոր սկզբնաղբյուրներ են վաղնջահայերենի ուսումնասիրության համար, երկրորդ՝ Ք.ա. II-I հազ. պատմության վերականգնման և երրորդ՝ նախամաշտոցյան գրային մտածողության վերականգնման տեսանկյունից[113]:

2.4. Ուրարտական թագավորության արձանագրություններ (Ք.ա. IX–VI դդ.)

Քարի, մետաղյա, ոսկրե իրերի, կավե սալիկների վրա Հայաստանի տարածքում հայտնաբերված ավելի քան 600 արձանագրությունների հիշատակությունները, անգնահատելի պատմական վավերագրեր լինելով հանդերձ, հույժ կարևոր սկզբնաղբյուրներ են նաև հայկական մի շարք տեղանունների, տնտեսության տարբեր ճյուղերի՝ երկրագործության, խաղողագործության, անասնապահության, ջրանցքաշինության,

[113] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 87: Նաև՝ **А.В. Косян,** Лувийские царства Малой Азии, Ереван, 1994:

արհեստների, կիրառական արվեստի, շինարարական տեխնիկայի, քաղաքների հիմնադրման, թագավորների և արքունիքի, զինվորական կազմավորումների, ուրարտական պանթեոնի աստվածությունների, պաշտամունքային հարցերի, նվիրաբերման, զոհաբերությունների, զորահավաքի, արշավանքների, հաղթանակների, ավարառության, հարկահավաքման, վերաբնակեցումների և այլ հարցերի վերաբերյալ:

Ուրարտական արձանագրությունները կարևորվում են նաև որպես տնտեսական, շինարարական, ռազմական և ծիսապաշտամունքային բովանդակությամբ տեղեկությունների սկզբնաղբյուր:

Արձանագրությունները սովորաբար կառուցված են հետևյալ կերպ. նախ փառաբանվում են աստվածները, առանձնապես՝ Խալդի աստվածը, և հայցվում են նրանց օգնությունն ու օժանդակությունը իրենց ռազմական ձեռնարկումների հաջողության համար: Միջին և ամենաընդարձակ մասը հատկացվում է տարած հաղթանակների նկարագրությանը և ձեռք բերված ռազմական ավարի թվարկմանը: Երրորդ և վերջին մասը երբեմն-երբեմն պարունակում է անեծքի բանաձևը: Արքաները խնդրում են ամենածանր պատիժ տալ բոլոր նրանց, ովքեր կփորձեն եղծել կամ ոչնչաչնել իրենց թողած արձանագրություն-հուշարձանները:

Արձանագրություններում ուրարտացիներն իրենց երկիրն անվանում են Բիայնիլի, իսկ իրենց՝ բիայնացիներ: Ընդհանուր առմամբ բնույթով և բովանդակությամբ ուրարտական սեպագրերը շատ նման են ասորեստանյանին: Այստեղ նույնպես վերամբարձ ու փքուն ոճով նկարագրվում են ուրարտական թագավորների ռազմական արշավանքները, բերվում են թվական տվյալներ մարտերին մասնակցած հեծելազորի, հետևա-

կի, ռազմակառքերի, վերցված գերիների, ավարի, կողոպուտի, կոտորածների և այլնի մասին: Բայց, ի տարբերություն ասորեստանյան արքաների թողած հակառակորդի նկատմամբ ցուցաբերած ամենադաժան գազանությունների պարծենկոտ նկարագրությունների, ինչպես՝ «Թշնամու կառափներից կոթող կանգնեցրի, շատերին ցցերի վրա վարսեցի», ուրարտական արձանագրություններում այդպիսի դաժան նկարագրություններ գրեթե չկան: Իբրև մի երկրորդ կարևոր կողմ՝ կարելի է նշել այն, որ ուրարտական թագավորները պատերազմական գործողությունների ընթացքում իրենց տարած հաղթանակներից զատ՝ ոչ պակաս կարևորել են դրանց շարքում նաև իրենց շինարարական աշխատանքները հիշատակելը, ինչպես օրինակ՝ «Հողը ամայի էր, ոչինչ չկար այստեղ կառուցված» և որ ինքը (արքան - Ռ. Ն.) այնտեղ «հզոր գործեր է կատարել» երկիրը շենացնելու համար: Արձանագրությունների մի մասն էլ ունի տնտեսական բովանդակություն, շինարարական աշխատանքների՝ քաղաքների, բերդերի, ջրանցքների, կառուցման, գյուղատնտեսական մթերքների ամբարման և այլնի մասին: Դրանցից իմանում ենք ուրարտական պետության զարգացած տնտեսության՝ երկրագործության, այգեգործության, անասնապահության, արհեստների, ռազմական ու շինարարական արվեստի բարձր զարգացած լինելու մասին:

Սարդուրի I-ի (Ք.ա. 840-825) ասուրերեն գրված 10 արձանագրություններից մեկը (բոլորն էլ գտնվել են Վանի քարաժայռի ստորոտում կառուցված պարսպի մեջ) հիշատակվում է (Ք.ա. մոտ 840 թ.) Տուշպա (հետագայում՝ Տոսպ, Վան քաղաք) Վանա լճի արևելյան ափին կառուցման մասին: Նա գրում է.

«Ես քարերն այս Ալնիունու (Տուշպայի մոտակայքում) քաղաքի միջից բերեցի և պարիսպն այս կառուցեցի»[114]:

Մեզ հասած հնագույն ուրարտական սեպագիր արձանագրությունները վերաբերում են Իշպուինիի (Ք.ա. 825-810) ժամանակին: Վանի թագավորության դիցարանը ևս կանոնակարգվեց Իշպուինի արքայի օրոք և արձանագրվեց Մհերի դուռ կոչվող ժայռի վրա: Ժայռագիր սեպագիր արձանագրությունից տեղեկանում ենք, որ դիցարանը գլխավորում էր գերագույն եռյակը՝ Խալդին՝ աստվածների հայրը, երկնքի և երկրի արարիչը, Թեյշեբան՝ ռազմի ու ամպրոպի աստվածը, և Շիվինին՝ արևի աստվածը, որի պաշտամունքի գլխավոր կենտրոնը Տուշպա-Վան մայրաքաղաքն էր: Երկրապագում էին նաև դաշտերի, լեռների, ծիածանի ու այլ աստվածների: Վանի թագավորության դիցարանը կազմված էր 70 աստվածներից, 35 արական և 35 իգական, ինչպես նաև շուրջ 30 սրբություններից: Բոլոր աստվածներին զոհաբերում էին արու կենդանիներ՝ ցուլ և խոյ, իսկ դիցուհիներին՝ կով և ոչխար: Հետաքրքիր է, որ Խալդի աստվածը և՛ ստեղծողն էր, և՛ պահպանողը, և՛ պատժողն ու ավերողը: Ժայռագիր սեպագիր արձանագրությունում նշվում է կարգի մասին, ըստ որի՝ յուրաքանչյուր ամսում Խալդի աստծու համար ողջակիզել 1 ուլ, 1 եզ, **Արուբանիին** (ուրարտական դիցարանի գերագույն աստվածուհին)՝ 1 կով և 1 ոչխար, Խալդյան դարպասներին՝ 1 ոչխար, Խալդյան զենքերին՝ 1 ոչխար: «Արևի ամիս» տոնախմբության օրը՝ Խալդիին զոհաբերել են 6 ուլ, 17 եզ, Թեյշեբային՝ 6 եզ, 12 ոչխար և մյուս բոլոր աստվածներին այս կարգով՝ ըստ նրանց

---

[114] **Н. В. Арутюнян,** Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 1. Ի դեպ, Ն. Հարությունյանի այս գիրքը ուրարտական սեպագիր աղբյուրների վերաբերյալ վերջինն ու ամենահամապարփակն է:

կարևորության: Կին աստվածուհիներից էին՝ **Խուբա**ն՝ ուրարտական դիցարանի երկրորդ աստվածուհին՝ Թեյշեբա աստծո կինը, **Տուշպեան՝** ուրարտական դիցարանի երրորդ աստվածուհին՝ Շիվինի աստծո կինը: Վանի թագավորության դիցարանի առաջին իգական եռյակին հաջորդում են ևս 11 աստվածուհիներ[115]:

Հատուկ նշանակություն ուներ տարեսկզբի տոնակատարությունը՝ գարնանային օրահավասարին՝ մարտի 22-ին, որն արտահայտում էր հավատքն առ այն, թե ինչպես մեկնարկի տարին, այդպիսի արդյունքներ էլ կստացվեն ողջ տարում: Տարվա առաջին ամիսը կրում էր արեգակի անունը: Արեգակի ամսվա առաջին օրը սահմանվում էին զոհաբերություններ բոլոր աստվածներին՝ հավատով, որ նրանք բարեհաճ կլինեն ամբողջ տարվա ընթացքում: Զոհաբերությունների չափը արձանագրված էր հենց Միհերի դռան արձանագրության մեջ: Աստվածները պատկերվում էին մարդու կերպարանքով, սակայն կարելի է հանդիպել նաև կենդանիներին ու թռչուններին բնորոշ առանձին բաղադրիչների:

Մինուա Իշպուինորդին թողել է Մինուայի ջրանցքի շինարարության վերաբերյալ արձանագրություն, որը Մինուայի ջրանցքի վրա գտնվող 14 արձանագրություններից մեկն է: Ջրանցքը, որ ունի ավելի քան 70կմ երկարություն, գործում է նաև այժմ, ունի բարդ հիդրոտեխնիկական կառուցվածք, անցկացված է լեռների լանջերով փորված և տեղ-տեղ քարե պատնեշներով ամրացված հունով, ինչպես նաև ձորերի վրա կառուցված հատուկ կամուրջներով[116]:

---

[115] Տե՛ս նույն տեղը, № 38, 45:

[116] Տե՛ս նույն տեղը, № 60:

Արքաները արձանագրություններում իրենց հիշատակում են՝ արքա Բիաինիլի երկրի, իշխան Տուշպա քաղաքի: Մինուան հիշատակություն է թողել նաև Խալդյան դարբասների (Տուշպա քաղաքի), «Մինուայի խաղողուտ»-ի, բուժարանի կառուցման վերաբերյալ: Ընդ որում, անեծքներ են թափում դրանց ոչնչացնողների հասցեին:

Արգիշտի I Մինուայի որդին թողել է արձանագրություն Ուլուանի երկրի (ներկայիս Աբովյան քաղաքի շրջակայքում), Դարանի քաղաքի (Աբովյան քաղաքի տեղում)[117], «Էրեբունիի» Երևանի «ծննդյան վկայականի» վերաբերյալ: Նա գրում է. «Խալդյան մեծությամբ կառուցեցի այս հոյակապ ամրոցը, հաստատեցի Էրեբունի անունը՝ Բիաինիլի (երկրի) զորությունը լուլուական (բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար): Արգիշտին ասում է. «Հողը չոր էր: Կատարեցի մեծագործություններ հզոր այնտեղ»: Արձանագրությունը թողնվել է շինարարական քարի վրա, ուրարտական Արին բերդ ամրոցի գլխավոր մուտքի մոտ և համարվում է Երևանի «ծննդյան վկայականը»՝ «տրված» Ք.ա. 782 թ: Էրեբունի տեղանունը պահպանված է ներկայիս Երևան քաղաքի անվան մեջ:

Պակաս հետաքրքրական չէ նաև Արմավիր քաղաքի «ծննդյանը» վերաբերող արձանագրությունը, որը նույնպես թողնվել է Արգիշտի I-ի կողմից Ք.ա. 776 թվականին: Ահա այդ արձանագրությունը, «Խալդյան մեծությամբ Արգիշթե Մինուա որդին ասում է. «Ամրոց հոյակապ կառուցեցի, հաստատեցի Արգիշթեխինելե անունը: Հողը չոր էր, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր): Գետից չորս՝ ջրանցք անցկացրի, խաղողուտ

[117] Տե՛ս նույն տեղը, № 173, 177:

(և) անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ»[118] :

Ուշագրավ է Արգիշտի I-ի Խորխոռյան տարեգրությունը, որ փորագրված է Վանի քարաժայռի արևմտյան մասում և ամենամեծ արձանագրությունն է, բաղկացած է 8 սյունակից, հայտնաբերել է արևելագետ Ֆ. Շուլցը՝ 1828 թ.:

Արգիշտի I-ի որդու՝ Սարդուրի II-ի (764-735) Վանի քարաժայռի վրա թողած արձանագրության մեջ ասվում է. «Խալդյան մեծարությամբ (ահա) ինչ տղամարդկություն այնտեղ կատարեցի: Վեց հազար չորս հարյուր երեսունվեց պատանի այնտեղից հանեցի, տասնհինգ հազար հինգ հարյուր հիսուներեք կին քշեցի: Ընդամենը քսանմեկ հազար ինն հարյուր ութսունինը մարդ (մեկ) տարում (քշեցի): Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա: Հազար վեց հարյուր տասներեք ձի (քշեցի), հարյուր տասնհինգ ուղտ (քշեցի), տասնվեց հազար հինգ հարյուր քսանինն անասուն քշեցի, երեսունյոթ հազար վեց հարյուր ութսունհինգ ոչխար քշեցի»:

Սարդուրի Արգիշտորդու արձանագրություններից մեկում նկարագրվում է Սևանա լճի ավազանի երկրների նվաճումը մինչև «Ուրտեխի» (Գ. Ղափանցյանի կարծիքով՝ Արցախ) սահմանները[119], իսկ մեկ այլում՝ խաղողի այգի հիմնելու, այն պահպանելու և զանցառուների նկատմամբ տուգանք նշանակելու, իսկ Ռուսա արքայի կողմից արհեստական ջրամբար՝ «Ռուսայի ծով», և ջրանցք դեպի Ռուսախինիլի (Տուշպա քաղաքի արվարձան) կառուցելու, Ռուսախինիլի քաղաքը Վանի

[118] Նույն տեղը, № 197-198:
[119] Տե՛ս նույն տեղը, № 250:

հյուսիսարևելյան մասում կառուցելու, ապա խաղողուտ (այգի), անտառ, ցորենի արտ հիմնելու մասին:

Այսպիսով, ուրարտական արձանագրությունները ունեն տնտեսական, շինարարական, ռազմական, ծիսապաշտամունքային բովանդակություն: Դրանք ցույց են տալիս, որ ուրարտացիներն ունեին երկրագործական ոռոգելի հզոր համակարգ: Նախ՝ Տուշպա-Վանին խմելու և ոռոգման ջուր մատակարարող Մինուայի ջրանցքը, որը Ասորեստանի արքա Սարգոն II-ը համեմատել է Եփրատ գետի հետ, Մովսես Խորենացին գետ է անվանում (Ա, Ժզ) ոռոգելի է դարձնում շրջակա 25 գյուղ, աշխատեցնում 40 ջրաղաց, Ուրմիա լճից անցկացված Ուլխուի, Ռուսախինիլիի 25 կմ-ոց ջրանցքը և «Ռուսայի ծով» կոչվող արհեստական լիճը Վանից դեպի արևելք, Արաքսի ձախ ափին՝ Արգիշտիխինիլիի շրջակայքում 5 ջրանցքները, Արարատյան դաշտում Ռուսա Բ-ի կառուցած Ումեշինի ջրանցքը Հրազդան գետից (Իլդարունիա) և այլն:

Ըստ արձանագրությունների՝ երկրագործական ամենախոշոր օջախներից մեկը Ազա երկիրն էր՝ Արարատյան դաշտը, Արգիշտիխինիլիի և Թեյշեբաինիի հացահատիկի շտեմարաններով[120]: Դրանցում արձանագրված է նաև այգեգործության, հատկապես խաղողագործության բարձր զարգացման մակարդակը: Բացառիկ ուշագրավ են ամրոցների, քաղաքների, պաշտամունքային վայրերի հիմնադրման վերաբերյալ արձանագրությունները: Մհերի դռան արձանագրություններում վերարտադրված էր ամբողջությամբ ուրարտական դիցարանը, գերագույն աստվածների առաջին եռյակը՝ Խալդի, Թեյշեբա և Շիվինի աստվածությունները, աստվածուհիների

[120] Տե՛ս նույն տեղը, № 142, 268, 311:

առաջին խումբը կազմված է Արուբաինի, Խուբա և Տուշպեա դիցուհիներից, ապա հաջորդում են երկրորդ խմբի 6 աստվածուհիները, նույնքան արական և երրորդ խումբ կազմում են 26 արական և նույնքան էլ դիցուհիների խումբը, որոնց առնչությամբ որոշված է զոհաբերվելիք կենդանիների ցանկը[121]:

Ուրարտական արձանագրություններում կան նաև այնպիսինները, որոնք լույս են սփռում ուրարտացիների առօրյա զբաղմունքի, սովորությունների, և նույնիսկ մարզական խաղերի վրա:

Մինուան թողել է հիշատակություն իր ձիու՝ Արծիբի 22 կանգուն ցատկելու մասին: 1 կանգունը հավասար է 51,8 սմ երկարության, ուրեմն՝ 11 մետրը հավասար է 39 սմ-ի: Արծիբե նժույգի ցատկը մնացել է չգերազանցված ընդհուպ 1975 թ., երբ գերմանացի ձիավարժ Բերգմանն իր Սվինգեր նժույգով ցատկեց 12,16 մ[122]: Այս հիշատակությունն արտացոլող արձանագրությունը հայտնաբերվել է գյուղական եկեղեցու պատի շարվածքում, Վանի քարաժայռերի և Վարագա լեռների միջև գտնվող հարթավայրում, որը ոչ միայն ուրարտական, այլև հայկական շրջանում ձիարշավարանի վայր էր:

Վան քաղաքի Հայկավանք թաղամասում հայտնաբերված Արգիշտի II-ի (Ք.ա. 713-685) արձանագրության մեջ հիշատակված է, որ իր արձակած նետը սլացել է 950 կանգուն կամ 492 մետր, իսկ Կարմիր բլուրում բազալտե հղկած յոթ շինաքարերի վրա հիշատակված է Ազա երկրում (Արարատյան դաշտում) Թեյշեբաինի քաղաքի կառուցման մասին (Կարմիր

---

[121] Տե՛ս նույն տեղը, № 38, 45:

[122] Տե՛ս նույն տեղը, № 115, 136:

բլուր): Նա ասում է. «Ժայռը ամուր էր, հողը չոր, ոչ մի բան այնտեղ կառուցված չէր»:

Ուրարտական արձանագրություններում, մանավանդ Միերի դռան՝ Վանի ժայռի մեջ ուրարտական ամենամեծ արձանագրության՝ Խոռխոռյան տարեգրության մեջ հիշատակված են բազմաթիվ երկրանուններ, որոնց մի մասը գիտնականները ստուգաբանել են և տեղորոշել: Տեղեկություններ են տրվում բնակչության գերեվարությունների ու նոր վայրերում բնակեցումների, կենդանիների և ունեցվածքի ավարառության վերաբերյալ, ինչը վկայում է այս երկրի նաև անասնապահության զարգացածության մասին: Ուշագրավ են նաև թագադրության, արշավանքի հետ կապված, երկրագործական եղանակային ծեսերի, թաղման վերաբերյալ սեպագիր արձանագրությունները:

2.5. Բեհիսթունյան արձանագրությունը որպես և հայ ազգագրության կարևոր սկզբնաղբյուր

Հին պարսկական հիշատակությունները (Ք.ա. 521-330 թթ.):

Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը առանձնանում է որպես հայ ժողովրդի հնագույն պատմության, կենցաղի ու մշակույթի ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուր (թարգմանված տեքստերը Կ. Բասմաջյանի և Գ. Նալբանդյանի): Ուշագրավ է Դարեհ Ա-ի (Ք.ա. 522–486) Բեհիսթուն բարձրադիր ժայռի վրա՝ ներկայիս Քերմանշահ քաղաքից ոչ հեռու թողած եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և աքքադերեն կամ բաբելերեն) 414 տող արձանագրության բացառիկ արժեքը՝ Արմենիա անվան միջազգայնացման (պարագրաֆ 26-30-ում, 49-52), նրանում Հայաստանի ընդգրկած

տարածքի, սահմանների, հայերից գանձվող հարկերի, տուրքերի տեսակների, հարկահանության եղանակների, Հայաստանի՝ Պարսկաստանի նկատմամբ ունեցած հարկային պարտականությունների, արմենների՝որպես ռազմիկ ժողովուրդ լինելու, հայերի ազատասեր ոգու և ձգտումների, Հայաստանի հարևան երկրների, Արմինա-Հայաստան երկրի աշխարհագրական վայրերի հիշատակությունների, տեղանունների մասին և այլ հաղորդումները: Արձանագրությունը բաղկացած է հսկայական 9 այունակներից, որոնցից 5-ը գրված է հին պարսկերենով (76 պարագրաֆ, 414 տող), երեքը՝ էլամերեն և մեկը՝ բաբելերեն[123]: Արձանագրությունը ունի բարձրաքանդակ, որը պատկերում է Դարեհին՝ երկու ուղեկից զինվորներով: Արքայի հետևից ընթանում են շղթայված և պարանոցներից իրար հետ կապկպված ինը մարդկային ֆիգուրներ,

[123] Արձանագրությունում հիշատակված 23 երկրների թվում է Արմինան (Հայաստանը): Արձանագրության 26 պարագրաֆում ասված է. «Դադարշիշ անունով հայ իմ ծառային ես ուղարկեցի Արմինա: Այսպես. նրան պատվիրեցի. «Գնա՛ և ջախջախի՛ր այդ ապստամբ բանակը, որը ինձ չի հպատակվում»: «…Զազա անունով մի ավան կա, ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահրամազդն ինձ օգնեց: Շնորհիվ Ահրամազդի իմ բանակը բավական մարդ սպանեց ապստամբ բանակից»: Երկրորդ ճակատամարտը տեղի է ունենում Տիգրա անունով բերդի մոտ (Արմինա երկրում): Նույն ոճով շարունակում է արձանագրությունը: Պարագրաֆ 28-ում էլ հաղորդվում է, որ Դադարշիշի դեմ հայերի տված ճակատամարտը տեղի է ունենում Ույամա անունով մի բերդի տակ: Պարագրաֆ 29-ում հարկադրված ուղարկում է Արմինա Վաումիսա անունով պարսիկ ծառային: Այս անգամ ճակատամարտը տեղի է ունենում Իզարա անունով մի վայրում: Առուտիարա մի գավառում երկրորդ ճակատամարտն է տեղի ունենում: Այս անգամ էլ՝ Ահրամազդի օգնությամբ իբր թե հաղթել է (տե՛ս Դարեհ Վշտասպի Բեհիսթունյան արձանագրությունը, Թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մ. Նալբանդյանի, Երևան, 1964, պար. 6, էջ 18, պար. 26, էջ 14, §27, 28, 29, էջ 14-15):

որոնք խորհրդանշում են Դարեհի դեմ ապստամբած և վերստին հպատակեցված ինը երկրները:

Արձանագրության բաբելերեն (աքքադական) բնագրում, ի տարբերություն հին պարսկերեն բնագրի՝ «Արմենիայի», գրված է Ուրաշտու՝ Ուրարտու ձևը, էլամերեն բնագրում՝ Հարմինույա: Այսպիսով, Աքեմենյան եռալեզու սեպագիր արձանագրությունում Հայաստանի մշտական անվանումներն են՝ պարսկերեն բաժնում «Արմինա», բաբելերենում՝ «Ուրարտու», էլամերենում՝ «Հարմինույա» երկրանունները, ինչը փաստում է դրանց միևնույն երկրի տարբեր անվանումներ լինելը[124]: Այդպես է ոչ միայն Դարեհ Ա-ի հանրահայտ Բեհիսթունյան արձանագրության մեջ, այլև նույն արքայի՝ Պերսեպոլսի, Սուզայի և Նախշի Ռուստամի տարեգրություններում, նաև Ք.ա. V-IV դարերում իշխած Քսերքսես (Ք.ա. 486-465 թթ.) և Արտաքսերքսես Բ կամ Գ արքաների արձանագրություններում[125]: Չափազանց կարևոր են արձանագրությունում Հայաստանի կողմից Պարսկաստանին վճարվելիք հարկերի, տուրքերի տեսակների մասին տեղեկությունները: Մի քանի տեղանուններ, մասնավորապես ճակատամարտերի վայրերի, բացահայտված չեն, որի պատճառով Հայաստանի ընդգրկած տարածքը, նրա սահմանները ճշգրտել հնարավոր չեն եղել:

Արձանագրության վկայություններից երևում է, որ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ

---

[124] Տե՛ս Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մ. Նալբանդյանի, Երևան, 1964, էջ 14-15:

[125] Տե՛ս **Ա. Մովսիսյան, Մ. Մալխասյան, Լ. Կարապետյան,** Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների, ծանոթ. 21, էջ 24:

լինել: Միայն Ք.ա. 521-520 թթ. 5 ճակատամարտերից հետո են կարողացել ընկճել հայ ժողովրդին: Ըստ այդ արձանագրության հիշատակման՝ «Արմինա» (Արմենիա) երկրի տարածքը ընկնում է Մեդիա (Մարաստան) և Կատպատուկա (Կապադովկիա) երկրների միջև, այսինքն՝ լիովին համապատասխանում է Ուրարտու պետության տարածքին, որն ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը, այն է՝ Հերոդոտոսի հիշատակած XIII և XVIII սատրապությունները կամ դրանց մեծ մասը:

Ի դեպ, եռալեզու այս արձանագրությունը երեք տարբեր ավանդույթների և մշակույթների ծնունդ հանդիսացող գրիչների արտադրանք է, որի պատճառով լրիվ նույնական չէին:

Այսպիսով, սեպագրական աղբյուրների տվյալները ազգագրական գիտության համար թեև չափազանց ժլատ են և սահմանափակ, այդուհանդերձ դրանց ժամանակագրության առումով կարևոր նշանակություն ունեն: Սեպագրական շրջանի տվյալները հիմնականում վերաբերում են տոհմացեղային հարաբերություններին, դրանց տարածքային նկարագրին, վաղ պետական կազմավորումներին, զբաղմունքների տեսակներին (գյուղատնտեսություն, անասնապահություն, արհեստագործություն), կենցաղին (ընտանեկան բարքեր, հավատալիքներ) և այլն:

2.6. Աստվածաշունչը Եդեմի և համաշխարհային ջրհեղեղի մասին

Թարգմանական գրականությունը՝ Աստվածաշունչ, «Վաստակոց գիրք» և այլն, հայ ազգագրության կարևոր սկզբնաղբյուրներ են: Դրանցում թեև հայերի մասին ուղղակի հիշատակություններ չկան, սակայն ժամանակի հայկական

կենցաղին ու մշակույթին քաջատեղյակ թարգմանիչները անցկացրել են զուգահեռներ և անդրադարձել Ք.ա. VII-VI դարերի Հայաստանի պատմության և մշակույթի առանձին հարցերի:

Աստվածաշունչը Ք.ա. XIII դարից մինչև Ք.հ. II դարը գրված տարալեզու և տարաբնույթ երկերի ժողովածու է: Այն բաժանվում է երկու հիմնական մասերի՝ Հին Կտակարան (39 գիրք) և Նոր Կտակարան (27 գիրք): Աստվածաշունչը, թեև հիմնականում պարունակում է հրեական և քրիստոնեական կրոնների դավանանքը, առասպելներն ու դոգմաները, սակայն նրանում մեծ տեղ են գրավում նաև կենցաղային-ազգագրական, սոցիալ-տնտեսական, իրավական, կրոնաբարոյական, սիրային-լիրիկական բնույթի նյութեր: Այն կարևոր աղբյուր է Մերձավոր Արևելքի, այդ թվում և Հայաստանի վաղ անցյալի ուսումնասիրության համար: V դարում Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց աշակերտների կատարած Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարվել է «թարգմանությունների թագուհի»: Այն հայերեն տպագրվել է մի քանի անգամ:

Աստվածաշնչում Հայկական լեռնաշխարհը ներկայացված է որպես արարչագործության վայր՝ Եդեմ-դրախտավայր, որտեղ գտնվել են իմացությունը և անմահությունը խորհրդանշող ծառերը, համարվել է արևի ելման՝ Արևելքի երկիր, համաշխարհային ջրհեղեղից հետո մարդկության փրկության և վերածննդի երկիր, որտեղ կնքվեց Աստծո և մարդկության հավիտենական ուխտը[126]:

---

[126] Նյութերը քաղված են Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանությունից, Ս. Էջմիածին, 1999:

Ծննդոց, գլուխ Բ: 7. Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց և մարդն եղավ կենդանի էակ: Մարդու՝ կավից ստեղծվելու և «կյանքի շունչ» ստանալու սյուժեն առկա է դեռևս շումերա-աքքադական ավելի վաղ աղբյուրներում, այստեղ արարիչ աստվածը Հայա-Էնկին է, իսկ արարչություն տեղի է ունեցել Հարալի երկրում, որը տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհում[127]:

1. Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմում: Եդեմի հիշատակվելն «արևելյան կողմում» արժանի է հատուկ ուշադրության: Ծննդոց գրքի մեկ այլ հատվածում (Ծննդոց, ԺԱ, 1-9) պատմվում է, որ Նոյի տապանը փրկվեց Արարատի լեռներում, հետո դեռևս մեկ լեզվով խոսող մարդիկ «Արևելքից» գնացին Սենաարի երկիր և որոշեցին կառուցել երկնահաս «Բաբելոնյան աշտարակը»: Երկու դեպքում էլ Միջագետքից և Պաղեստինից հյուսիս տարածվող Հայկական լեռնաշխարհը որոշ սահմանամերձ շրջանների հետ համարվել է «Արևելք» ոչ թե բառի աշխարհագրական կողմը ցույց տվող, այլ «Արևելքի երկիր» իմաստով[128]:

Հայկական լեռնաշխարհի՝ արևի հանգրվանը լինելու մասին պատկերացումը պահպանվել է նաև խեթական աղբյուրներում, որոնց համաձայն՝ արեգակը ծագում էր «Արևելյան ծովից»՝ Վանա լճից: Դա լիովին համահունչ է հայկական ավանդազրույցներին, ըստ որոնց՝ արևի ոսկյա ննջարանը գտնվում էր Վանա լճի հատակին, որտեղից ամեն առավոտ ելնում և որտեղ ամեն գիշեր վերադառնում էր ցերեկվա լուսատուն: «Սասնա Ծռեր» էպոսում էլ Ծովինարը որդիներին խորհուրդ է

---

[127] Տե՛ս **Ա. Մովսիսյան**, Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, էջ 22-32:

[128] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ.1, էջ 40-41:

տալիս Բաղդադից փախչել «Արևելից թագավորի երկիր՝ Հայաստան»[129]:

2. Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը՝ բարու և չարի գիտության ծառը, տնկեց դրախտի մեջտեղում: Կենաց և բարու ու չարի իմացության ծառերը խորհրդանշում են անմահությունն ու իմաստությունը, որոնց խորհուրդները մեր լեռնաշխարհին են առնչվում նաև հնագույն այլ աղբյուրներում[130]:

3. Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի՝ **Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ**: Վերջին երկուսը սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհից: Մյուս երկուսի (Գեհոն, Փիսոն) վերաբերյալ վիճաբանությունները դեռ շարունակվում են: Քանի որ Եդեմից սկիզբ առնող երկու հանրահայտ գետերը ծնունդ են առնում Հայկական լեռնաշխարհում, ուստի այնտեղ էլ գտնվել է Աստվածաշնչի Եդեմ-դրախտը[131]:

Ծննդոց, գլուխ Է-ում ասված է.

1. Երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղավ…

23. Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները: Նրանք վերացան երկրի երեսից: Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին:

24. Ջուրը հարյուր հիսուն օր ողողեց երկիրը

---

[129] «Սասունցի Դավիթ», Երևան, 1939, էջ 27:
[130] Տե՛ս **Ա. Մովսիսյան**, Սրբազան լեռնաշխարհը, էջ 43-49:
[131] Տե՛ս նույն տեղը, էջ 7-16:

Ծննդոց, գլուխ Ը

1. Աստված հիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնվող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին… 3. Ջուրը գնալով իջնում, քաշվում էր երկրի վրայից, և հարյուր հիսուն օր անց այն նվազեց: 4. Յոթներորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա:

Նկատենք, որ աշխարհակործան ջրհեղեղի մասին պահպանված առաջավորասիական ավանդազրույցներում ևս իբրև տապանի փրկության վայր մատնանշված է Հայկական լեռնաշխարհը[132]:

Աստվածաշնչում արդյո՞ք կան դրվագներ, որոնք կարող էին վերաբերել Հայաստանին: Այս իմաստով կարելի է առանձնացնել Ծնն. Թ. 20-27-ում նկարագրված հիշատակությունը, թե ինչպես է Նոյը դառնում հողագործ, այգի տնկում, գինուց խմում և արբում, իրադարձություններ, որոնք փաստորեն տեղի են ունենում Արարատի միջավայրում: Այս տեղեկությունը, որը, ի դեպ, գինու առաջին հիշատակումն է Աստվածաշնչում, հիմք է հանդիսացել, այսպես կոչված, **Նոյան վարկածի** համար, ըստ որի՝ Աստվածաշունչը պահպանել է տեղեկություն գինեգործության առաջացման սկզբնատարածքի, այսինքն՝ Առաջավոր Ասիայի լեռնային շրջանների և Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ, որտեղից գինին տարածվել է տարբեր ուղղություններով, այդ թվում նաև հարավային ուղղությամբ՝ դեպի Միջերկրայք և այնտեղից Եգիպտոս[133]:

---

[132] Տե՛ս նույն տեղը, էջ 5-6, 39-43, 66-71:

[133] Տե՛ս **Բ. Գասպարյան, Հ. Ավետիսյան, Ա. Գնունի, Ա. Բոբոխյան,** Ոգելից խմիչքների հիշատակությունները Աստվածաշնչում//«Էջմիածին», 2016, Ժ, էջ 119-134:

Աստվածաշունչը կրոնական սրբազան գիրք լինելուց բացի, կարևոր պատմական, ազգագրական սկզբնաղբյուր է, մի հանրագիտարան, որում ի մի են բերված տվյալներ աշխարհագրական տարբեր միջավայրերում ապրած ժողովուրդների կենցաղի և մշակույթի վերաբերյալ: Դարերի ընթացքում մնալով անփոփոխ՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, որն իր տպագիր արտացոլումը ստացավ Ոսկան Երևանցու փայլուն հրատարակությամբ սրանից երեքուկես դար առաջ[134], փաստորեն արտացոլում է նաև հայ ժողովրդի կենցաղի ու մշակույթի հազարամյա իրողությունները: Այսպես, նրանում ասված է, որ Ասորեստանի Սենեքերիմ (Սինախերիբ՝ Ք.ա. 705-681) արքայի որդիներ Ադրամելեքն ու Սարասարը նրան (իրենց հորը) սրով հարվածեցին և փախան Արարատի երկիր: Ասորեստանում Սենեքերիմի փոխարեն թագավորեց իր որդին Ասորդան (Ասորեստանի Ասարխադդոն թագավորն է Ք.ա. 680-669 թթ.) Սինախերիբի կրտսեր որդին: Արարատ(դ)ը Հայաստանի ընդհանրական անվանումներից մեկն է: Խոսքն այստեղ Ուրարտու-Արարատյան թագավորության մասին է, գործածված է որպես Արմենիա-Հայք երկրանվան հոմանիշներ:

Երեմիա, գլ.ԾԱ, 27-ում ասված է.

Դրոշ բարձրացրեք երկրի (Բաբելոնի դեմ), փող փչեցեք բոլոր ազգերի մեջ, զորագնդեր կանչեցեք (Երեմիա մարգարեի Բաբելոնը կործանելու կոչը թվագրվում է Ք.ա. 594-592 թթ.): Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին (հավանաբար Երվանդունիների նորաստեղծ հայկական պետությունն էր, եբրայական թարգմանությունում հիշատակված

[134] Տե՛ս «Աստվածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց», յԱմստէրդամ, 1666:

է «Արարադի» անվամբ և այլն) և Ասքանազյան գնդին (խոսքն այստեղ սկյութական Աշքենազ կամ Իշքուզա ցեղային միության մասին է, որը Ք.ա. VII դարում Ուրմիա լճի հարավային ափերին ստեղծել էր զորեղ քաղաքական միավորում և նշանակալից դեր խաղաց Նինվեի գրավման (Ք.ա. 612թ.) և Ասորեստանի կործանման գործում:

Աստվածաշնչի մեկ այլ տեղում Եզեկիել (Ք.ա. 592-570) (գլ.ԻԷ, 14) հիշատակվում է «Թորգոմա տնից» մարդիկ են, որ ձիերով, հեծյալներով ու ջորիներով լցրել են Տյուրոս քաղաքի շուկաները:

Թորգոմը, ըստ Աստվածաշնչի, բիբլիական Նոյ նահապետի Հաբեթ որդու սերնդից էր (տե՛ս Ծննդոց, գլ.Ժ, 2-3): Հայ և օտար եկեղեցական մատենագիրներն ու պատմագիրները հայերին սերած էին համարում հիշյալ Թորգոմի տոհմից: Դրա համար էլ նրանք հաճախ Հայաստանը անվանում են «Տունն Թորգոմայ», իսկ հայերին՝ «Որդիք կամ Ազգն Թորգոմայ», «Թորգոմածին», «Թորգոմեան»: Հայկական ժողովրդական ավանդությունը ևս հայերի նախահայր Հայկին համարում է Թորգոմի որդին, իսկ «Թորգոմայ տունը»՝ Հայաստանի հոմանիշ: Մովսես Խորենացին Թորգոմին համարում է Գոմերի թոռը, Թիրասի որդին և Հայկի հայրը, այսինքն՝ հայոց նախնին[135]:

Ի տարբերություն Աստվածաշնչի հունական թարգմանության «Տունն Թորգոմա» երկրանունի՝ եբրայական բնագրում այն անվանված է «Թոգարմա երկիր»: Ուսումնասիրողները «Թոգարմա երկիրը» նույնացնում են խեթական արձանագրու-

[135] Տե՛ս **Մովսես Խորենացի,** Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 78, 85

թյուններում հիշատակվող Թեգարմա բնակավայրի հետ (Մելիտինե և Արաբկիր քաղաքների շրջաններում):

Եզեկիել մարգարեի սույն վկայությունը կարևոր է նաև այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե այդ վաղնջական ժամանակներում հայերը մասնակցել են համաշխարհային առևտրին, մասնավորապես նրանք Փյունիկիայի Տյուրոս մայրաքաղաքի վաճառականներն էին արտահանում ձիեր և ջորիներ:

Եզեկիել մարգարեի գլ. ԼԸ, 6-ում ասված է՝ Թորգոմա տունը՝ հյուսիսի կողմերից, ու բոլոր նրանց, որ նրա շուրջն են. **Գոմեր** կամ **Գամեր**՝ Նոյի որդու՝ Հաբեթի որդին էր և հայրը Թորգոմի[136]: Ուսումնասիրողները «Գամեր» կամ «Գոմեր» անվան տակ ենթադրում են կիմերներին: Կիմերները մերձսևծովյան տափաստաններից Ք. ա. VIII դ. երկրորդ կեսին Հարավային Կովկաս և Փոքր Ասիա ներխուժած և հետագայում Կապադովկիայի տարածքում հաստատված ցեղերն էին, որոնք տևական արշավանքներով նպաստեցին Ուրարտուի և Ասորեստանի արագ թուլացմանը: Հայկական հնագույն աղբյուրները սրանց անվամբ Կապադովկիան անվանել են Գամիրք: Այդ հիշատակությունը հիմք է տալիս պնդելու, որ Թորգոմի տունը գտնվում էր Գամիրք-Կապադովկիայից հյուսիս՝ հետագայի Փոքր և Բարձր Հայքերում, և արևելք՝ Եփրատի ափին:

---

[136] Տե՛ս Ծննդոց, գլ. Ժ, 2-3:

2.7. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված օտարալեզու արձանագրություններ

Ք.ա. IV – Ք.հ. III դդ. Հայաստանում օտարալեզու արամեատառ (թվով՝ 10), լատիներեն (թվով՝ 8) և հունարեն (թվով՝ 16) արձանագրությունները խոշոր կառույցների, քաղաքների ու բերդերի կառուցման, ընդարձակման, քաղաքներում ծավալվող առևտրի և փոխանակության, տնտեսական զբաղմունքների, գանձվող հարկերի, հողային սահմանների, քաղաքների հիմնադրման, նրանց ինքնավարության մարմինների, վերաբնակեցումների, Գառնիի բաղնիքի հանդերձարանի առասպելադիցաբանական հունարեն գրության, ընտանեկան հարաբերությունների, աստվածների պաշտամունքների, սրբավայրերի հիմնադրման, արքայական նվիրատվությունների և այլնի մասին: Արձանագրությունների մի խմբում չափազանց կարևոր վկայություններ են պահպանվել Արմավիրի հելլենական դարաշրջանի նշանավոր կենտրոնի մասին:

Գևորգ Տիրացյանը արամեերեն, Հ. Մանանդյանը՝ հունարեն արձանագրությունների վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ ունեն, և դրանց արժևորումը չափազանց գնահատելի է: Արամեերենը և հունարենը բավական ժամանակ եղել են հելլենիստական Հայաստանի պաշտոնական գրասենյակային, պետական-վարչական լեզուներ: Պահպանվել է հավանաբար Ք.ա. VIII դարի վերջին գրված արամեերեն արձանագրության մի հատված, որը բացառապես առնչվում է կենցաղին: Դա անեծքների մի յուրօրինակ բանաձև է:

«1. Թող յոթ կին մեկ օջախ ունենա հաց թխելու համար, - այսինքն երկրում այնքան քիչ հաց լինի (սով լինի),- որ յոթ ընտանիքին մեկ օջախը շատ լինի: 2. Թող օջախի ծուխը

մարի,- այսպիսի անեծք ունեցել են հին հայերը: 3. Թող էրկանքը չշրխկա նրա երկրում,- այսինքն՝ աղալու ցորեն չլինի,- թող յոթ կով կերակրեն մեկ հորթի, և այն թող չկշտանա»[137]: Ըստ այդմ՝ կարծիք կա, որ Խալդի աստծո պաշտամունքը պարտադրվում էր դաշնակից երկրներին:

Սևանա լճի մոտակայքում (1906 թ. Գավառի Կարմիր գյուղում Ե. Լալայանի և 1932 թ. Մարտունու շրջանի Կզնուտ գյուղում Ս. Բարխուդարյանի կողմից) հայտնաբերված սահմանաքարերը կարծվել են իբրև տապանաքարեր Աքեմենյան ժամանակաշրջանից[138], ֆրանսիացի սեմագետ Դյուպոն-Սոմերի կարծիքով՝ դրանք առնչվում են ձկան որսի պաշտամունքի հետ: Երկու քարակոթող հայտնաբերվել է Դիլիջանից ոչ հեռու Թեղուտ գյուղի սահմաններում, որոնց արձանագրությունները դարձյալ փորագրված են Արտաշես I արքայի հրամանով, ակադ. Օրբելու համոզմամբ դրանք եղել են սահմանաքարեր: Արտաշես 1-ի անունից կանգնեցված այդ արձանագրություններում արքան իրենց անվանում է «Արտաշես որդի Զարիադրեսի Երվանդական»: Դրանցում Արտաշեսը բնութագրվում է որպես Բարի: Ըստ Գ. Սարգսյանի՝ դրանցով «հստակ սահմանազատել են համայնական («գյուղերի», շեների) և մասնատիրական («ագարակների») հողերը, նպատակ ուներ կայունացնել քայքայվող համայնքը: Այս սահմանազատումով գյուղատնտեսական տարածքի հիմնական մասը, որը գյուղական

---

[137] Տե՛ս **Ն. Տիրացյան,** Խալդի աստծո հիշատակությամբ արամեերեն մի արձանագրության շուրջ // Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր (Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ), Երևան, 2001, էջ 5-12:

[138] Տե՛ս **С. Бархударян,** Две арамейские надписи. Цб. “Материалы по истории древней Армении”, Ереван, 1935, с. 207-208:

համայնքներին էր պատկանում, և որից ստացվում էին հայոց արքունիքի հիմնական եկամուտները, ապահովվում էր մասնատիրական տնտեսությունների չարաշահումներից: Հողային այս բարեփոխումը միևնույն ժամանակ պաշտպանում էր և թագավորի հենարան հանդիսացող նորելուկ հողատեր – ստրկատերերի՝ ռազմավարչական ավագանու շահերը, քանի որ օրինականացնում էր արդեն տեղի ունեցած հողային հափշտակումները: Հետապնդում էր կենտրոնական իշխանության ռազմատնտեսական հզորության ամրապնդումը, քանի որ համայնականները թագավորական գանձարանի հիմնական հարկատուներն էին և հայկական հետևակ զորքի կորիզը[139]: Ինչպես Սևանի շրջանում, այնպես էլ Զանգեզուրում, Սպիտակի մոտ, Թեղուտում և Հայաստանի այլ վայրերում հայտնաբերված արամեատառ արձանագրությունները արված են սահմանաքարերի վրա, որոնց միջոցով կարգավորվում էին կալվածքների սահմանների շուրջ ծագող վեճերը և դրանով իսկ ամրապնդում հողի մասնավոր սեփականության գոյությունը: Ըստ Դյակոնովի և Ստարկովայի՝ դրանք այն ժամանակվա ագրարային հարաբերությունների էության բացահայտման խիստ կարևոր փաստարկներ էին[140]: Սահմանաքարերի երևան գալը կապված էր համայնական հողատիրության քայքայման և հողի մասնավոր սեփականության ծագման հետ:

Սահմանաքարերի վրա փորագրված արամեական արձանագրությունները վկայում են, որ արամեերենը տակավին պահպանում էր իր կենսունակությունը որպես պետական-

---

139 Տե՛ս ՀԺՊ, հ. 1, էջ 797:

140 Տե՛ս **И. Дьяконов, К. Старкова,** Надписи Артаксия, царя Армении, ВДИ // 1965, 161-174 с.

վարչական լեզու[141]: Արամեերենը Աքեմենյան կայսրությունում միջազգային լեզվի դեր էր խաղում:

Մովսես Խորենացին հիշատակում է, որ նախքան հայ գրերի գյուտը, կային պարսից և հունաց գրերը «որոնցով գրված են՝ անթիվ քանակությամբ գրություններ»[142]:

Արամեերենն օգտագործվել է Հայկական լեռնաշխարհում դեռևս ուրարտական ժամանակաշրջանում: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Արևելքում հունարենի տարածման համար: Հավանաբար Ք.ա. III դարի սկզբից, Հայաստանում արամեերենին զուգահեռ՝ հունարենը դարձավ պաշտոնական գրասենյակային լեզու: Համենայն դեպս, Արմավիրի արձանագրությունները վկայում են, որ Ք.ա. III դարի վերջերին Երվանդունիների պետական գրասենյակային լեզուներից մեկը հունարենն էր:

Առ այսօր հայտնաբերվել են հողաբաժանման 16 սահմանաքարեր, որոնց մի մասի վրա պահպանված չեն արձանագրություններ: Այս առնչությամբ Խորենացու Պատմության Բ գրքի Ծզ գլխում կարդում ենք. [Արտաշեսը] «հրամայում է որոշել գյուղերի և ագարակների սահմանները, որովհետև բազմամարդացել էր Հայոց աշխարհը՝ բազմաթիվ ազգեր ներմուծելով և բնակեցնելով լեռներում, հովիտներում և դաշտերում: Եվ հաստատեց սահմանների այսպիսի նշաններ. Հրաման տվեց կոփել քառակուսի քարեր և մեջները պնակաձև փոսեր անելով, տնկել հողի մեջ, իսկ դրանց վրա կանգնեցնել

---

[141] Տե՛ս **Գ. Տիրացյան,** Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը // «Տեղեկագիր» ԳԱ հաս. գիտ., 1957, N10, էջ 105-109:

[142] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, գիրք Ա, գլուխ Գ, Երևան, 1968, էջ 83:

երկրի մակերևույթից փոքր բարձրություն ունեցող քառակուսի աշտարակներ... Եվ ասում են,- եզրափակում է հեղինակը,- որ Արտաշեսի օրոք Հայոց աշխարհում անմշակ հող չկար՝ ոչ լեռնային, ոչ էլ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»:

Արձանագրությունները արժեքավոր վկայություններ են պարունակում նաև Արտաշես I-ի ծագման, տոհմի և պատվատիտղոսի մասին: Արձանագրության հայերեն տեքստը տալիս ենք Գ. Տիրացյանի թարգմանությամբ[143]. 1. Արտաշես արքան, 2. Զարեհի որդին, 3. Երվանդական (սերում Երվանդունիներից), բաժանեց 4. Հողը, 5. մասերի (բաժինների):

Գ. Խ. Սարգսյանի կարծիքով, Խորենացին, բացի բուն սահմանաքարերից օգտվել է նաև նրանց մասին Օղյումպ քրմի «Մեհենական պատմությունում» եղած տվյալներից, որտեղից էլ առել է նրանց մեկնաբանությունը: Սրանով, հասկանալի է, վերջինիս արժեքը կրկնապատկվում է[144]:

Հայաստանում հայտնաբերված հունարեն արձանագրություններն իրենց ուրույն տեղն ունեն Հայաստանի բազմադարյան պատմության և մշակույթի լուսաբանման հարցում: Թեև դրանք սահմանափակ թվով են, սակայն զգալի տեղեկություններ են հաղորդում անտիկ շրջանի ոչ միայն քաղաքական վիճակի, այլև հայկական հեթանոսական պանթեոնի, միջանձնային հարաբերությունների և այլնի մասին: Հունարենը միջազգային լեզու էր, և պատահական չէ, որ հին Հայաստանի վիմագրերի մեծ մասը ներկայացված է հունարեն. այն համարվել է պալատական գրականության լեզու: Դրանք

---

[143] Տե՛ս «Տեղեկագիր» ԳԱ հաս. գիտ., 1957, № 10:

[144] Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 254-259:

ունեցել են տարբեր բովանդակություններ՝ հոգևոր, պաշտամունքային, ծիսական, շինարարական:

Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրության առումով արժեքավոր է 1945 թ. Գառնիում հայտնաբերված հունարեն արձանագրությունը: Ըստ դրա՝ Մեծ Հայքի Տրդատ Ա (66-88 թթ.) թագավորը իր գահակալության 11-րդ տարում (77 թ.) կառուցում է (իմա՝ վերակառուցում է) ամրոցը: Առանձնակի ուշադրության են արժանի 1953 թ. հայտնաբերված՝ Գառնիի բաղնիքի հանդերձարանի առասպելա-դիցաբանական բովանդակությամբ խճանկարի հունարեն գրությունները[145]: Մովսես Խորենացու հավաստման համաձայն՝ Գառնիում Տրդատ արքան կառուցել է ամրոց, այդ ամրոցի տարածքում նաև «տուն հովանոց», և այն կառուցվել է Տրդատի քրոջ համար: Այդ նույնը հաղորդվում է Տրդատ թագավորի Գառնիում թողած հունարեն գրերով արձանագրության մեջ[146]:

Ուշագրավ է նաև Ապարանի հունարեն արձանագրությունը, որում ասվում է, որ Տրդատ արքան Գնթունիների նախարարական տոհմին, տիտղոսներով հանդերձ, ծառայության դիմաց շնորհում է Նիգ քաղաքը[147]:

Արմավիրի արձանագրությունները վաղագույն վկայություններ են Արմավիրում արևի պաշտամունքի մասին: Արմավիրում գտնված հունարեն յոթ արձանագրություններից մեկը բարոյախրատական բովանդակություն ունի, ուր դատա-

---

[145] Մանրամասն տե՛ս **Բ. Ն. Առաքելյան,** Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, գլուխ VII և գունավոր նկարներ XXIII-XXVIII:

[146] Տե՛ս **Հ. Մ. Բարթիկյան**, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին // ՊԲԸ, 1965, N 3(30), էջ 229-238: Տե՛ս նաև **Աշ. Աբրահամյան,** Գառնիի հունարեն արձանագրությունը // «Էջմիածին» 1947, մարտ-ապրիլ:

[147] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 462-463:

պարտվում է ժառանգական գույքի անարդար բաժանումը և խրատում է մոտիկ ազգականներին՝ ապրել խաղաղ ու համերաշխ և աջակցել ու օգնել միմյանց»[148]:

Արձանագրություններից մեկի վրա կարդում ենք Մակեդոնական օրացույցի 13 ամիսների անունները[149]:

Գառնիի, Ապարանի, Արմավիրի հունարեն արձանագրությունները առանձնանում են հետևյալ բովանդակությամբ. 1) արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին, 2) թագավորական նախնիներին ձոնված արձանագրություններ, 3) թագավորական իշխանության և արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ, 4) արքայական արձանագրություններ քաղաքների, սրբավայրերի և այլ շինությունների հիմնադրման մասին, 5) արքայական նվիրատվական արձանագրություններ, օր.՝ Տրդատ արքայի կողմից Գնթունիների նախարարական տոհմին շնորհված տիտղոսները և ծառայության դիմաց շնորհված Նիգ քաղաքը, 6) հոգևոր-պաշտամունքային բնույթի բնագրեր, 7) ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ, 8) ընծայագրեր, 9) բարոյախրատական բովանդակությամբ, 10) տապանագրեր և այլն:

Այսպիսով, չնայած սակավ տեղեկություններին, տվյալ ժամանակաշրջանի ամենատարբեր կենցաղամշակութային

---

[148] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Արմավիրի հունարեն արձանագրությունները, նոր լուսաբանությամբ, Երևան, 1946 (հայերեն և ռուսերեն): Տե՛ս նաև **Հ. Մանանդյան,** Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, **Я. А. Манандян,** Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни // «Известия» АН Арм. ССР, 1951, № 4.

[149] Տե՛ս **Ա. Մովսիսյան,** Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 63:

խնդիրների բացահայտման համար կարևոր սկզբնաղբյուր են օտարալեզու արձանագրությունները: Դրանք վավերագրերի արժեք ունեն, քանի որ ժամանակակից են արտացոլված իրադարձություններին[150]: Արամերեն և հունարեն արձանագրությունների դերի ու նշանակության մասին ուշագրավ է Կ. Վ. Տրևերի հետազոտությունը[151]:

2.8. Վիմագիր արձանագրություններ

Միջազգային տերմինաբանությամբ էպիգրաֆիկան (մակագրություն) հայերենում գործածվում է նաև արձանագրագիտություն ձևով: Վիմագիր արձանագրությունները (վէմ-քար և գրություն եզրույթներից՝ բառացի քարագրագիտություն) բազմաբնույթ՝ քաղաքական, օրենսդրական, առևտրական, նվիրատվական, ռազմական, շինարարական, հիշատակագրային, կրոնաբարոյախոսական և այլ բնույթի տեղեկատվության աղբյուրներ են: Հասարակական շենքերի, մեհյանների և եկեղեցիների որմերի, ամրոց-դղյակների, կամուրջների, խաչքարերի, տապանաքարերի և այլ վիմական արձանագրությունները գնահատվում են որպես պատմության, մշակույթի և լեզվի վերականգման ուսումնասիրության աղբյուր: Հայկական հուշարձանների վրա (սկսած VI դարից) փորագրված ավելի քան 10000 արձանագրությունները հայոց կենցաղի և մշակույթի ուսումնասիրության աղբյուրներ են: Դրանք արժանահավատ սկզբնաղբյուրների նշանակություն ունեն:

---

[150] Մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, Երևան, 2010, էջ 64-69:

[151] **К. В. Тревер,** նշվ. աշխ.:

Որպես պատմագիտական սկզբնաղբյուր՝ այն արտացոլում է հասարակության զարգացման պատմական իրողությունները, լեզուն և լեզվամտածողությունը, քաղաքական, տնտեսական, իրավական, սովորութային զարգացումների աստիճանական փուլերը, հավաստի տեղեկություններ են պարունակում պատմական անցուդարձերի մասին: Նպատակն է ուսումնասիրել հիմնականում քարի վրա փորագրված կամ հատուկ մելանով կամ այլ ներկանյութով մակագրված արձանագրությունները: Իբրև պատմական հավաստի սկզբնաղբյուրներ՝ վիմագրություններն ունեն աղբյուրագիտական հույժ կարևոր արժեք, քանզի ժողովուրդների կերտած վստահելի «քարակերտ մատյաններ են»:

Հայոց «քարե մատյանները» վերծանելու, ընդօրինակելու և հրատարակելու ասպարեզում XIX դ. մինչև մեր օրերը գիտական այրերի գործադրած ջանքերը բավական պատկառելի են[152]: Հայկական գիտական վիմագրության սկզբնավորումն ու զարգացումը կապված է նշանավոր մի շարք գիտնականների անվան հետ. Ն. Մառ (1864-1934)՝ Ани-столица Армении, М., 1898, Հ. Օրբելի (1887-1961)՝ «Դիվան հայ վիմագրության»,

---

[152] Տե՛ս **Մինաս Բժշկեան,** Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, **Հովհաննես Շահխաթունեան,** Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, **Սարգիս Ջալալեան,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, **Մկրտիչ Էմին,** Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, **Մակար Բարխուդարյանց,** Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Հայագիտական մատենադարան, «Գանձասար» հրատ., Երևան, 1999, **Մեսրոպ Սմբատեանց,** Տեղագիր, Գեղարքունի Ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, **Քաջբերունի (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան)**, Ճանապարհորդական նկատողություններ, Մուղնի, 2003, **Կարապետ Բասմաջեան,** Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, **Ղևոնդ Ալիշան,** Շիրակ, Սիսուան, Այրարատ, Սիսական, Կամենից, Վենետիկ, 1881-1896, **Կարապետ Կոստանյան,** Վիմական տարեգիրը, Ս.Պ. 1913:

պրակ I Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, Գարեգին Հովսեփյան (1867-1952, Մատենադարանի հիմնադիրներից է)՝ Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, եռահատորյակ, Վաղարշապատ-Նյու Յորք, 1928, 1942, Աշխարհբեկ Քալանթար (1884-1942)՝ Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, Սեդրակ Բարխուդարյան (1898-1970)՝ «Դիվան հայ վիմագրության» (պրակ 2-5, 1960-1982) և «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» (1963), Կարո Ղաֆադարյան՝ (1907-1976) «Հովանավանքը և նրա արձանագրությունները» (1948), «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» (1957), «Հաղբատ» (1863, «Երևանի միջնադարյան հուշարձանները» (1975), «Հայկական գրի սկզբնավորման տեսակները» (1939): Դրանց թվում են նաև Պարույր Մուրադյանի, Գր. Գրիգորյանի, Արգամ Այվազյանի, Գագիկ Սարգսյանի, Հուսիկ Մելքոնյանի և այլոց գործադրած ջանքերը:

Վիմական բնագրերը տասնյակ հազարներով սփռված են Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում կառուցված տաճարների, ամրոց-դղյակների, կամուրջների, խաչքարերի, տապանաքարերի և հասարակական շենքերի վրա: Դրանք հնագույն ժողովուրդների պատմության փաստագրեր են, քանզի արտացոլում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները: Ամենավաղնջական վիմագիր տեքստերը կարելի է համարել Ք.ա. VII-ից I հազարամյակների ժայռապատկերները, որոնք իրավամբ համարվում են «քարե հանրագիտարաններ»:

Վիմական արձանագրությունները հայ իրականության մեջ հանդիպում են V դարից սկսած և, ուսումնասիրողների կարծիքով, բաժանվում են 3 խմբի. 1) V-VII դդ., 2) IX-XI դդ., 3)

XI-XIV դդ.: Թեև I խմբի արձանագրությունները շատ ու բազմաբնույթ չեն և հիմնականում ունեն նվիրատվական ու շինարարական բովանդակություն, սակայն Հայաստանին վերաբերող այլ աղբյուրների վկայությունների հետ չափազանց կարևոր են այդ ժամանակահատվածի ընդհանուր բնութագիրը հստակեցնելու համար:

IX-XI դարերում վիմական արձանագրությունները զգալիորեն ավելանում են: Առայսօր վերծանվել ու հրատարակվել են մեր եկեղեցական կառույցների և տնտեսական այլ օբյեկտների վրա եղած վիմական արձանագրությունները, որոնց բովանդակությունը առավել բազմաբնույթ է: Այստեղ կարելի է հանդիպել հարկերի և տուրքերի, ամուսնության և ընտանիքի, տնտեսական զբաղմունքների և ընդհանրապես հասարակական կենցաղին վերաբերող բազում բառերի ու տերմինների, որոնք շրջանառության մեջ դրվելով՝ այլ գրավոր աղբյուրների, վկայությունների նման թույլ են տվել ուսումնասիրողներին հետաքրքիր եզրահանգումներ անել հայոց ավանդական ընտանիքի, օժիտի, վճարվող հարկերի ու տուրքերի, ջրամատակարարման և տնտեսական ու հասարակական կենցաղին վերաբերող բազում այլ ոլորտների մասին: Վիմական արձանագրությունների զարգացումը իր գագաթնակետին է հասել XI-XIV դդ.: Դրանք շուրջ հազարի են հասնում և պարունակում են ուշագրավ վկայություններ տարբեր ոլորտների մասին:

2000 թ. վիմագրագետ Գր. Գրիգորյանը հրատարակել է «Հայկական վիմագրություն» ուսումնական բուհական ձեռնարկը, որ շատ օգտակար է պատմաբան և բանասեր ուսանողների համար, ուստի մենք հարկ համարեցինք այս բաժինը շարադրել շատ համառոտ:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ - Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ վկայություններ են թողել շումերական և աքքադական սեպագրերը:

2. Ի՞նչ գիտեք «Գիլգամեշ» դյուցազնավեպի մասին:

3. Մեր հայրենիքը ի՞նչ անվանումներով է հիշատակված և ի՞նչ տեղանուններ կան ասորեստանյան սեպագրերում:

4. Որտե՞ղ է տեղադրվում Հայասա և Ազզի պետական կազմավորումների տարածքը:

5. Ինչպե՞ս եք բացատրում Հայասա-Հայաստան անվանումների կապը:

6. Ամուսնության ի՞նչ սովորույթի վերաբերյալ տեղեկություններ կան խեթական սեպագիր աղբյուրներում:

7. Ի՞նչ գիտեք ուրարտական արձանագրությունների հիշատակությունների մասին:

8. Ի՞նչ գիտեք Ուրարտու-Հայաստան կապի մասին:

9. Ի՞նչ է հաղորդվում Դարեհ I արքայի թողած եռալեզու սեպագիր արձանագրության մեջ:

10. Հելլենիզմի շրջանում Հայաստանում որո՞նք են եղել պետական գրասենյակային լեզուները:

11. Արամեերեն արձանագրություններ որտե՞ղ են գրված եղել և ի՞նչ բացահայտումներ են արված: Ի՞նչ էին իրենցից ներկայացնում Արտաշես արքայի հրամանով թողած սահմա-

նաքարերը: Բացատրեք դրանց մոտավոր պատկերը, չափերը, կառուցվածքը, ձևը:

12. Ի՞նչ բացահայտումներ են պարզաբանել Գառնիում հայտնաբերված հունարեն արձանագրությունները: Ուրիշ է՞լ որտեղ են հայտնաբերվել դրանք և ի՞նչ բովանդակություն են ունեցել:

13. Ի՞նչ տեղեկություններ են հաղորդում հայ միջնադարյան վիմագիր արձանագրությունները:

14. Թվարկել վիմագիր արձանագրությունների ուսումնասիրության երախտավորներից մի քանիսին, նաև մերօրյա ուսումնասիրողներին:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. Աստվածաշունչ, Ս.Էջմիածին, 1999:

2. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ.1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, ԵՊՀ հրատ., Երևան, 2007:

3. Հայոց պատմություն. Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբ. պրոֆ. Հր.Ռ. Սիմոնյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 25-40:

4. **Նահապետյան Ռ.,** Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, ուսումնական ձեռնարկ բուհերի պատմության ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, Հեղ. հրատ., 2010, էջ 5-73:

5. **Նահապետյան Ռ.,** Հնագույն, հին և վաղ միջնադարյան սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայ բնակչության կենցաղի ու մշակույթի մասին, ծրագիր. Երևան, 2013, 1-16 էջ:

Լրացուցիչ

1. **Առաքելյան Բ.,** Լատիներեն արձանագրությունները Արտաշատ մայրաքաղաքից // ՊԲՀ, 1967, թիվ 4, էջ 302-311:

2. **Բարթիկյան Հ.,** Գառնիի հունարեն արձանագրություն-ները և Մ. Խորենացին // ՊԲՀ, 1965, թիվ 3:

3. Գիլգամեշ, Հին Արևելքի դյուցազնավեպ (թարգմ. Ն. Մարտիրոսյանի), Երևան, 1973:

4. **Գրիգորյան Գր.**, Հայկական վիմագրություն, Երևան, 2000:

5. **Դանիելյան Ա.,** Արտաշես I-ի հաստատած սահմանա-քարերի իրավական նշանակությունը // ՊԲՀ, 1977, թիվ 3, էջ 235-244:

6. Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրությունը, թարգ-մանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրություններ-ը՝ Գ. Նալբանդյանի, Երևան, 1964:

7. **Կարագյոզյան Հ.,** Հայկական լեռմաշխարհը սեպագիր աղբյուրներում. Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հա-րակից նահանգներում), Երևան, 1998:

8. **Հմայակյան Ս. Գ.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990:

9. **Մանանդյան Հ.,** Արմավիրի հունարեն արձանագրութ-յունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946:

10.**Մանանդյան Հ.,** Գառնիի հունարեն արձանագրությու-նը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանա-կը, Եր., 1946:

11.**Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ.Ա, Երևան, 1957:

12.**Մովսիսյան Ա.,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Եր., 2005:

13.**Մովսիսյան Ա.,** Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Եր., 1992:

14.**Մովսիսյան Ա.,** Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003:

15.**Մովսիսյան Ա.,** Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Եր., 2006:

16.**Սարգսյան Գ.**, Գառնիի հունարեն արձանագրության շուրջ // «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1956, № 3:

17.**Տիրացյան Գ.,** Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը // «Տեղեկագիր» ՀԳԱՀԳ, 1957, թիվ 10:

18.**Տիրացյան Գ.,** Արտաշես առաջինի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն // ՊԲՀ, 1977, 4, էջ 254-259:

19.**Քոսյան Ա.,** Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., «Զանգակ 97», 2004, 168 էջ:

20.**Арутюнян Н.,** Каменная летопись армянского народа, Ер., 1985.

21.**Арутюнян Н.,** Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

22.Тревер К. В., Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953.

23.Манандян Я. А., Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни // «Известия» АН Арм. ССР, 1951, № 4.

Թեմա 3. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրները հայերի և Հայաստանի մասին (Հերոդոտոս, Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլիացի, Ստրաբոն, Պլուտարքոս, Գայոս Պլինիոս Ավագ Սեկունդոս, Ապպիանոս, Դիոն Կասսիոս, Գայոս Կոռնելիոս Տակիտոս, Կլավդիոս Պտղոմեոս)

3.1. Հերոդոտոսի (Ք.ա. V դ.) տեղեկությունները Հայաստանի ու հայերի մասին

Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատության աղբյուրագիտական արժեքը:

Հերոդոտոսը հին հունական պատմագրության ամենաականավոր դեմքն է և իրավամբ վաստակել է «Պատմահայր» պատվատիտղոսը: Ծնվել է մոտ Ք.ա. 484 թ., Փոքր Ասիայի հունական Հալիկառնաս քաղաքում, վախճանվել է 425 թ.: Շատ է ճանապարհորդել: Շուրջ 10 տարվա ընթացքում (455-445) եղել է բազմաթիվ երկրներում՝ Փոքր Ասիայի պետություններում, Պարսկաստանում, Բաբելոնում, Պաղեստինում, Փյունիկիայում, Եգիպտոսում, Լիբիայում, Հունաստանում, Էգեյան ծովի կղզիներում, Սիցիլիայում, Բոսֆորում և այլուր: Տեսածի և լսածի հիման վրա նա գրել է իր հռչակավոր «Պատմություն» աշխատությունը, որը հետագայում Ալեքսանդրիայի գիտնականները բաժանել են ինը գրքերի: Այն պարունակում է հսկայական քանակությամբ պատմական, ազգագրական, աշխարհագրական նյութեր հին աշխարհի երկրների պատմության վերաբերյալ: Աշխատության առանցքը թեև հունա-պարսկական պատերազմների նկարագրությունն է (500-447), սակայն այստեղ մեծ տեղ է հատկացված նաև Ասորեստանի, Բաբելո-

նի, Պարսկաստանի, Եգիպտոսի, Սկյութիայի և այլ պետությունների, ցեղերի ու ժողովուրդների կյանքին: Նրանում մեծ հետաքրքրություն ներկայացնող վկայություններ կան նաև հին Հայաստանի պատմական աշխարհագրության, տնտեսության, ազգագրական երևույթների վերաբերյալ: Հերոդոտոսի հիշատակությունները անկրկնելի են: Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» երկը թարգմանել է Ս. Կրկյաշարյանը (Երևան, 1986), որից էլ քաղվածքներ են արվել: Սույն գրքում է զետեղված նաև Գ. Սարգսյանի՝ «Պատմահայր Հերոդոտոսը» ուսումնասիրությունը (էջ 553-578)[153]:

3.1.1. Հայաստանի պատմական սահմաններն ըստ Հերոդոտոսի

Հերոդոտոսի վկայությունները հին Հայաստանի պատմական աշխարհագրության՝ վարչատարածքային սահմանների, XIII և XVIII սատրապությունների ընդգրկած տարածքների վերաբերյալ եզակի արժեք ունեն: Ըստ Հերոդոտոսի՝ Ք.ա. V

---

[153] Հերոդոստի կյանքի և գործունեության մասին կա մեծածավալ գրականություն (տե՛ս **Ա. Մովսիսյան, Մ. Մալխասյան, Կ. Կարապետյան,** Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների, Երևան, 2020, էջ 7): Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» և հունական ու հռոմեական անտիկ դարաշրջանի մյուս հեղինակների աշխատություններին՝ որպես հայ ազգագրության անտիկ դարաշրջանի սկզբնաղբյուր» ուսումնասիրությանը անդրադարձել ենք 2010 թ. մեր հրատարակած «Հայ ազգագրության պատմություն» մաս 1. Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին» բուհական ուսումնական ձեռնարկում (էջ 78-118) և առանձին հոդվածներում (տե՛ս գրականության ցանկում) և լրացումներով ու հնարավոր ամբողջական տեսքով ներկայացվում են մեր «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին» գրքում («Հայաստան», Երևան, 2018, 264 էջ):

դարում Հայաստանը ընկած էր Աքեմենյան Պարսկաստանի XIII և XVIII սատրապությունների մեջ (Հերոդոտոս, էջ 197): Նրա օրոք Մեծ Հայքն ու Փոքր Հայքը միավորված են եղել մեկ՝ Հայաստան (Արմենիա) երկրի մեջ, որի հյուսիսարևմտյան սահմաններն ընդգրկել են Հալիս գետի ակունքները, հարավարևմտյան սահմանները հարևան էին Կիլիկիային, Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի Եփրատ գետն էր: Հայաստանի հարավային սահմանը կապվում է Տիգրիս գետի վերին հոսանքի հետ, հարավարևելյան սահմանը՝ մատիեննե-րի երկիրն է (Ուրմիա լճի ավազանը): Ըստ պատմահոր՝ Հալիս գետի ակունքները գտնվում են Հայաստանում. «Մեդական և Լյուդիական թագավորությունների մեջ սահման էր Հալիս գե-տը, որը հոսում էր Արմենների լեռներից Կիլիկիայի միջով» (Հերոդոտոս, I, 72, էջ 32): Նրա երկրորդ և երրորդ տեղեկու-թյունները վերաբերում են Եփրատ գետին, որը սկիզբ առնելով Հայաստանից, հոսում էր Բաբելոնով» (Հերոդոտոս, էջ 74): Հե-րոդոտոսը տվել է աշխարհի հնագույն քարտեզներից մեկի յու-րօրինակ նկարագիր–բացատրագիրը: Միլեթի տիրան Արիս-տագորասը, ցույց տալով պղնձե տախտակին փորագրված երկրի ուրվագիծը, հերթով թվարկում է հարևանությամբ ապ-րող ժողովուրդներին, որոնք ապրում են մինչև Աքեմենյան տերության մայրաքաղաք Սուսա ընկած տարածքում: «Լյուդի-ացիներից հետո դեպի արևելք բնակվում են փռյուգները, ո-րոնք ինձ հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են ի-րենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կա-պադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք ար-քային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այս-

տեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն. արմեններից հետո ահա այստեղ բնակվում են մատիենները: Հաջորդը ահա Կիսսիա երկիրն է, որտեղ Քռասպես գետի վրա գտնվում է ահա Սուսա (քաղաքը)...» (տե՛ս Հերոդոտոս, V, 49, էջ 305):

Պատմիչի հավաստումը Հայաստանով անցնող «Արքայական ճանապարհի» (Սուսայից-Սարդես) վերաբերյալ, դարձյալ եզակի տեղեկություն է: Ըստ նրա Եփրատի գետանցից մինչև Մատիենների երկիրը կազմում է 56.5 փարսախ. 1 փարսախը = 5,5կմ, հետևաբար այն կազմում է 340 կմ, որի վրա կառուցված է եղել 15 օթևան-կայան: Այնտեղ կա նաև պահակային ամրություն: Փաստորեն «արքայական» ճանապարհը Հայաստան էր մտնում Կիլիկիայից՝ Եփրատ գետի վրայով: Այս ճանապարհը ունեցել է վարչական, ռազմական և առևտրական կարևոր նշանակություն: Այն հիմնականում սալահատակ է: Այս հաղորդման մեջ ևս պատմաաշխարհագրական կարևոր տեղեկություն է հաղորդվում Հայաստանի սահմանների վերաբերյալ: Այստեղ Հայաստանը ներկայացված է Կիլիկիայի և Մատիենեի միջև. «Կապադովկիա մտնելով՝ ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը՝ քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք (դռներ նշ.՝ լեռնանցք) և կողանցել երկու պահակային ամրություն: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է՝ անուն Եփրատ: Այս երկրի միջով (նկատի ունի Արմենիան) հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է: Երկրորդը և երրորդը համանուն են՝ Զաբատ, բայց նույն գետերը չեն և

նույն վայրից չեն բխում, քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել է երեք հարյուր վաթսուն ջրանցքերի» (Հերոդոտոս, V, 52, էջ 307):

Հերոդոտոսի մեզ հասցրած տեղեկություններից մեկն էլ վերաբերում է Ք.ա. 480 թ., երբ Հունաստան արշավող աքեմենյան բանակի կազմում հիշատակվում են նաև հայերը (Հերոդոտոս, VII, 73, էջ 409):

Այսպիսով, Ք.ա. V դ. Հայաստանի վերաբերյալ պատմաաշխարհագրական նորույթները, որ ամփոփված են Հերոդոտոսի յոթ ցուցումներում, հետևյալներն են.

1. Հալիս գետի ակունքները գտնվում են Հայաստանում,
2. Եփրատ գետը սկզբնավորվում է Հայաստանից,
3. Հայաստանը գտնվում է Ասորեստանից «վերև», այսինքն՝ հյուսիս,
4. Հայաստանը գտնվում էր Կիլիկիայի և Մատիենեի միջև,
5. Կիլիկիայի և Հայաստանի սահմանը կազմում էր Եփրատ գետը,
6. Մեծ (Վերին) Զաբ գետը սկզբնավորվում է Հայաստանից: Եթե այս տեղեկությունները տեղադրենք քարտեզում, կստանանք Հայաստանի արևմտյան և հարավային սահմանների ընդհանուր ուրվագիծը Ք.ա. V դարում: Ըստ ուսումնասիրությունների՝ Ք.ա. V դարի կեսերին Հայաստանի սահմանը հարավ-արևմուտքում պետք է ընդգրկեր Եփրատի նավարկելի շրջանը[154]:

---

[154] Տե՛ս **Ա. Մովսիսյան, Մ. Մալխասյան, Լ. Կարապետյան,** Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների, էջ 13:

Այսպիսով, ըստ Հերոդոտոսի՝ Հայաստանը ներկայանում է որպես հարուստ, զարգացած գյուղատնտեսություն, առևտրական արտաքին կապեր ու ապրանքային տնտեսության որոշակի մակարդակ ունեցող երկիր:

3.1.2. Հայերի ծագման փռյուգիական վարկածը

Ներկայացվում է փռյուգիացիների նման հայերի հագ ու կապի, զինվելու, լեզվով և արտաքին տեսքով նմանությունների բնութագիրը. Արմենները, ըստ Հերոդոտոսի, լինելով փռյուգիական գաղութաբնակներ, զինված էին փռյուգիացիների նման: Այս երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը (Արտաշեսը), որն ամուսնացած էր Դարեհի (Դարեհ I Վշտասպյանի՝ Ք.ա. 522-486) դստեր հետ: Փռյուգիացիներին Եվրոպայում ապրած ժամանակ հարևան մակեդոնացիները կոչել են բրիգներ: Իսկ Ասիա վերաբնակվելուց հետո նրանք փոխեցին իրենց անունը՝ կոչվելով փռյուգներ: Ուշագրավ է Հերոդոտոսի վկայությունը հայ-արմենների սպառազինության, հանդերձանքի մասին: Նրանք ունեցել են իբրև զենք ու հանդերձանք՝ հյուսված սաղավարտներ, փոքր վահաններ, կարճ նիզակներ, տեգեր, սրեր և բարձր ճտքավոր կոշիկներ: **Հերոդոտոսի՝ հայերի ծագման այս վարկածը շարունակեցին** Ք.ա. IV դ. հույն աշխարհագիր Եվդոքսոսը և Ք.ա. I դարի հեղինակ Դիոնիսիոս Հալիկառնասցին, ըստ որոնց՝ արմենները ծագումով Փռյուգիայից են, և նրանց լեզվում շատ բան փռյուգերենից է, կամ համալեզու են: Այստեղից էլ՝ հայերենի թրակա-փռյուգա-հայկական լեզվաճյուղի վերաբերյալ երբեմնի տեսակետը: Հայագիտության մեջ, հիմք ընդունելով Հերոդոտոսի վկայությունները՝ զարգացել է հայ ժողովրդի ծագման փռյուգիական վարկածը: Ըստ այդ տե-

սակետի՝ հայերի հնդեվրոպական նախնիները, որոնք բնակվում էին Սանգարա գետի ափին և Արգեոս լեռան շրջակայքում՝ ներկայիս Անկարայից արևմուտք, փռյուգիացիների ճնշման ներքո շարժվել են դեպի Արևելք՝ Անտիտավրոսի լեռները և Հալիս գետի վերին հոսանքի շրջանը: Իսկ փռյուգիացիները հնդեվրոպական ժողովուրդ են, Փոքր Ասիա են անցել Թրակիայից (Բալկաններից) Ք.ա. XIII-XII դարերում: Փոքր Ասիայում փռյուգիացիները բնակվում էին Լիդիայի և Կապադովկիայի միջև: Սակայն[155] այս վարկածը մերժվում է, քանզի հայ-արմենները Հայկական լեռնաշխարհի բնիկ ժողովուրդ են, իսկ հայերենը հնդեվրոպական էթնոլեզվաբնտանիքի մի ուրույն, մեկուսի լեզու է՝ հունարենի և ալբաներենի նման:

3.1.3. Տնտեսական կյանքի և նյութական մշակույթի բնութագրությունը

Հայաստանի գինեգործության հարուստ երկիր լինելու, բաբելոնացիների կողմից Եփրատ գետով տեղական արտադրանքով՝ կաշեպատ նավերով, կարմիր կարասներով Հայաստանից դեպի Բաբելոն գինի արտահանելու վերաբերյալ վկայությունները եզակի են, բացառիկ արժեքավոր, քանզի Հայաստանը ներկայացվում է գինեգործությամբ զարգացած, գինի արտահանող երկիր: Պատմագիրը այս տեղեկատվությունը որակում է որպես Բաբելոնում իր լսածներից ամենազարմանալին: «Նավերը, ըստ նրա հավաստման՝ վահանի նման կլոր են և ամբողջովին կաշեպատ: Հայաստանից գինին փոխադրել են կարմիր կարասներով (կարմիր կարասները հին հույների

[155] «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 243:

ընկալմամբ արտադրվում էին Փյունիկիայում), որի համար էլ ստացել է Փյունիկյան անվանումը: Հայաստանից Միջագետք առաքվող «Փյունիկյան գինին» աչքի էր ընկնում իր առանձնահատուկ բուրավետությամբ, ինչը հիմք է տվել ենթադրել, որ այն պատրաստվել է «Մուսկատ» տեսակի խաղողից, քանի որ վերջինս ամենից բուրավետն է[156]:

Նավերը պատրաստվել են Հայաստանում: «Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն՝ ըստ պատմիչի՝ կշռել են հինգ հազար տաղանդ տարողություն (1 տաղանդը կշռում է 30,3 կգ, հետևաբար հավասար է 151.5 տ), յուրաքանչյուր նավում, փոքրում՝ մեկ, իսկ խոշորներում՝ մի քանի էշ՝ վերադարձին՝ նավի կաշին բարձելու համար: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ. մեկը նավի ընթացքը ուղղորդելու, մյուսը՝ արագությունը զսպելու համար» (Հերոդոտոս, գ. I, էջ 79-80): Հաղորդումից երևում է, որ այս երթևեկությունը Բաբելոնի և Հայաստանի միջև կրել է շարունակական բնույթ: Կաշեպատ նավերի կաշվե կամ ամբողջովին կաշեպատ լաստերի մասին որոշակի ակնարկները, ամենայն հավանականությամբ տկանավերի կամ տկալաստերի մասին է: Տիկերի առկայությունը ոչ միայն անջրանցիկության և չխորտակվելու նպատակ է ունեցել, այլև՝ երթևեկությունը թեթև և դյուրին ու կառավարելի դարձնելու: Դրանք պատրաստվում էին տեղի վարպետների ձեռքով՝ դա տկալաստն էր. կմախքը բարակ գերաններից կամ տափակ ու քառանկյուն

[156] Տե՛ս **Арутюнян А.,** Очерки истории виноделия древней и средневековой Армении, Ереван, 2005

տախտակներից կազմած տախտակամած լաստահատակի տակից մի քանի շարքով կապում-ամրացնում էին ոչխարի, այծի, եզան կամ գոմեշի օդով լցված, հաճախ նաև կպրամած տիկեր, որոնք լաստը հուսալիորեն պահում էին ջրի մակերեսին: Նավի կմախքի մի մասն էլ կազմում էին ուռենու մատղաշ շիվերից հյուսած, կաշվով պատած կողերը: Ուշագրավ է այս հաղորդումը նաև այն տեսակետից, որ ետադարձին՝ ավանակների վրա բարձել են ոչ միայն նավի կաշին, այլև օդազերծ տիկերը, որի գործածությունը Հայաստանում հայտնի է եղել արդեն անտիկ շատ այլ աղբյուրներից (Քսենոփոն, Տակիտոս և այլն): Եվ պատահական չէ, որ այս հարցերի ուսումնասիրողներից ազգագրագետ Լևոն Պետրոսյանը նշում է, թե առանց երկմտելու կարելի է պնդել, որ նախ՝ նավերը փայտամած լաստահատակ պետք է ունենային և, որ տակից անպայման օդալից տկեր կապած հատկապես մեծ և բեռնատարողունակ այդ շինվածքներն իրոք տկալաստ նավեր են եղել[157]: Նաև Ք. ա. X-XI դդ. սկսած հենց տվյալ V դարի արմենները ոչ միայն ծանոթ էին առևտրական գործարքներին ու այդ տիպի ջրային փոխադրամիջոցներին, այլև, ամենայն հավանականությամբ, ընդունակ ու կարող էին այդպիսիք սարքել ու վարել և առևտուր անել: Դրա վկայություններից մեկն էլ Հերոդոտոսի սույն հաղորդումն է, որ Բաբելոնի և Հայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել: Թուրքական XVII դարի պատմագիր Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրություն» գրքում նույնն է գրում. Հայաստանից Միջագետք (Շաթ) գետով Դիարբեքիրից

---

[157] Տե՛ս **Լ. Պետրոսյան,** Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները // Հայ ազգագրություն և բանահյուսություն (Նյութեր և ուսումնասիրություններ), գիրք 22, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2007, էջ 249:

նավերով ծանր բեռներ փոխադրելու մասին. «Սրանք մի տեսակ նավ են. տիկերի վրա տախտակ է ամրացվում և սրանցով կարելի է ձիեր ու հազարավոր կանթար բեռներ տեղափոխել…»[158]:

Առևտրի հիմնական առարկա է հիշատակվում գինուց բացի, նաև նավի կմախքն ու ամբողջ ծղոտը, որ լցվում էր նավի մեջ:

Հերոդոտոսը Հայաստանը համարում է զարգացած կաշեգործական, անասունների հոտերով և արոտներով հարուստ երկիր: Հայաստան երկիրը առևտրին ակտիվ մասնակցել է նաև ընտիր ձիերի և ջորիների վաճառքով (Հերոդոտոս, V, 49, էջ 194): Ըստ Գ. Սարգսյանի՝ Բաբելոնից Հայաստան էր ներկրվում արծաթ:

Պարսկաստանի հանդեպ Հայաստանի ունեցած հարկային պարտավորությունները ըստ Հերոդոտոսի, հարկի տեսակը և չափը այսպիսին էր. 13-րդ սատրապությունը պարսկական գանձարան էր մուծում 400 տաղանդ (12 տոննա), 18-րդը՝ 200 տաղանդ (6 տոննա) արծաթ: Բացի այդ, Պարսկաստանին տալիս էին հետևակ ու ձիավոր զորք: Ըստ Հերոդոտոսի հավաստման՝ Փոքր Ասիայից Պարսկաստան տանող հռչակավոր «թագավորական ճանապարհի» մի խոշոր հատված անցնում էր Հայաստանի հարավ արևելքով (340 կմ. – Ռ. Ն.), որտեղ կառուցված էր 15 օթևան-կայան՝ յուրաքանչյուր 25 կմ-ի վրա: Այն իր բարեկարգության և անվտանգության շնորհիվ մեծ նշանակություն ուներ ոչ միայն փոստային և վարչական կապերի, այլև, նախևառաջ ապրանքափոխանակության

---

[158] Տե՛ս Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթ. Ա. Խ. Սաֆրաստյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 189:

ու առևտրի զարգացման համար: Բնականաբար այն մեծ դեր է խաղացել հին Հայաստանի տնտեսական կյանքում[159]:

Հսկայական չափերի հասնող այդ գումարը, որ վճարվում էր պարսկական արքունիքին, դրա համար պետք է առկա լինեին միջոցներ, որոնց աղբյուրներից մեկն էլ, ըստ ակադ. Գ. Սարգսյանի, Բաբելոնի հետ Հայաստանի միջազգային առևտուրն էր (Պատմահայր Հերոդոտոսը. էջ 571):

3.1.4. Նյութական մշակույթ

Հերոդոտոսի «Պատմություն» գրքում հակիրճ ակնարկ կա նաև հայերին վերագրվող հագուստի, սպառազինության մասին, ինչպես՝ «արմենները, լինելով փռյուգիացիների գաղութաբնակներ, զինված էին նրանց նման», իսկ «փռյուգիացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից. պափլագոնացիներն արշավում էին գլուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը» (Հերոդոտոս, գ. VII, էջ 409)*: Ըստ պատմահոր՝ այստեղ մի շարք ներկատու բույսերով ներկում են բրդեր և դրանցով պատրաստում նկարազարդ գործվածքներ, որոնք ո՛չ ջրից և ո՛չ ժամանակից չեն կորցնում

---

[159] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, «Գրական հայրենիք» // «Հայաստան» հրատ., Երևան, 2018, էջ 11-30:

* Հին հայերի զենքի, զրահի և հագուստի մասին տե՛ս նաև հիշյալ և ուրիշ սկզբնաղբյուրների հիման վրա արված պատկերագրական վերականգնումները. **Հ. Հակոբյան,** Հայաստանի բանակն ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք, Երևան, 2013, Գունավոր ներդիրներ Ա և Բ:

իրենց պայծառ գույնը: «Պատմում են, որ այստեղ կան այնպիսի ծառեր, որոնց տերևները մանրացնելով, խառնում են ջրին և դրանով իրենց զգեստների վրա նկարներ գծում: Այդ նկարները չեն լվացվում, այլ մաշվում են բրդե գործվածքի հետ, ասես դրանք սկզբից ևեթ գործված լինեին միասին» (Հերոդոտոս, I, էջ 83):

Ուշագրավ են վկայությունները նաև հայերի հարևանությամբ ապրող ժողովուրդների սովորույթների՝ ամուսնության, հուղարկավորության և հավատալիքային ու պաշտամունքային դրսևորումների մասին: Հերոդոտոսի «Պատմություն» գրքում ակնարկներ կան հույների շրջանում առևանգմամբ ամուսնության, պարսիկների կողմից աստվածներին զոհեր մատուցելու, բազմակնության, դիակը մինչև թաղելը շների հոշոտմանը հանձնելու, մինչև թաղելը մոմով պատելու, բաբելոնացիների հանդերձանքի, երկար մազեր պահելու, գլուխներին չալմա կապելու, մարմինը անուշահոտ յուղով օծելու, ամեն մեկը կնիք և գավազան ունենալու՝ խնձոր կամ վարդ, շուշան կամ արծիվ նշաններով, աղջիկներին վաճառելու ամուսնության, հանգուցյալներին մեղրի մեջ թաղելու, կենակցելուց հետո խնկարկելու և բազմաթիվ այլ սովորույթների մասին[160]: Նրա վկայություններից պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհում հայերից բացի, բնակվում էին նաև բազմաթիվ այլ ցեղեր՝ **սասպեյրներ, ալարոդներ, մատիեններ, մարդեր**: Այս ցեղերի ծագումը վերջնականապես պարզված չէ: Սակայն հետազոտողների կարծիքով՝ ալարոդները ուրարտացիներն էին, մարդերը իրանական ծագում ունեին, մատիենները՝ խուրիական: Հիշատակված այս ցեղերը և առաջին

[160] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** նշվ. աշխ., էջ 27-30

հերթին ալարոդները, ընդգրկվելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացի մեջ, մեծ մասամբ ձուլվեցին հայերի հետ՝ հետքեր թողնելով լեզվի, մշակույթի, մարդաբանական տիպի, ինչպես նաև տեղանունների մեջ:

3.2. Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի (Ք.ա. 430-355/6) աշխատությունների

«Անաբասիս» և «Կյուրոպեդիա» երկասիրությունների արժեքը որպես պատմական սկզբնաղբյուրներ: Քսենոփոն Աթենացին հունական պատմագիտական մտքի ակնառու դեմքերից է՝ «Ատտիկյան մեղու» բնութագրումն ստացած պատմագիր ու գրող, հունական պատմագրության երրորդ գագաթը՝ Թուկիդիդեսի և Հերոդոտոսի հետ: Բայց նրանցից ոչ մեկը այն չափով չի ուսումնասիրել Հայաստանը և կարևոր տեղեկություններ թողել նրա ներքին կյանքի մասին, որչափ Քսենոփոնը: Վերջինս Հայաստանի վրայով Հունաստան անցնելիս, ձմեռ ժամանակ դանդաղ առաջընթացի պատճառով բավական մոտիկից է ծանոթացել արմենների նիստ ու կացին: Նրա տվյալները վերին աստիճանի գնահատելի են, որովհետև դրանք ոչ թե սոսկ գրառումներ են, որ կատարվել են Քսենոփորի կողմից, այլև որոշ առումով՝ ուսումնասիրություններ: Նրա տվյալները վերաբերում են հայ կյանքի մի շարք բնագավառների՝ նստակեցությանը, գյուղերի բնակարանների տիպերին, զբաղմունքների տեսակներին, հասարակական հարաբերություններին, պատմական սահմաններին ու էթնիկ կազմին, զգեստներին ու զարդերին, առևտրական հարաբերություններին, հավատալիքներին և այլնին:

Ծնվել է մոտավորապես Ք.ա. 430 թ. Աթենքում, մահացել է Կորնթոսում Ք.ա. 355/56 թ.: Քսենոփոնի գրչին են պատկանում բազմաթիվ երկասիրություններ, բայց նրանց մեջ իրենց ուրույն տեղն ունեն «Կյուրոպեդիա» («Կյուրոսի դաստիարակությունը» բարոյախոսական-քաղաքական երկը՝ նվիրված Աքեմենյանների աշխարհակալության հիմնադիր, պարսից թագավոր Կյուրոս Մեծին (Ք.ա. 550-529) և իր ստեղծագործությունների գլուխգործոց «Անաբասիս» («Նահանջ բյուրու») երկը, որի շնորհիվ հայ ժողովրդի պատմության և կենցաղի ու մշակույթի մի ամբողջ դարաշրջան է լուսաբանվում: Առաջինում պատմական որոշակի նյութեր կան Հին Արևելքի երկրների մասին, այդ թվում՝ Ք.ա. VI դ. Հայաստանի պատմության, հայ-մարական, հայ-պարսկական փոխհարաբերությունների, երկրի ներքին կյանքի և հասարակական հարաբերությունների մասին: Պատմափիլիսոփայական, բայորախոսական-քաղաքական այդ երկը համարվում է համաշխարհային գրականության մեջ առաջին պատմավեպը: Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության հայերեն թարգմանությունը կատարել է Ս. Կրկյաշարյանը[161]: «Անաբասիսը» գրելու շարժառիթը Քսենոփոնի հունական վարձկան 10-հազարանոց զորաբանակի կազմում մասնակցությունն է փոքրասիական երկրամասերի պարսկական սատրապ, պարսից արքաեղբայր Կյուրոս Կրտսերի ձեռնարկած ռազմական արշավանքին դեպի Պարսկաստան (Ք.ա. 401թ.) և այստեղից հայրենիք նահանջին: Կյուրոսի նպատակն էր տապալել իր եղբայր Արտաքսերքսես II Մնեմոնին (Ք.ա. 404-358) և տիրանալ գահին: Արշավանքը անհաջողությամբ է ավարտվում, Կունաքսայի ճակատամար-

[161] Քսենոփոն, «Կյուրոպեդիա», Երևան, 2000:

տում Կյուրոս Կրտսերը սպանվում է: Հունական տասնհազարանոց վարձկան զորաբանակի նահանջի ուղին անցնում էր նաև Հայկական լեռնաշխարհով՝ հարավից հյուսիս-արևմուտք, Վանա լճից հարավ ընկած կարդուխների երկրից՝ Հայաստանի վրայով դեպի Սև ծովի ափերը: Ընտրվել էր դեպի հայրենիք նահանջի երկու ուղիներից ամենադժվարանցանելի լեռնային ուղին՝ թշնամու հետապնդումներից խույս տալու համար: Քսենոփոնը հունական բանակի արշավանքին ուղեկցել է որպես հուշագրող պատմաբան, իսկ նահանջի ժանանակ եղել է նաև գլխավոր առաջնորդներից մեկը: Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները Արմենիայի մասին միանգամայն արժանահավատ են ու վստահելի, որովհետև ինքն անձամբ է եղել մեր երկրում: «Անաբասիսը» նրա ստեղծագործությունների գլուխգործոցն է: Այն բաղկացած է 7 գրքից: Քաղված նյութերը ներկայացվում են Ս.Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ[162]:

3.2.1. Հայաստանի պատմական սահմանների և էթնիկ կազմի բնութագրությունը

ա) Հայաստանի սահմանները: Մեր օրերում պատմական Հայաստանի և հայերի մասին նյութերն ուսումնասիրելու և համարժեք հետևություններ անելու հարցը չի կորցրել իր արդիականությունը, քանի որ, պայմանավորված աշխարհագրական շահերով, որոշ հարևան երկրներում կեղծ, հաճախ անհեթեթ թեզեր են առաջ քաշվում հայերի ծագման ու երկրի սահմանների վերաբերյալ: Ավելին, Հայաստանի պատմական տա-

[162] Տե՛ս Քսենոփոն, «Անաբասիս», Երևան, 1970:

բածքների թեման այսօր միջազգային հանրության օրակարգում է, քանի որ այն ուղղակիորեն կապվում է տարածաշրջանում խաղաղության և անվտանգության հաստատման գործընթացի հետ: Հետևաբար՝ Հայաստանի և հայերի մասին պատմական նյութերն ուսումնասիրելն ու գիտական պատշաճությամբ ներկայացնելն այսօր արդիական և կարևոր խնդիր է: Այս առումով պատմական Հայաստանի վերաբերյալ բացառիկ կարևոր սկզբնաղբյուր են Ք.ա. V-IV դարերի հույն նշանավոր պատմագիր Քսենոփոնի երկերը:

Հայաստանի՝ որպես տարածաշրջանի հնագույն պետություններից մեկի տարածքային տեղադրության խնդիրը հազարամյակներ շարունակ եղել է դիտարկումների, հաղորդումների նյութ: Չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են հունա-հռոմեական անտիկ աղբյուրներից Քսենոփոնի՝ որպես ականատեսի հաղորդումները, որոնք խիստ արժանահավատ են: Պատմիչի տեղեկությունները հետաքրքրություն են առաջացնում Հայաստանի հարավարևելյան և հյուսիսարևմտյան սահմանների վերաբերյալ: Ք.ա. VI դարի կեսերին Հայաստանը սահմանակից էր Մարաստանին և Պոնտական լեռներում ապրող խալդայներին՝ համաձայն «Կյուրոպեդիա» աշխատության: Շատ ավելի հանգամանալի են Քսենոփոնի «Անաբասիսի» պատմաաշխարհագրական վկայությունները: Ըստ «Անաբասիսի»՝ մեր հայրենիքի հարավարևելյան սահմանը Կենտրիտես գետն էր (միջնադարյան աղբյուրներում՝ Ջերմ-Արևելյան-Տիգրիս-Բոհտան-սու), որը Հայաստանը բաժանում էր կարդուխների երկրից (Կորդուք), իսկ հարավային սահմանի արևմտյան հատվածում Արևմտյան Տիգրիսն էր և Մասիոսը՝

Տուր-Աբդին լեռնաշղթան[163]: Ըստ Քսենոփոնի՝ «Հայաստանը մեծ և ընդարձակ երկիր է»:

Հույները «գերի վերցրածներից լսել էին, որ եթե անցնեն Կարդուխյան լեռները, ապա կհասնեն Արմենիա, որտեղ և, եթե ցանկանան, կարող են անցնել Տիգրիս գետի ակունքները, իսկ եթե չցանկանան, կարող են գետը շրջանցել»[164]:

Հայաստանի արևելյան և արևմտյան սահմանների մասին Քսենոփոնը լռում է, սակայն այս բացը որոշակիորեն լրացված է Հերոդոտոսի կողմից հայկական սատրապությունների մասին հիշատակելու ժամանակ: Քսենոփոնի վկայություններով պարզվում է, որ Հերոդոտոսից մինչև իր ապրած ժամանակահատվածը (շուրջ 50 տարի) Հայաստանի վարչական բաժանումը ենթարկվել է որոշակի փոփոխությունների. երկու սատրապությունները միավորվել են մեկ՝ Արմենիա պետության մեջ[165]:

3.2.2. Հայաստանի էթնիկ կազմը

Արմեններից բացի՝ եթե Հերոդոտոսը հիշատակում է սասպեյրներին, ալարոդներին, մատիեններին, ապա՝ Քսենոփոնը Հերոդոտոսի նման ուշագրավ վկայություններ է թողել Հայկական լեռնաշխարհի էթնիկ կազմի՝ **խալդայների, խալյուբների, կարդուխների, մարդերի, տաոխների, փասիանների, հեսպերիտների** և դրանց անվամբ հայկական տեղանվանումների

---

163 «Անաբասիս», էջեր 226-227, 236-237:

164 «Անաբասիս», IV, 3, էջ 82:

165 Մանրամասն տե՛ս մեր Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին գրքում, էջ 33-77:

վերաբերյալ: Այս ցեղերի ծագումը վերջնականապես պարզված չէ: Սրանք մեծ մասամբ ձուլվել են հայերի հետ՝ հետք թողնելով լեզվի, մշակույթի, մարդաբանական տիպի բնութագրի վրա: Պատմագիտական գրականության մեջ դրանց վերաբերյալ կան տեսակետներ, ըստ որոնց՝ ալարոդներից առաջացել է Արարատը, մարդերից՝ Մարդաստան կամ Մարդուցայք, և ըստ երևույթին՝ Մարդուղի գավառները, սասպեյրներից կամ հեսպերիտներից՝ Սպերը, կարդուխների երկիրը համապատասխանում է «Կորդվաց» աշխարհին, խալդայները՝ Խաղտիք երկրամասին: Խալդայների և խալյուբների անվան տակ պետք է ընդունել միևնույն ցեղախումբը, տառխնեերից՝ Տայք, փասիաններից՝ Բասեն գավառի անվանումը[166]: Կարդուխների մասին ասված է՝ ռազմիկ, քաջարի ու ճարպիկ, վարժ նետաձիգ, ունեցել են երեք կանգուն երկարությամբ (1,5մ) աղեղներ և 2 կանգուն երկարությամբ նետեր (1մ), նշանավոր ճարտարապետներ էին և այլն: Ունեցել են հարուստ գյուղեր, զբաղվել են երկրագործությամբ, գինեգործությամբ, արհեստներով, պղնձագործությամբ: Խալդայների (չպետք է շփոթել Սև ծովի առափնյա շրջանում ապրող խալդայների հետ) վերաբերյալ հույն զորավարը հայտնում է, որ բնակված էին ըստ տեղանքի՝ գլխավորապես Սասունի և Խութի լեռնային շրջաններում, ազատ էին և խիզախ, զինված էին հյուսկեն (ծառերի ճյուղերից հյուսված) կաշեպատ, երկայն վահաններով ու նիզակներով: Ասում էին, որ նրանք ամենառազմիկ ժողովուրդն են այդ երկրում ապրող բնակիչներից: Նրանք ծառայում են զորքի մեջ վարձով, եթե մեկը նրանց աջակցության

---

[166] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան,1944, էջ 69-72:

կարիքը ունենա, որովհետև նրանք, խիստ ռազմունակ լինելով՝ միաժամանակ աղքատ են. նրանց երկիրը լեռնոտ է և հարուստ է միայն չնչին մասը[167]: «Կյուրոպեդիա» երկում (III, II, 17-24, էջ 111-114) ընդարձակ նկարագրություն կա հարևանությամբ ապրող արմենների և խալդայների միջև ռազմական ընդհարումների, ապա Կյուրոս Մեծի միջնորդությամբ դաշինք կնքելու և խաղաղ ու շահավետ միմյանց արոտավայրերից և վարելահողերից օգտվելու մասին: «Արմենների և խալդայների խաղաղ համակեցության հետևանքն այն եղավ, որ խալդայները և տեղական այլ ժողովուրդները հետզհետե միաձուլվեցին արմենների հետ, և հետագա դարերի ընթացքում գոյացավ այժմյան հայ ժողովուրդը»[168]:

Ուշագրավ է նաև Քսենոփոնի հաղորդումները արմենների հարևանությամբ և նրանց բանակում վարձով ծառայող խալյուբների, փասիաների, տաոխների վերաբերյալ: Տաոխների երկրամասը ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակված են Դայաենի և Դիաուխի անուններով:

Ըստ նրա՝ Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, նրա միջնաշխարհը բնակեցված էր հիմնականում մեկ ժողովրդով՝ հայերով:

---

[167] «Անաբասիս», IV, III, էջ 89:

[168] Տե՛ս **Հ. Սանանդյան,** նշվ. աշխ., էջ 48:

3.2.3. Հայ-արմենների տնտեսամշակութային բնութագիրը

Քսենոփոնի հաղորդումները բացառիկ են հայ-արմենների նստակյաց և երկրագործ լինելու, «Արմենիան ընդարձակ և բարեբեր երկիր», գինու և գարեջրի ընտիր տեսակների արտադրության, գինին կավածեփ հորերում պահելու սովորույթի, կարասներում պահվող գարեջրի (որը առաջին գրավոր հիշատակությունն է), բոլոր տեսակի պարենի և բարիքների. մորթելու անասունների, հացի, անուշահոտ հին գինիների, չամիչի, ամեն տեսակ ընդեղենի առատության, նաև խոզաճարպի, քնջութի, դառն նշի ու բևեկնի յուղի, Հայաստանը խոշոր և մանր եղջերավոր անասուններով հարուստ երկիր լինելու, անասնապահության, ձիաբուծության, հեծելազորը սեփական ձիերով ապահովելու, Պարսկաստանին ձիահարկ տալու, հայկական ձիերի փոքր, բայց ավելի ճկուն, ճարպիկ ու կայտառ տեսակի լինելու, որսորդության, տնայնագործության ու արհեստների, փոխադրության միջոցների ու հարմարանքների, հաղորդակցության ուղիների, ազդանշանային համակարգերի, տարածության և ժամանակի չափման միավորների վերաբերյալ: Անցնելով Հայկական լեռնաշխարհով՝ սկզբնական շրջանում նահանջող հունական զորքը դիմել է բռնություններին՝ այրելով ու թալանելով հայկական գյուղերը, սակայն, ի վերջո, հայերի հետ եկել են համաձայնության, ըստ որի՝ հույները չեն ավերի հայկական բնակավայրերը, իսկ հայերը պարտավորվում են նահանջող զորքին ապահովել սննդամթերքով և օթևանով:

Ակնարկ ունի ոռոգման համակարգերի, Տիգրիս գետից սնուցվող 4 խոր և լայն ջրանցքների, նրանցում նավարկվող հացատար նավերի մասին: «Այստեղ գտնվող բազմաթիվ ու

բարեշեն տներում մեծ քանակությամբ այնքան գինի կար, որ պահում էին ծեփված հորերում»[169]: Քսենոփոնի այս հաղորդման հիման վրա կարծիք է հայտնվել, որ Վերին Տիգրիսի ավազանի գյուղերում պատրաստում էին հատուկ տեսակի գինի՝ Մադերա տիպի, որը ջերմային մշակման էին ենթարկում դրսում՝ արևի տակ, կրաշաղախով ծեփված հորերի մեջ: Ներկայումս այդ մեթոդը կիրառվում է մադերային տիպի գինիների հնեցման ժամանակ: Հայկական լեռնաշխարհի տարածքում այդպիսի գինիներ պատրաստել են առնվազն ուրարտական ժամանակաշրջանում[170]: Քսենոփոնը ընդգծում է, որ հայկական գինիները բարձրորակ էին, հնեցված, բուրավետ և տարբեր տեսակների: Պատմիչի վկայությամբ՝ Հայաստանում գարեջուր արտադրել են դեռևս Ք.ա. V-IV դդ.: Հայերը գարեջրի պատրաստման համար օգտագործել են գարի, կորեկ, գայլուկ (բույս) և այն խմել են եղեգներով:

Գարեջուրն առավել գործածություն է ունեցել Հայաստանի այն շրջաններում, որտեղ այգեգործությունը, մասնավորապես խաղողագործությունը զարգացած չէր: Ըստ Բ. Բ. Պիոտրովսկու տվյալների՝ պահպանվել են ոչ միայն այն իրերը, որոնցով բնութագրվում էր գարեջուր պատրաստելու տեխնոլոգիան, այլև նրա պատրաստման զանազան սեպագիր բաղադրատոմսեր[171]:

Հույները մաշկը յուղով օծելու, ռազմավարժական նպատակներով մաշկը առաձգական դարձնելու համար յուղի պա-

---

[169] «Անաբասիս», IV, 22, էջ 88:

[170] Տե՛ս **Ռ. Փալանջյան**, Գինեգործությունը և տեխնիկական բույսերի վերամշակումը Հին Հայաստանում (մ.թ.ա. VI – մ.թ. IV դարեր), պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան,2015, էջ 8:

[171] **Б. Б. Пиотровский,** Ванское царство, М., 1959, с. 142-147.

կասություն չեն զգացել: Ձիթայուղի փոխարեն գործածել են խոզաճարպ, քնջութի, դառն նշի և բևեկնի յուղ: Տեխնիկական որոշ բույսերից քամել են բուսական ճարպայուղեր և օգտագործել են տեխնիկական նպատակներով, նաև օծանելիքներ ստանալու համար: Հատկանշական է դառը նշի և խնկենու եթերայուղերից պատրաստվածները:

Հունական զորքը ձմռանը հայերի տներում քնել է պարենի առատության մեջ: Ընդգծել է նաև հայ ընտանիքի ի բնե հյուրասեր և օտարականների համար գթառատ լինելը: Ամեն տեղ հույները արժանացել են լիառատ կերուխումի, թաղված կարասներից հրամցվել է անուշահամ գինի: Թերևս հայաստանյան Մուսկատի մասին է ակնարկում Քսենոփոնն իր «Անաբասիսում», երբ հիշատակում է Արածանի հովտի գյուղերում ճաշակած բուրավետ հին գինիների մասին: Հունահռոմեական աշխարհում հայտնի էր **մոնարիտյան** կոչվող գինին, որը, ըստ Ստրաբոնի, արտադրվում էր Փոքր Հայքում: Ենթադրվում է, որ այն ևս պատրաստվել է մուսկատ տեսակի խաղողից:

Անասնապահություն, որսորդություն: Եթե Հերոդոտոսը հայերին անվանում է «անասուններով հարուստ ժողովուրդ, ապա Քսենոփոնը խոշոր ու մանր եղջերավոր անասուններով հարուստ երկիր: Ըստ Քսենոփոնի հավաստման՝ չի եղել մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդրվեր գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ քանակությամբ ցորենի և գարու հացի հետ: «Կյուրոպեդիայում» էլ հիշատակված է. «Հայաստան երկիրը լիքն է ոչխարներով, այծերով, արջառներով, ձիերով, հացահատիկներով, ամեն տեսակ բարիքներով»: Ըստ նույն աշխատության՝ Հայաստանում կիրառվել է անասնապահության ինտենսիվ զարգացման՝ սարվորային հեռագնա համակարգը՝ խալդայների հետ համաձայնության գալով՝ նրանց ալպյան

մարգագետիններով հարուստ արոտավայրերից օգտվելով: Հեծելազորը սեփական ձիերով է ապահովվել, և պարսիկ թագավորին որպես տուրք 20 հազար մտրուկ է հանձնվել զոհաբերության համար:

Ըստ Քսենոփոնի՝ որսորդությունը ինչպես պարսիկների, այնպես էլ հայերի կենցաղի շատ բնորոշ կողմերից մեկն է եղել: Այն պետականություն ունեցող արևելյան ժողովուրդների մեջ «պետական գործ է համարվել, որի ժամանակ նրանց գլխավորում է, ինչպես պատերազմի ժամանակ, ինքը՝ թագավորը[172]:

Արհեստագործության զարգացած լինելու վառ դրսևորումներից են եղել գեղարվեստական մետաղագործության, ոսկե ըմպանակների, գորգերի նվիրաբերման վերաբերյալ հաղորդումները: Քսենոփոնը «Անաբասիս»-ում գրում է, որ Առաջավոր Ասիայից Թրակիա վերադառնալիս, Սևթեսի մոտ հացկերույթի միջոցին, «Տեմազիոն Դարդանացին, որ բաժակներ և **բարբարոսական** գորգեր ուներ, խմելով Սևթեսի կենացը, նրան նվիրեց արծաթե մի բաժակ և մի գորգ, որ արժեր տասը մին»[173]: Սույն վկայությունը ուշագրավ է, նախ այն պատճառով, որ դա անմիջականորեն վերաբերում է Հայաստանին, քանի որ Քսենոփոնը, ինչպես հայտնի է, դեռ Պարսկաստան չհասած, պատերազմի դաշտից նահանջելով անցավ պատմական Հայաստանի միջով՝ հարավից հյուսիս: Երկրորդ, որ Քսենոփոնը Հայկական բարձրավանդակի գորգերը, ըստ երևույթին, հունական «տապիս»-ներից զատորոշելու համար, «բարբարոսական» է անվանում»: Երրորդ, Սևթեսին նվեր տրված

---

[172] Տե՛ս «Կյուրոպեդիա», I, II, էջ 9-10:

[173] Տե՛ս «Անաբասիս», գ. VII, գ. III, էջ 174:

գորգի գնահատումից ելնելով (տասը մինը, այսինքն 1000 արծաթ), իր ժամանակի համար բավական մեծ գումար պետք է կազմեր, ուստի և կարելի է ենթադրել, որ դա բարձորակ գործվածք է եղել:

«Անաբասիս»-ում հաղորդվում է նաև, որ հունական զորքը հարձակվելով հայ կառավարիչներից Տիրիբազի բանակի վրա, գրավել է նրա վրանը և վրանում եղած «արծաթե ոտքերով գահույքներ ու ըմպանակներ...»[174]: Հիշատակում է հայ արհեստավորներին՝ հյուսների և քարագործ վարպետների[175]:

Ուշագրավ վկայություններ կան ժամանակի չափ ու կշիռների վերաբերյալ[176]:

Բացի այդ, հաղորդվում է նաև, որ հայ հյուսները և քարագործ վարպետները բավարարում էին նաև հարևան երկրների ժողովուրդների պատվերները, պարսիկ առևտրականների դեպի Հնդկաստան տանող ուղերթով ուղեկցողները եղել են հայ-արմենները՝ ըստ «Կյուրոպեդիա» աշխատության հավաստման: Որպես փոխադրության միջոց հավաստվում են կառքերն ու սայլերը՝ արմեն մեծամեծների կողմից կիրառելու մասին, և հացատար նավերի առկայությունը՝ Տիգրիսից սնուցվող չորս ջրանցքներով և այլն:

---

[174] Տե՛ս «Անաբասիս», IV, 21, էջ 94:
[175] Տե՛ս «Կյուրոպեդիա», III, II, էջ 110:
[176] Մանրամասն տե՛ս «Անաբասիս», I, 14, էջ 27, II, 6, էջ 41, 48-50, III, 7, էջ 74, IV, 1, էջ 93, 98-99 և այլն:

3.2.4. Հայոց նյութական մշակույթը. բնակավայրը և բնակարանը ըստ Քսենոփոնի հաղորդած տեղեկությունների

Գյուղերը, ըստ Քսենոփոնի, տեղավորված էին ջրառատ տեղերում, գետերի ափերին, լեռների լանջերին, ամրության ու պաշտպանության համար տների տեսակներն էին՝ աշտարակավոր և գետնափոր, ուշագրավ է դրանց նկարագրությունը, նաև ուսումնասիրողների կողմից դրանք որպես գլխատան նախահիմք համարելը:

Կենտրոնական և հյուսիսային երկրամասերում՝ «տները գետնափոր էին, մուտքը՝ ջրհորի բերանի նման, իսկ ներքևի մասը՝ ընդարձակ: Անասունների համար մուտքը փորված էր գետնի միջով, մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով»[177]: Հարյուրամյակների ընթացքում գետնափոր բնակարանը վերածվեց գլխատան՝ իր տարբեր ծածկերով: Քսենոփոնը հիշատակում է բազմաթիվ գյուղեր, սակայն չի նշում բերդերի, ամրոցների, քաղաքների մասին՝ նահանջող զորքը խուսափել է մոտենալ խոշոր բնակավայրերին: Հարավային սահմաններով անցնելիս «այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ»:

Մեծ գյուղերն ունեցել են ամրության ու պաշտպանության համար շինված բերդեր կամ աշտարակներ («Անաբասիս», IV, 4, էջ 93): Նման տները, ըստ ազգագրական դիտարկումների, կոչվել են **քոշք**, որը բնորոշ էր Սասունին: Դրանք 2-3 հարկա-

[177] Տե՛ս «Անաբասիս», IV, 25, էջ 97:

նի ամրոցատիպ, լեռ քարերից պատրաստված տներ էին[178]: Հելլենները քաղաք չեն համարել պարսպով չշրջապատված բնակավայրը: Նույնիսկ 15 դար անց բյուզանդական մի հեղինակ միջնադարյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկը՝ առևտրի հայտնի կենտրոն Արծնը, համարում էր գյուղաքաղաք՝ հակառակ նրան, որ այն ուներ ավելի քան հարյուր հազար բնակիչ: Եվ դա, հավանաբար, սոսկ այն պատճառով, որ Արծնը շրջապատված չէր քաղաքային պարսպով[179]:

Տարազը. հիշատակություն կա արմեն երեխաների «բարբարոսական զգեստների»[180], տրեխի և ձյան մեջ չմխրճվելու համար հյուսածո ոտնամանների, ձմռանը ոտքերը փաթաթելու համար թաղիք գործածելու, կանանց և տղամարդկանց կողմից զարդեր կրելու սովորույթի, զինվորական հագ ու կապի, հայ զինվորի զինվածության, զենքի տեսակների, հայ զինվորի ճարպկության մասին: Սասունի և Խութի լեռնային շրջաններում բնակված խալդայները ազատ մարդիկ էին, խիզախ, զինված էին հյուսկեն (ծառերի ճյուղերից հյուսած) կաշեպատ երկայն վահաններով և նիզակներով, նրանք ամենառազմիկ ժողովուրդն են այս երկրում, ծառայում են զորքի մեջ վարձով, միաժամանակ աղքատ են, քանզի նրանց երկիրը լեռնոտ է: Ըստ Քսենոփոնի՝ պարսիկները կրել են շատ համեստ զգեստ՝ պարսկական երկար վերնազգեստ՝ կանդիս, և ապրուստը ավելի պարզ էր: Մինչդեռ մեդականի զգեստը շատ շքեղ էր, հագել են ծիրանի խիտոն՝ անթև երկար վերնազգեստ, վզից կախել են մանյակներ, թևերին՝ ապարանջաններ:

---

[178] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 39-54:

[179] «Անաբասիս», IV, ծանոթ. 16, էջ 260:

[180] «Անաբասիս», IV, 33, էջ 98:

Մեդիացիները առավել փափկակենցաղ էին և վարում էին շռայլ ու զեխ կյանք:

Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ հիշատակություն կա հայ-արմենների զենքի տեսակներից նետ ու աղեղի մասին: Նա տեղեկացնում է, որ մարաց տիրապետության ժամանակ Կիաքսար թագավորն իրեն օգնելու համար արմեններից պահանջել է թե՛ հետևակ և թե՛ հեծելազոր, որոնք գործ էին ածում նետ ու աղեղ:

Քսենոփոնը հավաստում է, որ հույն զինվորները իրենց ոտնամանները փոխարինել են տեղականով՝ եզան թարմ կաշվից կարված տրեխով, որպիսին հայտնաբերվել է նաև Արենի գյուղի քարանձավից՝ ավելի քան 6 հազար տարվա վաղեմությամբ: Հայերի խորհրդով լեռնաշխարհի ձյունապատ վայրերը անվտանգ կտրել-անցնելու համար հույները հագել են հյուսածո ոտնամաններ, հաստ թաղիքով փաթաթել են անասունների ու իրենց ոտքերը:

3.2.5. Ընտանեկան-հասարակական հարաբերություններ

Քսենոփոնի հիշատակությունները բավական շատ են «Կյուրոպեդիա» գրքում հայ հասարակության կառուցվածքի, գյուղական համայնքի, գյուղերը կառավարող գյուղապետ՝ կոմարխի, ընտանիքի, միջանձնային հարաբերությունների, ժառանգական իրավունքի, մերձամուսնության, բազմակնության, հարճեր պահելու, հուղարկավորման հեթանոսական սովորույթների, ռազմական կյանքի, հայոց բանակի, կրոնական հավատալիքների ու պաշտամունքային դրսևորումների մասին:

Ընտանեկան-հասարակական հարաբերությունների մասին խոսելիս, Քսենոփոնը «Կյուրոպեդիա» աշխատության մեջ ակնարկներ ունի հայ կնոջ բավական ազատության և հեղինակության, հայ գեղջկուհիների՝ օտարների հետ ազատ խոսքի ու զրույցի բռնվելու, զորքում նրա ծառայության մասին: Հայ ընտանիքը, ինչպես երևում է Տիգրանի և իր կնոջ իրավահարաբերությունից, բնույթով դեմոկրատական էր (մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան**, Հունական և հռոմեական աղբյուրները …, էջ 68-73):

Ըստ պատմիչի՝ հայուհին նվիրված է ամուսնուն, ինչպես օրինակ՝ Տիգրանի կինը գերությունից ազատ արձակվելու և իր հավատարմությունը ամուսնուն Արամազդով երդվելու վերաբերյալ Քսենոփոնի հաղորդումը («Կյուրոպեդիոս», I, 41, էջ 106):

«Կյուրոպեդիայում» (III, I, էջ 94) ակնարկ կա հայոց արքայի՝ բազմաթիվ կանանց և հարճեր ունենալու մասին: VI-V դարերում Հայաստանում արքաներին տրված էր բազմաթիվ կանայք ունենալու իրավունք: Ուշագրավ ակնարկներ կան նաև հայերի մահվան ու հուղարկավորման սովորույթների վերաբերյալ. «Երբ արքայազն Տիգրանը,- կարդում ենք «Կյուրոպեդիայում»,- լսեց հոր՝ արմենների արքայի մահվան դատապարտվելու մասին, պոկեց խույրը գլխից և սկսեց զգեստը պատառոտել, իսկ կանայք աղաղակելով ճանկռոտում էին երեսները՝ կարծելով, որ արդեն կորստյան էր մատնվել իրենց հայրը և կորչում էին իրենք ևս»[181]: Սրբապղծություն էր սպանվածներին առանց հողին հանձնելու լքելը և այլն: Կան ակնարկներ հայերի ազատատենչ ոգու մասին: Նման վկայու-

[181] «Կյուրոպեդիա», III, 1, 13, էջ 97-98:

թյունները շատ են վաղմիջնադարյան աղբյուրներում[182]: «Կյուրոպեդիա» գրքում (III, III, 3, էջ 116-117) նկարագրվում է հայերի հուղարկավորման մեկ այլ սովորույթի մասին ևս. արքունի մարդկանց, թագավորի և նրա ընտանիքի անդամների մահվան ժամանակ մեռնողի հետ հուղարկավորում էին ոչ միայն իր զենքն ու զրահը, անձնական իրերը, զարդեղենը, այլև նրա ոսկե դրամները: Ահա մի օրինակ. «Արմեն թագավորի կինը իր դուստրերի և կրտսեր որդու հետ պարսից Կյուրոսի դիմավորման ժամանակ նրան այլ ընծաների հետ բերեց նաև ոսկի, որը նախապես, Կյուրոսը չէր ուզեցել վերցնել: «Կյուրոսն այդ տեսնելով... ասաց. դու, ով թագուհի, վերցրու քո բերած փողերը և գնա ու այլևս մի տուր դրանք արմենին (ամուսնուն – Ռ. Ն.), որ նա գետնի մեջ թաղի (հուղարկավորման ժամանակ – Ռ. Ն.), այլ այդ դրամով որդուդ զարդարի՛ր ամենագեղեցիկ կերպով, իսկ մնացածով քեզ, ամուսնուդ, դուստրերիդ ու որդիներիդ համար գնի՛ր այնպիսի բաներ, որոնցով զարդարվելով՝ ձեր կյանքը կանցկացնեք առավել գեղեցիկ և ուրախ» (էջ 117):

Ուշագրավ են պատմիչի վկայությունները Հայաստանի հասարակության կառուցվածքի վերաբերյալ: Հին Հայաստանի հասարակության ուսումնասիրողները իրենց ուշադրությունը սևեռում են այն կարևոր տվյալների վրա, որոնք թողել է Քսենոփոնը գյուղական կենցաղի և կացութաձևի վերաբերյալ:

Արմենների գերակշիռ մասը, հայտնում է Քսենոփոնը, ապրում են գյուղերում: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր գյուղապետ-գեղջավագը կամ **կոմարխը**: Գյուղի կառավարչական բարձրագույն մարմինը համարվում էր համայնաժողովը. հա-

---

[182] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013, էջ 49-58:

մայնաժողովը համայնքի գործերը կառավարելու համար ընտրում էր «ավագների» կամ «ծերերի» խորհուրդ, որի մեջ մտնում էին «երևելի և պատվելի արմենները»: Գյուղապետ-կոմարխը մյուս արմեններից տարբերվելու համար ապրում էր իր համար կառուցված «ապարանք ամրոցում»: Նա կառավարում էր գյուղը, բաժանում և վերաբաժանում հողերը, պարտավոր էր ռազմական արշավանքների ժամանակ փոխադրամիջոց, սնունդ և այլն մատակարարել բանակին, կազմակերպել և դուրս բերել գումակ: Նիկողայոս Ադոնցի կարծիքով Քսենոփոնի նկարագրած Հայաստանի գյուղերը եղել են տոհմական, իսկ հիշատակված գյուղապետերը՝ կոմարխները՝ տոհմի առաջնորդներ, տոհմապետեր[183]: Այս հանգամանքը, Ադոնցի կարծիքով, հաստատվում է նաև գյուղապետի՝ իր ազգակիցների նկատմամբ կարեկցանքի դրսևորման փաստով, ինչպես նաև պարսից թագավորին գյուղի կողմից տրվող տուրքի կոլեկտիվ բնույթով: Այս հարցում Ադոնցի հետ համակարծիք է նաև Հ. Մանանդյանը[184]: Սակայն Ս. Երեմյանը և արդի հայագիտությունը բացահայտել են, որ Քսենոփոնի նկարագրած գյուղերը ոչ թե տոհմական կապերի վրա հիմնված միավորներ էին, այլ տարածքային և տնտեսական հատկանիշներով միավորված գյուղական համայնքներ[185]:

---

[183] Տե՛ս **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 390-391:

[184] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 81:

[185] Տե՛ս **С. Еремян,** Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху//«Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1948, թիվ 11:

3.2.6. Հայաստանի զինված ուժերը

Հայոց բանակը, ըստ «Կյուրոպեդիայի» կազմել է 8 հազար հեծյալ, 40 հազար հետևակ, որից կեսը՝ 4 հազար հեծյալ և 20 հազար հետևակ, պետք է մասնակցեր մեդիացիների արշավանքին, իսկ Հայաստանի ունեցվածքը կազմում էր՝ 3 հազար տաղանդ (տաղանդը և՛ կշռի և՛ դրամական միավոր էր հին աշխարհում): Պարսկական 1 տաղանդը կշռում էր 32,640 կգ, մինչդեռ բաբելոնականը՝ 30,3 կգ, հունականը՝ 26,2 կգ:

Ուշագրավ է հայ զինվորների զինվածության և ճարպկության նկարագրությունը: Նրանք զինված էին աղեղներով ու պարսատիկներով, գերազանց նետաձիգներ էին: Հիշատակում է զենքի տարբեր տեսակներ. նետ-աղեղ, նիզակ, պարսատիկ, դաշույն, սուր, սվին, կապարճ, սակր, վաղր-դաշույն, մուրճ, ճկիռ, հյուսկեն վահան, պարան, օղապարան, կուրծքը ծածկող զրահ-լանջապան, հեծյալները նաև թաղիքե հատուկ թիկնոց: Զենքը իր բուն նշանակությունից զատ՝ հանդիսացել է տղամարդկանց տարազի յուրօրինակ մասը՝ գոտուց կախված դանակն իր պատյանով, հովվական մականը այծենակաճի ձախ կրծքի տակ և այլն: «Կյուրոպեդիա» աշխատության մեջ պատմագիրը նշում է հայերի ազատատենչ ոգու մասին, որ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել և օգտվելով բարեհաջող հանգամանքներից՝ պարբերաբար ապստամբել են և աշխատել թոթափել օտար տիրապետության լուծը (էջ 94):

3.3. Դիոդորոս Սիկիլիացու վկայությունները Հայաստանի, հայերի և հարևան երկրների ժողովուրդների մասին

Դիոդորոս Սիկիլիացին (Ք.ա. 90-23 թթ.) հունական անտիկ պատմագրության աչքի ընկնող դեմքերից է: Հռչակվել է 40 գրքից բաղկացած «Պատմական գրադարան» երկով, որոնցից ոչ բոլորն են պահպանվել[186]: Նրա աշխատությունը ներկայացրել է համաշխարհային պատմությունը՝ արարչագործությունից մինչև իր ապրած ժամանակը: Պատմիչը առատ և բազմաբնույթ տեղեկություններ է գրի առել ոչ միայն ռազմաքաղաքական անցքերի ու իրադարձությունների, այլև աշխարհագրական բնույթի ու տարբեր երկրներում բնակվող զանազան ժողովուրդների վարքուբարքի, նրանց սովորությունների, արհեստների, հավատալիքների, երկրի ընդգրկած սահմանների ու բնակլիմայական պայմանների վերաբերյալ: «Պատմական գրադարան»-ում արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նաև հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերի, այդ թվում և հայ ազգագրության վերաբերյալ: Ի դեպ, այն եղել է Մովսես Խորենացու գլխավոր աղբյուրներից մեկը: Մեզ համար այս երկը արժեքավոր է նաև այն տեսանկյունից, որ դրանում կա մի ընդարձակ հատված [գիրք XIV, գլ. 19-31], որտեղ համառոտակի պատմվում են այն նույն դեպքերը, որոնք մանրամասն շարադրված են Քսենոփոնի «Անաբասիս»-ում: Բայց, քանի որ Դիոդորոսն օգտվել է նաև այլ աղբյուրներից, օրինակ՝ պարսկական արքունիքում 17 տարի ծառայած V-IV դդ. հույն նշանավոր պատմագիր Կտեսիաս Կնիդացու

---

[186] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Դիոդորոս Սիկիլիացի», թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան 1985:

«Պարսկականք» աշխատությունից[187], ապա նրա հաղորդած որոշ տեղեկություններ ոչ միայն լրացնում են Քսենոփոնին, այլև բազմազանությամբ երբեմն տարբերվում են նրա պատմածներից:

Հին Հայաստանի տարածքը, Արմենիա անվան հիշատակությունը ըստ Դիոդորոսի: Կտեսիաս Կնիդացու գրքի հիման վրա Դիոդորոս Սիկիլիացին շատ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ասորեստանի ու Հայաստան-Ուրարտու հարաբերությունների, Աքեմենյան դարաշրջանի Հայաստանի պատմության և Հայաստանի բնաշխարհի վերաբերյալ: Բոլորն էլ կարևոր վկայություններ են հայագիտության համար[188]:

Հին Հայաստանի սահմաններին անդրադառնալիս, ուշադրության արժանի է Եփրատի և Տիգրիսի ակունքների մասին տեղեկությունը, որը հիշատակվում է Դիոդորոսի «Պատմական գրադարանի» II գրքում: Տեղեկությունը հետևյալն է. «Նեղոսից և Գանգեսից հետո Եփրատը և Տիգրիսը կարելի է ասել առավել նշանակալից գետերն են Ասիայում, որոնց ակունքները Հայաստանի լեռներում են, գտնվում են իրարից երկու հազար հինգ հարյուր ասպարեզ (ասպարեզը հավասար է մոտ 190 մ), հեռավորության վրա» (գիրք II, գլ XI, էջ 27):

---

[187] Դժբախտաբար Կտեսիաս Կնիդացու աշխատությունները չեն պահպանվել, սակայն դրանցից առանձին հատվածներ հասել են հիմնականում Դիոդորոս Սիկլիացու և Փոթ պատրիարքի երկերի միջոցով (տե՛ս **Ա. Մովսիսյան, Մ. Մալխասյան, Լ. Կարապետյան,** Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների, էջ 18-32):

[188] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Դիոդորոս Սիկիլիացու վկայությունները Հայաստանի, հայերի և հարևան երկրների ժողովուրդների մասին: Տե՛ս հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, էջ 77-95: Տե՛ս նաև **Ա. Մովսիսյան, Մ. Մալխասյան, Լ. Կարապետյան,** Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմաաշխարհագրական տեղեկությունների, էջ 18-32:

Քսենոփոնի նման Դիոդորոսը ևս Կենտրիտրես (Արևելյան Տիգրիս, Ջերմ) գետը համարում է կարդուխների երկիր և Արմենիայի սահմանը: Դիոդորոսի հավաստմամբ Արմենիայի սատրապն էր Տիրիբազոսը, որի հետ դաշինք կնքեցին (հույները) և երկրի միջով անցան իբրև բարեկամներ (գիրք XIV, գլ 27, տ. 8):

Տնտեսական կենցաղի ու նյութական նշակույթի վերաբերյալ տեղեկություններ: Պատմիչը ուշագրավ նկարագրություն է թողել հայ-արմենների տնտեսական կյանքի և նյութական մշակույթի առանձին տարրերի վերաբերյալ: Նրա նկարագրության համաձայն՝ Կարդուխների երկրից Հայաստանի սահմանն անցնելով՝ հույները փրկվում են ոչնչանալուց: Նա բառացի գրում է. «Եվ բոլորն էլ կատարելապես կոչնչանային սովամահ լինելուց, եթե կարճ ճանապարհն անցնելուց հետո չպատահեին պարենաշատ գյուղերի: Այս գյուղերի տներում բեռնակիր անասունների մուտքը գետնափոր էր, իսկ մարդիկ իջնում էին աստիճաններով. բնակարաններում անասունները սնվում էին խոտով, իսկ մարդիկ վայելում էին կյանքի համար անհրաժեշտ բարիքների առատություն» (գիրք XIV, գլ. 28, 1-5):

Գրքի XIV, գլ. 29, 1-6 հատվածում հանդիպում ենք ավելի ուշագրավ վկայության. «Արաքս գետի վերին հոսանքում՝ «Փասիս գետի» մերձակա գյուղերում, «խոյոյների» (նույնացվում է հայ-խայ ինքնանվան հետ) և «փասիանների» (Բասեն) երկրի տները ևս լեցուն են եղել բարիքներով, ամենուրեք հույները մինչև համաձայնության գալը վարվել են դաժանորեն, «որոնց կռվում հաղթելով, նրանցից շատերին սպանելով և գրավելով տեղաբնիկների լեցուն տները, ուր մնացին տասնհինգ օր»: Հույն աշխարհագիր Ստրաբոնի նման հիշատակում է, թե «այստեղ երկիրը ավելի բերքատու է, յուրաքանչյուր որ-

թատունկ տալիս է մեկ մետրետե (32,5 լիտր) գինի, իսկ թզենիները երբեմն տալիս են տասը մեդիմնոս չորացրած թուզ... տեղաբնիկներին հայտնի է մի ծառ, արտաքինով կաղնու նման, որի տերևներից մեղր է կաթում, ոմանք այն հավաքում են և առատորեն օգտագործում իրենց կարիքների համար..., ժայռերի խոռոչների և շանթահարված ծառերի փչակների մեջ «անթրեդոն» [մեղվատեսակ] խորիսխ է պատրաստում և արտադրում այնպիսի մի հեղուկ, որն իր քաղցրությամբ մեղրին շատ չի զիջում» (գիրք XVII, գլ. 75, 3-6):

Ուշագրավ վկայություններ կան տարածության և ժամանակի չափման միավորների վերաբերյալ: Երկարության չափի միավոր է համարվում **պլեթրոնը՝** 30,8 մ, իսկ **փարսախը՝** 5250 մ, **ասպարեզը՝** 177 կամ 185 մ (գիրք II, գլ. 8, 6): Որպես բարձրության չափ՝ գործածվել է **կանգունը՝** 0,5 մ կամ ¼ գրկաչափ՝ 24 մատնաչափ: Եղել է նաև **«արքունի կանգուն»** չափման միավորը 27 մատնաչափ (տե՛ս գիրք II, գլ. 7, 4): Գործածել է նաև ոտնաչափ միավորը:

Սիկիլիացու վկայության համաձայն՝ Հայաստանի լեռներից գետով մինչև Բաբելոնիա հսկա ժայռաբեկոր է տեղափոխվել, երկարությունը՝ 130 ոտնաչափ (ոտքի երկարության չափ՝ 30,8 սմ), իսկ լայնքը և հաստությունը՝ 25: Ոտնաչափը՝ ոտքի երկարության չափն է, որը հավասար է 30,8 սմ-ի [գիրք II, գլ. 11, 4]: Նա (Սեմիրամիսը՝ Ասորեստանի թագուհի, հայկական աղբյուրներում՝ Շամիրամը) զորքերի և եզների բազմաթիվ լծերով այդ քարն իջեցրեց դեպի գետը (Եփրատ – Ռ. Ն.) և այնտեղ բարձրացրեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա՝ այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն իր ձևի պատճառով անվանում են

կոթող և համարում, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը (գիրք II, XI, 4, էջ 27)[189]:

Որպես ծանրության չափ՝ հին աշխարհում ծառայել է տաղանդը: Ատտիկյան տաղանդը կշռել է 26,2 կգ: Հետագայում տաղանդը դարձել է նաև դրամի խոշոր միավոր, որը հավասար էր 60 արծաթ մինայի: Բաբելոնյան տաղանդը հավասար էր 100 մինայի և կշռում էր 44 կգ: Մինան նույնպես և՛ կշռի, և՛ դրամական միավոր էր. տաղանդի 1/60 մասն էր և հավասար էր 100 դրախմայի (գիրք II, գլ. 9, 1-6, գիրք XVII, գլ. 64, 6): Դահեկանը պարսկական ոսկեդրամ էր և լայն շրջանառություն ուներ նաև Հռոմեական կայսրությունում, նրա ազդեցության տակ գտնվող երկրներում: Այն կշռում էր 8,40 գրամ: 300 դահեկանը կշռում էր 1 տաղանդ (26,2 կգ): 1 մեդիմնոսը տարողության չափ էր և կշռում էր 52,5 լիտր, իսկ մետրետեն հեղուկների չափ էր. 1 մետրետեն կշռում էր 32,5 լիտր:

3.4. Ստրաբոնի (63–21/25 Ք.ա.) «Աշխարհագրությունը» Հայաստանի և հայերի մասին

Հույն նշանավոր պատմագիր ու աշխարհագիր Ստրաբոնը ծնվել է Ք.ա. մոտ 63 թ., Պոնտոսի Ամասիա քաղաքում, մահացել է մոտ Ք.հ. 23 թ.: Գրել է «Պատմական հիշատակարաններ» վերնագրով մի աշխատություն՝ բաղկացած 43 գրքից, սակայն

[189] Հայկական լենաշխարհից Եփրատով դեպի Միջագետք նավարկության մասին տեղեկություններ են հաղորդվում դեռևս շումերական աղբյուրներում, որոնց համաձայն՝ Ք.ա. XXVIII-XXVII դարերում Արատտա երկրից Եփրատով Շումեր փոխադրել են ապրանքներ, իրականացվել են ռազմական արշավանքներ (տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 16-18, 58-59):

այն մեզ չի հասել: Շատ է ճանապարհորդել (այդ թվում եղել է Հայաստանում), ինչի շնորհիվ նրա հաղորդած պատմաաշխարհագրական վկայությունները դարձել են առավել վստահելի ու հարուստ: Մոտավորապես Ք.ա. 7 թ. նա Ալեքսանդրիայի գրադարանում և Հռոմի արխիվներում սկսում է աշխատել հռչակավոր «Աշխարհագրություն» աշխատության վրա և ավարտում է այն մահից քիչ առաջ՝ Ք.հ. 20 թ.: Այն բաղկացած է 17 գրքից: Ցավոք, նրա մի մասը նույնպես կորել է: Շարադրում է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների ֆիզիկական և պատմական աշխարհագրությունը: Այն իր ժամանակաշրջանի յուրօրինակ աշխարհագրական հանրագիտարան է, անգնահատելի ու ճշմարտապատում աղբյուր է նաև Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի, ժողովրդի կենցաղի ու հավատալիքների, բնաշխարհի, մի խոսքով նաև ազգագրության ուսումնասիրության համար:

Հեղինակի տեղեկությունները հաճախ եզակի են և այլ աղբյուրներում չեն հանդիպում[190]:

---

[190] Ստրաբոնի վերաբերյալ (տե՛ս **Страбон,** География (пер. с др.-греч. Г. А. Стратановского), М., 1964): Ստրաբոնի՝ Հայաստանի և հայերի վերաբերյալ հատվածները տե՛ս **Ստրաբոն** (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940), առանձին հատվածներ՝ Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ տեղ են գտել «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին հատորում (Երևան, 2007): Ստրաբոնի մասին մանրամասն տե՛ս մեր՝ «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, էջ 95-127:

3.4.1. Ստրաբոնը և հայ ժողովրդի ծագումնաբանության հիմնահարցը

Անգնահատելի սկզբնաղբյուր է հայերի ծագման թեսալական վարկածի, Արգոնավորդների* առասպելի, Արմենոսի անվան հետ Արմեն-Արմենիա անվանումները զուգադրելու, նաև ասորիների, արաբների հետ ցեղակցություն տեսնելու հարցերի առումով: Ստրաբոնի հավաստմամբ՝ իբր արմեններն ունեն թեսալական ծագում, և որ նրանց անվանադիր նախնին եղել է Արմենոս Թեսալացին: Նա այս պատումը վերցրել է Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներ Կյուրսիլոս Փարսալացու և Մեդիոս Լարիսացու ինչ-որ աշխատությունից: Առասպելի համաձայն՝ արգոնավորդ Արմենոս Թեսալացին, իր ուղեկիցների հետ Կողքիսից (Կոլխիդայից) անցնելով Հայաստան՝ բնակություն հաստատեց Եկեղիք և Սպեր գավառներում և երկիրն անվանակոչեց իր անունով՝ Արմենիա, իսկ ժողովրդին՝ արմեններ: Ըստ առասպելի՝ «Արմենոսը Արմենիոն (Թեսալիայում) քաղաքից էր, որ գտնվում է Բոյբեիս լճի մոտ՝ Ֆերեսի և Լարիսայի միջև, և իր հետ եղողներն էլ բնակեցան Ակիլիսենե (Եկեղիք) և Սուսպիրիտիա (Սպեր)՝ մինչև Կալաքենե և Ադիաբեն,- սա է, որ իր անունը տվեց Հայաստանին» [գիրք XI, IV, 9]: Սակայն հայտնի է, որ արգոնավորդների առասպելը ձևավորվել է մոտ Ք.ա. XI-X դդ., այսինքն՝ այն ժամանակ, երբ դեռևս Արմենիա պետական միավորումը գոյություն չուներ: Ուրեմն Արմենիա հասկացությունը ավելի ուշ

---

* Արգոնավորդներն այն 50 նավագնացներն են, որոնք Թեսալիայի Յոլկոս քաղաքի արքայզն Յասոնի առաջնորդությամբ «Արգո» կոչվող նավով (որտեղից էլ՝ Արգոնավորդներ անվանումը) արշավեցին Կողքիս (Կոլխիդա) «Ոսկե գեղմը» բերելու:

շրջանի՝ Ք.ա. VII-VI դդ. բովանդակություն է արտահայտում: Ուսումնասիրողները գտնում են, որ առասպելի հիմնարարները վերը նշված երկու հույն զորավարներն են, որոնք մի առիթով այցելելով Հայաստան՝ ուշադրություն են դարձնում Հայաստանի և իրենց հայրենի Թեսալիայի որոշ տեղանունների համահնչունության և կենցաղային զուգադիպող երևույթների վրա ու հանգում այն եզրակացության, որ հայերն ունեն թեսալական ծագում: Նրանք փորձում են նաև բացատրել հայերի «արմեն» անվանումը և այն կամայական կերպով կապում են արգոնավորդ Արմենոս Թեսալացու հայտնի անվան հետ: Այս բոլորից հետևում է, որ հայ ժողովրդի ծագման մասին սույն հունական առասպելը զուրկ է պատմական հենքից, որ այն հորինվել է հենց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, երբ հույները նման առասպելներ հորինել էին նաև պարսիկների, մարերի և արևելյան այլ ժողովուրդների Բալկանյան թերակղզուց գաղթած լինելու վերաբերյալ, և որ նման առասպելի ստեղծումն ունեցել է իր քաղաքական դրդապատճառները:

Պատմիչը թյուրըմբռնում ունի նաև հայերի, ասորիների ու արաբների ցեղակից ու լեզվակից լինելու մասին. «Հայոց, ասորիների և արաբների ժողովուրդը մեծ ցեղակցություն է ցույց տալիս լեզվի, կյանքի և մարմնի նկարագրի կողմից, անշուշտ, որովհետև իրար հարևան են: Հայտնապես Միջագետքում, որ այս երեք ժողովուրդներից է բաղկացած, նմանությունը ավելի շատ է երևում նրանց մեջ: Իսկ եթե կլիմայի պատճառով լինի զգալի տարբերություն հյուսիսայինների և հարավայինների միջև, և սրանց ու միջին սահմանի բնակիչների միջև, այնուամենայնիվ, ընդհանուր հատկությունները գերակշռում են» (գիրք I, II, 34): Նման անվանում ունեցող այս երեք ժողովուրդ-

ների ազգակցության մասին Ստրաբոնը խոսում է նաև այլ տեղում՝ նշելով. «Այս երեք մոտիկ հարևան ցեղակից ազգերը, որոնք դրա համար էլ կոչվել են նման անուններով՝ «արմեն», «արամեյեցի» և «արաբ», ինչպես որ հասկանալի է, թե մի ցեղ կլիմայի տարբերության պատճառով հետզհետե ավելի փոփոխվելով՝ երեքի է բաժանվել, նույնպես և գործածվել են մեկի փոխարեն զանազան անուններ» (գիրք XVI, 4, 27):

Ստրաբոնի տեղեկությունները հարևան ժողովուրդների մասին: «Աշխարհագրություն» գրքում Ստրաբոնը զգալի տեղ է հատկացնում հայերի հարևանությամբ ապրող ժողովուրդներին: Այսպես, գովում է աղվանների գեղեցկությունը, նկարագրում նրանց պարզ ու նահապետական վիճակը. «Չափ ու կշիռ չունեին և հարյուրից ավել հաշվել չգիտեին, սակայն պատերազմում էին հետևակ և ձիավոր, թե՛ թեթևազեն և թե՛ զրահավորված, ինչպես հայերը»: Իբերների (վրացիների – Ռ. Ն.) մասին էլ գրում է, թե «Վիրքի դաշտում բնակվող ժողովուրդը... հագնվում է հայ և մարական ձևով, իսկ լեռնաբնակները, որոնք ավելի բազմաթիվ և պատերազմասեր են, ապրում են սկյութացոց և սարմատացոց կարգերով, ինչպես որ նրանց սահմանակից և ցեղակից են» (գիրք XI, III, 2-3):

Ըստ Ստրաբոնի՝ հայերի սովորույթները շատ նման են մարականին: Հայերն ու մարերը պաշտում են պարսից բոլոր պաշտամունքները (XI, 13, 9-10): Հետաքրքիր է նաև Ստրաբոնի վկայությունը կարդուխների վերաբերյալ: Նրա վկայությամբ՝ կարդուխները համարվում էին նշանավոր ճարտարապետներ և փորձառու էին քաղաքների ու բերդերի պաշարման աշխատանքներում (գիրք XVI, գլ. 1, 24):

Ժողովրդագրական ակնարկներ

Ստրաբոնի երկում կան նաև ժողովրդագրական ուշագրավ տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրման և Տիգրան Մեծի կողմից հունական 12 քաղաքների ավերման ու այդ քաղաքների բնակչությունը իր երկրի մայրաքաղաքում և նոր հիմնադրած քաղաքներում վերաբնակեցնելու մասին (գիրք XI, XIV, 15): «Սինոյկիսմոսի՝ համաբնակեցման միջոցով ձգտում էր ոչ միայն շենացնել իր երկիրը: Հելլենիստական աշխարհում որպես հիմնադրվող քաղաքների շենացման հիմնական եղանակ ընդունված էր «սինոյկիսմոսի», այն է՝ համաբնակեցման միջոցը: Նոր քաղաքին իրենց բնակչության մի մասն էին հանձնում հին քաղաքները՝ կամավոր կամ հարկադրաբար: Քաղաքների ու քաղաքային քաղաքակրթության զարգացման համար անհրաժեշտ էր քաղաքակիրթ հարևան երկրներից Հայաստան փոխադրել ամբողջական քաղաքային բնակչություն, ինչը և բռնի միջոցով իրականացրեց Տիգրան Մեծը: Նա հարկադրված եղավ դրսից Հայաստան գաղթեցնել առևտրականների, արհեստավորների և աշխատավոր այլ օտարականների, որոնք հիմք էին ծառայելու Հայաստանում հելլենիստական քաղաքային կենցաղի առողջացմանը և նեցուկ էին լինելու տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Մեծ Հայքը, լինելով Հին աշխարհի երրորդ մեծ պետությունը, Ստրաբոնի հավաստմամբ, տարբերվում էր Հռոմից ու Պարթևստանից նրանով, որ մեր հայրենիքը Ք.ա. I դարում ներկայացնում էր միաձույլ միաէթնիկ թագավորություն: Այն բնակեցված էր մեկ ժողովրդով, որը խոսում էր մի լեզվով, դա հայ, «միալեզու» ժողովուրդն էր [գիրք XI, XIV, 5]:

Նա ընդլայնեց նաև իր երկիրը՝ Մեծ Հայքը դարձնելով Հին աշխարհի երրորդ տերությունը՝ Հռոմի և Պարթևստանի կողքին:

3.4.2. Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական և վարչաքաղաքական բնութագիրը

Հայաստանի սահմանները և ընդգրկած տարածքը, ֆիզիկական աշխարհագրության բացառիկ ճշմարտացի պատկերն է տրված Ստրաբոնի գրքում: Ստրաբոնն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է ինչպես Մեծ Հայքի սահմանները բոլոր ուղղություններով, այնպես էլ հայկական փոքր թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե, Կորդուք): Չափազանց կարևոր են նրա տեղեկությունները Հայաստանում քաղաքների, գետերի, լեռների, ճանապարհների, անցյալի և իր ապրած ժամանակի պատմաքաղաքական զանազան իրադարձությունների մասին: Ըստ նրա՝ Հայաստանում կան նաև մեծ լճեր, մեկը Մանտիանեն է, Կապույտ թարգմանվող, կամ Ուրմիան, գտնվում է 1275 մ բարձրության վրա, որը Ազովի (Մայոտիս) լճից հետո մեծագույնն է աղի լճերի մեջ և տարածվում է մինչև Ատրոպատիա, ունի նաև աղահանքեր, մյուսը՝ Արսենեն, որը կոչվում է նաև Թոպիտիս (Վանա, Բզնունյաց կամ Ռշտունյաց լիճն է, որ գտնվում է 1720 մ բարձրության վրա): Այն պարունակում է բորակ, այդ պատճառով էլ ջուրը խմելու չէ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ստրաբոնը ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատմաաշխարհագրական փոփոխություններն ու վերաձևումները: Նրա տեղեկությունները Արտաշես արքայի՝ երկրի

չորս ուղղություններով արշավանքների և հարևան երկրների կողմից զավթված հայոց երբեմնի գավառների վերամիավորման ու Հայաստանի սահմանների ընդարձակման, հայերենը Հայկական լեռնաշխարհի ընդհանուր լեզու լինելու, հայկական երեք անկախ միաձույլ թագավորությունների, Արտաշատ, Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման, նրանց օտար բնակիչներով՝ հույն արհեստավորներով և առևտրականներով բնակեցման (սինոյկիսմոս) վերաբերյալ պատմաազգագրական մեծ կարևորություն ունեն:

Ստրաբոնը ներկայացնում է նաև Հայաստանի սահմանների ճշմարտացի պատկերը: Նրա հարավը Տավրոսյան լեռներն են, որը Հայաստանը բաժանում է Միջագետքից, արևելքում սահմանակից է Մեծ Մեդիային և Ատրոպատենին, հյուսիսից Խաղտյաց լեռնաշղթան է՝ Սև ծովի հարավային եզերքով, և աղվաններն ու իբերներն են, արևմուտքում՝ Պոնտական լեռները և Եփրատ գետը, որը Հայաստանը բաժանում է Կապադովկիայից և Կոմմագենեից: Տիգրիսը և Եփրատը հոսում են Հայկական բարձրավանդակից: Եփրատի և Տիգրիսի ակունքները իրարից հեռու են շուրջ 2500 ստադիոն (հունական չափի միավոր, որը հավասար է 177 մետրի): Հայաստանը Իբերիայից և Ալբանիայից (Աղվանք) բաժանարարը Կուր գետն է, որի աջակողմյան սահմանը Մեծ Հայքի մասերն են կազմում: Մեծ Հայքը Միջգետքից եզերող լեռնապարը Մասիոս կամ Տուր-Աբդին լեռներն են:

Ստրաբոնը մանրամասն նկարագրություն է թողել հայկական գետերի, լճերի, բազմաթիվ գավառների տեղադրության մասին: Նկարագրում է Արտաշես Առաջինի՝ երկրի չորս ուղղություններով կատարած արշավանքների և նվաճումների մասին՝ Մարաստանից՝ Կասպիանեն (Կասպից երկիրը) կամ

Փայտակարանը, Պարսպատունիքը, իբերներից՝ Գուգարքը, Խորզենեն, Գողերձական գավառները, արևմուտքում՝ Կարնո և Դերջան գավառները, կատառոններից՝ Ակիլիսինեն (Եկեղիք գավառը), իսկ ասորիներից՝ Տամոնիտիսը՝ Տմորիքը՝ բոլորը միալեզու դարձան:

Ըստ հունական մեկ այլ աղբյուրի՝ Ք.ա. 66 թ. դեպի Հայաստան՝ Պոմպեոսի արշավանքին մասնակից Թեոփանես Միտիլենացու վկայության համաձայն՝ Հայաստանի տարածքի լայնությունը 100 սքոյնոս է (երկարության միավոր, 1 սքոյնոսը հավասար է 40 ասպարեզի կամ 7 կմ-ի), ուրեմն կազմում է 700 կմ, իսկ երկարությունը կրկնակի է՝ 1400 կմ, որը գուցե փոքր ինչ չափազանցություն կարող է լինել, թեև ակադեմիկոս Սուրեն Երեմյանը այս տեղեկությունը համարում է ճշմարիտ: Իհարկե, պատմական տարբեր դարաշրջաններում Հայաստանի սահմանները մեծ փոփոխություններ են կրել: Ստրաբոնի օրոք Պատմական Հայաստանի 15 նահանգներից 13-ը մտնում էր նրա կազմի մեջ, առանց Տայքի և Պարսկահայքի: Ուշագրավ են հեղինակի վկայությունները մեր թվարկության սահմանագծին Հայաստանից դուրս (Միջագետքում, Ադիաբենեում, Կողքիսում, Վրկանաց աշխարհում) զգալի թվով հայ բնակչության առկայության մասին:

Այսպես, Սև ծովի առափնյա շրջանում, Հայաստանից հյուսիս ընկած էր Կողքիս (Կոլխիդա) երկիրը, որի Մոսկիքե գավառը (Մոսխերի երկիրը) բնակեցնող երեք ազգերից մեկը հայերն էին: Ահա թե ինչ է գրում Ստրաբոնը. «Մոսկիքեն, ուր կա նշանավոր մի տաճար, երեք մաս ունի. առաջինը զբաղեցնում են կողքիսցիները, երկրորդը՝ վրացիները, իսկ երրորդը՝

հայերը»[191]:

Ստրաբոնը «Աշխարհագրություն» գրքում երկու անգամ նշում է Միջագետքում զգալի հայ բնակչության առկայության մասին: Նշվում է, որ հայերը ասորիների և արաբների հետ եղել են Միջագետքի երեք հիմնական ժողովուրդները[192]:

Ուշագրավ է, որ Ստրաբոնը նշում է նաև Ադիաբենե երկրում հայերի բնակության մասին: «Աշխարհագրություն» գրքի 16-րդ գլխում գրում է. «Ահա այն ժողովուրդները, որոնք գտնվում են արևելքում՝ Բաբելոնից վերև. հյուսիսից, ինչպես ասացինք, Մարաստանն է ու Հայաստանն է, իսկ արևմուտքում Ադիաբենեի Միջագետքը: Ադիաբենեն մեծ մասամբ դաշտավայր է և Բաբելոնի մաս է համարվում, թեև ունի սեփական իշխանը և կցվել է Հայաստանին: Մարերը, հայերը և երրորդը՝ բաբելացիները այս կողմերի ազգերից մեծագույնները, սկզբից հարաբերության մեջ էին իրար հետ, պատեհ առիթով հարձակվում էին իրար վրա, հետո բանակցում և նորից հաշտվում»[193]: Այսպիսով, Ստրաբոնի վկայություններից պարզ է դառնում, որ այդ ժամանակ հայկական էթնիկ տարրը բուն Հայաստանից դուրս տարածվել էր նաև դեպի հարավ՝ Միջագետք, դեպի հյուսիս՝ Կողքիս և դեպի Արևելք:

Ստրաբոնի վկայությունները Հայաստանի բնական հարստությունների վերաբերյալ: Մանտիանե (Կապուտան) և Արսենե (Վանա) լճերը հարուստ են աղի պաշարներով: Ըստ պատմիչի՝ [տեղացիները] աղի բորակով շորեր են լվանում ու մաքրում [գիրք XI, XIV, 8]: Ստրաբոնը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև հանքերում աշխատողների վերա-

---

[191] Տե՛ս Ստրաբոն, գիրք XI, գլ. 2, 18:
[192] Տե՛ս Ստրաբոն, գիրք I, գլ. 2, 34:
[193] Տե՛ս Ստրաբոն, գիրք XVI, գլ. 1, 18-19:

բերյալ: Այսպես, երբ նա նշում է Խաղտիքի մասին, որ հարևան էր Սպերին, նշում է, որ այդ երկրամասը հարուստ է մետաղի հանքերով՝ երկաթով ու արծաթով, և որ այդտեղ ապրողները հիմնականում զբաղվում են հանքարդյունաբերությամբ: Հիշատակել է նաև նավթի և «գանգեության» կոչված քարի առկայությունը Հայաստանում, քար, որով հալածում էին օձերին (գիրք XVI, I, 24): Ստրաբոնն է, որը տալով Սպերի շրջանի նկարագիրը, նշում է, որ Սիսպիրիտիս (Սպեր՝ Բարձր Հայքի յոթերորդ գավառը ճորուխ գետի վերին հոսանքում) երկրի մեջ Կաբալլայի մոտ գտնվում էին ոսկու հանքեր, ուր Ալեքսանդր Մեծն ուղարկեց զորավար Մենոնին զորքով՝ ոսկու հանքերը գրավելու համար, սակայն նա հանդիպել է խիստ դիմադրության տեղի բնակիչներից, որոնք խեղդամահ են արել նրան ու այդպիսով խափանել հանքերի գրավումը [194] : Այնուհետև Ստրաբոնը հիշատակում է ուրիշ հանքերի մասին, մասնավորապես՝ **սանդիքսի**, որ կոչվում էր նաև «հայկական գույն» և նման է կալքեյի (ծիրանի խեցի): Այն նման էր պուրպուրին, և անվանում էին հայկական ներկ [գիրք XI, XIV, 9]: Այս փաստը ապացուցում է, որ, իրոք, IV դարում նախքան մեր թվարկությունը, հույներին արդեն հայտնի են եղել Սպերի ոսկու հանքերը:

3.4.3. Հայաստանի տնտեսական կյանքի բնութագրությունը

Պատմագիրն ակնարկային նկարագրություն է թողել վարող գործիքի՝ արորի մասին: Ժամանակի արորն ունեցել է

---

[194] Տե՛ս **С.Т. Еремян,** Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении // Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, 1964, էջ 23:

բնականից ծռված ծառի ճյուղի տեսք, որի ծայրը հայերն անվանում էին «կեռ», և որի վրա հագցվում էր երկաթե խոփիկ, իսկ վերին ճյուղը կոթի՝ «մաճի» դեր էր կատարում: Հետագայում Արցախում «կեռ», «կըռ» տերմինը տարածվեց նաև սովորական արորի վրա[195]: Ստրաբոնն ունի նաև աղվանական արորի նկարագրությունը. «…Աղվանական արորը երկաթե խոփիկ չուներ և կազմված էր ամբողջությամբ փայտից» [գիրք XI, XIV, 4-5]:

Բացառիկ ուշագրավ են Ստրաբոնի վկայությունները հայերի տնտեսական զբաղմունքների, երկրագործության, հացահատիկային կուլտուրաների, պտղատու այգիների, ձիթենու, խաղողի մշակության, Հայաստանը գինեվետ երկիր լինելու, անասնապահության, հատկապես ձիաբուծության, պարսկական արքունիքին տարեկան 20 հազար ձիու քուռակ ձիահարկ տալու, հայկական ընտիր ձիատեսակների, երկրի արքունիքի ու ռազմական կարիքների համար հսկայական քանակությամբ ազնիվ ձիեր բուծելու, արհեստագործության, հայկական ներկ սանդիքսի, ուխտերով քարավանային առևտրի, փոխանակության, չափ ու կշռի, ժողովրդական փոխադրամիջոցների ու կապի միջոցների, ձյան տակից «շունչի անցք» բացելու համար ձողեր դուրս հանելու վերաբերյալ:

Ըստ Ստրաբոնի՝ Հայաստանը այգեգործության և գինեգործության երկիր է, հատկապես Արաքսենը (Արարատյան դաշտը) և Աղվանքին սահմանակից Շակաշենը, Կուր գետի աջափնյա շրջանն էլ առատ է հացահատիկներով, պտղատու այգիներով և մշտադալար ծառերով, կա նաև ձիթենի [գիրք XI, XIV, 4]: Հայկական Միջագետքը համարում է այգեշատ և գինե-

[195] **Ստրաբոն,** գ. ԺԱ, գլ. ԺԴ, էջ 61:

վետ, Մելիտինեն՝ պտղատու այգիներով, արտադրում է ձեթ և մոնարիտ գինի, որը հունական գինիների մրցակիցն էր [գիրք XII, II, 1]: Հայաստանը համարում է խաղողի, թզի, ցորենի ու մեղրի երկիր, ինչպիսին Վրաստանն էր և Մարաստանը: «Ասում են, թե մի որթատունկը տալիս է մի մետրետ (39 լիտր) գինի, մի թզենին՝ 60 մեդինոս (հին հունական չափ, որ պարունակում է 1 մեդինոսը՝ 52 լիտր), մեղուները ծառերի մեջ փեթակ են շինում, և մեղրը տերևներից հոսում է [գիրք II, I, 14, գիրք XI, VII, 2]: Նշվում է նաև Արաքս գետի ոռոգելի ջրարբիացնող հատկանիշների մասին (գիրք II, 1, 14, գիրք XI, VII, 2): Հայ մարդու հող մշակելու բացառիկ տաղանդի շնորհիվ մեր երկիրը, ըստ պատմագրի հավաստումների, լի է եղել պտղատու ծառերով, գինու և հացի առատ պաշարներով:

Անասնապահությունը 2-րդ կարևոր ճյուղն էր: Հայաստանում բուծում էին «Նեսեական» կոչվող հատուկ ցեղի ձիեր, տարեկան 20 հազար մտրուկ էին հանձնում պարսից արքունիքին, շատ հարուստ է ձիաբուծական արոտներով, բուծում են մեծաքանակ պատերազմական ձիեր (գիրք XI, XIV, 4), բավարարում է ռազմական հեծելազորի կարիքները: Ստրաբոնի հավաստմամբ՝ «Արտավազդը Անտոնիոսին, բացի մյուս ձիավորներից, 6000 զրահապատ ձիավորների զորահանդես արավ, երբ նրա հետ Մարաստան արշավեց (գիրք XI, XIV, 9): Ռազմական նպատակների և արքունական շքահանդեսների կազմակերպումից բացի, ձին որպես փոխադրամիջոց էր ծառայում հատկապես բարձր խավի համար: Հնուց ի վեր Հայաստանը հայտնի է եղել որպես լավագույն տոհմական ձիերի հայրենիք: Հայկական նժույգները թեև պարսկականից փոքր են, սակայն չափազանց ուժեղ են և ծառայում են որպես հիմնական փոխադրամիջոց: Հայաստանը հարուստ է ձիաբու-

ծական արոտներով: Հայկական ձիերը Մարականներից վատը չեն, այնպես որ Նենսեական ձիերն այնտեղից էին բերում (գիրք XI, XIV, 9):

Հին հայերն օգտվում էին նաև ընտանիքի մի մասով ամառային արոտավայրեր մեկնելու սովորույթից:

Հայերը լավ ճարտարապետներ էին, պաշարողական գործի մեջ հմուտ վարպետներ [գիրք XI, XIV, 9]: Ստրաբոնի երկից տեղեկանում ենք, որ Հայաստանից պարսկական արքունիք էին ուղարկվում ոչ միայն ձիեր, այլև թանկանգին մետաղից պատրաստված բարձրարվեստ անոթներ [գիրք XI, XIV, 9]: Նշվում է հայերի՝ ուղտերով կատարվող առևտրի, ոսկեհուռ զգեստներ կրելու, միջազգային շուկաներում ձիեր, ջորի, ցորեն, գարի և այլ ապրանքների վաճառքի հանելու մասին [գիրք XII, 3, 36]:

Նշում է «տառեխ» ձկան արդյունահանման մասին: Ըստ նրա հավաստման՝ «Տիգրիս գետը ունի բազմատեսակ ձկներ, մինչդեռ Վանա լիճը, որի միջով արագ անցնում է Տիգրիսը, միայն մի տեսակ՝ տառեխ անվամբ» [գիրք XI, XIV, 2, 3, 4, 7, 8]:

Ուշագրավ վկայություններ է հաղորդում ժողովրդական փոխադրամիջոցների և կապի միջոցների վերաբերյալ. «Կովկասի գագաթները ձմեռը անանցելի են, ամառը բարձրանում են՝ հագած եզան անաղաղ կաշուց կոշիկներ (տրեխներ)՝ տակին սուր գամերով, թմբուկի կաշիի պես լայն, ձյան և սառույցի պատճառով»: Այստեղ կրունկների տակ դնում են նաև փայտե անվակներ՝ տակին սուր գամերով (գիրք XI, IV, 6): Այսպիսի լեռներ բարձրացողները «իջնելու ժամանակ նստում են կաշու վրա իրենց բեռներով և ցած են սահում, ինչպես անում են Ատրոպատյան Մարաստանում և Մասիոս լեռան վրա՝ Հայաս-

տանում»[196]: Հաղորդում է նաև նավերով կատարվող փոխադրումների մասին:

Կապի հնավանդ միջոցներին անդրադառնալիս նշում է, որ բնակավայրերում և ռազմական ամրություններում աշտարակներ էին կառուցվում, կառույցների վրա դիտարաններ ստեղծվում: Հին հայերը գործածել են նաև տեսողական և լսողական ազդանշանային համակարգեր:

Ազդանշանային համակարգերից էին կրակը, ծուխը, ձեռքերի շարժումները, ծառերի և ժայռերի վրա պայմանական նշաններ գծելը, ձյան տակից ձողեր բարձրացնելը՝ շնչելու անցք բացելու և վտանգը զգուշացնելու համար: Հայաստանի ամենահյուսիսային գավառները (Խորձյա և Կամբյուսենե) նկատի ունենալով ձյունառատ եղանակներին «հաճախ լեռնանցքներում ու կիրճերում ամբողջ քարավաններ ձյան տակ են մնում բուքի ժամանակ: Այսպիսի վտանգների համար,- գրում է Ստրաբոնը,- նրանք ունենում են ձողեր, որ բարձրացնում են վերև՝ շունչի անցք բանալու և նշան տալու համար անցորդներին, որպեսզի օգնության հասնեին, ձյան տակից հանեին ու ազատեին» [գիրք XI, XIV, 4]:

3.4.4. Տարազ և ազանելիք

Նշում է հայկական և թեսալական զգեստավորման նույնականացման մասին. «Ասում են, թե Հայոց զգեստը թեսալական է, ինչպես այն երկար վերարկուները, որ ողբերգությանց մեջ թեսալական են կոչում և գոտիով կապում են կրծքի վրա և

---

[196] Մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրները..., էջ 111-121:

այն շորերը, որ ողբերգակները օրինակել են թեսալացիներից» (XI, XIV, 12): Նույն ձևով նաև զարդերը, ակնարկում է Ստրաբոնը: Իհարկե, հունական և արևմտահայկական զգեստի որոշ նմանությունը, կամ սահմանային շրջաններում դրա որոշ տեսակների փոխառության հնարավորությունը չի բացառվում: Սակայն ամբողջ Հայաստանի մասշտաբով զգեստները թեսալական համարելու վարկածը անընդունելի է: Ստրաբոնը, ինչպես ասվեց վերը, նշում է ձմռանը սուր-սուր գամերով՝ ներբաններով կոշիկներ կրելու մասին՝ լեռնային սառցաշատ հատվածները հաղթահարելու համար (գիրք XI, III, 2-3): Հագ ու կապը նկատի ունենալով՝ պատմիչը գրում է, թե «Մարերը և հայերը ցեղակից են (որովհետև հագնվում են գրեթե միանման) ...», իսկ աղվաների մասին խոսելիս նշում է, թե վերջիններս «և՛ թեթևազեն են, և՛ զրահավորված, ինչպես հայերը» (գիրք XI, IV, 4-5): Ուշագրավ է, որ պատմիչը այդ միանմանությունը բացատրում է, «որովհետև աշխարհներն էլ նմանվում են միմյանց» (գիրք XI, XIII, 9-10):

3.4.5. Ակնարկ հայերի պաշտամունքային սովորույթների վերաբերյալ

Ըստ հույն պատմիչի հաղորդումների՝ պարսից բոլոր աստվածությունները պաշտվում են մարաց և հայոց մեջ, բայց Անահիտի՝ իբրև պտղաբերության, արգասավորության, մայրության, լուսնի, Հայաստան երկրի և Արտաշատ մայրաքաղաքի հովանավորող «աստվածուհու սրբավայրերը հայերը պաշտում են առանձնահատուկ, նրանցը գերազանցում է մյուսներից. զանազան տեղեր (հայոց մեջ) նրա անվամբ տաճարներ են կանգնեցված»: Մեզ հայտնի է, որ Անահիտի պատ-

վին մեհյաններ են կանգնեցվել Արտաշատում, Արմավիրում, Աշտիշատում, Եկեղիք գավառի Երիզա (Երզնկա) ավանում, որը Անահիտի գլխավոր մեհյանն է եղել (որի անունով էլ գավառը կոչվել է նաև Անահտական), Բագարանում և այլուր: «Զարմանալին այս չէ,- գրում է Ստրաբոնը,- այլ այն, որ ամենաերևելիները դիցուհուն նվիրաբերում են իրենց կույս դստերին, որոնք, ըստ սովորության, երկար ժամանակ դիցուհու մոտ պոռնկանալուց հետո տրվում են ամուսնության, ոչ ոք անվայել չի համարում այսպիսիների հետ կենակցելը (կամ ամուսնանալը)»: Հավանաբար այս երևույթը շատ ավելի հին ժամանակներում գոյություն ունեցած խմբամուսնության մնացուկ էր: Նման մի բան պատմում է նաև Հերոդոտոսը լյուդուհիների (փոքր Ասիայի Փռյուգիայի և Էգեյան ծովի միջև ապրող ժողովրդի) մասին, քանզի նրանք բոլորն էլ պոռնկանում էին: «Նրանք այնքան բարեհաճ են վերաբերվում սիրեկաններին,- գրում է Ստրաբոնը,- որ թե հյուրընկալություն են շնորհում և թե փոխադարձ նվերներ տալիս բազմապատիկ առավել, քան ստանում են, քանզի նրանց ապահովում են իրենց բարեկեցիկ տները: Նրանք օտարներից պատահածին չեն ընդունում, այլ առավելապես իրենց հավասար աստիճանի եղողներին»: Այս երևույթը հայկական վաղ անցյալից հայտնի և բազմիցս քննարկված մինչամուսնական կուսազրկման արխաիկ ծեսերից է, որն իրականացվել է ոչ թե ամուսնու, այլ՝ ուրիշների կողմից: Ստրաբոնի հիշատակությունը «ծիսական պոռնկության» մասին է: Փաստորեն, ըստ այդ վկայության՝ Անահիտ աստվածուհու տաճարում հարուստ և հայտնի մարդիկ իրենց չամուսնացած կույս աղջիկներին «զոհաբերում» էին աստվածուհուն: «Զոհաբերվող» աղջիկները գումարի դիմաց կենակցում էին տարբեր, բայց նույն խավին պատկանող

տղամարդկանց հետ»: Ծիսական փորձությունն անցնելուց հետո նրանք ընտանիք էին կազմում: Ազգագրագետ Կ. Մելիք-Փաշայանի համոզմամբ՝ կրոնական այս հետերիզմը սերտ աղերսներ ունի պտղաբերության ու ծննդաբերության հետ և պատահական չէ, որ այն տեղի էր ունենում հատկապես մայր աստվածներին նվիրված տաճարների շուրջ: Այստեղ երեխա չունեցող կանայք օտար տղամարդկանցից հղիանալիս այդ ունակությունը վերագրում էին Անահիտին[197]: Սխալ է այն կարծիքը, թե Անահիտի, ինչպես և հունական ու պարսկական շատ աստվածությունների պաշտամունքը հայերի մեջ մեխանիկական փոխադրության արգասիքներ են եղել, բայց դժվար չէ հասկանալ, որ դա անունների անցումն է միայն տեղական աստվածությունների վրա, որոնք նույն պաշտոնն ունեին: Առ այսօր չի մեկնաբանվել և գիտական ուսումնասիրության չեն արժանացել Ստրաբոնի հաղորդումները «բագոսական» խրախճանքների վերաբերյալ, որոնք կատարվում էին Անահիտի տաճարում, և որ այդ խրախճանքների ժամանակ տեղի էին ունենում հատուկ պարահանդեսներ, կան նաև ակնարկներ ժողովրդական բժշկության վերաբերյալ[198]:

---

[197] Տե՛ս **Մելիք-Փաշայան Կ.,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 48-52:

[198] Առավել հանգամանալի տե՛ս **Ռ. Նահապետյան**, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրները..., էջ 121-127:

3.5. Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ» երկը՝ հայոց պատմության և մշակույթի անտիկ դարաշրջանի կարևոր սկզբնաղբյուր

Հիշատակելի են նաև Հռոմեական կայսրության շրջանի հունական պատմագրության կարկառուն ներկայացուցիչ Պլուտարքոսի (Ք.հ. 45-127) աշխատությունները: Նրա 210 անուն երկերից մեզ է հասել 150-ը: Պատմագրի կարևորագույն աշխատություններից է «Զուգահեռ կենսագրությունները» («Զուգակշիռք»), որն ամփոփում է հռոմեացի զորավարներ և քաղաքական գործիչներ Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեոսի, Հուլիոս Կեսարի, Մարկոս Կրասոսի և Մարկոս Անտոնիոսի կենսագրությունները, որոնցում բազմաթիվ տեղեկություններ են ընդգրկված նաև Հայաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ: Դրանք արժեքավոր նյութ են ուսումնասիրության համար[199]:

---

[199] Նրա «Զուգահեռ կենսագրություններ» երկը հունական և հռոմեական քաղաքական ու ռազմական հանրահայտ 70 գործիչների զուգահեռ շարադրված (մեկ հույն և մեկ հռոմեացի) կենսագրությունների մի հավաքածու է: Սրանցից մեզ են հասել 23 զույգ զուգահեռ կենսագրություններ և չորս կենսագրություն առանձին, ընդամենը՝ 50 կենսագրություն: Այստեղ մեծ թվով տեղեկություններ կան Ք.ա. I դարի Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքի վերաբերյալ: Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ» գրքի հայերեն հատվածական թարգմանությունը կատարել է Ս. Կրկյաշարյանը (**Պլուտարքոս,** Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ս. Գրքաշարյան, Երևան,2001), որտեղից էլ քաղված են ստորև ներկայացվող տեղեկությունները (այսուհետ տեքստում՝ գիրքը, գլուխը) Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, էջ 127-152:

3.5.1. Ակնարկներ Հայաստանի տարածքային սահմանների մասին

Զուգակշիռքի «Պոմպեոս»-ին նվիրված գլխում Պլուտարքոսը թվարկում է այն երկրները, որոնք նվաճվել էին Տիգրան Մեծի կողմից. բացի Ասորիքից և Պաղեստինից՝ նա հիշատակում է նաև Փյունիկիան, Կիլիկիան, Գալատիան [նկատի ունի Կապադովկիան] և Սոփենեն (Ծոփքը): Պլուտարքոսը հաղորդում է նաև պարթևների կողմից Կորդուքը գրավելու փորձերի մասին: Պլուտարքոսը նախ նշում է հայ-իբերական (վրացական) սահմանը. «Կյուռնոս [Քուռ գետի անվան հունական անվան ձևերից մեկը, այլ հեղինակների մոտ հանդիպում է ընդհանրապես «Կյուրոս» ձևը] գետը իր մեջ է առնում Հայաստանից հոսող Արաքսը և ապա տասներկու գետաբազուկով թափվում է Կասպից ծով»:

Պլուտարքոսի երկում հստակ ընդգծվում էր Մարաստանի և Հայաստանի անմիջական սահմանակից լինելը: Ըստ նրա՝ Արաքս գետը բաժանում էր Մարաստանը Հայաստանից [Անտոնիոս, 49]:

3.5.2. Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման մասին

Պլուտարքոսը անտիկ շրջանի այն հեղինակներից է, որոնք կարևոր վկայություններ են թողել Քրիստոսից առաջ երկրորդ դարում հայոց նշանավոր մայրաքաղաքներից մեկի՝ Արտաշատի հիմնադրման մասին: «…Պատմում են,– գրում է Պլուտարքոսը,– թե կարթագենացի Հաննիբալը, հռոմեացիներից Անտիոքոսի [խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծի մասին

է – Ռ. Ն.] կրած վերջնական պարտությունից հետո [նկատի ունի Ք.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտը] գնաց հայ Արտաշեսի մոտ և խորհրդատու դարձավ նրան օգտավետ ձեռնարկներում: Բացի այդ, նկատելով երկրում չօգտագործված և անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի վայր [Արաքսի ձախ ափին՝ այժմյան Խոր Վիրապի շրջակայքում], ուրվագծեց քաղաքի հատակագիծը: Հաննիբալը այնտեղ տարավ Արտաշեսին [Արտաշես I հայոց արքային՝ Ք.ա. 189-160] և ցույց տալով տեղանքը՝ համոզեց նրան այդ վայրում քաղաք հիմնել» [Լուկուլլոս, 31]: Ապա նշում է, որ թագավորը սիրով համաձայնում է և խնդրում, որ նա ստանձնի այդ գործի ղեկավարությունը[200]:

Այսպիսով՝ կառուցվում է մեծ և շատ գեղեցիկ քաղաք, որը կոչվում է թագավորի անունով և հռչակվում Հայաստանի մայրաքաղաք: Պլուտարքոսը այն անվանել է Հայաստանի Կարթագեն [նույն տեղում]:

Անշուշտ, քաղաքը պիտի կառուցապատված լիներ ժամանակի հելլենիստական քաղաքաշինության կանոններով՝ ուղղանկյուն թաղամասեր կազմող խաչվող փողոցներով ու շրջափակված լիներ հզոր պարիսպներով: Հենց այդ հանգամանքներն են, որ առիթ են տվել պատմագրին հիշատակելու Արտաշատին հռոմեացիների կողմից տրված «Հայկական Կարթագեն» պատվանունը, իսկ Ստրաբոնին՝ ասելու, որ Արտաշատը «գեղեցկապես շինված-բնակեցված է և երկրի թագավո-

---

200 Գիտության մեջ հաստատված այն կարծիքը, որ Հաննիբալի այցը Հայաստան անհավանական է, այժմ ենթակա է վերանայման: Հաննիբալը կարող էր կարճ ժամանակ ապրած լինել Հայաստանում անմիջապես Անտիոքոս III-ի՝ Մագնեսիայի մոտ հռոմեացիներից կրած պարտությունից (190թ.) հետո (Տե՛ս **И. Ш. Кораблев,** Ганнибал, М., 1976, էջ 319):

բանիստ քաղաքն է: Գտնվում է գետի թերակղզի կազմող անկյունում, պարսպապատ է գետափի երկայնքով՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»[201]: Արտաշատ քաղաքը իսկույն ևեթ հռչակվում է քաղաքական և առևտրական խոշոր կենտրոն:

3.5.3. Ժողովրդագրական վիճակը և բնակչության կազմը Տիգրան Մեծի օրոք

Պլուտարքոսի վկայությունները Տիգրան Մեծի [95-55] թագավորության, նրա նվաճումների և հիմնած տերության մասին կարևոր տեղեկատվություն են պարունակում հայ և հարևան ու հեռավոր շատ ժողովուրդների պատմության և տնտեսամշակութային կյանքի ուսումնասիրության համար: Ըստ պատմիչի՝ Տիգրան Մեծն իր նվաճումներն ուղեկցում էր նվաճված ժողովուրդների զանգվածային վերաբնակեցումներով ոչ միայն բուն հայրենիքում, այլև իր տերության մաս կազմող Միջագետքում:

Նա (Տիգրան Մեծ) նվաճել էր բազում ժողովուրդների, ինչպես ուրիշ ոչ ոք չի կարողացել կոտրել պարթևների հզորությունը և Միջագետքը լցրել հելլեններով, որոնց մեծ թվով բռնագաղթեցրել էր այնտեղ Կիլիկիայից ու Կապադովկիայից, Հայաստան են բերվել նաև ասորիների, ադիաբենցիների, կորդվացիների և հրեաների հոծ զանգվածներ» [Լուկուլլոս, 21]: Մոտավոր հաշվարկներով Տիգրանի օրոք Հայաստան է բերվել

[201] Օտար աղբյուրները հայերի մասին: Հունական աղբյուրներ № 1: Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան,1940, գիրք XI, XIV, 6:

կես միլիոնից ոչ պակաս օտարերկրացի[202]:

Պլուտարքոսը ակնարկներ ունի նաև Տիգրանակերտի բնակչության ազգային խայտաբղետ կազմի մասին: Նրա հավաստմամբ՝ «Տիգրանակերտում ապրում էին մեծ թվով հույներ, որոնք բռնագաղթել էին Կիլիկիայից, և բարբարոսներ՝ ադիաբենացիներ, գորդիեններ, կապադովկիացիներ, հրեաների հոծ զանգվածներ, որոնց նույն բախտն էր վիճակվել. Տիգրանը ավերել էր նրանց քաղաքները, իսկ մարդկանց բռնի քշել և ստիպել բնակվել այստեղ» [Լուկուլլոս, 26]:

Հայտնի է, որ Տիգրանի օրոք հիմնադրված Տիգրանակերտ անունով քաղաքներ գոյություն են ունեցել, բացի Աղձնիքից, նաև Արցախում և Ուտիքում, Գողթնում՝ Տիգրանավան[203]: Սրանցում ևս պետք է տեղավորված լիներ վերաբնակների մի մասը: Հայկական աղբյուրներից ևս հայտնի է, որ օտարերկրացիները տեղավորվել են մասամբ նաև հին հայկական քաղաքներում, որպիսիք են՝ Արտաշատը, Արմավիրը, Երվանդաշատը, Բագրևանդի Զարեհավանը, Աղիովիտի Զարիշատը[204]: Փավստոս Բուզանդն էլ պատմում է բազմահազար հրեական բնակչության մասին, որը բնակեցրեց հայոց քաղաքներում մեծ արքա Տիգրանը իր դարում և իր ժամանակ[205]:

Վերաբնակվածների սոցիալ-տնտեսական վիճակը գնահատելու համար կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը,

---

[202] Տե՛ս **Г. Х. Саркисян,** Тигранакерт, Из истории древнеармянских городских общин, М., 1960, с. 60: Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Բ, ժզ:

[203] Տե՛ս Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, հրատ.՝ Ս. Մալխասյանցի, Երևան,1939, ԼԸ, էջ 125:

[204] Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Բ, ժզ:

[205] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Ս. Մալխասյանցի, Երևան,1968 Դ, ծե:

որ Տիգրան Մեծը ոչ թե տեղահանում էր տվյալ նվաճված քաղաքի բնակչության մի մասին, կամ որոշակի, ասենք, առևտրա-արհեստագործական խավերի, այլ Հայաստան էր տեղափոխում ամբողջական քաղաքային համայնքների՝ լրիվ կազմով: Ըստ Ստրաբոնի, օրինակ, նա, «ամբողջ Մաժաքը տեղահան անելով, քշեց Միջագետք և նրանով բնակեցրեց Տիգրանակերտի մեծ մասը»[206], իսկ ըստ Պլուտարքոսի՝ նա «տեղահան էր անում հունական քաղաքային համայնքները» [Լուկուլլոս, 14] և այլն:

Տիգրանը իր հիմնադրած քաղաքում բնակեցրեց նաև հայ ավագանու շատ ներկայացուցիչների: Պլուտարքոսի հաղորդման համաձայն՝ «…բոլոր մասնավոր անձինք և մեծատոհմիկները արքայի հանդեպ տածած սիրուց և հարգանքից դրդված (հոգում էին) քաղաքի աճի ու շենացման մասին, ուստի այն լի է գանձերով ու կառույցներով» [Լուկուլլոս, 26]:

Տիգրանակերտում, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը [Լուկուլլոս, 29, 4], կառուցված է եղել առանձին թատրոն, որի համար զանազան տեղերից հրավիրված են եղել հույն դերասաններ: Ազգային խայտաբղետությունը ավելի ցայտուն է երևում Տիգրանի բանակի կազմում: Տիգրանի բանակում կռվում էին նաև «իրենց համայն զորքով հայերն ու գորդիեննները (կորդվացիները, որոնք նույն հայերն էին Տիգրանի ժամանակ), իրենց զորքերի գլուխն անցած մեդիացի և ադիաբենացի

---

[206] Նվաճված երկրներում քաղաքային բնակչության առատությունից օգտվելով՝ Տիգրանը մի շարք վերաբնակեցումներ կատարեց Կիլիկիայից, Կապադովկիայից, Միջագետքից: Բացի Կապադովկիայի Մաժաք մայրաքաղաքից՝ վերաբնակեցվեցին նաև Կիլիկիայից՝ Սոլե Մալլոս, Ադանա, Էպիփանեյա և մի շարք այլ, ընդամենը 12 հելլենիստական քաղաքներ (Ստրաբոն, XII, II, 9, 15):

արքայիկները, բաբելոնյան ծովից [Պարսից ծոց] արաբական մեծաթիվ զորքերը, իսկ Կասպից ծովից աղվանից և նրանց սահմանակից իբերների ամբոխները… ոչ փոքրաթիվ, Արաքսի ափերի ազատ ցեղերը [ըստ երևույթին, նկատի ունի Ամուդարյա (Արաքսես) գետի ափերին բնակվող սակառաուկ («սև սկյութներ») կոչվող ցեղերը]» [Լուկուլլոս, 26]:

Իրենց նախկին բնակավայրերից նա (Տիգրան Մեծը) քշել էր նաև արաբական ցեղերի, որոնց բնակեցրել էր իր մայրաքաղաքի մերձակայքում (Տիգրանակերտ), որպեսզի նրանց օգտագործեր առևտրական կարիքների համար»[207] [Լուկուլլոս, 21]: Տիգրանը նրանց հանձնարարել էր տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողությունն ու պաշտպանությունը: Նրանք Տիգրանի համար մաքս էին գանձելու Եփրատի գետանցի մոտ, որը գտնվում էր Զեգմայի արևմտյան կողմում և Կիլիկիան Ասորիքից բաժանող Ամանոս լեռների լեռնանցքում[208]:

3.5.4. Հայերի տնտեսական կյանքը

Պլուտարքոսը Հայաստանը համարել է հարուստ ու ծաղկուն երկիր: Տնտեսական և մշակութային առումով կարևոր տեղեկություն է մայրաքաղաքի հելլենիստական տիպի խոշոր, գեղեցիկ, հարուստ մշակութային կյանքը: Այսպես, պատմիչը հաղորդում է. «Վերցնելով Տիգրանակերտում գտնված գանձերը՝ նա [Լուկուլլոսը] քաղաքը թողեց զինվորների թա-

---

[207] Հմմտ. **Հ. Հակոբյան,** Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը, ՊԲՀ, 2007, № 3, էջ 3-29:

[208] Տե՛ս **Я. А. Манандян,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н.э. – XV в. н. э.), 2-е изд., Е., 1954, էջ 71:

լանին, որոնք, բացի այլ բարիքներից, այնտեղ գտան նաև 8 հազար տաղանդ արծաթ [որ հավասար է 17 միլիոն ոսկի ռուբլու]: Այս ամենից բացի՝ «նա ռազմավարից հռոմեական ամեն մի զինվորի տվեց 800-ական դրաքմե», այսինքն՝ 280 ոսկի ռուբլի յուրաքանչյուրին [Լուկուլլոս, 29]: 8 հազար տաղանդն արծաթ դրամով հավասար կլինի, ըստ գերմանացի գիտնական Հուլչի հաշվումների, մոտ 34 միլիոն գերմանական ոսկի մարկի, իսկ 800 դրաքմեն կամ արծաթ դինարը՝ 560 ոսկի մարկի[209]: Տիգրան Մեծի տերության պալատներից մեկում զորավար Լուկուլլոսը «գտել էր մեծ քանակությամբ ոսկի և արծաթ և երեք միլիոն մեդիմնոս (մոտ 120 հազար տոննա) ցորեն»: Տիգրանակերտում, Պլուտարքոսի հավաստմամբ, կային առատ զանձեր և աստվածներին նվիրված թանկարժեք ընծայաբերումներ [Լուկուլլոս, 26]:

Պլուտարքոսը ակնարկ ունի նաև տեղական անխառն գինու թնդության մասին. «… Ամեն մարմին չէ, որ կարողանում է դիմանալ մեծաքանակ անխառն գինուն» [Լուկուլլոս, 25]: Ի դեպ, հին հույները, գինին կրատերի (կավե անոթի) մեջ ջրի հետ խառնելով, թնդությունը թուլացնելով խմելու սովորություն ունեին հնուց ի վեր (տե՛ս Քսենոփոն):

Ակնարկներ կան նաև ոսկերչության և արհեստագործության այլ ճյուղերի վերաբերյալ: Պլուտարքոսը գրում է, որ հռոմեացի զինվորները «բոլոր արշավանքների համար արժանի պարգևներ չեն ստանում, այլ դրա փոխարեն ուղեկցում են Լուկուլլոսի սայլերին և ուղտերին, որոնք բեռնված են ոսկե գավաթներով և թանկարժեք քարերով» [Լուկուլլոս, 34]: Կրասոսը ևս արշավեց Արևելք, «քանզի այդ երկրների բնակիչները միայն ավար են ու հարստանալու միջոց և ուրիշ ոչինչ…»

---

[209] **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 526:

[Լուկուլլոս, 36]:

Այստեղ ևս, որպես ազգագրական երևույթ, համառոտակի անդրադառնանք Պլուտարքոսի հիշատակած չափ ու կշռի միավորներին: Որպես տարածության չափի միավոր՝ հաճախ է հիշատակվում ասպարեզը [Անտոնիոս, 38]: 1 ասպարեզը Հին աշխարհում տարածության չափ է, որ ձին մի վազքով անցնում է, հավասար էր հունական ստադիոնի: 1 ստադիոնը 600 ոտնաչափ է: 1 ստադիոնը նաև հավասար է 185 մետրի: Հիշատակված է նաև գրկաչափը: 1 գրկաչափը հավասար էր 1,85 մետրի, 100 գրկաչափը նույնպես 1 ասպարեզ է: Ի դեպ, հին պարսկական ասպարեզը կամ ասպարիսաց ասպարեզը հավասար էր 230,112 մետրի[210]: Կանգունը 0,5 մ է: Նետընկեց տարածության մասին Պլուտարքոսը ակնարկում է Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին կայացած Տիգրանակերտի ճակատամարտում հռոմեական զորքի արագ հարձակման ճանապարհը մատնանշելիս [Լուկուլլոս, 27]: Դա երկարության այն մոտավոր չափն է, այն հեռավորությունը, մինչև ուր կարող է հասնել աղեղից արձակված նետը[211]: Պլուտարքոսը նշում է 80 ոտնաչափ երկարություն ունեցող **խոյ** կործանիչ մեքենայի մասին: Նա գրում է [Անտոնիոս, 36], որ արևելյան արշավանքի ժամանակ «300 սայլի վրա տանում էին պաշարողական մեքենաներ, այդ թվում՝ և 80 ոտնաչափանոց **խոյ** անվամբ պարսպակործան մեքենայի մասին: Դրամական միավորներից հիշատակված է **տաղանդը** և **մինա** դրամական միավորը, որը հավասար էր 1/60-րդ տաղանդի, արժեր 100 դրաքմե:

---

[210] Տե՛ս **Ստ. Մալխասեանց,** Հայերեն բացատրական բառարան, հ. I, ԵՊՀ հրատ., Երևան,2010, էջ 237:

[211] Տե՛ս **Ստ. Մալխասեանց,** Հայերեն բացատրական բառարան, հ. III, ԵՊՀ հրատ., Երևան, 2010, էջ 451:

Նյութական մշակույթ: Հագուստը:

Հայոց արքան կրում էր ծիրանի բաճկոն՝ կեսը սպիտակ և կեսը ծիրանի, շապիկ և լայն վարտիք: Գլխին դնում էր բարձր խույր, որի վրա ոսկով գործված էին իրար մոտ կանգնած և գլուխները դեպի հակառակ կողմը դարձրած արծիվներ: Հայկական տիարան կամ խույրը անտիկ դարաշրջանների քանդակներում, բարձրաքանդակներում, փորագիր քարերի (գեմա) և դրամների վրա պատկերված թագն է, որ հանդիսավոր պայմաններում կրում են Տիգրան Մեծն ու հաջորդ մի քանի Արտաշիսյան արքաներն ու ազգակից կոմմագենյան ճյուղի Երվանդունի թագավորները[212]:

3.5.5. Կենցաղային և ամուսնաընտանեկան որոշ սովորույթների մասին

Պլուտարքոսը իր երկում ակնարկներ ունի նաև Արևելքի «բարբարոս»* երկրների արքունիքներում բազմակնության, հարեմ ու հարճեր պահելու սովորույթի մասին: Ըստ նրա՝ Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի գրավումից հետո Տիգրան Մեծը ուղարկում է «մի ընտիր հեծելագունդ, որին հանձնարարված էր պաշարված մայրաքաղաք Տիգրանակերտից ազատել **իր կանանոցն** ու մեծագին գանձերը» [Լուկուլլոս, 23, 6]: Տիգրան Մեծը, ըստ Պլուտարքոսի, Արտաշատում էր թողել

---

[212] Մանրամասն տե՛ս **Հ. Պ. Հակոբյան,** Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 211-220:

* Բարբարոսը անտիկ դարաշրջանում չուներ հետագայում կիրառություն գտած վիրավորական երանգավորում և պարզապես նշանակում էր «ոչ հույն», «այլազգի», բարբարոսների թվից ավելի ուշ դուրս բերվեցին հռոմեացիները՝ որպես հույներին նվաճած և հելլենական մշակույթը ընդօրինակած ժողովուրդ:

օրինավոր կանանց և անչափահաս զավակներին [Լուկուլլոս, 31, 4]: Ինչպես Արևելքի այլ պետություններում, հայոց թագավորը ևս հարճերի աստիճանում էր պահում բազմաթիվ կանանց, կամ էլ նրանց մի մասին շնորհում էր իր կինը կոչվելու պատիվը: Թագավորի կանայք էլ կոչվում էին տիկիններ: Դրանց մեջ միայն մեկը, ըստ բարձր ազնվական ծագման, դառնում էր թագուհի և ստանում էր «տիկնանց տիկին» պատվանունը: Թագավորի աղջիկը սովորաբար կոչվում էր «օրիորդ հայոց»:

Նույնանման հաղորդումները բավական շատ են նաև Արևելքի մյուս երկրների արքունական և նախարարական միջավայրի վերաբերյալ: Հին աշխարհին, հատկապես Արևելքին բնորոշ սովորույթներից էին նաև մերձավորների ամուսնությունները: Բավական վկայություններ կան հայ պարթևական, հայ-մարական խնամիական կապերի վերաբերյալ:

Պատմագիրը գրում է նաև ժողովրդական բժշկության, թմրանյութեր պատրաստելու մասին: Պլուտարքոսը հակիրճ անդրադարձ ունի «ջրգողություն» հիվանդության [водянка] և թունավոր «ընձախոտ» բույսի մասին, որից պատրաստում էին և՛ թույն, և՛ դեղամիջոց [Կրասսոս, 33]:

3.5.6. Հելլենիստական մշակույթի դրսևորումները Հայաստանում Տիգրան Մեծի օրոք՝ ըստ Պլուտարքոսի

Պլուտարքոսը վկայություններ է թողել Տիգրանակերտի՝ ոչ միայն միջազգային առևտրի, արհեստների ու արդյունագործության, այլև հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության կենտրոն լինելու մասին: Այսպես, հույն նշանավոր հռետոր, Աթենքից աքսորված Ամփիկրատես Աթենա-

ցին, որը ապաստան էր գտել Տիգրանակերտում, զբաղվում էր գրական գործունեությամբ, գրել է «Տիգրանի վարքը»[213] երկը, որը մեզ չի հասել: Տիգրանի արքունիքում էլ նա գտել է իր վախճանը [Լուկուլլոս, 22]:

Տիգրան Մեծի պալատական պատմագիրն է եղել Մետրոդորոս Սկեպսիացին, որը գրել է «Տիգրանի պատմությունը»[214] վերնագրով մի երկասիրություն, որը դարձյալ չի հասել մեզ: Նա հռետոր, քաղաքական գործիչ, պատմաբան, փիլիսոփա էր և երկար տարիներ ծառայել է Միհրդատ Եվպատորին՝ վարելով Պոնտոսի գերագույն դատավորի պաշտոնը, այնուհետև ապաստան է գտել Տիգրան Մեծի արքունիքում: Պլուտարքոսի հավաստմամբ՝ Մետրոդորոս Սկեպսիացին մեծ իմացությամբ և պերճախոսությամբ հայտնի «բազմագիտուն այր» էր, որին անվանում էին «թագավորի հայր»: Պատմագիրը գրում է, թե երբ Միհրդատը սրան ուղարկել էր Տիգրանի մոտ՝ հռոմեացիների դեմ օգնություն խնդրելու, Տիգրանը նրան հարցրել էր. «Իսկ դու, ո՛վ Մետրոդորոս, այս դեպքում ինչպիսի՞ խորհուրդ կտաս»: Իսկ նա, գուցե Տիգրանին բարիք ցանկանալով, գուցեև Միհրդատին՝ չարիք, պատասխանել է. «Իբրև դեսպան խորհուրդ եմ տալիս օգնել, իսկ իբրև խորհրդատու՝ մերժել» [Լուկուլլոս, 22]:

Պլուտարքոսը հիշատակում է նաև, որ հայոց մայրաքաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը հրավիրել էր իր կառուցած մայրաքաղաքի թատրոնի հանդիսավոր բացմանը: Նա գրում է. «Տեղեկանալով, որ քաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը ամեն

---

[213] Տե՛ս **К. В. Тревер,** Очерки по истории культуры Древней Армении, էջ 12:

[214] Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը, ՊԲՀ, 1969, № 1, էջ 107-126:

կողմից հրավիրել էր իր կառուցած թատրոնի հանդիսավոր բացմանը, Լուկուլլոսը օգտագործեց նրանց՝ ի պատիվ իր հաղթանակի կազմակերպված խաղերում ու հանդիսություններում» [Լուկուլլոս, 29]:

Թե ինչպիսի խոր արմատներ էր ունեցել հելլենական կրթությունը հայկական արքունիքում, երևում է նրանից, որ Տիգրան Մեծին հաջորդած նրա որդի Արտավազդ II-ը գրում էր հունարեն ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը հայտնի են եղել իրենից երկու հարյուրամյակ ավելի ուշ ապրած Պլուտարքոսին [Կրասսոս, գլ. 33, 1]: Տիգրան Մեծը, ինչպես և Միհրդատ Եվպատորը, անտարակույս հելլենիստական տիպի միապետներ էին, որոնք բուռն թափով առաջ էին տանում Ալեքսանդր Մակեդոնացու ու նրա հաջորդների քաղաքակրթական մեծ գործը:

3.5.7. Ծեսերն ու պաշտամունքը՝ ըստ Պլուտարքոսի

Հույն պատմիչը ակնարկներ ունի նաև Տիգրան Մեծի արքունիքում որոշ ծեսերի և պալատական վարվելակարգի մասին: Այսպես, նա գրում է, թե «նրա (Տիգրանի) մոտ շատ թագավորներ կային սպասավորի դրությամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապես պահում էր իր մոտ՝ որպես ուղեկից կամ թիկնապահ, երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ խիտոններ [անթև վերնազգեստ] հագած, վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը՝ ձեռքները կրծքներին: Համարվում էր, որ այդ դիրքը լավագույնս էր արտահայտում իրենց ստրկական կախվածության լիակատար ընդունումը:

Տիգրան Մեծը ճանաչված էր «արքայից-արքա», ուստի,

Պլուտարքոսի հավաստմամբ, նրան զայրացրել էր այն հանգամանքը, որ Լուկուլլոսը «իր գրության մեջ իրեն անվանել էր «արքա» և ոչ թե «Արքայից-արքա», որի պատճառով Տիգրանը ևս իր պատասխանի մեջ Պոնտոսի արքա Միհրդատ VI-ին չհանձնելու վերաբերյալ գրավոր պատասխանում Լուկուլլոսին չէր անվանել իմպերատոր» [Լուկուլլոս, 21]: Այս ժամանակ իմպերատորը պաշտոն էր, որ սենատը շնորհում էր կարճ ժամանակով: «Իմպերատոր» տերմինը գործածվում էր նաև որպես պատվո տիտղոս: Բայց և օգտագործվել է առավել լայն առումով և տրվել ռազմական ու դատական լիիրավ իշխանությամբ օժտված զորահրամանատարին, կոնկրետ դեպքում նման տիտղոսով դիմում էին Լուկուլլոսին: Պլուտարքոսի գրքի նույն հատվածում հանդիպում ենք Հին աշխարհի ևս մի սովորույթի, ըստ որի՝ նշանավոր արքաները, զորեղ, բայց և թշնամի տերության արքայի դեսպանին պատշաճ դիմավորելուց բացի, ճանապարհում են թանկարժեք նվերներով: Պլուտարքոսը գրում է. [Տիգրան Մեծը] «Ապպիոսին [Լուկուլլոսի դեսպանին – Ռ. Ն.] շքեղ նվերներ ուղարկեց, իսկ երբ վերջինս մերժեց ընդունել, դրանց ավելացրեց նոր նվերներ ևս: Ապպիոսը, որպեսզի չկարծեն, թե նվերները մերժում է ընդունել Տիգրանի հանդեպ թշնամության պատճառով, վերցրեց միայն մեկ [ոսկե] գավաթ…» [Լուկուլլոս, 21]:

Հայոց Տիգրան Մեծ թագավորը մի ամբողջ պաշտամունք էր իր ժողովրդի համար՝ որպես «Աստված»: Կենդանի թագավորի պաշտամունքի սկիզբը կապվում է Տիգրան II-ի անձի հետ: Առաջին դրսևորումը Տիգրանի «Աստված» պատվանունն էր, որ վկայակոչված է անտիկ պատմագիրների մոտ, մյուսը՝ Տիգրանի պատկերով դրամները, որոնց վրա դրոշմված է նույն պատվանունը: Նույնպիսի եզրակացությունների տեղիք է տա-

լիս դրամների վրա պատկերված արքայի դիմանկարը, որը ներկայացված է իդեալականացված դիմագծերով, ինչպիսիք հատուկ են աստվածացված անձնավորություններին: Եվ դա հասկանալի է, երբ նկատի ենք առնում Տիգրան Մեծի փառքն ու համբավը իր ժամանակվա աշխարհում:

Պլուտարքոսը ուշագրավ հաղորդում ունի Անահիտ դիցուհուն նվիրվող երինջների զոհաբերման սովորույթի մասին: Սրբազան երինջներ էին նվիրվում Արտեմիսին (Անահիտին), որին Եփրատի մյուս ափին բնակվող բարբարոսները առավել են պաշտում, քան մյուս աստվածներին [Լուկուլլոս, 24, 4-8]: Նրանք այս երինջներից օգտվում էին միմիայն զոհաբերությունների համար, իսկ ընդհանրապես այդ տեղերում երինջներն ազատ շրջում էին, և ամեն մեկը կրում էր իր վրա խարանադրոշմ մի ջահ, որն աստվածուհու նշանն էր: Անահտական պաշտամունքը տարածված էր Փոքր Ասիայում, բայց ոչ մի տեղ նա այնքան փայլ և ընդարձակ ժողովրդականություն չստացավ, ինչպես Հայաստանում: Ի դեպ հույները, ինչպես և հայերը, Արտեմիսին համարում էին ծննդաբերությունը հովանավորող աստվածուհի [Ալեքսանդր, 3]:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Պլուտարքոսի վկայությունները չափազանց արժեքավոր աղբյուր են հելլենիստական դարաշրջանում ինչպես մեր, այնպես էլ հարևան երկրների պատմաքաղաքական, տնտեսական և մշակութային իրավիճակը գնահատելու առումով:

3.6. Գայոս Պլինիոս Ավագ Սեկունդոս

Հռոմեական ականավոր պատմագիր, գիտական ու քաղաքական գործիչ Գայոս Պլինիոս Ավագ Սեկունդոսը ծնվել է Ք.հ. 23 թ. Հյուսիսային Իտալիայի Կոմ քաղաքում, մահացել է 79 թ. օգոստոսի 24-ին՝ Վեզուվի ժայթքման հետևանքով, 56 տարեկան հասակում: Ունեցել է բեղմնավոր գրիչ. գրել է յոթ մեծածավալ գործեր. «Գերմանական պատերազմներ»՝ 20 գրքով, «Պատմություն»՝ 31 գրքով, Բնական պատմությունը՝ 37 գրքով և այլն: Նշվածներից մեզ է հասել միայն «Բնական պատմությունը»: Այն անտիկ բնագիտական մտքի մի յուրահատուկ հանրագիտարան է, որտեղ արժեքավոր ու բացառիկ տեղեկություններ են պահպանված տիեզերագիտության, երկրագործության, աշխարհագրության, բուսական ու կենդանական աշխարհների, հանքաբանության, բժշկության, տեղ-տեղ նաև հին աշխարհի երկրների քաղաքական, մշակութային պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Հայագիտության համար հատկապես կարևոր են Պլինիոսի տեղեկությունները Հայաստանի բնակլիմայական պայմանների, բնաշխարհի, հանքային հարստությունների, քաղաքների ու վարչական բաժանման մասին, որոնք շատ հաճախ եզակի են ու անփոխարինելի[215]:

---

[215] Պլինիոս Ավագից օգտված հատվածները քաղված են Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, որը կատարված է «Plinit Secundi C. Naturalis historiae, Vol. 1-10, Cambridge, Mass. London, 1950-1962 (Loeb Classical)» հրատարակությունից: Առանձին հատվածներ տպվել է նաև «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թ., կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2007» գրքում էջ 287-292:

Հին Հայաստանի տարածքը, քաղաքները, ֆիզիկական աշխարհագրությունը ըստ Պլինիոսի հավաստումների: Առանձնապես արժեքավոր տեղեկություններ են պարունակում «Բնական պատմություն» V և VI գրքերը: VI գրքում պատկերացում է տրվում Մեծ Հայքի թագավորության ընդգրկած տարածքի մասին. այն 5.000.000 քայլ է: Կլավդիոս կայսրը նրա երկարությունը՝ արևմուտքից դեպի արևելք՝ Դասկուսայից (Փոքր Հայք) մինչև Կասպից ծովի ափը հաշվում է 1.300.000 քայլ, իսկ լայնությունը՝ Տիգրանակերտից մինչև Իբերիա, որի սահմանագիծը Մեծ Հայքի հետ անցնում էր Կուր գետով՝ այդ թվի կեսը: Այսինքն՝ Մեծ Հայքը արևմուտքից դեպի արևելք ձգվում է 1300 մղոն (1950 կմ), իսկ հարավից մինչև հյուսիս՝ 650 մղոն (975 կմ): Ակադ. Ս. Երեմյանի ուսումնասիրությունների համաձայն՝ այդ թվերը չափազանցված են, այն պետք է լինի՝ երկարությունը 870 կմ, լայնությունը՝ 550 կմ[216]:

Պլինիոսի հավաստմամբ՝ Հայաստանի արևելյան սահմանը սահմանագծված էր Կերավնյան լեռներով («Աշխարհացոյց»-ում այն կոչվում է «Կապ-կոհ լերինք», որը հյուսիսից եզերում է Աղվանքը) և Ադիաբենեով: Միջանկյալ տարածքում էր գտնվում Սոփենը (Ծոփքը): Ձախ կողմում մեդիացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը: Մեծ Հայքի տարածքը նշված սահմաններով արձանագրված է Տիգրան Մեծի և զորավար Պոմպեոսի միջև կնքված դաշնագրով, ըստ որի՝ Մեծ Հայք պետությունը ընդգրկում էր 312.795 կմ^2 տարածք: Հետագայում մասնակիորեն փոփոխության է ենթարկվել: Մ.թ. 37 թ. Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև կնքված պայմանագրով՝ Մեծ Հայքից անջատվեց և պարթևնե-

[216] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 836, ծանոթ. 78:

րի պետությանը կցվեց «Միջագետք Հայոց» տարածաշրջանը (ներառյալ Տուր-Աբդին (Ծավդեք)) և Արուաստան գավառները՝ 27.600 կմ² տարածքով և Մծբին քաղաքով: Պլինիոս Ավագի հաղորդած տեղեկություններից երևում է, որ Կլավդիոս կայսեր (41-54) կարգադրությամբ մանրամասն ուսումնասիրվել է Մեծ Հայքի թագավորության տարածքը և կազմվել է քարտեզ, որը հետագայում օգտագործել է Պտղոմեոսը: Այն օգտագործվել է նաև Պլինիոսի գրքում: Նրա գրքի VI գրքում տրված է նաև Մեծ Հայքի 120 ստրատեգիաների վարչատարածքային միավորների մասին, որոնք կոչվում էին նաև պրեֆեկտուրաներ (զորավարություններ):

Պատմագիրն առանձին-առանձին անդրադառնում է Մեծ և Փոքր Հայքերին, և որպես ուղեցույցներ օգտագործված են Հայաստանով հոսող գետերը: Ըստ նրա՝ Մեծ Հայքը սկսվում է Պարիադրեսի լեռներից (Պարխարյան կամ Խաղտյաց լեռների մասին է խոսքը – Ռ. Ն.), հարևան Կապադովկիայից այն բաժանված էր Եփրատ գետով, իսկ Միջագետքից՝ Տիգրիսով և Նիփատես (Նպատ) լեռնաշղթայով: Լայնությամբ այն տարածվում է մինչև Կյուրոս գետը (Կուր)՝ անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ երկարությամբ՝ մինչև Փոքր Հայք, որից բաժանված է Եվքսինյան Պոնտոսի (Սև ծովի) մեջ թափվող Ապսարոս գետով (Ճորոխ) և Պարիադրես լեռներով:

Պատմագիրը ակնարկներ ունի Մեծ Հայքի քաղաքների և գտնվելու տեղերի մասին. Ար(սա)մոսատը (Արշամաշատ), Եփրատին մոտ՝ Արկաթիոկերտը (Ծոփքի մայրաքաղաք), Տիգրիսի մոտ մի բլրի վրա՝ Տիգրանակերտը, Արտաշատը Արարատյան դաշտում, Արաքս գետի մոտ և այլն: Ըստ որում, Տիգրանակերտը, ըստ պատմագրի, գտնվել է Տիգրիսի ձախակողմյան վտակ Պարթենիոս (Նիկեփորիոն) գետի ափին: Ըստ

նրա հիշատակությունների՝ Փոքր Հայքի հայտնի քաղաքներն էին՝ Կեսարիան, Ազան, Նիկոպոլիսը՝ բոլորն էլ Գայլ գետի հովտում:

Բավական հանգամանալի են ներկայացված Հայաստանի գետերը: Նախ խոսվում է Եփրատի մասին և ասվում, որ գետը բխում է Մեծ Հայքի Կարենիտյան պրեֆեկտուրայից: Սա Կարնո գավառն է՝ Բարձր Հայքի 9-րդ գավառը (այժմյան Էրզրումի սանջակը): Այս գավառում էին գտնվում Եփրատ գետի ակունքները: Եփրատը նախ կոչվել է Պյուքսիրատ[ես], սկիզբ է առնում Աբա և Կապոտեն լեռների ստորոտներից. հոսում է Կապադովկիայից՝ բաժանելով նախ Դերքսենեն (Դերջանը, Բարձր Հայքի 6-րդ գավառը), ապա Անաիտիսը (Անահտական կամ Եկեղյաց գավառն է՝ Բարձր Հայքի 4-րդ գավառը, անտիկ հեղինակների Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը), որոնք Հայաստանի շրջաններն են եղել[217]: Դասկուսա (բնակավայր Փոքր Հայքում, այժմյան Արաբկիր-չայի գետաբերանից արևմուտք, Կողբենիք գյուղից հյուսիս) բնակավայրից մինչև Պաստոնա՝ Եփրատը նավարկելի է 50.000 քայլ տարածության վրա, մինչև Կապադովկիայի Մելիտինե քաղաքը (գետի երկարությունն է) 24.000 քայլ, մինչև Հայաստանի Ելեգեա (Եղեգիսի ջերմուկներն են՝ Կարինից արևմուտք) քաղաքը՝ 10.000 քայլ, այս տարածության վրա գետը ընդունում է Լյուկոս (Գայլ գետի մասին է խոսքը, որ Երզնկայի մոտ թափվում է Եփրատ գետը), Արսանիաս և Արսանոս գետերը: Արսանիասը հայկական սկզբնաղբյուրներում Արածանի գետն է՝ Արևելյան Եփրատ, այժմ կոչվում է Մուրադ-չայ: Ելեգեայում գետը հանդիպում է Տավրու լեռանը, հոսում է 12.000 քայլ հաս-

[217] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր 1, էջ 288:

տություն ունեցող Տավրոս լեռան զանգվածով: Գետը Օմիրաս է կոչվում, երբ լեռն է ներխուժում, այն հաղթահարելուց հետո արդեն կոչվում է Եփրատ: Իր ակունքներից մինչև Տավրոսյան լեռները, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում Եփրատի երկարությունը կազմում է ավելի քան 600 կմ:

Պատմագրի խոսքերով՝ Մեծ Հայքը ծնունդ է տալիս թե՛ Եփրատին և թե՛ Տիգրիսին, որոնք էլ սկզբնավորում են Միջագետքը, որը տարածվում է երկու գետերի միջև:

Ակնարկներ Անահիտ դիցուհու պաշտամունքի վերաբերյալ: Ստրաբոնից բացի՝ Պլինիոսը ևս անդրադառնում է Անահիտի պաշտամունքին. «Ասում են, որ ոսկեձույլ առաջին արձանը, որ նախորդել է մուրճով կոփված բրոնզաձույլ արձաններին, կանգնեցվել է Անահիտիս աստվածուհու տաճարում», որը, ըստ պատմագրի, գտնվել է Անահիտիս կոչված գավառում (Անահտական)՝ Բարձր Հայքի Եկեղյաց գավառում[218]: Նրա հավաստմամբ՝ արձանը Անահիտի տաճարից հափշտակվել է Մարկոս Անտոնիոսի կողմից հայկական արշավանքների ժամանակ՝ Ք.ա. 35 թ.:

Ըստ պատմիչի՝ բոսնիացի մի վետերանի սրախոսության համաձայն՝ վերջինիս հյուր եկած Ավգուստոսը (խոսքը Հռոմի կայսր Գայոս Օկտավիանոս Օգոստոսի մասին է) ճաշի ժամանակ հարցնում է նրան, թե ճիշտ է արդյո՞ք, որ այդ արձանը սրբապղծող առաջին մարդը մահացել է կուրանալուց և անդամալույծ դառնալուց հետո: Վետերանը պատասխանում է, որ Ավգուստոսի պատվին տրված ճաշը հենց աստվածուհու

[218] Տե՛ս «Բնական պատմություն», գիրք V, գլ. XX:

արձանի առաջին հափշտակողի հաշվին է եղել, որի ամբողջ հարստությունն այդ ավարի շնորհիվ է գոյացել[219]:

Այսպիսով, Պլինիոսի գրքից տեղեկանում ենք, որ Անահիտի ոսկյա արձանը Եկեղյաց գավառում Երիզա ավանում ջարդուփշուր են արել և ոսկին բաժան-բաժան արել Անտոնիոսի ու իր զորքի միջև: Դրանից հետո, սակայն, նույն տեղում նորից ոսկյա արձան է դրվել, քանզի հայոց բոլոր աստվածներն ունեին իրենց մեհյանները և արձանները:

Ակնարկները Տիգրան Մեծի կատարած վերաբնակեցումների վերաբերյալ: Խոսելով Ք.ա. 93 և 91 թթ. Տիգրան Մեծի պարթևական արշավանքների մասին, նշում է, որ Տիգրանը փոխադրեց Հարավային Միջագետքից և բնակեցրեց Օսրոյեն-Եդեսիայի շրջաններում արաբական թափառական ցեղեր, որոնց հանձնարարեց տարանցիկ առևտրային ճանապարհների վերահսկողությունը: Տիգրանի համար նրանք մաքս էին գանձելու, գլխավորապես Եփրատ գետի անցքի մոտ, որը գտնվում էր Զեգմայի արևմտակողմում[220]:

Ակնարկներ դեղաբույսերի, ժողովրդական բժշկության վերաբերյալ: Գովաբանել է հայկական բնաշխարհը, մասնավորաբար դեղաբույսերը: Ըստ նրա հավաստման՝ Միհրդատ Պոնտացին Հայաստանում աճող բույսերից պատրաստել էր տալիս դեղեր: Հայաստանը հայրենիքն է մի շարք արժեքավոր խեժաբեր բույսերի, այդ թվում՝ հոչակավոր **ուպանի,** որն օժտում էր սեռական կարողությամբ, փորձում էին դրա օգնությամբ վերադարձնել կորցրած առողջությունը և երիտասարդությունը: Ուպանի բուժիչ, եռանդը բարձրացնող հատկու-

---

[219] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 499:
[220] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 152-155:

թյունները խիստ հարգի էին Հռոմում: Պատմիչի տեղեկացմամբ՝ Հայաստանում աճում էր նաև թմրեցնող հատկություններ ունեցող մի բույս, որը մեղմացնում էր վայրի գազանների զայրույթը[221]: Պատմիչը հիշատակում է նաև **adamantis** բույսը, որին առյուծը մոտենալով՝ ուժասպառ ընկնում է, բժշկագիտական բույս **laser**-ը և **orobitis** ներկը, որը օգտագործում էին նկարիչները, Հայաստանից արտահանվող **armenium** քարը, ներկատու և բուժիչ այլ քարեր[222]:

Այսպիսով Պլինիոս Ավագի թողած տեղեկությունները թեև բազմաբովանդակ ու նորահայտ չեն, այդուհանդերձ այլ պատմիչների վկայությունների հետ համադրելով՝ կարելի է ունենալ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի պատմաքաղաքական, սոցիոմշակութային պատկերը:

3.7. Ապպիանոսի «Հռոմեական պատմությունը» հայ ազգագրության սկզբնաղբյուր

Ապպիանոս Ալեքսանդրացու (Ք.ա. II դարի սկիզբ – II դարի 70-ական թթ.) «Հունական պատմություն» 24 գրքից բաղկացած աշխատությունից պահպանվել են 6-8, 11-17 գրքերը: Հայաստանի և հայերի մասին առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 11-րդ՝ «Սիրիական», և 12-րդ՝ «Միհրդատական» գրքերը[223]:

---

[221] Տե՛ս **Ս. Վարդանյան,** Հայաստանի բժշկության պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան,2000, էջ 31:

[222] Տե՛ս **Հ. Т. Еремян,** Развитие городов и городской жизни в древней Армении // ВДИ, 1953, N3:

[223] Ապպիանոսից մեջբերված հատվածների թարգմանությունը կատարել է Ս. Մ. Կրկյաշյանը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, կազմողներ՝ Հովհաննիսյան Պ. Հ., Մովսիսյան Ա. Երևան,ԵՊՀ հրատ.,

Ապպիանոսի տեղեկությունները հիմնականում վերաբերում են Տիգրան Մեծի գահակալության շրջանին:

Տիգրանակերտ մայրաքաղաքի, վերաբնակեցումների վերաբերյալ: Ուշագրավ են Տիգրան Մեծի վերաբերյալ տեղեկությունները, որոնք լիովին համընկնում են պատմահայր Մովսես Խորենացու հիշատակություններին: Ըստ Ապպիանոսի՝ Տիգրան Մեծը Տիգրան Ա-ի որդին է, իսկ Արտավազդը, որը անժառանգ էր՝ վերջինիս եղբայրը: Մյուս կարևոր տեղեկությունը՝ Ք.ա. 83 թ. Տիգրան Մեծը, նվաճելով Սելևկյան Ասորիքը, Անտիոքը դարձրեց իր տերության երրորդ՝ հարավային մայրաքաղաքը, որտեղ էլ հատվում էին արքայի անունով և պատկերով դրամները:

Իր անունով, ըստ Ապպիանոսի, Նիկեփորիոն (Ֆարկինսու) գետի ափին հիմնում է Տիգրանակերտ կամ Տիգրանապոլիս մայրաքաղաքը, որտեղ էլ թագադրվում է առաջին անգամ (XII, 67): «Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն (1 կանգունը հավասար 0,5 մ) բարձրությամբ, պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ, իսկ արվարձանում արքան կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով, ձկնավազաններով, մերձակայքում էլ՝ մի հզոր բերդ (XI, 84, էջ 347): Այնուհետև մանրամասն հիշատակում է Տիգրան Մեծի նվաճումների և նվաճված ժողովուրդների զանգվածային վերաբնակեցումների մասին և՛ բուն հայրենիքում, և՛ տերության մաս կազմող Միջագետքում:

Երևան, 2007): Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ապպիանոսի «Հռոմեական պատմություն» երկը՝ հայոց պատմության և մշակույթի կարևոր սկզբնաղբյուր»//«Էրեբեր», ՀՀ ԳԱԱ հաս. գիտ. 2017, № 3 և **նույնի**՝ Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները ..., էջ 163-178:

Ըստ որում՝ իր նոր կերտած մայրաքաղաքի վերաբնակեցումը Տիգրան Մեծը իրականացրել է երբեմն նաև դաժանությամբ՝ ունեցվածքը բռնագրավելու սպառնալիքով: Ըստ նրա՝ վերաբնակեցվեց 30 բյուր մարդ: Աղձնիքում, նաև Արցախում, Ուտիքում և Գողթնում հիմնում է իր անվամբ քաղաքներ, որոնք համալրվում են վերաբնակեցումների հաշվին: Վերաբնակեցումներ են կատարվել նաև Արտաշատում, Արմավիրում, Երվանդաշատում, Բագրևանդ գավառի Զարեհավանում, Աղիովիտի Զարիշատում: Այս տվյալները համալրվում են նաև հայկական աղբյուրների հաղորդումներով[224]: Ապպիանոսը հռոմեական կայսրության ջատագով պատմագիր լինելով՝ օբյեկտիվ է նկարագրում հռոմեական բանակի կորուստները՝ Արածանիի ճակատամարտում (Ք.ա. 68 թ. սեպտեմբերի կեսերին)՝ 24 տրիբուն, 150 ցենտուրիոն, այսինքն՝ շատ հրամանատարներ:

Հին հայոց տնտեսական կյանքի, նյութական մշակույթի և կենցաղամշակութային որոշ սովորույթների վերաբերյալ հաղորդումները ըստ Ապպիանոսի: Ազգագրագետի համար չափազանց կարևոր են հին աշխարհում օգտագործվող տարածության, չափ ու կշռի, դրամական միավորների վերաբերյալ պատմագրի հաղորդումները: Այսպես, նրա երկում հաճախ է գործածված տարածության չափ **ասպարեզը** (XII, 85): Երկարության չափ ասպարեզը հավասար էր հունական **ստադիոնի**: 1 ստադիոնը 600 ոտնաչափ է, որը հավասար է 185 մետրի, այլ տեղերում՝ 177 մետրի: Հիշատակված հին պարսկական **աս-**

[224] Տե՛ս Սեբեոս եպիսկոպոսի «Պատմություն», Երևան, 1939, էջ 125, Փավստոս Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի. Վենետիկ, 1832, Դ. ԾԵ, Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց, Բ, Ժզ:

պարեզը կամ **ասպարիսաց ասպարեզը** հավասար էր 230.112 մետրի:

Սքոյնոսը երկարության չափ է՝ հավասար է 40 ստադիոնի կամ 7.080 մետրի:

Գրկաչափ: 1 գրկաչափը հավասար է 1.85 մետրի, 100 գրկաչափը 1 ասպարեզ է:

Կանգուն: Կանգունը 0,5 մետր է: Ապպիանոսը Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը 50 կանգուն է մատնանշում (XII, 84): **Կանգունը** ըստ տեղի ու ժամանակի ունեցել է տարբեր չափեր: Այն ներկայացվել է նաև որպես մեկ մետրանոց կամ 1 արշինանոց (71 սմ) երկարության կամ բարձրության[225]:

Դրամական և կշռի միավորներ.

Տաղանդը և **մինան** պատմագիրը հիշատակել է և՛ որպես դրամական, և՛ որպես կշռի չափ:

Տաղանդը ծանրության չափ է: Հին աշխարհում բաբելոնական տաղանդը 32 կգ 600 գրամ է, ատտիկյան տաղանդը՝ 26,2 կգ, այլ աղբյուրներում՝ հունականը՝ 40,8 կգ, հռոմեականը՝ 40: Իբրև փող՝ մի տաղանդ արծաթ կամ ոսկի: Արծաթե տաղանդը **դրաքմե (դրախմա)՝** հին ժամանակ ոսկի տաղանդի մի տասներորդ արժեքն ուներ: Ըստ Ապպիանոսի՝ Տիգրան Մեծը որպես ռազմատուգանք Հռոմին էր վճարելու 6000 տաղանդ (XII, 104):

Նույն տեղում պատմագիրը փաստում է, որ Տիգրան Մեծը նաև յուրաքանչյուր հռոմեական զինվորին բաժանեց 50 դրաքմե, վաշտի հրամանատարին՝ 1000, իսկ տրիբունին՝ 10000: Մի

---

[225] Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Եր., 2010, էջ 188

առիթով էլ Ապպիանոսը վկայում է, որ Միհրդատը պատերազմական գործողությունների համար հրամայել էր պատրաստել մեծ քանակությամբ նավեր ու զենքեր և մթերել էր տվել զորքի պարենավորման համար երկու միլիոն մեդիմե ցորեն (մոտ 5 մլն փութ):

Դահեկան – պարսկական ոսկի կամ արծաթ դրամ է և մեծ տարածում ուներ հռոմեական կայսրությունում: Այն նաև կշռի չափն էր: Կշռում էր 8,40 գրամ: Այն, ըստ Շիրակացու, հավասար է 24 կերատի կամ 96 գարեհատի, 6 դանգի: 300 դահեկանը կշռում է 1 տաղանդ (ատտիկյան՝ 26,2 կգ):

Մեդիմե կամ մեդիմոսը տարողության չափ էր և կշռում էր 52,5 լիտր:

Մետրետեն ևս հեղուկների չափ էր և կշռում էր 32,5 լիտր:

Մինա – մինան և՛ կշռի, և՛ դրամական միավոր էր. կազմում էր տաղանդի 1/60 մասը և հավասար էր 100 դրախմայի:

Ուշագրավ են Ապպիանոսի վկայությունները Տիգրան Մեծի հագ ու կապի վերաբերյալ: Ըստ նրա՝ Տիգրան Մեծը կրում էր բաճկոն՝ կեսը սպիտակ, կեսը՝ ծիրանի, շապիկ և լայն վարտիք, գլխին դնում էր բարձր խույր, որի վրա ոսկով բանված էին հպված կանգնած և գլուխները դեպի հակառակ կողմը դարձրած արծիվներ: Այն նաև ակնեղենով զարդարված միանձնյա իշխանության խորհրդանիշ էր: Վենետիկի Մխիթարյան միաբանության հավաքածուում գտնվող գեման պատկերում է հայոց թագուհու, նրա գլխին բարձրադիր կոնաձև թագը՝ առանց ականջակալների և ծոծրակին իջնող ծածկոցի: Այն պսակված է չորս ատամներով և զարդարված աստեղային նախշով:

Տիարան վերնամասում չորս կամ հինգ ատամներով ավարտվող հատած կոնի տեսք ունի: Սրանից ներքև են սա-

հում զույգ ականջակալներ և ծոծրակին իջնող ծածկոց: Տիարան պատկանելով աստվածացված գահակալին, ընդօրինակվեց նաև արվեստում՝ աստվածային կերպարների պատկերագրության մեջ: Ըստ պատմաբան, հնագետ Հ. Հակոբյանի՝ Տիգրան Մեծի տիարայի վրա պատկերված է նրա հովանավոր արևի աստվածը, ամենայն հավանականությամբ՝ Միհրը, իսկ նրա շուրջ՝ Տիգրանի փառքը և բախտը[226]:

Ի դեպ, Ապպիանոսը հաղորդում է նաև, որ Տիգրանի զինվորները կրել են ապարանջաններ և գոմարտակներ (վզնոց): Բնականաբար, Տիգրանի զինվորները ևս կարևոր տեղ էին տալիս խորհրդանշական զարդերին՝ թերևս արժևորելով դրանց պաշպանիչ նշանակությունը: Դա նկատելի է եղել Տիգրանակերտի ճակատամարտում ընկած Տիգրանի զինվորների վրա, ըստ որում՝ հռոմեացի զորավարը արգելել է դիակողոպուտը (XII, 85):

Ապպիանոսը տարբեր առիթներով անդրադարձել է նաև հայոց կենցաղային և սոցիալական որոշ սովորույթների ևս: Այսպես, նրա վկայությամբ հայերը խնամիական կապերի մեջ են եղել թե՛ պարթևների և թե՛ մարերի հետ: Պարթև Արշակ IX-ը (123-87) ամուսնացած էր Տիգրան Մեծի դստեր՝ Ավտոմա Արիազատեի հետ: Ապպիանոսը անդրադարձել է հին Արևելքին բնորոշ մերձավորների ամուսնություններին: Թվարկվածների շարքում է նաև Տիգրան Մեծի կինը, որը եղել է իր հորեղբոր դուստր Զարուհին, որին անվանակոչել էին հոր՝ Զարեհի անունով[227]:

---

[226] Տե՛ս **Հ. Հակոբյան,** Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 211-220:
[227] Տե՛ս նաև **Մ. Խորենացի,** Ա, ծգ:

Ապպիանոսը ուշադրություն է դարձրել նաև Արևելքի երկրների արքունիքներում հարճեր պահելու սովորույթին: Ապպիանոսի հաղորդմամբ, երբ Տիգրանակերտը պաշարման մեջ էր հայտնվել, հայկական 6000-ոց հեծյալ գունդը ճեղքել է Տիգրանակերտը պաշարած հռոմեացիների շարքերը և նրանց միջով մտնելով բերդ՝ այնտեղից խլել ու դուրս է բերել (հայոց) թագավորի հարճերին ու գանձերը (XII, 85): Նույնանման պատումները բավական շատ են նաև Արևելքի մյուս երկրների արքունական և նախարարական միջավայրի վերաբերյալ: Հարեմների ընդարձակությունը, այնտեղ փակված կանանց և հարճերի բազմությունը համարվում էին տիրողի երջանկության, հարստության և կարողության գլխավոր նշաններ:

Հռոմեական սկզբնաղբյուրներում Հայաստանի մեծ ուշադրության արժանանալը պայմանավորված էր այն բանով, որ մի կողմից՝ այստեղով էր անցնում միջազգային առևտրական ուղիների հյուսիսային մեծ գիծը, մյուս կողմից՝ ուներ ռազմավարական մեծ կարևորություն: Հսկայական բնական մի միջնաբերդ էր և ուներ առաջնային նշանակություն ինչպես պաշտպանական, նույնպես և հարձակողական պատերազմի համար: Իբրև պարթևների բարեկամ՝ Հայաստանը անհանդուրժելի մի վտանգ էր Հռոմեական արևելյան նահանգների համար, իսկ իբրև Հռոմի դաշնակից՝ այս դեպքում սպառնալիք էր Պարթևական թագավորությանը: Ուստիև քաղաքական մերձեցումը Հայաստանի հետ կամ նրա բռնի նվաճումը ամենահիմնական հարցն էր թե՛ Հռոմի և թե՛ պարթևների ու Պարսկաստանի արտաքին քաղաքականության համար:

3.8. Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» երկը անտիկ դարաշրջանի Հայաստանի և հայերի մասին

Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը (շուրջ 155-235 թթ.) ուշ անտիկ շրջանի հռոմեական խոշորագույն պատմիչներից է, որի «Հռոմեկան պատմություն» մեծածավալ երկասիրության 80 գրքից պահպանվել են միայն 24-ը, 36-60-ը, իսկ մյուսներից հատվածներ հաղորդվել են բյուզանդական տարեգիրների միջոցով: Այն կարևոր սկզբնաղբյուր է I դ. Ք.ա. – II դ. Ք.հ. Հայաստանի ռազմաքաղաքական պատմության, ինչպես նաև ազգագրական երևույթների ուսումնասիրության համար[228]:

Դիոն Կասսիոսը հայոց երկրի բնական հարստությունների, սահմանների, տարածքային ընդգրկումների, քաղաքների մասին: Ըստ պատմիչի՝ Ք.ա. 69 թ. հոկտեմբերին Տիգրանակերտի պաշարման ժամանակ «բարբարոսները» (Տիգրանակերտի պաշտպանները – Ռ. Ն.) նետաձգությամբ և պաշարողական մեքենաների վրա թափած նավթով մեծապես վնասեցին հռոմեացիներին: Դա կուպրաշատ, բոցավառվող նյութ էր, հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցնելը» (գ. 36, գլ. 2): Իրապես, Հայաստանում նավթի առկայության մասին է վկայում Արտաշատի միջնաբերդի հնագիտական պեղումներից հայտնաբերված մեծ քանակությամբ նավթը, որն արդեն ստացել էր սև, չորացած

[228] Հայաստանի և հայերի վերաբերյալ հատվածները քաղված են՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 9: Հին Հունական աղբյուրներ, Ա. Հովսեպոս Ֆլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, գրքից:

կուպրի՝ մազութի տեսք, իսկ սենյակներից մեկում զետեղված կարասների մեջ լցված է եղել նավթ[229]:

Հռոմեացի պատմագիրը հիշատակում է Վաղարշապատ քաղաքը՝ «Նոր քաղաք» անվամբ, Հայաստանի մայրաքաղաք:

Ըստ Դիոնի հավաստման՝ Հայաստանի հյուսիսային սահմանագիծը՝ Հայաստանի և Վրաստանի միջև Կյուռնոս (Կուր) գետն էր. «Կյուռնոսի երկու ափին, մի կողմից ալբանացիների (աղվանների), մյուս կողմից հայերի հարևանությամբ բնակվում էին իբերներ» (Դիոն, 37, 1. 1-5, 2. 1-6): Նա հիշատակում է երկու Արմենիաներ՝ նկատի ունենալով Եփրատ գետից այն կողմ գտնվող Փոքր Հայքի և Եփրատից այս կողմ գտնվող Մեծ Հայքի տարածքները (Դիոն, 38.38.4):

Նրա հավաստման համաձայն՝ Հայաստանի հարավային սահմանին էին հարում Օսրոյենեն՝ Եդեսիա (Ուռհա) մայրաքաղաքով, և Միգդոնիան՝ Մծբին (բնագրում՝ Նիսիբին) կենտրոնով, որոնք Հյուսիսային Միջագետքի երկրներն էին, և որոնք նշանակալից դեր էին խաղում հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքում: Տիգրան Մեծի հարստությունների մեծ մասն էլ, ըստ Դիոնի հավաստման, գտնվում էր լավ ամրացված Նիսիբինում (Մծբին): Բերդապահ էր նշանակվել արքայի եղբայրը (Գուրասը – Ռ. Ն.) (տե՛ս Դիոն, 36. 6. 1-2):

Պատմիչը հիշատակում է «Անահտական երկիր» գավառը՝ համանուն աստվածուհու անվամբ (Դիոն, 36.48. 1-3): Այստեղ, Երիզա ավանում էր կառուցված Անահիտ դիցուհու տաճարը և այնտեղ էին կատարվում դիցուհու պատվին տոնախմբություններ (XI, 14, 16):

---

[229] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Հին Արտաշատ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 22:

Դիոն Կասսիոսը Հայաստանի բուն սահմանների մեջ մտնող երկիր (երկրամաս) է թվարկել նաև Ծոփքը (բնագրում՝ Սոփանեն), որտեղ էլ պահվում էին հայոց երկրի գանձերը: Դիոնի երկում (68.19.1) հիշատակված է Արսամոսատա քաղաքը (Արշամաշատ), որը նախկինում Ծոփքի հայկական թագավորության մայրաքաղաքն է եղել: Այն ըստ հռոմեացի պատմագրի՝ գտնվել է Եփրատի և Տիգրիսի միջև, Արածանի գետի ափին, այսպես կոչված՝ «Գեղեցիկ դաշտում»: Ըստ նույն պատմագրի՝ «Կորդուքը (բնագրում՝ Կորդուենեն, որը ժամանակավորապես անցել էր պարթևների հսկողության ներքո) զորավար Պոմպեոսը կրկին վերադարձրեց Հայաստանին (37.5. 1-5): Հայաստանը ոչ միայն պահպանեց իր նահանգներից մեկը՝ Կորճայք կամ «Կորդվաց աշխարհը», այլև ձեռք բերեց Հյուսիսային Միջագետքի որոշ շրջաններ ևս՝ Մծբին քաղաքով: Հայաստանին էր միացվել, ըստ Դիոնի հավաստումների, Ակիլիսինե գավառը, որն այդ ժամանակ, բուն Եկեղիք գավառից բացի, ընդգրկում էր նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունն ու Մզուրը: Տիգրանը պահպանել էր նաև «արքայից-արքա» տիտղոսը (Դիոն, 37.7 3-6):

Ուշագրավ է նաև այն, որ Դիոն Կասսիոսը Փոքր Հայքը անվանել է «Մյուս Հայաստան» (Դիոն, 36.9. 1-2): Անշուշտ, Դիոնի այս երկը Տիգրան Մեծի պատմաշրջանի ամենավստահելի սկզբնաղբյուրն է, և մենք, ձեռնարկի շրջանակներից ելնելով, չենք անդրադառնում ռազմաքաղաքական անցքերին: Միայն հավելենք, որ պատմագիրը վստահելի և եզակի աղբյուրներից մեկն է, որ Արածանիի (Ք.ա. 68 թ. սեպտեմբեր) ճակատամարտում հռոմեացիների պարտության պատճառները համարում էր հռոմեական զորքի կրած մեծ կորուստներն ու սննդամթերքի պակասությունը և նաև այն, որ հռոմեացի զինվորներին

հասցված վերքերը ծանր էին և դժվար բուժելի, քանզի նրանք (հայերը) գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ (Դիոն, 36.4. 1-2, 5. 1-2, 6.1-2):

Չափազանց ուշագրավ են Հայաստանի վերաբերյալ նկարագրությունները Հայոց արքա Արտավազդ II-ի (55-34 թթ. Ք.ա.) կառավարման շրջանի, Կրասոսի արշավանքների և դրանց հաջորդող իրադարձությունների վերաբերյալ (տե՛ս 39.27. 3-4, 54.9.1 և այլն): Պատմագրի ներկայացմամբ՝ Օգոստոս Օկտավիանոսի (Ք.ա. 27 – Ք.հ. 14 թթ.) կտրած դրամների մի երեսի վրա պատկերված էր կայսեր գլուխը, մյուս կողմում գրված է «Հայաստանն առնված» (Armenia capita) կամ քանդակված են Հայաստանի խորհրդանիշներ՝ հայոց թագավորի խույրը և կողքին կապարճ ու աղեղ կամ հայ զինվոր, որ աջ ձեռքում բռնած ունի նիզակ, իսկ ձախում՝ աղեղ»:

Վստահելի են նաև հայկական Արտաշեսյան հարստության անկման շրջանի, հետագայում նաև հռոմեական զորավար Կորբուլոնի արշավանքների, Արտաշատ մայրաքաղաքի գրավման (58 թ. ամռանը) և այլ իրադարձությունների վերաբերյալ նկարագրությունները (Դիոն, 62.20.4):

Բացառիկ ուշագրավ են այդ իրադարձություններից 63 թ. Խարբերդի դաշտում՝ Հռանդեա կոչված վայրում հռոմեական զորքերի ծանր պարտության և կապիտուլյացիայի, նրանց «լծի տակով անցկացնելու» նաև Տրդատին հայոց գահին բարձրացնելու վերաբերյալ հաղորդումները (Դիոն, 62. 1-4):

Թագադրման նախնական արարողության վայր է ընտրվում Հռանդեան: «Այստեղ բարձր բեմ պատրաստվեց, և դրա

վրա կանգնեցվեց Ներոնի (Հռոմի կայսր – Ռ. Ն.) պատկերքը (կիսանդրին), և Տիրիդատեսը (Տրդատը) հայերի, պարթևների և հռոմեացիների բազմության առաջ մոտեցավ դրանց և խոնարհվեց, զոհ մատուցելով դրանց և հանդիսավոր կոչերով, իր գլխից դիադեման (խույրը) վերցրեց ու դրեց կիսանդրու առջև» (Դիոն, 62.23. 3-4) ու հանդիսավոր կերպով խոստացավ, որ թագը ետ կստանա Ներոնի ձեռքից Հռոմում:

Հռոմում Տրդատի թագադրման ծեսի վերաբերյալ պատկերավոր նկարագրություն է թողել Դիոն Կասսիոսը[230]: Ըստ պատմագրի՝ հանդիսության ժամանակ «Տիրիդատեսը, իր բարձրադիր աթոռից նետահարեց գազաններին և միանգամից մեկ նետով երկու ցուլ վարսեց (տապալեց գետին) և սպանեց» (63.3. 1-2):

Դիոնից ենք տեղեկանում նաև, որ Ներոն կայսրի նվիրատվության միջոցներով («50 հազար դրաքմե») վերաշինված Արտաշատին տրվում է **Ներոնեա** անվանումը (63.7. 1-2): Պատմագրի հավաստմամբ՝ Հռոմի կայսրերի ձեռքով հայոց թագավորների ընտրության և նշանակման հաղթահանդեսի մի տեսարան է քանդակվել Հռոմի կայսր Տրայանոսի (98-117 թթ.) կոթողի վրա (տե՛ս 68.19. 1-5):

Ազգագրական, այդ թվում՝ հայ-պարթևական կենցաղային և ռազմական որոշ սովորույթներ: Թեև Կասսիոսը հունական և հռոմեական այլ պատմիչների համեմատ ժլատ է ազգագրական պատկերը տալու առումով, այդուհանդերձ պահպանվել են ուշագրավ տեղեկություններ հայկական արքայական զգեստների, հագուկապի վերաբերյալ: Արտաշատը Պոմպեո-

---

[230] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների…, էջ 190-195:

սին հանձնվելու իրադարձությունը նկարագրելիս պատմիչը նշում է, որ «Տիգրանը (Տիգրան Մեծը) զգեստավորվել էր այնպես, որ դրսևորվեր և՛ իր նախկին շքեղությունը, և՛ այժմյան խոնարհ վիճակը, որպեսզի նրան արժանի երևա թե՛ հարգանքի և թե՛ կարեկցանքի: Քանզի նա (քաղաքավարության համար) իր վրայից հանել էր սպիտակաշերտ (մեջընդմեջ սպիտակ) **խիտոնը** (պատմուճան, որ սև գոտիով մեջքին կապվող հագուստն էր) և համակ ծիրանի **կանդիսը** (թևերով վերնազգեստ), գլխին շարունակեց կրել **տիարան** (խույրը) և **անադեման** (ապարոշը)» (տե՛ս Դիոն, 36.52. 1-4): Արքայի թագավորական այս հագուստները լավագույնս պատկերված են Տիգրան Մեծից մեզ հասած դրամների վրա դրոշմված, որոնք արքայի թագավորական իշխանության տարբերանշաններ էին: Մի այլ առիթով էլ ներկայացնում է Տրդատ արքայի կնոջը. «Գլխին դրած ուներ ոսկե խույր (սաղավարտ) փոխանակ գլխի քողի, որպեսզի ոտնահարած չլինի (մարդկանց) չերևալու իր հայրենի սովորույթը»: (Դիոն, 63.2. 2-3): Պատմագիրը պատերազմական գործողությունները նկարագրելիս ակնարկում է նաև գործածվող փոխադրության միջոցների և կապի միջոցերի մասին: Նա գրում է. «Այդ օրերին ձիերով, ուղտերով, ամեն տեսակ ուղեբեռներով տղամարդիկ և կանայք խառնիճաղանջ ընթանում էին, նրանցից ոմանք նժույգներ հեծած, մյուսները ռազմակառքերի կամ ծածկած սայլերի և սայլակառքերի վրա», իսկ պարթևները, զրադաշտական կրոնի համաձայն, խուսափում էին ծովային ճանապարհորդություն կատարելուց (Դիոն, 63.2.2-3):

Դիոնը գիրք 36-ի, գլ. 49. 1-4 հատվածում էլ արձանագրում է, որ շեփորահարների ազդանշանով կամ պղնձե իրերին քա-

րով հարվածելով՝ տեղեկացնում էին սպառնացող վտանգի մասին (Դիոն, 63.2. 2-3):

Մի քանի ակնարկ ունի ժամանակի միջազգային ճանաչման արժանացած դրաքմե դրամական միավորի մասին: Օրինակ՝ խոսելով Մակրինոս կայսեր (217-218 թթ.) միջագետքյան ձախողված արշավանքի մասին՝ նշում է, որ այն Հռոմի վրա նստեց 5 հազար բյուր դրաքմե (= 50 միլիոն դրաքմե): Ունի ակնարկ Անահիտ դիցուհու տաճարում կատարվող արարողությունների մասին (տե՛ս 40.48.1), որի առավել հանգամանալի նկարագրությունները, ինչպես վերը ասվել է, թողել է Ստրաբոնը: Ունի ակնարկներ հռոմեական **Սատուռնալիա** տոնի մասին (36.54.2): Հռոմում տոնը կատարվում էր ամեն տարի, բերքահավաքից հետո և տևում էր 7 օր: Հողագործական տոն էր և համապատասխանում էր հայոց այգեգործության, պտղաբուծության, հացաբույսերի և բերքի տոների հովանավոր աստվածությունների՝ Վանատուր-Ամանորին, որի մեհյանը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան դիցավանում: Նրանց տոնը կատարվելիս է եղել գարնանը (մարտ) կամ ամռանը (օգոստոս) Նավասարդի 1-6-ը տևողությամբ (տե՛ս Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1882, էջ 482):

Դիոնի հավաստմամբ՝ հայերը պատրաստ էին հարելու պարթևներին, որոնք թե՛ հարևաններ էին և թե՛ սովորույթներով մոտիկ» (39.28.4): Իրոք, պատմագիտական գրականության մեջ մատնանշվում են, որ հայերի համակրությունը միշտ եղել է պարթևների կողմը, որովհետև նրանք իրենց բարքերի, նիստուկացի, կրոնի և քաղաքական ու զինվորական կազմակերպության նմանությամբ մոտ են եղել պարթևներին ու նաև սրանց հետ կապված են եղել խնամիական կապերով: Ապա խոսում է պարթևների և հայերի ձիավարժ ժողովուրդներ լի-

նելու մասին (63. 1-7): Ըստ պատմագրի՝ հայտնի էին հայ պարթևական սովորույթի ուժով մերձավորների ամուսնությունների օրինակներ: Այսպես, Տիգրան III-ին հաջորդած նրա որդի Տիգրան IV-ը ամուսնացած է եղել իր խորթ քրոջ (տարբեր մայրերից էին ծնվել)՝ Էրատոյի հետ: Բայց դրամի վրա քույր է գրված, ոչ թե կին[231]:

Հայտնի է, որ հելլենիստական աշխարհում թագուհին կրում էր «արքայի քույր» պատվավոր տիտողոսը[232]: Սելևկյանները, ինչպես և Պտղոմեոսները, թագավորական ամուսիններին անվանում էին «եղբայր» և «քույր»: Ամուսնությունը քրոջ և եղբոր միջև լայնորեն տարածված էր դեռևս հին Եգիպտոսում, օրինակ՝ Ամենհոտեպ I, Թութմոս I, Թութմոս II և տասից ավելի այլ փարավոններ: Իր քրոջ Արտեմիսիա II-ի հետ էր ամուսնացած նաև նշանավոր սատրապ Մավսոլը:

Հարազատ եղբայրների և քույրերի ամուսնությունները կամ «ինցեստային ամուսնությունները» սովորական պրակտիկա են հունա-հռոմեական Եգիպտոսում և այն հիմնականում տեղի է ունեցել էլիտար բնակչության շրջանում:

Ամուսնությունները իրական էին ոչ միայն բյուրոկրատական պատճառներով: Հելլենիստական աշխարհի ամենահայտնի կանանցից մեկը՝ Եգիպտոսի թագուհի Արսինոյա II-ը,

---

[231] Փարիզի ազգային գրադարանում պահվում է Տիգրան IV-ի դրամներից մեկը, որի մի կողմում դրոշմված է Տիգրան IV-ի պատկերը, որի շուրջը գրված է «Թագավոր թագավորների Տիգրան», իսկ դրա մյուս կողմում դրոշմված է Էրատո թագահու պատկերը՝ «Էրատո՝ Տիգրան թագավորի քույր» (տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 298):

[232] Տե՛ս **Э. Бикерман,** Государство Селевкидов. Пер. с франц. Л. М. Глускиной, М., 1985, էջ 27:

իր եղբոր՝ Պտղոմեոս II-ի կինն էր: Նշանավոր Կլեոպատրան (VII-ը) նույնպես ամուսնացած է եղել եղբայրների հետ[233]:

Սասանյան արքա Կավադ II-ի կինն էր նրա քույր Բոռանը: Պոնտոսի արքա Միհրդատ VI Եվպատորի կին Լաոդիկան նրա քույրն էր[234], որոնց ամուսնությունից ծնվել էր նաև Կլեոպատրան, Տիգրանի կինը:

Կոմագենեի թագավոր Անտիոքոս III-ի (մ.թ.ա. 12-17) կին Իոթափան նրա քույրն էր, ինչպես որ Անտիոքոս IV-ի (38-72) կին Իոթափեն էր արքայի քույրը:

Ուշագրավ է նաև խաբեությամբ գերեվարած հայ արքա Արտավազդ II-ի ընտանիքի Անտոնիոսի կողմից ձերբակալության, Եգիպտոսում Հայաստանի նկատմամբ տարած հաղթանակի առթիվ հաղթահանդես կազմակերպելու, Եգիպտոսի թագուհուն՝ Անտոնիոսի կնոջը երկրպագելու տեսարանի նկարագրությունը. «Կլեոպատրան բազմության մեջտեղ նստած էր արծաթաշատ բեմում ոսկեզօծ գահավորակին: Սակայն բարբարոսները (հայոց արքան և իր ընտանիքը) թեպետ նրանց շատ էին ստիպում և շատ էին հորդորում՝ տալով ազատության խոստում, այդուհանդերձ ո՛չ աղերսեցին Կլեոպատրային, ո՛չ էլ երկրպագեցին (գլուխ չխոնարհեցին): Եվ անգամ հրաժարվեցին Կլեոպատրային անվանել թագուհիների թագուհի, նույնիսկ թագուհի չանվանեցին, պարզապես իր անունով կոչեցին, նրանք վեհափառ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով անգութ վերաբերմունքի, խիստ

---

[233] Տե՛ս **T. Sewell-Lasater,** Becoming Kleopatra: Ptolemaic Royal Marriage, Incest, And the Path to Female Rule, SEWELL-LASATER-DISSERTATION-2020.pdf (tdl.org), 15.02.2023.

[234] Տե՛ս **L. Summerer P.,** The Religion and Cults of the Pontic Kingdom: Political Aspects // Mithridates VI and the Pontic Kingdom. Black Sea Studies – 9, էջ 251:

չարչարանքների ենթարկվեցին» (Դիոն, 19.40. 1-3): Կլեոպատրան այնքան փառասեր ու դաժան էր, որ չհանդուրժեց այդ-օրինակ վերաբերմունքը, նրանց զնդան նետեց: «Այդ նենգ քայլով,- նշում է Դիոնը,- Անտոնիոսը մեծապես վարկաբեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը» (Դիոն, 50. 1-4):

Դիոնի երկում հայոց արքուների վեհության մասին հաղորդման հանդիպում ենք նաև Տիգրան Մեծի՝ հռոմեական զորավար Պոմպեոսի զորակայանը մտնելու արարողակարգում. «Տիգրան Արմենը,- գրում է Դիոն Կասսիոսը,- գլխին կրում էր ոսկեհուռ խույրը (թանկագին քարերով զարդարված պսակաձև գլխանոցը՝ իր բարձր աստիճանի) և ապարոշը (գլուխը կապելու փաթթոցը)[235] և առանց ձիուց իջնելու էր ցանկանում մտնել զորակայան, որի իրավունքը չուներ՝ հռոմեական ռազմական սովորույթի համաձայն:

Մեկ այլ դրվագում, երբ Տրդատը գնում է ներկայանալու Ներոնին, նրան հրամայեցին, որ սուրը վրայից հանի, ինչպես այդ ընդունված էր կայսերական ընդունելությունների ժամանակ: Սակայն նա հրաժարվեց այդ անել և այն գամերով ամրացրեց պատյանին: Այդ կերպ վարվեց նաև «Նեապոլիսում (Նեապոլում) Ներոնին մոտենալիս, դարձյալ հրաժարվեց մինչև իսկ **ակինակը** (կարճ թուր, որը տղամարդիկ կրում էին դաշույնի նման իրենց գոտկատեղում) մի կողմ դնել, թեպետ իրեն պատվիրել էին, այլ գամերով ամրացրեց պատյանին …

---

[235] Արդ, Պոմպեոսը, իր մականակիրներից մեկին ուղարկելով հայոց արքային ընդառաջ, ձիուց վար իջեցնել տվեց, որովհետև նա, իրենց սովորության համաձայն, հեծյալ վիճակում էր մտել ամրություն (Դիոն, 36.52. 1-4): Խույրը (բնագրում՝ տիարա) և ապարոշը (բնագրում՝ անադեմա) հայոց արքայի թագավորական իշխանության տարբերանշաններ էին, որ հայոց արքան չհանեց գլխից:

հետո նա ծնկի եկավ ու ձեռները խաչաձևեց, երկրպագեց վեհապետին» (63.3.1): Կարելի է ենթադրել, որ Տրդատի այս խոնարհումը Ներոնի առջև պարթևների և հավանորեն նաև հայերի մոտ ընդունված էր իբրև հպատակության և հավատարմության հավաստիացում:

Ակնարկ ժամանակի մի քանի պաշտոնների և ռազմական զորաշարքերի մասին: Ուշագրավ են նաև Դիոնի տեղեկությունները որոշ տիտղոսների, պաշտոնների և զորքերի դասավորությունների վերաբերյալ.

Տիտղոս: Տրայանոս կայսերը (98-117 թթ.) տրված **Պարթիկոս** տիտղոսը բառացի նշանակում է պարթևական:

Դիոնի գրքում տեղ են գտել պաշտոնների անվանումներ, որոնց մեկնաբանությունը կարող է օգակար լինել ուսանողներին, ուսումնասիրողներին:

Այսպես. **Իմպերատոր** – սկզբնապես չի ունեցել կայսր իմաստը, այլ եղել է պատվո տիտղոս, որ զորքը շնորհում էր իր հրամանատարին ռազմադաշտում մեծ հաղթանակներից հետո: Օգտագործվել է նաև առավել լայն առումով և տրվել ռազմական ու դատական լիիրավ իշխանությամբ օժտված զորահրամանատարներին:

Պրետոր – Սա վարում էր քաղաքացիական դատական գործերը: Սկզբնապես համարվում էր կոնսուլների և դիկտատորների տիտղոս՝ անձ, որին պատկանում էր դատական գերագույն իշխանությունը, իսկ պրովինցիաների կազմակերպումից հետո՝ նաև դրանց կառավարումը:

Լեգատ – Ուղարկված դեսպան, նաև զորավարների, կուսակալների օգնական:

Մականակիրներ – այսպես էին կոչվում Հին Հռոմում բարձրաստիճան պաշտոնյայի առջևից գնացող հատուկ ծա-

ռայող անձինք, որոնք, իբրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների մի կապոց՝ ծայրին կացին ամրացված:

Փաղանգ (Ֆալանգ) – Բանակների մարտական շարվածք՝ քառանկյունի, զինվորների 8-24 շարքերով: Փաղանգի ճակատամասը հասնում էր մինչև 500-1000 մետրի՝ յուրաքանչյուր շարքում 1000-ական **հոպլիտ**: Օրինակ՝ Մակեդոնական փաղանգը ունենում էր մինչև 28.672 զինվոր:

Կրիա – այսպես էր կոչվում հռոմեական բանակի ռազմական դասավորությունը:

Հոպլիտներ – հունական ծանրազեն հետևակայիններ, որոնք կազմում էին զորքի հարվածային ուժը:

3.9. Գայոս Կոռնելիոս Տակիտոս (55/57–125 թթ.)

Գայոս Կոռնելիոս Տակիտոսը կայսերական ժամանակաշրջանի Հռոմի ամենանշանավոր պատմագիրն է, նաև աչքի ընկնող պետական գործիչ էր, ծագումով իտալիկ: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ գործեր՝ «Գերման ժողովրդի ծագման և Գերմանիայի տեղադրության մասին», «Պատմություն» և այլ երկասիրություններ: Գլուխգործոցը «Տարեգրություններ» երկն է, որը բաղկացած է 16 գրքից, որը պահպանվել է ոչ ամբողջությամբ: Պահպանվել են 1-4 և 11-16 գրքերը, 5-րդի և 6-րդի մեծ մասը: Նա իր երկերը շարադրել է Հռոմի զավթողական քաղաքականության ջատագովի տեսանկյունից: Չնայած այս հանգամանքին՝ անգնահատելի նշանակություն ունեն Տակիտոսի վկայությունները Հայաստանի և հայերի մասին,

որոնք որոշակիորեն լույս են սփռում I դարի Հայաստանի պատմամշակութային կյանքի շատ հարցերի վրա[236]:

Գայոս Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգրություններ» գրքի վկայությունները Հայաստանի և հայերի մասին: Հայերի մասին հիմնական տեղեկությունները վերաբերում են առաջին դարի Հայաստանի քաղաքական կյանքին, հայ-պարթևական կապերին, Հայաստանի աշխարհագրությանը, սահմաններին, տարածքին, հարևանների հետ ունեցած տնտեսական ու մշակութային կապերին, հավատալիքներին, հայ ընտանեկան կենցաղին, հայերի նկատմամբ նրա անհարգալից վերաբերմունքին, ռազմադաշտային սովորություններին, պետական գործիչների հյուրընկալությանը, որսագնացությանը, տարազի ձևերին և այլն: Հայերի և Հայաստանի մասին հաղորդած նյութերը թեև մեծ մասամբ վերաբերում են պատմական անցքերին, բայց ազգագրական բացառիկ նշանակություն ունեն: Բացի այն նյութերից, որոնք անմիջապես առնչվում են հայ ժողովրդի առանձին հատկանիշներին, Տակիտոսն ունի ևս մի շարք այնպիսի վկայություններ, որոնք պետք է, որ իր ժամանակին ընդհանուր լինեին թե՛ հայերի և թե՛ այն ժողովուրդների համար, որոնց հետ երկարատև շփում են ունեցել հայերը: «Հայերը,- գրում է նա,- տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով և, որովհետև ազատությունը նրանց անծանոթ էր, ավելի էին հակվում դեպի պարթևական ստրկությունը» (գիրք XIII, գլ. 34, էջ 73): Մոտ էին նաև մշակույ-

---

[236] Հատվածաբար օգտվել ենք «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարի N3 պրակից. **Կոռնելիոս Տակիտոս**. քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941: Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ..., էջ 204-227:

թով, տնտեսաձևով, պետական կառուցվածքով, կրոնով և մեծ տեղ էին հատկացնում ինքնավարության սկզբունքին: Այս տեղեկությունները կօգներ պարզելու հայկական զգեստների ձևերի ծագման հարցը, հայկական և պարսկական կանացի հին զգեստների որոշակի նմանությունների բացահայտմանը: Լինելով հռոմեական կայսրության ջատագով պատմիչ՝ հայերին անվանարկում էր տատանվող և նենգ տարրեր բնութագրելով: Թերևս ավելի դիպուկ լիներ հենց իր՝ Տակիտոսի մի խոսքը որպես պատասխան այդ հարցին, թե «Մեծագույն տերությունների միջև է տեղավորված Հայաստանը, և շատ հաճախ հայերը երկպառակ են և երկդիմի, որովհետև նրանք ատում են թե՛ հռոմեացիներին և թե՛ նախանձում են պարթևներին» (գիրք II, գլ. 56, էջ 15):

Նա Հայաստանը անվանում է ստրկության երկիր, հայերին՝ նենգ ու վախկոտ, տատանվող, դժվարին պահին դաշնակցին լքող (գիրք VI, գլ. 36, էջ 31): Սակայն «ստրկության սովոր» հայերը մեկ անգամ չէ, որ ջարդել են հռոմեացիներին, դա թշնամու գնահատական էր: Խոսվում է Հայաստանից փախչող Հռադամիստի կնոջը փրկելու, բուժելու հայերի արժանավայել վերաբերմունքի մասին (գիրք XII, գլ. 51, էջ 65, 67): Փաստորեն հայ գեղջուկները փրկում են կնոջը, հատուկ տնական սպեղանիներով դարմանում նրա վերքերը՝ «հասարակական ծախսով» նրան արքունիք հանձնելով: Սա Հայաստանում ժողովրդական բժշկության մասին հնագույն վկայություններից է:

Հայկական սովորություններից մեկը, որ մեզ հաղորդել է Տակիտոսը, հաղթողին ոսկե պսակով դիմավորելն է: Այս սովորությունը միջին դարերում և մինչև 20-րդ դարի սկիզբը արտահայտվում էր աղ ու հացով:

Տակիտոսի հաղորդումները առավելապես վերաբերում են ռազմադաշտային սովորություններին, պետական գործիչների հյուրընկալությանը, դաշինք կնքելու հնագույն սովորույթներին, առանց արյուն թափելու, զորգերով խեղդամահ անելու մահապատժի ձևերին, որսազնացությանը, ժողովրդի բարքերին, բնավորության գծերին, ինքնատիպ սովորություններին, ամուսնական սովորույթներին, հայերի, նրանց հարևանությամբ ապրող վրաց և աղվան ժողովուրդների խառնվածքային բնութագրությանը, տարազին, երկրագործությանը, ժամանակի չափ ու կշռի գործող միավորներին, կրոնին և այլն:

Անդրադառնանք թվարկած մի քանի հարցերին որոշ մանրամասներով: Այսպես, Հայաստանի վարչատարածքային հարցերին անդրադառնալիս տեղեկանում ենք, որ Հռոմը ջանում էր մասնատել Հայաստանը նրա հարևան պետությունների միջև՝ այն թուլացնելու միտմամբ: Հայաստանից խլվեցին Սպերը, Գուգարքը, Եկեղյաց, Դարանաղի, Աղյուն, Մզուր գավառները և այլն:

«Տարեգրություններ» գրքում խոսք կա նաև հայ բնակչության հետ հարևանությամբ ապրող **մարդերի** (գիրք XIV, գլ. 23, էջ 87)՝ Կասպից ծովի հարավ-արևմուտքում, մասամբ Մարաստանում և պատմական Հայաստանում ու «Արածանիիի հովիտի լեռնային վերին շրջանում, **դահաս** ժողովրդի, որն ապրելիս է եղել Կասպից ծովից հարավ-արևելք ընկած տարածքում, **ալբանների** (աղվանների) (գիրք VI, գլ. 33), **իբերների** (գիրք VI, գլ. 35) և սարմատների, **մոսքերի** (մեսխ) ցեղի (գիրք XIII, գլ. 37) մասին, որն ապրելիս է եղել Հայաստանի հյուսիսից-արևմտյան մասում (Սև ծովի մոտ – Ռ. Ն.):

Խոսելով հին աշխարհի պետական և ռազմական ու ծիսական արարողակարգերի մասին, գրում է, թե «թագավորներն

ունեն մի սովորություն, որ ամեն անգամ, երբ իրար են հանդիպում դաշն կնքելու համար, միախառնում են իրենց աջ ձեռքերը, բութ մատները միասին կապում են և հանգույցով ամրացնում: Հետո հենց որ արյունը դեպի ծայրանդամներն է հոսում, թեթև ծակոցով արյունը հանում և փոխադարձաբար լիզում են: Այս տեսակ դաշինքը համարվում է գաղտնի ուժ ունեցող, իբրև փոխադարձ արյունով սրբագործված» (գիրք XII, գլ. 47, էջ 59): Ահա այդպիսի դաշինք կնքած վրաց թագաժառանգ Ռադամիստը խախտում է այն հորեղբոր՝ Հայաստանը կառավարող Միհրդատի հետ և վերջինիս գահին տիրանալու համար չգործադրելով ո՛չ թուր, ո՛չ էլ թույն, սպանում է նրան՝ նաև կնոջը, որն իր քույրն էր, գետին գցելով և ծածկելով բազմաթիվ ու ծանր գորգերով, խեղդամահ անելով (էջ 59-61): Այս դեպքում գորգը տեղական սովորույթի համաձայն՝ մեղքը քավելու զորեղ միջոց էր համարվում:

Հին աշխարհի սովորույթներից մեկն էլ այն էր, որ թագադրելիս գոտի էին կապում նրան (գիրք VI, գլ. 32, էջ 23), որը ոչ միայն իշխանական խորհրդանիշ էր, այլև ուներ պահպանակի նշանակություն, որը պետք է պահպաներ կրողին ոչ միայն թշնամու զենքից, այլ նաև «չարից»: Միաժամանակ տղամարդկանց ծանր ու լայն գոտիները ունևորության, բարեկեցիկ կյանք վարելու խորհրդանիշ էին:

Մեկ այլ սովորույթի մասին ևս. հաղթող զորավարին մեծարում էին դափնեպսակով զարդարելով: Հռոմեական ռազմադրոշի նկարագրությունը տալով՝ այն անվանել է արծիվներ՝ ձողին ամրացված էր արծվի պղնձե կամ արծաթե, կամ էլ ոսկե ձուլվածք: Այդ էր հռոմեական լեգեոնի ռազմադրոշը (գիրք XV, գլ. 17, էջ 167):

Արտաշիսյան հարստության թագավորների, մասնավորապես Տիգրան Մեծի դրամների վրա հայոց արքան պատկերված էր շքեղ թագով: Թագի վրա պատկերված են երկու արծիվներ, իսկ մեջտեղում՝ արևը խորհրդանշող ութաձև աստղ: Այդ հերալդիկ հորինվածքը ամենայն հավանականությամբ եղել է հայոց թագավորության զինանշանը:

Վկայված է հայ-պարթևական ուժերի կողմից Հռանդեայում հռոմեական բանակին «լծի տակով անցկացնելու» մասին: Դա պարտվողների ստրկացման, անարգման ապացույցն էր: Ուշագրավ է Զենոն-Արտաշեսին մեծարելու մասին հաղորդումը, որը հարգում էր հայկական սովորությունները, որով նա կրթվել էր մանկության շրջանից: Պատմագրի հաղորդման համաձայն՝ հայերը ծագումով օտար արքաներից սիրում էին նրանց, ովքեր հարգում էին տեղական սովորություններն ու կենցաղը (գիրք II, գլ. 56, էջ 15):

Նշվում է հայոց արքա Արտավազդին նենգաբար ձերբակալելու, հաղթահանդես կազմակերպելու և նրա ընտանիքին պատվազուրկ անելու Անտոնիոսի փորձերի և հայերի արժանապատիվ պահվածքի, տիրողների առջև նրանց ծունր չդնելու, կյանք չաղերսելու և հպարտ մահ ընդունելու մասին (գիրք II, գլ. 3, էջ 11):

Մի այլ առիթով էլ ակնարկում է վրացիների՝ հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքի մասին, դրանք գնահատելով իր երկրի գաղափարախոսական շահերից բխող (գիրք XIII, գլ. 37, էջ 77):

Մեկ այլ սովորույթի մասին ևս. պատերազմից դարձող զինվորները բերում էին իրենց սպանած թշնամիների գլուխները՝ իբրև ապացույց իրենց գործած սխրանքների (գիրք 15, գլ. 15, էջ 115):

Տակիտոսը Հայաստանում արձանագրել է հասարակության բաժանված լինելը սոցիալական երկու շերտերի՝ հասարակ ժողովրդի և ազնվական ավագանու, որը հիմք է տվել Ն. Ադոնցին կարծիք հայտնելու, որ արդեն նախկին տոհմապետերը և ցեղապետերը դարձել էին իշխանավորներ:

Տակիտոսը նկարագրություններ ունի նաև Հայաստանում բեռներ և մարդիկ փոխադրելու՝ մասնավորապես ուղտերով առևտրին մասնակցելու, հռոմեական բանակին հաց մատակարարելու, տիկնանց և արանց շքեղազարդ ծածկած կառքերով փոխադրելու, որոնք գործածվել են արքունական կանանց և երեխաների ճանապարհորդությունների համար (գիրք XI, գլ. 47, էջ 61), ակնարկներ՝ թամբագործության և ձիասարքը զարդարելու արհեստների մասին (գիրք VI, գլ. 37, էջ 33): Այս արհեստներից էլ հետագայում Մութաֆյան և Սառաջյան ազգանունների առաջանալը:

Պաշտամունքային հարցերին անդրադառնալիս ակնարկներ ունի ձիերի զոհաբերման ծիսական արարողակարգերի, գետերի հորդումները հանդարտեցնելու համար նաև խոզ, ոչխար, եզ զոհաբերելու, Միհրական տոներին էլ՝ շքեղազարդ ձիեր զոհաբերելու, հայերի՝ Արև (Հելիոս) Աստծուն զոհաբերություններ կատարելու մասին (գիրք VI, գլ. 37, էջ 33):

«Տարեգրություններ» գրքում կան վկայված տեղեկություններ տարածության, կշռի, չափի միավորների մասին, ինչպես օրինակ, **քայլը, օրը, ստադիոնը**: Մեկ օրում 40 հազար քայլ կատարելու (գիրք XV, գլ. 16, էջ 115), որը հավասար էր 40 մղոնի կամ 62,2 կմ (դա հռոմեական զորավար Պետոսի զորքի կտրած-անցած ճանապարհն էր), իսկ սովորական ընթացքի դեպքում երկու օրվա ճանապարհը հավասար էր երեք հազար ստադիոն տարածության, իսկ ստադիոնը կազմում էր մոտ 185

մետր կամ 600 ոտնաչափ (գիրք XI, գլ. 8, էջ 43), այդ նշանակում է՝ երկու օրում զորքը կտրել-անցել էր մոտ 55կմ:

Ռազմարվեստում Հայաստանում Տակիտոսը արձանագրել է պարսիկների կողմից փղերի՝ որպես փոխադրության միջոցի, ամրոցներ քանդելու համար **բաբանների, բալիստների՝** աշտարակների գործածումը (գիրք XV, գլ. 9, էջ 105), ուղտերով բանակին հաց մատակարարելը (գիրք XV, գլ. 11, էջ 109): Ուշագրավ է նրա հաղորդումները տկալաստերի և դրանց միջոցով կառուցված շարժական ու ժամանակավոր կամուրջների վերաբերյալ: Այսպես, օրինակ, Տակիտոսը Կորբուլոնի արշավանքները նկարագրելիս բազմիցս հիշատակում է հայերի կամ պարթևների ու հռոմեացիների կողմից կառուցված Եփրատ-Արածանին գոտկող «ժամանակավոր կամուրջների» կամ «նավերով կամուրջների մասին», որոնք ըստ նրա, կազմված էին իրար ամրացված-կապված լաստերից կամ տկալաստերից:

Հաղորդակցության միջոցներից էլ արձանագրել է վտանգը կանխելու համար՝ ազդափողի՝ շեփորի գործածումը կամ կրակի և ծխի արձակման միջոցով ահազանգելը և այլն (գիրք XV, գլ. 30, էջ 127):

Այսպիսով, Տակիտոսի վկայությունները հույժ կարևոր են որպես սկզբնաղբյուր հայոց պետության պատմաքաղաքական, աշխարհագրական, ռազմատնտեսական, մշակութային վիճակի մասին բազմաթիվ հարցերի լուսաբանման համար, նաև հայերի նիստ ու կացի, հարևան ժողովուրդների ու երկրների հետ ունեցած շփումների և սովորությունների վերաբերյալ:

3.10. Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» աշխատությունը որպես հայ ազգագրական գիտության սկզբնաղբյուր

Կլավդիոս Պտղոմեոսը (83-168) հայոց ներքին կյանքի, տնտեսամշակութային բնութագրի վերաբերյալ նկարագրություններ գրեթե չունի, բայց նրա «Աշխարհագրություն» ութ գրքերից բաղկացած աշխատությունը անգնահատելի սկզբնաղբյուր է Իռլանդիայից մինչև Եգիպտոս և Ատլանտյան օվկիանոսից մինչև Հնդկաչին գտնվող երկրների աշխարհագրական պատկերը տալու առումով: Այն աշխարհագրական եզակի հուշարձան է համաշխարհային քարտեզագրության պատմության մեջ: «Աշխարհագրության» հինգերորդ գիրքը բովանդակում է Մեծ Հայքի, Իբերիայի, Աղվանքի և Կողքիսի մանրամասն նկարագրությունը: Այս երկը արժեքավոր պատմաաշխարհագրական սկզբնաղբյուր է ինչպես բազմաթիվ երկրների, այնպես էլ Մեծ Հայքի վերաբերյալ: Այստեղ կոորդինատներով տրվում են մեր պատմական հայրենիքի լեռնագրությունն ու ջրագրությունը, երկրորդ դարի երկրորդ կեսի վարչական տարածքներն ու բնակավայրերը[237]:

«Աշխարհագրության» 5-րդ գրքի 13-րդ գլխում հանգամանորեն տրված է Մեծ Հայքի դիրքը. հյուսիսից սահմանակից է Կողքիսի (Եգեր կոչված աշխարհի) մի մասին՝ Ճորոխ գետի ներքին հոսանքի հովտում, Իբերիային, Աղվանքին՝ Կյուրոս գետով (Կուր), արևմուտքից՝ Կապադովկիային, Եփրատ գետի

---

[237] Մեծ Հայքին վերաբերող հատվածի հայերեն թարգմանությունը կատարել է Գ. Ս. Մուրադյանը (Տես՝ «Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա», հատոր 2: III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, ԵՊՀ հրատ., Երևան, 2011):

մի մասով՝ Կապադովկիական Պոնտոսին, արևելքից՝ Հիրկանյան (Կասպից) ծովին և Մարաստանին, հարավից՝ Միջագետքին՝ Տավրոսի գծած սահմաններով, որը հասնում է Եփրատ գետին և Տիգրիս գետին ու Ասորեստանին՝ Նիփատես լեռան սահմանագծով:

Պարագրաֆ 5-ում նշված է Մեծ Հայքի նշանավոր լեռները. Մոսխական՝ Կապադովկիական Պոնտոսից վերև ընկած հատվածի երկայնքով մինչև Պարյուադրես (Պոնտական կամ Պարխարյան) լեռը, Ուդակեսպես (այժմյան Քաշաթաղի), Աբոս (Բյուրակն, այժմ՝ Բինգյոլ) լեռները, Կասպիոս (Կասպիական)՝ Մեծ Հայքը Մարաստանից բաժանող և Գորդյուական (Կորդվաց) լեռները:

Պարագրաֆ 6-ում արձանագրված է Մեծ Հայքի միջով հոսող գետերը. Արաքսը, որի գետաբերանը ընկած է Հիրկանյան ծովի մոտ, իսկ ակունքը Սրմանց (Բյուրակնյան լեռները), հյուսիսային սահմանով ձգվող Կուր գետն է, պարագրաֆ 7-ում Եփրատ գետն է իր Արսանիաս՝ Արածանի վտակով: Տիգրիսը, որի ակունքը, ըստ հեղինակի, Թոսպիտիս լիճն է:

Պարագրաֆ 8-ում նշված են Թոսպիտիս (Վանա) լիճը և Լյուքինիտիս (Գեղարքունյաց կամ Սևանա) և Արսեսալիմ (Ուրմիա կամ Կապուտան) լճերը:

Հիշատակված են նաև Մեծ Հայքի վարչատարածքային միավորները (20 անուն) և բնակավայրերը (84 անուն): Թեև Պտղոմեոսի նկարագրած Մեծ Հայքի սահմանների և վարչական բաժանումների վերաբերյալ տվյալներն արտացոլում են Ք. Հ. II դ. Երկրորդ կեսի տարածքային վիճակը, սակայն դա, ըստ էության, հիմնականում անփոփոխ է մնացել նաև III դարում:

Գրքի 9-րդ պարագրաֆում հիշատակված են Մեծ Հայքի՝ Եփրատ, Կյուրոս և Արաքս գետերի միջև ընկած տարածքի գավառները. Մոսխական լեռների մոտ՝ Կատարզենե (Կղարջք), Կյուրոս գետի մոտ՝ Օբարենե նահանգը, որ սահմանակից է եղել Կղարջքին (արևմուտքում), Իբերիային (հյուսիսում) և Ուտիքին (արևելքում), Օտենե (Ուտիք) նահանգը, Արաքս գետի մոտ՝ Կոլթենե (գավառ Ուտիքում), իսկ նրանից ներքև ընկած՝ Սոդուկենե (Սոդք կամ Սոթք), Սիրակենե (Շիրակ) և Սակսենե (Շակաշեն կամ Սակաշեն), իսկ գրքի 13-րդ պարագրաֆում՝ ամենահյուսիսային գավառներն են՝ սկսած արևմուտքից՝ Բասիլիսենե (հավանաբար Բասեն), Բոլբենե (նահանգ, որ սահմանակից է եղել արևմուտքում՝ Եկեղյաց, հյուսիսում՝ Բոքաս, հարավում՝ Աղձնիք նահանգներին), Արսեսա (նահանգ, որն ընդգրկել է Արածանիի ավազանի տարածքը), դրանից ներքև՝ Ակիլիսենե (Եկեղյաց կամ Անահտական գավառը) և Սոփենե (Ծոփք նահանգը):

18-րդ պարագրաֆում հիշատակված է Մեծ Հայքի հարավային՝ Եփրատի և Տիգրիսի ակունքներում Անզիտենե (Անձիտ), նրանից ներքև՝ Թոսպիտիս (Տոսպ) և հետո Կորիայա (նույնացվում է Կորճայք գավառին): Տիգրիս գետի ակունքից արևելք ընկած Մեծ Հայքի գավառներից են՝ Բագրանդավենե կամ Կագրանդավենե (Բագրևանդ), Գորդուենե (Կորդուք), Կոտայա (հավանաբար՝ Կուտի երկիրն է) և նրանից ներքև Մարդերը (հավանաբար Մարդաստան) գավառները:

«Աշխարհագրության» մեջ հիշատակված են նաև Մեծ Հայքի 84 բնակավայրեր, որոնցից ներկայացվում է մի քանիսը. Էլեգիա (միջնադարյան հայ հեղինակների հիշատակած Եղեգիսն է, այժմ՝ Իլիջան), Արմավիրա (Արմավիր քաղաքը), Արտաքսատա (Արտաշատ), Նաքսուանա (Նախճավան), Անզի-

տա (ամրոց-քաղաք Խարբերդից հարավ-արևելք, այժմ՝ Թիլ-Էնզիտ գյուղը), Արսամոսատա (Արշամաշատ), Բուանա (Վան), Արտեմիտա (Արտամետ), Տիգրանակերտա (Տիգրանակերտ մայրաքաղաքն է), Արտագիգարտա (Արտագերս ամրոցը), Տիգրանոամա (նույնացվում է Գողթնի Տիգրանավանի հետ) և բազմաթիվ այլ անվանումներով բնակավայրեր[238]:

Հետագայում Կլավդիոս Պտղոմեոսի այս երկը հիմք դարձավ առավել հանգամանալի մանրամասներով ներկայացնելուն Անանիա Շիրակացուն վերագրվող (VII դ.) «Աշխարհացոյց»-ում: «Աշխարհացոյց»-ում հատկապես խիստ արժեքավոր են այն բաժինները, որոնք նվիրված են Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Կողքիսի, Հյուսիսային Կովկասի, Պարսկաստանի, Ասորիքի և Միջագետքի նկարագրությունները:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ - Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

- **Առաջադրանքներ**

1. Ներկայացնել ռեֆերատ «Հերոդոտոսը Հայաստանի և հայերի մասին»:

2. Ներկայացնել ռեֆերատ «Քսենոփոնը Հայաստանի և հայերի մասին»:

---

[238] Տեղանունների մեկնաբանությունները տես՝ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» հատոր 2, էջ 12-14:

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Ըստ Հերոդոտոսի վկայությունների՝ որո՞նք էին Հայաստանը սահմանազատող սահմանները, և ի՞նչ վարչական միավորներ էին կազմում Հայաստանի տարածքը Աքեմենյան Պարսկաստանի կազմում:

2. Բացատրե՛ք հայերի ծագման փռյուգիական վարկածի բովանդակությունը:

3. Ի՞նչ գիտեք Հայաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ Հերոդոտոսի հաղորդած տեղեկությունների մասին:

4. Հայաստանը ի՞նչ հարկային պարտավորություններ ուներ Պարսկաստանի հանդեպ ըստ Հերոդոտոսի և Քսենոփոնի:

5. Հայաստանը ի՞նչ էթնիկ կազմ ուներ ըստ Հերոդոտոսի և Քսենոփոնի հաղորդումների:

6. Ի՞նչ կասեք հայկական բնակավայրերի և բնակարանների վերաբերյալ Քսենոփոնի վկայությունների մասին:

7. Գինու և գարեջրի վերաբերյալ հաղորդումների միջազգային նշանակությունը՝ ըստ Հերոդոտոսի և Քսենոփոնի տեղեկությունների:

8. Բնութագրե՛ք հայերի ծագման թեսալական վարկածը ըստ Ստրաբոնի:

9. Ինչո՞վ էին բացառիկ Հայաստանում Անահիտ դիցուհու պաշտամունքի վերաբերյալ Ստրաբոնի հաղորդումները:

10. Ի՞նչ ընդհանրացումներ կարող եք անել Ստրաբոնի՝ Հայաստանի պատմաաշխարհագրական հիշատակությունների մասին:

11. Ի՞նչ է նշանակում սինոյկիսմոսի միջոցով նոր հիմնված քաղաքների բնակեցում:

12. Ինչպե՞ս եք բացատրում Տակիտոսի ատելությունը հայերի նկատմամբ:

13. Ներկայացրե՛ք Տակիտոսի տեղեկությունների պատմաազգագրական արժեքը:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. **Բդոյան Վ.**, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 4-5:

2. **Նահապետյան Ռ.**, Հայ ազգագրության պատմություն, մաս 1, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին: Ուսումնական ձեռնարկ բուհերի պատմության ֆակուլտետների ուսանողների համար, Եր., 2010, էջ 74-118:

3. **Նահապետյան Ռ.**, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 240:

4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թ., կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2007:

Լրացուցիչ

1. **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986:

2. **Սարգսյան Գ.,** Պատմահայր Հերոդոտոսը // Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 551-579:

3. **Սարգսյան Գ.,** Քսենոփոնի կյանքը և ստեղծագործությունը // Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 201-221:

4. **Քսենոփոն,** «Անաբասիս», թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970:

5. **Քսենոփոն,** «Կյուրոպեդիա», թարգմանությունը հուն. Բնագրից և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000:

6. «Օտար աղբյուրները հայերի մասին»: Հունական աղբյուրներ N 1: Ստրաբոն. Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:

7. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 9: Հունական աղբյուրներ, Ա, Հովսեփ Ֆլավիոս, Դիոն Կարսսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976:

8. «Օտար աղբյուրները հայերի մասին», թիվ 3. Տակիտոս, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941:

Թեմա 4. Բանահյուսությունը որպես հայ ազգագրության սկզբնաղբյուր

4.1. Բանահյուսական աղբյուրների՝ որպես ազգագրության սկզբնաղբյուրի գնահատման հարցի շուրջ

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա կոլեկտիվ բանականության և կոլեկտիվ հույզի արգասիքը: Այն ձևավորվել է տվյալ էթնոսի և նրա լեզվի ծագման հետ միաժամանակ, ստեղծվել և ավանդվել է բանավոր եղանակով, տարբեր ժանրերով և տարբերակներով, զարգացել ու փոփոխվել տվյալ ժողովրդի հազարամյա գոյի ու գիտակցության, նրա լեզվի պատմական զարգացման փոփոխություններին համապատասխան, ներառել պատմաշրջանների նյութական ու հոգևոր կյանքի տարբեր կողմերի հատկանիշներ, ժողովրդական լայն զանգվածների աշխարհընկալումը, դարավոր կենսափորձը, նրանց ըմբռնումներն ու իմաստությունը: Լինելով ամենից առաջ գեղարվեստական մտածողության արգասիք, գեղարվեստական խոսքի արտահայտություն՝ բանահյուսությունը իրականությունն արտացոլում է բանավոր ավանդությամբ, գեղարվեստական պատկերների ու կերպարների միջոցով փոխակերպված՝ արտացոլելով ժողովրդական իմաստություն ու ճանաչողություն: Folk-lore անգլերեն բառը առաջին անգամ իբրև տերմին գիտական շրջանառության մեջ է մտել 1846 թ. անգլիացի գիտնական Վիլյամ Թոմսի միջոցով՝ իբրև ժողովրդական ստեղծագործություն, ժողովրդական իմաստություն:

Ֆոլկլորը իր մեջ է առնում ժողովրդական բանավոր ստեղծագործության բոլոր սեռերն ու ժանրերը, սահմանափակում-

ներ չունի ժամանակի առումով, նրա մեջ են մտնում վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը հասած ստեղծագործությունները: Դրանք արտահայտում են ժողովրդի ձգտումներն ու երազանքները, տարբեր պատմաշրջանների էթնոմշակութային շատ իրողություններ, այդ պատճառով էլ նրա ստեղծածը համակում է բոլորին և, բերանից բերան անցնելով, դառնում է սերունդների սեփականությունը, հանդես գալիս իբրև ամբողջ ժողովրդի ստեղծագործություն: Բանահյուսությունը ժողովրդական լայն զանգվածների գեղագիտական կարիքները բավարարելուց զատ, ունի նաև կիրառական լայնահուն գործառնություններ, սերտորեն առնչվում է ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի տարբեր ոլորտների հետ, ստանձնում գործառնական ակտիվ դեր և գեղարվեստական խոսքով ու մտածողությամբ իր մեջ արտացոլում է կյանքի ու մշակույթի տարբեր բնագավառներին աղերսվող ժողովրդական ըմբռնումները, մտորումները, հավատալիքները, իղձերն ու ձգտումները[239]:

Բանավոր ավանդությունը հայ ժողովրդի պատմական գոյության ողջ ընթացքում ակտիվորեն արձագանքել է գրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին, սկսած Հայկ Նահապետի ազգածագման առասպելական վիպասքից, վերջացրած XIX-XX դարերի և անգամ մեր օրերի ազատագրական հերոսամարտերին նվիրված երգերով ու զրույցներով: Փաստորեն, հայ բանավոր ավանդությունը անսպառ աղբյուր է ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի, կենցաղի, բարքերի, հոգեբանության, ազգային-հասարակական ձգտումների ողջ համայնա-

[239] Այս մասին տե՛ս **Գր. Գրիգորյան,** Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980, էջ 4-12, **Սարգիս Հարությունյան**, Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 6-7:

պատկերը ճանաչելու, ըմբռնելու և հետազոտելու տեսակետից: Մի խոսքով՝ բանահյուսությունը ժողովրդի հոգուց ու հավատից բխած մտքերի, պատկերացումների, խոհերի ու երազանքների մի ամբողջական համակարգ է, հոգևոր մշակույթի մի վիթխարի բնագավառ, որի անսպառ տվյալները պատմամշակութային մեծ արժեք են ներկայացնում հայ ժողովրդի բազմադարյա նյութական ու հոգևոր կյանքի համակողմանի հետազոտության համար:

Բանահյուսության գոյությունը եթե մի կողմից նպաստել է նրա կատարելությանը, ապա մյուս կողմից գրի չառնվելու հետևանքով կորստյան պատճառ է դարձել, մեծագույն մասը մահացել է նրա ասացողների մահվան հետ: Բանահավաքները գրեթե միշտ մեծ վշտով են պատմում, որ իրենք չկարողացան ժամանակին գրի առնել նշանավոր հորինողների իմացածը: Ասացողներից շատերը մեծ գովեստով են խոսում իրենց վարպետների, իսկ երբեմն էլ նրանց վարպետների իմացածի հարստության մասին: Շատ բան անհետացել է միջնադարում: Բանահյուսության գրառումները Հայաստանում սկսվել է XIX դարի 70-80-ական թվականներից:

Ժամանակին գրի չառնվելու, մոռացության մատնվելու հետևանքով վիթխարի կորուստներ է կրել հայ ժողովրդական բանահյուսությունը, բայց պահպանվածն էլ համաշխարհային մակարդակով զարմանք է պատճառում իր բազմաթիվ պատումներով («Սասնա ծռեր» և այլն), լեզվաոճական գունագեղությամբ, ժանրային և բովանդակային լայն շրջանակներով:

Պատմական ավանդազրույցները մինչև հայոց գրերի գյուտը, գրառվել և պահպանվել են այլալեզու գրավոր աղբյուրներում (Մար Աբաս Կատինա): Հայ գրականության սկզբնավորման վաղ շրջանում դրանք գրառվում են, վերամշակվում, օգ-

տագործվում Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Եզնիկի և այլոց կողմից՝ իբրև պատմական ու բանահյուսական սկզբնաղբյուրներ: Իբրև ժամանակակից կյանքն ու պատմական իրականությունը ճշմարտացիորեն արտացոլող ստեղծագործություն՝ այն գրավում է պատմիչների ուշադրությունը և դառնում նրանց զգալի մասի պատմական հետազոտությունների գլխավոր աղբյուրներից մեկը: Պատմահայր Մ. Խորենացին իր «Պատմություն հայոցի» 1-2 գրքերը՝ հայ ժողովրդի ծագման ու կազմավորման վերաբերյալ շարադրել է հին դարերից մինչև իր ժամանակները հարատևած վիպական երգերի, պատմական զրույցների, ավանդությունների, առասպելների և բանահյուսական այլ ժանրի ստեղծագործությունների հիման վրա: Ագաթանգեղոսի և Փ. Բուզանդի պատմությունների աղբյուրը նույնպես բանահյուսությունն է: Նրանց շնորհիվ են պահպանվել ու այսօր մեզ հասել հայոց նախապատմական շրջանի դյուցազնական-դիցաբանական առասպելները նախահայր Հայկի, Արամի, Արա Գեղեցիկի, Տորքի, Վահագնի մասին, վիպական այնպիսի հինավուրց հուշարձաններ, որպիսիք են «Վիպասանք» առասպելաբանական վիպաշարը, «Պարսից պատերազմ», հետագայում նաև «Տարոնի պատերազմ» ավանդական վեպերը:

Նշանակալից է նաև հայ նոր գրականության սկզբնավորման և զարգացման վրա բանավոր ավանդության ազդեցությունը թե՛ ժողովրդական լեզվով, մտածողությամբ և թե՛ բանահյուսական երկերի գրական վերամշակումներով, սկսած Աբովյանից ու Պռոշյանից, վերջացրած մերօրյա բանաստեղծներով ու գրողներով:

«Բանահյուսության կաթնաղբյուրից են խմել ու հզորացել Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Թումանյա-

նը, Ավ. Իսահակյանը և մեր մյուս դասականները: Բանահյուսական ծագում ունեն Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Ա. Բակունցի, Ե. Չարենցի, Ն. Զարյանի, Հ. Շիրազի, Սարմենի և այլ գրողների շատ ստեղծագործություններ:

Բանահյուսությունը, իբրև դարերով կուտակված ժողովրդական գիտելիքների ամբողջություն, սերտորեն առնչվում է ազգագրության հետ: Բանահյուսությունը, իբրև հնագույն ժամանակներից ժողովրդին ուղեկցող ստեղծագործություն, իր մեջ խտացրել է ոչ միայն նրա կենսափորձն ու իմացությունը, այլև նրա հավատալիքները, սովորությունները, վարքն ու բարքը: Բանահյուսության այնպիսի տեսակ, ինչպիսին առասպելն է, անխզելիորեն և խոր արմատներով կապված է ազգագրության մի մեծ բնագավառի՝ ժողովրդական հավատքի և հավատալիքի հետ: Հեքիաթների, մասնավորապես հրաշապատում հեքիաթների սյուժեների ծագման, ձևավորման ու տարածման հարցում, անշուշտ, մեծ դեր են խաղացել ազգագրական հնամենի ծեսերն առհասարակ, նվիրագործական ծեսերը մասնավորապես: Ծիսական բանահյուսության տեսակների (հարսանեկան, հանգուցյալի վրա երգ, ողբ, աղոթք և այլն) հետազոտությունն արդյունավետ կարող է լինել այդ տեսակների հետ անմիջականորեն շաղկապված ազգագրական իրողությունների, երևույթների համատեղ քննությամբ, ինչպես նաև բանահյուսական այլ տեսակների կատարման եղանակի (մեղեդի, նվագ, պար, շարժում) հաշվառմամբ, որով կամբողջանա այդ տեսակների ժանրային բնութագիրը՝ բովանդակության, ձևի և գործառույթի առանձնահատկություններով:

Բանահյուսության մեջ մինչև այժմ էլ պահպանված են անիմիզմի, տոտեմիզմի, հեթանոսական աստվածների և այլ

պաշտամունքի հետքերը: Նրանում հատկապես արտացոլվում է ընտանիքի նախնական կազմի և հետագա կերպարանափոխումների պատկերը: Պատկառելի է այն ստեղծագործությունների թիվը, որոնց մեջ նկարագրված են հարսանեական, հուղարկավորման, մանկական ծննդի ծեսերն ու դրանց հետ կապված սովորությունները: Քիչ չեն նաև բնության ու հասարակական երևույթների հետ կապված տոների ու տոնախմբությունների վերապրուկները:

Ամբողջ հին բանահյուսության ժանրային հարստությունը՝ առասպելները, գուսանական երգերը, պարերգերը, հարսանեկան երգերը, թաղման երգերը, զրույցները, վիպական երգերը և այլն ազգագրական նյութի անսպառ աղբյուրներ են: Օրինակ՝ վիպերգերից «Հայկ և Բել», «Հայկյան Արամ», «Արտաշես և Արտավազդ», «Տիգրան և Աժդահակ», որ ընկած են Մ. Խորենացու «Հայոց պատմության» հիմքում, որքան էլ որ գեղարվեստական ստեղծագործություններ են, միաժամանակ դրանք նաև պատմական վավերագրեր են: Այդ նույն կերպ պատմական իրողությունների արտացոլում են նաև միջնադարյան պատմական վիպական երգերը՝ «Տրդատ և Գրիգոր», «Տիրան թագավոր», «Արշակ և Շապուհ», «Արշակ, Գնել և Տիրիթ» վիպական, բանաստեղծական ստեղծագործությունները, որ տեղ են գտել հիմնականում Փ. Բուզանդի երկում:

Բանահյուսական շատ ժանրեր կարող են լինել ամենօրյա կյանքի հայելի: Այսպիսին է, օրինակ՝ առակ-ասացվածքը դարավոր կենսափորձի հիմունքով՝ ժողովրդի կուտակած իմաստությունն է կյանքի տարբեր երևույթների մասին, այն հատկանիշների խտացումն է, որ արտահայտված է անհատի և ազգի մտավոր ու հոգևոր կերտվածքի մեջ, պատկերացումն է ինքն իր մասին: Նուրբ դիտարկման և լայն ընդգրկման առու-

մով առած-ասացվածքն ամենատես և ամենացույց հայելի է, որի մեջ ժողովուրդը տեսնում է իրեն: Այսպիսով, կարելի է ասել, որ բանահյուսությունը և ազգագրությունը սերտորեն կապված են ժողովրդի հետ և երկուսն էլ արտացոլում են նրա պատմական զարգացման ուղին, նրա կյանքն ու պայքարը, մեկը՝ պոետական խոսքի, մյուսը՝ ազգագրական, կենցաղային առանձնահատկությունների միջոցով: Բանահյուսության և ազգագրության սերտ կապն ու նպատակի նույնությունը անհրաժեշտաբար պահանջում է բանագետից լինել բանիմաց ազգագրագետ, իսկ ազգագրագետից՝ բանագետ:

4.2. «Սասնա ծռեր» էպոսը հայ բանագիտության և ազգագրության ուսումնասիրության կարևոր հուշարձան

Պատմական ակնարկ: Գրառումներն ու հրատարակությունները:

«Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գ. Սրվանձտյանցը 1873-ին, Մշո Առնիստ գյուղում, երեսփոխան Կրպոյից (Կարապետ) և հրատարակել «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (Կ.Պոլիս, 1874) խորագրով: Երկրորդ տարբերակը 1886-ին էջմիածնում գրառել է Մ. Աբեղյանը՝ Նախո քեռի մոկացուց, և հրատարակել Շուշիում՝ «Դավիթ և Մհեր» (Շուշի, 1889) վերնագրով: Նորանոր տարբերակներ են գրառել և լույս ընծայել Գ. Հովհաննիսյանը (1892), Խ. Դաղյանը (1895), Ս. Հայկունին (1898), Բ. Խալաթյանը (1899), Ա. Աբեղյանը (1900), Ե. Լալայանը (1905) և այլք: Խորհրդային տարիներին Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը, Վ. Բդոյանը, Գ. Գրիգորյանը, Ս. Հարությունյանը, Ա. Սահակյանը արձանագրել են ավելի քան 160 պատում:

«Սասնա ծռեր» էպոսը անվանվել է նաև «Սասունցի Դավիթ», «Սասնա փահլևաններ», «Սասնա տուն», «Ջոջանց տուն», «Սասունցի Դավիթ կամ Միհերի դուռ», «Դավիթ և Միհեր», «Դավթի պատմություն», «Դավթի հեքիաթ» և այլն:

1938-39-ին «Սասնա ծռերի» 1000-ամյա հոբելյանի առթիվ մինչ այդ գրառված 60 պատումների հիման վրա հյուսվել-կազմվել է (Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան) մի միասնական համահավաք բնագիր՝ «Սասունցի Դավիթ» անվանումով, Երևան, 1939: Էպոսի մի այլ համահավաք բնագիր է կազմվել Փարիզում (Տ. Չիթունի)՝ «Սասունական», 1942:

1873-1946-ին գրառված և տպագրված պատումների մեծ մասը Մ. Աբեղյանն ու Կ. Մելիք-Օհանջանյանը ամփոփել և հրատարակել են 3 գրքով («Սասնա Ծռեր», գիրք հ.1, հ.2, գ.Ա, գ.Բ, 1936-51): 1960-1970-ական թթ. գրառված պատումների մի մասը հրատարակվել է երկու գրքով՝ Գ. Գրիգորյան՝ «Սասունցի Դավիթ» 1977: 1970-80-ական թթ. նոր շարժում է առաջ գալիս «Սասնա ծռեր» հերոսավեպի նոր տարբերակների որոնման և գրառման ուղղությամբ: Ս. Հարությունյանը և Ա. Սահակյանը գրառում են վեպի 81 պատում, ութ նոր տարբերակ են գրառում Գ. և Վ. Գրիգորյանները: Նույնքան տարբերակ է գրառում Ռ. Գրիգորյանը Սևանի ավազանի շրջաններից: Արդյունքում լույս է տեսնում Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի «Սասնա Ծռեր» (հ.3, 1979) գիրքը: Նշանակալից աշխատանքներ են կատարվում «Սասնա ծռեր» հերոսավեպի ուսումնասիրման և հրատարակման ուղղությամբ (տե՛ս Ա. Սահակյան, «Սասնա Ծռերի» պատումների քննական համեմատություն (1975), Ս. Հարությունյան, «Սասնա Ծռեր» (վեպի 10 պատում, 1977), «Սասունցի Դավիթ» վեպի համահավաք բնագիրը

(1981), Գ. Գրիգորյան, «Էպոսի ուսումնասիրման պատմությունից» (1983)):

«Սասնա ծռերի» պատմողների մեծ մասի հայրենիքը Սասունն է, Մուշը, Բաղեշը, Մոկքը, Շատախը, Վանը, Հայոց ձորը, Խլաթը, Արճեշը, Մանազկերտը, Ալաշկերտը, Բայազետը, և գրառվել են տեղական բարբառներով: Հայտնաբերված 160 պատումներից հրատարակված է 70-ը:

Կառուցվածքն ու գլխավոր հերոսները: «Սասնա ծռեր»–ում գործում է վիպական հերոսների չորս հիմնական սերունդ. Սանասար և Բաղդասար (I), որոնք պատումներում հանդես են գալիս նաև տարբեր անուններով, Մեծ կամ Ջոջ Մհեր, երբեմն՝ Առյուծաձև Մհեր (II), Դավիթ (Թլոր, Թլոլ, Թլվատ, Թառլան) մականուններով (III), Փոքր կամ Պստիկ Մհեր (IV): Հերոսների այս չորս սերունդներն իրար հետ կապված են ուղղահայաց՝ հայր-որդի ազգակցական կապերով: Յուրաքանչյուր սերունդ ունի վիպական իր առանձին պատմությունը, որը վիպասացներն անվանել են «ճյուղ»՝ սերունդ իմաստով: «Սասնա ծռերի» ամենաընդարձակ, ամբողջական և կենտրոնական մասը Դավթի ճյուղն է, որով և հաճախ էպոսն է անվանվում:

Հիմնական թեմաները: Բոլոր չորս ճյուղերի առաջնային և միավորիչ թեման հակադրությունն ու պայքարն է օտար և հայրենի երկրների, դրանց շահերը մարմնավորող այլադավան օտար բռնակալի և յուրային, արդար և ուղղահավատ հերոսի միջև, որ հաճախ լուծվում է կռվով և միշտ յուրայինի հաղթանակով:

Առաջին ճյուղում հակառակորդը Բաղդադի խալիֆան է՝ օտար կռապաշտ թագավորը, որը բռնությամբ իրեն կին է առնում հայոց կամ խաչապաշտ թագավորի դստերը, նրանից

ծնված երկվորյակները՝ Սանասարն ու Բաղդասարը, որոնք սպանում են իրենց բռնակալ հորը կամ հայրացուին, ազատում մորը, զանազան փորձություններից հետո ապաստանում են լեռնային երկրում, հիմնում Սասնա բերդն ու քաղաքը:

Երկրորդ ճյուղում հակադրությունը ծագում է նոր օտար բռնակալի՝ այլադավան Մսրա Մելիքի և հայրենի Սասնա հերոս Մեծ Միհերի միջև, հակադրությունն այդ ժամանակ ավարտվում է հաշտությամբ: Իսկ երբ Մեծ Միհերը կենակցում է Մսրա Մելիքի կնոջ հետ, և ծնվում է կրտսեր Մսրա Մելիքը՝ Սասնա գլխավոր հակառակորդը, առաջանում է նոր հակադրություն, մանավանդ, երբ Սասունում ծնվում է Դավիթը:

Երրորդ՝ Դավթի ճյուղում այդ հակադրությունը խորանում է, անձնականից վերաճում է ազգայինի և սոցիալ-քաղաքականի, արտահայտվում է մի շարք բախումներով, հատկապես Դավթի ու Մսրա Մելիքի մենամարտով և լուծվում Մսրա Մելիքի մահով:

Չորրորդ՝ Փոքր Միհերի ճյուղում, վերջինս կռվում է թշնամի քաղաքի բնակիչների, նաև Սասունին սպառնացող Կոզբադնի թոռների դեմ, կոտորում, գերում նրանց և պատժում:

Հիմնական բովանդակությունը.

Հայ ազգագրության համար հնագույն և արժեքավոր տվյալներ է պարունակում «Սասնա ծռեր» էպոսը. այն ազգագրական նյութերի մի շտեմարան է: «Սասնա ծռերի» տվյալների հիման վրա կարելի է ազգագրական աղբյուրագիտական բազմաթիվ ուսումնասիրություններ կատարել մի շարք թեմաների շուրջ: Ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսը.

Երկրագործությունն ըստ էպոսի: Գութանավորների աշխատանքը, գութանի գործածությունն ու դրա հետ կապված բազմաթիվ հավատալիքները: Ի դեպ, էպոսում ընդգրկվում է

գութանավորների շաբաթներ տևող վար անելու աշխատանքը, որը թեև բնորոշ չի եղել Սասունի մեծ մասին՝ բնական և հասարակական նպաստավոր պայմաններ չլինելու պատճառով, բայց Հայաստանին, մանավանդ Տարոնին միանգամայն բնորոշ էր: Գութանի գործածությունն ու դրա հետ կապված բազմաթիվ հավատալիքներ կարող էին վեպին նյութ ծառայել այնպիսի երկրում, որտեղ երկրագործությունը հիմնական ճյուղն էր հասարակության մեջ:

Որսորդությունն ու որսաձևերը «Սասնա ծռեր» էպոսում

Էպոսում արտացոլված որսորդության և անասնապահության տվյալները (գլխավոր հերոսը ներկայանում է և՛ որպես որսորդ, և՛ նախրորդ կամ հովիվ): Հերոսի արկածների մասին պատմվող առանձին դրվագներում ցույց է տրվում այդ երկու զբաղմունքների նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

Այգեգործության, մեղվաբուծության, արհեստների, ժողովրդական բժշկության, մարզական խաղերի և այլ հարցերի վերաբերյալ նյութերի քննությունը:

Առանձին խումբ են կազմում բնակարանային շինարարության, գյուղաշինարարության և քաղաքաշինարարության վերաբերյալ նյութերը: Դրանց հետ կապված հասարակական կոլեկտիվ հարաբերությունները՝ իբրև տոհմացեղային հարաբերությունների վերապրուկներ (օր.՝ Սասունի հիմնումը): Կարևոր տվյալներ զգեստների ու ագանելիքի, ուտեստի մասին, սրանց հետ կապված կենցաղային առանձնահատկությունները:

Մասնագիտական ուսումնասիրության են արժանի էպոսում գյուղական համայնքի հասարակական հարաբերությունները: Միայն այդ եղանակով կարելի է զատել, դասդասել

և ժամանակագրել նախնադարյան կամ միջնադարյան և հետնագույն շրջանի հարաբերությունները:

Ուշագրավ է նաև էպոսում ընտանեկան և ազգակցական հարաբերությունների վերապրուկային տեսքով մնացուկների բնութագրությունը: «Սասնա ծռեր» էպոսը հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան է:

Վրիժառության, հավատալիքային երևույթների արտացոլումը էպոսում ևս ուսումնասիրության անհրաժեշտության խնդիրներից է:

Դավթի և Խանդութի ամուսնության մեկնաբանությունը: Օրինակ՝ Դավթի ու Խանդութի ամուսնության պատմության մեջ թաքնված են երկու իրարամերժ հարաբերություններ՝ մայրիրավական, երբ ամուսնությունը կատարվում է աղջկա հրավերով վերջինիս տանը, և հայրիրավական, երբ ամուսնացած զույգը տղայի առաջարկով թողնում է աղջկա հոր տունը և տեղափոխվում Սասուն: Սասունում այդ զույգը մտնում է այն գերդաստանի մեջ, որը մի քանի սերնդի համակեցության պատմություն ունի՝ Ձենով Հովանի նահապետությամբ:

Քեռի Թորոսի կերպարը իբրև ավունկուլատի գոյության վերապրուկ: Օրինակ՝ Քեռի Թորոսի և նրա միջոցով կառավարվող ընտանեկան ու ազգակցական հարաբերություններում կարելի է նշմարել հայերի մեջ ավունկուլատի գոյության փաստերի վերապրումները: Էպոսի մի շարք պատումներում Ձենով Հովանին փոխարինում է Քեռի Թորոսը: Սա մի կողմից ներկայանում է իբրև քրոջական տան տերն ու տնօրենը, և մյուս կողմից՝ նրա սերնդի դաստիարակը: Այսինքն՝ այն, ինչ որ հատուկ է ավունկուլատին առհասարակ:

Առաջարկվող այս թեմաներից մի քանիսի վերաբերյալ գիտական հրապարակումներ ունեն Կ. Մելիք-Օհանջանյանը,

Վ. Բդոյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Սահակյանը, Ս. Հարությունյանը, Ա. Պետրոսյանը, Զ. Ծատուրյանը, Գ. Վարդումյանը և Կ. Թոխաթյանը (տե՛ս գրականության ցանկում): Տողերիս հեղինակը ևս անդրադարձել է «Սասնա ծռերին» (տե՛ս նույն տեղը):

Մեծ արժեք են ներկայացնում նաև հայ պատմագիրների երկերում պահպանված Հայկի ու Բելի և Արա Գեղեցիկի ու Շամիրամի առասպելները, Արտաշեսի վեպը, Արշակի և Շապուհի մասին զրույցը և այլն: Սրանցում ամուսնության և ընտանիքի, բարքերի ու սովորությունների, կենցաղային հարցերի, հավատալիքների և այլնի վերաբերյալ նկարագրությունները արժեքավոր ազգագրական նյութ են (օրինակ՝ Արտաշեսի ձեռքով օրիորդ Սաթենիկին առևանգելու, առևանգման համար տեխնիկական միջոցառումների, գլխագնի, հարսանիքի արարողության, մահվան ու հուղարկավորման վերաբերյալ պատմությունը):

Ազգագրական որոշ նյութեր գուսանական-ժողովրդական տաղերում, ժողովրդական խաղիկները, աշխատանքի և հարսանեկան երգերը որպես ազգագրական ուղեկցող նյութ են և կարևոր սկզբնաղբյուր:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

• **Առաջադրանքներ**. Իբրև տնային՝ յուրաքանչյուր ուսանողի հանձնարարել գրել ռեֆերատներ ստորև տրված թեմաների վերաբերյալ.

1. Որսորդության և որսաձևերի դրսևորումները էպոսում:
2. Անասնապահության վարման եղանակները էպոսում:

3. Երկրագործությունն ըստ էպոսի:

4. Այգեգործությունն ըստ էպոսի: Հավաքչությունն ըստ էպոսի:

5. Արհեստների վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

6. Ժողովրդական բժշկության վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

7. Մարզական խաղերի վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

8. Քաղաքաշինության, գյուղաշինարարության, բնակարանաշինության վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

9. Զգեստների, ագանելիքի վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

10.Ուտեստի և դրա հետ կապված կենցաղային առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

11.Գյուղական համայնքի, հասարակական հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

12.Ընտանեկան և ազգակցական հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

13.Ամուսնության ավանդութային ձևերի վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

14.Վրիժառության սովորույթների վերաբերյալ տեղեկություններն ըստ էպոսի:

15.Հավատալիքային երևույթների արտացոլումը էպոսում, դրա ուսումնասիրության անհրաժեշտության խնդիրը:

16.Հարցեր նաև կամովին ընտրությամբ:

• **Ինքնաստուգման հարցեր**

1. Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում, որտե՞ղ և ո՞ւմ կողմից է գրառվել էպոսը:
2. Ովքե՞ր են հավաքագրել էպոսի զանազան պատումները:
3. Ե՞րբ և քանի՞ հատորներով է այն տպագրվել:
4. Որքա՞ն պատումներ են հայտնաբերվել, որքա՞նն է առ այսօր հրատարակվել:
5. Ի՞նչ կառուցվածք ունի էպոսը:
6. Որո՞նք են էպոսի չորս ճյուղերի թեմաները:
7. Ի՞նչ բովանդակություն ունի էպոսը:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. **Աբեղյան Մ.,** Սասնա Ծռեր, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 325-387:
2. **Աբեղյան Մ.,** Հայոց հին գրականության պատմություն, գ.Ա (սկզբից մինչև X դար), Երկեր, հ.Գ, Երևան, 1968:
3. **Հարությունյան Ս.,** Գ. Սրվանձտյանցը և հայկական հերոսավեպը (Գ. Սրվանձտյանցի 150-ամյակի առթիվ) // ՊԲՀ 1990, թիվ 4, էջ 3-9:
4. Սասունցի Դավիթ, Երևան, 1939:
5. Սասնա ծռեր, հ.Ա, Եր., 1936, հ.Բ, մաս Ա,Բ, Եր., 1951, հ. Գ, Եր., 1979:
6. «Սասնա ծռեր», աշխ. Ս. Հարությունյանի, Երևան, 1977:
7. **Օրբելի Հ.,** Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956:

Լրացուցիչ

1. **Բդոյան Վ.**, Ընտրության և ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում // ԲԵՀ 1976, թիվ 1, էջ 84-100:

2. **Գրիգորյան Գր.**, Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Եր., 1960:

3. **Ծատուրյան Զ.,** Նախնիների պաշտամունքի դրսևորումները «Սասնա Ծռեր» էպոսում //Հայ ժողովրդական մշակույթ XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ հրատ, և ազգ. ինստիտուտի 50-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 474-483:

4. **Հարությունյան Ս.**, Վիշապամարտը «Սասնա Ծռեր» էպոսում // «Լրաբեր» հաս. գիտ., ՀՍՍՀ ԳԱ, 1981, թիվ 11:

5. **Հովհաննիսյան Ս.**, «Սասնա Ծռերը» հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան // ԲԵՀ, 1968, թիվ 3, էջ 96-110:

6. **Մելիք-Օհանջանյան Կ.**, Միթրա-Միհրը «Սասնա Ծռերի» մեջ // Գրական–բանասիրական հետախուզումներ, Եր., 1946, էջ 269-327:

7. **Միրզոյան Լ.,** Պաշտամունքային մի քանի դրսևորումներ «Սասնա ծռեր» էպոսում // Մերձավոր Արևելք (XIII): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Գիտություն» հրատ., Եր., 2018, էջ 112-120:

8. **Նահապետյան Ռ.**, Ամուսնաընտանեկան հարաբերությունների արտացոլումը «Սասնա Ծռեր» էպոսում // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, էջ 55-73:

9. **Պետրոսյան Ա.**, Որսորդությունը և որսաձևերը «Սասնա Ծռեր» էպոսում // ՊԲՀ, 1988, թիվ 2, էջ 227-235:

10. **Սահակյան Ա.**, «Սասնա Ծռեր» ժողովրդական վեպի աշխարհագրական տարածման և տեղայնացման խնդիրը / ՊԲՀ, 1971, № 2, էջ 94-106:

11. **Սահակյան Ա.**, «Սասնա Ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, 1975:

12. **Վարդումյան Գ., Թոխաթյան Կ.,** Լուսնի և Արևի պաշտամունքի դրսևորումները «Սասնա Ծռեր» էպոսում // «Սասնա Ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ավանդույթները, Միջազգային զիտաժողովի նյութեր, Եր., 2004, էջ 88-101:

Թեմա 5. Հայերի կենցաղի և մշակույթի վերաբերյալ վկայությունները միջնադարյան հայ պատմագրության մեջ[240]

5.1. V-IX դարերի հայ մատենագիրների տեղեկությունները հայերի կենցաղի և մշակույթի վերաբերյալ

ա) Հայ մատենագրության մեջ ազգագրական երևույթները գրի առնելու շարժառիթները:

Հայ ազգագրության պատմության մի ողջ պարբերաշրջանի, այն է՝ V-XVIII դարերի հայ և օտար աղբյուրների ազգագրական բազմահարուստ նյութերն առ այսօր ամբողջությամբ ուսումնասիրված չեն: Մինչ հայոց գրերի ստեղծումը և ազգային պատմագրության առաջացումը Հայաստանին և հայերին վերաբերող վկայություններ հիմնականում հաղորդել են օտար աղբյուրները, նաև սերնդեսերունդ փոխանցված ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրեր:

Վաղ ավատատիրական դարաշրջանը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավորվեց սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի էական փոփոխություններով և շրջադարձերով, որոնք որակապես փոխեցին երկրի հոգևոր ու նյութական մշակույթի, հասարակական-ընտանեկան կենցաղի բնույթն ու կերպարը՝ հիմք դնելով միջնադարյան աշխարհայեցողությանը և մշակույթին՝ իր բոլոր դրսևորումներով: Առաջին հեղաշրջող իրադարձությունը 301 թ. քրիստոնեության ընդունումն էր որպես պետական կրոն, իսկ երկրորդը՝ հայ գրերի

---

[240] Այս հիմնախնդրին անդրադարձել ենք հակիրճ: Այն շատ ծավալուն լինելու պատճառով որոշել ենք գիտական հանրությանը ներկայացնել առանձին մենագրությամբ՝ լրամշակման ենթարկելուց հետո:

գյուտը, որոնք լիովին փոխեցին երկրի մշակութային պատկերը և հոգևոր մթնոլորտը:

Հայ ազգագրության հնագույն շրջանի վերաբերյալ հայերեն գրավոր հաղորդումներն սկսվում են հինգերորդ դարից: Այդ նյութերը տեղ են գտել ոչ միայն հայ մատենագիրների երկերում, այլև օտար գրականության հայերեն թարգմանություններում: Հայ մատենագիրներն ու գրողները ազգագրական երևույթների առանձին նպատակադրված նկարագրություններ չեն ներկայացրել, ազգագրությունը հայ պատմիչների համար գիտական, պատմական արժեք չի գիտակցվել, ուստիև հատուկ ուշադրության առարկա չի եղել, որովհետև նրանց նպատակը քաղաքական պատմության շարադրանքն է համարվել: Օտարի համար հայկական կենցաղն ու մշակույթը կարող էին մեծ հետաքրքրություն ներկայացնել և գրի առնելու ցանկություն առաջացնել, մինչդեռ ազգագրական երևույթները հայ պատմագիրների համար սովորական ընկալվելով՝ գրանցման պահանջ չեն առաջացրել: Այդ է պատճառը, որ ազգագրական հարյուրավոր երևույթներ անդարձ կորստյան են մատնվել:

Այդուհանդերձ, հայ պատմագրությունն ու գեղարվեստական գրականությունը և տակավին անտիպ հազարավոր ձեռագրեր վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար վիթխարի քանակությամբ ազգագրական նյութեր են հաստատագրել: Ճիշտ է, դրանք շատ հաճախ կցկտուր են, կոտորակված, ցաքուցրիվ, բայց մեծարժեք են: Բացի ազգայինից, հայ պատմագրության մեջ կուտակված են նաև Հայաստանի հարևան ու հեռավոր երկրների, ժողովուրդների կենցաղի ու մշակույթի վերաբերյալ մեծ քանակությամբ նյութեր: Դրանք գրեթե ամբող-

ջությամբ արևելագիտության համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն:

Արդ, որո՞նք են եղել այն շարժառիթները, որոնց շնորհիվ այս կամ այն չափով ազգագրական երևույթներ են հաստատագրվել հայ մատենագրության մեջ: Հիմնականում դրանք են՝

ա) Քրիստոնեության պայքարը հեթանոսության, այդ շրջանին հատուկ կենցաղավարության, ամուսնաընտանեկան հարաբերությունների, բարքերի, ժողովրդական հին տոնակատարությունների և թատերախաղերի, դիցապաշտության դեմ և այլն:

բ) Օտար տիրողների և նրանց բռնությունների նկարագրությունները, ազգային և այլազգի սովորությունների ու կրոնի հակադրությունների, նրանց ու հայերի բարքերի տարբերությունների բացահայտումը, նաև այլ շարժառիթների պարզաբանումը: Եթե ազգագրական նյութերի այս գրառումները չլինեին, այժմ խիստ դժվար կլիներ ամբողջական գաղափար կազմել միջին դարերի հայկական կենցաղի ու մշակույթի մասին:

բ) Հայ մատենագիրների երկերի թեև կցկտուր, բայց հույժ կարևոր ազգագրական նյութերի բովանդակությունը:

Պատմիչներից մեզ հայտնի են գրական այնպիսի նյութեր, որոնք ներկայացնում են հայոց կենցաղի ու մշակույթի գրեթե բոլոր բնագավառները: Չկա որևէ բնագավառ, որին շատ թե քիչ անդրադարձած չլինեն: Բանն այն է, որ, ինչպես ասվել է վերը, այդ նյութերը չափազանց կոտորակված են և ցրված պատմիչների երկերում: Բծախնդիր ու մանրազնին աշխատանքով միայն կարելի է ծաղկաքաղ կատարել և համասեռ նյութեր համադրելու միջոցով մոտավոր վերականգնել

ազգագրական առանձին երևույթները: Դա անհրաժեշտ է ոչ միայն ազգագրական առումով, այլ նաև հայոց մշակույթով զբաղվողներին, պատմաբաններին, հնագետներին և այլ մասնագետների:

Ժամանակի պատմական անցուդարձերի նկարագրության և ավելի հին դարաշրջանների հարատևած առասպելապատումների գրառման միջոցով (օր. Մովսես Խորենացի և այլք) մեզ են հասել գիտական բարձրարժեք վկայություններ: Դրանք ամբողջությամբ ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական բնութագիրը. դիրքը, բնակլիմայական պայմանները, բուսական ու կենդանական աշխարհը, հայ ժողովրդի ծագումնաբանությունը, զբաղեցրած տարածքն ու տեղագրական անվանումները, պետական կազմավորումների ընդհանուր պատկերը: Դրանցով կարելի է ի մի բերել տնտեսական կենցաղի գրեթե բոլոր ոլորտները. դաշտամշակությունը, ոռոգման համալիրները, բերքահավաքը, կալսոցն ու պահեստավորումը, այգեգործությունը, գինեգործությունը, բանջարաբուծությունը՝ իրենց համապատասխան աշխատանքային գործիքներով: Հայ պատմագրության էջերում տեղեկություններ են պահպանված նաև բրիչների, վարող միջոցների, լծկանների, լծասարքերի, աշխատանքային պրոցեսների, արմտիքների, ցանքերը խնամելու, ոռոգման աշխատանքները կազմակերպելու, բերքահավաքի, կալսման գործիքների և ամենատարբեր աշխատանքների վերաբերյալ: Այդ տվյալների օգնությամբ հնարավոր է դառնում XIX դարի հողագործական համալիրները կապել հնագույն շրջանների համապատասխան համակարգերի հետ և կազմել հողագործության պատմության ընդհանուր և համառոտ ուրվագիծը:

Անասնապահական զբաղմունքների վերաբերյալ ակնարկներին զուգակցում են հովվական կյանքը, անասնապահության նստակյաց և հեռագնա ձևերը, անասունների արածեցման կոլեկտիվ համայնքային և անհատական եղանակները, կաթնամշակությունը, ակնարկներ կան մեղվապահության, շերամապահության, որսորդության, ձկնորսության վերաբերյալ: Որսորդությունն ու ձկնորսությունը ներկայացված են նաև իբրև մարզական և ռազմահայրենասիրական զբաղմունքներ: Ակնարկային տեղեկություններ են հաղորդվում տնայնագործության և արհեստների, հաղորդակցության, տեղափոխման և կապի միջոցների, տարածության ու ժամանակի չափերի, ծանրության կշիռների, Հայաստանի և հարևան երկրների միջև առևտրական կապերի, ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսակների վերաբերյալ:

Բավականին շատ են **նյութական մշակույթի** առանձին տարրերի՝ բնակավայրի, դրանց տեղագրական անվանումների ու գտնվելու վայրերի, բնակարանային շինարարության ձևերի, բնակարանի, դրա ներսույթի՝ կահավորանքի, լուսավորման և ջեռուցման համակարգերի, զգեստի, ագանելիքների՝ ոտնամանների, գուլպաների տեսակների, գլխի հարդարանքների, գլխարկների տեսակների, մանավանդ հոգևոր դասի՝ իրենց սեռատարիքային բաժանումներով, զարդարանքի, ձեռագործ արվեստների, առհասարակ բանվածքների, հյուսվածքների, գործվածքների, ուտեստի, ճաշերի և խնջույքների, ըմպելիքների՝ օշարակների, գինու և օղու ստացման ժողովրդական եղանակների և հմտությունների վերաբերյալ նյութերի նկարագրությունները:

Միջնադարյան աղբյուրներում նյութեր կարելի է գտնել արվեստների՝ երաժշտության, նկարչության, քանդակագոր-

ծության և այլն, ռազմական արվեստի՝ զենքերի տեսակների, զինվորական սովորությունների ու բարքերի, զինանշանների, դրոշների, պետական նշանների և այլնի վերաբերյալ:

Ակնարկներ կան **հասարակական-ընտանեկան** հարաբերությունների՝ ընտանիքի ձևերի (գերդաստան, փոքր ընտանիք), ներընտանեկան հարաբերությունների, ընտանեկան վարվելակարգի, կնոջ դերի ու կարգավիճակի, ամուսնության ձևերի, ամուսնական տարիքի, ամուսնության հնագույն ձևերի՝ մերձամուսնության, քենամուսնության, տեգրամուսնության, բազմակնության, առնանգմամբ ամուսնության մնացուկների, հարսանեկան արարողակարգերի, պսակի, սերնդաճի, մանկան դաստիարակության, մահվան և հուղարկավորման սովորույթների, հանդերձյալ կյանքի, «ազգ»–արենակցական համակարգի, ազգանվանումների, ազգատոհմային տնտեսական, գաղափարական, հասարակական, տարածքային ընդհանրությունների, համայնքային, դրացիական հարաբերությունների, համայնքային ինքնակառավարման համակարգերի, պետական կառավարման համակարգերի, զորքի, զինվածության, պատերազմ վարելու ազգային հմտությունների, պահվածքի, հայրենասիրության, հոռի բարքերի վերաբերյալ:

Առանցքային խումբ են կազմում **հոգևոր-հումանիտարմշակույթի**՝ հեթանոսության խարազանման, պաշտոնական կրոնի, հնագույն պաշտամունքային դրսևորումների, հեթանոսական դիցարանի, հավատալիքների՝ հողի, ջրի, լեռների, կրակի, երկնային մարմինների՝ արևի, լուսնի, աստղերի պաշտամունքի վերաբերյալ ժողովրդական հնագույն պատկերացումների, նախնիների պաշտամունքի, սնահավատությունների, կախարդությունների, կենդանիների, թռչունների և

առհասարակ բնության պաշտամունքի, ժողովրդական տոնակատարությունների, առտնին կենցաղի, կենցաղային առարկաների, մարզական խաղերի, ժողովրդական բանավոր ստեղծագործությունների, երաժշտության, երգարվեստի, պարարվեստի և հումանիտար մշակույթի այլ տարրերի վերաբերյալ տեղեկությունները:

Թեև Բուզանդի ազգագրական տվյալները վաղ միջնադարյան մյուս հեղինակների համեմատությամբ բավական հարուստ են, բայց և այնպես պակաս կարևորություն չեն ներկայացնում, օրինակ, հետևյալ հեղինակների հաղորդած նյութերը՝ Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Եզնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Եղիշե, Հովհան Մամիկոնյան, Հովհան Մանդակունի, Անանիա Շիրակացի և այլն:

Միջնադարյան աղբյուրների մեջ բացառություն են կանոնական գրականության առանձին տեսակներ, որոնք հայ իրավունքի և եկեղեցական կանոնների նորմերը պարտադիր կարգով շարադրել են ի գիտություն համապատասխան հաստատությունների: Այդ նյութերը գրի են առնվել թե՛ աշխարհիկ, թե՛ եկեղեցական շահերը ժամանակի ոգուն հարմարեցնելու նպատակով: Այդ իսկ պատճառով բացառիկ արժեք են ներկայացնում նաև հայկական սովորութային իրավունքին և եկեղեցական կանոններին վերաբերող նյութերը:

Ազգագրական նյութերը սկզբնաղբյուրներում հիմնականում ներկայացված են ցրված, կոտորակված ձևով, ուստի նպատակահարմար է դրանք ի մի բերել, համադրել, ապա միայն ուսումնասիրել: Այդ պատճառով էլ պատմագրությունից պետք է քաղել ոչ միայն նկարագրություններն ու ակնարկները, այլև առանձին նախադասություններ, անգամ բառաձևեր,

որոնց համադրումը հնարավորություն կտա վեր հանելու ազգագրական այս կամ այն երևույթը:

գ) Մատենագիրների ազգագրական նյութերի գրառման եղանակները:

ա) Նյութի ուղղակի նկարագրությունը կամ համառոտ ակնարկը,

բ) փոխաբերական իմաստով նյութին անդրադառնալը,

գ) բանահյուսության միջոցով: Աշխարհիկ և հոգևոր երգերի, վեպերի, առակների և այլ ժանրերի միջոցով բանահյուսությունը և այն ներկայացնող հեղինակը հաղորդակից է դարձնում բազմապիսի նյութերի:

Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Հովհան Մանդակունու, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի և այլոց երկերի (տե՛ս հիմնական և լրացուցիչ գրականության ցանկը) ազգագրական ուշագրավ տեղեկությունները, որոնցով հայ մատենագիրները ներկայանում են որպես տարերային բանահավաքներ: Ազգագրական նյութեր կարելի է քաղել նաև թարգմանական գրականության մեջ: Բացի «Աստվածաշնչից» նաև «Վաստակոց գիրք» և այլն, որոնցում, պարզ է, հայկական նյութեր չեն նկարագրված, սակայն ժամանակի հայկական կենցաղին ու մշակույթին քաջատեղյակ թարգմանիչները կատարել են վկայակոչումներ և անցկացրել են զուգահեռներ: Ազգագրական հատ ու կենտ նյութեր կարելի է գտնել նաև մեր գրիչների կողմից գրված բազմաթիվ ձեռագիր հիշատակություններում, որոնք կարոտ են ուսումնասիրման:

Միջնադարյան հայ մատենագրության ազգագրական նյութերի դասդասման, թեմատիկ բնութագրման նախնական

ջանքեր են գործադրել Մխիթարյան միաբանները, առանձնապես Ղուկաս Ինճիճյանը, Վարդան Հացունին: Առ այսօր այդ նյութերի համակարգված ուսումնասիրումը և գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ գործը գրեթե արված չէ, բացառությամբ տողերիս հեղինակի՝ «Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում» (Երևան, 2013թ.) և Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»-ը վերաբերող ուսումնասիրություններից (տե՛ս Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Հայ ազգագրության սկզբնաղբյուրներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2019):

Նշանակությունը: Հայ մատենագրության ցիրուցան ազգագրական նյութերի ամբողջացումը և դրանց ուսումնասիրությունը բացառիկ կարևորություն ունեն ողջ միջնադարի հայկական կենցաղի ու մշակույթի, հայ բնակչության կենցաղամշակութային յուրահատկությունների, ազգագրական ամբողջական պատկերի պարզաբանման և ներկայացման համար: Այն նաև կարևոր է հեթանոսության շրջանի շատ սովորույթների, դիցաբանության և այլնի մշակութաբանական վերակազմությունների համար, մանավանդ, մեր պատմիչները բավականաչափ նյութ են հաղորդում հայ ժողովրդի հնագույն ժամանակների հավատալիքների մասին: Այս իմաստով խիստ արժեքավոր են Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» և Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկերը: Պատմագիրների հաղորդումների համադրման մեթոդով կարելի է գոնե մոտավոր վերականգնել V-XVIII դարերի տնտեսամշակութային համալիրը:

5.2. X–XIV դարերի հայ մատենագիրների և օրենսդիրների ազգագրական տեղեկությունները հայոց կենցաղի և մշակույթի վերաբերյալ

X-XIV դդ. պատմագիրներից մեզ հայտնի են ազգագրական այնպիսի նյութեր, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի կենցաղի ու մշակույթի բոլոր բնագավառները, որոնք, սակայն, չափազանց կոտորակված են: Դրանց համադրման միջոցով կարելի է ներկայացնել շուրջ հազարամյա միջնադարյան Հայաստանի ազգագրական պատկերը: Զարգացած միջնադարի հայ պատմագրության և բանավոր ու գեղարվեստական գրականության ազգագրական վկայությունների ընդհանուր բնութագիրը ներկայացված է Հովհաննես սարկավագ Իմաստասերի, Թովմա Արծրունու, Արիստակես Լաստիվերցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարոնացի Ասողիկի, Վարդան Արևելցու, Սմբատ Սպարապետի, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի և ուրիշների երկերում: Զարգացած միջնադարի գրականության մեջ հայկական կենցաղն առավել մանրամասնությամբ, իբրև ուղեկցող, բայց բացառիկ արժեքավոր նյութ, արձանագրվել է, մասնավորապես, Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» և առակներում, Վարդան Այգեկցու առակներում: Այդ գործերում բավական հանգամանորեն ներկայացված են ընտանեկան և հասարակական հարաբերությունները, իրավունքի ինստիտուտը, հայ կնոջ և տղամարդու բարոյական չափանիշներն ու նկարագիրը: X-XIV դդ. Հայկական գրավոր աղբյուրների ազգագրական նյութը կարելի է դասակարգել հետևյալ թեմաների.

- Երկրագործություն և այգեգործություն, երկրագործական տեխնիկա:

- Անասնապահություն, ձևերը, ժողովրդական հմտությունները, հավատալիքները:

- Արհեստագործություն. մետաղագործություն, երկաթագործություն, ոսկերչություն, բրուտագործություն, մանածագործություն և այլն:

- Զենքեր, զինվորական սովորություններ և բարքեր:

- Զինանշաններ, դրոշներ, պետական նշաններ և այլն:

- Որսորդություն, ձկնորսություն, ռազմավարժական արարողակարգեր և այլն:

- Արվեստներ – երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն և այլն:

- Բնակարանային շինարարության ձևեր:

- Զգեստներ, գլխանոցներ, ագանելիքներ, պսակներ, զարդեր:

- Ճաշեր և խնջույքներ:

- Ձեռագործ արհեստներ, բանվածքներ, հյուսվածքներ, գործվածքներ և այլն:

- Սոցիալական հարաբերություններից՝ ամուսնաընտանեկան և ազգակցական հարաբերություններ, տոհմացեղային հարաբերությունների վերապրուկներ, բարքեր, որդեծնության հետ կապված ծեսեր ու սովորություններ, մահվան և հուղարկավորման հետ կապված սովորություններ, ընտանեկան և հասարակական սովորություններ, դատական պատժական սովորություններ և այլն:

- Առտնին կենցաղ, կենցաղային առարկաներ:

- Ժողովրդական տոներ:

- Մարզական խաղեր:

- Դիցաբանական տվյալներ, առասպելներ, հավատալիքներ, նախնիների պաշտամունք, սնահավատություններ, հմա-

յություն, կենդանիների, թռչունների և առհասարակ բնության, երկնային մարմինների պաշտամունքի հետքեր և այլն:

5.3. XV–XVIII դարերի հայ մատենագիրներ

Ուշ միջնադարի հայ պատմագրության և գեղարվեստական գրականության ազգագրական վկայությունների ընդհանուր բնութագիրը Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու, Զաքարիա Քանաքեռցու, Հակոբ Կարնեցու, Զաքարիա Ագուլեցու, Աբրահամ Երևանցու, Գրիգոր Դարանաղցու, Աբրահամ Կրետացու, Առաքել Դավրիժեցու, Երեմիա Քյոմուրճյանի, Սիմեոն Երևանցու և ուրիշների երկերում:

Իրավաբանական, կանոնական ու փիլիսոփայական գրականությունը՝ Հովհան Օձնեցի, Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ, Գրիգոր Տաթևացի, միջնադարյան տաղերգուներ՝ Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Հովհաննես Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Մկրտիչ Նաղաշ, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, միջնադարյան արվեստը՝ մանրանկարչությունը, քանդակագործությունը, ինչպես նաև վիմագիր արձանագրությունները՝ որպես հայոց միջնադարյան հայ ազգագրության ուշագրավ սկզբնաղբյուրներ:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ - Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

- **Առաջադրանքներ.**

1. Ներկայացնել ռեֆերատ հայ ժողովրդի ծագման ու նրա կազմավորման ընթացքի մասին ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»:

2. Վաղմիջնադարյան հայոց տնտեսական կենցաղի բնութագրությունը ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկի:

3. Վաղմիջնադարյան հայոց ընտանեկան և հասարակական կենցաղի բնութագրությունը ըստ Փավստոս Բուզանդի:

4. Ագաթանգեղոսը Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն հռչակելու և հեթանոսական դիցարանի աստվածությունների պաշտամունքի մասին:

5. Աշտիշատի ժողովի որոշումներն ըստ Փավստոս Բուզանդի:

6. Կորյունը հայոց գրերի գյուտի մասին:

- **Ինքնաստուգման հարցեր**

1. Որո՞նք են եղել հայ մատենագրության մեջ ազգագրական երևույթների գրի առնելու շարժառիթները:

2. Թվարկել V-IX դդ. հայ պատմագիրներին իրենց աշխատություններով:

3. Որո՞նք են եղել ազգագրական նյութերի գրառման եղանակները:

4. Ազգագրական ի՞նչ երևույթներ են արձանագրել հայ մատենագիրները, դրանց նշանակությունը:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:

2. **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստեփան Մալխասյանցի, ԵՊՀ հրատ., Երևան, 1987:

3. **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981:

4. **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Բ.Ա. Ուլուբաբյանի, «Ուսանողի գրադարան», Երևան, 1982:

5. **Եղիշե,** Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1971:

6. **Եզնիկ Կողբացի,** Եղծ աղանդոց, աշխարհաբար թարգմանությունը Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:

7. **Մեբեռս,** Պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Գ.Կ. Խաչատրյանի և Վ.Ա. Եղիազարյանի, Երևան, 2004:

8. **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, աշխարհաբար թարգմանությունը Վ.Դ. Առաքելյանի, Երևան, 1969:

9. **Ղևոնդ,** Պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Ա.Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982:

Լրացուցիչ

1. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ.1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թ., Երևան, 2007, հ.2, III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, Երևան, 2011:

2. **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն (սկզբից մինչև X դար), երկեր, հ.3, Երևան, 1968:

3. **Աբեղյան Մ.,** Երկեր, հ.Դ, Երևան, 1970:

4. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, Երևան, 1974:

5. **Մկրյան Մ.,** Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976:

6. **Նահապետյան Ռ.,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013, 148 էջ:

7. **Նահապետյան Ռ.,** Վաղմիջնադարյան Հայաստանի նախարարական տիրույթների ու պաշտոնների և կենսապահովման մշակույթի վերաբերյալ տեղեկությունները Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հաս. գիտ.», 2018, թիվ 3, էջ 25-40:

8. **Նահապետյան Ռ.,** Վաղմիջնադարյան Հայաստանի սոցիալական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում. – ԵՊՀ պատմության ֆակուլտետ «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 336-347:

9. **Նահապետյան Ռ.,** Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» հայոց հեթանոսական դիցարանի ուսումնասիրության սկզբնաղբյուր. – «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2018, թիվ 3, էջ 32-43:

10.**Նահապետյան Ռ.,** Ընտանեկան իրավունքը ըստ վաղ միջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների, Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևան, 2010, էջ 31-40:

11.**Նահապետյան Ռ.,** Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Հայ ազգագրության սկզբնաղբյուրներ (Հնագույն շրջանից, մինչև XVII դար), Երևան, 2019, 297 էջ:

Թեմա 6. Արաբ, եվրոպացի և թուրք ճանապարհորդների ուղեգրությունները Հայաստանի և հայերի մասին

6.1. IX-XIV դդ. արաբ ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին

Միջնադարյան հայ ազգագրական նյութերի գրանցման տեսակետից կարևոր է արաբ և եվրոպացի ճանապարհորդների ներդրումը, որոնք, լինելով առևտրական տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև առաջնորդվելով իրենց երկրների քաղաքական շահերով՝ շրջել են Արևելքի երկրներում, այդ թվում նաև Հայաստանում՝ հումքի աղբյուրներ և վաճառահանման շուկաներ փնտրելու նպատակով: Դրա հետ մեկտեղ՝ շրջագայությունների ընթացքում նրանք գրի են առել պատմական և ազգագրական չափազանց կարևոր վկայություններ Հայաստանի և հայերի մասին, որոնք ճշտվել և շրջանառության մեջ են դրվել ինչպես տվյալ ժամանակաշրջանի հայ մատենագրության, այնպես էլ օտար աղբյուրներում եղած նյութերի հիման վրա: Լինելով օտարներ և շրջելով Հայաստանում ու ողջ Հարավային Կովկասում՝ նրանք գրի են առել հատկապես իրենց համար խորթ բարքերն ու ավանդական կենցաղի բազում սովորույթներ: Հայաստանի և հայերի մասին մեզ են հասել ուղեգրություններ, դիվանագիտական զեկուցագրեր, առևտրական գործարքների տեքստեր, ուսումնասիրություններ և այլն: Դրանցում կան բացառիկ նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի տնտեսական-հասարակական կյանքին, մշակույթին ու սովորություններին: Կասկածից վեր է, որ հրատարակած ոչ բոլոր նյութերն են պատշաճ ուսումնասիրվել և գնահատվել:

Բացառիկ ուշագրավ են հայոց ազգագրական երևույթների անդրադարձները **Ջահիզի, Յակուտ ալ-Համավի** (IX դ.), **ալ-Իսթախրի** (X դ.), **Իբն ալ-Ֆակիհի**, **Իբն Հաուկալի, Մուկադդասի** (X դ.), **Իբն ալ-Ասիրի** (XII-XIII դ.) և ուրիշների ուղեգրություններում:

Հայաստան այցելած արաբ ճանապարհորդների ուշադրությունը հատկապես գրավել է տեղի գործվածքեղենի արտադրությունը, որին հատուկ էր ներկելու, դաջելու բարձր արվեստը, նրբահյուսությունը: Հայաստանում գործածված ամենաարժեքավոր և ճանաչված ներկը եղել է «որդան կարմիրը», որով ներկում էին արքայական, իշխանական պատմուճաններ, վարագույրներ, գորգեր և այլն: Արաբ ճանապարհորդները առանձնակի հետաքրքրությամբ են հիշատակում «կիրմիզ» անվամբ հայկական կարմիր ներկի մասին:

Որդան կարմիր ներկը մեծ ճանաչում է ունեցել աշխարհում, քանի որ դրանով ներկված գործվածքները և մետաքսե կտորները զարմանալիորեն երկար ու ձիգ դարեր պահպանել են վառ կարմիր գույնը: Հայ ներկարարները գաղտնի են պահել, և ցավոք, գրավոր աղբյուրներն էլ լռում են որդի ու ներկի ստացման տեխնոլոգիայի մասին: Առ այսօր այդ գաղտնիքը բացահայտված չէ[241]:

---

[241] XVIII դ. ռուս ճանապարհորդներից Մարկովը Մասիսի լանջերից գտել է «որդան կարմիր» միջատը: Ուշագրավ է, որ այդ միջատներն իրենց գոյությունը պահպանել են 1500 մետր բարձրության վրա՝ սեզ կոչվող խոտերի մեջ: Չնայած սաստիկ ցրտին՝ որդան կարմիր միջատները չեն ոչնչացել, քանի որ հալվող ձյունը նպաստել է սարի լանջում չիմանների աճմանը, որտեղ սեզն ամենից շատ է լինում (Տես՝ «Բազմավէպ», 1890, թիվ № 4, էջ 275): XVIII դ. ճանապարհորդներից Շարդենը նշում է, որ «որդան կարմիր» ներկը տեսել է ոչ միայն Արարատյան դաշտում, այլև Կարնո գավառում (տես՝ «Բազմավէպ», 1890, № 4, էջ 276): Որդան կարմիրը հիշատակում է նաև Ալիշանը. «Ամենեն ընտիր և ամենեն մեծ ճանչցած որդն կարմրոս, հռչակյալ

Արաբ պատմիչներից Իբն-Խալդունը հիշատակում է, որ 775-786 թթ. Հայաստանը Բաղդադի խալիֆի վճարած հարկերի մեջ ուղարկված գորգերից մեկի երկարարությունն էր 60 ոտնաչափ, այդ գորգի վրա աշխատել էին 10 տարի[242]:

IX դարի ճանապարհորդ ալ-Ջահիզի «Գիրք մեծ քաղաքների ու երկրների հրաշքների մասին» և «Հայացք վաճառականության վրա» գրքում Հայաստանը հռչակվել է թաղիքներ, թամբեր, գորգեր, նուրբ փսիաթներ, գոտիներ, բուրդ և նրանից հյուսված զգեստներ, գլխաշորեր, վարագույրներ, բրդե քող՝ շղարշ արտահանող երկիր: Նշելով խալիֆայության մեջ արտադրվող ապրանքների մասին՝ հիշատակում է, որ «լավագույն կահավորանքը, ամենաթանկն ու ամենաշքեղը հայկական **միրիզզա** կոչված այծի մազե գործվածքն էր, որոնց թվում նաև գորգեր, ծածկոցներ ու բարձեր: Արաբ ուղեգրողը հավաստում է նաև, որ Մուտավվաքիլ խալիֆայի (842-861) արքունիքի փայլուն կահավորանքում կարևոր տեղ էին գրավում հայկական գորգերն ու բարձերը: Հեղինակ է նաև «Գիրք կենդանիների մասին» մեծադիր մի հատորի, որտեղ նա հաղորդում է կենդանաբանական, մարդաբանական և ազգագրական բնույթի տեղեկություններ: Համեմատաբար ուշ հայտնաբերվեց նրա «Հայացք վաճառականության վրա» գիրքը, որում ուշագրավ նյութեր կան Հայաստանի վերաբերյալ[243]: Վերջինիս

իր շարափայլ գունով, թագավորաց ծիրանիք և հրովարտակք կներկվեին (Տես՝ **Ղ. Ալիշան,** «Հուշիկք հայրենյաց հայոց», հատ Բ, Վենետիկ, 1869, էջ 52): Նույնիսկ XIXդ 30-ական թթ որդան կարմրի օգտագործման հիմնախնդրով զբաղվել է նաև ռուսական կառավարությունը (Տես՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից// «Տեղեագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1946, № 2-3, էջ 17):

[242] Տե՛ս **M. Марр**, Ани, М., 1934, էջ 128:

[243] Օգտվել ենք «Արաբական աղբյուրներ, Գ, արաբ մատենագիրներ. Թ-Ժ

«Զգեստների ճանաչման և նրանց արժեքավորման մասին» գլխում հեղինակը թվարկում է Հայաստանում արտադրվող և արտահանվող ընտիր զգեստները. «Լավագույն կահավորանքը (ֆարշ), ամենաթանկն ու ամենաշքեղը միրիզզա (կիրմիզ) հայկական կարմիր փայլուն կահավորանքն է, ապա՝ մետաքսե (խազզ) գծավոր զարդարունը, գունագեղ մետաքսը…: Այս բոլոր տեսակների արժեքն ու գինը բարձրանում է ըստ այդմ, թե ինչքան ոսկու հյուսվածք են պարունակում: Նրանք բոլորը լինում են ոսկով հյուսված՝ բացի միրիզզա (այծեմազե գործվածք) հայկականից, մայսանիից (աստղափայլ) և բարակ մետաքսից (բազյուն): Լավագույն թաղիքը (լաբուդ) չինականն է, ապա Մաղրիբբի կարմիրը, Թալիկանի սպիտակը, հայկականը և խորասանյանը» (Արաբ. Գ, 424-425): «Դրսի երկրներից բերված զարմանալի հրաշալիքների, պիտույքների, հարճերի, քարերի և այլ բաների մասին» գլխում թվարկվում են աշխարհի այն երկրների ապրանքներ, որոնք միջազգային մեծ արժեք ունեն, դրանց շարքում են նաև «Ամիդից՝ հյուսված զգեստներ, թաշկինակներ, նուրբ վարագույրներ, բրդե քող (շղարշ)… Հայաստանից՝ թաղիքներ, թամբեր, գորգեր, նուրբ փսիաթներ, գոտիներ, բուրդ» (նույն տեղում, 427-428):

Ալ-Յակուբի (IXդ.): Ծնվել է Բաղդադում, երկար ժամանակ ապրել է Հայաստանում, մահացել է 897 թվականին: Մեզ են հասել ալ-Յակուբիի երեք երկեր: Դրանցից ամենակարևորը «Պատմությունն» է, որն իր լայն ընդգրկմամբ գերազանցում է նախորդներին՝ ներառելով տեղեկություններ նույնիսկ հյուսիսի ժողովուրդների ու չինացիների մասին, դրանով իսկ այս

դարեր» գրքից, ներածությունը և բնագրերից թարգմանությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 419 (այսուհետև՝ Արաբ., Գ և էջը):

երկը կարող է համարվել պատմական հանրագիտարան: Նա հայտնի է որպես առաջին խոշոր պատմիչներից մեկը: Հեղինակն ունի նաև աշխարհագրական մի երկ, որը կոչվում է «Գիրք երկրների»: Ըստ արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանի, որը նաև այս երկի հայերեն թարգմանողն է, գրքի՝ հյուսիսային և արևմտյան երկրներին վերաբերող բաժինները, որոնք մեզ չեն հասել, պարունակել են Հայաստանի մանրամասն նկարագրությունը, քանզի հեղինակը կյանքի մեծ մասն անցկացրել է Հայաստանում[244]:

«Ասել է Ահմադ իբն Յակուբը, թե Հայաստանը երեք մասից է բաղկացած: Առաջին մասը ընդգրկում է Դվինը, Կարնո քաղաքը, Խլաթ, Շիմշատ քաղաքները և սրանց միջև ընկած հողերը: Երկրորդը՝ Վիրքը, Տփղիսը և Դարբանդ քաղաքը և Ալանքը (ալ Լան) և սրանց միջև ընկած հողերը: Երրորդ մասն ընդգրկում է Պարտավը, որն Առանի (գլխավոր) քաղաքն է, Փայտակարանը և Դարբանդը (Արաբ.,Գ, 476): Այս տեղեկությունը, թե Արմինիան երեք մասի է բաժանվում, մեծ նշանակություն ունեցող վկայություն է, որը մի պարզություն է մտցնում: Գրեթե բոլոր արաբ մատենագիրները Արմինիան, ըստ նախկին ժամանակաշրջանի (Զ-Է դարեր), բաժանում են 4 մասի՝ Առան (Ա. Հայաստան), Վիրք (Բ. Հայաստան), Արևելյան Հայաստան (Գ. Հայաստան) և Արևմտյան Հայաստան

---

[244] Ալ-Յակուբիի թե՛ պատմության, թե՛ աշխարհագրության ձեռագրերը պակասավոր են, և երկուսն էլ գտնվել են մեկական ձեռագրով: Այնտեղ պակասող մասը պետք է վերաբերի հենց Հայաստանին, և եթե նկատի ունենանք, որ ալ-Յակուբին Հայաստանի մասին լավատեղյակ է, քանի որ այնտեղ ապրել է, ուստի պետք է ենթադրել, որ նա շատ մանրամասն ու կարևոր տեղեկություններ պետք է հաղորդեր: Բարեբախտաբար, արաբ պատմիչներ Շարիշին և Արուլ-Ֆիդան պահպանել են ալ Յակուբիից քաղված տեղեկություններ Հայաստանի մասին (տե՛ս նույն տեղը, ծանոթ. II, 12, էջ 475-476):

(Դ. Հայաստան): Այս քառակի բաժանումը արաբական շրջանի համար ոչ մի վարչական կամ ազգային հիմք չունի, իսկ Արմինիա նահանգի եռակի բաժանումը ավելի է արտահայտում իրականությունը, քանի որ Հայաստանը հանդես է գալիս որպես մեկ միավոր, և, իրոք, այն Արմինիայի կազմում առանձին վարչական ազգային միավոր էր, որը կառավարում էր Հայոց իշխանը (Բաթրիկ), իսկ մյուս երկու միավորներից առաջինը ընդգրկում է Հայոց արևելից կողմանք (Արցախ և Ուտիք նահանգները) և Աղվանքը, Շիրվանը և Դարբանդը: Երրորդ միավորը Վիրքն է (Ջուրջան):

Ալ-Յակուբին մյուս գլուխներում ակնարկում է այն գործվածքների մասին, որոնք ընդհանուր անվամբ հայկական (արմանի) են կոչվել դեռևս Ը-Թ դարերում: Այս առումով նրա տեղեկությունը եզակի է (Արաբ., Գ, 475): Յակուբին իր «Պատմություն» (Տարիխ) հանրագիտարանային գրքում գրում է, որ Հիշամ խալիֆի (724-743) պատվերով պատրաստվում են հայկական մետաքսե փայլուն բանվածքներ, գունազարդ հայկական կտորեղեն և զգեստի տարբեր տեսակներ:

Արաբ հեղինակներից իբն Խալդունը հայտնում է, որ VIII դարի 80-ական թթ.՝ Մահդի և Հարուն-ալ Ռաշիդ խալիֆների ժամանակ, Հայաստանի՝ Բաղդադի իշխանությանը վճարած բնատուրքերի ցուցակում նշված է քսան գորգ (խալի): Գորգագործությունն այնքան զարգացած էր, որ իբրև բնահարկի տեսակ գորգեր էին ուղարկվում խալիֆայության արքունիք: Ուշագրավ է, որ արմանի կոչված գործվածքեղենը, Յակուբիի տեղեկացմամբ, գոյություն է ունեցել VIII-IX դարերում: Յակուբին «Գիրք երկրների մասին» աշխատության մեջ նշում է, որ Տիգրիսի ափին գտնվող Նահրաբան քաղաքում «պատրաստում են այն բանվածքի հենքը, որից հայկական (արմանի)

կոչված տեսակներն են արտադրում: Այն տանում են Հայաստան, ուր մանվում և հյուսվում է»: Ինչ վերաբերում է հետագայում Բագրատունյաց ժամանակաշրջանում այդպիսի արտադրության գոյությանը, ապա այդ մասին կան հարուստ վկայություններ X դարի արաբ աշխարհագրագետների երկերում: Ինչ վերաբերում է հետագայում՝ Բագրատունյաց ժամանակաշրջանում գոյություն ունեցող այդպիսի արտադրությանը, ապա այդ մասին կան հարուստ վկայություններ Ժ դարի արաբ աշխարհագրագետների երկերում:

Ալ Իսթախրի (Ժ դ.): Ալ Իսթախրին X դարի արաբական աշխարհագրական գիտության դպրոցի առաջին և ամենակարևոր ներկայացուցիչներից է: Մահացել է 951 թվականից հետո: Նրանից մեզ է հասել «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» երկը, որը մանրամասն նկարագրությունն է այն բոլոր երկրների, որ նա համարել է մահմեդական աշխարհի մաս (Արաբ., Գ, 571-582): Լինելով Հայաստանի տարբեր վայրերում՝ նա հանգամանորեն նկարագրել է դրանք: Այսպես, ալ Իսթախրին նկարագրել է Դվինը որպես Հայաստանի մայրաքաղաք. «Դվինը (Դաբիլ) Արդաբիլից մեծ քաղաք է և Հայաստանի մայրաքաղաքն է…», «Ունի պարիսպ, և քրիստոնյաները նրանում մեծաթիվ են: Մայր մզկիթը եկեղեցու կողքին է: Նրանում արտադրում են բրդե գործվածքներ, ինչպես՝ գորգ, երեսի բարձեր (վասայիդ), հենաբարձեր (մակուիդ), շալվարի գոտիներ (տիքքա) և հայկական այլ տեսակի (ասնաֆ ալ արմանի) ապրանքներ: Ունեն մի ներկ, որը կոչվում է կարմիր (կիրմիզ), որով ներկում են բուրդը: Ինձ պատմել են, որ դա մի որդ է, որն ինքնին իր վրա հյուսվում է,

ինչպես մետաքսի որդը[245], պատմել են նաև, որ այնտեղից արտահանվում է մեծ քանակությամբ դիպակ (բազյուն՝ մետաքսե ծաղկավոր ծանր գործվածք)» (Արաբ., Գ, 574):

Ուշագրավ են Դվինի վերաբերյալ ալ Իսթախրիի վկայությունները, որոնց համաձայն՝ Դվինը համարվում էր միջազգային առևտրի կարևորագույն կենտրոններից մեկը, որտեղ հանգուցավորվում էին արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ ձգվող առևտրական մայրուղիները: Նա բարձր է գնահատել Դվինում պատրաստվող բրդե գործվածքներն ու գորգերը, «հայկական արտադրության» այլ իրերը, որոնք արտահանվում էին: Արևելյան տարբեր երկրներից Դվին էին բերվում տարբեր տեսակի ապրանքներ և քաղաքից արտահանվում մետաքսե թել ու գործվածքներ, գորգեր, բրդից պատրաստված տարբեր տեսակի հագուստեղեն: Պատմիչը մանրամասն

[245] Ալ Իսթախրիի և մյուս արաբ պատմիչների վրա մեծ տպավորություն են թողել հայկական շերամապահությունն ու որդան կարմիր ներկի ստացումը: Հայկական որդան կարմիրը մեծ ճանաչում է ունեցել աշխարհում, քանի որ դրանով ներկված կտորեղենը զարմանալիորեն մեկուկես հազարամյակ պահպանել է իր վառ կարմիր գույնը: Ըստ հայ պատմիչների և արաբ մատենագիրների վկայությունների՝ այդ որդը աճում է Արարատյան հովտի սեզերով հարուստ հողերում, գարնանը հավաքում են այդ որդերը, չորացնում հով տեղում, ապա աղում են երկանքով և հետագա մշակումներից հետո ստանում են այդ կարմիրը: Առաջին փուլը հստակորեն նկարագրվում է, իսկ երկրորդը հավանաբար հայ ներկարարաների գաղտնիքն էր, որի մասին լռում են գրավոր աղբյուրները: Ալ-Իսթրախրին և մյուս մատենագիրները վկայում են, որ դրա կարմիրով հայերը ներկում էին միայն բրդե թելեր ու գործվածքներ, սակայն արաբ մատենագիրները սխալվում էին այս հարցում, քանի որ վաղուց ճշտված է, որ Մատենադարանում պահվող ձեռագրերում օգտագործված մետաքսե կտորները ներկված են որդան կարմիրով և մինչև այժմ էլ պահպանել են իրենց վառ կարմիր գույները, բացի դրանից՝ XII-XIII դարերից մեզ հասած գորգերում բրդի հետ մեկտեղ օգտագործվել են նաև մետաքսե թելեր, որոնք ներկված են եղել որդան կարմիրով (տե՛ս **Ա. Պետրոսյան,** Շերամապահությունը Հայաստանում, Երևան, 1987):

թվարկում է ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին (Արաբ., Գ, 574-575): Խազարները, ինչպես վկայում է Ալ Իսթախրին, գործվածքներ և զգեստներ չէին պատրաստում, դրանք տարվում էին նրանց մոտ Ջուրջանից, Արմինիայից և Ռումից (Բյուզանդիա):

Այնուհետև նույն հեղինակը գրում է. «Այս քաղաքներում [նկատի ունի Խլաթը, Դվինը, Նփրկերտը] ու նրանց գավառներում արտադրվում են ապրանքներ (տիջարատ) արտահանման համար և անհրաժեշտ շատ բաներ, ինչպես արջառ ու ոչխար և գործվածքեղեն, որոնք ամեն կողմ ուղարկվում են, հայկական կոչված ընտիր կահավորանք (ֆարշ), շալվարի գոտիներ (տիքաք), որոնք Սալմաստում արտադրվածի նման են և վաճառվում են ամեն մեկը մի դինարից մինչև տասը դինար, աշխարհի ոչ մի մասում նմանը չկա. նաև հայկական (արմանի) թավշակերպ (մահֆուր) նստելու բարձեր (մակահդ), երկար գորգեր (անխախ), որոնք նմանը չունեն իրենց քանակով ու որակով, ինչպես կանացի քողեր (սաբանիյատ), վարագույրի բրդե կտորներ (մակարիմ), գլխի թաշկինակներ (մանադիլ), որոնք պատրաստվում են Նփրկերտում և Հայաստանի այլ մասերում»: Միջնադարյան արաբալեզու սկզբնաղբյուրներից հայտնի է նաև, որ խալիֆաթի ընդգրկած հայկական տարածքում լավագույն հատկանիշներով աչքի էր ընկնում հայկական բուրդը, որով էլ հենց մեծապես պայմանավորված են եղել գործվածքեղենի որակական բարձր հատկանիշները:

Արաբ աշխարհագիրը տալիս է Հայաստան երկրի աշխարհագրական սահմանները Սմբատ Ա-ի (890-914) օրոք. Հայաստանը «...գտնվում էր նրանց, քրիստոնյա մեծամեծների ձեռքում, և նրանք (հայերն) են, որ գերակշռում են Հայաստա-

նի բնակչության մեջ: Սա հայոց թագավորությունն է (մամ-լաքատ ալ-Արման), որը սահմանակից է Հոռոմներին (Ռում), նրանց մի սահմանը հասնում է Պարտավ, մյուս սահմանը՝ Ջազիրա (Միջագետք), իսկ մի սահմանը՝ Ատրպատական և Հայաստանից դեպի հոռոմների կողմերը, առաջին սահմա-նային ամրությունը Կարնո (Կալիկալա) քաղաքն է: Նրանք [հայերը] Հոռոմների երկիր մտնելու համար ունեն մի նավա-հանգիստ, որը հայտնի է Տրապիզոն անվամբ, ուր հավաքվում էին վաճառականները և մտնում Հոռոմների երկիրը վաճա-ռականության համար: Ինչքան բյուզանդական մետաքս, դի-պակ և զգեստներ են բերվում այդ կողմերը, ապա Տրապիզոնի վրայով է (հասնում]...» (Արաբ., Գ, 575):

Ալ Իսթախրին խոսում է նաև Հայաստանի բնական միջավայրի, Մեծ և Փոքր Մասիսների, քաղաքների միջև եղած հեռավորությունների չափերի և այլնի մասին, որոնք ունեն պատմաաշխարհագրական և, ինչ խոսք, նաև ազգագրական մեծ արժեք: Պատմիչը ճշտում է մի շարք քաղաքների տե-ղադրությունն ու առանձնահատկությունները. «Նախճավան, Բերկրի, Խլաթ, Մանազկերտ, Բաղեշ, Կարնո քաղաք, Արզն, Նփրկերտ և Շիրակ քաղաքները բոլորն էլ փոքր են, մեծու-թյամբ իրար նման: Բոլորն էլ բարեբեր հող ունեն և շեն են, լի բազում բարիքներով: Ոմանք Նփրկերտը Ջազիրայի մեջ են համարում, սակայն դա Տիգրիսից այս կողմ է, իսկ Ջազիրայի սահմանը Տիգրիսի ետևում է (այն կողմում է), ինչպես քար-տեզում այն դրել ենք Տիգրիսի ու Եփրատի միջև, այդ պատ-ճառով Հայաստանի մեջ ենք համարել... Այս քաղաքներում գների էժանություն կա այնպես, որ որոշ վայրերում ոչխարը երկու դիրհեմ արժի, երբեմն որոշ գավառներում մեղրի երկու, նույնիսկ երեք մանը (մեկ մանը հավասար է 3,328 կգ-ի) մեկ

դիրհեմ է: Նրանցում այնպիսի առատություն կա, որ եթե չտեսած մարդուն պատմես, չի հավատա, այնքան որ առատ է... Հայաստանի և Առանի դրամը ոսկին (դինար) է և արծաթը (դիրհեմ)՝ բոլոր տեսակներով» (Արաբ., Գ, 575-577):

Ալ-Իսթախրին կարևոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի գետերի և լճերի մասին. «Իսկ այս երկրի գետերը, որոնց վրա նավեր են գնում, հետևյալներն են՝ Կուրը (Քուռ), Արաքսը (ալ Ռասա)... Արաքսը քաղցր ջուր ունեցող հաճելի գետ է: Բխում է Հայաստանից, հասնում է Վարդանակերտի դուռը, ապա Մուղանի ետևի կողմով և Կուրի ելքի ետևով թափվում ծովը (Կասպից – Ռ. Ն.): ... Հայաստանում կա մի լիճ, որը կոչվում է Արճեշի (Վանա) լիճ, որտեղից հանվում է տառեխ (թիռիխ) ձուկը, որն արտահանվում է բոլոր երկրները» (Արաբ., Գ, 577):

Ուշագրավ է, որ X դարի արաբագիր անանուն տաջիկ մի ուղեգրող ևս հիացմունքով է նկարագրել Հայաստանից արտահանվող գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքները՝ նշելով դրանց ցանկը՝ հացահատիկ, ձուկ, մեղր, բամբակ, մետաքս, ներկեր (որդան կարմիր), աղ, մոմ, գորգեր, կարպետներ, բրդե հագուստ, խոնջաներ, գոտիներ և այլն[246]: Նա նշում է նաև, որ Դվինն ու Սալմաստը հայտնի էին գոտիների արտադրությամբ, Դվինը՝ նաև գորգերի, իսկ Խոյը, Բերկրին, Ախլաթը, Արճեշը ու նաև Սալմաստը նշանավոր էին իբրև կարպետագործության կենտրոններ: Ըստ որում՝ ուղե-

[246] Տե՛ս **Հ. Փափազյան,** Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X) դար // «Տեղեկագիր», 1953, № 5, էջ 73-86:

գիրը մասնավորապես կարևորում է հայաշատ Սալմաստում զիլի կարպետները[247]:

Ըստ X դարի արաբ ուղեգիր իբն Ֆադլանի հավաստման՝ Կամայի բուլղարական թագավորի արքայական վրանում, որտեղ հազար մարդ կարող էր տեղավորվել, հատակին փռված էին մեծ մասամբ հայկական գորգեր[248]:

Արաբ մատենագիր Մուհամմեդ Բարիախինի տեղեկության համաձայն՝ 911 թ. «Էմիր Աբուսաջը Մուխտադիր խալիֆին (Հայաստանից) ուղարկեց 400 ձի, 30 հազար դինար և յոթ հայկական գորգ, գորգերից մեկը 60 կանգուն երկարություն և 60 կանգուն լայնք ուներ, այդ գորգի վրա աշխատել էին տասը տարի»: Եթե այդ ժամանակ գործածվող կանգունն 0,51-0,52 մետր է, ապա գորգի երկայնքն ու լայնքը կկազմի մոտ 31 մետր, իսկ մակերեսը՝ ավելի քան 960 քառակուսի մետր: Որպես տարեկան հարկ արաբական խալիֆայությունը Հայաստանից ստանում էր 20 գորգ[249]:

Ալ Մուկադդասսի (Ժ դ.): Ծնվել է Երուսաղեմում (946/ 947-1000 թթ.), ճանապարհորդել է գրեթե բոլոր մահմեդական երկրներում: Իր «Լավագույն բաժանումները երկրամասերի (կլիմաների) ճանաչման համար» աշխարհագրական երկը շարադրել է X դարի 80-ական թվականներին: Նա, ինչպես դասական դպրոցի բոլոր աշխարհագրագետները, նկարագրել է միայն մահմեդական աշխարհը, որը երկու հստակ մասերի է բաժանել՝ արաբական և ոչ արաբական (աջամ) երկրների:

---

[247] Տե՛ս նույն տեղը, էջ 78-79:

[248] Տե՛ս **Ибн-Фадлан,** Путешествие на Волгу, перевод с коментариями, под редакцией акад. И. Ю. Крачковского, Москва, 1939, էջ 73:

[249] Տե՛ս **В. В. Бартольд,** Историко-географический обзор Ирана, СПб., 1903, էջ 150:

Երկրորդ խմբում է նաև Հայաստանը, որն «ընդարձակ հովիտների երկրամաս» հասկացության մեջ միացվել է Առանին ու Ատրպատականին (Արաբ., Գ, 649-660):

Ալ Մուկադդասին նշում է, որ «… այնտեղ հասնելու ճանապարհները դժվար են, և քրիստոնյաները նրանում մեծամասնություն են կազմում:

Հայաստանը մի մեծ նահանգ է, որը հիմնել է Նոյի որդի Հաբեթի որդի Թորգոմի որդի Արմինին: Այստեղ արտադրվում են վարագույրներ, բրդե բարձրարժեք գորգեր, բազում հատուկ արտադրանքներ: Նրա մայրաքաղաքն է Դվինը (Դաբիլ), և նրա քաղաքներն են Բաղեշը, Խլաթը, Արճեշը, Բերկրին, Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Դախառականը, Մարաղան, Ահրուն, Մարանդը, Սինջանը, Կարնո քաղաքը, Կանդարիան, Կալաատ Յունիսը և Նուրինը» (Արաբ., Գ, 651):

Ըստ արաբ հեղինակի՝ Բաղեշը Հայաստանի նշանավոր քաղաքներից էր: Այն առևտրական ճանապարհներով կապված էր Վանա լճի շրջակա քաղաքների հետ: Բաղեշն ուներ երկու թաղամաս և քարակերտ միջնաբերդ (Արաբ., Գ, 653): Քաղաքից ճանապարհներ էին ձգվում դեպի Խոյ և Սալմաստ, Արճեշ, Բերկրի, Խլաթ և Ամիդ (Արաբ., Գ, 578, 659): Քաղաքն ուներ հայ և ասորի խառը բնակչություն: Դժվար չէ նկատել, որ այստեղ դեռ X դարում քրդեր չէին հաստատվել: Ալ-Մուկադդասին հիշատակում է նաև մեծամասնությամբ հայերով բնակեցված Մանազկերտը՝ իբրև անառիկ բերդ և շուկա ունեցող քաղաք (Արաբ., Գ, 652):

Մատենագիրը պատկերավոր անդրադարձներ է կատարում Հայաստան երկրի մարդկանց արհեստներին, զբաղմունքներին, առևտրին, բնական պաշարներին և այլն. «Երկրամասը ունի շատ առավելություններ, նրանում առատ

են մրգերը, խաղողի որթերը, նրա քաղաքները Իրաքի նման հաճելի են, ինչպես Մուղանը, Խլաթը, Տաբրիզը, նրանում գնեը ցածր են, ծառերը՝ խիտ, նրա միջով գետեր են հոսում, լեռների վրա մեղր կա, իսկ դաշտերում արհեստանոցներ, տափաստանները լի են ոչխարների հոտերով, իսկ մենք, նրա բոլոր գավառների համար մի ընդհանուր անուն չգտնելով, այն կոչեցինք «Ընդարձակ հովիտների երկրամաս» (Իկլիմ ալ Ռիհար): Այս երկրամասը Իսլամի [թագավորության] համար մի գեղեցկություն է..., որը բրդե գործվածքներ է արտադրում և զարմանահրաշ գոտիներ, ուր որդերը կարմիր (կիրմիզ) ներկ են տալիս: Հնարավոր չէ տալ նրա նկարագրությունը ամբողջությամբ...: Միաժամանակ սա մի կարևոր սահմանային ամրություն է (սաղր) և ազնիվ երկիր: Նրանում են Արաքսի [եզերաբնակ] մարդիկ, որոնք Մեծ Մասիս [Հարիս] և Փոքր Մասիս [Հուվայրաս] լեռների տակ են մնացել: Նրանում կա Թաիֆի [լեռների] մի մասը և դրախտի հետ նմանություն ունի: Սա իսլամի պարծանքն է և ղազիների [հավատի ռազմիկների] հանգստավայրը: Ունի օգտակար ապրանքներ, հին գավառներ, հորդառատ գետեր, արժեքավոր գյուղեր, հրաշալի առանձնահատկություններ ու հյութեղ մրգեր» (Արաբ., 650): Դրանցից մեկը նա համարում է Նախճավանը: Մատենագիրը այն համարել է վաճառաշահ քաղաք: Այն ուներ ամրաշեն բերդ: Քաղաքի հիմնական բնակիչները հայեր են (Արաբ., Գ, 636):

Իր նախորդի պես Ալ Մուկադդասին ուշագրավ վկայություններ ունի Դվինի և այնտեղ կազմակերպվող հարուստ տոնավաճառների ու շուկաների, կատարվող աշխույժ առևտրի մասին:

«Դվինը կարևոր քաղաք է, ունի անառիկ բերդ (միջնաբերդ)։ Նրանում շատ են բարիքները, անունը հռչակված է, բուրդը նշանավոր է, ունի հինավուրց արվարձան և ամրակուռ բերդ։ Նրա շուկաները խաչաձև են ու նրա գյուղական մերձակա հողերը հրաշալի։ Մայր մզկիթը բարձր բլրի վրա է, և նրա կողքին է եկեղեցին։ Ունի միջնաբերդ։ Նրանց շենքերը կավից են և քարից։ Բազմաթիվ դռներ ունի, որոնցից են Քայդարի [Քինդար] դուռը, Տփղիսի դուռը և Անիի դուռը։ Սակայն նրա [բնակչության] մեծամասնությունը կազմում են քրիստոնյաները և նրանց ազնվականները... » (Արաբ., Գ, 651)։

Դվինից երեք փարսախ հեռավորության վրա կա մի սպիտակ վանք՝ կառուցված կոփված (քանդակված) քարով, և նման է երկար գլխանոցի։ Նրա ներսում կա Մարիամ [Աստվածածնի] պատկերը։ [Շենքը] նստած է ութ սյուների [մույթերի] վրա, որոնց միջև գտնվում են դռներ։ Ո՛ր դռնից էլ մտնես, կտեսնես Մարիամի պատկերը։ Նրա մոտ կա մի սև ժայռ, որից յուղ է ծորում, որով բուժվում են։ Նրա (ժայռի) մոտ լինում է որդան կարմիր։ Սա մի որդ է, որը երկրի վրա երևում է, և կանայք, գնալով նրա մոտ, քաղում են պղնձե (ասեղով), որն իրենց հետ է լինում, ապա դնում են փռի մեջ» (Արաբ., Գ, 656)։

Արաբ հեղինակը հիշատակում է մի շարք գործվածքներ, որոնք պատրաստվում էին մետաքսից և միջազգային շուկաներում հայտնի էին որպես «հայկական գործվածքներ»։ Դրանք էին բուտը, ղայթանը, տարբեր տեսակի ծածկոցները, քողերը, բարձի երեսները, գոտիները և այլն։ Նա հատկապես գովում էր որդան կարմիրով ներկված մետաքսեղենը, բրդե սփռոցները, որոնք աչքի էին ընկնում բարձր որակով։ Ըստ պատմիչի վկայության՝ հատկապես մետաքսե գործվածքների

արտադրության առումով անգերազանցելի էին հայերն ու հույները, որոնց արտադրանքը լայն համբավ ուներ Արևելքում ու Արևմուտքի միջազգային շուկաներում: Ալ Մուկադդասին հատուկ նշում է շուկաների առատության և էժանության մասին: Նրա ասելով՝ մի գառը 2 դիրհեմ արժեր, երկու հացը՝ մի դանկ, իսկ մրգերը այնքան առատ էին, որ տրվում էին առանց հաշվի և կշռի (Արաբ., Գ, 650): Այս վկայությունները վերաբերում են X դարին, երբ Հայաստանը ապրում էր տնտեսական բարգավաճման ժամանակաշրջան:

Իբն ալ Ֆակիհ (Թ-Ժ դ.): Մեկ այլ արաբ հեղինակ՝ Իբն ալ Ֆակիհը, ծնվել է Իրանի Համադան քաղաքում, նրանից հայտնի է «Գիրք երկրների մասին» աշխատությունը, որը գրել է 903 թ., աշխարհագրական բնույթի է և կազմել է հինգ հատոր, բայց մեզ է հասել միայն դրանց հիման վրա կազմված սեղմ շարադրանքը (Արաբ., Գ, 479):

«Գլուխ պանդուխտների ու պանդխտության մասին» խորագրի ներքո նա ընդգծում է հայկական ջորիների ընտիր լինելու մասին, Հայաստանից տանում էին վաճառքի որթատունկի փայտից հսկայական սեղաններ, որոնց շրջանակը երբեմն լինում է 20 թիզ (Արաբ., Գ, 482): Ամենաբարեբեր 10 նահանգների թվում հեղինակն առանձնացնում է նաև Հայաստանը, ամենախորամանկ բնակչությունն ունեցող 11 երկրների թվում ևս հիշատակում է Հայաստանը (Արաբ., Գ, 490): Հայաստանն ակտիվ դերակատարում ուներ Արևելքից Արևմուտք և Արևմուտքից Արևելք միջազգային առևտրում (Արաբ., Գ, 490):

Պատմիչը հետաքրքիր է ներկայացնում Հայաստանի աշխարհագրական սահմանները. «Հայաստանի սահմանն է Պարտավից մինչև Դարբանդ և մյուս կողմից՝ Հոռոմաց (Ռում)

երկիրը և մինչև Կովկաս լեռը, Սարիրի թագավորությունն ու Լաքզի թագավորությունը: Ատրպատականի վերջին գավառից, որը Վարդանակերտն (Վարսան) է, մինչև Հայաստանի առաջին գավառը 8 ձիերի կայան (սիքքա) է, իսկ Պարտավից մինչև Տփղիս 10 ձիերի կայան է, որ Հայաստանում կա 18 հազար գյուղ» (Արաբ., Գ, 494):

Խոսելով X դարի սկզբների արաբական վարչական միավոր Արմինիայի մասին՝ Ալ Ֆակիհն ասում է, թե Ահմադ իբն Վադիհ Իսպահանին, որը երկար տարիներ ապրել է Արմինիայում և քարտուղար է աշխատել տեղի թագավորների ու կառավարիչների մոտ, չի տեսել ավելի բարիքներով լի և անասունների քանակով ավելի նշանակալից մի երկիր, քան Արմինիան (Արաբ., Գ, 497): Պատմիչը հետաքրքիր գույներով նկարագրում է իր լսած հրաշապատումները Հայաստանի մասին. «Ասել են, թե [Հայաստանի] հրաշալիքներից է Կարնո քաղաքի քրիստոնյա եկեղեցիներից մեկում մի տուն: Երբ Ծաղկազարդի գիշերն է գալիս, այս տան ինչ-որ տեղից սպիտակ փոշի է դուրս գալիս մինչև առավոտ: Առավոտյան այս բանը դադարում է մինչև հաջորդ տարին: Վանականներն այն հավաքում են և բաժանում մարդկանց, իսկ դրա հատկանիշն այն է, որ հակազդում է թույներին, կարիճի ու օձի խայթոցին: Դրանցից մեկ դանկ կշռով ածվում է ջրի մեջ, և կծվածը կամ խայթվածը խմում է ու անմիջապես հանգստանում: Կա նաև մեկ ուրիշ հրաշք, և դա այն է, որ այդ փոշին եթե վաճառվի, կամ փոխարենը որևէ աշխարհիկ բարիք վերցվի, ապա գործածողը չի օգտվի և իր ցավից չի ամոքվի» (Արաբ., Գ, 501):

Արաբ մատենագիրը ուշադրություն է հրավիրում նաև Հայաստանով անցնող Արաքս գետի վրա, որում բազմանում

են հազվագյուտ ձկնատեսակներ. «Արաքսը մի զարմանալի [գետի] ձոր է, որտեղ կան ձկան տեսակներ: Նրանում լինում է շուրմահին (ձկան տեսակ) և միայն այս գետում է լինում: Հայտնվում է ամեն տարի՝ որոշակի ժամանակ, ինչպես ծովի կետերի տեսակները և ձկների վտառները, որոնք որոշակի շրջաններում են երևան գալիս, ինչպես թառափը, ծովատառեխը, պերկեսը: Այն հայտնի է ձկների շարքում հաճելի համի, առատ ճարպի և մսի հյութեղ լինելու շնորհիվ» (Արաբ., Գ, 501-502):

Վերոնշյալից բացի՝ պատմիչը նաև բազմազան ու բազմապիսի այլ տեղեկություններ է հաղորդում Հայաստանում հանդիպող զարմանահրաշ երևույթների ու իրերի մասին. «Հայաստանի բնակիչներն ասում են՝ մենք շատ մանանա ունենք: Ունենք որդան կարմիրը, որի նմանը ոչ ոք չունի: Սա մի կարմիր որդ է, որը հայտնվում է գարնանային օրերին, և նրան հավաքում են, եփում, ապա՝ նրանով ներկում բուրդը: Իսկ աշակը մի կենդանի է (գրաստ), որը լինում է Հայաստանում և նման է կատվին՝ ճկուն հոդերով, մազոտ մաշկով, որի մի քանի կտորն իրար կարելով, դառնում է հագուստ: Նրա ժանիքները լավ են համարվում սիրո համար: Նրա ժանիքներն ու ճանկերը եթե վերցնես, չորացնես և տաս, ում որ սիրում ես, ապա նա ուժեղ կերպով կսիրի քեզ: Ասում են, թե ունենք տորոն ներկի բույսը: Հայաստանում կա սնդիկի հանք, պղնձարջասպ, պղինձ և կապար: Նրանք ունեն հայկական ցուլեր: Նա գրում է, որ Հայաստանից «ավելի բարիքներով լի ու կենդանիներով հարուստ երկիր չի տեսել» (Արաբ., Գ, 497): Ունեն առատ շագանակենի և կեչի, որից հրաշալիքներ են սարքում» (Արաբ., Գ, 502): Արաբական խալիֆի դեսպան Իբն Ֆադլանը X դ. 20-ական թթ. Կամայի բուլղարական թագավո-

րի արքունիքում իր անցկացրած կյանքի հետաքրքրական նկարագրության մեջ նշում է, որ թագավորի վրանում ամառվա ամիսներին հազար մարդ էր տեղավորում, վրանում փռված էին հայկական գորգեր[250]:

Իբն Հաուկալ (Xդ): Մահացել է 977 թվականից հետո, համարվում է աշխարհագրության մեջ Ալ Իսթախրիի գործի շարունակողը: Ծնվել է Մծբինում, որպես վաճառական ճանապարհորդել է 943 թվականից սկսած, հայտնի է «Երկրի պատկերը» գրքով (Արաբ., Գ, 581): Պատմիչը նկարագրել է հայերի տնտեսական զբաղմունքները, Հայաստանի այդ ժամանակաշրջանի առևտրաշահ քաղաքները, հարևան երկրների հետ կատարվող առևտուրն ու փոխանակությունը: Թեև նրա վկայությունները հիմնականում կրկնում են իր նախորդներին, սակայն պատմիչը ուշագրավ տեղեկություններ է հայտնում հայ թագավորների կողմից արաբական տարազի որոշ տարրերի օգտագործման մասին: Խոսքը վերաբերում է փաթթոցներին կամ չալմաներին, որոնք կրում էին հայ թագավորները: Դրա լավագույն օրինակը Անիի պեղումներից գտնված Գագիկ թագավորի արձանն է, որի գլխին կա մատենագրի հիշատակած չալման:

«Դվինը,– ասում է նա,– մի քաղաք է՝ հարուստ բարիքներով, պարտեզներով, մրգատու ծառերով, ցանքատարածություններով և ունի կավե պարիսպ: Նրանում կան ջրի աղբյուրներ և հոսող ջրեր: Հիմնականում ցանում են բրինձ և բամբակ... Դվինից արտահանում են այծի նուրբ բրդից և բրդե այլ գործվածքեղեն, ինչպես՝ գորգեր, բարձեր, նստելու բար-

---

[250] Տե՛ս **И. Ю. Крачковский**, Путешествие, Ибн – Фадлана на Волгу, Изд. АН СССР, М.-Л., 1939, էջ 73:

ձեր, ծածկելու գորգեր, շալվարի գոտիներ և հայկական այլ արտադրանքի տեսակներ, որոնք ներկվում են [մի ներկով], որը ստացվամ է մի որդից, որն իր վրա է հյուսում, ինչպես շերամը իր վրա մետաքսի բոժոժ է հյուսում: Այստեղ արտադրում են նաև մեծաքանակ մետաքսեղեն: Նրանց մետաքսն իր նմանը շատ ունի հոռոմների երկրում, թեպետ սա [ևս] բերվում է [Հայաստանից]: Իսկ հայկական (արմանի) անվամբ հայտնի նրանց արտադրանքը, ինչպես հաստ գործվածքեղենը, երկար գորգերը, կաշվե հենաբարձերը, ծածկելու (թամբի) գորգերը ոչ մի տեսակետից իրենց նմանը չունեն աշխարհի որևէ մասում»: Ըստ հեղինակի՝ հայկական թավշակերպ արտադրանքը թանկարժեք է:

Իբն Հաուկալը նշում է, որ Հայաստանում տիրապետողը քրիստոնեությունն է, և հայերը ամեն տարի տիրակալին (խալիֆին) տալիս էին հողահարկ (խարաջ). «Երկու Հայաստան կա, մեկը հայտնի է որպես Ներքին, իսկ մյուսը՝ Արտաքին (Խարիչա)[251]: Արտաքինի որոշ մասերում կան մահմեդականներին պատկանող քաղաքներ և այժմ էլ մնում են նրանց ձեռքում: Հին ժամանակներում դրանք հայերի իշխանության տակ են եղել հարկ վճարելու պայմանով: Այժմ մահմեդական իշխողների ձեռքում են ինչպես Արճեշը, Մանազկերտը և Խլաթը:

Նրա [Հայաստանի] սահմանները հստակորեն հայտնի են: Մի սահմանը՝ արևելքից մինչև Պարտավ, իսկ արևմուտքից մինչև Ջազիրա, հարավից մինչև Ատրպատական, իսկ հյու-

[251] Ըստ երևույթին, Ներքին Հայաստան ասելով հեղինակը նկատի ունի այն տիրույթները, որոնք հայոց Բագրատունի թագավորների անմիջական իրավասության տակ էին Հյուսիսային Հայաստանում, իսկ Արտաքին Հայաստանը ընդգրկում էր Վասպուրականի թագավորությունը, արաբական ամիրայությունները և այլն (տե՛ս նույն տեղը, էջ 647, ծանոթ. 65):

սիսից՝ հոռոմների երկիրը (Բյուզանդիա)՝ Կարնո քաղաքի կողմից: Կարնո քաղաքը հոռոմների երկրի մեջ կարևոր սահմանային ամրություն էր Ատրպատականի, Ջիբալի և Ռեյի ու հարակից նահանգների բնակչության համար և Ներքին Հայաստանի գլխավոր քաղաքն է» (Արաբ., Գ, 632): «Նախճավանի, Բերկրիի, Խլաթի, Մանազկերտի, Բաղեշի, Կարնո քաղաքի, Արզնի, Նփրկերտի և Սարուջի միջև մեծ տարբերություն չկա, քանզի նրանք մեծությամբ իրար նման են: [Սակայն Խլաթը, ծավալվելով քաղաքից դուրս, մի քանի անգամ կրկնապատկվել է: Նրա բնակիչները հարստության և բարօրության մեջ են, և այժմ այնտեղ կան վաճառատներ, հրաշալի շուկաներ և վաճառականների հավաքավայրեր: Նրա բնակիչների բարքերի մեջ տիրապետողը կոպտությունն է և օտարի հանդեպ թշնամանքը]»:

«Դրանցից [քաղաքներից] ոչ մեկը նման չէ Դվինին իր մեծությամբ ու ընդարձակությամբ, թեև բոլորն էլ բարեբեր են, շեն և լի բարիքներով, – նկատում է մատենագիրը: «– Այս քաղաքներում ու նրանց գավառներում արտադրվում են ապրանքներ արտահանման համար և անհրաժեշտ շատ բաներ, ինչպես արջառ ու ոչխար և գործվածքեղեն, որոնք ամեն կողմ ուղարկվում են, հայկական կոչված ընտիր կահավորանք, շալվարի գոտիներ, որոնք Սալմաստում արտադրվածի նման են և վաճառվում են ամեն մեկը մի դինարից մինչև տասը դինար, և աշխարհի ոչ մի մասում նմանը չկա. նաև հայկական թավշակերպ նստելու բարձեր, երկար գորգեր, որոնք նմանը չունեն իրենց քանակով ու որակով, ինչպես կանացի քողեր, վարագույրի բրդե կտորներ, գլխի թաշկինակներ, որոնք պատրաստվում են Նփրկերտում և Հայաստանի այլ վայրերում» (Արաբ., Գ, 632-633):

Հեղինակը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ատրպատականի, Հայաստանի և Առանի քաղաքների միջև եղած հեռավորությունների, մայրուղիների և վաճառականական առևտրի, գանձվող հարկերի մասին:

Արաբ մատենագիրը տեղեկություններ է հաղորդում նաև այլ վայրերի մասին. «Նախապես ասվեց, որ երկու Հայաստաններ կան, Ներքին՝ Դվինը, Նախճավանը և Կարնո քաղաքը հյուսիսում՝ իրենց հարակից նահանգներով, և Արտաքինը՝ Բերկրին, Խլաթը, Արճեշը, Ոստանը, Անձևացիքը (ալ Զավազան) ու սրանց միջև ընկած տիրույթները, ամրոցները, գավառներն ու նահանգները» (Արաբ., Գ, 630-631):

Արաբ հեղինակն ասում է, թե այլ երկրներ էին արտահանվում ընտիր ջորիներ, որոնք ազնվացեղ էին, դիմացկուն, բուծում էին ձիեր. «Իսկ Անձևացյաց և Հայաստանի ու Առանի որոշ մասերից Իրաք, Ասորիք, Խորասան և այլ վայրեր են ուղարկվում ընտիր ջորիներ, որոնք հայտնի են առողջությամբ, տոկունությամբ, ճկունությամբ ու համբերությամբ, ինչպես նաև այլ բաներ, որոնց հռչակն ավելորդ է դարձնում նկարագրել կամ հատուկ ընդգծել այն... Բուծում են հրաշալի ձիեր, որոնց հատուկ գեղեցկությունն ու արագաշարժությունը կարելի է համեմատել Թաբարիստանի ձիերի հետ և գուցե նրանցից էլ գերազանց են, ինչպես Ջուրջանի ձիերից» (Արաբ., Գ, 634):

Իբն Հաուկալի վկայության համաձայն՝ Վանա լճից արդյունահանվող աղը և տառեխ ձուկը շատ երկրներ էին արտահանվում. «Բերկրիի, Խլաթի և Արճեշի հարավում կա մի լիճ [խոսքը Վանա լճի մասին է], որը ձգվում է արևելքից արևմուտք, և երկարությունը կլինի մի քանի տասնյակ փարսախ: Նրանից և Առեստ գետից թզաչափ փոքրիկ ձկներ են

բռնում, որը հայտնի է տառեխ (թիռիխ) անվամբ, և աղում, չորացնում ու տանում են բազում երկրներ, ինչպես՝ Մոսուլ, Ջազիրայի, Իրաքի կողմերը և Ասրիքի գավառները: [Այս լճի մեջ մի կղզի կա, կոչվում է Աղթամար]:

Նրա ափին կա բորակ աղ, որը նույնպես արտահանվում է Իրաք և այլ տեղեր՝ հացթուխների համար: Լճին մոտիկ, նրանից հարավ՝ մի լեռան վրա, կան մկնդեղի հանքեր, իսկ մկնդեղը տարվում է աշխարհի տարբեր կողմերը: Սա մկնդեղի բուն աղն է և լինում է կարմիր ու դեղին:

Կապուտան [լճի] ափերից ևս հանում են ոսկերչական բորակ, որն օգտագործվում է արծաթի ու ոսկու զոդման համար: Վաճառականները նրանից առատ շահույթ են ստանում» (Արաբ., Գ, 632):

Արաբական աղբյուրները նշում են, որ հայկական գործվածքները հասնում են նաև հեռավոր երկրներ: Ֆաթիմյան խալիֆների Կահիրեի գանձարանում որպես շատ թանկարժեք իր պահվում էր Մութավաքիլ խալիֆի (847-861) վրանը, որ պատրաստված էր որդան կարմիրով ներկված հայկական գործվածքից:

Ըստ **Մուկադդասու**՝ (Xդ.) Դվինը հայտնի է նաև իր մահուդով, բրդե զգեստներով, կարպետներով: Հայաստանը աչքի է ընկել կարմիր ներկի, տառեխ ձկան, թզի, շագանակի, գյուղատնտեսական՝ հացահատիկ, ձուկ, մեղր, բամբակ, և արհեստագործական արտադրանքով: Դվինը, ըստ նրա տեղեկությունների, արտահանում է մահուդ, գորգ, բարձեր, ծածկոցներ[252]: Հայկական մետաքսեղենը և գործվածքեղենը արտահանվում էին ոչ միայն խալիֆաթի արևելյան մարզերը, այլև

[252] Տե՛ս **Ал-Мукадаси** // СМОМПК, вып. XXXVIII, էջ 9:

Բյուզանդիա: Տրապիզոնում՝ միջազգային առևտրի գլխավոր նավահանգստային կենտրոնում վաճառվում էին հայկական հիանալի մետաքսյա կտորեղեն (դիպակ) և այլ գործվածքնեղեն[253]:

Արաբ աշխարհագիր Շեմս-Էդտին-ալ Մուկադդասին Հայաստանի մասին գրում է. «Այն մեծ երկիր է... մայրաքաղաքը Դաբիլն (Դվին) է, իսկ քաղաքներն են՝ Բիթլիսը, Խլաթը, Արճեշը, Կալի քալան (Կարին): Այստեղից արտահանում են ծածկոցներ, բրդե կարպետներ»[254]:

Արաբ մատենագիր Աբուլ Աբբաս Ահմեդ ալ Բալազորիի նոթերում Հայկական Միջագետքում հիշատակված է առատ գինի ու ձիթենի: Արաբ XI դ. ճանապարհորդ Իբն-Ի Բատուտան, հիշատակելով Երզնկայի բնակչության մեծ մասի հայեր լինելու մասին, գրում է նաև, թե այս քաղաքը ունի կարգավորված շուկա, որ «նրա մեջ կան պղնձի հանքեր, որով պղնձագործ հայերը արտադրում են պղնձե ամաններ ու «բայսուսներ» (աշտանակներ, մոմակալներ), նուրբ կտորներ, գեղեցիկ կերպասներ, որոնք կրում են նույն քաղաքի անունը: Նրա հավաստմամբ Ամասիայի հայերն ունեցել են «պարտեզներ, որոնք ոռոգվել են գետնի վրա դրված ջրհան անիվներով, իսկ Կարին քաղաքը հռչակված է պարտեզներով ու խաղողի որթատունկերով:

X դարի մատենագիր **Աբու Դուլաֆը** Վանա լճի տառեխ ձկան (թիոիխ) և այստեղ արդյունահանվող աղի, բորակի, նաև պղնձի և այլ հանքանյութերի, բուժիչ բույսերի, հայ միջնադարյան, մանավանդ եկեղեցական երաժշտության մասին թողել է

---

[253] Տե՛ս **А. Я. Манандян,** О торговле и городах Армении, Ер., 1930, էջ 161:

[254] **Баладзори,** Книга завоевания стран, пер. проф. П. К. Жузе, Баку, 1927, с. 16:

ուշագրավ վկայություններ: Ըստ նրա՝ «հայկական երաժշտությունը ավելի հաճելի է, թախծոտ, քան քրիստոնյա այլ ժողովուրդներինը: Եղերգության և ողբի բնական հակում ունեցող տխուր մարդու սրտի համար նրանց երգեցողությունը ավելի արտասվաբեր է, քան արաբ եղերգուների ողբերը: Նրանց երգեցողությունը եկեղեցիներում ավելի հաճելի է, զգայուն և ուշագրավ մարդու համար, որովհետև հաճույքը և բավականությունը մեղեդիների լսելուց է ստացվում: Նրանց երգեցողությունը լարային գործիքների ընկերակցությամբ իրոք հաճելի է և հարազատ»:

Արաբական անանուն աշխարհագիրը, որ ապրել է X դարի 80-ական թթ. իր «Աշխարհի սահմանները» աշխատության մեջ նույնպես գրում է, որ Դվին, Խոյ, Ամիդ, Բերկրի, Արճեշ, Խլաթ, Նախճավան, Բիթլիս մարդաշատ և հարուստ քաղաքներում արտադրվում են **զիլուհա-կալի** կոչված և այլ անվանումներով կարպետներ:

Ի դեպ, միջնադարյան հայ մատենագրության մեջ մինչև XIII դարը «խալի» բառին հոմանիշ գործածվել են կարպետ, արկանելի, անկվածոց բառերը, որոնք պահպանվել են մինչև XIX դարը:

Միջազգային առևտրում հայտնի էին հայկական գորգերը, տապաստակ կոչված փոքրիկ գորգ-օթոցները կամ աղոթքի գորգերը, ինչպես անվանում էին դրանք արաբ հեղինակները: Հայկական գորգերը, գործվածքները և պղնձե անոթները հիշատակված են 814 թ. Թրակիայում բուլղարների վերցրած ավարի մեջ: Հայկական գորգերը արաբական խալիֆայություն էին հասնում ոչ միայն առևտրի, այլև հարկային ճանապարհով: Փաստորեն՝ միջազգային առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով: Արաբական աղբյուրների համա-

ձայն՝ Հայաստանից արտահանում էին նաև մետաղ, հանքանյութեր, աղ, ներկանյութեր, ձիեր, ջորիներ, հացահատիկ, բուսական յուղեր, մեղր, չորացրած մրգեր և այլն:

XI դարի արաբ ճանապարհորդ Իբն Բատուտան էլ, հիշատակելով Երզնկայում արտադրված նուրբ կտորները, գրում է. «Արզանջան [Երզնկան] մեծ ու շեն քաղաք է, նրա բնակիչներից մեծագույն մասը հայեր են… այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այնտեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որոնք կրում են նույն քաղաքի անունը: Այնտեղ կան նաև պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուներ»՝ նման աշտանակի»[255]:

XI դարի արաբ մեկ այլ մատենագիր Աբու-Ֆազլ Բեյհակին իր «Թարիխի Բեյհակի» («Բեյհակի պատմությունը») աշխատության մեջ գրում է, որ Խորասանի Ղազնևյան կառավարիչ Աբու-Ֆազլ Սուրի Մուիզը Ղազնևյան սուլթան Մասուդիին 500 բեռ, այդ թվում՝ հայկական (արմանի) գորգեր, նվերներ է տանում: Հայկական գորգերը հիացմունք են պատճառել Էմիրի պալատականներին[256]:

Իբն ալ Ասիր (XII-XIII դդ.): Ծնվել է 1160 թ., իսկ 1223 թ.՝ մահացել: Կյանքի մեծ մասն անցկացրել է Մոսուլում (Վերին Միջագետք), Բաղդադում, Հալեպում, Դամասկոսում: Նրա մեծագույն աշխատությունը «Պատմությունն» է, որը սկսվում է արարչագործությունից և հասնում մինչև ԺԳ դարը: Սա կոչվում է «Լիակատար (ամբողջական կամ տիեզերական) պատմություն»: Աշխատության մեջ Իբն ալ Ասիրը նախորդների

---

[255] **Իբն Բատուտա,** Պատմություն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1940, էջ 30:

[256] Տե՛ս Материалы по истории туркмен и Туркмении, т. 1, Москва, 1939, էջ 238:

նման Աստվածաշնչի նյութերը միաձուլում է Շահնամեի հետ և, այսպիսով, տալիս է աշխարհի պատմության մի հետաքրքիր շարադրանք[257]:

Ըստ արաբական ավանդության՝ հայերը Նոյի որդի Հաբեթի որդի Յունանի որդի Լանթայի որդիներից են:

Իբն ալ Ասիրը Հայաստանը (Արմինիա) հիշատակելով, նկատի է ունեցել հետևյալ վարչական բաժանումները՝ ա) բուն Հայաստան, որն ընդգրկում էր Այրարատ, Սյունիք, Արցախ, Գուգարք (հարավային մասը), Բարձր Հայք (արևելյան մասը), Տուրուբերան, Վասպուրական, Մոկք և մի քանի այլ նահանգներ, բ) Վիրք կամ արևելյան Վրաստան՝ Տփղիս կենտրոնով, գ) Աղվանք (Առան)՝ Պարտավ կենտրոնով, դ) Մերձկասպյան գավառներ (Շրուան, Մասքութք, Խայզան և այլն), որոնք Թ դարում կոչվեցին Շիրվան՝ Շամախի կենտրոնով, և Դերբենդ: Արմինիայի մայրաքաղաքն էր Դվինը, ապա՝ Դվինն ու Պարտավը միասին (Արաբ. Բ, 39):

Արաբները հայկական Կարնո քաղաքը կոչում էին Կալիկալա: Ըստ Իբն ալ Ասիրի բացատրության՝ «սա կոչվել է Կալիկալա, որովհետև Արմինակուսի պատրիկի (կառավարիչ) կինը, որի անունը Կալի էր, կառուցել էր այս քաղաքը և կոչել Կալի Կալա (Կարնո քաղաք), այսինքն՝ Կալիի բարեգործություն, իսկ արաբները արաբացնելով ասել են Կալիկալա» (Արաբ. Բ, 54):

Պատմիչը անդրադառնում է Արտաշատի անվանը, որն արաբները կոչում էին Կիրմիզի գյուղ. «Արտաշատը մի գյուղ

---

[257] Տե՛ս «Արաբական աղբյուրներ», Բ (թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1981 (այսուհետ՝ Արաբ. Բ և էջը):

էր, ուր կիրմիզ է լինում, որով ներկում են» (Արաբ. Բ, 55): Նա նկատի ունի որդան կարմիրը:

Իբն ալ Ասիրը Դվինը ներկայացնում է որպես Դ-Ժ դարերում Առաջավոր Ասիայի գլխավոր առևտրական հանգույցներից մեկը և Հայաստանի մայրաքաղաքը:

Պատմիչը տեղեկություններ է հաղորդում Վանա լճի մասին, որից հանվող ձուկը՝ տառեխը, արաբների մեջ շատ հայտնի էր: Օմայանները պետականացրին լիճը և նրա ձկների հասույթը: Աբասյանների օրոք տառեխը մտնում էր Հայաստանի բնահարկի մեջ, ընդ որում՝ տարեկան վերցվում էր 20.000 տառեխ: «Այս տառեխը աշխարհի հրաշալիքներից է, քանզի փոքր ձուկ է, որը տարվա որոշ եղանակին է երևան գալիս լճում: Առաջանում է մի գետի մեջ, որը թափվում է լիճը այնքան շատ, որ կարելի է ձեռքով որսալ և մանավանդ հատուկ պատրաստված գործիքների միջոցով: Երբ այդ եղանակը վերջանում է, այլևս ոչինչ չի մնում» (Արաբ. Բ, 62):

Պատմիչը շարադրանքի ընթացքում ուշագրավ ժողովրդագրական հաղորդումներ է անում: Օրինակ՝ նա գրում է, թե Եդեսիա քաղաքի բնակչության մեծամասնությունը հայեր էին, իսկ մահմեդականները՝ քիչ (Արաբ. Բ, 232): Դեռ վաղ շրջանից Եդեսիան բնակեցված է եղել հայերով: ԺԱ-ԺԲ դարերում նրա բնակչությունը լրիվ հայերից էր բաղկացած, և նրա կառավարիչները լինում էին հայեր: Երբ 1144 թ. Եդեսիան (Ուռհա) գրավվեց Մոսուլի աթաբեկի կողմից, քաղաքի պաշտպանները առաջին հերթին հայերն էին:

Յակուտ ալ Համավի (Յակուտ Աբու Աբդալլահ Շահաբադդին) (XII-XIII դդ.): Արաբ այս աշխարհագիրը ծնվել է 1178 թ. Փոքր Ասիայում, հունական ընտանիքում, մահացել է 1229 թ.: Նրա գործերից նշանավոր է «Աշխարհագրական բառգիրքը»,

որը զգալի տեղեկություններ է պարունակում միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու տնտեսական կյանքի, պատմության, քաղաքների, կենցաղի տարբեր բնագավառների, արհեստների ու արհեստագործական արտադրանքի մասին: Արաբ աշխարհագիրն աղբյուրագիտական և ազգագրական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայկական բնակավայրերի, ամրոցների, եկեղեցիների վերաբերյալ[258]: Նա այբբենական կարգով հիշատակում է տեղանուններ, որոնցից մենք առանձնացնում ենք հայկականը: Այսպես, նրա ներկայացմամբ Ամիդը, որը կոչվում էր նաև Կարա Ամիդ, որովհետև շենքերը կառուցված էին սև բազալտից, գրավում է նպաստավոր աշխարհագրական դիրք՝ գտնվելով երկու գետերի՝ Եփրատի և Տիգրիսի բաժանման պարանոցի մոտ՝ միջագետքյան կղզու վերին ծայրում՝ ճանապարհների հանգուցակետում: «Ամիդի մոտ լեռան մի ծերպում կա մի թուր, ով իր ձեռքերը մտցնի ճեղքից և բռնի այդ թրի դաստակից, ստանում է մեծ ցնցում, և սարսափը կպատի նրան, ինչքան էլ այդ մարդը անվախ լինի: Այդ թրի քաշողական ուժը երկաթի նկատմամբ շատ ավելի մեծ է, քան մագնիսի ուժը: Այսպես, երբ նրա հետ շփեն մի ուրիշ թուր կամ դանակ, այն էլ է մագնիսանում և ստացած ուժը չի նվազում անգամ հարյուր տարի անցնելուց հետո» [Արաբ., 8]:

«Արճեշը - հին քաղաք Արմինիայում՝ Խլաթի մոտ, բնակիչները մեծ մասամբ հայ քրիստոնյաներ են» (Արաբ., 13): Գերազանցապես հայաբնակ Արճեշ քաղաքը անգամ թուրքսելջուկների կողմից գրավվելուց հետո՝ XIII դարում, հիշա-

---

258 Օգտվել ենք «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» (կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյանը) գրքից, Երևան, 1965, (այսուհետև՝ տեքստում՝ Արաբ. և էջը):

տակվում է որպես արհեստագործությամբ, շուկաներով, բազմաթիվ կրպակ-արհեստանոցներով հարուստ առևտրականներով քաղաք [Արաբ., 111]:

«Արդաշաթը (Արտաշատ) Կրմիզի (որդան Կարմիր) գյուղն է: Արաբ այլ մատենագիրներ անվանում են «Կրմիզի ավան», որովհետև այնտեղ «կիրմիզ» կոչված միջատից ստացված կարմիր ներկով կերպասներ էին ներկում» (Արաբ., 15):

«Արզանջան (Երզնկան) ժողովուրդը անվանում է Արզանքան: Շատ հաճելի, անվանի, ճոխ ու բազմամարդ քաղաքներից մեկն է: Գտնվում է Ռոմի երկրների և Խլաթի միջև՝ Էրզրումի մոտ: Բնակչությունը մեծ մասամբ բաղկացած է հայերից...»

(Արաբ., 14): Հայտնի է, որ հայկական Երզնկա քաղաքը, որը գտնվում է պատմական Հայաստանի Բարձր Հայքի Եկեղյաց գավառում, Անահիտի պաշտամունքի հռչակավոր կենտրոն է եղել:

«Արզանը (Արզն) նշանավոր քաղաք է Խլաթի մոտ, որն ունի ամուր բերդ և անցյալում Արմինիայի ամենածաղկյալ շրջաններից մեկն էր...» (Արաբ., 14):

«Արմինիան մի ընդարձակ երկրամասի անուն է. Ավանդում են, թե [Հայաստան] Արմինիա է կոչվում Նոյի որդի, Հաբեթի որդի, Ավմարի որդի, Լանթայի որդի՝ Արմինիայից: Նա էր, որ առաջին անգամ եկավ այնտեղ ու բնակություն հաստատեց»: Յակուտ ալ Համավին հանգամանորեն ներկայացնում է Արմինիայի վարչական բաժանումները՝ քաղաքներով, քաղաքական իրավիճակը արաբական տիրապետության շրջանում (Արաբ., 16-18):

«Աֆլուղունիա» (տեղը հստակ ճշտված չէ) – Մեծ քաղաք հայոց երկրում՝ Արմինիայի կողմերում: Այս քաղաքն ունի

գյուղեր և ամուր բերդեր, որոնցից է Վարիման կոչված բերդը, Իսկը լեռան գագաթի վրա և ծովի մեջտեղը: Այնտեղ կա մի գետ, որի ջուրը կորչում է գետնի մեջ, և որը կոչվում է Նիզի-բինի գետ [արդյո՞ք դա Մեղրագետը չէ՞ – Ռ. Ն.]... Նրանք շատ հյուրընկալ են և պատվում են ճաշով: Շատ հարգում են իրենց կրոնավորներին: Երբ նրանցից մեկը մահամերձ է լինում, կանչում է քահանային, նրան նվիրում ինչքեր և խոստովա-նում իր գործած մեղքերը, իսկ քահանան թողություն է տալիս նրան և երաշխավորում, որ մեղքերը արձակված ու ներված են: Ամեն անգամ, որ հիվանդը հիշում է իր գործած մի մեղքը, քահանան ձեռքերը երկարում է և երկու ափերով որպես թե մի բան է բռնում և գցում գետին: Հետո, երբ մեղքերի խոստովա-նությունը լրանում է, քահանան, երկու ձեռքերը իրար բերելով, դուրս է գնում այն իմաստով, որ բոլոր մեղքերն էլ հավաքած է ափերի մեջ և գնում է թափելու բաց վայրում: Այս մի տարօրի-նակ և զարմանալի սովորություն է նրանց մոտ» (Արաբ., 21):

Յակուտ ալ Համավին հիշատակում է Հայաստանի տա-րածքում գտնվող մի շարք ամրոցներ, բերդեր և բնակավայրեր, ինչպիսիք են՝ Աքշութա, Օլթի, Սղերդ, Անհիլ, Ունջ, Բասեն, Թալ, Կուրատ (Թլկուրան), Թավկատ (Թոգատ), Ջաբալջուր (Ճապաղջուր) գավառ և բերդ Չորրորդ Հայքում, Ջուրնա (Գառ-նի), Ջազնակ (Գանձակ), Հարնակ, (Ազնի կամ Արկնի) հանքա-վայր, Հիբն Զիադ (Խարբերդ), Հիսն Քայֆա՝ Դիարբեքիրի նա-հանգում, Տիգրիսի վրա իշխող մի մեծ բերդաքաղաք է, ունի ԺԲ դարում Տիգրիսի վրա կառուցված կամուրջ:

Արաբ աշխարհագիրը հատուկ ուշադրություն է դարձնում Վանա և Ուրմիա լճերին. «Բուհայրաթ Արճիշ կամ Խլաթի լիճ (Վանա լիճ), որի մեջ աճում է տառեխ: Խլաթի լիճը Հայաս-տանի հրաշալիքներից է: Տասն ամիս նրա մեջ չեն երևում ո՛չ

գորտեր և ո՛չ էլ ձկներ, իսկ տարվա երկու ամիսը նրա մեջ այնքան լիքն են, որ կարելի է ձեռքով բռնել: Տառեխն ուղարկում են շատ երկրներ, մինչև անգամ Հնդկաստան (Արաբ., 37)»[259]: Իսկ Կապուտան կամ Ուրմիա լճի մասին գրում է. «Այդ լիճը լեղի է և գարշահոտ: Նրա մեջ ոչ մի կենդանի չի ապրում, ո՛չ ձուկ և ո՛չ էլ ուրիշ բան: Նրա մեջտեղը կա մի լեռ, որը կոչվում է Կապուտան, և մի կղզի, որի վրա կան չորս գյուղակներ, որտեղ ապրում են այս ծովի նավերի նավաստիները: Այս լեռան վրա կա նշանավոր մի ամուր բերդ, որի բնակիչները ծովահենություն են անում, կողոպտում են ճանապարհորդներին և ապա ապաստանում բերդում, որտեղ ոչ ոք չի կարող մտնել: Լճի շրջագիծը հիսուն փարսախ երկարություն ունի, իսկ լայնքը մի գիշերվա մեջ կարելի է անցնել նավով: Այդ ծովակից հանում են անտիմոնի նման ոչ փայլուն աղ (թութի, ցինկ անտիմոն): Լճի արևելյան ափի դեմ հանդիման կան ակեր, որոնցից բխած ջուրը քարանում է օդի հետ շփման մեջ մտնելիս» (Արաբ., 33):

Բաղեշ քաղաքին անդրադառնալիս գրում է, թե այն հարուստ է մրգաստաններով, և նրա խնձորը որակով անմրցելի է, խիստ առատ ու էժանագին, արտահանվում է շատ երկրներ: Քաղաքը կոչվում է «Շահաստան» (Արաբ., 33):

«Խիլաթ (Խլաթ)՝ ամուր և հռչակավոր քաղաք, օժտված ամեն տեսակ բարիքներով, ընդարձակ ու պտղատու: Միջին Հայաստանի քաղաք է, ունի բազմազան պտուղներ և պատ-

---

[259] Ուշագրավ է, որ Ղ. Ինճիճյանը նշում է, թե հույների մոտ աղ դրած ցանկացած ձուկ «տառիխիս» էր կոչվում. մինչև անգամ աղ դրած միսն էր այդպես կոչվում: Ուրեմն տառեխը աղ դրած վիճակի մեջ արտահանվելով՝ իր անունը փոխանցել է ամեն կարգի մսեղենին (տե՛ս **Ինճիճեան Ղ.,** Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 240):

վական ու առատ ջրեր: Ունի մի լիճ, որի նմանը աշխարհում չկա, այնտեղ որսում են տառեխ կոչված ձուկը, որն արտահանվում է ուրիշ երկրներ...» (Արաբ., 60):

«Կալիկալա (Կարին): Կալիկալայում մի տեսակ գորգ են պատրաստում, որը քաղաքի անվան կրճատումով կոչվում է «Կալի» (խալի)» (Արաբ. Բ, 97): «Կարս, այստեղից արտահանվում է մետաքս» (Արաբ. Բ 99):

XII-XIII դարերի արաբ մատենագիրներ Իբն ալ-Ասիրի, Յակուտի խոսքերով Երզնկան, Անին, Արծնը, Խլաթը, Արճեշը, Բերկրին, Կարինը (Կալիկալա) գորգերի հայրենիք է անվանված, և խալի անվանումը կապված է Կալիկալա (Կարին) քաղաքի անվան հետ: Ըստ նրանց՝ հայկական գորգերը, կերպասեղենը, ներառյալ ամբողջ գործվածքեղենը, գերիշխում էին ամբողջ Արևելքի շուկաներում և ճանաչված էին որպես «հայկական գործվածք»: Բնակարանը, պալատը գորգերով կահավորելը, հյուրեր ընդունելիս գորգեր փռելը, հարսի օժիտում պարտադիր գորգեր ունենալը, ննջեցյալին գորգով ծածկված սեղանին դնելը կիրառական և ծիսահմայական նշանակություն են ունեցել. չարիքից ազատվելու, առողջություն, արգասավորություն, բարեկեցություն ապահովելու խորհուրդ:

Այսպիսով, արաբական սկզբնաղբյուրներից պարզվում է, որ հայկական գորգերը, կերպասեղենը, ներառյալ ամբողջ գործվածքեղենը Խալիֆաթի ժամանակաշրջանում գերիշխում էին ամբողջ Արևելքի շուկաներում և, որ հատկապես կարևոր է, դարձել էին ընդօրինակման առարկա: Նրանց տեղեկություններից երևում է, որ միջնադարյան Հայաստանում գործվածքեղենի մշակույթը հատկապես զարգացած էր Բարձր Հայքում, Այրարատում, Արցախում, Սյունիքում, Վասպուրականում: Արաբական աղբյուրներից պարզվում է, որ գործվածքե-

ղենի, հատկապես գորգերի արտահանման կենտրոններից կարևորագույնը Դվին քաղաքն էր, իսկ զարգացած միջնադարում (X-XIV դդ.)՝ Կարինը, Երզնկան, Վանը, Անին, Արծնը և այլն: Դրանք հայտնի էին Արևելքում՝ Եգիպտոսից մինչև Միջին Ասիա: Արաբական աղբյուրների հիշատակությունների համաձայն՝ գորգագործությունը Հայաստանում, տնային արհեստ լինելուց բացի, եղել է քաղաքներում բարձր զարգացման հասած արհեստագործական արտադրանք:

IX-XIII դարերը համարվում էին հարստության և հասարակության մեջ անհատի գրաված դիրքի չափանիշ: Հիրավի, բնակարանը, պալատը գորգերով կահավորելը, հյուրեր ընդունելիս գորգեր փռելը, հարսի օժիտում պարտադիր գորգեր ունենալը, ննջեցյալին գորգով ծածկված սեղանին դնելը կիրառական և ծիսահմայական նշանակություն են ունեցել, չարքերից ազատվելու, առողջություն, արգասավորություն, բարեկեցություն ապահովելու խորհուրդ: Տարբեր նպատակի համար գործածվող գորգերին բնորոշ են եղել ուրույն չափերը, գույնը, զարդանախշերը, հորինվածքը, որոնք պահպանվել են երկար ժամանակ:

Նշված հեղինակների գործերում Հայաստանը ներկայացված է նաև որպես մրգերի, խաղողի որթատունկերի առատ երկիր, որտեղ գները ցածր են եղել, ծառերը խիտ, լեռներում մեղր՝ որքան ուզեք, իսկ դաշտերում՝ հացահատիկ, բանջարաբոստատային մշակաբույսեր, նաև արհեստանոցներ, տափաստանները լի են ոչխարի հոտերով:

Արաբական աղբյուրներում առատ տեղեկություններ են հաղորդվում Վանա լճի ձկան առատության, Վանա լճի ափին տոնավաճառի, ձկնորսության մասին: Նրանցից, օրինակ, Իբն-ալ-Աթիրը, խոսելով Վանա լճի մասին, ասում է. «Այս Թարիխը

աշխարհի հրաշալիքներից մեկն է, որովհետև նրա միջի մանր ձկները ամեն տարի տոնավաճառի ժամանակ անցնում էին այս ծովից նրա մեջ թափվող գետերը և մեծ բազմությամբ բռնում են ձեռքերով» (տե՛ս Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 139): Դրանցում խոսվում է նաև Հայկական բարձրավանդակի բազմատեսակ մետաղահանքերով հարուստ լինելու, Գյումուշ քաղաքի և արծաթի հանքերի մասին:

6.2. XIII-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին

Առևտրական հարաբերությունների վերընթաց զարգացումը Արաբական խալիֆայությունում և եվրոպական երկրներում, մղում էր դեպի նորանոր շուկաներ՝ հանուն հումքի աղբյուրների ձեռքբերման, այլոց շուկաներն իրենց շահերին ծառայեցնելու: Հայկական միջնադարյան կենցաղի և մշակույթի վերաբերյալ եվրոպացի ուղեգրողների հաղորդած նյութերը ոչ միայն բացառիկ են, այլև եզակի, որոնք սակավ են արծարծվել հայագիտության մեջ: Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին թողել են ուղեգրություններ, դիվանագիտական զեկուցագրեր, արևելյան երկրների հետ եվրոպական երկրների կնքած առևտրական պայմանագրեր, կաթոլիկ միսիոներների զեկուցագրեր, պատմական երկեր և այլն: Հաղորդել են կարևոր, երբեմն էլ բացառիկ արժեք ունեցող նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի ոչ միայն հասարակական և քաղաքական կացությանը, կրոնական պատկերացումներին, մշակույթի որոշ հարցերին, այլև կենցաղամշակութային երևույթներին: Հայագիտության մեջ, առավել չափով հայ

ազգագրական գիտության մեջ նրանց ժառանգությունը դեռևս ամբողջականորեն ուսումնասիրված չէ: Իհարկե, առանձին հեղինակներ անդրադարձել են նրանց այս կամ այն վկայություններին: Նրանցից կարելի է հիշատակել Գ. Վ. Զարբհանալյանի[260], Կ. Կոստանյանցի[261], Վ. Վ. Բարտոլդի[262], Լեոյի[263], Հ. Ս. Անասյանի[264], Ա. Հովհաննիսյանի[265], Մ. Կ. Զուլալյանի[266] և ուրիշների աշխատությունները: Նշված հեղինակները հիմնականում անդրադարձել են քաղաքական, դիվանագիտական, կրոնադավանաբանական հարցերին:

Մինչդեռ այդ աղբյուրները միանգամայն արժանի են հատուկ ուսումնասիրության, առանձին-առանձին թարգմանվելու և ներկայացնելու հայ գիտական հանրությանը, ինչպես դա արված է աղբբեջանական[267] և վրացական[268] պատմագի-

---

260 Տե՛ս **Գ. Վ. Զարբհանալեան,** Ուսումնասիրութիւններ հայ լեզուի եւ մատենագրութեան ի Արեւմուտս, Վենէտիկ, 1895:

261 Տե՛ս **Կ. Կոստանեանց,** Հայագիտութիւնն Արեւմտեան Եվրոպայում, Թիֆլիս, 1910:

262 Տե՛ս **В. В. Бартольд,** История изучения Востока в Европе и России, Ленинград, 1925:

263 Տե՛ս **Լեո,** Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946:

264 Տե՛ս **Հ. Ս. Անասյան,** XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:

265 Տե՛ս **Ա. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան, 1959:

266 Տե՛ս **Մ. Կ. Զուլալյան,** Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, 1980: **Նույնի՝** Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին // ՊԲՀ, 1985, թիվ 2, էջ 56-72:

267 Տե՛ս «Путешественники об Азербайджане», т. 1 (составил Ямпольский З.), Баку, 1961:

268 Տե՛ս **Н. Орловская,** Грузия в литературах Западной Европы XIII-XVIII веков, Тбилиси, 1965:

տության մեջ, կամ ինչպես լայն առումով ներկայացված են Կովկասը[269] և Արևելքը[270]:

Մեր կողմից հրատարակվել է երկու հոդված՝ XIII-XV և XV-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների վերաբերյալ[271]: Մեզ համար եվրոպացի ուղեգրողների վերաբերյալ հիմնական աղբյուրը Հովհ. Հակոբյանի «Ուղեգրություններ» հ.Ա (ԺԳ-ԺԶ դարեր (1253-1582), Երևան, 1932)* աղբյուրագիտական աշխատությունն է:

Համառոտակի ներկայացնենք XIII-XVII դդ. ճանապարհորդներին. Ուիլյամ Ռուբրուք (ճանապարհորդել է 1253-1255), Մարկո Պոլո (1271-1295), Ռոյ Գոնսալես դի Կլավիխո (1403-1406), Կատերինո Զենո (1471-1474), Ջոզեֆա Բարբարո (1471-1478), Ամբրոսիո Կոնտարինի (1473-1477), Ջիովան Մարիա Անջիոլելլո (1511-1520) և ուրիշներ, որոնք դիվանագիտական առաքելությամբ անցել են Հայաստանով և հարևան երկրներով:

Ուիլյամ Ռուբրուք, ֆրանսիացի (1215-1270): Ծնվել է Ֆրանսիայի ծայր հյուսիսում գտնվող Ռուբրուք գյուղում, այստեղից էլ նրա մականունը: 1253-1255 թթ. ճանապարհորդել է մոնղոլական տիրապետության տակ գտնվող բազմաթիվ

---

[269] Տե՛ս **М. Попиевктов,** Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тбилиси, 1935:

[270] Տե՛ս **В. В. Бартольд,** История изучения Востока в Европе и России, Ленинград, 1926:

[271] **Ռ. Նահապետյան,** Միջնադարյան Հայաստանի գործվածքեղենը արաբ և եվրոպացի ճանապարհորդների գնահատմամբ (IX-XV դդ.) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, 2019, էջ 211-230, **նույնի**՝ XV-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին // նույն տեղում, էջ 230-251:

* Այսուհետև այս աշխատությունից մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

երկրներում. նա Լյուդովիկոս IX-ի կողմից ուղարկվում է Մոնղոլական մեծ խան Մանգուի մոտ: Ուղևորությունը սկսում է Կ. Պոլսից դեպի մեծ խանի նստավայր Կարակորում՝ Սև ծովի, Դոնի, Վոլգայի վրայով, իսկ այնտեղից վերադառնում Դերբենդի, Շամախու, Մուղանի դաշտավայրով և նաև լինում է Հայաստանում՝ Նախիջևանից սկսած մինչև Կիլիկյան թագավորության սահմանները, Նախիջևան-Երևան-Անի-Մանազկերտ, Երզնկա-Կամախ-Սվազ–Կեսարիա-Սիս ուղեգծով: Նա տվյալներ է հաղորդում Կովկասի ժողովուրդների վերաբերյալ, խոսում է նաև Թավրիզի, Շամախու, Թիֆլիսի, Նախիջևանի, Կարինի մասին: Նրա հավաստմամբ՝ Նախիջևանում եղել է 80 հայկական եկեղեցի, բայց իր ժամանակ մնացել են երկուսը, որոնցից մեկում կատարվել է իր ծննդյան տոնը:

Նշում է Երզնկա քաղաքի ավերիչ երկրաշարժի և մարդկային մեծ կորուստների մասին: Ակնարկ կա Սեբաստիա քաղաքում Քառասուն մարտիրոսաց (Մանկանց) գերեզման ուխտատեղիի մասին և այլն:

Ռուբրուքին հետաքրքրել են ոչ միայն պատմական անցքերը, այլև ազգագրական առանձին երևույթներ: Նրա խոսքերով «Արևելքի քրիստոնյան անմեղ է և արդարացի»: Հայերը «թուրքերի երկրում [Իկոնիայի պետության սահմաններում] կազմում են բնակչության ճնշող մեծամասնությունը: «Դուք պետք է գիտենաք թուրքերի մասին, որ նրանց երկրում տասը մարդուց մեկը սարակինոս է, գրեթե ամբողջությամբ հայեր են և հույներ» (30): XIII դարից պահպանվել է Ուիլյամ Ռուբրուքի մի հետաքրքիր վկայություն այն մասին, որ Զաքարյանների ժամանակի Հայաստանում «... շատ գեղեցիկ գյուղեր կան և բոլորն էլ քրիստոնյա, և ունեն եկեղեցիներ ճիշտ նման ֆրանսիացիների»:

Նրա հավաստմամբ Նախիջևանի գեղեցիկ տեսք ունեցող գյուղերում և քաղաքում հայերը իրենց տներում, ամենից հարգելի տեղում պահելիս են եղել «Մի փայտյա ձեռք՝ խաչը բռնած, և մի վառվող ճրագ՝ դրված նրա առջև», և ինչ-որ մենք ենք անում օրհնյալ ջրով վանելու համար չար ոգիներին, նրանք անում են խունկով: Որովհետև նրանք ամեն երեկո խունկ են ծխում, տանելով այն տան բոլոր անկյունները, դուրս վանելու համար ամեն տեսակ չարություն»:

Ռուբրուքի ուղեգրության՝ Հայաստանին և հայերին վերաբերող հատվածների թարգմանիչ և հրատարակիչ Հովհաննես Հակոբյանը վերոբերյալին տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Հայ մատենագիրների գործերում ոչ մի հիշատակություն չկա հայ բնակարաններում խաչ բռնած փայտյա ձեռքի մասին: Իսկ հայ տներում ամեն շաբաթ երեկո խունկ ծխելու սովորությունը մնում էր մինչև վերջին ժամանակները: Հայաստանի շատ վայրերում խաչքարերի վրա իբրև մոտիվ կա խաչ բռնած ձեռք» (19-22): Ռուբրուքը նկարագրում է հայ քահանայի հուղարկավորության արարողությունը, լսել է հայ եկեղեցու հետ կապված ավանդություններ, ինչպես օրինակ՝ «Արարատ լեռը աշխարհի մայրն է համարվել, Նոյյան տապանի հանգրվանը, ուստի և նրա վրա բարձրանալը սրբապղծություն է»:

Ուղևորը հյուրընկալվել է Հեթում թագավորի և կրտսեր Զաքարիա Սպասալարի ընտանիքներում, որոնց հյուրասիրություններից ուշագրավ տպավորություններ է պատմում: Ռուբրուքը մի հայ վանականի է հանդիպել Մանգու խանի արքունիքում (Կարակորում մայրաքաղաքում): Նկարագրելով Երուսաղեմից եկած մի վանականի՝ երկաթե գոտի վերարկուի տակից կապելու և մազե վերարկու հագնելու սովորության մասին, միաժամանակ նշում է, թե այդ միամիտ վանականը

ներկայացել է Մանգու խանին և, վերջինիս բնակատեղին մոտիկ քրիստոնեական տաղավար ստեղծելով, իբրև թե աստծո հարկադրանքով տիրակալին ուզեցել է քրիստոնյա դարձնել, որպեսզի Հայաստանն ու աշխարհը փրկի: «Այստեղ կար ոսկյա մի կերպաս՝ վրան ասեղնագործված Փրկչի, Կույսի, Հովհաննես Մկրտչի և երկու հրեշտակների պատկերները՝ հագուստները ընդելուզված մարգարիտներով, նաև արծաթյա մի մեծ խաչ՝ հրեշտակները և կենտրոնը գոհարազարդված»: Նկարագրում է նաև հայ վանականի կրած զգեստները. «Նա հագել էր ամենակոպիտ մազե կտորից վերարկու մինչև ոլոքները հասնող, որի վրա կրում էր սև մետաքսյա մի ուրար (երկար ժապավենաձև կտոր, որ կրում էին եկեղեցու սպասավորները), մազե վերարկուի տակն ուներ երկաթյա մի գոտի»: Ռուբրուքի հիշատակած ասեղնագործ կերպասե կտորները նվիրված են եղել եկեղեցիներին և ծառայել են սպասքներ ու մասունքներ ծածկելու համար (34): Այնուհետև պատմում է կտավագործությամբ զբաղվող մի հայ վաճառականի մասին իր ստացած տպավորությունը:

Եվրոպացի ճանապարհորդի ուշադրությունից նույնպես դուրս չի մնացել ջուլհակությունը, որը հայ բնակչության ամենակարևոր և տարածված արհեստներից էր: Նրա հաշվետվությունները Լյուդովիկոս IX-ին՝ պարունակում են ուշագրավ նյութեր նաև մոնղոլների, պոլովցիների, ույղուրների և մյուս ժողովուրդների՝ պատմության ու ազգագրության վերաբերյալ:

Ռուբրուքը առաջինն էր, որ մանրամասնություններով ներկայացրեց բուդդիզմը: Հաշվետվություններում նա ունի աշխարհագրական ուշագրավ տվյալներ: Նա էր, որ պարզեց,

թե Կասպից ծովը կապ չունի օվկիանոսների հետ և լիճ է: Մանրամասն նկարագրել է իր անցած երկրները:

Մարկո Պոլո (1254-1324), իտալացի, ծնվել է Վենետիկի Ռիալտո կղզում, ճանապարհորդել է 1271–1295 թթ.: 1330 թ. իր շարադրած «Աշխարհի հրաշքների մասին» գրքում ներկայացրել է Ասիայի երկրներում իր ճանապարհորդությունների պատմությունը: Գիրքը ներկայացնում է եվրոպացիներին՝ Չինաստանի ընդարձակ տարածքները, հարստությունները, նրա մայրաքաղաք Պեկինը և ասիական այլ երկրները: 24 տարի ապրելով եվրոպացիներին դեռևս անծանոթ Ասիայի երկրներում, հավաքել է հսկայական քանակությամբ աշխարհագրական և ազգագրական նյութեր ասիական երկրների, այդ թվում նաև Հայաստանի և հայերի մասին:

Հայաստանով նա անցել է երկու անգամ՝ դեպի Չինաստան ուղևորվելիս՝ Այաս-Կեսարիա-Սվազ (Սեբաստիա)-Երզնկա-Մուշ-Մերդին երթուղով և վերադարձին՝ Թավրիզ-Սևանա լճի ավազան-Կարին-Բաբերդ-Տրապիզոն ճանապարհով:

Քաղաքական իրադրության վերաբերյալ բազմաթիվ վկայություններ հաղորդելուց բացի, նա հիշատակել է նաև ազգագրական երևույթներ: Ըստ նրա բնութագրության՝ Կիլիկիան ունի բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, և ամեն ինչով առատ է..., մեծ երկիր է ամեն տեսակ գազանների ու թռչունների որսորդության տեսակետից: Ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս (Այաս): Կիլիկիայի նավահանգստային Այաս քաղաքը դիտել է իբրև միջազգային առևտրի հանգուցակետերից մեկը, նշելով, որ «բոլոր համեմեղենները և մետաքսյա ու արծաթյա կերպասները և այլ արժեքավոր անոթներ, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը» (44):

Այասի վերաբերյալ հայտնում է նաև, որ «Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունին»: Ըստ նրա՝ Լևոն Բ թագավորը (1187-1219) մի հրովարտակով արտոնում է ջենովացիներին Այասից արտահանել Եվրոպա՝ ձի, ջորի, կերպասեղեն, գորգեր և ուրիշ բաներ, նշանակում է «մասնավոր մաքս ամեն մեկ արտահանվող առարկայի վրա»: Արևելք մեկնողները այստեղից են սկսում իրենց ճանապարհորդությունը: Նա Կիլիկիան անվանում է «Փոքր Հայաստան», որ կառավարվում է «արդար վարչությամբ»: Նա ափսոսանքով է արձանագրում, թե հայերը Կիլիկիայում թեև քրիստոնյաներ են, բայց նրանց հավատը «այնպես չէ, ինչպես հռոմեացիների մոտ» (այսինքն՝ կաթոլիկություն չեն դավանում):

Խոսելով Կիլիկիայի Ադանա քաղաքի մասին, գրում է. «Ադանան մի շատ լավ վաճառականական քաղաք է, որը ամուր պաշտպանված է պարիսպներով»: Փոքր Ասիայում ապրող հայերը «հյուսում են աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը, և նույնպես մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր և ուրիշ գույներով ու առատությամբ ուրիշ կտորեղեններ» (51): Այն նուրբ և հարուստ գորգերը, որոնց մասին խոսում է ճանապարհորդը, թուրքերի կողմից Փոքր Ասիան նվաճելուց և տեղական հայ ու հույն բնակչությանը այլ երկրներ հեռացնելուց հետո, այլևս չեն արտադրվում:

Մեծ Հայաստանի մասին գրում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որը կոչվում է Արզինգա (Երզնկա): Երզնկայում «հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները» գրում է նա: Նույն կերպ է արտահայտվում Մուշ և Մերդին քաղաքների վերաբերյալ: Մուշ և Մերդին քաղաքներում ժողո-

վուրդն զբաղվում է արհեստներով և մեծ քանակությամբ բամբակ ու բեհեզ է արտադրում: Մարկո Պոլոն «Մասիս լեռան ստորոտում, հովիտներում հիշատակում է որդան կարմիրի գոյությունը, որով մետաքսը ներկում էին բոսորագույն»[272]:

Թիֆլիսի շրջակայքի հայկական ու վրացական գյուղերը նրա վկայությամբ պարսպապատվում էին: Նա ակնարկ ունի Սևանա լճում ձկնորսության, նրա գեղեցկության, կենդանական աշխարհի, աշխարհահռչակ ձկնատեսակների վերաբերյալ: Հավատացել է, թե ձուկը այս լճում հրաշքով է հայտնվում պահքի օրերին և հեռանում Զատկից հետո:

Թավրիզի հայերը «իրենց ապրուստը հոգում էին առևտրով և ձեռարվեստով, որովհետև հյուսում են տեսակ-տեսակ մետաքսյա և ոսկյա գեղեցիկ, արժեքավոր կտորներ»: Նույն կերպ է արտահայտվում Սեբաստիայի հայերի կարպետագործության և գորգագործության մասին:

Ըստ նրա՝ թուրքմենները հիմնականում ապրում են լեռներում ու զբաղվում են անասնապահությամբ, նրանց հիմնական զբաղմունքը խաշնարածությունն է, մինչդեռ հայերն ու հույները՝ առևտրով և արհեստագործությամբ, հյուսում են աշխարհի ամենանուրբ ու ամենագեղեցիկ գորգերը և նույնիսկ մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր և ուրիշ գույներով և առատությամբ կտորեղեններ:

XV դարի եվրոպացի մեկ այլ ճանապարհորդ՝ **Զոզեֆան,** նկարագրում է Տրապիզոնից մինչև Խոյ ընկած քաղաքների ու գյուղերի ազգաբնակչության զբաղմունքը. նշում է նաև, որ այդ քաղաքներում և գյուղերում հայերը պատրաստում էին կտավ՝ «քաթան, կերպասներ ասվի (շայախ), շատ գորգ, նաև ոչ շատ

[272] Տե՛ս Ուղեգրություններ, Ա հատ., էջ 111:

մետաքս» (198)։ Ճանապարհորդը արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև Սղերդի մասին. «Այդ տեղի ժողովուրդն ապրում էր հողագործությամբ, ունեին առատ հացահատիկ, պտուղներ, շատ կտավե գործվածքներ ... ունեն այծեր, որ ամեն տարի խուզում են և նրանց մազերից հյուսում են կարպետ» (182-183)։

Ռոյ Գոնսալես դի Կլավիխո, իսպանացի, ծնվել է Մադրիդում (ծննդյան թվականը հայտնի չէ, մահացել է 1412 թ.), ճանապարհորդել է 1403–1406 թթ.։ Հայաստանով անցել է երկու անգամ՝ մեկ դեպի Սամարղանդ գնալիս՝ Սամսուն-Տրապիզոն–Երզնկա–Էրզրում (Կարին)–Ալաշկերտ–Բայազետ–Մակու Խոյ–Թավրիզ երթուղով, և ապա վերադարձին՝ Սամարղանդ–Թավրիզ–Խոյ–Ալաշկերտ–Թորդում–Իսպիր–Տրապիզոն երթուղով։ Կլավիխոն այցելում է նաև հայկական Անի, Կարս, Սպեր և այլ վայրեր ու քաղաքներ։ Նա Կոստանդնուպոլսից-Սամարղանդ ճանապարհորդելիս մանրամասն նկարագրություններ է թողել հայկական բնակավայրերի և հայերի գործունեության վերաբերյալ։ Օրինակ՝ նկարագրել է Տրապիզոնի հայկական եկեղեցին, նրա սպասավորների առօրյան, կրոնական արարողությունները։ Վերահասու է եղել ժողովրդի կրոնական պատկերացումներին, պաս պահելուն և այդ օրերին ձեթ ու կարմիր արյուն ունեցող ձուկ չուտելուն, Զատկից մինչև Հոգեգալուստը ամեն օր միս ուտելու սովորությանը և այլն։ Ակնարկներ ունի նաև Երզնկա քաղաքի և այդտեղի հայ կառավարչի հյուրասիրության մասին, նկարագրում է քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմող հայերի հագուստը, նիստ ու կացը։ Նրա տեղեկության համաձայն՝ «Երզնկայի ամբողջ դաշտը շատ բարեբեր էր»։ Ճանապարհորդը վկայել է, որ Երզնկայում «մշակվում էր որթատունկ և հացահատիկ։ Ամեն քայլափոխին

կային շատ գեղեցիկ պարտեզներ և այգիներ», ըստ նրա «հայերն են հիմնել Արզինջանը՝ Երզնկան»:

Ճանապարհորդը նույնպես հիշատակում է, թե «Մասիս լեռան ստորոտում, հովիտներում գտնվում է կարմիր որդան ներկը, որով մետաքսը ներկում են բոսորագույն» (138):

«Քաղաքի [Երզնկայի՝ Ռ.Ն.] բոլոր տներն ունեին տափակ կտուրներ, - գրում է Կլավիխոն, - որով մարդիկ կարող են անցնել մեկ տնից մյուսը, կտուրների վրայով, ինչպես փողոցից»: Երզնկայում «կարելի է տեսնել նաև շատ գեղեցիկ փողոցներ և հրապարակներ»: Նա ընդգծում է քաղաքի մարդաշատությունը, վաճառաշահությունը և խմելու ջրի լավ մատակարարումը: Այստեղ «պարտեզներում կարելի է տեսնել քարերի վրա փորագրված խաչի նշաններ», որոնք ամենայն հավանականությամբ երկրագործական-այգեգործական բերքը պաշտպանող ցասման խաչեր են եղել:

Նա նշել է համշենահայության հարկադրական մահմեդականացումը ու դրանով պայմանավորված բարքերի վատացումը:

Կլավիխոն արձանագրում է նաև Մակու քաղաքի շրջակա հայկական գյուղերի եկեղեցիների բակերի զերեզմանատներում «շիրիմներն ու զերեզմանաքարերը խաչքարերով զարդարված լինելու սովորույթը, որ մի մարդու հասակի չափ բարձր էին ու շատ գեղեցկորեն փորագրված» և այլն (138): Կլավախիոն հիշատակում է Մակվում պահպանված հայկական իշխանություններից մեկի մասին. «Կիրակի, հունիսի 1-ին (1404 թ.), մենք հասանք մի բերդ, որ կոչվում էր Մակու, և այդ վայրը պատկանում էր մի իշխանի, որ հռոմեական կաթոլիկ քրիստոնյա էր, բայց անունը Նուրադդին էր, և այն զինվորները, որոնք պահպանում էին այս բերդը, նույնպես կաթոլիկ

հավատքի էին: Նրանք իրականում ազգությամբ հայ էին, խոսում էին հայերեն, բայց միևնույն ժամանակ հասկանում էին թուրքերեն և պարսկերեն»:

Ամբրոսիո Կոնտարինին ընթերցողներին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում իր այցելած վայրերի մասին: Ուղեգողրը, որպես ջերմեռանդ հռոմեադավան, իդեալական գծերով է ներկայացնում Նախիջևանի շրջանի՝ կաթոլիկ հայերով բնակեցված տասնմեկ գյուղեր, որոնք, իր բառերով՝ «ամենահաճելի ու ամենաարգավանդ վայրերն են ողջ Պարսկաստանում»:

Քարայր բնակարանների և հայ բնակչության արհեստագործական արտադրանքի մասին է արձանագրում մասնավորապես **Ջոզեֆա Բարբարոն** (1471-1478). Մերդին բնակավայրի մասին թողել է հետևյալ հիշատակությունը. «Այս քաղաքը պարիսպ չունի և երեք քառորդ մղոն (1 մղոնը = 1600 մ) երկար է, ունի մոտ երեք հարյուր տուն: Նրանք պատրաստում են մետաքսյա և բամբակյա կտորեղեններ: Այստեղ հարգելի անձնավորությունների դիմավորման ժամանակ «ոտքերի տակ» փռում են կարպետներ, որոնցից յուրաքանչյուրն արժե հարյուր դուկատ» (182-183): Մերդինից Սղերդ ճանապարհորդությանը անդրադառնալիս, նշում է Հասանքեֆ (Հսնքեֆ) քաղաքի բլրի վրա կառուցված ամրոցի տեղադիրքի, բլրի ստորոտում բնակեցված քարայր կացարանների մասին և հավելում. «[Քաղաքում] կան հյուսվածքեղենի վաճառականներ և ուրիշ արհեստավորներ, որովհետև քաղաքը մեծ անցուդարձ ունի» (նույն տեղում): Սղերդի և նրա շրջակա գյուղերի մասին գրում է, «թե այստեղ ժողովուրդն ապրում է հողագործությամբ, ունեն հացահատիկ, պտուղներ և շատ կտավե գործվածքներ, եզներ, ձիեր, այծեր և ամեն տարի այծի մազից շինում են կա-

րպետ, որի պատճառով հայերը այծերին շատ խնամքով են պահում, լվացված, մաքուր»: Տրապիզոնից ոչ շատ հեռու ընկած քաղաքների և գյուղերի հայ բնակչության զբաղմունքին անդրադառնալիս, նշում է, որ նրանք պատրաստում էին կտավ՝ «քաթան, կերպասներ, ասվի, շատ գորգ և քիչ մետաքս» (82-83):

Շամախու մասին ճանապարհորդը գրում է. «Այս շատ լավ քաղաք է և ունի 4-5 հազար տուն, որոնք հիմնականում զբաղվում են մետաքսագործությամբ և կտավագործությամբ և այլ բաներով: Այն գտնվում է Մեծ Հայաստանում և բնակիչների մեծ մասը հայ են» (199):

XV դարի 70-ական թթ. օսմանյան բանակում ծառայող վենետիկցի Ջիովանի **Մարիա Անջիոլելլոն** ուշագրավ վկայություններ է թողել հայկական պատմական տեղավայրերի և հայ բնակչության վերաբերյալ: Հետաքրքիր են տեղեկությունները թուրքական բանակի կազմի, մարտունակության, ռազմական տեխնիկայի, Մեֆյանների պետության հիմնադրման, շահ Իսմայիլի՝ 1501- 1510 թթ. Իրանում և Արևմտյան Հայաստանում ծավալած ռազմական գործողությունների (276-285), թուրքական բանակի առաջապահ ուժերի՝ աքընջիների [273] (թուրքերեն բառացի նշանակում է «ասպատակող», «ավարառու» – Ռ. Ն.) վայրագությունների, նաև տեղական հայ բնակչության կողոպուտի ու նրանց բնակավայրերի ավերման

[273] Նրանք չէին վճարվում ծառայության համար՝ բացի այն կողոպուտից, որոնք ձեռք էին բերվում ասպատակային կռիվներում: Սրանք թուրքական կանոնավոր բանակի մեջ չէին մտնում, այլ նրանց իրավունք էր տրված ավերելու և թալանելու թշնամի երկիրը և ժողովրդին: Խիստ կարգապահ էին կողոպուտի բաժանման և իրենց պարտականությունների կատարման գործում: Այն 30 հազարանոց ասպատակող հեծյալ զորամաս էր:

մասին: Այսպես, թուրքական բանակի մատակարարման համար նրանց հպատակ ժողովուրդները, մասնավորապես քրիստոնյա բնակչությունը, պարտավոր էր հարկ եղած միջոցին պահանջված չափի ցորեն, գարի և այլ մթերքներ հանձնել, պարտավոր էր նաև բավականաչափ մթերք և անասնակեր տալ բանակի բեռները փոխադրող մարդկանց և կենդանիների համար, հակառակ պարագային համայնքը ենթակա էր պատժի ու դատաստանի (259- 268):

Անջիոլելլոյի հավաստմամբ աքընջիները գերեվարում էին տեղական (Երզնկայի) քրիստոնյա բնակչությանը, հարցուփորձի միջոցով նրանցից քաղում անհրաժեշտ տեղեկություններ տեղանքի, թշնամու (պարսկական – Ռ. Ն.) առաջապահ ուժերի մասին: Թուրքերը Երզնկայում թալանում են հայ բնակչությանը, եկեղեցին, այրում գրադարանը, սպանում եկեղեցու հոգևոր հովվին, որը նշանավոր փիլիսոփա էր. «… Երբ մեծ թուրքը (սուլթանը) լսեց այս մասին, զայրացավ, որովհետև ինչպես ասի, այդ մարդը մեծ փիլիսոփա էր» (265): Նրանց հասցրած տառապանքները այնքան շատ էին, որ տեղացիները հարկադրված «իրենց տավարով ու ինչքերով փախան անմատչելի լեռնային տեղանքները» (նույն տեղում): Այդպիսի ասպատակություններից մեկի ժամանակ «Երզնկայի հայ բնակչությունը դիմել էր փախուստի» դեպի Եփրատ գետի մյուս ափը:

Անջիոլելլոն Երզնկա քաղաքը համարում է «Մի գեղեցիկ քաղաք, Փոքր Հայաստանի մի մասը», որտեղից 8 օր հեռավորությամբ հասնում են Մալաթիա (265): Մինչ Երզնկան ներկայացնելը ճանապարհորդը նկարագրում է Սվազ (Սեբաստիա) քաղաքը և նրա մոտով անցնող Լալիս (Հալիս) գետը, նրա ափերը միացնող հսկա կամուրջը:

Ուղեգրության հեղինակը հիշատակում է Աղթամար կղզու Ս. Խաչ եկեղեցու, այն սպասարկող հարյուր վանականների և այն կառավարող մեկ պատրիարքի, կղզու վեց հարյուր տուն հայ քրիստոնյաների մասին (271): Նկատենք, որ Ս. Խաչ անվամբ եկեղեցին հիմնել է Վասպուրականի արքա Գագիկ Արծրունին 915-921 թթ., որի հրամանով, արքայական զինվորներից բացի, շինարարությանը մասնակցել են 6150 վարձու աշխատավորներ: Ճարտարապետն էր Մանվելը: Քարը բերվել է Բաղեշի Կոտոմ գյուղից: Այդ միջոցին կառուցվել են նաև Աղթամարի ամբարտակները, պարիսպները, հիմնվել էր նաև գեղեցիկ նավահանգիստ:

Ուղեգրության հեղինակը երկու անգամ հիշատակում է Ղարաբաղը (Garabas), ուր «անսահման մի դաշտ կա, և ուր զետեղված է մի ամրոց՝ Կանար (Canar) անունով՝ նրան պատկանող շատ գյուղերով: Այստեղի բնակչները գործում են մետաքս, որ կոչվում է Կանարյան՝ վայրի անունով» (281): Այս շրջանը, ըստ նրա, շատ հարուստ է: Հիշատակում է նաև Գյուլիստան (Gulustan) բերդը. «Մի մեծ և լավ ամրացված բերդ …» (282):

Հովհ. Հակոբյանի գրքում բերված է նաև «Մի վաճառականի ճանապարհորդությունը Պարսկաստանում» (1511-1520) խորագրով անանուն հեղինակի ուղեգրության հայերեն թարգմանությունը, որտեղ պարունակվում են XV դարի վերջերի և XVI դարի սկզբների՝ հայերին և հայկական բնակավայրերին վերաբերող ուշագրավ տեղեկություններ: Անանուն վաճառականի թողած «Ուղեգրությունը» ներառում է Արևելքի ժողովուրդների կենցաղի, սովորույթների և այցելած քաղաքների մասին նյութեր, որոնք հավաքել է ութ տարի, ութ ամիս (286-287): Իրան ուղևորվել է Հայկական լեռնաշխարհի հարա-

վային շրջաններով՝ Դիարբեքիր–Մերդին ուղեգծով, և գրառել տնտեսական ու ժողովրդագրական բնույթի ուշագրավ վկայություններ: Մանրամասն նկարագրում է Դիարբեքիրի քրիստոնեական եկեղեցիները, դրանց կառուցողական արվեստը:

Ճանապարհորդն արձանագրում է, որ «Դիարբեքիր քաղաքն ունի տասը կամ տասներկու մղոն շրջագիծ (1 մղոն = 1600 մ), շրջապատված է սև քարե պարսպով՝ 360 մեծ և փոքր աշտարակներով: Քաղաքում կան շատ եկեղեցիներ, պալատներ և մարմարյա հուշարձաններ: Մի ժամանակ այստեղ քրիստոնյաները ավելի մեծ թիվ էին կազմում, սրբազան մասունքները ցուցադրում էին բաց կերպով, ինչպես, օրինակ, Ս. Գևորգ եկեղեցում Ս. Պետրոսի աջը՝ արծաթե տուփի մեջ, որ պահում էին մեծ հարգանքով» (290): Ճանապարհորդը հիշատակում է նաև «գեղեցկությամբ և շքեղությամբ» աչքի ընկնող Ս. Հովաննու և Ս. Մարիամ եկեղեցիները: Վերջինս, ըստ նրա, «մի մեծ շենք է՝ 60 խորաններով, որ երևում են մատուռների առջև, ներսը կառուցված է կամարներով, և կամարները պահպանվում են ավելի քան 300 սյուներով: Կան նաև կամարներ՝ կամարների վրա՝ հավասարապես պահպանված սյուներով» (նույն տեղում): Ուղեգրության մեջ այն անվանված է դրախտ, և ափսոսանք է հայտնում, որ վանական համալիրի արևելյան հատվածը վերածված է մզկիթի (նույն տեղում): Ճանապարհորդը Դիարբեքիրը անվանում է անուշ ու սառնորակ աղբյուրներով հարուստ քաղաք: Ըստ նրա վկայությունների՝ քաղաքում բազմաթիվ են կրոնական հավատքները. «Այստեղ կան բազմաթիվ կրոնական համայնքների մարդիկ, թվով ավելի մեծ, քան մահմեդականները, քրիստոնյա համայնքներն են՝ հույն, հայ և հրեա: Յուրաքանչյուր կրոնն

ունի իր առանձին եկեղեցին՝ իր սեփական արարողությամբ» (293):

Տիգրիս գետը, որը հոսում է Դիարբեքիրի արևելյան կողմով, անվանված է Սեթ, որը արաբերեն Շաթ անվան աղավաղված ձևն է:

Այնուհետև նկարագրում է Մերդին քաղաքի գեղեցկությունը. «… Փառավոր քաղաքը՝ մի նետաձիգ հեռավորության (արձակված նետի հեռավորության չափ) գտնվող բարձր լեռան վրա, հզոր ու բարձր պարսպով, քաղաքում ավելի շատ քրիստոնյա հայեր և հրեաներ են ապրում, քան մահմեդականներ» (293): Քաղաքը գրավում է նրան նաև իր աշխատասեր ու գործունյա մարդկանցով. «Հիրավի (Մերդին քաղաքի) բնակիչները շատ արժանավոր և լավ մարդիկ են: Այստեղ հայ առևտրականները շատ են, կանայք՝ շատ գեղեցիկ … : Քաղաքը լի է փորված այրերով՝ սենյակներ, պալատ հիշեցնող բարձր սանդուղքներով, որոնցով նրանց բնակիչները գետն են իջնում՝ ջուր վերցնելու համար» (նույն տեղում): Ճանապարհորդի ուշադրության ծիրում հայտնված բարեկեցիկ համայնքներից է Դիարբեքիր նահանգի քաղաքներից ևս մեկը՝ Հըսնքեֆը, որի մասին էլ գրում է, թե «… այնտեղ բնակվում են բազմաթիվ քրիստոնյա բնակչություն՝ շատ հարուստ առևտրական մի համայնք» (294-295):

Անանուն ճանապարհորդը հիշատակում է նաև իր այցելած Սղերդ քաղաքը՝ նշելով, որ այստեղ «ընկույզն ու շագանակը աճում են մեծ քանակությամբ, նույնպես ներկի ստացման համար՝ գղթոր» (296):

Շատ ուշագրավ են նրա տեղեկությունները Բիթլիսի, Վանի, Ոստանի, Դատվանի, Արճեշի և հարավարևմտյան Հայաստանի այլ քաղաքների ու գավառների մասին:

Բիթլիս քաղաքի նկարագրությունից երևում է, որ քաղաքը տեղակայված էր աշխարհագրական բարձր գոտում՝ խստաշունչ կլիմայով, ինչը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում բնակչության համար. «Քաղաքը շատ մեծ չէ և ոչ էլ պարսպապատ, բայց իր կենտրոնում, բլրի վրա ունի մի ամրոց՝ մեծ և լավ կառուցված: Քաղաքը զետեղված է բարձր լեռների միջև, մի հովտում, այնպես որ ծածկված լինելով՝ ոչ ոք այն չի կարող հեռվից տեսնել: Եվ այդ ամբողջ շրջանը ձյան յուրատեսակ ամբար է, ձյունն ու ձմեռը այստեղ այնքան երկար են տևում, որ տարվա մեջ միայն երեք կամ չորս ամիս է ձյունից ազատվում, որի պատճառով երկրագործ հայ բնակչությունը հացահատիկ չեն կարող ցանել ապրիլի 15-ից կամ 20-ից առաջ» (297):

Հեղինակը խիստ բացասաբար է արտահայտվում տեղացի քուրդ բնակչության վերաբերյալ՝ գրելով, որ «բնակչության մի զգալի մասը քուրդ են, անարգ մի ցեղ», որի պատճառով քաղաքում «բարիքներ քիչ են արտադրվում», և «շատ վաճառականներ, որ հիմնականում հայեր են, մեկնում են այս քաղաքից առևտուր անելու Հալեպում, Թավրիզում, Բուրսայում, որովհետև այստեղ ոչինչ չկա գնելու և ոչ էլ որևէ ապրանք մանրավաճառի համար» (298): Նշում է, որ այստեղ հայ քրիստոնյաների թիվը ևս քիչ չէ, բայց նրանք նույնպես բացասական գնահատականի են արժանանում:

Բիթլիսից Դատվան անցնելիս հեղինակը հանգամանալի նկարագրում է Վանա լիճը և նրա շրջակայքը: «Երեք հարյուր մղոն երկարությամբ, հարյուր հիսուն մղոն լայնությամբ է, շատ գետակներ են թափվում նրա մեջ, իսկ շրջապատի երկիրը շատ բարեբեր է՝ շուրջը խիտ բնակեցված գյուղերով, բնակիչները՝ հիմնականում հայեր են» (299): Ծովի շուրջը կան

յոթ փառավոր ամրոցներ՝ բնակված հայերով և քրդերով: Ծովի արևելյան կողմի ամրոցներ ասելով նկատի ունի Դատվանը, Ոստանը, Վանը և Բերկրին, իսկ արևմտյան կողմի երեք ամրոցներն են՝ Արճեշը, Արծկեն (հեղինակն այն անվանում է Ալջավազ) և Խլաթը: Դատվանը, ըստ ուղեգրողի, հարմար նավահանգիստ է, անցյալում ծառայել է որպես ձմեռանոց, իսկ շրջակա բարձունքը՝ ամառանոց: Ապա մատնանշում է Դատվանի և Ոստանի միջև «ծովում մի մեծ կղզի, ցամաքից երկու մղոն հեռավորության վրա, որն ամբողջությամբ կարծր ժայռ է, վրան՝ փոքր քաղաք՝ երկու մղոն շրջագծով, շատ բազմամարդ բնակչությամբ՝ բացառապես հայերով բնակված, առանց ոչ մի մահմեդականի: Քաղաքը կոչվում է Արմենիկ: Քաղաքն ունի շատ եկեղեցիներ՝ բոլոր հայ քրիստոնյաների պաշտամունքի համար, որոնցից ամենամեծը Ս. Հովհաննեսն է» (300): Եկեղեցին ունի մի զանգակատուն՝ շինված աշտարակի նման, այնքան բարձր, որ նայում է ամբողջ քաղաքի վրա, իսկ դրանց մեջ կա այնքան մեծ մեկը, որ երբ հնչում է զանգը, ձայնը լսվում է ցամաքից ամեն կողմ: Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց՝ հիանալի մի դաշտով, որն ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիստոնյաներով: Այստեղ հողերը խնամքով են մշակված, ամենուրեք գեղեցիկ պարտեզներ են՝ ամեն տեսակ մրգատու ծառերով: Այս շրջանը հաճելի և առողջ կլիմա ունի, ստացվում է մեծ քանակությամբ սպիտակ մեղր, տարվում է Թավրիզ վաճառվելու: Այստեղից Թավրիզ վաճառքի են հանվում նաև օձանելիք և պանիր (301):

Հաջորդ հիշատակությունները Գյուլիստան և Ալանջախանա բերդերի մասին են: Ալանջախանա բերդը հավանաբար նույն Երնջակն է: Ուղեգրողը նշում է, որ Ալանջախանա ամրոցին մերձ ուղղափառ քրիստոնյաներով բնակված տասներ-

կու գյուղեր կային: Քրիստոնյաններն այս գյուղերում կրոնական արարողությունը կատարում էին հայերեն: Այս գյուղերի եկեղեցիներում պահպանվել են իտալերեն շատ ձեռագրեր, որոնցից երկուսը հանձնվել է հեղինակին. մեկը վերաբերել է աստղաբաշխությանը, մյուսը քերականության կանոններ են: Հ. Հակոբյանը ամրոցը և նրա շրջակա 12 գյուղերը հիշատակում է Նախիջևանի գավառում (324, ծնթ. 2): Նշված ամրոցը և շրջակա գյուղերը պատկանում էին հայերին: Հայ բնակիչները հմուտ ծիրանագույն ներկ պատրաստողներ էին: Ըստ ուղեգրողի՝ սրանց պատրիարքը (կրոնական առաջնորդը) ամեն տարի երկու մարդ էր ուղարկում պապին՝ խունկի մատուցումով:

XVI դարի 70-ական թթ. մեզ հետաքրքրող աղբյուրներում առանձնահատուկ տեղ է գրավում Պարսկաստանում Վենետիկի Հանրապետության դեսպան **Վիչենցո Դ'Ալեսանդրիի** գործունեությունը: Իրանում երկար ժամանակ ապրելու ու շահական պալատի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ շփվելու շնորհիվ նա արժեքավոր վկայություններ է հաղորդում ոչ միայն Իրանի և Արևելյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքի, այլև Բիթլիսի, Վանի, Ուստանի, Բերկրիի, Արճեշի և պատմական Հայաստանի հարավային այլ քաղաքների ու հայ բնակչության մասին: Վենետիկցի դեսպանը Բիթլիսն անվանում է «մի կիրճ և բանալի հետևյալ քաղաքների ու շրջանների՝ Ախլաթ, Արճեշ, Ուստան, Բերկրի, Խիզան և Վան քաղաքների համար: Վերջինս շատ կարևոր մի քաղաք և բերդ է, շրջակա մեծ տարածությամբ երկիր… » (338):

Հայաշատ Դիարբեքիր քաղաքն էլ անվանում է «Կարա Ամիդ՝ որպես բազմաքանակ, մեծ կարևորությամբ արդյունաբերական կենտրոն՝ ամենագեղեցիկ դիրքով» (334): Հարավա-

յին Հայաստանի այդ տարածքները նա անվանում է Փոքր Հայաստան: Պատմական Հայաստանի գերակշռող մյուս մասն անվանում է «Մեծ Հայաստան»: Հայերով բնակվող գյուղերի մասին գրում է. «Առատություն կա հացահատիկի և այլ բերքերի վերաբերյալ, որ դաշտերը գեղեցիկ են, լավ մշակված, գյուղական շրջաններում սովոր են ջուրը առուներով տանել՝ դաշտերը ջրելու համար. շաբաթը՝ մեկ տեղում, հաջորդ շաբաթում՝ մի այլ տեղ և այս եղանակով բավականաչափ ջուր են մատակարարում հացահատիկի և որթատունկերի դաշտերին ու այգիներին: Այս տեղերի բնակչությունը մեծ քանակությամբ պահում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ, մասնավորապես ոչխար և այն էլ այնպիսի մեծությամբ, որ ինքը տեսել է Թավրիզի շուկայում, որոնց դմակը կշռում է տասը բիստի՝ ինը ֆունտ» (1 ֆունտը = է մոտ 0,5 կգ) (331): Ի դեպ, նա նշում է նաև, որ Պարսկաստան շատ ոչխար էր արտահանվում Հայաստանից. «…Ոչ մի ժողովուրդ աշխարհում ոչխարի միս ավելի չի ուտում, քան պարսիկները. Սովորության համաձայն ուտում են չորս անգամ, խմելու ջրի առատությունը նպաստում է նրանց մարսողությանը» (345):

Ըստ Դ'Ալեսանդրիի հավաստումների՝ «իր այցելած քաղաքներում և ավաններում շատ զարդարանք չեն գործածում. ամեն ոք տանը քնում է գետնի վրա, և նրանք, ովքեր մի քիչ դիրք ունեն, գործածում են ներքնակ կարպետի վրա, ուրիշները՝ պարզ փսիաթի (խսիր)» (341-345), կահավորման մի անպաճույճ ձև, որը բնորոշ էր նաև XIX դարի վերջի և XX դարի սկզբների գյուղական հայ բնակչությանը[274]:

---

[274] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Գերդաստանական տունը և կենցաղը Աղձնիքի Ազնվացնոր գավառում // ԲԵՀ, 1973, **նույնի՝** Աղձնիքահայերի ընտանիքը և

Անգլիացի Անթոնի Ջենկինսնի «Ուղեգրությունը» (1557-1572 թթ.) նույնպես կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հայերի պատմատնտեսական և կենցաղամշակութային կյանքի վերաբերյալ: Այս ուղեգրողը պարսկա-թուրքական պատերազմները բնորոշում էր որպես մի պայքար, որն ուղղված էր առևտրական ուղիների և առևտրի գլխավոր առարկայի՝ հում մետաքսին տիրանալու համար:

Ջենկինսնը ներկայացնում է Արաշ անվամբ քաղաքը՝ սխալմամբ վրացական սահմանի վրա հիշատակելով, քանի որ դա նույն Շիրվանն է: Հեղինակը Շամախի քաղաքի հարևանությամբ գտնվող Արաշը ներկայացրել է որպես հայերով բնակեցված քաղաք, բարգավաճ առևտրական կենտրոն, որտեղ մշակվում է ամենամեծ առատությամբ մետաքս, և դրանց գնումների համար աշխույժ առևտուր էին անում թուրքերը և այլ օտարականներ: Այստեղ նույնպես կարելի է ձեռք բերել զանազան ապրանքներ՝ կոշտ ու նուրբ գղթոր (ներկանյութ-Ռ.Ն), բամբակ, բուրդ, պաղլեղ (շիբ), հում մետաքս՝ այդ երկրի բնական արտադրանք:

Շամախի քաղաքից ոչ շատ հեռու հիշատակում է Գյուլիստան ամրոցը, դրանից ոչ շատ հեռու՝ մի կուսանոց (նկատի ունի Կուսանաց անապատը – Ռ. Ն.) (372): Գյուլիստանից ոչ շատ հեռու գտնվում է նաև XVII դարում հիմնված Ս. Ամենափրկիչ վանքը: Այս տեղավայրերը պատմական Արցախն են, քանզի վաճառականի նկարագրությունները հիմնովին համընկնում են դրան: Ըստ Հ. Հակոբյանի՝ Արաշը հայկական Արցախի հին անվան աղավաղված ձևն է (375, ծնթ. 1):

ընտանեկան ծիսակարգը (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2004, էջ 86-108:

Եվրոպացի ճանապարհորդների բարեհաջող վերադարձի ճանապարհը դեպի Վրաստան, ապա Ռուսաստան և Անգլիա կազմակերպում են Արաշ քաղաքի «մի կարգ հայ վաճառականները» (391):

Անգլիական առևտրական ընկերություններին հետաքրքրել է պարսկական պետությունից հետևյալ ապրանքների ներմուծումը՝ 1. հում մետաքս, 2. պղպեղ, 3. կոճապղպեղ, 4. մշկընկույզ, 5. ծծումբ, 6. պաղլեղ, 7. բրինձ, 8. գղթոր, 9. մեխակ, գեղձ (փայտ) աղեղի համար (406):

Պարսկաստանից Անգլիա հասցվող ապրանքների մեջ կարևորվում էին նաև ամեն տեսակ համեմունքները, դեղորայքը, մարգարիտն ու թանկագին քարերը, նմանապես զանազան տեսակի գորգերը, որոնց առևտրում աչքի ընկնող տեղ էին գրավում հայերը: Իսկ Պարսկաստանում անգլիական ամեն տեսակի կտորեղենի մեծ պահանջարկ կար. վառ գույներով՝ որդան կարմիր՝ բոսորագույն, կանաչավուն, մանիշակագույն՝ նուրբ կարմիրն առավել չափով ու մի քիչ սև՝ կանանց հագուստի համար: Առավել մեծ էր պահանջարկը Լոնդոնի կերպասների, կամլոտ տիպի (մետաքսի և բրդի խառնուրդ) և վառ գույնի՝ կանաչ, ծիրանագույն և նուրբ կարմիր թավիշ, ոսկյա կերպասի, դիպակ և բեհեզ [մետաքս, ոսկե թելերով հյուսված – Ռ. Ն.] կտորեղենների նկատմամբ (408-409):

Առևտրական գործարքներում, ինչպես ասված է անգլիացի գործարար **Արթուր Էդվարդսի** նամակում, որ գրված է 1566 թ. օգոստոսին Շամախի քաղաքում՝ ուղղված Լոնդոնի Մոսկովյան առևտրական ընկերությանը, մեծ է տեղացի հայերի, մասնավորաբար նաև Հալեպ քաղաքի հայ առևտրականների մասնակցությունը անգլիական և վենետիկցիների առևտրին: «Ըստ տեղեկության,– ասվում է նամակում,– հայերը և ինչպես

ես էլ նկատում եմ, Հալեբից ամեն տարի բերում են չորս-հինգ և վեց հազար կտոր կրսեներ և կերպասներ: … Հայերի մի գյուղից տարեկան 400 ու 500 ջորի բեռ մետաքս են փոխադրում Հալեբ, և այնտեղից բերում են (Պարսկաստան) 800 կամ մի հազար ջորի բեռ կրսեներ և Վենետիկի կերպասներ» (411-412): Այդ նամակում նաև ասված է, որ հայ առևտրականներին պատվիրվում է անգլիացի վաճառական գործարք կատարողների կողմից Հնդկաստանից հայթայթել նաև «ամեն տեսակ համեմունքներ, պղպեղ, մշկընկույզ (հնդընկույզ՝ արևադարձային մշտադալար ծառի պտուղներ՝ իբրև համեմունք – Ռ. Ն.), կինամոն (դարչին)» (413): 1568 թ. անգլիական առևտրական գործակալների նամակներում և ուղեգրություններում աներկբա խոսվում է հայ առևտրականների մենաշնորհի, Վենետիկի առևտրական գործակալության հետ նրանց համագործակցության և նրանց դեմ մրցակցային պայքար կազմակերպելու և անհաջողությունների մատնվելու մասին:

Անգլիացի մեկ այլ առևտրական՝ Մաստր **Ջեֆրեյ Դուգետը,** 1568-1574 թթ. առևտրական գործարքներով գտնվելով Պարսկաստանում, ուշագրավ վկայություններ է թողել նաև այդ երկրի թագավորի բազմակնության և բազում հարճեր պահելու սովորույթի մասին: Այսպես, հիսուն տարուց ավելի թագավորած Շահ Թահմասպը, ըստ ճանապարհորդի, ուներ մշտապես չորս կին և գրեթե երեք հարյուր հարճ, և ամեն տարի մի օր բոլոր աղջիկներն ու կանայք որքան էլ հեռու գտնվեին, արքունիք էին բերվում: Եվ եթե պատահեր, որ նա որևէ մեկի կնոջն առներ, նրա ամուսինը շատ ուրախ կլիներ և ի վարձատրություն կստանար շահի հին մթերանոցներից

մեկը, որը կընդունվեր շնորհակալությամբ (433-434)[275]: Պարս-կաստանում պահվում էր երիտասարդ կանանց և աղջիկ-ներին վաճառելու սովորույթը (434)[276]:

Անգլիացի գործարար **Քրիստոֆեր Բուրոյի**՝ իր հորեղբորն ուղղված նամակներում (1579-1581 թթ.) տեղեկություններ են տրվում Աստրախան տանող ճանապարհին նահատակված, շրջակա ռուս բնակչության հիշատակությամբ Սոդոմ քաղաքի և բերդի ավերակներում եղած գերեզմանների մասին: Ըստ նամակի հեղինակի՝ դրանց տապանաքարերի վրա նկատվել է ձիու պատկեր՝ վրան նստած մի մարդ՝ աղեղը ձեռքին և մեջ-քին նետի գոտի, գերեզմանաքարերից մեկի վրա էլ՝ վահանի մի կտոր՝ վրան փորագրված տառեր: Դրանց մի մասը եղծված է, մյուսները, տառերի ձևերից դատելով, հայկական էին: Այնուհետև մեր նույն ուղևորը հիշատակում է Դերբենդի մոտ՝ ծովեզերքին, մի բնակավայր, որ կոչվել է Հայ գյուղ (443): Նա նշում է նաև, որ այստեղ և շրջակայքում բնակչությունը զբաղ-

---

[275] Ուշագրավ էր շահերի կենցաղը: Այսպես, օրինակ, Շահ Աբասը երկու օր անցկացնում էր իր բաղնիքում, և երբ նա տրամադրված էր այնտեղ գնալ, իր հետ վերցնում էր հինգ կամ վեց հարճերի, առավել կամ նվազ, և մեկ օր նրանք լվանում, շփում և լողացնում էին նրան և մյուս օրը նրանք մշակում էին նրա եղունգները և այլն: Իր կյանքի մեծագույն մասը նա անցկացնում է իր կանանց և հարճերի հետ: Նա թագավորել է հիսունչորս տարի և հետևաբար շատ սուրբ մարդ է համարվել, որովհետև պարսիկները շատ էին հարգում իրենց թագավորին, նրան ընդունում էին իբրև աստված:

[276] Ստրուկները և ստրկուհիները առևտրի ամենալավ ապրանքներն էին համարվում: Երբ գնում էին երիտասարդ կանանց կամ աղջիկների, գնորդը շոշափում էր նրանց, վերաբերվում այնպես, ինչպես վաճառվող կեն- դանի-ների: Երբ մեկը երիտասարդ կին էր գնում, կարող էր պահել իրեն որքան ժամանակ որ կամենար, ապա ծախել մի ուրիշի, որը կարող էր նույն կերպ վարվել: Այսպես, կինը երբեմն չորս-հինգ տարվա ընթացքում վաճառվում էր մինչև քսան անգամ: Եթե ստրկուհին հավատարիմ չգտնվեր, տերը ցան-կության դեպքում կարող էր սպանել նրան:

վում էր մետաքսի գործով և տորոնի (ներկատու բույս – Ռ. Ն.) մշակությամբ (437):

Անգլիացի վաճառական **Ջոն Նյուբերին** (1521-1582 թթ.), այցելելով Պարսկաստան, լինում է նաև Արևելյան Հայաստանում՝ Երևանում: Թավրիզի հայկական եկեղեցում ներկա է լինում սաղմոսի և պատարագի արարողակարգին: Պատարագի սկզբում, ըստ նրա, մարդիկ համբուրում են իրար, իսկ պատարագից հետո համբուրում են Սուրբ գիրքը և վայելում սուրբ նշխարը, աղքատներին բաժանում են ապուր և հաց (452): Նա թողել է Թավրիզի հայերի չորեքշաբթի և ուրբաթ օրերին պաս պահելու վերաբերյալ նկարագրություն:

Վաճառականը նշում է նաև «Հայաստանի Երզնկա և Էրզրում քաղաքների հայության լավ ապրանքների՝ մետաքսի, սաթինի՝ ատլաս կոչված կտորի մեծ պահանջարկի մասին: Արաքս գետի ափին գտնվող Ջուլֆա քաղաքի մասին խոսելիս հիշատակում է, որ քաղաքի բնակչության մեծ մասը հայեր են, երեք հազար տուն կա, յոթ եկեղեցի: Ըստ նրա տեղեկությունների՝ Ջուլֆան կարևոր առևտրական կենտրոն էր, որտեղ զարգացած էր հայ խոջայական կապիտալը (մինչև Շահ Աբասի իրականացրած 1603 թ. բռնագաղթը – Ռ. Ն.): Հայտնի է, որ Շահ Աբասը խլեց հայ բնակչության ունեցվածքը, արդյունաբերությունը, թուրքերին քաղաքը հանձնեց ավերված և դատարկված, քանդեց Արաքս գետի քարե կամուրջը՝ փակելով վերադարձի հնարավորությունը: Մինչև բռնագաղթը Ջուլֆան ուներ 2 հազար տուն, 10 հազար բնակիչ: Այստեղ տները քարաշեն էին՝ հակառակ աղյուսաշեն պարսկական քաղաքների:

Վաճառականի հաջորդ կանգառը Նախիջևանն է եղել, որը, ըստ նրա հաղորդման, «մեծ քանակությամբ կենսամթերք ուներ, մասնավորապես խաղող, հատկապես աչքի էր ընկնում

կտորեղենի, մետաքսի արտադրությամբ» (454)։ Այստեղից նա հասնում է Մասիս լեռան ստորոտը, նշում, որ այս սուրբ լեռան ստորոտում կա հայերի մի եկեղեցի [Ս. Հակոբ – Ռ. Ն.], նշում է նաև, որ երկու Մասիսներից մեծի վրա է հանգրվանել Նոյյան տապանը, ապա հասնում են Երևան և գիշերում Էջմիածնում, որտեղ կանգուն էին քրիստոնեական հինգ եկեղեցիներ։ Ըստ նրա՝ Նախիջևանի և Երևանի միջև մի տեղ կա, որ գետնից աղ են հանում [Կողբի աղահանքն է – Ռ. Ն.] (455)։

Նախիջևանից դուրս գալու 14-րդ օրը վաճառականը հասնում է Դազզվան (Կաղզվան)՝ նշելով, որ քաղաքից դուրս կա մի հայկական եկեղեցի [խոսքը Կամրջավոր վանքի մասին է – Ռ. Ն.], ապա, հայկական գյուղերով անցնելով, հասնում է կենսամթերքներով հարուստ Էրզրում քաղաքը։ Շատ արժեքավոր տեղեկություն է հաղորդում Կաղզվանից Էրզրում հասնող ճանապարհի վրա գտնվող գյուղերի հայ կանանց զգեստի վերաբերյալ. «Հագնում են գասկինս մարդոց նման, իրենց գլխին կրում են մի բարձր կլոր գլխարկ, կողքից կախված արծաթյա դրամներով, նրա ու իրենց կզակի շուրջ միայն սպիտակ լաթ ունեն, որի շուրջ արծաթ կոճակներ են շարված, և նմանապես իրենց գլխի վրա կրում են կարմիր մետաքսի ծոպավոր մի կտոր, որ կախված է նրանց ետևից, երկու կամ երեք հարդա (հավանաբար 2-3 մատ) գետնի վրա, և իրենց վզի շուրջ կրում են արծաթե մանյակ, որին ամրացված են հինգ կամ վեց շատ լայն արծաթե կտորներ, և ոմանք ավելի։ Կանայք մեծ մասամբ թուխ են, ունեն լեցուն երես, փոքր ոտք, մեծ սրունք, մեծ ձեռք ու բազուկ, շրթունքները փոքր չեն» (457)։ Ապա խոսում է շրջակա հայկական գյուղերի գինու առատության մասին, որը շատ էժան է վաճառվում (նույն տեղում)։

Անգլիացի **Ա. Ջենկինսոնի, Լորենս Չափմանի, Ջոն Սպարքի, Թոմաս Բանիստրի** և այլոց XVI դ. վերջի ուղեգրություններում, որոնք նույնպես թարգմանված են հայերեն՝ Հովի. Հակոբյանի կողմից (տե՛ս Ուղեգրություններ, հ. Ա, էջ 408-447), խոսվում է նաև Եվրոպայի ու մասնավորապես Վենետիկի հետ Ջուղայի հայ խոջաների ունեցած առևտրական հարաբերությունների մասին:

Ֆրանսիացի ճանապարհորդ **Տավերնիեն**, խոսելով XVII դարի Թոխատի մասին, որի բնակիչները ճանապարհորդի պնդմամբ՝ հիմնականում հայեր էին, գրում է. «Հատկապես նկատելին Թոխատում այն է, որ այս քաղաքը Արևելք տանող խոշոր տարանցիկ կայաններից մեկն է: Այստեղ անվերջ քարավաններ են գալիս Պարսկաստանից, Դիարբեքիրից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, Սինոպից և այլ վայրերից»[277]:

Որպես տարանցիկ առևտրի կենտրոն՝ Էրզրումը ամենևին չէր զիջում Թոխատին: «Էրզրումում,– գրում է Տավերնիեն,– կան շատ քարավանատներ: Այս քաղաքը, ինչպես և Թոխատը, Թուրքիայի մեծ տարանցիկ կայաններից մեկն է»[278]: Նա արձանագրում է Թուրքիայում քարավանային առևտրի անապահովության խնդիրը: Տավերնիեն բառացիորեն գրում էր. «Ամբողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք թափառում են զինված, մեծ խմբերով ու ճանապարհների թաքստոցներում սպասում վաճառականներին՝ ոչ միայն կողոպտելու նպատակով, այլև նրանց հաճախ զրկում են կյանքից»[279]:

---

[277] **J. B. Tavernier,** Les six voyages, Paris, 1679, p. 11-12:
[278] Նույն տեղում, էջ 20:
[279] Նույն տեղում, էջ 2:

XVII դարի մեկ այլ ճանապարհորդ՝ իտալացի **Դելլա Վալլեն**, գրում է Շահ Աբասի՝ հայերի բռնագաղթի իրագործման դաժան մեթոդների, Հայաստան երկրի հայաթափման մասին. «Ինչպիսի՛ դժբախտությունների տեղիք տվեց այդ ողբերգական տեղահանումը, ինչպիսի՛ սպանությունների, ինչքա՛ն մարդիկ մահացան սովից, ինչպիսի՛ սպանություններ, հափշտակումներ, աղջիկների ու կանանց բռնաբարումներ, ինչքա՛ն երեխաներ հուսահատության պատճառով խեղդվեցին կամ ջրահեղձ արվեցին իրենց հարազատ հայրերի աչքի առաջ, այլք սպանվեցին պարսիկ կառավարիչների կողմից կամ խլվեցին իրենց մոր կրծքից ու նետվեցին փողոցներն ու ճամփաները՝ դառնալու համար գազանների սնունդ կամ տրորվեցին բանակի ձիերի և ուղտերի ոտքերի տակ մի ամբողջ օր: Հայրերի՝ իրենց երեխաներից, ամուսինների՝ իրենց կանանցից, եղբայրների՝ իրենք քույրերից ինչպիսի՛ դժոխային բաժանում, որոնք ուղարկվեցին Պարսկաստանի հեռավոր նահանգները՝ հույս չունենալով այլևս իրար գտնելու: Կազմվեցին տղամարդկանց ու կանանց ճամբարներ, որոնց զգալի մասը էժան գնով վաճառվեց, ինչպես անասուններ»[280]:

XVII դարում Հայաստանով անցած նշանավոր ճանապարհորդներից ֆրանսիացի **Ժան Շարդենը** 1664 թ. հոր հանձնարարությամբ ուղևորվում է Հնդկաստան՝ ադամանդներ գնելու, և այնտեղից էլ 1666 թ. մեկնում է Պարսկաստան, որտեղ էլ 6 տարի ապրում է պարսից շահի պալատում՝ Սպահանում՝ հարուստ գիտելիքներ ձեռք բերելով պարսկական մշակույթի ու գիտության վերաբերյալ: 1671 թ. երկրորդ անգամ է ուղևորվում Պարսկաստան: Այդ ուղևորությունները

[280] «Voyages de Pietro della Valle», t. III, Rouen, 1645, p. 398:

անցնում էին Հայաստանով, այստեղից էլ նրա՝ հայերի և Հայաստանի մասին հաղորդումների բացառիկ հարազատ ու կարևոր լինելու հանգամանքը: Նրա ուղեգրության[281] մեջ ներկայացված է դեպի Պարսկաստան և Հնդկաստան կատարած երկրորդ ճանապարհորդությունը: Ուղեգրությունը կարևոր սկզբնաղբյուր է Պարսկաստանի, ինչպես նաև Անդրկովկասի, այդ թվում՝ և Արևելյան Հայաստանի պատմամշակութային երևույթների ուսումնասիրության համար: Նա ոչ միայն նկարագրում է այն երկրները, որոնցով անցել է, այլև անդրադառնում է այդ երկրների և ժողովուրդների բարքերին, հավատալիքներին, սովորույթներին և պատմությանը, աշխարհագրությանը՝ օգտագործելով նաև մատենագրական աղբյուրներ, տեղական ժողովուրդների ավանդույթներ, ինչպես, օրինակ, Արարատի Նոյյան տապանի և ջրհեղեղի հետ կապված ավանդությունը: Հայաստանի մասին Շարդենը գրում է. «Սուրբ գրքում Հայաստանն ամենուր անվանվում է Արարատ, Արարատի երկիր: Այն Ասիայի ամենագեղեցիկ և արգավանդ երկրներից մեկն է: Յոթ մեծ գետեր ոռոգում են այն, որի համար է, ինչպես ինձ է թվում, որ Հին կտակարանի մեկնիչներից շատերը Հայաստանը մատնացույց են անում որպես այն երկիրը, ուր սկզբնապես եղել է երկրային դրախտը: Հայաստանը նշանավոր է նաև այնտեղ տեղի ունեցած կարևոր իրադարձություններով: Չկա մի երկիր, որտեղ տեղի ունեցած լինեին այնպիսի արյունահեղ իրադարձություններ և այդքան մեծ թվով, ինչպես այնտեղ»[282]:

---

[281] Տե՛ս Путешествие Шардена по Кавказу в 1672-1673 гг., Тифлис, 1902:
[282] Տե՛ս նույն տեղում, էջ 243:

Ժ. Շարդենը նշում է նաև, որ հայկական «որդան կարմիր» ներկը միայն Հայաստանում է պատրաստվում: Հայկական այդ ներկը, ըստ ճանապարհորդի, հայտնի է եղել ամբողջ միջնադարում: Այն ստանում էին Արարատյան դաշտում և Կարնո գավառում[283]: Անդրադառնում է նաև հայ վաճառականների գործունեությանը՝ նշելով, որ նրանց ապրանքները դեպի Եվրոպա տեղափոխողները հաճախ հոլանդացիներն էին[284]:

Ուշագրավ նկարագրություն է թողել պարսից տիրապետության շրջանում Երևանի առօրյա կյանքի մասին՝ ցավով նշելով, որ քաղաքի գրեթե ամբողջ անցուդարձը ենթարկված էր մահմեդական օրենքներին: Երևանի միջնադարյան շուկայի դասական նկարագրությամբ Շարդենը տեղեկացնում է, որ այն ընդարձակ տարածություն է զբաղեցնում և ծառայում է նաև զբոսանքի, մրցախաղերի, ըմբշամարտի, ձիարշավների և ընդհանրապես մարդկանց և ձիերի վարժությունների համար[285]: Աչքի են ընկնում նաև արևելյան տիպի իջևանները (քարավանատները) Երևանում, որոնք, ինչպես նշում է ճանապարհորդը, բավական շատ են:

Երևանին նվիրված բաժնում մանրամասն նկարագրում է քաղաքն ու Երևանի բերդն իր ամրություններով: Արարատյան դաշտի բնակավայրերի, այդ թվում նաև Երևանի մասին գրելիս անդրադառնում է դրանց տեղանվանական հարցերին: Օրինակ՝ Ակոռիին (ըստ ժողովրդական ստուգաբանության՝ նշանակում է «արկանել ուռի») անդրադառնալիս գրում է, որ Նոյն այստեղ տնկեց խաղողի առաջին որթատունկը: «Հայկական ավանդությամբ Նոյը խաղողի վազ տնկեց Երևանի մոտ:

---

[283] Տե՛ս «Բազմավէպ», 1890, № 4, էջ 276:
[284] Տե՛ս Путешествие Шардена по Кавказу в 1672-1673 гг., էջ 243:
[285] Տես՛ նույն տեղը:

Ոմանք անգամ ցույց են տալիս այն տեղը, որը գտնվում է Երևանից մի մղոն հեռավորության վրա»[286]: Այս նույն ավանդության համաձայն՝ Երևանի տեղանվան մասին նա գրում է. «Հայերի կարծիքով Երևանը ամենահին բնակավայրն է աշխարհում, քանի որ նրանց ավանդությամբ այնտեղ է ապրել Նոյն իր ամբողջ ընտանիքով, ինչպես ջրհեղեղից առաջ, այնպես էլ հետո՝ իջնելով այն լեռից, որի վրա հանգրվանել է տապանը»[287]:

Նախիջևանին անդրադառնալիս Ժ. Շարդենը հիշատակում է այն ավանդությունը, որ Նոյը այստեղ է բնակվել ջրհեղեղից հետո: Նախիջևան հայերենում նշանակում է «առաջին բնակավայր» կամ «առաջին իջևանելու տուն» (նախ այստեղ իջևանեց Նոյը)[288]:

Մյուս հաղորդումներից կարևոր է հիշատակել Ս. Էջմիածնի նկարագրությունը, որը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Մայր աթոռի վիճակի, ինչպես նաև այն մասին, թե այդ ժամանակ ինչ սրբություններ էին կենտրոնացված այնտեղ: Ըստ նրա հաղորդման՝ եկեղեցու խորաններում պահված են բազմաթիվ գեղեցիկ և շատ հարուստ զարդեր, ոսկյա անոթներ, կանթեղներ, արծաթյա աշտանակներ և այլ պարագաներ[289], որոնց գոյությունը այդքան հեռավոր անցյալում անչափ կարևոր են թերևս ազգագրական թանգարանի սկզբնավորման պատմության տեսանկյունից:

Մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև պարսիկների սովորությունների, երգիչ-երգչուհիների ու կաքա-

---

[286] Տե՛ս Путешествие Шардена по Кавказу в 1672-1673 гг., էջ 246:
[287] Նույն տեղում:
[288] Տես՛ նույն տեղը, էջ 243:
[289] Տես՛ նույն տեղը, էջ 252-283:

վողների, թատերական խաղերի, ըմբշամարտերի, հարսանիքի, զգեստների ու զարդերի, որոշ սովորույթների, նոր տարվա տոնակատարության, հմայիլների ու թալիսմանների, նրանց գործածման մասին և այլն: Խոսվում է նաև Էջմիածնի վանական համալիրի, հայոց կրոնի, տոներից՝ Պահքի մասին[290]: Նկարագրում է նամեստնիկի (կառավարչի) կողմից կազմակերպված հարսանիքն ու նրա մեջ ըմբշամարտի տեսարանը, ըմբիշների զգեստն ու մարմնի շարժումները[291], սովորույթներ, որոնք ունեցել են հայերը: Նա անգամ նկարագրում է պարսիկների կենցաղի որոշ դրսևորումների մասին[292]:

XVII դարի պորտուգալացի դիվանագետ, ճանապարհորդ **Անտոն դե Գովեան** ահավոր դաժանությամբ ընթացած Շահ Աբասի ձեռնարկած հայերի բռնագաղթի մասին հետևյալն է գրում. «Շահի հրամանն այնպիսին էր, որ հայերին տեղահանության ենթարկելու համար տրված էր ընդամենը երկու օր: «Եթե մենք,- գրում է ուղեգիրը,- փնտրելու լինենք մի ժողովուրդի՝ խլված իր սեփական երկրից և հին բնակավայրերից, ապա մենք նրան կգտնենք հայերի մեջ: Նրանք բռնությամբ ու ուժով հանված են պարսից թագավորի հրամաններով և նրանք, ովքեր ի կատար են ածել այդ հրամանները, այնպիսի քմահաճույք ու կատաղություն էին դրսևորել, որ հայերը երկու սովորական օրվանից ավելի ժամանակ չունեցան թողնել այն ծննդավայրերը, ուր մեծացել էին, եկեղեցիները, ուր նրանց հայրերն ու մայրերը թաղված էին, տները, որ իրենք կառուցել էին, այգիները, որ տնկել էին, ժառանգությունը, որ ստացել

---

290 Տե՛ս Путешествие Шардена по Кавказу в 1672-1673 гг., էջ 252:
291 Տե՛ս նույն տեղը, էջ 258-260:
292 Տե՛ս նույն տեղը, էջ 261:

էին պապերից, կարճ՝ այն ամենը, ինչ մարդուն գոհացում կարող է պատճառել և հաճելի հիշողություններ արթնացնել[293]:

Եթե մենք (աշխարհում) փնտրենք հարստահարված, ոտնակոխ արված մի ժողովուրդ, ապա ահավասիկ քեզ այս ժողովուրդը, երբ նրանք թուրքերի հպատակներն էին, հարկերի հետ միասին տալիս էին իրենց ամենաընտիր զավակներին զինվորության համար, վտանգ, որից ապահովված չեն նաև Պարսկաստանի թագավորի գերիշխանության տակ, եթե Աստված մի ճար չանի: Այս խեղճ ժողովուրդն այնպես է շրջապատված անագորյուն ազգերով, ինչպիսիք են մի կողմից՝ թուրքերը, մյուս կողմից՝ պարսիկները, այլ կողմերից նրանց հարևաններն են թաթարներն (նկատի ունի ազերիներին - Ռ. Ն.) ու արաբները, որոնց ասպատակություններին և ավազակություններին ենթակա են ամեն օր[294]:

Օտարերկրացի այս ճանապարհորդը մանրամասնում է. «Պատերազմի հիմնական թատերաբեմը Մեծ Հայքն է. Ավերեցին ու ամայացրին ողջ եկիրը, այնպես որ քսանից ավելի հարուստ ու մարդաշատ քաղաքներ անգութ ու տմարդի եղանակով ավերվեցին ու ավարի ենթարկվեցին, դրանց թվում բազմաթիվ ու բազմամարդ ավաններն ու գյուղերը, դրանց թվում՝ գլխավոր քաղաքներ Երևանը, Նախիջևանը, Շարուրը, Գիլսը (Ագուլիսը) և այլն: Սրբապղծվեցին եկեղեցիները և վերածվեցին ախոռների, նկարները տեղերից հանվեցին ու կրակի ճարակ դարձան, ինչ որ սուրբ էր այդ բոլորի մեջ, արժանանում էր վատթարագույն վերաբերմունքի:

---

[293] Տե՛ս **Մ. Զուլալյան,** Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դարեր, գիրք Ա, ՀԳԱ հրատ., Երևան, 1999, էջ 147:
[294] Տե՛ս նույն տեղը, էջ 147:

Պարսիկ զորագնդերը, չորս-չորս զինվորներով մտնում էին տները և ամեն ինչ կողոպտելուց հետո, գերեվարում էին երկսեռ երեխաներին՝ իրենց ծառայեցնելու կամ վաճառելու համար, ապա երիտասարդ կանանց ու աղջիկներին՝ իրենց ստոր ցանկություններին հագուրդ տալու և ապա վաճառելու համար կամ տեղավորելու հասարակաց տներում: Այդ սրտաճմլիկ տեսարանը կարող է հուզել ամենաքարսիրտ մարդուն անգամ: Արդարև, այդ ազգին պատկանող կանանց մեծամասնությունը շատ գեղեցիկ է»:

Դե Գովեան 60 հազար ընտանիքից ավելի է հաշվում Արարատյան դաշտից բռնագաղթվածների թիվը: Մեծ սուրգունից զերծ են մնացել այն գյուղերը, որոնք հեռու են գտնվել թուրքական բանակի արշավանքի երթուղուց (տե՛ս **Զուլալյան Մ.,** նշվ. աշխ., էջ 149):

Ուշագրավ է նաև ֆրանսիացի մեկ այլ՝ XVII դարի ճանապարհորդ, նշանավոր բուսաբան **Պիտտոն Տուրնեֆորի (1656-1708)** ուղեգրությունը (տե՛ս Relation d'un voyage du Levant: Fait par ordre du Roy, t. I-II, Paris, 1717, էջ 357-359) Հայաստանի և հայերի մասին: Նա փոքր Ասիա, Հայաստան և Հարավային Կովկաս կատարած ճանապարհորդության ընթացքում հավաքած 1356 նոր տեսակի բույսեր ու դեղաբույսեր է տանում Ֆրանսիա, որոնց մի զգալի մասը պատմական Հայաստանից: Ուղեգրության մեջ բերված են դրանց նկարները՝ արված հեղինակի կողմից: Այս առումով նա մեծ ծառայություն է մատուցել հայ բուսաբանությանը: Նրա ուղեգրությանը կցված են նաև պատմական Հայաստանի տարբեր քաղաքների հայերի տարազը պատկերող գծանկարներ: Առաջին եվրոպացի ուղեգիրն էր, որ անհաջող փորձ կատարեց բարձրանալու Արարատ լեռան գագաթը: Նա նկարագրում է Արարատ լեռան բուսա-

կան ու կենդանական աշխարհը և, ի դեպ, նշում է իրեն հանդիպած վագրերի մասին: Հիացած Արարատյան դաշտի բերք ու բարիքի առատությամբ, այն համարում է «Երկրային դրախտ»: Ջերմ խոսքեր է գրել նաև հայերի մասին. «Հայերը աշխարհի լավագույն մարդիկ են»: Իր գրքի 369-396 էջերում խոսում է Նոր Ջուղայի խոջաների կատարած դերի ու նշանակության մասին՝ Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի զարգացման գործում:

Այսպիսով, արաբ և եվրոպացի ճանապարհորդների թողած նկարագրությունները զգալի նյութ են տալիս Հայաստանի և հայերի մասին, և հավաստում են նաև, որ Հայաստանում և հայաշատ այլ քաղաքներում ու գյուղերում խիստ զարգացած ու բազմազան են եղել գյուղմթերքների, արհեստագործական, մանավանդ գործվածքների արտադրությունները, որ կոչված էր բավարարելու ոչ միայն տեղական սպառման, այլև երկրից դուրս հանվող ապրանքային արտադրության պահանջները: Հայկական գորգերի վայելած հռչակի և միջազգային առևտրի մեջ դրանց խաղացած դերի շնորհիվ է, որ հայկական «կարպետ» բառը անցել է ֆրանսերենի carpette և անգլերենին՝ carpet գորգ իմաստով: Դրանք մեծ պահանջարկ են ունեցել նաև Եվրոպայում: XVII դարի եվրոպացի ճանապարհորդների հավաստմամբ՝ Հնդկաստանից Եվրոպա առևտուրը հիմնականում իրականացնում էին հայ առևտրականները սեփական նավերով: Եվրոպա էին հասցնում նպարեղեն, մարգարիտներ, աղամանդ, կերպասեղեն, ներկեր և այլն: Այսպիսով՝ արձանագրենք, որ XV-XVII դարերի եվրոպացի ճանապարհորդների, ուղեգրողների վկայությունները կարևոր սկզբնաղբյուրներ են տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի և հայերի մասին: Դրանք պարունակում են հայոց պատմության, ազգա-

գրության մի շարք հարցերի վերաբերյալ նոր տեղեկություններ, նոր մեկնաբանություններ, ուստի կարևորվում են վերոնշյալ նյութերը թարգմանելն ու հետազոտելը, ինչը զգալի ներդրում կլինի տվյալ ժամանակաշրջանն ուսումնասիրող պատմագիտության մեջ:

6.3. Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (XVI-XVIII դդ.)

Հայ ժողովրդի պատմության, հայոց կենցաղի և մշակութային երևույթների վերաբերյալ ուշագրավ ազգագրական նյութեր կան նաև թուրք պատմագիրների երկերում[295]: Թուրք հեղինակները իրենց երկերում նկարագրելով միջնադարի քաղաքական իրավիճակը, միաժամանակ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի և հարևան ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության, մասամբ էլ սոցիալ-տնտեսական և կենցաղամշակութային կյանքի վերաբերյալ:

Պատմաբան, ազգագրագետ, մշակութաբան ուսանողի համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել թուրքական աղբյուրներում գործածված բառերի և որոշ եզրույթների բովանդակային նշանակությունը, որոնք տեղ են գտել նաև հայոց բարբառներում և գրականության մեջ:

---

[295] 1961 թ. ՀՍՍՀ ԳԱ հրատարկությամբ լույս է տեսել «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա՝ կազմող Ա. Խ. Սաֆրաստյան (403 էջ), հ. Բ, Երևան, 1964 (336 էջ), հ. Գ, Երևան, 1967 (345 էջ), հ. Դ, Երևան, 1972 (258 էջ): Թուրքական աղբյուրների հայերեն թարգմանությունները, Ա, Բ, հատորները իրականացրել է Ա. Խ. Սաֆրաստյանը, Դ հատորի բնագրից թարգմանությունը Ա. Խ. Սաֆրաստյանը՝ Գ. Հ. Սանթուրջյանի հետ:

Առավել ուշագրավը, որ առանձին գլուխներով անդրադարձել են Հայաստանին և հայերեին՝ XVII դարի թուրք նշանավոր պատմագիրներից Քյաթիբ Չելեբիի՝ «Ջիհան Նյումատ» և Էվլիյա Չելիբիի՝ «Սեյահեթ-Նամե» («Ուղեգրություն») տասը հատորով տեղեկատվական գործերն են, որոնց էլ համառոտակի անդրադարձել ենք սույն ձեռնարկում:

Քյաթիբ Չելեբիի գրքի 39-րդ գլխում Արաքս և Կուր գետերի միջև ընկած երկիրը անվանել է Արան, որի մայրաքաղաքը Ռնան (Երևան), իսկ կեսից ավելի ձյունածածկ Արարատ լեռը հիշատակված է Էրղի (Աղրի) անվամբ*: Այդ երկիրը ըստ թուրք պատմագրի՝ հարուստ է հացահատիկի դաշտերով, պտղատու այգիներով: Այգիների ու պարտեզների քաղաք է անվանում Գենջեն (Գանձակը), որտեղ ընտիր են նուռը, խաղողը, կաղինը, թուզը, մետաքսի բերքը:

Անդրադարձել է Նախիջևանի կղմինդրածածկ տներին, մշակվող կուլտուրաներից՝ հացահատիկի, բամբակի դաշտերին, խաղողի այգիներին: Այս տեղերի ժողովուրդը սպիտակամորթ է (տե՛ս հ. Բ, էջ 14):

Արանի հյուսիսային սահմանով անցնող Կուր գետին անդրադառնալիս նշում է, որ «նրա ակունքների մոտ, որ սկիզբ է առնում **Կալիգանի** լեռներից (Ծաղկավետ – Ռ. Ն.) կառուցված է քարե արձան, որի պատկերի բերանից և քթից ջուրը խշշալով, մեծ ուժգնությամբ հոսում է» (էջ 18):

---

* Թուրք պատմագիրների ուղեգրությունները զերծ չեն սխալներից, երբեմն ցանկալին ներկայացրել են որպես իրականության, հատկապես տեղանուններին վերաբերող հատվածներում, հաճախ կույր ատելությամբ են խոսում Օսմանյան կայսրության սահմանների մեջ մտնող հպատակ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի մասին:

Արաքսը հիշատակված է **Արաս** անվամբ. «Շատ օգտակար է ոռոգման համար, ունի 150 փարսախ երկարություն, գտնվում է Արմենիա երկրի արևելյան սահմանում» (էջ 19): Կաղզվանի մոտ «Արասի վրա կառուցված է Չոբանի կամուրջը»: Ուշագրավ նկարագրություն ունի Ուչ Քիլիսե անվամբ հիշատակված հայտնի Էջմիածնի վանքի մասին: «Եկեղեցում շատ քահանաներ կան, որոնք ամեն տարի գարնանը հավաքում են բազմատեսակ ծաղիկներ, լցնում մի մեծ կաթսայի մեջ և վրան ջուր ածելուց հետո, մի քանի գորգերով ծածկում են բերանը: Քառասուն օր այդ ծաղիկների վրա կարդում են հայտնի աղոթքներ: Այդ քառասուն օրվա ընթացքում եկեղեցու տաքությունից այդ ջուրը եռում է և ստացվում է **ներբիզի** (ներբիզ՝ արմավից և չամիչից քամված ըմպելիք), որը զտելուց հետո, ստացված ծաղկաջուրը վաճառում են մախալը (1.5 գրամ) մեկ ոսկով: Այդ ջուրը քսում են իրենց մեռյալների երեսին, աչքերին, բերնին, քթին» (էջ 26): Այդպիսի ջուր ըստ նույն հեղինակի պատրաստում են նաև Աղթամարի վանքում (էջ 27): Դա հայտնի մեռոն եփելու արարողության հիշատակություններից մեկն էր:

Ախալցխայի մասին նկարագրելիս, գրում է, թե այս էլայեթը 656 կըլըջ է[296], ունի 97 զեամեթ՝ թեզքերեով[297] և առանց

---

[296] Կըլըջ – բառացի նշանակում է սուր, թուր: Օսմանյան կայսրության մեջ ֆեոդալական հողաբաժինների (թիմար և զեամեթ) սիպահիների կողմից ռայաներին մշակելու տրվող հողերի երեք կամ հինգ հազար ակչեի եկամուտը կոչվում էր կըլըջ: Սիփայիների (թուրքական հեծալ զինվորի) ընդհանուր եկամուտի այս «կըլըջ» կոչված գումարի համար սիպահին ոչ մի պարտավորություն չուներ պետության հանդեպ, քանի որ այդ գումարը համարվում է նրա «սրի իրավունքը» (տե՛ս գրքի ծանոթ. 22, էջ 257):

[297] Թեզքերեով թիմարները այն թիմարներն էին, որոնց հրամանագրեր տրվում էին Ստամբուլից (տե՛ս ծանոթ. 23, էջ 257):

թեզքերեի[298] 559 թիմար[299]: Ջեբելուների[300] հետ միասին տալիս է 1700 զինվոր:

41-րդ գլուխը ամբողջությամբ վերաբերում է «Արմինայի երկրի մասին»: Պատմագիրը նշված երկրների սահմանները հստակ չի ներկայացրել: Օրինակ՝ հիշատակում է առանց սահմանների հստակեցման Մեծ Արմենիա, Փոքր Արմենիա, Արան անվանումներով վիլայեթները: Ըստ որում, ըստ Քյաթիբ Չելեբիի «Ջիհան Նյումա» գրքի՝ «Մեծ Արմենիան մտնում է Իրանի սահմանների մեջ: Մեծ Արմենիան բաղկացած է Վանի և Էրզրումի վիլայեթներից, իսկ Փոքր Արմենիան՝ Ադանայի և Մարաշի էլայեթներից: Նա նշում է, որ «մի քանի պատմագիրներ գրում են, որ անցյալում Արմենիայի մայրաքաղաքը Ախլաթն է եղել»: Նրա պատմաաշխարհագրական տեղեկություններում այնքան խառն ու շփոթ կա, որ հարկ չենք համարում մեկնաբանել:

Պատմագիրը անհամեմատ հստակ է ներկայացնում Վանի էլայեթը՝ իր 13 սանջակներով (Վան, Ադիլջևազ, Արճեշ, Մուշ, Բերկրի, Կարկար, Քեսանի, Իսբայիդ (Սպարկերտ), Աղաքիս, Էքրատի-բին-Կոթուր, Բայազիտ, Բերդան, Օվաջիկ), այգիների, բամբակի, հացահատիկի մշակությունների, Վանա լճի «համեղ թարեհի» (տառեխ) ձկան, առատ երկիր լինելու մասին: Պատմագրի հիշատակության համաձայն՝ այստեղ խնձորի մեկ հատը կշռում է 100 դիրհեմ, իսկ «տեղի հայ զիմ-

---

[298] Առանց թեզքերեի թիմարները բեյլերբեյերի կողմից ավելի փոքր եկամտի զումարով տրվող թիմարներն էին:

[299] Ծառայության դիմաց տրվող կալվածք:

[300] Ջեբելու էին կոչվում թիմարի և զիամեթի տերերի կողմից պատերազմ ուղարկվող հեծյալ զինվորները, որոնք պետք է զինվեին իրենց սեփական միջոցներով:

միները մեծամասնություն էին կազմում, քաջարի, առատաձեռն, հյուրասեր մարդիկ են» (էջ 35):

Դիարբեքիրի էլայեթի վարչական բաժանումները տալուց հետո, նշում է տարածաշրջանի այգիների, բոստանամշակության, հատկապես սեխի մշակության ավանդական ձևերի մասին: Նշում է, որ այստեղ անգամ քարքարոտ, ավազախառն հողերը ենթակա են մշակության. «Վերցնում են որոշ քանակությամբ քար, մի ափ աղավնու ծերտ խառնում են 5-10 հատ սեխի սերմի հետ և ցանում են քարքարոտ ավազի մեջ: Սեխը այստեղ չափազանց համեղ է: Բնակիչները սեխի սեզոնին գնում են բանջարանոցները, եղեգից հյուղակներ են սարքում և որոշ ժամանակ անց՝ բերքահավաքին հավաքվում են և կեր ու խումով զբաղվում» (էջ 54): «Այգիներով ու պարտեզներով հարուստ է նաև Միաֆարկինը» (Տիգրանակերտ) (էջ 55):

Նկարագրելով Սեբաստիա (Սվազ) քաղաքի շրջակա գյուղերը՝ նշում է Քեսմե անունով քաֆիրի մի գյուղի շրջակա լեռան վրա մաքուր երկաթահանքի գոյությունը, որի շահույթից օգտվում էին տեղական բեյերը: Այդ հանքի հյուսիս-արևմուտքում լեռան վրա կան նաև մագնիսաքարի հանքեր, որից ստացվում է բարձրորակ մագնիս (էջ 67): Արծաթի հանույթի բուժիչ ջերմուկների մասին է ակնարկվում Ամասիայի նկարագրության մեջ: Այստեղ «ջերմուկի ջրում ձուն եփվում է: Այս ջերմուկը բուժում է մի քանի հիվանդություններ» (էջ 68): «Բնակիչները հյուրասեր են, ուտելիքի և խմելիքի նեղություն չի զգացվում, քանի որ յուրաքանչյուր գյուղ մի խնջույքի վայր է: Տեղացիները զբաղվում են կզաքիսի որսով և մորթու վաճառքով: Պատմագիրը նշում է, որ այստեղ բազմամարդ են քյաֆիրները (անհավատները), որոնց մեծամասնությունը հայեր են (էջ 70):

XVII դ. թուրքական պատմագրության հաջորդ նշանավոր ներկայացուցիչը՝ Էվլիյա Չելեբին է:

Էվլիյա Չելեբի[301]: «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» գրքի երրորդ հատորի նյութերը քաղվածաբար թարգմանվել է XVII դարի թուրք պատմագիր Էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունից»: Չելեբին ճանապարհորդել է 41 տարի, եղել է բազմաթիվ երկրներում, մի քանի անգամ (1640, 1646, 1648-1650) նաև Հայաստանում: Ուստիև նրա «Ուղեգրությունը» պատմական Հայաստանի և հայ բնակչության վերաբերյալ հարուստ և ճշմարտացի պատմաաշխարհագրական, ժողովրդագրական, ազգագրական տեղեկությունների աղբյուր է համարվում:

Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրության» մեջ Քյաթիբ Չելեբիի նման խառն է տալիս պատմական Հայաստանի տարածքի, սահմանների, բնակավայրերի, պատմական կոթողների նկարագրությունները, սակայն այն, ինչ վերաբերում է իր ժամանակի Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության, մշակութա-կենցաղային, ժողովրդագրական հարցերին՝ ականատեսի նկարագրություններ են: Էրզրում տանող ճանապարհին, Շաբին-Կարահիսար չհասած, անցնելով հայերով բնակեցված «Էնտեր՝ 150 բարեշեն տներով, Կարաջալար, Սարիզելենդ, Քերմլի, Թերջանլի, Մամախութուն, Հերսի, Ըլըջա գյուղերով», նկարագրում էր թե «տների մեծ մասը մի հարկանի են, սարքված են քար ու կրից, ջեռուցման համար աթար են վառում, օջախները (թոնիրները – Ռ. Ն.) տան մեջտեղում են, նրա

[301] Ծնվել է 1611 թ. Կ. Պոլսում, հավանաբար մահացել է 1679 թ.: Ղուրանը անգիր անելու (Հաֆըզ) և պապերի սուլթանական արքունիքի հետ ունեցած կապի համար նրան Էվլիյա անվանը հետագայում ավելանում է Չելեբի պատվավոր անունը և կոչվում է Հաֆզ Էվլիյա Չելեբի:

չորս կողմում անասուններ՝ կովեր ու գոմեշներ են կապված, այդ պատճառով էլ տները բաղնիքի պես տաք են: Հացն ու հարիսան թոնրի մեջ են եփում»: «Էրզրումի հայկական թաղամասերը յոթն են, ձմեռը շատ խստաշունչ է ու երկարատև, ծխնելույզները (երդիկները – Ռ. Ն.) ծածկվում են մոմլաթով (մուշամպա), դռները՝ թաղիքներով (ցուրտը ներս չթափանցելու համար)» (Թուրքական աղբյուրներ, Գ, էջ 60-61): «Էրզրումի հայոց տներում կարծես թե հավերժական կյանք ստացանք: Տների տանիքները շինված են նավերի կայմերի նման փայտերից, որոնք գերան են կոչվում: Չամի շատ ծանր փայտեր են, դրանք [կտուրում] շարում են ծիծեռնակի թևերի նման: Բոլոր հայերի տները բաղնիքի պես տաք են: [Հայերը] թոնրի մեջ եփում են գաթա, հարիսա, քյուլումբի (հավանաբար քրչիկ), յախշա, կերփալ, ապուր, սխտորով թարխանայի ապուր, թանապուր: Էրզրումի շուկայում կա 80 խանութ, հայտնի են դրանցից թամբագործների, մետաքսագործների, ոսկերիչների, դերձակների (էջ 61) արհեստանոց-խանութները»: Այստեղ ոսկերիչներն ու դերձակները լավ վարպետներ են: Ամբողջ աշխարհին հայտնի են այստեղ պատրաստվող սրերը:

Նկարագրում է ուսնոր խավի և հասարակ մարդկանց տարազը, հագ ու կապը: Ըստ նրա նկարագրության՝ «այաների հագուստը ասվի սամույր և բարձր որակի կերպասից են, ասվի ֆերաջե և խաֆթան են հագնում: Հասարակ դասը արհեստավորներ լինելով՝ աբա և բեզից (կտավից) խալաթներ են հանգնում» (էջ 61): Տղամարդիկ երկար գլխակապ են փաթաթում և գեղեցիկ զարդարուն փեշերով հագուստներ հագնում: Ոտքերին գույնզգույն թաղիքե կոշիկ, կանաչ, կարմիր և նարնջագույն չուստեր են կրում: Կանայք սուր թաքիյեններ են

դնում (գլխներին) և ծածկվում են սպիտակ սավաններով, ոտքերին գույնզգույն չզմաններ հագնում (էջ 72):

Ուտելիքներից կարելի է առանձնացնել հավի մսից պատրաստված կարկանդակը **(բյորեր), չիրիշ** կոչված բանջարեղենով կարկանդակը, ընտիր սպիտակ և յուղալի **չյորեքը**, մեկ գրկաչափ ընտիր հացը (լավաշը), գաթան, խաշը (փեչա), թոնրի խորոված, հարիսան, ըմպելիքներից՝ տեսակ-տեսակ շերբեթները, հասարակ մարդկանց **բոջան**» (էջ 62):

Էրզրում քաղաքում կա 13 հայկական եկեղեցի: Սրանց առաջավոր եկեղեցականները կրոնին համապատասխան հագնում են կապույտ ասվի և գլխներին սրբիչ են փաթաթում: Հասարակները հագնում են շալե հագուստ և ոտքերին բարակ տրեխ կրում: Հայերը վերին աստիճանի ռանչպար ռայաներ են, որոնց մի մասը բնակվում են քաղաքի արվարձաններում: Նրանց կանայք ունեն տափակ (գլխանոցով) գլուխ և ծածկվում են սպիտակ չարսավով (էջ 63): Մինչդեռ իսլամ կանայք կրում են մետաքսե հագուստ, ոսկյա և արծաթյա **թաքիյե** են հագնում և ծածկվում սպիտակ չարսավով, իսկ ոտքերին դեղին չիզմե են կրում, գեղեցիկ են, խնամքով պահված, երկար կախված են անուշաբույր մազերը» (էջ 63):

«Էրզրումի վիլայեթում առատ է ցորենն ու գարին, ցանքերը շատ են, բարիքները լիառատ: Ձմեռները թեև խիստ են, սակայն այստեղ հիանալի բանջարանոցներ կան. սեխը, ձմերուկը, կաղամբն ու բադրիջանը, շրեստը շատ առատ են, հողը բարեբեր է» (էջ 63):

Էրզրումի հայերով բնակեցված Ըլըջայի բնակավայրի մոտակայքում ջերմուկի տաք ջրերը բուժիչ հատկություններ ունեն, օգտակար է բորոտության հիվանդության դեմ (էջ 60-61):

Պատմագիրը հայկական բնակավայրերով անցնելիս մանրամասն նշում է մթերքների անչափ էժանության և գների բացառիկ ցածր լինելու մասին. օրինակ 40 հավկիթը արժե մեկ ակչե (փոքր արծաթյա դրամ, հավասար ղուրուշի 1/20-րդին) (էջ 64): Շատ տարածված են ձմեռային խնձորները, նշում է տանձի 26 տեսակ (էջ 71):

Պատմագիրը Էջմիածնի վանքը անվանել է «Ուչքիլիսեի սքանչելիք»: «Այստեղ ամեն տարի 40-50 հազար մարդ է հավաքվում: Այստեղի լեռներում աճող բոլոր ընտիր տեսակի ծաղիկները, բույսերը և խոտերը հավաքում ու լցնում են մի մեծ կաթսայի մեջ՝ ծաղկաջուր (մեռոն) պատրաստելու համար: Այնուհետև այն բաժանում են իրար մեջ, շատերը շնորհավորանքի համար տանում են այլ երկրներ՝ Ֆրանգստան (Ֆրանսիա) և այլ տեղեր»: Էվլիյա Չելեբու հաղորդմամբ վանքը ունի 500 վարդապետներ և նշում, որ այն յուրօրինակ քրիստոնեական վանք է իր իջևանատներով: Էջմիածնից Էրզրում տանող ճանապարհին արձանագրում է Շորագյալ հայկական մեծ բնակավայրը: Անվանումը կապում է Շորագերի երաժշտագետի անվան հետ: Նախիջևան տեղանվանումը մեկնաբանում է՝ Նախշևան, Նաքշի ջիհան՝ թարգմ. Նշանակում է «աշխարհի նկար»:

Էվլիյա Չելեբին Երևանում արձանագրել է 2060 հողածածկ տներ (էջ 84): Տալիս է Երևանի բերդի պաշտպանական ամրության նկարագրությունը (էջ 85), բրնձի դաշտերի, Երևանից-Բաքու ճանապարհի խոշոր բնակավայրերի, մասնավորաբար՝ Գենջեի (Գանձակ) լայն հռչակ վայելած մետաքսի, բամբակի, բրնձի մշակությունների նկարագրությունները (էջ 86):

Ունի Բաքվի **նավթի-յուղի** հանքերի ուշագրավ նկարագրություն: «Գետնի տակից եռալով նավթը դուրս է գալիս, մի

մասը ծովեզերքում (Կասպից – Ռ. Ն.), մի մասն էլ Մեսքերի Նահիյեում: Ջերմուկի ջրերի նման փոքր լճակ է կազմում. նավթի յուղը սեր է կապում հեղուկի երեսին և մնում: Նավթը (հանույթի կազմակերպումը) առանձին էմանեթ է (կառավարական առանձին վարչություն) և պարսից շահին 7000 թյումեն եկամուտ է տալիս: Նավթի հանույթի վարչության՝ Էմինի մարդիկ մտնում են այդ լճակների մեջ, նավթը հավաքում և լցնում են այծի տիկերի մեջ, վաճառականները վաճառքի համար այն երկրե-երկիր են տանում: 8 գույնի նավթ կա, սակայն դեղին նավթը գերադասելի է» (էջ 96):

Սև նավթը ծառայեցնում էին բերդերի և ապարանքների լուսավորության համար: «Նավթի հանքերի վրա գիշեր-ցերեկ հսկող պահակներ կան, որովհետև, եթե կրակ ընկնի, անընդհատ կայրվի և մարելը անհնար կլինի: Այդ նպատակով նավթահանքերի շրջակայքում լեռնանման հողաթմբեր են կուտակված» (էջ 97): Պատմագիրը Կասպից ծովը Խազերի ծով է անվանում:

Ըստ Էվլիյա Չելեբիի՝ Էջմիածնի վանքի բակում, բարձր կամարի տակ, օդում կախված մի հաստ երկաթե սյուն կա, ոչնչի վրա չհենված: Դա տեղացիները հրաշք են համարում, միչդեռ ըստ պատմագրի՝ շենքը կառուցող վարպետը այս երկաթե փոքրիկ սյան վրա բարձր կամար է կապել մագնիսական քարերով, դրանք էլ ձգում և օդում պահում են այդ սյունը (էջ 121):

Էվլիյա Չելեբիի գրքի երկրորդ հատորում սովորական երևույթ է համարվում XVII դ. երկրորդ կեսին օսմանյան արքունիքում, քաղաքներում և բանակում եղած «ստրուկները» ու «ստրկուհիները», այսինքն՝ պատանիները և կույս աղջիկները դառնում էին «նորին վսեմություն» սուլթանի, վեզիրների,

փաշաների վավաշոտության զոհեր, նվեր էին տրվում և ստանում, վաճառվում և տարօրինակն այն է, որ պատմագիրը ոչ միայն չի խորշել նկարագրել այդպիսի հրեշային վարքն ու բարքը, այլև ինքը ևս ստացել է իր «համեստ» բաժինը: Դրանք հիմնականում քրիստոնյա բնակչությունից էին հավաքագրվում: Անգամ «հարկ» էր սահմանված. ամեն տարի պետք է սուլթանական արքունիք ուղարկվեին որոշ թվով կույս աղջիկներ ու գեղեցիկ պատանիներ (օր. Մեգրելիայի իշխողները): Ավելացնենք նաև, որ մինչև XIX դ. սկիզբը Օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ Ստամբուլում, քաղաքի կենտրոնում դեռևս գոյություն է ունեցել ստրուկների շուկա, որտեղ գնվել ու վաճառվել են երիտասարդ տղաներ և աղջիկներ (էջ 130-131):

Երրորդ հատորում անդրադառնում է Օսմանյան պետության մեջ և Արևմտյան Հայաստանում բազմատեսակ հարկերի գոյությանը: Դրանք երկու տեսակի էին՝ շարիաթական և սովորական: Շարիաթական հարկերի հիմնական տեսակներն էին՝ **զեքաթ, աշար, խարաջ** և **ջեզիյե**: Երկրի տարբեր մասերում և տարբեր ժամանակաշրջանում ըստ պատմագրի հաղորդումների՝ նշանակվել են 80 տեսակ հարկեր: Ըստ որում՝ տարբեր տեսակի ու քանակի են եղել մուսուլմանների և ոչ մուսուլմանների համար: Նշանակվել են նաև շուրջ 350 անուն տարբեր տուրքեր: Սովորական տուրքերի անվան տակ պարտավոր էին տալ 97 տեսակի տուրքեր՝ երկրի պատերազմական կարիքների, բանակի, նավատորմի, ճանապարհների, արքունիքի բազմատեսակ կարիքների համար:

«Ուղեգրությունների» չորրորդ հատորում պատմագիրը առավել հանգամանորեն է ներկայացնում հայաշատ Դիարբեքիրը՝ իր արհեստներով, զբաղմունքներով, պտուղներով,

ուտեստներով: Հիշատակվում է այստեղ պատրաստվող հայտնի սուրն ու դաշույնը:

Ուշագրավ է ազգագրական ինքնատիպ նկարագիր ունեցող **սաչլի տեղական անվամբ քրդերի** բնութագիրը: Պատմագիրը Դիարբեքիրից-Մարդին ուղևորության ընթացքում անդրադարձներ ունի Սաչլի-դաղ անունով լեռան շրջակայքում ապրող 45 հազար եզդի և բաբերի (սաչլի քրդերի) վերաբերյալ: Նրանց Էվլիյա Չելեբին անվանում է «ապստամբ և թալանչի» քրդեր: «Նրանց տղամարդիկ,- նշում է հեղինակը,- մազոտ են, հագնում են գույնզգույն շալից և բրդից հագուստներ, գոտիները մետաքսից են, գլխի փաթաթանները նույնպես գույնզգույն մետաքսից են, ոտքերին կրում են **փոչեքլի, փալսենտի, սեղիսի, հեզարի** կոչված պոչավոր չուստեր… Սրանց զենքերն են՝ սուր, դաշույն, հրացան, ջաբ՝ նետն ու աղեղը՝ գոտուց կապված: Այնքան վարպետ են գնդակ արձակելու գործում, որ կարողանում են խփել լվին աչքից և ուղտին ոտքից: Կարճահասակ են, գլուխները՝ ճաղատ, գրեթե վիզ չունեն, ուսերը լայն, կուրծքը ուռած, մեջքը հաստ, բազուկներն ու սրունքները պինդ, ոտները մեծ, աչքերը սև և կլոր, հոնքերը շատ խիտ: Այլ քրդեր սրանց **սեքիզ բլյրքլի** (8 բեխավար) են անվանում, որովհետև մազերից երկուսը բեխից, երկուսը հոնքերից, երկուսը քթի ծակերից, երկուսն էլ ականջներից են դուրս գալիս: Մարմինը սև ոչխարի մորթու է նմանվում: Քսան տարեկանում կտրիճի են նմանվում: Կանանց հագուստները հասնում են մինչև գետին: Երեխաներին սկզբում սև շան կաթ են տալիս (հայերը անդաստիարակին ասում են՝ շան ծիծ կերած – Ռ. Ն.), եթե քարով սպանեն շանը, առանց վարանելու սպանում են այդ մարդուն: Ամեն մեկը իր դռանը 5-10 շուն ունի, կերակուրը նախապես շանն են տալիս, միայն կշտանա-

լուց հետ՝ տան անդամներին: Մի սև շունը ծախում են 1000 դուրուշով կամ տասը ջորիով: Այս քրդերը սոխն ու **ջարեզլի** (Մեր ենթադրությամբ ճիլ պանիրը – Ռ. Ն.) միշտ իրենց հետն են տանում: Եթե մեկը փորձի բռունցքի հարվածով սոխը ճզմի, նրան կսպանեն՝ գլուխը ջարդելով: Սոխը նրանց հավատալիքներում պաշտամունքի առարկա է: Եթե սրանցից հարուստ մեկը մեռնի, նրանք այդ մեռելին սոխի ջրով են լողացնում և գերեզմանի վրա էլ սոխ աճեցնում: Բոլոր մեռյալների պատանքի մեջ շան մազ դնելը ընդհանուր սովորություն է: Եթե այս քրդերի շուրջը մի գիծ գծես, անկարելի է, որ փորձեն գծից դուրս գան, մինչև որ մեկը չջնջի շրջագծի մի մասը: Սև շուն ծնվելիս մեծ ուրախություններով կնշեն: Երբ շունը սատկի, սոխի ջրով լվանում և տանում են շներին հատուկ գերեզմանոց: Մեռնող շան հոգու համար կենդանի մնացած շներին ոչխարի խորոված են ուտացնում: Սրանց շները առյուծի են նման, այդ երկրում բոլորովին գայլ չկա:

Այս Սաչլի ցեղը մեծ բերքեր է ստանում… մեղր, խաղող, թութ և այլն (էջ 187-188):

Թուրք պատմագիրը բավական հետաքրքիր տեղեկություններ է հայտնում գետային փոխադրամիջոց՝ լաստանավերով բեռնափոխադրումների մասին: Նրա հաղորդմամբ Դիարբեքիրից Շաթ գետի վրայով, Բաղդադ ուղևորությունը լաստանավով են իրականացրել: «Սրանք մի տեսակ նավ են. տիկերի վրա տախտակ է ամրացվում և սրանցով կարելի է ձիեր ու հազարավոր կանթար (ծանր բեռների կշեռք) բեռներ տեղափոխել, նարդի կամ սաթրանջ խաղալ, աջ ու ձախ դիտել, երբեմն բարեշեն գյուղերին մոտենալ, խոհանոցում պատրաստված կերակուրներ ուտել և այս կերպով ապահով

տեղ հասնել»: Այդպիսի լաստանավերով գինու մասին է հիշատակել Հերոդոտոսը դեռ Ք.ա. V դարում:

Էվլիյա Չելեբին ուշագրավ նկարագրություն է թողել նաև Վանի հայոց ուտեստների վերաբերյալ. «Հայտնի են սպիտակ և վարդակարմրավուն լավաշը, բազմաթերթ չյորեքը: Բանջարեղեններից՝ Վանի կաղամբը, որի երկու գլուխը մի ուղտի բեռ է. թերթերը շատ բարակ են: Հայտնի են նաև **կարոսը, քերևիզը** (նեխուր), դդումը, սեխը, ձմերուկը, **չիրիշ** անունով հայտնի կանաչը և այլն (էջ 250): Պտուղներից հայտնի են 12 տեսակ խնձորները: Այստեղ խնձորը այնքան առատ է, որ զվարճասերները խնձորի կռիվներ են սարքում: Հայտնի են նաև խաղողը, աբասի և մալաչա տանձերը: Հայտնի են Սղերդի ցորենը, բրինձը, բակլան, լոբին և կարմիր ստեպղինը[302]:

Ուշադրության են արժանի նաև կաթոլիկ հայ համայնքներին վերաբերող թուրքական աղբյուրների նկարագրությունները: Հայտնի է, որ եվրոպական պետությունները XVI դարի վերջերից միսիոներների քողի տակ իրենց գործակալներին ուղարկելով Արևմտյան Հայաստան, նպատակ էին հետապնդում հայերին կաթոլիկ դարձնել և այդպիսով ուժեղացնել իրենց գաղափարական ազդեցությունը Օսմանյան կայսրությունում: XVIII դ. թուրք պատմագիր-տարեգիր Չելեբի Զադեն իր «Պատմության» մեջ մանրամասն կանգ առնելով այդ իրադարձությունների վրա, գրում է. «Ֆրանսիացի կաթոլիկ վարդապետները շրջելով մեծ ու փոքր քաղաքներ, այս ու այն կողմ երթևեկելով, հայ, հույն քրիստոնյա ռայաների մեջ, ֆրանսիական (էֆրենջի) սնոտի դավանանքն ու ծիսակատարությունն էին քարոզում (տե՛ս Թուրքական աղբյուրներ…, հ. Ա,

---

[302] **Էվլիյա Չելեբի**, Ուղեգրություն // Թուրքական աղբյուրներ, հ. Գ, էջ 271:

էջ 141-152): Կաթոլիկ ննջեցյալները ինքնուրույն եկեղեցիներ չունենալու, հայոց գերեզմանատներում չընդունվելու պատճառով, հաճախ անթաղ էին մնում և գարշահոտում, նրանք ստիպված էին լինում մեռելները թաղել իրենց տների բակերում» (տե՛ս Թուրքական աղբյուրներ…, հ. Ա, էջ 156, 300-301): Սուլթանները հաճախ նրանց գործունեությունը կասեցնող հրովարտակներ էին արձակում: Այսպես, օրինակ՝ Սուլթան Աբդուլ Համիդ I-ի (1774-1789) կողմից արձակված հրամանագրերը ցույց են տալիս, որ սուլթանական կառավարությունը աջակցել է Ստամբուլի պատրիարքարանին՝ կանխելու կաթոլիկ միսիոներների գործունեությունը հայաշատ շրջաններում: Հետագայում, իհարկե, Ֆրանսիայի և Ավստրիայի ազդեցության ներքո ժամանակ առ ժամանակ սուլթանական կառավարությունը զիջումների էր գնում Եվրոպական պետությունների այս պառակտիչ գործունեությանը: Ի վերջո, բարձրագույն դուռը հայ կաթոլիկ կրոնապետին պատրիարքի տիտղոս շնորհելու թույլտվություն է տալիս: Հետագայում հայ կաթոլիկ պատրիարքի իրավասության տակ անցան նաև ասորիները, քաղդեացիները, մարոնիները, մելքիդները:

6.4. XVIII-XIX դարերի եվրոպացի և ռուս ճանապարհորդների ուղեգրությունների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին

Մենք սույն հատվածում հիմնականում անդրադարձել ենք հայոց կենսապահովման մշակույթի վերաբերյալ եվրոպացի և ռուս ուղեգրողների տեղեկություններին, հաշվի առնելով, որ նախորդ՝ XV-XVII դդ. եվրոպական աղբյուրներում դրանք սակավ են շոշափվել:

Հայ ժողովրդի նյութական մշակույթի մասին նկարագրական տեղեկություններ են հաղորդել Մերձավոր Արևելք, Անդրկովկաս և Հայաստան այցելած եվրոպացի, ռուս և հայ մի քանի ճանապարհորդներ՝ Մորիերը, Տեքսիեն, Դյուբուա դը Մոնպյերեն, Ռոբերտ Կեր Փորտըրին, Ուիլիըմ Աուզլեյը, Մոլթկեն, Կոնտ դե Շոլեն, Հաքստհաուզենը, Մորից Վագները, Ջոն Ջոնսընը, ռուս նշանավոր գրողներ Պուշկինը, Գրիբոյեդովը և այլք:

18-րդ դարի վերջի և 19-րդ դարի առաջին կեսի եվրոպացի ճանապարհորդներից կարելի է առանձնացնել **անգլիացի ճանապարհորդ Մորիերի (1770-1849 թթ.)** տեղեկությունները: Ըստ նրա հայկական տները (Էրզրումի շրջանում) ընդհանրապես շինված են քարից, ունեն փայտյա առաստաղ և պատշգամբ: Կտուրներին խոտ է բուսնում... բարձր տեղից դիտելիս, տների կտուրները դժվարությամբ են զանազանվում դաշտից»[303]: Մի այլ տեղ նա գրում է. «Մենք հասանք Եքրեկ [Ekrek] հայ գյուղ (Ագարակ գյուղն է Թալինի տարածաշրջանում, 1931 թ. գյուղն ուներ 411 բնակիչ)[304], որի տները նման են Քսենոփոնի Հայաստանում նկարագրածին, և կարելի է նկատել, թե նույնանման տներ ունեն Հայաստանի ամբողջ տարածքում, ներառյալ Վրաստանի մի մասը, որ նշանավոր է իր ցրտի խստությամբ (հավանաբար նկատի ունի Ջավախքը – Ռ. Ն.): Բնակիչները կատարում են բավականին ընդարձակ պեղում, որ գետնի բնույթին համաձայն տալիս են նրանց տան մեկ, երկու կամ երեք կողքերը, և հետո մնացյալը կառուցում են կիկլոպյան պարսիպների նման վիթխարի քարերով:

---

[303] **Հովհ. Հակոբյան,** Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1932, էջ 284:

[304] Նույն տեղում, էջ 365, ծան. 4:

Սրանց վրա դնում են շատ հաստ գերաններ, և ապա ամբողջությունը ծածկում են հողով, այնքան հաստատուն կերպով, որ երբ ման ենք գալիս գյուղում, դժվար է ասել, թե դուք քայլում եք մի տան կտուրի, թե մի գետնի վրա: Նրանք միայն մի անցք են թողնում կատարին (կտուրին՝ երդիկ. – Ռ. Ն.), որ լուսավորում է ընտանիքի բնակած սենյակը: Այս սենյակը բաժանված է հաստ տախտակներով ու ճաղերով ներքնամասի մեծ մասից, որ ծառայում է որպես ախոռ՝ կենդանիների համար: Մի կարգ պարագաներում բնակիչները իրենց բնակարանն էին իջնում վերևից, բայց և ընդհանրապես նրանք ու կենդանիները հասարակաց մի մուտք ունեն, ինչպես բնակության համար ընդհանուր մի վայր: Բնակիչներն ու կենդանիները իրար տաք են պահում, առաջինները՝ կրակ վառելով (թոնրի կրակով – Ռ. Ն.) իրենց հարկաբաժնում, և վերջինները՝ իրենց շնչառության տաքությամբ»[305]:

Ուղեգրության մեջ ներկայացվում է նաև Սևանի[306], Ղարաքիլիսայի[307], և Կարսի գետնափոր և գետնատարած շենքերի ու բնակավայրերի, եկեղեցիների և դրանց զույքի ու եկեղեցականների տարազի վերաբերյալ տեղեկություններ[308]: Ուշագրավ են ճանապարհորդի հաղորդումները նաև Էջմիածնի հայության հյուրընկալման սովորությունների[309], գութանավարի[310], երկրագործական գործիքների տեսակների[311], եզների

[305] Նույն տեղում, էջ 361:
[306] Տե՛ս նույն տեղը, էջ 341:
[307] Տե՛ս նույն տեղը, էջ 332:
[308] Տե՛ս նույն տեղը էջ 362-363:
[309] Տե՛ս նույն տեղը էջ 304, 321, 339, 350, 353:
[310] Տե՛ս նույն տեղը, էջ 327, 328, 344:
[311] Տե՛ս նույն տեղը էջ 362:

վրա բարձած բեռներ փոխադրելու[312], սայլով դաշտամշակության վայր գնալու սովորույթի[313], հայ կնոջ գլխի հարդարանքի, գլխակապերի[314] մասին:

Ֆրանսիացի ճարտարապետ **Տեքսիեն**, 1836 թ. անցնելով Էրզրումի շրջանով, հյուրասիրվելով հայի տանը, հետևյալն է նկարագրում. «Այսօր, ինչպես Քսենոփոնի ժամանակ, հայերը հավաքվում էին առանց լուսամուտների մի սենյակում, նրա մեջտեղում գտնվող թոնրի շուրջ, որի ծուխը դուրս է գալիս կտուրից բացված անցքով (երդիկով): Վերևի մասում զետեղված է ակութն իր ծխնելույզով, և նրա դիմաց՝ կտուրի վրա, մի փոքրիկ ծակ (երդիկ. – Ռ. Ն.)՝ լույսի համար: Հատակը հող և կարծրացած, բայց կոպիտ կապերտներ փռված են կողքերում, որոնց վրա աթոռ: Պատերի մեջ կան բացված փոքրիկ պահարաններ, ընտանիքի փոքր սեփականությունները պահելու համար: Կրակարանի ճիշտ վերևը նույն տեսակ շատ փոքրիկ մի խոռոչ կա, ուր դնում են ձեռքի լամբարը, որ միշտ վառվում էր, երբ ես իրենց հյուրն էի: Բարձրադիր մասը կազմող մարդկային բնակարանից ցած, մնացյալ մասը հատկացված էր կենդանիներին»[315]:

Ֆրանսիացի մեկ այլ ճանապարհորդ՝ **Դյուբուա դը Մոնպյերեն**, 1829 թ. անցել է Ծովագյուղ (Չիբուխլու), Ջրառատ (Ռնդամալ), Աթարբեկյան (Քարվանսարա) գյուղերով ու թողել իր տպավորությունը այդ գյուղերի տների վերաբերյալ. «Տները ամեն տեղ միատեսակ են, - գրում է նա, - մի տեղ մի քիչ ավելի

---

[312] Տե՛ս նույն տեղը էջ 304:
[313] Տե՛ս նույն տեղը էջ 479:
[314] Տե՛ս նույն տեղը էջ 372:
[315] **Ch. Texien,** Description de L'Armenie, La Parise et Mesopotamie, Paris, 1842, p. 68.

շատ խնամք կա, մի ուրիշ տեղ՝ պակաս: Սրանք նման են վրացիների գետնափոր բնակարաններին»:

Ֆրանսիացի ճանապարհորդը Վրաստանով անցել է հայերով բնակեցված շրջաններով, այստեղից էլ՝ նկարագրված տների համանմանությունը: Հետևաբար Քսենոփոնյան տան տիպի ժողովրդական տները հիմնականում հայոց յուրահատկություններից մեկն են եղել: Ճանապարհորդը ավելացնում է այդ երևույթի դրդապատճառներից մեկը. «Մի երկրում, ուր պակասում է վառելափայտը, և ուր ձմեռը սաստիկ ցուրտ է լինում, մարդ ամեն կերպ ջանում է որոշ տաքություն ստեղծել իր տան մեջ և պահպանել այն, դրա համար էլ տան բնակելի մասը տեղավորում են ախոռի կամ գոմի մեջտեղում, որը սովորաբար գոմից մի քանի ոտք ավելի բարձր է կառուցվում, մնացյալ ամեն ինչ գտնվում է նույն միջավայրում: Այս բարձր մասը մնացյալ մասերից անջատվում է կոպիտ ճաղերից պատրաստված ցանկապատով, որն իր հերթին ամրացված է փայտի սյուներին: Տան մեջ տեսնում ենք, լսում ենք, զգում ենք այն բոլորը, ինչ կատարվում է մեր չորս կողմը»[316]: Այս տեղեկությունից երևում է, որ բնակարանի համալիրի այս հատվածը գոմի օդան է՝ երկու բազմոցով: Բնակելի այս հատվածը նաև հյուրասենյակն է եղել, որի կենտրոնում զետեղված թոնրի շուրջը ծալապատիկ նստում էին ընտանիքի անդամները:

Հայկական գլխատան այս հարկաբաժնի՝ գոմի օդայի (գոմասենյակ) վերաբերյալ ակնարկներ կան նաև ֆրանսիացի **Պիեր Ամեդե Ժոբերի** (1805-1806 թթ.) ուղեգրության մեջ[317]:

---

[316] **Dubuis de Montre´pereux Frede´ric.** Voyage autour de Caucase chez le Tcherkesses et les Abkhases en Colchide, en Georgie, en Arme´nie et en Grime´e, Paris, 1839, h. III, p. 333.

[317] Տե՛ս Հակոբյան Հովհ., նշվ. աշխ., էջ 198, 207, 220:

Հեղինակն ունի ակնարկներ նաև վառելիքի (աթար) (էջ 149), լաստով գետանցման (էջ 208, 238), հյուրընկալման (էջ 236), ընտանեկան հարաբերությունների (էջ 203), Կարնո և Վանի տարազների (էջ 202, 214), ոսկերչության և ասեղնագործության (էջ 236), հայ առևտրականների (էջ 203), հայկական եկեղեցու (էջ 167), հակաարեգակնային ակնոցի (էջ 191) և այլնի վերաբերյալ:

Անգլիացի նկարիչ և ճանապարհորդ **Կեր Փորտըրին** (1817-1820 թթ.) Վրաստանից Հայաստան անցնելիս նկարագրում է Թիֆլիսի տները. «Այստեղ կա միայն ցածրիկ հողե կտուրներով տների հավաքածու, կառուցված հողե աղյուսից, խառնված քարի ու ցեխի հետ, դռներն ու պատուհանները չափազանց փոքր, վերջիններս ծածկված թղթով, որովհետև ապակի շատ քիչ են գործածում՝ թանկության ու հազվագյուտ լինելու պատճառով, հիրավի բնակիչներն այնքան վարժված են ապրելու մի տեսակ կես մթության մեջ, իրենց լեռների ստվերներից ու բնակարանների անձկությունից, որ նրանք որևէ կերպ լույսի պահանջ չեն զգում... Փողոցներն առանց բացառության նեղ են, անհանդուրժելիորեն ցեխոտ են՝ անձրևոտ և փոշոտ՝ չոր եղանակին»[318]: Ապա նկարագրում է Ուզունլար (Օձուն) գյուղի տները. «Պարզուկ մի գյուղ է, ավելի ճիշտ է ասել, թշվառական հյուղակների մի կույտ: Թերեքից հեռանալուց հետո իմ տեսած բոլոր գյուղերը առավել կամ նվազ չափով միևնույն նմանությունն ունեն» [319] : Նույնը Համամլուում (Սպիտակ): «Սակայն այս վայրի հյուղակների բնակիչներին արդարություն անելու համար, պետք է ասել, թե

[318] Նույն տեղում, էջ 713:
[319] Տե՛ս նույն տեղում, էջ 738:

հակառակ իրենց բնակարանների խեղճության, նրանք ներսում պահում են մի պատրաստակամ ազնվություն, որ երախտագիտությամբ հիշում է Կովկասի վաստակաբեկ ուղևորը... Նրանց բնակարաններից մեկի նկարագրությունը, բավական ճիշտ պատկեր պիտի տա. ներսը մի սենյակ է տասնվեց-տասնյոթ քայլ լայն և հաճախ նույնքան և ավելի երկար, մի տարածություն, որ համեմատական չէ տան դրսի ցածրությանը, բայց գետնի երեսից չորս ոտք խոր փորված է, որ տալիս է բնակարանին բավական բարձրություն, թեև դրսից աննկատելի: Մի ծայրում, սովորաբար դռան մոտ, որ տարածությունը չի փորված, բավականաչափ կազմելու համար մի առանձին սենյակ, բայց այլապես բաժանելի չէ տան մյուս մասից, բացի իր բարձր հասակով: Տները ավելի շատ հարմարված էին անասուններին, ոչ թե մարդկանց: Մեծ սրահում, որը կազմում էր տունը, կա բարձր տարածություն՝ էստրադա (թմբիկ-հողե բարձրադիր բնակելի մակերես. – Ռ. Ն.), շրջապատված ցանկապատով: Այստեղ բնակվում են մարդիկ, իսկ սենյակի մնացած մասերը գրավում են անասունները՝ ձմեռ ժամանակ: Հյուրերը սովորաբար ընդունվում են բնակարանի այս բարձր մասում, ուր փռված են գորգեր, խսիրներ կամ մինդարներ»[320]:

Հայկական Կարսից-Էրզրում ընկած ճանապարհի գյուղական տները անվանում է գետնափոր, «գետնին կպած», որում մարդկանց բաժանմունքը մի քանի ոտ բարձրադիր է՝ թմբկամասով և դրանով անջատվում է կենդանիներին հատկացված

[320] Նույն տեղում, էջ 826-827:

գոմից: Մեկ բաժնով տունը ծառայում է և՛ մարդկանց, և՛ անասուններին»[321]:

Հեղինակի մի նկարագրությունն արտակարգ հետաքրքիր է, ուր ասված է, թե թուրք «միապետի գյուղական տները (Բոսփորի ափին) սովորաբար սպիտակ են, պոռոտ գույներով արաբեսկ ճոխացրած ոսկեգույնով: Իսկ օսմանցի հպատակները ընդհանրապես մուգ կարմիր, մինչ հայերը, որքան էլ նրանք հարուստ լինեն, պարտավորվում են ապրել մռայլ պատերից ներս, դագաղի նման սև»[322]:

Հեղինակն ակնարկներ ունի նաև հայկական հյուրընկալման սովորությունների վերաբերյալ[323]:

Գերմանացի ճանապարհորդ **Մ. Կոցեբուն** (1817թ.) Կարսում նկարագրել է եվրոպացիներին սպասարկելու համար կառուցված իջևանատները[324], նշել է նաև հայկական հյուրասիրության մասին[325]: Նա Բորչալուում տեսել է «թաթարական (ազերիների) տուն», որը «կիսակլոր զամբյուղների (վրանատիպ կացարան – Ռ. Ն.) նման է, ճակատում ունեն մի բացվածք, ծածկված փսիաթով՝ պաշտպանվելու համար անձրևից»[326]: Դրանք կիսաքոչվորական կյանք վարող ազերիների վրանաբնակ կացարաններին են վերաբերում:

Ուղեգրողի գրառումներում ուշագրավ տեղեկություններ է հաղորդվում նաև Շիրակի գութանավարի, հարթեցման աշ-

---

321 Նույն տեղում:
322 Նույն տեղում, էջ 846:
323 Տե՛ս նույն տեղը, էջ 654-655, 735-736, 799, 814:
324 Տե՛ս նույն տեղը, էջ 522:
325 Տե՛ս նույն տեղը, էջ 610: Հմմտ. պարսկականը, էջ 537-540, 592-593:
326 Նույն տեղում, էջ 512-513:

խատանքների[327], ձկնորսության ու որսորդության[328], տիկերով նավակի[329] և այլնի վերաբերյալ:

Իտալացի ճանապարհորդ **Գ. Գերզին** 1830-ական թվականներին եղել է Տավուշում (Շամշադին) և թողել եզակի նկարագրություն. «Այստեղի տները գետնափոր են, և գյուղի գոյությունը հնարավոր է իմանալ միայն տարածության անհարթությունից, որը առաջացնում են կտուրները, և պետք է զգույշ լինել կտուրից բացվող անցքից (երդիկից) ներս չընկնելու համար: Դռնից ներս մտնելով՝ պետք է 12 աստիճան իջնել»[330]:

Անգլիացի դիվանագետ **Ուիլիըմ Առզլեյը** (1769-1842), որը 1812 թ. Թավրիզից Թուրքիա ճանապարհին անցել է Հայաստանով, Կարսի շրջանի հայկական տների մասին գրել է. «Օտարականները կարող են անցնել բազմաթիվ ցածր հողածածկ տների վրայով... որքան ես կարող էի դատել, բոլորն էլ շինված էին գրեթե միևնույն եղանակով, պարունակելով միայն մի ընդարձակ սենյակ, որի մեծագույն մասը գիշերվա ընթացքում, կա՛մ տաքության, կա՛մ ցրտի ժամանակ հատկացված է կենդանիներին, հավերին, մինչ տնատերը և նրա ընտանիքը գրավում են մի փոքր տարածություն, շրջապատված ճաղերով, և սովորական գետնից բարձր միայն երկուերեք ոտք»[331]: Ապա շարունակում է. «Թոզանլի հայերով բնակեցված գյուղում իմ բարի հյուրընկալի բնակարանում այս

---

[327] Տե՛ս նույն տեղը, էջ 520-521:
[328] Տե՛ս նույն տեղը, էջ 594, 610:
[329] Տե՛ս նույն տեղը, էջ 552:
[330] **Г. Герзи,** Развитие шелководства в России // «Отечественные записки», СПб., 1839, № 5:
[331] Տե՛ս **Հովհ. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 474:

տարածությունը տախտակամած էր, ձեղունված եղևնափայտով, և պարունակում էր մի քանի դարակներ ու կախարաններ՝ հագուստների համար, և մի լավ կրակարան, բացի թախտից (բազմոց), մի լավ փայտյա նստարան, որի վրա փռեցի իմ ներքնակը: Պատուհաններ չկային, լույսը և օդը մտնում էին միակ դռնից և աղոտորեն՝ կտուրի երկու փոքրիկ անցքերից»[332]: Վառելիքը տանը մերձակա աթարի դեզեր էին: Ապա ուղեգրողը նկատում է, որ այս ծանր օդի պայմաններում մարդը կենդանիների հետ ապրում էր նրանց շնչառության ջերմությունից օգտվելու և սեփականությունը իր աչքի առաջ ունենալու, քուրդ և թուրք ավազակներից այն պաշտպանելու համար[333]:

XIX դ. գերմանացի ճանապարհորդ **գեներալ Մոլթկեն** գրում է. «Մինչև այսօր էլ հայերն ապրում են գետնափոր տներում, նրանց տանիքները գետնից հազիվ մի քիչ են բարձր: Շատ անգամ ճանապարհորդը հասնելով գյուղ և կանգնած լինելով նրա տների տանիքների վրա՝ գյուղն է փնտրում, չնկատելով այն: Միայն այն ժամանակ է գլխի ընկնում, երբ իր ձիու առջևի ոտքերը ծխնելույզի (երդիկի) մեջ են խրվում...»[334]:

Ըստ ֆրանսիացի ճանապարհորդ **Կոնտ դե Շոլեի**՝ «Երզնկայի գավառում տները սովորաբար գետնի կամ լեռնակողի մեջ փորված խոռոչներ են, շատ անգամ գոմը առանձնացված չէ նրանից որևէ միջնորմով. ձին, կովը, եզը, ոչխարը, այծն ու հավերը, մեծ ընտանեությամբ (ընտանեկան մեծ կազմով. – Ռ. Ն.) ապրում են այստեղ և իրենց կենդանական տա-

---

332 Նույն տեղում:

333 Տե՛ս նույն տեղում, էջ 475:

334 **Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. II. Երևան, 1941, էջ 196-197:

քությամբ ձմեռը ջերմացնում են բնակարանի ներսը: Լայն թախտը (հավանաբար հողաքարե. – Ռ. Ն.) տարածվում է խուղի (գետնափոր տուն. – Ռ. Ն.) չորս պատերի երկարությամբ»[335]:

Ավգուստ Հաքստհաուզենը (1792-1866) պրուսական պաշտոնյա էր, ազգագրագետ, տնտեսագետ: Իր գրքի՝ Հայաստանին վերաբերող մի քանի գլուխների հայերեն թարգմանությունը լույս է տեսել «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում[336], Ե. Բաստամյանի թարգմանությամբ: Արիստակես Սեդրակյանի թարգմանությամբ ու հարուստ ծանոթագրություններով հայ կյանքին առնչվող հատվածները գրաբարով հրատարակվել են 1872թ.[337]: Քանաքեռի ճանապարհորդությունը նկարագրելիս Հաքստհաուզենը հիշում է, որ Խաչատուր Աբովյանի հայրական տունը շրջապատված է եղել հրաշալի ծաղիկներով, և անում է մի նուրբ դիտարկում: «Հայերն ամենուր առատորեն աճեցնում են ծաղիկներ, այն դեպքում, երբ վրացիներն ընդհանրապես չգիտեն խնամել ծաղիկներ: Տան համալիրում, - նշում է հեղինակը, - գրաստներու բակը, որ առանձնանում է պատած պատշգամբով, և որ [տեղացիները] կոչում են սաք[ու]. այստեղ հավաքվում են շատ անգամ, մանավանդ ձմեռը, կրակի [բուխարու] չորս կողմը, ամբողջ ընտանիքը, այստեղ են գալիս հարևանները, և շատ անգամ այստեղ են հյուրընկալվում օտարականները»[338]:

---

[335] **Le Cont de Cholet,** Armenian Kurdistan et Mesopotamie, Paris, p. 195

[336] Գ. տարի, թիւ Ա., յունուար, Տփղիս, 1862, էջ 20-23:

[337] Տե՛ս «Բարօն Օգոստոս ֆօն Հաքստհաուզենայ Ճանապարհորդութիւն յայսկոս Կովկասու՝ այն է ի Հայս եւ ի Վիրս», Վաղարշապատ, 1872, 410 էջ:

[338] «Կռունկ հայոց աշխարհի», 1862, էջ 25: Տե՛ս նաև **фон Гакстгаузен А.**, Закавказский край, т. 1, 2, СПб., 1857:

Գերմանացի երկրաբան, բնագետ, հայտնի աշխարհագրագետ **Մորից Վագները** 1843-1844 թթ. ճանապարհորդել է Հայաստանում, եղել է Երևանում, Սևանի ավազանում, Խ. Աբովյանի ուղեկցությամբ բարձրացել է Արարատ լեռը:

«Ճանապարհորդություն ի Հայաստան» (1851) գրքում գրում է, որ Սևանի հյուսիսային կողմերի հայոց տները կիսագետնափոր էին, որի պատճառը, տեղացիների պատմածների համաձայն, ձմռան ցրտերն են (էջ 25): Իհարկե, այս կարծիքն ամբողջական չէ, պետք չէ այն պայմանավորել միայն բնակլիմայական-աշխարհագրական գործոնի ազդեցությամբ՝ անտեսելով ընկերային-տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև արտադրողական ուժերի զարգացման աստիճանը, այդուհանդերձ, նրա բերած փաստերը խիստ արժեքավոր են[339]:

Բրիտանական բանակի գնդապետ **Ջոն Ջոնսընը**, որ իբրև սպա ծառայել էր Հնդկաստանում, 1817 թ. նոթագրել է իր՝ Պարսկաստան, Հայաստան, Անդրկովկաս կատարած ուղևորությանը: Նա գրում է, որ Երևանում հայերն ավելի շատ են, քան մահմեդականները, «քաղաքն ունի բազմաթիվ գեղեցիկ պարտեզներ ու տներ...: [Նախիջևանում] իջևանեցինք մի հայի պարտեզում, ուր մենք ընդունվեցինք ծայրաստիճան լավ, խաղաղ ու մեկուսի հարմարություններով: Մեր հյուրընկալը նշանավոր կերպով ուշադիր էր և հյուրասեր... Նա կապերտներ փռեց, բարձեր դրավ, մեզ բերեց ջուր, հաց և այն ամեն բան, ինչ որ ենթադրվում էր, թե մենք ցանկանում էինք: Հայերը, - ինչքան կարճ ժամանակում ես տեսել եմ նրանց, - աշխատասեր և հանդարտաբարո, երկրագործական պարապ-

---

339 Տե՛ս **Վագներ Մորից,** Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վիեննա, 1851, էջ 25-27:

մունքների, ջուլիակության և ուրիշ օգտակար արհեստների մեջ նրանք շատ են գերազանցում մահմեդականներին: Ընդհանրապես նրանց մահմեդական դրացիները շատ արհամարհանքով են նայում նրանց վրա, մինչ իրենք (մահմեդականները) անարժեք են, ծույլ, մեծախոս, բայց ստորին ցեղ, նշանավոր իրենց խարդախությամբ և նախապաշարումով կապված իրենց ցեղին ու աղանդին: Նրանք կարծում են, թե գերազանց են բոլորից, տգիտությամբ ու նախապաշարումով ուռճացած իրենց ամբարտավանությամբ, իրենց իրավունք են համարում շատ պարագաներում վիրավորելու քրիստոնյաներին...: Ղարաքիլիսայում, որ ռուսական բանակի կայանն էր նաև, տները շինված են փայտից, իրար ագուցված՝ կազմելու համար զորավոր պատեր. կտուրները ծածկված են հողով: Բոլորի գետնի հատակները, նույնիսկ այն [բնակարանների], ուր զինվորներն են ապրում, երեք ոտք խոր են...»[340]: Այս հիշատակությունը փայտե տների կառուցման վերաբերյալ հազվադեպներից է, հավանաբար դրանք պատկանել են ռուս վերաբնակիչներին: Նրա հավաստմամբ՝ Նոր Ջուղայում պարսկական արգելքների պատճառով եկեղեցիների մեջ սրբապատկերներում կանանցի պատկերները բացառվում էին, հայ կանայք ծածկում էին քիթն ու բերանը: Թողել է ուշագրավ տեղեկություններ Նոր Ջուղայի հայ առևտրականների ձեռներեց գործունեության վերաբերյալ[341]:

Պուշկինը Թիֆլիսից Կարս գնալու ճանապարհին մոտենում է մի գյուղի, բայց տները գետնափոր լինելու պատճառով կասկածում է, թե գյուղ է. «Ես տեսա մի կողմում քարակույ-

---

[340] **Հովհ. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 635-650:

[341] Տե՛ս նույն տեղը, էջ 634, 635, 640, 673, 675:

տեր, որոնք նման էին խրճիթների, և գնացի նրանց կողմը: Պարզվեց, որ իսկապես, հասել էի մի հայկական գյուղի: Մի քանի կին, խայտաբղետ ցնցոտիները հագներին, նստած էին գետնափոր խրճիթի տափակ կտուրին»[342]: Համանման նկարագրություն է թողել 1819 թ. Ա. Ս. Գրիբոյեդովը՝ Թիֆլիսից Երևան անցնելիս[343]:

Հայկական մարզի և Երևանի տների վերաբերյալ բավականաչափ նկարագրություններ կան Ի. Շոպենի հաշվետվության մեջ: Իվան Իվանովիչ Շոպենը (1798-1870), ազգությամբ ֆրանսիացի պատմաբան-ազգագրագետ է, եղել է հայկական մարզի վարչության խորհրդական, եկամուտների և պետական տուրքերի վարչության պետ: Նրա աշխատությունները վերաբերում են Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը, Արևելյան Հայաստանի վարչատնտեսական համակարգին, մշակույթին, բնակավայրերին, բնակչությանը, ազգային և սոցիալական կազմին, կենցաղին և այլն [344] : Անդրկովկասի վարչական միավորների, հետևաբար և Հայաստանի բնակչության համառոտ նկարագրությանն է նվիրված ևս մեկ ռուսերեն ժողովածու[345]:

Ռուս պատմաբան Պոտտոն, անդրադառնալով 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Էրզրումի վիլայեթից հայ բնակչության գաղթին, գրում է, որ Էրզրումից

---

[342] **А. Пушкин ,** Полное собрание сочинений, 1949, Москва, т. IV, с. 437.

[343] Տե՛ս **Ա. Ս. Գրիբոյեդով,** Ճանապարհորդական նոթեր, Հայպետհրատ, 1945, էջ 18:

[344] Տե՛ս **И. Шопен,** «Исторический памятник. Состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи», СПб., 185

[345] Տե՛ս «Обозрение российских владений за Кавказском в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях», чч. 1-4, СПб., 1836:

առաջին քարավանը դուրս եկավ 500 հոգով, իսկ Կարսից միանգամից գաղթեց 1000 ընտանիք: Սրանք տեղավորվեցին Գյումրիում, Արագածի լանջերին, Փամբակում և Լոռիում: Բոլոր տեղերում պարսիկների հեռանալուց հետո դատարկ գյուղեր էին մնացել, որոնցում էլ տեղավորվեցին: Թիֆլիսի գաղթականության կոմիտեն նոր բնակավայրերում առաջարկել էր, որ հայերը կառուցեին ռուսական խրճիթների ձևի տներ, իսկ գեներալ Պասկևիչը չի համաձայնվել, գտնելով, որ գաղթյալները պետք է կառուցեն իրենց հայրենի ավանդույթի ձևով, ինչպես իրենք են կամենում: Եվ Պոտտոյի մռայլ նկարագրությամբ, իբր թե կառուցվել են ամբողջապես կիսագետնափոր տներ՝ բնակարանը և գոմը համատեղելով[346]:

18-19-րդ դարերի եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններում թեև առանձնահատուկ ուշադրություն չեն դարձվել հայկական ժողովրդական տան կառուցվածքային, կենցաղամշակութային առանձնահատկությունների, զարգացման օրինաչափությունների վերաբերյալ հարցերին, այդուհանդերձ դրանք իրենց պատմագրական նշանակությամբ բացառիկ արժեքավոր են:

---

[346] Տե՛ս **В. Потто,** Кавказская война, т. 4, Тифлис, 1888, էջ 447, 476, Հմմտ. Աղանեանց Գիւտ քինյ., Կարնօ գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891, **Ալ. Երիցեանց,** Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա., Թիֆլիս, 1897, **Հ. Գեղամեանց,** Ախալցիխայից մինչև Անի // «Փորձ», 1879, № 2:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

Բանավոր ներկայացնել թեմայի հիմնական դրույթները:

- **Թեմայի գնահատում /անդրադարձ/ - Գնահատման թերթիկ**

Գրիր դասախոսության ամենակարևոր գաղափարը

Մեկ բան, որ դու կարող ես կիրառել

Առաջադրանքներ

1. Գրել ռեֆերատ արաբ հեղինակներից որևէ մեկի՝ հայերի վերաբերյալ տեղեկությունների մասին:
2. Գրել ռեֆերատ ցանկությամբ եվրոպացի ճանապարհորդներից որևէ մեկի՝ հայերի վերաբերյալ տեղեկությունների մասին:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ տեղեկություններ են հավաստվել «որդան կարմիր» ներկի, նրա հռչակավոր դասվելու և արտադրության վայրի մասին:
2. Ովքե՞ր և ի՞նչ առատ տեղեկություններ են թողել հայկական ընտիր զորգերի մասին:
3. Հայաստանից ի՞նչ ապրանքներ են արտահանվել և որտեղ:
4. Ի՞նչ նկարագրությունների եք հանդիպել հայկական քաղաքների, կառուցապատումների մասին:
5. Ի՞նչ կասեք «Փոքր Հայաստանի» (Կիլիկիա) և «Մեծ Հայաստանի» բուն Հայաստանի մասին ըստ արաբ և եվրոպացի ճանապարհորդների գնահատման:

6. Գրել ռեֆերատ Քյաթիբ Չելեբիի հաղորդումների նշանակության մասին:

7. Գրել Էվլիյա Չելեբիի հաղորդումների կարևորության մասին:

Հիմնական և լրացուցիչ գրականություն

Հիմնական

1. Արաբ մատենագիրները Հայաստանի մասին: հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանցը, Վիեննա, 1919:

2. Իբն-Ի Բատուտա, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:

3. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» Յակուտ ալ Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն-Շաղդադ, կազմեց Հ.Թ. Նալբանդյանը, Երևան, 1965:

4. «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա-րամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

5. «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

6. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 8-10:

7. **Հակոբյան Հովհ.,** Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ.Ա, ԺԳ-ԺԶ դարեր (1253-1582), Եր., 1932:

8. **Հակոբյան Հովհ.,** Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1932:

9. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Թարգմանությունները թուրքերեն բնագրից, ներածությունով, ծանոթա-

գրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով, հատոր Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1961, 383 էջ:

10. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատոր Բ, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1964, 336 էջ:

11. Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, 345 էջ:

12. Թուրքական աղբյուրներ, Դ, Էվլիյա Չելեբի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթուրջյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, 258 էջ:

13. **Նահապետյան Ռ.,** Միջնադարյան Հայաստանի գործվածքեղենը արաբ և եվրոպացի ճանապարհորդների գնահատմամբ (IX-XVդդ.) // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 211-230:

14. **Նահապետյան Ռ.,** XV-XVII դդ. Եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին // Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1, էջ 230-251:

15. **Տեր-Ղևոնդյան Ա.,** 10-րդ դարի արաբ մատենագիրները հայկական սովորույթների, երաժշտության մասին. – «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1965, թիվ 10, էջ 75-78:

Լրացուցիչ

1. **Աբրահամյան Վ.**, Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., Եր., 1956:

2. **Ալիշան Ղ.,** Հուշիկք հայրենեաց, հ. Բ, Վենետիկ, 1896:

3. **Առաքելյան Բ.,** Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ.1, Երևան, 1958:

4. **Զուլալյան Մ. Կ.,** Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դարերում, Երևան, 1980:

5. **Զուլալյան Մ.**, Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին //ՊԲՀ, 1985, թիվ 2, էջ 56-72:

6. **Թեմուրճյան Վ.,** Գորգագործությունը Հայաստանում (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 1965:

7. **Նահապետյան Ռ.,** Արաբ մատենագիրների ազգագրական վկայությունները հայերի մասին (Թ-ԺԴ դդ.), «Էջմիածին», է, 2009, էջ 65-79:

Թեմա 7. Դաշտային ազգագրական նյութերը՝ հայ ազգագրական գիտության ուսումնասիրության սկզբնաղբյուր

7.1. Դաշտային ազգագրական նյութերի գրառման շուրջ*

Ազգագրությունը նյութեր է քաղում հնագիտությունից, մարդաբանությունից, բանահյուսությունից, պատմագրությունից, արխիվներից, աշխարհագրությունից, թանգարանային նյութերից, գեղարվեստական գրականությունից և այլն: Հատկապես սերտորեն է առնչվում հնագիտությանը, որովհետև այսօրվա «հնագիտական նյութը» երեկվա «ազգագրական նյութն» է: Ազգագրագետը խնդիրները լուծում է հնագիտական, իսկ հնագետը՝ ազգագրական տվյալների օգնությամբ: Չափազանց կարևոր են նաև ժողովրդական բանահյուսության

* 1969 թվականից՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում հնագիտության և ազգագրության ամբիոնի հիմնադրումից սկսած, կարդացվում էր «Դաշտային ազգագրական հետազոտությունների մեթոդներ» առարկան (դասախոսներ՝ Վ. Բդոյան, Յու. Մկրտումյան, Ա. Պետրոսյան): Այսօր այդ կարևոր առարկան դասավանդում է մեր ամբիոնի շնորհալի շրջանավարտ Գայանե Շագոյանը: Ցավոք, առ այսօր այդ առարկայի վերաբերյալ հայերեն որևէ ձեռնարկ չկա: 1970-ականներին այդ առարկան կարդում էր նշանավոր ազգագրագետ, պատմագիտության դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Բդոյանը: Լինելով նրա ղեկավարությամբ ամբիոնի առաջին ասպիրանտը (1970-1973)՝ մասնակցել ենք նրա վարած դասախոսություններին, գրառումներ արել և երբեմն-երբեմն էլ՝ փոխարինել նրան: Այդ և հետագա մի քանի տարիներին մասնակցել ենք նաև Վ. Բդոյանի ղեկավարությամբ կազմակերպվող գիտական արշավախմբերին, որոնց շնորհիվ ձեռք ենք բերել դաշտային աշխատանքներ իրականացնելու փորձառություն:
Սույն հատվածի հիմքում ընկած են այդ տարիներին կատարած մեր գրառումներն ու մշակումները, որոնք կարող են օգտակար լինել դաշտային ազգագրական ինքնուրույն հետազոտություն իրականացնող՝ ազգագրությամբ մասնագիտացող ուսանողներին, հայցորդներին:

տվյալները, որոնցում արտացոլվել են ժողովրդի կյանքի ամենատարբեր ոլորտները: Այդուհանդերձ, ազգագրական գիտության հիմնական աղբյուրագիտական բազան գրառված դաշտային ազգագրական նյութերն են (այսուհետ՝ ԴԱՆ), «որոնք կարևոր պատմական աղբյուրներ են հասարակության զարգացման ոչ միայն նախնական, այլև ավելի ուշ ժամանակների փուլերը հասկանալու համար: Սովորույթի ուժը թափանցում է և՛ աշխատանքային գործընթացների, և՛ ընտանեկան ու հասարակական փոխհարաբերությունների, և՛ իրավական հասկացությունների, և՛ աշխարհըմբռնման զանազան կողմերի, ինչպես և լեզվի, բանահյուսության, գեղարվեստի բոլոր ճյուղերի մեջ, ինչպես և նյութական մշակույթի ամենատարբեր բնագավառները»[347],– գրում է նշանավոր ազգագրագետ Ս. Լիսիցյանը: Դրանք ռեալ իրականությունից, կոնկրետ բանասացից գրառված տեղեկություններ են հետազոտվող հիմնահարցի վերաբերյալ: Այդ նյութերի մշակելը, տիպաբանելը և գիտական շրջանառության մեջ դնելը հայտնի են որպես դաշտային ազգագրական հետազոտություններ (ԴԱՀ): ԴԱՆ-ն ու ԴԱՀ-ը սերտորեն փոխկապված են. որքան ճիշտ են գրանցված դաշտային նյութերը, այնքան հեշտ է ԴԱՀ-ի իրականացումը:

ԴԱՆ-ի գրառումը ազգագրական գիտության կարևոր խնդիրներից է: Եվ դա է պատճառը, որ ավելի քան հարյուր տարի (XIX դարի կեսերից մինչև XX դարի կեսերը) պահանջվեց, մինչև որ ազգագրական գիտության մեջ մշակվեցին ԴԱՆ-ի գրանցման սկզբունքները, այդ նյութերը մշակելու և շրջանառության մեջ դնելու եղանակները: ԴԱՆ-ի գրառման հաջո-

---

[347] Տե՛ս **Ս. Լիսիցյան,** Ազգագրական հարցարան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1946, էջ 3:

ղությունը մեծապես պայմանավորված էր ծրագիր-հարցարանների առկայությամբ: Ահա թե ինչու նույն ժամանակաշրջանում աշխարհի տարբեր երկրներում հարցարաններ ստեղծելու մի քանի փորձեր են կատարվել: XIX դարում Եվրոպայում ԴԱՆ-ի գրանցման փորձը ցույց է տվել, որ նման հարցարանները հույժ անհրաժեշտ էին: Եվրոպական արխիվներում (նաև աշխարհի ցանկացած երկրի վերաբերյալ) կուտակվել էր հսկայական քանակությամբ ԴԱՆ, որոնք գրառվել էին հիմնականում տարբեր զբաղմունքի տեր մարդկանց, հիմնականում ոչ մասնագետների կողմից աշխարհի տարբեր ծայրամասերում: Այդ նյութերում գլխավորն ու երկրորդականն այն աստիճան էին խառնված, որ դրանցից օգտվելիս ազգագրագետը կանգնում էր բարդ, հաճախ էլ անլուծելի խնդիրների առջև: Նյութերի այդ անկանոնությունը նաև շփոթություն էր առաջացնում, հետևաբար մեծ էր նաև հետազոտություններ կատարելիս սխալվելու հավանականությունը[348]:

XIX դարի երկրորդ կեսերին հայ իրականության մեջ ևս ծրագիր-հարցարան կազմելու մի շարք փորձեր կատարվեցին: Դրանցից առաջինը Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց» (1874) հայտնի աշխատությունն է մեզանում, սակայն առաջին գիտական ծրագիր-հարցարանը՝ «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» վերնագրով, կազմեց Գրիգոր Խալաթյանցը՝ 1887 թ. Մոսկվայում

---

[348] Տե՛ս **Г. Громов,** Методика этнографических экспедиций, Москва, 1966, էջ 15: Հարկ ենք համարում նշել, որ դաշտային ազգագրական նյութերի գրառման, դաշտային ազգագրական հետազոտությունների իրականացման մեթոդների վերաբերյալ ռուսերեն լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ ու ժողովածուներ, որոնք կարող են շատ օգտակար լինել նաև հայ ազգագրական իրականության համար: Տե՛ս հղում 347:

հայերեն: Այն կիրառվեց մինչև 1940-ական թթ. կեսերը: Այդ ծրագիրը լիովին համապատասխանում էր XIX դարի երկրորդ կեսերի ազգագրության պահանջներին և չափազանց մեծ դեր խաղաց մեզանում ազգագրությունը գիտական հիմքերի վրա դնելու հարցում: Սակայն 5-6 տասնամյակ հետո նոր ծրագրի անհրաժեշտություն առաջացավ, որն իրագործեց Ստեփան Լիսիցյանը՝ 1946 թ. հրատարակելով իր «Ազգագրական հարցարանը», որն օգտագործվում է առ այսօր: Այն տեսական և գործնական խոշոր նշանակություն ունեցավ հատկապես հավաքչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու առումով և մինչև օրս ծառայում է իբրև մեթոդական ձեռնարկ:

ԴԱՆ-ի գրառումը ոչ թե սոսկ փաստերի գրանցում է, այլ գիտահետազոտական որոշակի աշխատանք դաշտում[349]: Դաշտային հետազոտական աշխատանքների կազմակերպումը

---

[349] Այս առումով կարևոր է ձեռքի տակ ունենալ մի շարք ուղեցույցներ, որոնք լրացուցիչ տեղեկատվություն կտան ուսումնասիրողներին՝ **В. А. Козьмин,** Полевая этнография, СПб., 2007, **В. И. Бушкова, С. П. Поляков,** Методы организации полевых этнографических исследований (опыт работы Среднеазиатской комплексной экспедиции исторического факультета МГУ им. М. В. Ломоносова), Проблемы сравнительных исследований в социологии, Москва, 1987, **С. И. Вайнштейн,** Актуальные вопросы полевого исследования традиционно-бытовых культур народов СССР, СЭ. 1985. № 3, **Т. А. Жданко, В. Ю. Крупянская, Л. Н. Тереньтева,** Об организации и методике полевых этнографических исследований (Из опыта ИЭ АН СССР), Этнографическое совещание 1956 г. тезисы докладов на пленарных заседаниях, Москва-Ленинград, 1956, **С. В. Иванов,** К вопросу о методике собирания и изучения произведений народного изобразительного искусства, СЭ, 1964, № 4, **М. В. Крюков,** К методике сбора полевого материала по системам родства, СЭ, 1972. № 4, **С. А. Токарев,** К методике этнографического изучения материальной культуры, СЭ, 1970, № 4, **С. А. Токарев,** Обычаи и обряды как объект этнографического исследования, СЭ, 1980. № 3, **Г. Читая С.,** Принципы и методы полевой этнографической работы, СЭ, 1957. № 4, **М. Н. Шмелева,** Полевая работа и изучения современности, СЭ, 1985. № 5, **В. А. Ядов,** Социологическое исследование: методология, программа, методы, Москва, 1987, с. 248:

կարող է իրականանալ գործուղումների, գիտարշավների և ստացիոնար հետազոտությունների եղանակով: Ստացիոնար եղանակով ուսումնասիրելը լավագույնն է, որովհետև հետազոտողը, երկար ժամանակ անընդմեջ լինելով բնակչության մեջ, այնքան է մտերմանում, որ ձեռք է բերում իր անձի հանդեպ հարգանք և վստահություն, որով և դյուրացնում է նպատակադրումը:

Գիտական արշավախմբերի կողմից ԴԱՆ-ի գրառման մեթոդները կարող են լինել երկու տեսակ՝ երթուղային և ճյուղային: Երթուղայինի դեպքում շարժումը կատարվում է մի գծով, անընդհատ և հաջորդական բնակավայրերով՝ 1-3 օր, կանգառներով: Բնական է, որ այս պարագայում նյութերի գրանցումը կատարվում է արագ՝ իբրև լրացում, որովհետև գիտարշավի մասնակիցները իրենց գրառած նյութերի բացթողումներն են լրացնում:

Ճյուղային հետազոտման հիմնական կետերը կենտրոնական բնակավայրերն են, իսկ մոտակա վայրերը գրանցումը ստուգելու և լրացնելու համար են: Այս գիտարշավի անդամները ունենում են իրենց նախասիրած թեմաները: Կարելի է նաև այս երկու եղանակները զուգակցել:

Հետազոտողը տեղավայրի ընտրությունը կարող է կատարել երկու եղանակով՝ ա) ընտրությամբ, երբ նյութերը պետք է գրանցվեն ոչ ընդլայնված թեմատիկ հարցերի շուրջ, և բ) համատարած, ընդլայնված ուսումնասիրություն: Ընտրովի հետազոտության ժամանակ նախանշվում են ուսումնասիրության գլխավոր օբյեկտները: Ազգագրագետը կենտրոնանում է միայն այդ օբյեկտների ուսումնասիրության վրա: Այս մեթոդական հնարի շնորհիվ կարելի է խնայել ժամանակը: Այն թույլ է տալիս խորապես ուսումնասիրել ընտրված օբյեկտնե-

ը: Սակայն ընտրովի հետազոտության էական թերությունն այն է, որ օբյեկտի ընտրությունը կարող է լինել խիստ սուբյեկտիվ, և ընտրված օբյեկտը կարող է բնավ բնորոշ չլինել տվյալ էթնիկ կամ ներէթնիկ հանրությանը: Եվ սուբյեկտիվ սխալներից խուսափելու համար ազգագրագետը պետք է առավելագույնս ծանոթ լինի ուսումնասիրվող բնակչության պատմությանն ու դրան վերաբերող ազգագրական աշխատանքներին: Ընտրովի հետազոտությունն առավել հաճախ կիրառվում է մշակույթի ու կենցաղի մի շարք ոլորտներում վերապրուկային դրսևորումներն ուսումնասիրելիս: Ժամանակակից մշակույթի ու կենցաղի արագ զարգացման, շփման միջոցների արդիականացման պայմաններում (ինտերակտիվ, ազատ առևտուր, տրանսպորտ, կապ, ինտերնետ և այլն) ընտրովի հետազոտման մեթոդը մղվում է հետին պլան և կիրառվում միայն հազվադեպ: Ժամանակակից մշակույթի ու կենցաղի ուսումնասիրության համար առավել հարմար է կիրառել ընդհանուր, ընդլայնված հետազոտության մեթոդը: Այս մեթոդի կիրառման դեպքում արշավախումբը չի առանձնացնում որևէ օբյեկտ, այլ ուսումնասիրության է ենթարկում հետաքրքրող թեմայի վերաբերյալ բոլոր առկա օբյեկտները: Սակայն այս մեթոդը դաշտային ազգագրական նյութերի գրառման համար պահանջում է երկար ժամանակ: Այդ է պատճառը, որ ազգագրագետը, հաճախ ժամանակը խնայելով, չի կարողանում նյութերը լիարժեքորեն գրանցել: Այս գործը շտապողականություն չի հանդուրժում, առավել ևս գրանցվելիք նյութերի մեջ խտրություն դնելը և այս կամ այն ոլորտը շրջանցելը: Այսպես, օրինակ, ինչ կնշանակի նկարագրել լոռեցի կնոջ տարազը և շրջանցել նրա ներքնազգեստները կամ ուսումնասիրել գուլպաները, բացառել ոտնամանները: Բոլոր դեպքերում եր-

թուղային կամ ստացիոնար ուսումնասիրությունները ենթադրում են ազգագրական նյութի հավաքման լուրջ, երկարատև և անշտապ աշխատանք:

Անհատական գիտական ուղևորությունները բանահավաքչական աշխատանքում ընդունված ձևեր են: Դրանք կարող են տեղի ունենալ միայնակ կամ ուղեկիցներով. միայնակ, եթե բանահավաքը միաժամանակ լուսանկարիչ է, գծագրող և նկարիչ, ուղեկիցներով, եթե բանահավաքը զուրկ է այդ շնորհներից: Չնայած մերօրյա տեխնիկական հնարավորություններին, այնուամենայնիվ, ցանկալի է մասնագետ ուղեկիցների առկայությունը: Տեխնիկան երբեմն կարող է՝ «դավաճանել»: Մեզանից յուրաքանչյուրն էլ առնչվել է այն տհաճ երևույթին, երբ՝ «նյութ ենք կորցնում» համակարգչում, կրիչում կամ հեռախոսում: Բացի այդ, մեր խորին համոզմամբ, մարդկային ձեռքի նկարը կամ գծագիրը, այնուամենայնիվ, անփոխարինելի է նույնիսկ մեր օրերում: Անհատական աշխատանքը հիմնականում կատարվում է այն դեպքում, երբ ճշգրտվում են գրանցումները, երբ փորձում են լրացնել նախկին գրանցումների բացթողումները, թարմացվում են վիճակագրական տվյալները, կատարվում են նոր լուսանկարահանումներ և այլն:

Կոմպլեքսային գիտարշավների ժամանակ պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները:

ա) Որքան հնարավոր է, գրանցելիք նյութերը պետք է լինեն միմյանց հետ կապված: Օրինակ, եթե մեկը ուսումնասիրում է ընտրության և ամուսնության ավանդական և ժամանակակից սովորույթներն ու ծեսերը, ապա արշավախմբի մեջ մտնող 2-րդին, 3-րդին, 4-րդին նպատակահարմար է հանձնարարել ընտանիքը՝ ավանդական և ժամանակակից կտրվածքով,

ազգակցական համակարգը, համայնքային, դրացիական հարաբերությունները, դրանց սերտորեն առնչվող հուղարկավորման, հյուրընկալման համակարգերը:

բ) Եթե նախատեսված է գրել որևէ մենագրություն, ապա այն պետք է իրականացվի տարբեր բանահավաքների ու գիտնականների կողմից՝ տարբեր թեմաների ուսումնասիրություն ստանձնելով: Այսպես, դիցուք թեման է՝ «Հայկական գյուղը 1980-2020-ական թվականներին»: Արշավախմբի անդամներից մեկին հանձնարարվում է ուսումնասիրել տնտեսական կենցաղն իր բոլոր ոլորտներով, երկրորդին՝ նյութական մշակույթը՝ իր ոլորտներով, երրորդին՝ սոցիալական հարաբերությունների ոլորտը, չորրորդին՝ հոգևոր-հումանիտար մշակույթի բնութագրությունը:

գ) Եթե նպատակ կա ուսումնասիրելու մի ամբողջ ազգագրական շրջան, ապա բանահավաքչությունը և ուսումնասիրությունը կատարվում են նույն ձևով՝ թեմաների բաշխում կատարելով, թեև չի բացառվում միայնակ անելու այդ ամբողջը:

դ) Երբ գիտական գրանցումներին զուգակցում են թանգարանային արժեքների ձեռքբերումները, ապա անխուսափելիորեն պետք է կազմակերպվի կոլեկտիվ գիտարշավ:

ե) Երբ խմբային գիտարշավների մասնակիցները տարբեր մենագրություններ գրելու համար նյութեր են գրանցում, ցանկալի կլինի, որ նրանցից յուրաքանչյուրը ընտրի տարբեր ուղղություններ, այլապես միմյանց կխանգարեն, չէ՞ որ նրանցից յուրաքանչյուրի հնարավորություններն ու աշխատասիրությունը տարբեր են:

Ազգագրագետ-հետազոտողը չպետք է սահմանափակվի լոկ իր ծննդավայրով կամ շրջանով, քանի որ ամբողջ մարզը՝

որպես ազգագրական կուռ շրջան, ուսումնասիրությունից գրեթե դուրս կմնա:

Բնակավայրի ընտրությունը: Վայրի ընտրությունը հիմնավորվում է ազգագրական տեսանկյունից չուսումնասիրված վիճակով կամ թերի հետազոտված լինելով: Մինչև տեղավայր հասնելը ընտրված վայրը, նրա աշխարհագրությունը, պատմությունը, ժողովրդագրությունը, տնտեսությունը և այլն նախապես պետք է ուսումնասիրվեն գրականության միջոցով, այլապես հետազոտողը կհանդիպի լուրջ դժվարությունների:

Ընտրավայր կարող են լինել գյուղը, շրջանը, մարզը: Բոլոր դեպքերում ազգագրագետը, ունենալով իր հատուկ նպատակը, պետք է խստիվ պահպանի ազգագրական շրջանների սահմանները: «Ազգագրական շրջան» հասկացությունը ենթադրում է զբաղմունքների, նյութական և հոգևոր մշակույթի, հասարակական կենցաղի և բանահյուսության ամբողջականություն:

Եթե բանահավաքը որևէ ազգագրական շրջանի առանձին գյուղն է ընտրում իբրև ուսումնասիրության օբյեկտ, պետք է հաստատուն կերպով բոլոր թեմաները գրի առնելուց հետո այն համեմատի նույն շրջանի մեկ այլ գյուղի նյութերի հետ, եթե այդ երկրորդ գյուղում ներգաղթողներ չեն բնակվում: Համեմատությունները անցկացվում են փոխազդեցությունների հարցերը պարզաբանելու համար: Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է տարբերել միատարր բնակիչներով բնակավայրերը էթնիկապես խառը բնակչությամբ բնակավայրերից, որտեղ զգալի են սովորույթների փոխազդեցությունները և համանման երևույթների առկայությունը, որոնք պետք է տարբերակված գրանցվեն:

Թեմայի ընտրությունը: Շատ ցանկալի կլինի ընտրությունը կատարել հեղինակի հակումների համաձայն, իսկ եթե թեման հատուկ նպատակով է տրվում կամ պարտավորեցնում, այդ դեպքում կպահանջվեն լրացուցիչ ջանքեր: Ցանկալի է, որ թեման կամավոր ընտրվի:

Ե. Լալայանը XIX դարի վերջերից մինչև 1910-ական թվականները գրի է առել և հրատարակել է միայն սոցիալական հարաբերություններն արտացոլող նյութեր՝ ամուսնություն, ընտանետիպեր, ազգակցական հարաբերություններ, վարքուբարք, ժողովրդական տոներ, բանահյուսություն: Նյութական մշակույթը նա չէր գրանցում կամ քիչ էր գրանցում: Այս մեթոդը կիրառել է Ջավախքում, Զանգեզուրում, Արցախում, Բայազետում, Վասպուրականում, Տարոնում և այլուր՝ միևնույնը կրկնելու պայմանով: Անտարակույս, տիտանական աշխատանք է կատարել: Նյութական մշակույթը շրջանցելու համար նրան մեղադրել չի կարելի:

Բանասացների ընտրությունը: Ազգագրագետը պետք է սիրի որոնումներ կատարել, գրի առնել և իր ունեցած տեղեկությունները հարստացնել: Ուղևորությունների ընթացքում նա պարտավոր է կազմել բանասացների ցուցակ, որը ոչ միայն իր, այլև ուրիշների համար ևս շատ կարևոր է տեղեկատվության առումով: Բանասացների ընտրությունը պետք է կատարել՝ ժողովրդի հետ շփվելով: Զրույցներում, հարցուփորձի ընթացքում կարելի է ճանաչել իմաստուն մարդկանց և ցուցակագրել նրանց անունները: Սովորաբար բանասացները կարծում են, թե այդ զրույցով ամեն ինչ վերջացավ, մինչդեռ նրանց համատեղ աշխատանքը նոր է սկսվում: Այդ աշխատանքը պետք է կազմակերպվի հստակ ժամանակացույցով, ճշտապահությամբ, բարենպաստ միջավայր ստեղծելով:

Առաջին հերթին պետք է գրանցել բանասացի կենսագրությունը, որտեղ շեշտվելու են նրա զբաղմունքները, և այն նյութերը, որոնց մասին պատմում է: Գրանցմանը զուգընթաց՝ պետք է լուսանկարել նրան, մի օրինակը փակցնել կենսագրության բաժնում՝ բանասացին ոգևորելու համար: Նրանց պետք է խրախուսել, գիտական հանդեսներում հոդվածներ տպագրել նրանց մասին: Բանահավաքը նրա նկատմամբ պետք է բարյացակամ լինի, հարգալից վերաբերմունք ունենա: Չպետք է հոգնեցնել ու ձանձրացնել բանասացին:

Բանասացի հետ աշխատելու ժամանակացույցի սահմանումը: Ժամադրումը և օրվա աշխատանքի տևողության սահմանված կարգը պետք է լինեն անխախտ, որտեղ լինի՝ բանահավաքի մոտ, փողոցում, թե բանասացի տանը: Նրա հոգնածությունը նկատելիս անհապաղ պետք է ընդմիջում տալ, որպեսզի իր ուզած ձևով հանգստանա: Յուրաքանչյուր բանասացի հետ պետք է հանդիպել օրվա ընթացքում մինչև վեց ժամ՝ երեքը՝ առավոտյան, երեքը՝ երեկոյան: Երեք ժամից ավելին հոգնեցուցիչ է թե՛ բանահավաքի և թե՛ բանասացի համար: Բացի դրանից՝ բանահավաքը պարտավոր է առավոտյան և երեկոյան գրի առած նյութերը վերամշակել թարմ տպավորությունների տակ, այլապես կմոռացվեն շատ տարրեր: Ցանկալի չէ ժամանակը վատնել սոցիալական տարբեր ցանցերում, կայքերում, ազատ պահերին կարելի է հանգստանալ արշավախմբի անդամին վայել խաղերով, օրինակ՝ շախմատ խաղալով: Գիշերը, ժամը 24-ից հետո, պետք է քնել, իսկ առավոտյան՝ նախաճաշից հետո, շարունակել գրանցումները:

Գործուղվող անձինք պետք է ունենան իրենց տնտեսությունը, խոհանոցը (շարժական կամ մնայուն), կացության վայրը, քնապարկերը, գրենական պիտույքները, ձայնագրման,

լուսանկարման, տեսանկարահանման սարքերը, տեխնիկական անհրաժեշտ միջոցները:

Ցանկալի կլինի, որ գրանցման տետրը կամ նոթատետրը լինի ծավալուն, հաստ կազմով: Գրանցումը ցանկալի կլինի կատարել գնդիկավոր գրիչով, որ գրվածը խոնավության պայմաններում չփչանա: Նաև պետք է ունենալ պլանշետ՝ գծագրական վատման, կալկա՝ պատճենահանման համար, գունավոր և գծագրական մատիտներ և այլ պարագաներ: Ֆոտոապարատը պիտի լինի ազգագրագետի անբաժան ուղեկիցը: Լուսանկարը դիտվում է իբրև նյութական առարկա, որովհետև այն արտացոլում է առարկայի անաղարտ պատկերը: Խիստ անհրաժեշտ է կինոնկարահանման սարքը, քանզի այն լիարժեք վերարտադրում է մարդկային շարժումը, աշխատանքային գործընթացները և կենդանություն է հաղորդում ուսումնասիրվող նյութերին: Նույնը վերաբերում է ձայնագրիչ սարքին, որը բանահյուսության-բանահավաքչության համար ամենօրյա գործածման միջոց է: Իհարկե, մեր օրերում այս ամենը հնարավոր է անել հեռախոսի որևէ կոճակ սեղմելով, սակայն, կրկնում ենք՝ պետք չէ վստահել միայն հեռախոսին: Ցանկալի է՝ նկարն անմիջապես արտատպել: Հեռախոսով արված նկարը կամ տեսահոլովակը հուսալի է պահպանել մի քանի տեղ, օրինակ՝ կրիչ, համակարգիչ և այլն: Հարսանիքը, նրա երգերը, «հալավօրհնեքը» կամ կրոնական ծեսերը, աղոթքները, սեղանապետի բաժակաճառերը, քավորի խոսքը, փեսայի պատասխանը և այլն անմիջապես գրանցելու հարմար միջոցներ են: Որոշ բանասացներ ոգևորվում են տեխնիկական միջոցներից, այնուամենայնիվ պետք է զգույշ լինել, որ ձայնագրիչը ոմանց հակառակ արձագանքը չառաջացնի. պետք է սկզբում թույլտվություն վերցնել կամ աննկատ տեսա-

ձայնագրել: Եվ վերջապես, ազգագրագետ-բանահավաքի հագուստը պետք է լինի համեստ, ժողովրդի և ժամանակի բարքերին համապատասխան այնպես, որ բանասացին բանահավաքը պատկառանք ներշնչի նաև իր հագուկապով:

Բանահավաք-ազգագրագետը պետք է ունենա աշխատանքային օրագիր, որում գրանցվելու են օրվա անցուդարձերը: Խորհուրդ է տրվում ունենալու անձնական օրագիր:

Գրանցման եղանակները: Գրանցվում են անխտիր բոլոր նյութերը, բայց տարբերում են էականը ոչ էականից: Պատահականորեն լսված ամեն մի ազգագրական երևույթ, ասույթ, ժողովրդական իմաստնություն տեղում անպայման պետք է ամրագրել ծոցատետրում՝ հետագայում իր մնայուն տեղում գրանցելու համար: Եթե անշարժ իրեր են նկարագրվում, ապա անխուսափելի է դրանք իրականացնել տեղում, իսկ եթե դաշտային գյուղատնտեսական աշխատանքներին են վերաբերում, ապա այն հաջողությամբ կպսակվի, եթե գրառողը նույնպես մտնի աշխատանքային այս կամ այն դերի մեջ և զուգահեռ հարցումներն ուղղի:

Ցանկալի է, որ բանասացները լինեն 2-3 հոգի: Եթե բանասացը հմուտ է, լավ հիշողությամբ է օժտված, կարելի է նրան միանգամայն վստահել: Առարկան նկարագրելիս չպետք է կիսատ թողնել: Օրինակ՝ հարսանեկան արարողակարգը գրառելիս չի կարելի կեսը գրառել մի գյուղում, մյուս կեսը՝ հաջորդ գյուղում: Պետք է երևույթը ամբողջապես նկարագրել, ավարտին հասցնել:

Բանահավաքը պետք է ունենա առանձին թեմաներին հատկացվող տետրեր, մաքրագրության մատյաններ, գրպանի ծոցատետր և մատիտ՝ անմիջապես գրանցելու պատահական արտահայտություններն ու նյութերը, որոնք նույնիսկ ամենա-

փորձառու հարցարանագետների մտքով չեն անցնում: Գրանցման ժամանակ ծագող կողմնակի հարցերը պետք է անմիջապես մտցնել հարցարանի մեջ: Օրինակ՝ Կոմիտասը հորովելի երգը գրի է առել վարի ժամանակ, որովհետև վառ երևակայություն է առաջացնում այս կամ այն պահը:

Գրանցման ժամանակ տվյալ ազգագրական շրջանում չի կարելի անտեսել եկվոր տարրերի համապատասխան նյութերը: Այսպես, օրինակ, Արարատյան հովտում սովորաբար հարսնառը հարս բերելու էր գնում իր հարսնևորներով, մինչդեռ նույն հովտում XX հարյուրամյակից ապրող վասպուրականցիները «խարսի խուր» էին գնում զույգ կոպալներով, որովհետև աղջկա գյուղում նման կոպալներով նրանց դիմագրավում էին աղջկա համագյուղացիները և «ճակատամարտում» գավազաններով: Այս լրացուցիչ նյութերը չպետք է խառնել գրանցվող հիմնական նյութին, այլ զետեղել տողատակում:

Մի հանգամանք ևս. ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է տարբերակել միատարր բնակիչներով բնակավայրերը էթնիկապես խառը բնակեցված բնակավայրերից, որտեղ ապրում են տարբեր ժողովուրդներ: Հայաստանում խառը բնակեցված բնակավայրերը հազվադեպ են, բայց կան և պետք է հաշվի առնվեն, որովհետև անխուսափելիորեն առաջանում են տարբեր էթնիկ խմբերի փոխադարձ ազդեցություններ: Այսպես, օրինակ, մինչև Արցախյան շարժումը հայերի հետ խառը բնակվում էին ռուսներ, ադրբեջանցիներ, քրդեր: Ռուսներն այստեղ օգտագործել են հայկական ծանր գութանը, որին լծել են ձիեր, կալսիչ գործիք **կամը** և այլ գործիքներ ու միջոցներ: Նրանք սովորել են **կունարկ** (պասմա) պատրաստել և աթար կտրել, իսկ փարախում տարթ կտրել՝ իբրև վառելիք: Հայերը

նրանցից սովորել են նորաձև և թեթև տներ կառուցել, լծել ֆուրգոն և թխել բոքոն հաց՝ մոռանալով ազգային լավաշը: Խոսքը փռի բոքոնի մասին է: Կամ՝ ադրբեջանցիները հայերից են սովորել երկրագործությունը, տնաշինությունը, իսկ իրենք հայերի վրա ազդել են անասնապահության գծով: Ներկայումս այդպիսի խառը էթնիկ միջավայր են ասորիներով, եզդիներով բնակեցված հայկական որոշ բնակավայրեր: Այդ փոխադարձ ազդեցությունները հաշվի չառնելը բանահավաքին կարող է մոլորության մեջ գցել, մի էթնիկ խմբի սովորություններն ու նյութական մշակույթը վերագրել մյուսին: Օրինակ՝ ուսումնասիրելով Լոռու XIX դարից մնացած կառույցները՝ չի կարելի անտեսել, բացառել ռուսական շինարարության ավանդները, որոնց ազդեցությամբ ամբողջ Լոռին ունեցավ կղմինդրածածկ երկթեք կտուրներ:

Բացի սովորական հարցարանային մեթոդով գրանցումներ կատարելուց՝ կա նաև հարցաթերթիկային գրանցման մեթոդ, որը կոչվում է անկետային եղանակ: Հարցաթերթիկն այսօր կարելի է տարածել համացանցով, ստանալ պատասխաններ, սակայն հաշվի առնելով, որ հատկապես տարիքով մարդկանց մի մասին համացանցը դեռ հասու չէ, հարցաթերթիկները, ինչպես անցյալում, կարելի է ուղարկել գյուղեր, ուսումնական հաստատություններ՝ լրացնելու և պատասխանելու: Հարցաթերթիկում բարդ և ավելորդ հարցեր չի կարելի առաջադրել: Ամեն ինչ պարզ և լակոնիկ պետք է լինի, որպեսզի բանահավաքչական փորձ չունեցողը կարողանա հստակ պատկերացում կազմելով պատասխանել: Բայց ազգագրագետ-բանահավաքը անտարբերություն չպետք է ցուցաբերի ենթահարցերի, «մանրուք» թվացող երևույթների նկատմամբ, այ-

լապես գիտակցաբար կորստյան կմատնվեն հարյուրավոր երևույթներ, որոնք գիտության համար շատ անհրաժեշտ են:

Հարցաթերթիկը ազգագրագետը պետք է կազմի գործուղումից առաջ: Հարցաթերթիկներում նախապես արդեն ուսումնասիրված թեման նոր նյութերով է լրացվում, հետևապես դրանք պետք է կրեն թեմատիկ բնույթ, որպեսզի իրար չխառնվեն:

Անկետային գրանցումը իրականացվում է հատկապես թեմայի պատմականությունը վավերացնելու նպատակով: Սակայն հարցաթերթիկով հետազոտությունը ազգագրագետին չի կարող լիովին բավարարել, եթե այն վիճակագրական տեղեկություն է պարունակում լոկ անցյալի կամ լոկ կենցաղի մասին: Լավ կլինի, որ պատմական զարգացումը կամ ընթացքը լիարժեք տեսնելու համար ժամանակները ներկայացնեն ըստ պատշաճի, ընդ որում՝ հարցաթերթիկներից մեկը նվիրվի անցյալին, մեկ ուրիշը՝ ներկային: Հարցաթերթիկային ուսումնասիրությունը առանձնապես կիրառելի է մեր նոր կենցաղը ուսումնասիրելու համար, որովհետև ավանդական կենցաղը անընդհատ տեղի է տալիս, և նոր երևույթներ են հանդես գալիս, իսկ ազգագրությունը պարտավոր է այդ փոփոխությունները հաստատագրել և հանձնել պատմությանը:

Դաշտային ազգագրական հետազոտությունները իրականացվում են անձնական դիտարկումների, բանասացի հետ հարցազրույցների, ազգագրական արժեքավոր հավաքածուների գրանցման եղանակով: Անձնական դիտարկումների ժամանակ օրագրերում գրանցվում են այն նյութերը, որոնք նախատեսված չեն եղել դիտարկողի կողմից, բայց կարող են լինել չափազանց օգտակար ազգագրական բացահայտումներ: Օրագրում նշվում են երթուղին, շրջակա բնական պայմաննե-

ը, բնակչության **դիմավորման** կարգը, բնակչության բնավորությունը, վարքի տարբեր դրսևորումները և այլն: Օրագրերում կարող է նշվել նաև հետազոտողի նախնական եզրակացությունն այս կամ այն երևույթի վերաբերյալ: Օրագրային գրառումներ կատարելիս կարևոր է ունենալ սուր դիտողականություն և արագ կողմնորոշվելու ունակություն:

Արշավախմբի անդամները պետք է պատկերացում ունենան մեկնման վայրի մասին, ծանոթ լինեն գրականության մեջ եղած տվյալներին և պատմությանը, որպեսզի նախ տեղի բնակչությունը հարգանքով վերաբերվի իրենց և պատրաստ լինի տեղեկատվություն տրամադրել, ապա հոգատարությամբ ու նրբանկատորեն շփվեն բանասացների հետ: Կարևոր է նաև հիմնական թեմաների նախօրոք մշակումը և դրանց վերաբերյալ հարցարանների կազմումը: Հետազոտվող հիմնախնդրի հարցերը համարակալվում են ըստ նյութի հաջորդականության՝ գրառվող նյութի մշակումը հեշտացնելու համար: Հարցարանի մակարդակով են պայմանավորված գրառվող նյութի խորությունը և տեղեկատվության բազմազանությունը: Նյութեր գրառողը պետք է կարողանա հմտորեն օգտվել գիտական ուղեցույցից՝ բանասացներից քաղելով ամբողջ նյութը, նույնիսկ արտաքուստ մանրուք թվացող տվյալները: Նյութի գրառման հաջողությունը և գիտականության ապահովումը պայմանավորված են նաև երթուղու, բնակավայրերի ճիշտ ընտրությամբ: Գրառումը պետք է նախատեսվի այն սկզբունքով, որն առավել ամբողջական կարտահայտի տարածաշրջանի բնակչության ընդհանրական պատկերը:

Աշխատանքը բանասացի հետ: Դաշտային ազգագրական նյութերի գրառման հիմքը աշխատանքն է բանասացի հետ: Տեղ հասնելուց հետո արշավախումբը պետք է հանդիպի տե-

ղական մարմինների հետ, ներկայացնի արշավախմբի նպատակն ու թեմատիկան: Ազգագրագետը տեղական մարմինների (գյուղապետարան, դպրոց և այլն) երաշխավորությամբ պետք է ընտրի առավել բանիմաց, աշխույժ, սուր հիշողությամբ բանասացների: Տեղական մարմինները պետք է տեղեկացված լինեն արշավախմբի նպատակների, հարցումների բովանդակության մասին, որպեսզի օգնեն բանասացներին ճիշտ ընտրություն կատարել: Գյուղապետարանը, դպրոցի աշխատակիցները բավականաչափ տեղեկացված են տեղի պայմաններին, մարդկանց, կարող են ազգագրագետին խորհրդատու լինել բանասացի ընտրության և շատ այլ հարցերում: Ազգագրագետը պարտավոր է կազմել բանասացների ցուցակ, գրանցել նրանց համառոտ բնութագրերը՝ նշելով տարիքը, ծննդյան վայրը, տվյալ բնակավայրում նրա բնակվելու ժամանակի տևողությունը, տեղացի կամ եկվոր լինելը, մասնագիտությունը, սոցիալական վիճակը: Այս կամ այն թեմայի վերաբերյալ հարցերին պատասխանելիս մարդիկ տալիս են անուններ, որոնք կարող են հաստատել նրանց հաղորդածը կամ լրացուցիչ տվյալներ հայտնել: Առաջանում է անհրաժեշտություն բանասացներին երկու խմբի բաժանելու՝ 1. բանասացներ, որոնք կարող են առավել կարևոր տեղեկություններ տալ և պետք է հարցման ենթարկվեն սկզբում, 2. մարդիկ, որոնք հաստատում են գրառված նյութերի ճշմարտացիությունը:

Բանասացի հետ աշխատանքը սկսվում է այցի նպատակը բացատրելուց: Որքան ճիշտ ըմբռնի վերջինիս հարցման նպատակը, և իրենից ի՞նչ է պահանջվում, ու ինչի՞ մասին ինքը պետք է պատմի, այնքան բովանդակալից և արդյունավետ կլինի նրա տեղեկատվությունը: Հարցազրույցը չպետք է վերածել հարցաքննության: Որքան ազատ պատմի բանասացը, այնքան

շատ տեղեկություններ կհաղորդի, այդ թվում՝ նաև տեղեկություններ, որոնք նախօրոք ծրագրված չէին: Բանասացին հարցերը պետք է ուղղել ըստ նախօրոք կազմված հերթականության, չպետք է ընդհատել նրան, հարցերը չպետք է ենթադրեն «այո» կամ «ոչ» պատասխանները, այլ պիտի հնարավորություն տրվի ծավալվելու: Պետք է խուսափել գրական լեզվով խոսելուց. առավել շատ նախապատվություն պետք է տրվի տվյալ տարածքի բարբառային որոշակի բառերին ու բառակապակցություններին: Առհասարակ բանասացի հետ զրույցը պետք է լինի կենդանի ու ակտիվ, չնմանվի զուտ հարց ու պատասխանի: Բանասացը պետք է զգա, որ իր պատմած նյութերը իսկապես կարևոր են ու հետաքրքիր ազգագրագետի համար: Պետք է ստեղծվի փոխադարձ վստահության դաշտ, որպեսզի ազգագրագետը բանասացից ստանա առավելագույնս հավաստի ու հագեցած տեղեկատվություն: Բանասացի հետ աշխատանքը ԴԱՆ-ի գրառման ամենաբարդ խնդիրներից մեկն է: Ուստի գրանցված նյութերի արժանահավատ ու իրականին առավել մոտ լինելը շատ հաճախ կախված է հենց բանասացի հետ ճիշտ աշխատանքից:

Ազգագրական հարցարանից օգտվելու կարգը: Ազգագրական հարցարանը բանահավաքի հոգևոր զենքն է, որին նա պետք է նախապես լիակատար տիրապետի:

Հարցաշարը պետք է վաղօրոք ծրագրել մտքում կամ գրառել թղթի վրա՝ հույսը չկապելով բանասացի ինքնագործունեության հետ: Լավագույնը տվյալ թեմայի բոլոր հարցերը հիշելն է, ինչպես դերասանը իր դերն է հիշում, որպեսզի բանասացների հետ զրույցն անկաշկանդ ընթանա, և պատմողի ու գրառողի միջև անհարմարության ու անհամաձայնության պահեր չառաջանան, վեճեր չծագեն (հակառակ դեպքում

պետք է անմիջապես դադարեցնել գրառումը): Եթե հնարավոր չէ հիշել տվյալ թեմայի բոլոր հարցերը, գոնե օրվա գրանցելիք նյութերի հարցերը պետք է արտագրել հատուկ թղթերի վրա և փռել սեղանին այնպես, որ բանասացը չզգա, թե անկետային հարցեր եք տալիս:

Ազգագրական հարցարանի հարցերը չի կարելի թողնել նույն քանակությամբ, որովհետև ամեն բան չէ, որ հեղինակը առաջարկել է հարցարանում:

Զրույցի ժամանակ ազգագրագետը պետք է հնարամտորեն ուղղորդի բանասացին, հիմնական նյութից շեղվելու դեպքում զգուշորեն ու անուղղակիորեն վերադարձնի բուն թեմային, բայց չի կարելի կտրուկ ընդհատել բանասացին, հակառակ պարագայում զրույցը կկորցնի իր հետաքրքրությունը, պատասխանները կլինեն թույլ և կցկտուր: Ազգագրագետը հարցման ժամանակ չպետք է ցույց տա, որ ինքն արդեն գիտի այդ հարցի պատասխանը, հակառակ դեպքում զրույցը կդառնա ոչ միայն անհետաքրքիր, այլև ոչ նպատակային: Հաճախ բանասացի հետ զրույցին կարող են միանալ հարևանները, մտերիմները, հյուրերը: Եթե կոլեկտիվ զրույցը նպաստում է ընդհանուր նպատակին, ազգագրագետը պետք է քաջալերի դա: Երբեմն զրուցակիցները համաձայնության չեն գալիս այս կամ այն հարցի շուրջ. այդ դեպքում ազգագրագետը պետք է բացահայտի տարաձայնության պատճառը և որոշի, թե որ զրուցակիցն է իրավացի[350]: Այդ բոլոր խոսակցությունների բո-

[350] Գիտարշավների ընթացքում մեր օրերում լայնորեն կիրառվում է նաև, այսպես կոչված, «ֆոկուս-խմբային» հարցման մեթոդը (մոտավորապես ութ հոգու հետ միաժամանակ հարցումն անցկացնում են մոդերատորը և նրա տեխնիկական օգնականը):

վանդակությունը համառոտ կամ ծածկագրված պետք է գրառի տետրում, գաղտնի ձայնագրի կամ տեսագրի:

Եթե բանասացը աշխույժ է և լավ հիշողություն ունի, ազգագրական նյութից բացի՝ լավ կլինի, որ գրի առնի նաև բանահյուսական նյութեր՝ հեքիաթներ, առակներ, ասացվածքներ, աշխատանքային երգեր, վիճակի, պարի, պանդխտության երգեր, հանելուկներ, օրհնանքներ, գովքեր, անեծքներ: Անհրաժեշտ է գիտենալ, որ գրի առնվելիք նյութը անպայման պահպանելու է պատմողի, երգողի լեզվական, բարբառային առանձնահատկությունները: Առանց բարբառի նրբությունները պահպանելու բանահյուսությունը իր արժեքը կորցնում է:

Որքան էլ համոզիչ թվա գրառվածը, անհրաժեշտ է այն ճշգրտել և համեմատել այլ բանասացների տվյալների հետ:

Նյութերի գրառումն ավելի արդյունավետ կլինի իրականացնել երկու հոգով, երբ մեկը հարցնի, մյուսը գրի: Հնարավոր է, որ բանասացը շփոթվի կամ խուսափի պատասխանից գրառման ընթացքում, այդ դեպքում պետք է դադարեցվի գրառումը, և նյութը թղթին հանձնվի հիշողությամբ զրույցի անմիջական ավարտից հետո:

Ազգագրագետը, բացի բանասացի պատմածները գրառելուց, ձայնագրելուց, գրանցում, գծագրում, լուսանկարում կամ պատճենահանում (արտանկարում) է նյութական մշակույթի այս կամ այն տարրը, որը թանգարանային արժեք է ներկայացնում: Խորհուրդ է տրվում հավաքելու կամ գնելու ազգային մշակույթի ուշագրավ առարկաները, հատկապես այն հավաքածուները, որոնք դուրս են մնացել կենցաղային կիրառությունից կամ էլ չկան թանգարաններում: Ազգագրագետը պարտավոր է յուրաքանչյուր իրի համար կազմել մանրամասն բնութագիր՝ ձեռքբերման վայրը, ամիս-ամսաթիվը, ո՞ւմ է պատկանել, իրը ստեղծողի

և այն գործածած մարդկանց անունները, տարիքը, ստեղծման ժամանակը և վայրը, իրի անվանումը, բնորոշ նշանները, ստեղծման նպատակը, օգտագործման նպատակը և ձևը:

Համընդհանուր և համակարգված հետազոտություն անցկացնելու համար ցանկալի կլինի նաև առանձին հիմնահարցերի վերաբերյալ ստեղծել տարբեր տիպի անկետաներ, որոնք կարող է լրացնել ազգագրագետ-բանահավաքը կամ հանձնել տեղական բնակչությանը՝ ինքնուրույն լրացնելու համար, կամ տարածել սոցիալական ցանցերում: Հարցերի քանակը անկետաներում չի սահմանափակվում, բայց ընտրվում են կարևորները: Դրանցով կարելի է ստանալ զանգվածային նյութեր՝ ավելի մեծ տարածաշրջաններ ընդգրկելով: Կարելի է անել նաև բացահայտումներ ուսումնասիրվող խմբի կամ տարածքի ազգագրական պատկերի առանձնահատկությունների և օրինաչափությունների վերաբերյալ: Դաշտային ազգագրական նյութերի գրառումը պահանջում է հմտություն, ազգագրական նյութի խոր իմացություն, որպեսզի բնակչությունից գրառված նյութը մշակվի անաղարտությամբ և գիտական բարեխղճությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անվանի ազգագրագետ Ս. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» հրատարակությունից անցել է շուրջ 70 տարի, և այսօր այն գրեթե սպառված է և նաև այն, որ մի շարք հումանիտար բուհերում անցնում են «Հայ ազգագրություն» առարկան, իսկ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ազգագրությամբ մասնագիտացող մագիստրոսները, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետա-

կան համալսարանների պատմության ֆակուլտետների առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները անցնում են «Հայոց կենսապահովման մշակույթը» և «Հայ ազգագրություն», իսկ ավարտական կուրսերի ուսանողները՝ «Հայոց սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթը» հատուկ դասընթացները, հույժ անհրաժեշտություն է առաջացել կազմելու ավելի համապարփակ հարցարան՝ դասընթացները ընդգրկող թեմաների վերաբերյալ:

Մեր կողմից կազմվել է ազգագրական հարցարան, որը վերաբերում է հայոց ավանդական և ժամանակակից ընտանեստիպերին (գերդաստան, փոքր ընտանիք), ներընտանեկան հարաբերություններին և ընտանեկան վարվելակարգին, ամուսնահարսանեկան սովորույթներին ու ծեսերին, մանկան ծննդին, խնամքին և դաստիարակությանն առնչվող սովորույթներին ու ծեսերին, հիվանդությունների բուժման ժողովրդական եղանակներին ու հմտություններին, մահվան և հուղարկավորման ավանդական ու ժամանակակից սովորույթներին ու ծեսերին, ազգակցական, համայնքային և դրացիական հարաբերություններին: Նման թեմատիկ ընդգրկմամբ հարցարանի հրատարակությունը կարևորվում է նաև նրանով, որ առկա և հեռակա ուսանողությունը, ասպիրանտները հնարավորություն են ունենում օգտվելու հարցարանից ռեֆերատներ, ավարտական աշխատանքներ և մագիստրական թեզեր ու գիտական աշխատանքներ գրելիս: Եվ վերջապես, այն կարող է օգտակար լինել ազգագրությամբ զբաղվողներին, հայրենի բնակավայրերի, շրջանների պատմությամբ և մշակույթով հետաքրքրվող մտավորականությանը:

Հարցարանը կազմելիս ուղեցույց է հանդիսացել Ս. Լիսիսցյանի «Ազգագրական հարցարանը» (Երևան, 1946): Օգտվել ենք

նաև Գ. Խալաթյանի[351], Ս. Զելինսկու[352] և մեր կազմած ու հրատարակած ծրագրերից, որոնք տրված են գրականության ցանկում:

Նպատակահարմար կլինի նաև ձեռքի տակ ունենալ համաշխարհային ազգագրության մեջ գործածված ազգագրական նյութերի գրառման մի քանի ծրագիր-հարցարաններ[353].

---

[351] Տե՛ս **Գ. Խալաթյան,** Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887:

[352] Տե՛ս **Ս. Զելինսկի,** Ծրագիր տղաբերքի և նորածին մանկան ֆիզիկական դաստիարակության մասին նյութեր հավաքելու // ԱՀ, գիրք Գ, № 1, Թիֆլիս, 1898, էջ 73-79, **նույնի՝** Ծրագիր հիվանդության և բժշկության մասին նյութեր հավաքելու համար, ԱՀ, գիրք Դ, № 2, Թիֆլիս, 1897, էջ 97-106:

[353] Տե՛ս **В. В. Бардавелидзе,** Духовное бытие и культура грузинского народа. Программа вопросников, Тбилиси, 1988, **В. Н. Басилов,** Вопросник для сбора материалов по земледельческой и скотоводческой обрядности, Региональное совещание по вопросам подготовки историко-этнографического атласа Средней Азии и Казахстана. Методические материалы, Москва-Ленинград, 1967, **И. Н. Винников,** Программа для собирания материала по системе родства и свойства, Москва-Ленинград, 1936, **Л. Н. Виноградов,** Программа для сбора фольклорных и этнографических материалов по святочному циклу обрядов, Зимняя календарная поэзия западных и восточных славян. Генезис и типология колодования, Москва, 1982, Домашняя утварь, кушанья и напитки, Программа-вопросник для сбора этнографических материалов. Чебоксары, 1984, **Н. И. Лебедева,** К методике полевой работы по постройкам, Крестьянские постройки, Москва, 1929, Поселение. Программа для сбора этнографического материала. Чебоксары, 1974, Программа-вопросник. Свадебные обряды, Свадебный обряд и его поэзия, Киров, 1984, Программа для сбора этнографических материалов. Сост. Абрамзон С. М., Фрунзе, 1946, Программа и вопросник по духовной культуре для участников этнографических практик, Омск, 1978. Программы и вопросник по материальной культуре, Омск, 1978, Программа этнографического изучения города. (Проект). **М. Г. Рабинович, М. Н. Шмелева,** К этнографическому изучению города // СЭ, 1981, № 3, Ремесла. Неземледельческие занятия. Программа-вопросник для сбора этнографического материала. Чебоксары, 1984, Сельские жилища и хозяйственные постройки. Программа-вопросник для сбора этнографического материала. Чебоксары, 1984, Сельскохозяйственные орудия и постройки для первичной, обработки и хранения зерна (Программа-вопросник сбора материала), 1969,

7.2. Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից

Ազգագրական գիտության հիմնական աղբյուրագիտական հիմքը դաշտային ազգագրական և բանահյուսական գրառված նյութերն են: Բանասացներից ազգագրական նյութեր և ժողովրդական բանավոր ստեղծագործություններ (բանահյուսություն) գրառելը անվանվել է բանահավաքչություն: Բանահավաքչության սկիզբը դրել են հայ մշակույթի երախտավորները՝ Մովսես Խորենացին, Խաչատուր Աբովյանը, Մինաս Բժշկյանը, Գարեգին Սրվանձտյանցը, Սահակ Մովսիսյանը (Բենսե), Երվանդ Լալայանը և ուրիշներ: Բանահյուսությունը և ազգագրությունը՝ իբրև գիտական առանձին ուղղություններ, սկսել են գործել դեռևս XX դարի սկզբներին, իսկ ՀՍՍՀ ԳԱ համակարգում՝ 1959 թվականից հնագիտության և ազգագրության ինստիտուտի ստեղծմամբ[354]:

Բանահավաքը, լինի ազգագրագետ թե բանագետ, այսօր էլ իրեն իրավունք չպիտի վերապահի մնալու լոկ մեկ կամ մյուս մասնագիտական ոլորտի նեղ մասնագետ, այլ հավասարապես պետք է նվիրվի երկուսին էլ, որովհետև առանց մեկի չի կարող լինել մյուսը: Այսպես, հարսանիքը, ինչպես նաև ցանկացած այլ տոնահանդես առանց երգերի ու երաժշտության անհնարին է պատկերացնել: XVIII-XIX դարերում, երբ

Учсатникам этнографических экспедиций по собиранию и изучению народных игр. Методические рекомендации, Москва, 1976, Этнографический вопросник. Сост.: Строгальщикова Р. И., Петрозаводск, 1983. **К. К. Логинов**, Сборник полевых этнографических опросников: Учебно-методическое пособие, Под ред. А. Г. Новожилова, СПб., 2007:

[354] Տե՛ս **Ս. Հարությունյան,** Բանագիտություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 916-917:

դեռևս ազգագրագետներ և բանահավաքներ չկային, մեծ քանակությամբ ազգագրական տվյալներ են գրառել ճանապարհորդները, զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ժողովուրդներին հետազոտողները, աշխարհագրագետները, որոնք այսօր հսկայական նշանակություն ունեն ազգագրության հետազոտման տեսանկյունից, քանի որ այդ նյութերը մեծածավալ տեղեկատվություն են պարունակում առանձին ժողովուրդների մշակույթների ու կենցաղի վերաբերյալ: Մինչև ազգագրական գիտության ձևավորումը բանահավաքներ պատրաստելու միտում չի եղել, բայց խրախուսվել է, որ նշանավոր ճանապարհորդները աշխարհագրության և տնտեսության շահագրգիռ հարցերի հետ նշանակալի չափով գրանցեին ժողովուրդների մշակույթի ու կենցաղի վերաբերյալ տվյալներ:

Ազգագրական նյութերը XVIII-XIX դարերում տարերայնորեն էին գրանցվում հետևյալ պատճառներով. 1) զուտ մշակութային հետաքրքրություններից ելնելով, իսկ ազգագրությունը դիտվում էր իբրև ուղեկցող երևույթ: 2) Օտար բանահավաքները գրանցում էին կրոնական, ռազմաքաղաքական երևույթները առանց նախապես մշակված ծրագրերի: 3) Ուղևոր բանահավաքների զուտ մշակութային, երկրագիտական և նվաճողական քաղաքական նպատակները: Այնուամենայնիվ, XIX դարի սկզբին տարերայնորեն գրի առնված բանահավաքչական նյութերը անգնահատելի հարստություն են ազգագրության համար: Այդ նյութերի հիման վրա բացահայտվեցին գիտությանը անհայտ ցեղեր ու ժողովուրդներ, և նկարագրվեցին նրանց կենցաղն ու մշակույթները: Բացասականը այդ ժողովուրդներին գաղութացնելն էր, նրանց լոկալ (տեղական) մշակույթների բնական զարգացումը խաթարելը

կամ ընդհատելը: Այս տեսանկյունից նշանակալից էր Եվրոպան՝ իր ուղևորներով և միսիոներներով:

Չափազանց մեծ նշանակություն ունեին Հին աշխարհի պատմագիրների և աշխարհագիրների գրի առած ազգագրական նյութերը: Նշանավոր հետազոտողներից էին Հերոդոտոսը, Քսենոփոնը, Ստրաբոնը, Տակիտոսը և ուրիշներ, որոնց ազգագրական տեղեկությունները եզակի են[355]: Տարերային բանահավաքներ էին նաև հայոց միջնադարյան պատմագիրները, որոնց պատմագրական ուսումնասիրություններում մեծ քանակությամբ ազգագրական նյութեր են կուտակված (Մովսես Խորենացի, Եզնիկ Կողբացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ[356], Ղազար Փարպեցի, Հովհան Մամիկոնյան և ուրիշ-

---

[355] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին // «Կրթությունը և գիտությունը Արցախում», Գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար, հիմնադիր՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, 2009, թիվ 3-4, էջ 204-209, **նույնի**՝ Քսենոփոնի ազգագրական տեղեկությունները հայերի մասին // Տարեգիրք Դ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, ԵՊՀ, հրատ., Երևան, 2009, էջ 298-309, **նույնի**՝ Գայոս Կոռնելիոս Տակիտոսի ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին // Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված ժողովածու, ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտական աշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 293-295:

[356] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ընտանեկան իրավունքը ըստ վաղմիջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների // Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 34-41, **նույնի**՝ Հայ ազգագրական տեղեկությունները ըստ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., Բ, 2011, էջ 251-271, **նույնի**՝ Առաքել Դավրիժեցու տեղեկությունները հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և հայկական տեղանունների մասին // «Ակունք» (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, 2011, № 1, էջ 9-18, **նույնի**՝ Ազգագրական

ներ): Պակաս ուշագրավ չեն նաև միջնադարյան արաբ և եվրոպացի ուղեգրողների հաղորդած տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին[357]: 2012 թ. հրատարակվեց ազգագրագետ Ա. Պետրոսյանի «Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր» գիրքը, որում գնահատվում են XIX-XX դարերի հայ գրողներից մի քանիսի երկերի ազգագրական նյութերի բացառիկ արժեքավոր լինելը, գրականության որպես ազգագրական գիտության հիմնարար սկզբնաղբյուր ծառայելը, որը, ցավոք, ամբողջությամբ նույնպես դուրս է մնացել ազգագրագետների ուշադրությունից: Ա. Պետրոսյանի սույն գիրքը մի փորձ է այդ բացը որոշ չափով լրացնելու առումով: Բայց խոստովանենք, որ վերը նշված հաղորդումները ամբողջական և թեմատիկ չեն, այլ իրոք տարերային գրանցումներ, որոնք գիտնականից պահանջում են լարված աշխատանք, որպեսզի ըստ դարաշրջանների թեմաները դասակարգվեն և ներկայացվեն ամբողջական տեսքով [358]:

Ամբողջ միջնադարը այս նույն բնութագիրն ուներ, տարե-

տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013:

[357] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Արաբ մատենագիրների ազգագրական տեղեկությունները հայերի մասին (Թ-ԺԳ դդ.) // «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, թիվ 3-4 (մարտ-ապրիլ), 2009, էջ 78-86, **նույնի՝** Միջնադարյան Հայաստանի գործվածքեղենը արաբ և եվրոպացի ճանապարհորդների գնահատմամբ (IX-XV) // «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), 3, 2014, ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 438-452:

[358] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Դաշտային ազգագրական հետազոտությունները իբրև ազգագրական գիտության հիմնական սկզբնաղբյուր // Ժողովածու Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, II պրակ, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2019, էջ 372-376:

բայնությունը հաղթահարվեց XIX դարի առաջին կեսին Եվրոպայում կրթություն ստացած հայորդիների ջանքերով: Նշանակալից դեր խաղացին հայկական գաղթօջախները, ինչպես Մխիթարյան միաբանությունը Վենետիկում: Այստեղ առաջին գիտական ազգագրությամբ զբաղվողը Ղուկաս Ինճիճյանն էր, որին հետևեց Մինաս Բժշկյանը՝ որպես առաջին և խանդավառ հայ բանահավաք: Վերջինս XIX դարի սկզբին մեծ քանակությամբ ազգագրական նյութ գրի առավ: Բանահավաքչական գործի կազմակերպման առումով մասնավորապես նշանավոր էին երկու հայրենասեր գործիչներ՝ Խ. Աբովյանը (1809-1848) և Մ. Բժշկյանը (1777-1851), որոնք նշանակալի դեր խաղացին ազգագրությունը և բանագիտությունը տարերքից դեպի գիտության ուղին մղելու տեսանկյունից, նպատակային ուսումնասիրություններ կատարելու համար դաշտային ազգագրական-բանահյուսական նյութեր գրառելու սկիզբը դրեցին, որոնց հիման վրա կատարեցին հետազոտություններ: Նրանք բանահավաքչական գործի իսկական հիմնադիրներ էին, որ հաղթահարեցին տարերային բանահավաքչությունը և օրինակ հանդիսացան հետագա ազգագիրների համար: Դաշտային բանահավաքչական-ազգագրական նյութերի հիման վրա գրված գործերից են Մ. Բժշկյանի «Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով...» (Վենետիկ, 1819), «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան...» (Վենետիկ, 1830)[359], Խ. Աբովյանի «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին», «Գյուղական տների կառուցվածքը», «Քրդեր և եզդիներ», «Ակնարկ քրդերի ծագման,

[359] Տե՛ս **Նահապետյան Ռ.,** Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // «Պատմաբանասիրական հանդես», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2011, № 3, էջ 132-148:

ազգային հատկանիշների, լեզվի, բարքերի ու սովորությունների մասին», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Ռուսական իջևանատների մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը» և այլն: Բացի վերոնշյալ զուտ ազգագրական բնույթի աշխատություններից՝ մեծ քանակությամբ ազգագրական նյութեր են սփռված Խ. Աբովյանի գեղարվեստական երկերում[360]:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը մենք գտնում ենք նաև XIX դարի առաջին կեսի մամուլում: Բանահավաքները հանուն ազգային ինքնագիտակցության արթնացման 1840-1850-ական թթ. հանդես եկան հպարտություն ներշնչող, մշակութային ժառանգությանը վերաբերող ազգագրական նյութերով:

Տարերային բանահավաքչության հաղթահարումը հիմնականում պայմանավորված էր ազգագրական հարցարանի ստեղծման հանգամանքով: XIX դարի երկրորդ կեսի սկզբներին առանձին անհատներ արդեն գիտակցում էին բանահա-

---

360 Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հայոց ընտանեամուսնական սովորությունների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ VIII, 2005, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 53-59, **նույնի**՝ Խ. Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Հունվար (Ա), 2007, էջ 88-94, **նույնի**՝ Խ. Աբովյանը որպես ազգագրագետ // Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու, Երևան, 2007, էջ 123-130, **նույնի**՝ Աբովյանը քրդերի ազգագրության հետազոտող // «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Հունվար (Ա), 2011, էջ 76-90, **նույնի**՝ Աբովյանը որպես հայ ազգաբանական գիտության սկզբնավորող // Աբովյանագիտական 5 (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, էջ 111-119:

վաքչության կարևորությունը և մտածում նրա տարերայնությունը հաղթահարելու մասին: Առաջին խոշոր գործիչը, որը նախաձեռնեց ազգագրական հարցարանի ստեղծման գործը, հայտնի բանահավաք-ազգագրագետ և բանագետ Գարեգին Սրվանձտյանցն էր: Նա մի շարք հոդվածներով և գրքույկներով ազգագրական և բանահյուսական ասպարեզ իջնելուց հետո հանգեց այն եզրակացության, որ անհրաժեշտ է ուղեցույց գրել ուրիշների համար: Այդպիսին էր նրա «Գրոց ու բրոց» հայտնի աշխատությունը (1874): Այս գրքույկի առաջին մասը ոչ միայն ազգագրագետների ու բանագետների, այլև լեզվաբանների, բարբառագետների, հնախոսների, հնագետների, բնագետների համար յուրօրինակ հարցարան էր: Վերջինս այժմյան հարցարաններից տարբերվում էր նրանով, որ հարցերը թեմայավորված, տարբերակված և համարակալված չէին, այլ յուրաքանչյուր հարցադրում ուղեկցվում էր բացատրագրերով, թե ինչպես պետք է զբաղվել բանահավաքչությամբ: Սա Հայաստանում գիտակցական բանահավաքչության առաջին օրինակն էր, որին հետևեցին բազմաթիվ բանագետներ, բանահավաքներ և ազգագրագետներ՝ Վ. Տեր-Մինասյան, Մ. Միրախորյան, Հ. Ալահվերդյան, Ս. Ճուլարտյան, Լ. Ճանիկյան, Տ. Նավասարդյան, Ա. Տեր-Ալեքսանդրյան, Ա. Մխիթարյանց, Ս. Հայկունի և ուրիշներ:

Ուսումնասիրողների մի մասը չի վիճարկել «Գրոց ու բրոցի» ծրագիր-հարցարան լինելու հանգամանքը, բոլորն էլ միանշանակ պնդել են, թե Գ. Սրվանձտյանցի հրատարակած ժողովածուները վիթխարի դեր են խաղացել ժողովրդագիտական նյութերի գրառման ու հրատարակման գործում: Ականավոր բանագետ Ս. Հարությունյանի համոզմամբ «Գ. Սրվանձտյանցը դարձավ հայ բանահավաքչության ռահվիրան՝ ուղի հար-

թող առաջամարտիկը: Նրա հետևությամբ XIX դարի վերջին քսանամյակում հայ բանագիտության մեջ հանդես է գալիս բանահավաքների մի ամբողջ սերունդ, որի անդուլ ջանքերով գրառվում և տպագրվում է ժողովրդական կենդանի բանահյուսության մի պատկառելի ժառանգություն»[361]:

Գ. Սրվանձտյանցը դեռես 1860-1870-ական թթ. հատկապես «Գրոց ու բրոց» և «Մանանա» աշխատությունների միջոցով ազգագրական երևույթները նկարագրում է պատկերավոր, վառ երևակայությամբ, որի հիմնական նպատակն է՝ ա) արևմտահայության մեջ սերմանել ազգային զարթոնք, ազգային ինքնագիտակցության բերել, անձի արժանապատվությունը ազգային հողի վրա դնել և բ) վառ երևակայությամբ զինել բանահավաքներին ազգային նյութը կորստից փրկելու, գրի առնելու և սերունդներին պահ տալու ձգտմամբ:

Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը», այնուամենայնիվ, չկարողացավ կատարել այն դերը, ինչ հետագայում վիճակվեց Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Գր. Խալաթյանցին (1858-1913): Հենվելով Գ. Սրվանձտյանցի և վերոհիշյալ բանասերների ու բանահավաքների աշխատությունների վրա՝ Գր. Խալաթյանցը գրեց մի նոր, գիտական հիմունքներով համակողմանի ազգագրական հարցարան՝ «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» վերնագրով (Մոսկվա, 1887): Այստեղ բոլոր հարցերը թեմաների են վերածվել ըստ համակարգերի, իսկ վերջիններս՝ ըստ

---

[361] Տե՛ս **Ս. Հարությունյան,** Բանագիտություն // Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 916-917: **Ռ. Նահապետյան,** Գարեգին Սրվանձտյանցի ազգագրական և բանահավաքչական գործունեությունը // «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2007, ժ, էջ 110-122:

ենթաթեմաների: Կուռ կառուցվածք ունեցող այս ծրագիրը նշանակալի դեր խաղաց հայ բանահավաքչության կազմակերպման գործում, դարձավ ուղենիշ ազգագրությամբ զբաղվողների ու բանագետների համար: Առաջին և վաստակաշատ բանահավաք-ազգագրագետը եղավ Ե. Լալայանը, որը հենվեց այդ ծրագրի վրա և 1880-ական թթ. վերջերին Ջավախքում գրառեց տեղի հայ բնակչության ազգագրության նմուշները: Այդ ծրագիրը Ե. Լալայանին ուղեկցեց մինչև մահ: Դրանից հետո գրվեցին առանձին թեմաների վերաբերյալ ծրագրեր՝ 1. Ե. Լալայան, «Ծրագիր ամուսնության և հարսանիքի սովորույթների մասին նյութեր հավաքելու» («Ազգագրական հանդես», այսուհետև՝ ԱՀ, գ. Ա, Շուշի, 1896, հավելված, էջ 3-52), 2. Ս. Զելինսկի, «Ծրագիր տղաբերքի և նորածին մանկան ֆիզիկական դաստիարակության մասին նյութեր հավաքելու» (ԱՀ, գ. Գ, Թիֆլիս, 1898, հավելված, էջ 73-79), 3. Ս. Զելինսկի, «Ծրագիր հիվանդության և բժշկության մասին նյութեր հավաքելու համար» (ԱՀ, գ. Գ, 1898, Թիֆլիս, էջ 73-79, № 1, ԱՀ, գ. Դ, 1898, № 2, հավելված, էջ 93-106), 4. Թարգմանություն է Ադիրրի հարցարանի, որ է՝ «Ծրագիր սեպհականության նշանների (տամղաների) մասին նյութեր հավաքելու» (ԱՀ, գ. VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 525-526), 5. Հ. Կարա-Մուրզա, «Ծրագիր տնայնագործության վերաբերյալ նյութեր հավաքելու» (ԱՀ, գ. XII, 1904, հավելված, էջ 3-32), 6. «Ծրագիր հայ ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու» (ԱՀ, գ. XVI, 1907, հավելված, էջ 1-26, գրվել է Պետերբուրգում Ալեքսանդր III-ի ազգագրական թանգարանի համար, որը ռուսերենից փոխադրել է Ս. Տեր-Գրիգորյանը):

«Ազգագրական հանդեսը» նաև բանահավաքներ դաստիարակելու տեսանկյունից աննախադեպ ծառայություն է մա-

տուցել: Այդպես էին նաև Կ. Պոլսի «Բյուրակն» ամսաթերթը, «Էմինյան ազգագրական ժողովածուն» (ԷԱԺ), Վենետիկի «Բազմավեպը» (ԲՎՊ), Վիեննայի «Հանդես ամսօրյան» (ՀԱ), Էջմիածնի «Արարատը» և այլն:

«Ազգագրական հանդեսի» 1896-1916 թթ. բանահավաքներից առաջինը Ե. Լալայանին է հաջողվել պատմական Հայաստանի մի շարք շրջաններում ուսումնասիրություններ կատարել: Գիտնականի ազգագրական հետազոտությունների արդյունքը դարձան Ջավախք (ԱՀ, 1896, գ. Ա), Վարանդա (ԱՀ, 1897, գ. Բ), Սիսիան (ԱՀ, 1898, գ. Գ, № 1), Զանգեզուր (ԱՀ, 1898, գ. Դ, № 2), Գանձակի գավառ (ԱՀ, 1899, գ. Ե, 1900, գ. Զ, 1901, գ. VII-VIII), Բորչալուի գավառ (ԱՀ, 1902, գ. IX, 1903, գ. X, 1904, գ. XI), Նախիջևանի գավառ, Ա մասն, Գողթն (ԱՀ, 1904, գ. XI, 1905, գ. XII, 1906, գ. XIII, 1907, գ. 15), Վայոց ձոր (ԱՀ, 1906, գ. XIII, № 1, 1906, գ. XIV, № 2), Նոր Բայազետի գավառ (ԱՀ, 1907, գ. XVI, № 1, 1908, գ. XVIII, № 2), Վասպուրականի ազգագրությունը (ԱՀ, 1910, գ. XX, № 2, 1911, գ. XXI, 1912, գ. XXII, № 1, 1912, գ. XXIII, № 2, 1913, գ. XXIV, № 1, 1913, գ. XXV, № 2), Մուշ-Տարոն (ԱՀ, 1916, գ. XXVI) աշխատությունները և այլն: Նույնը կարելի է ասել Ս. Մովսիսյանի (Բենսե) վերաբերյալ՝ Բուլանըխ կամ Հարք գավառ (ԱՀ, 1899, գ. Ե, 1900, գ. Զ): «Ազգագրական հանդեսում» իրենց աշխատանքները հրատարակեցին նաև Ալաշկերտից Գ. Նժդեհյանը, Նոր Նախիջևանից՝ Հ. Մուրադյանը, Ե. Շահազիզը և այլ հեղինակներ:

«Էմինյան ազգագրական ժողովածուի» բանահավաքներից են Ա. Մխիթարյանցը, Ս. Հայկունին և ուրիշներ, «Բյուրակնի» բանահավաքներից՝ Գ. Անդրեասյանը, Մ. Դանիելյանը, Տ. Պալյանը, Գ. Տևեճյանը, Թուխ Կրպոն, Դ. Խաչկոնցը, Հ. Շնորհիքյանը և ուրիշներ: «Բազմավեպը» և «Հանդես ամսօրյան» ազ-

գագրական նյութերը նախ ուսումնասիրում էին, հետո միայն տպագրում: Այդուհանդերձ, սակավ էին բանահավաք կադրերը, իսկ եղածներն էլ հատուկ պատրաստվածություն չունեին: Անգամ ծրագրերի գոյության պայմաններում հատուկ փորձառու բանահավաքները հազվադեպ էին (Ե. Լալայան, Ս. Լիսիցյան): Չկային բանահավաքներ պատրաստող դպրոցներ:

1922 թվականից Ե. Լալայանը նշանակալից դեր ունեցավ նոր կադրեր պատրաստելու գործում: Ե. Լալայանի աջակիցն էր նաև Ս. Լիսիցյանը, որը նրա մահից հետո (1931) շարունակեց բանահավաքների պատրաստման գործը: Ս. Լիսիցյանի ջանքերի շնորհիվ ազգագրագետների և բանահավաքների սեղանին դրվեց 1930-ական թթ. կազմված և 1946 թ. հրատարակված թվով երրորդ՝ «Ազգագրական հարցարանը», որով մասնագետներն առաջնորդվում են առ այսօր:

Ս. Լիսիցյանի մահից հետո բանահավաքներ են պատրաստում Պատմության պետական թանգարանի Ս. Լիսիցյանի անվան ազգագրության բաժինը, այնուհետև՝ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ազգագրության խումբը, իսկ ներկայումս՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության, արդիականության ազգաբանության, էթնոսոցիոլոգիայի, սփյուռքի ուսումնասիրությունների բաժինները և ԵՊՀ հնագիտության ու ազգագրության ամբիոնը:

Ցավոք, ներկայումս ավանդական ազգագրությունը մոռացության է մատնվում ազգագրագետ բանահավաքներիս աչքի առաջ: Պատմական Հայաստանի 9/10 մասի և առանձնապես սփյուռքի ազգագրությունը կորստյան է մատնված: Մենք ցարդ պետական մոտեցում չունենք հատկապես Արևմտյան Հայաստանի ազգագրության ուսումնասիրության նկատմամբ: Այս աննպաստ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ

կորստյան մատնվող ազգագրական նյութերը փրկվեն, որ շրջաններում և մարզերում դեռ մնացած փաստերը գրի առնվեն: Մի՞թե հնարավոր չէ շարունակել Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի, Վ. Բդոյանի թողած ավանդները՝ ավարտին հասցնելով պատմական Հայաստանի բոլոր պատմաազգագրական շրջանների ուսումնասիրությունը՝ պատրաստելով ազգագրագետ կադրեր: Նշված խնդիրը պետք է բարձրացնել պետական մակարդակի: Հայաստանի Հանրապետության պատմաազգագրական շրջանների ուսումնասիրության առումով մենք դեռևս չունենք համապարփակ հետազոտություններ, էլ ուր մնաց Արևմտյան Հայաստանը և ժամանակակից սփյուռքը: Բարեբախտաբար, դեռևս կան արևմտահայ վերապրողների սերունդներ, որոնք շատ թե քիչ հիշողություններ են պահպանում «էրգրի» մշակութային ժառանգության մասին: Շատ կարճ ժամանակից հետո դրանցից էլ կզրկվենք, դրա համար հույժ կարևոր են դաշտային ազգագրական հետազոտությունների խրախուսումը, ազգագրական երևույթներն ամբողջովին գրի առնելը:

Սփյուռքում բազմաթիվ են տարեգիրներն ու պատմաբանները, որոնք իրենց հայրենի գյուղերի ու գավառների, նահանգների պատմությունը շարադրելիս պետք է մի փոքրիկ անկյուն հատկացնեն ազգագրությանն ու բանահյուսությանը: Կարծում ենք, որ շատ օգտակար կլինի սփյուռքի համար համառոտ առանձին ազգագրական հարցարանի ստեղծումը, քանի որ սփյուռքի գիտնականների համար Ս. Լիսիցյանի հարցարանը անմատչելի է:

Մի կարևոր հանգամանք ևս: Ս. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» լույսընծայումից հետո՝ անցած տասնամյակների ընթացքում, ազգագրական գիտության մեջ առաջ են

քաշվել բազմաթիվ նոր հիմնախնդիրներ, որոնք մինչև XX դարի 30-40-ական թվականները չէին կարող տեղ գտնել այդ հարցարանում: Ինչպես ժամանակին, մինչև Ս. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» հրատարակությունը, մի շարք գիտնականներ՝ Ե. Լալայանը, Ս. Զելինսկին և ուրիշներ, բանահավաքչական գործը դյուրացնելու նպատակով հրատարակեցին մանրակրկիտ հարցաշարերով թեմատիկ ծրագիր-հարցարաններ, այդպես էլ ներկայումս դրանց անհրաժեշտությունը խիստ զգացվում է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անվանի ազգագրագետ Ս. Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» հրատարակությունից անցել է շուրջ 60 տարի, և այսօր այն գրեթե սպառված է, և նաև այն, որ մի շարք հասարակագիտական բուհերում անցնում են «Հայ ազգագրություն» առարկան, և ուսանողները գրում են հետազոտական առաջադրանքներ ու ավարտական աշխատանքներ, ուստի հույժ անհրաժեշտություն է առաջացել կազմելու ավելի ընդլայնված և համապարփակ հարցարան: Այն կարող է օգտակար լինել նաև բանագետներին, բանասերներին, մշակութաբաններին, հայրենի բնակավայրերի, շրջանների պատմությամբ ու մշակույթով զբաղվող մտավորականությանը: Ուստի հայ ազգագրության նոր ծրագիր-հարցարանի կազմումն ու հրատարակումը օրվա հրամայական պահանջ են: Այդ նպատակին ծառայելու համար մենք հրատարակել ենք ամուսնության ու հարսանեկան ծիսաշարի[362], մանկան ծննդի ու խնամքի[363], ազ-

---

[362] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ակնարկ դաշտային ազգագրական նյութերի գրառման եղանակների մասին: Հարցաշար ամուսնահարսանեկան սովորությունների, արարողությունների վերաբերյալ // **Ռ. Նահապետյան,** Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված է որպես ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի հասարակա-

գակցական համակարգի[364] վերաբերյալ նյութեր հավաքելու համար ավելի ընդարձակ, լրամշակված ծրագիր-հարցարաններ: Ցանկալի է, որ այսուհետև յուրաքանչյուր հետազոտող իր ուսումնասիրությունների հավելվածում ներկայացնի հետազոտվող թեմայի վերաբերյալ լրամշակված հարցաշար: Այդ ամենը հնարավոր կդարձնի ստեղծել և ունենալ նոր, ավելի ամբողջական, մեր ժամանակներին ավելի համահունչ ազգագրական հարցարան, որն օդ ու ջրի պես անհրաժեշտ է: Հարկ է նշել, որ դաշտային ազգագրական նյութերի գրառման, դաշտային ազգագրական հետազոտությունների արդյունավետ իրականացման համար խորհուրդ է տրվում ձեռքի տակ ունենալ նաև մասնագիտական գրականության մեջ այլ ժողովուրդների ազգագրական տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ հիշատակվող մի շարք ծրագիր-հարցարաններ, մեթոդական ցուցումներ: Դրանցից կարելի է առանձնացնել՝ Козьмин В. А., Полевая этнография, СПб., 2007, Бардавелидзе В. В., Духовное быте и культура грузинского народа, Программа вопросников, Тбилиси, 1988:

գիտական ֆակուլտետներում ազգագրություն և հումանիտար այլ մասնագիտացումների ուսանողների համար, Երևան, հեղ. հրատ., 2009, էջ 30-53:

[363] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Մանկան ծննդին և խնամքին առնչվող սովորույթների ու ծեսերի վերաբերյալ ազգագրական նյութերի գրառման հարցաշար // **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2011, Հավելված, էջ 192-206:

[364] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ազգատոհմային հարաբերություններ // **Ռ. Նահապետյան,** Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն Երևան, 2012, Հավելված, Հարցաշար, էջ 194-206:

Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ

1. Դաշտային ազգագրական նյութերի գրառման կարևորությունը, որպես ազգագրական գիտության ուսումնասիրության սկզբնաղբյուրի նշանակությունը:

2. Ինչպիսի՞ ծրագիր-հարցարաններ են կազմվել հայ ազգագրական գիտության մեջ: Դրանց հակիրճ բնութագրությունը:

3. Նշել Ստեփան Լիսիցյանի «Ազգագրական հարցարանի» դերն ու նշանակությունը:

4. ԴԱՆ գրառման ինչ սկզբունքներ և մեթոդներ կարելի է կիրառել:

5. ԴԱՆ-ի գրառման վայրի, բանասացների ընտրության, գրանցման եղանակների, բանասացի հետ տարվող աշխատանքների շուրջ ուսանողի իմացությունը:

6. Ներկայացրեք ԴԱՆ-ի գրառման սկզբնավորման պատմության հակիրճ ընթացքը:

Գրականություն

1. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն: Համառոտ ուրվագիծ, Երևան, 1974:

2. **Լիսիցյան Ստ.,** Ազգագրական հարցարան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1946, 108 էջ:

3. **Խալաթյանց Գր.,** Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների, Մոսկվա, 1887:

4. **Խալաթյանց Գր.,** Նյութեր հայ ազգագրության պատմության // «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Է, Մոսկվա, 1908:

5. **Նահապետյան Ռ.,** Դաշտային ազգագրական նյութերիը հայ ազգագրության պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուր // Ազգաբանական ուսումնասիրություններ, Գիրք 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 9-37:

6. Սրվանձտյանց Գ., «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» // Երկեր, հ. 1, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 29-110:

7. Громов Г., Методика этнографических экспедиций, Москва, 1966.

8. Козьмин В. А., Полевая этнография, СПб., 2007.

9. Бушкова В. И., Поляков С. П., Методы организации полевых этнографических исследований (опыт работы Среднеазиатской комплексной экспедиции исторического факультета МГУ им. М. В. Ломоносова), Проблемы сравнительных исследований в социологии, Москва, 1987.

10.Токарев С. А., К методике этнографического изучения материальной культуры, СЭ, 1970, № 4.

11. Токарев С. А., Обычаи и обряды как объект этнографического исследования, СЭ, 1980, № 3.

Резюме

ИСТОЧНИКИ АРМЯНСКОЙ ЭТНОГРАФИИ
(с древнего периода до второй половины XVIII в.)

РАФИК НААПЕТЯН

В пособии представлены первоисточники армянской этнологической науки с древнего периода до середины XVIII века, включающие сведения о материалах археологических раскопок, наскальных рисунках, клинописных и иноязычных надписях, литографиях, а также фольклорные материалы Армянского нагорья. Особое внимание уделялось армянским и древнегреко-римским историкам, библейским источникам, церковно-каноническим и другим светским источникам, богатым и разнообразным этнографическим сведениям об армянах и Армении в травелогах арабских, турецких и европейских путешественников. Также представлены роль и значение материалов полевого этнографического сбора как важного источника для изучения армянского этнокультурного комплекса.

Настоящее пособие представляет собой уникальный итог более чем двухдесятилетних исследований автора в области армянских этнографических источников. Впервые приводятся краткие сведения греческих и римских историографов Геродота, Ксенофонта, Диодора Сицилийского, Страбона, Плутарха, Гая Плиния (Старшего) Секунда, Аппиана, Диона Кассия, Гая Корнелия Тацита об историко-культурной жизни Армении и армян.

Армянские и зарубежные материалы представляют демографию, экономическую жизнь, средства производства, организацию производства; материальную культуру: типы народных жилищно-квартирных комплексов, функции, виды еды и напитков, костюмы, оружие, народные средства транспорта и связи, комплексы соционормативной культуры: семья, внутрисемейные отношения, обычаи и обряды бракосочетания, рождение и воспитание детей, смерть и погребение; сущность, формы и значение структур общественного самоуправления: этнообщинно-социальные отношения, народные праздники, система верований, и т. д.

Summary

SOURCES OF ARMENIAN ETHNOGRAPHY
(from the ancient period to the second half of the 18th century)

RAFIK NAHAPETYAN

The manual presents primary sources of Armenian ethnological science from the ancient period to the mid-18th century, including information about materials from archaeological excavations, rock paintings, cuneiform and foreign language inscriptions, lithographs, as well as folklore materials of the Armenian Highlands. Particular attention was paid to Armenian and ancient Greco-Roman historians, biblical sources, church canonical and other secular sources, rich and varied ethnographic information about the Armenians and Armenia in the travelogues of Arab, Turkish and European travelers. The role and significance of the field ethnographic collection materials as an important source for the study of the Armenian ethno-cultural complex is also presented.

This manual represents a unique result of more than two decades of research by the author in the field of Armenian ethnographic sources. For the first time, brief information by Greek and Roman historiographers Herodotus, Xenophon, Diodorus Siculus, Strabo, Plutarch, Gaius Pliny (the Elder) Secundus, Appian, Dio Cassius, Gaius Cornelius Tacitus about the historical and cultural life of Armenia and the Armenians is provided.

Armenian and foreign materials present demography, economic life, means of production, organization of production; material culture: types of folk housing and apartment complexes, functions, types of food and drinks, costumes, weapons, means of public transport and communications, complexes of socio-normative culture: family, relationships between families, customs and rites of marriage, birth and raising children, death and burial; the essence, forms and significance of the structures of public self-government: ethno-community-social relations, folk holidays, belief system, etc.

Բովանդակություն

Հեղինակի կողմից 3
Դասընթացի նպատակը, առարկան, խնդիրները 8
Թեմա 1. Հնագիտական պեղածո նյութերը որպես ազգագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր 11
1.1. Հնագիտական պեղածո նյութերը որպես Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության կենցաղի և մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր 11
1.2. Ժայռապատկերները (Ք.ա. VII-I հազ.) որպես Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության կենցաղի և մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր 60
1.3. Ք.ա. IV-II հազարամյակների պաշտամունքային հուշարձաններ 75
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 78
Թեմա 2. Սեպագիր արձանագրությունները Հայկական լեռնաշխարհի բնակչության կենցաղամշակութային բնութագրի, հնագույն պետական կազմավորումների ուսումնասիրության սկզբնաղբյուր 83
2.1. Շումերա-աքքադական սկզբնաղբյուրներ 83
2.2. Ասորեստանյան սեպագիր սկզբնաղբյուրներ 89
2.3. Խեթական սեպագիր արձանագրություններ 94
2.4. Ուրարտական թագավորության արձանագրություններ (Ք.ա. IX–VI դդ.) 98
2.5. Բեհիսթունյան արձանագրությունը որպես և հայ ազգագրության կարևոր սկզբնաղբյուր 107
2.6. Աստվածաշունչը Եդեմի և համաշխարհային ջրհեղեղի մասին 110

2.7. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված օտարալեզու արձանագրություններ 118
2.8. Վիմագիր արձանագրություններ 125
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 129
Թեմա 3. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրները հայերի և Հայաստանի մասին (Հերոդոտոս, Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլիացի, Ստրաբոն, Պլուտարքոս, Գայոս Պլինիոս Ավագ Սեկունդոս, Ապպիանոս, Դիոն Կասսիոս, Գայոս Կոռնելիոս Տակիտոս, Կլավդիոս Պտղոմեոս)..... 133
3.1. Հերոդոտոսի (Ք.ա. V դ.) տեղեկությունները Հայաստանի ու հայերի մասին..... 133
3.1.1. Հայաստանի պատմական սահմաններն ըստ Հերոդոտոսի..... 134
3.1.2. Հայերի ծագման փռյուգիական վարկածը..... 138
3.1.3. Տնտեսական կյանքի և նյութական մշակույթի բնութագրությունը 139
3.1.4. Նյութական մշակույթ..... 143
3.2. Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի (Ք.ա. 430-355/6) աշխատությունների 145
3.2.1. Հայաստանի պատմական սահմանների և էթնիկ կազմի բնութագրությունը 147
3.2.2. Հայաստանի էթնիկ կազմը..... 149
3.2.3. Հայ-արմենների տնտեսամշակութային բնութագիրը.. 152
3.2.4. Հայոց նյութական մշակույթը. բնակավայրը և բնակարանը ըստ Քսենոփոնի հաղորդած տեղեկությունների..... 157
3.2.5. Ընտանեկան-հասարակական հարաբերություններ ... 159
3.2.6. Հայաստանի զինված ուժերը..... 163

3.3. Դիոդորոս Սիկիլիացու վկայությունները Հայաստանի, հայերի և հարևան երկրների ժողովուրդների մասին 164
3.4. Ստրաբոնի (63–21/25 Ք.ա.) «Աշխարհագրությունը» Հայաստանի և հայերի մասին 168
3.4.1. Ստրաբոնը և հայ ժողովրդի ծագումնաբանության հիմնահարցը 170
3.4.2. Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական և վարչաքաղաքական բնութագիրը 174
3.4.3. Հայաստանի տնտեսական կյանքի բնութագրությունը 178
3.4.4. Տարազ և ազանելիք 182
3.4.5. Ակնարկ հայերի պաշտամունքային սովորույթների վերաբերյալ 183
3.5. Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ» երկը՝ հայոց պատմության և մշակույթի անտիկ դարաշրջանի կարևոր սկզբնաղբյուր 186
3.5.1. Ակնարկներ Հայաստանի տարածքային սահմանների մասին 187
3.5.2. Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման մասին 187
3.5.3. Ժողովրդագրական վիճակը և բնակչության կազմը Տիգրան Մեծի օրոք 189
3.5.4. Հայերի տնտեսական կյանքը 192
3.5.5. Կենցաղային և ամուսնաընտանեկան որոշ սովորույթների մասին 195
3.5.6. Հելլենիստական մշակույթի դրսևորումները Հայաստանում Տիգրան Մեծի օրոք՝ ըստ Պլուտարքոսի 196
3.5.7. Ծեսերն ու պաշտամունքը՝ ըստ Պլուտարքոսի 198
3.6. Գայոս Պլինիոս Ավագ Սեկունդոս 201

3.7. Ապպիանոսի «Հռոմեական պատմությունը» հայ ազգագրության սկզբնաղբյուր 207
3.8. Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» երկը անտիկ դարաշրջանի Հայաստանի և հայերի մասին..... 214
3.9. Գայոս Կոռնելիոս Տակիտոս (55/57–125 թթ.) 225
3.10. Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» աշխատությունը որպես հայ ազգագրական գիտության սկզբնաղբյուր 233
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 236
Թեմա 4. Բանահյուսությունը որպես հայ ազգագրության սկզբնաղբյուր 240
4.1. Բանահյուսական աղբյուրների՝ որպես ազգագրության սկզբնաղբյուրի գնահատման հարցի շուրջ 240
4.2. «Սասնա ծռեր» էպոսը հայ բանագիտության և ազգագրության ուսումնասիրության կարևոր հուշարձան... 246
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 252
5.1. V-IX դարերի հայ մատենագիրների տեղեկությունները հայերի կենցաղի և մշակույթի վերաբերյալ 257
բ) Հայ մատենագիրների երկերի թեև կցկտուր, բայց հույժ կարևոր ազգագրական նյութերի բովանդակությունը: 259
5.2. X–XIV դարերի հայ մատենագիրների և օրենսդիրների ազգագրական տեղեկությունները հայոց կենցաղի և մշակույթի վերաբերյալ 266
5.3. XV–XVIII դարերի հայ մատենագիրներ 268
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 268
Թեմա 6. Արաբ, եվրոպացի և թուրք ճանապարհորդների ուղեգրությունները Հայաստանի և հայերի մասին 273
6.1. IX-XIV դդ. արաբ ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին..... 273

6.2. XIII-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին 307
6.3. Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (XVI-XVIII դդ.) 343
6.4. XVIII-XIX դարերի եվրոպացի և ռուս ճանապարհորդների ուղեգրությունների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին 357
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 372
Թեմա 7. Դաշտային ազգագրական նյութերը՝ հայ ազգագրական գիտության ուսումնասիրության սկզբնաղբյուր 376
7.1. Դաշտային ազգագրական նյութերի գրառման շուրջ 376
7.2. Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից 400
Հարցեր, առաջադրանքներ և գրականության ցանկ 414
Резюме 416
Summary 418

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ուսումնական ձեռնարկ

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Ա. Հովակիմյանի

Ստորագրված է տպագրության՝ 12.12.2023:
Չափսը՝ 70x100 1/16: Տպ. մամուլը՝ 26.375:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023
publishing.ysu.am